9(47.925)
Ս-28

ՍԱՐՈՒԽԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ
ԵՒ
ԱԶԳԱՅԻՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ
(1860—1910)

Ա. ՀԱՏՈՐ

1405

ՀԱՅԿ. ՍՍՀ ԳԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏ.
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т востоковед. АН Арм. ССР

ԹԻՖԼԻՍ
Էլէքտրաշարժ տպարան «Էպօխա», Մուղէյսկի պեր. № 8
1912

Այս Ա. հատորն արտատպուած է «ԱՐՕՐ» ամսագրէն։

ՍՏՈՒԳՎԱԾ Է
1952 Թ.

5094

19057

5ռ

Ց Ա Ն Կ

ՅԱՌԱՋԱԲԱՆ . . . . Ա—Ե

ՄԱՍՆ Ա.

Գլուխ Առաջին . . . . էջ 5—12

Ամիրաներն և էսնաֆը.—Ուսկիւտարի ճեմարանը.—«Միակամ» ընկերութիւնը.—Ժողովրդական իշխանաւորութիւն.—Երկու դասակարգի մերձեցումը.—Ընտրողական սկզբունքը.—Ազգային կանոնադրութիւն.—Հոգևոր և գերագոյն ժողովներ.—Գաղափարական երիտասարդութիւն.—Ուսումնական խորհուրդը։

Գլուխ Երկրորդ . . . . էջ 12—16

1856-ի Պարիզի դաշնագիրն և Թիւրքիայի բարենորոգումները (Թանզիմաթ).—Հայ «Սահմանադրական ժողովը».—Պահպանողականների հակառակութիւնը.—Ազգային Սահմանադրութեան սկզբնաւորումը։

Գլուխ Երրորդ . . . . էջ 17—28

Քննադատութիւն Ազգային Սահմանադրութեան.—Առաջին Ազգային Երեսփոխանական Ժողովը։ Առաջին Քաղաքական Ժողովը.—Առաջին ազգային բիւջէն.—Առաջին կնճռոտ հարցը.—Սահմանադրութեան վերաքննութիւնն և հաստատութիւնը կառավարութիւնից.—1860-ի և 1863-ի Սահմանադրութիւնների տարբերութիւնը։

Գլուխ Չորրորդ . . . . էջ 28—35

Նոր Ազգային վարչութիւնը.—Դարձեալ Երուսաղէմի վանքը.—Գաւառները հանդէպ Սահմանադրութեան.—Ազգային տուրքը.—Գործերի անդոհացուցիչ վիճակը։

Գլուխ Հինգերորդ . . . . էջ 36—43

Կաթողիկոսական երեք հարց Ազգային Ժողովում, Պոլոժէնիէի քննադատութիւնը.—Պոլոժէնիէն և Ազգ. Սահ-

ժանագրութիւնը.—Կաթողիկոսական Յանձնաժողովն և իր տեղեկագիրը.—Ներսէս եպ. Վարժապետեան՝ կաթող. պատգամաւոր.—Սիսի և Աղթամարի աթոռները թափուր։

Գլուխ վեցերորդ . . . . էջ 43—53
Ազգ. Սահմանադրութեան դադարեցումը.—Նոր պետական հարուածի պատճառները.—Ընդհ. Ժողովի quorum-ի հարցը.—«Դարբ խանարան».—Նշանակուած Ատեան Ժողով.—Սահմանադրութեան վերաքննութիւնը.—Վարժապետեան-Նար-Բէյ միջադէպը.—Օտեանի ճառը.—Խրիմեանի պատրիարք ընտրուիլն և առաջին գործերը։

Գլուխ եօթներորդ . . . . էջ 53—58
Խրիմեանի պատրիարքութեան raison d'être.—Գաւառական հարստահարութիւնները.—Յանձնաժողովի տեղեկագիրը.—Գանգատի գլխաւոր առիթները.—Առաջարկուած բարեկարգութեան միջոցները.—Տեղեկագրի արդիւնքը։

Գլուխ ութերորդ . . . . էջ 58—69
Երեսփոխանական ընտրութիւններ.—«Քառակուսի ատեան».—Սահմանադրութեան վերաքննութիւնը.—Խրիմեանի հայեացքները.—Անկանոն Ժողովներ.—Նոր ընտրութիւն.—Մատթէոս վ. Իզմիրլեան.—Հրաժարականներ.—Սահմանադրութիւնը գաւառներում.—Հակառակութիւնը Խրիմեանի և ազգ. վարչութեան մէջ.—Ժողովրդական յուզումներ.—Խրիմեանի հրաժարագիրը. — Վարժապետեան՝ տեղապահ։

Գլուխ իններորդ . . . . էջ 69—76
Ներսէսի պատրիարքութիւնն և հրաժարականները.—Սահմանադրութեան սրբագրուած կէտերն և նրա ընդհանուր վերաքննութեան խնդիրը.—Ռուսինեանի Ներքին Կանոնադրութիւնը.—Ազգային տուրքը.—Աղթամարի կաթողիկոսը.—Ներսէս և հարստահարութիւնների հարցը.—Քրիստոնեաների շարժումն և Թիւրքիայի քաղաքական կացութիւնը։

Գլուխ տասներորդ . . . . էջ 76—86
1839-ի հրովարտակը, նրա նպատակն և հետևանքը.—Իսլամն և բարենորոգումները.—Քրիստոնեաների հաւասարութեան տեսական իրաւունքը.—1845-ի ֆէրմանը.—Բանակցութիւններ Պարիզի կոնգրէից յառաջ.—Եւրոպացիների սխալը.—1856-ի խաթթը հիւմայունն և նրա արդիւնքը.—Եւրոպական միջամտութիւնը.—Ռուսաստանի պահանջումներն ի նպաստ սլաւների.—Վիլայէթների օրէնքը.—Հաւասարութեան բացակայութիւնը։

Գլուխ տասնմէկերորդ . . . . էջ 86—103
Աբդիւլ Ազիզի յետադիմական ընթացքը.—Ֆրանսիայի և Ռուսիայի տարբեր քաղաքականութիւնները.—Ռուսական ձգտումը.—Ֆրանսիայի ծրագիրն ընդհանուր բարենորոգումների մասին.—Պետական Խորհուրդ.—Դր. Ադաթօն.—Լիբանան.—Զէյթուն.—Նոր յետադիմութիւն.—Համասլավութիւն. — Համիսլամութիւն.—Դեսպանախորհուրդ (Conférence).—Նոր սուլթաններ։

Գլուխ տասներկուերորդ . . . . էջ 103—113
Երիտասարդ Թիւրք կուսակցութեան ծագումն և ձգտումները.—«Մահմեդական հայրենասէրներ».—Միդհատ փաշա.—Դր. Օտեան.—Սուլթան Մուրադ.—Եւրոպայի պահանջները.—Սուլթան Աբդիւլ Համիդ.—Օսմանեան Սահմանադրութեան ծրագրումն և հրատարակումը։

Գլուխ տասներեքերորդ . . . . էջ 114—137
Նոր ազգ. վարչութիւն.—Սերբիական պատերազմ.—Ներսէս պատրիարքի հաւատարմական շրջաբերականն և թողած տպաւորութիւնը.—Նոր բռնութիւններ գաւառներում.—Ժողովրդական յուզում և ցոյց Բ. Դրան առջև.—Հարստահարութիւնների հարցն Ազգ. Ժողովում.—Հարստահարութիւնների մասին նոր ընդարձակ տեղեկագիր.—Լրագրական գործունէութիւն տեղական և եւրոպական մամուլի մէջ.—Ազգ. վարչութեան ընթացքը Բ. Դրան թելադրութեան համաձայն.—Ընդհանուր դժգոհութիւն դեսպանախորհրդի մասնակի ծրագրից.—Ներսէս պատրիարքի տեսակցութիւնն անգլիական դեսպանի հետ.—Ազգ. վարչութեան առաջարկութիւնն և Ազգային Ժողովի որոշումները.—Միդհատ փաշան հայոց պատրիարքարանում։

Գլուխ տասնչորսերորդ . . . . էջ 137—151
Ռուսահայոց հայեացքը.—«Մշակի», «Մեղուի» և «Փորձի» տարբեր կարծիքները.—Կ. Պոլսի հայոց վերաբեր-

ժումները Ռուսաստանին.—Յուզում մի սուտ լրի պատճառով.—Հայկական գաւառների վերաբերմունքը Ռուսաստանին.—Ռուսական քաղաքականութիւնը Թիւրքաց Հայաստանում.—Անգլիական դեսպանի և հիւպատոս Տէյլըրի զեկուցումները հայոց մասին.—Գր. Արծրունու նպատակն և ջանքերը.—Թիֆլիսի հայոց ուղերձն Ալէքսանդր Բ. կայսեր։

Գլուխ տասնհինգերորդ . . . . էջ 152—177
Դեսպանախորհրդի գումարումն և անյաջող վախճանը.—Օսմանեան մեծ խորհրդակցական Ազգային Ժողովը.—Երկու միջադէպ.—Դեսպանների հեռանալը.—Հայերի ուղերձն անգլիական դեսպանին.—Տպաւորութիւնը գաւառներում.—Գրիգոր Օտեանի բանակցութիւնները Լոնդոնում, Օսմանեան Սահմանադրութիւնը միջազգային կապակցութեամբ ապահովելու մասին.—Միդհատ փաշայի հրաժարականն և աքսորը.—Համիդական ռէժիմի առաջին արտայայտութիւնը.—Աբդուլ Համիդի կասկածոտութիւնը.—Վահան էֆէնդու պաշտօնը Լոնդոնում.—Բարձրաստիճան հայ պաշտօնեաները։

Գլուխ տասնվեցերորդ . . . . էջ 177—194
Օսմանեան սահմանադրութեան ներքին արժէքը.—Հայ երեսփոխանները.—Թիւրքիայի ներքին կացութիւնը.—Դաւակցութիւններ և նրանց նպատակը.—Լոնդոնի պրոտօկօլն (protocole) և պատերազմի յայտարարութիւնը.—Հայ կրօնապետների դիմումն անգլիական դեսպանին ընդդէմ Ռուսաստանի.—Օսմանեան խորհրդարանը.—Հայ երեսփոխանների ճառերը Ռուսաստանի դէմ.—Հայկական խնդիրը օսմանեան խորհրդարանում.—Խորհրդարանի արձակումը։

Գլուխ տասնեօթներորդ . . . . էջ 194—210
Վանի հրդեհն և քննութեան արդիւնքը.—Մարկոս Աղաբէկեան և Մկրտիչ Աղաթօն.—Գաւառացի հայերի վիճակը պատերազմի ժամանակ.—Ջարդ և բռնութիւններ.—Բողոքներ.—Սուլթան Համիդի և Ներսէս պատրիարքի սիրալիր տեսակցութիւնը.—Շքանշաններ պատրիարքին և առաջնորդներին.—Հայ փախստականները Կովկասում.—Գաղթականութեան հոսանքը.—Ռուսահայոց օգնութիւնը գաղթականներին։

Գլուխ տասնութերորդ . . . . էջ 210—228
Քրիստոնեաների զինուորագրութեան խնդիրը.—Բ. Դրան յայտարարութիւնն և ձեռնարկը 1855-ին.—Քրիստոնեաների մերժումը.—Ռուսական առաջարկութիւնը 1867-ին.—Բ. Դրան պատասխանը.—Թիւրք կառավարութեան ձեռնարկներն 1877-ին, պատերազմի ժամանակ.—Հայերի և յոյների ընդդիմութիւնը.—Ներսէս պատրիարքի վարմունքը.—Ազգային Ընդհանուր և Եկեղեցական Համագումար Ժողովների նիստերն և որոշումներն այս առթիւ.—Խնդրի փակումը։

Գլուխ տասնիններորդ . . . . էջ 228—241
Ազգային Ժողովի նիստերում ատենապետի փակման ճառն և պատրիարքի բացման ճառը.—Միջադէպ պատրիարքի և ատենապետի միջև.—Քաղաքական Ժողովի հրաժարականն և նորի ընտրութիւնը.—Ազգային Վարչութեան և Երեսփոխանական Ժողովի դիւանները 1877-ի վերջը.—Ներսէս պատրիարք և Հայկական Խնդրի նախերգանքը։

Գլուխ քսաներորդ . . . . էջ 241—254
Ազգային Սահմանադրութեան ծագումն և նրա նախընթաց շրջանը.—Հանգուցեալ գործիչներ Նիկ. Պալեան, Յակոբ Կրճիկեան և Նահ. Ռուսինեան.—«Ղալաթիոյ օջախ» կուսակցութիւնն և նրա գործունէութիւնը.—Մի քանի դիտողութիւններ Ազգ. Երեսփոխանական Ժողովի մասին.—«Ազգ. Սահմանադրութեան» թրքերէն բնագիրը։

ՄԱՍՆ Բ.

Գլուխ առաջին . . . . էջ 257—279
Ռուսական յաղթութիւնն և Կ. Պոլսի հայերի ձգտումը դէպի Ռուսաստան.—Հայկական մասնաւոր ժողով 1877 հոկտ. 21-ին.—Հայոց pia desideria-ն.—Ներսէս պատրիարքի պահպանողականութիւնը.—Նոր քաղաքականութեան պահանջ.—Խրիմեան Վարժապետեանի դէմ.—Եպիսկոպոսների գաղտնի խորհուրդը.—Վարժապետեանի՝ նոր քաղաքականութեան յարելը.—Թիւրք կառավարութիւնն՝ ակամայ պատճառ քաղաքական Հայկական Խնդրի ծագման.—Զինադադարի պայմանները.—Հայոց յուսաբեկութիւնն և ձեռք առած եռանդուն միջոցները.—Հայ

պատուիրակների տեսակցութիւնն Ադրիանուպոլսում մեծ իշխանի և Իգնատիեվի հետ.—Կ. Պոլսի հայերի ընդհանուր ոգևորութիւնն և մեծ յոյսերը.—Պլևնա.—Հայ եպիսկոպոսների աղերսագիրներն Ալէքսանդր Բ. կայսեր և իշխան Գորչակովին.—Իզմիրլեանի դերը Հայկական Խնդրում։

Գլուխ երկրորդ . . . . էջ 280—298

Հայ պատուիրակների գործունէութիւնն Ադրիանուպոլսում.—Իգնատիեվի համակրական վերաբերմունքը.—Հայաստանի ինքնավարութեան մասին հայոց իղձերը, նախնական յօդուածն և Թիւրք լիազօրների ընդդիմութիւնը.—Անգլիայի հակառակութիւնը.—Քաղաքական բարդութիւնների երկիւղը.—Մեծ իշխանի Սան-Ստեֆանօ տեղափոխուելը.—Խորէն եպ. Նար-Բէյի գործունէութիւնը.—Սան-Ստեֆանօյի դաշնագիրն և նորա տրամադրութիւնները հայոց մասին.—Ներսէս պատրիարքն և դաշնագրի թողած տպաւորութիւնը հայերի վրայ.—Ինքնավարութեան անյաջողութեան պատճառները.—Քննական տեսութիւն 16-դ յօդուածի մասին.—Արգայլի դքսի քննադատութիւնը։

Գլուխ երրորդ . . . . էջ 299—321

Իգնատիեվի յարաբերութիւնները Գէորգ Դ. կաթողիկոսի հետ.—Ռուսական հիւպատոսարաններ Հայաստանում.—Իշխ. Գորչակով.—Պօլօժէնիէի առթիւ թղթակցութիւններ.—Գէորգի երկիւղը Սիսի աթոռից.—Գէորգ Դ. և Խրիմեան պատրիարք.—Իգնատիեվի միջամտութիւնն և թղթակցութիւնը Գէորգի հետ.—Իգնատիեվի ծրագիրները Կ. Պոլսում.—Խորէն Նար-Բէյ.—Պէրայի գերեզմանատան հարցն և Իգնատիեվի միջամտութիւնը.—Քաղաքականութեան փոփոխումը։

Գլուխ չորրորդ . . . . էջ 321—337

Իզմիրլեան էջմիածնում.—Գէորգ կաթողիկոսի և Մանկունի եպիսկոպոսի վերաբերմունքը.—Սէրվիչէնի նամակը.—Նար-Բէյը Պետերբուրգում.—Հայաստանի ինքնավարութեան ծրագիրը.—Ալէքսանդր Բ. կայսրն և Նար-Բէյ.—Ռուսահայերն և ռուս լրագիրները Հայկական Խնդրի մասին։

Գլուխ հինգերորդ . . . . էջ 337—349

Օսմանեան Խորհրդարանի երկրորդ շրջանը.—Հայ երեսփոխաններն և նորանց քննադատական ճառերը.—Խիստ քննադատութիւն և յարձակում կառավարութեան դէմ.—Խորհրդարանի փակումն և փակման պատճառները.—Աբդիւլ Համիդի վերաբերմունքը. նորա ծայրայեղ կասկածոտութիւնը։

Գլուխ վեցերորդ . . . . էջ 349—364

Տեղեկագիր Հայաստանի ինքնավարութեան մասին.—Դիմումներ Բ. Դրան և եւրոպական տէրութիւններին.—Եկեղեցականների և աշխարհականների դերը Հայկական Խնդրում.—Հայոց քաղաքական հայեացքներն և տարբեր ուղղութիւնները.—Ռուսասէրներ, անգլիասէրներ և թրքասէրներ.—Հայ-կաթոլիկները.—Ընդհանուր ազգային համերաշխ գործունէութիւնը.—Ներսէսի այցելութիւնը մեծ իշխանին Սան-Ստեֆանօյում.—Հայկական պատուիրակութիւն ուղարկելու որոշումը։

Գլուխ եօթներորդ . . . . էջ 364—373

Հայ պատուիրակութիւն.—Խրիմեան Հայրիկ և Մինաս Չերազ.—Նորանց մեկնումը Կ. Պոլսից.—Պատուիրակութեան գործունէութիւնը Հռոմում և Պարիզում։

Գլուխ ութերորդ . . . . էջ 373—400

Մանչէստրի և Լօնդօնի հայ գաղութների գործունէութիւնը յօգուտ Հայկական Դատի.—Ջէյմս Բրայս.—Խրիմեանը Լօնդօնում և Մանչէստրում.—Ներսէսի կոնդակն և ծրագրական նամակը.—Անգլիական կառավարութեան հայեացքը.—Խրիմեանի տեսակցութիւնները Լօնդօնում քաղաքական շրջանների հետ.—Դեսպանների և քաղաքագէտների կարծիքը.—Սալիզբըրիի ճառը լորդերի ժողովում և Խրիմեանի պատասխանը.—Հայաստանի վիճակը.—Յոյսն և ոգևորութիւնը գաւառներում և Կ. Պոլսում.—Ներսէս պատրիարքի ճառն Ազգային Ժողովում։

Գլուխ իններորդ . . . . էջ 401—414

Անգլիական քաղաքականութիւնը Թիւրքիայի նկատմամբ.—Սան-Ստեֆանօյի դաշնագրի վերաբերեալ Անգլիայի և Ռուսաստանի բանակցութիւնները.—Անգլ. կառավարութեան հայեացքը Փոքր-Ասիայի մասին.—Կիպրոսի դաշնագրութիւնը.—Հայոց նոր խնամակալ։

Գլուխ տասներորդ . . . . էջ 415—448

Հայ պատուիրակներն և Թրքահայ պաշտօնեաները Բերլինում.—Պատուիրակութեան տեսակցութիւնը Բիւլի և Ուադինգտոնի հետ.—Հայկական Խնդրի պաշտօնական թղթերը.—Ա) Խնդրագիրը, Բ) Ծրագիր Կազմակերպական Կանոնագրի Օսմանեան Հայաստանի, Գ) Վիճակագիր Օսմանեան Հայաստանի և Ընդհանուր Ցուցակ, Դ) Վիճակագրական ծանօթութիւն Օսմանեան Հայաստանի բազմամարդութեան վրայ.—Նուպար փաշայի կազմած բարենորոգումների ծրագիրը.—Հայկական Խնդրի կոնգրէսի օրակարգը մտնելը.—Քննական ակնարկներ պօլսական և Նուպարի ծրագիրների մասին։

Գլուխ տասնմէկերորդ . . . . էջ 446—480

Թուրք կառավարութիւնն և Բերլինի հայ պատուիրակութիւնը.—Բ. Դրան ձեռք առած «բարենորոգչական» միջոցները.—Օսմանեան լիազօրների ընդդիմութիւնը Բերլինում.—Հայ պատուիրակները գերմ. կայսրուհու և Թագաժառանգի մօտ.—Հայոց ուղերձը Վիլհէլմ Ա. կայսրին.—Հայ պատուիրակների տեսակցութիւնն և յարաբերութիւնները կոնգրէսի ռուս, ֆրանս., անգլիական և այլ անդամների հետ.—Անգլիական քաղաքականութիւնն և Հայկական Հարցը.—Ռուսական քաղաքականութիւնը.—Կոնգրէսի նիստերը Հայկական Հարցի մասին.—Ոչ թէ ինքնավարութիւն, այլ միայն տեղական բարենորոգումներ.—Առաջարկուած զանազան բանաձեւերը Սալիզբըրիի, Շուվալովի, օսմանեան լիազօրների և հայ պատուիրակների կողմից.—Ինքնավարութեան անյաջողութեան պատճառները.—Բիսմարկի դերը.—61-րդ յօդուածը.—62-րդ յօդուածը.—Հայ պատուիրակների բողոքն և Բերլինից մեկնումը.—Կոմս-Լօրիս-Մելիքովի կարծիքը։

ՅԱՒԵԼՈՒԱԾ . . . . 1—105

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Անցեալ դարի վերջին քառորդից սկսած, դեռ եւ մինչև հիմայ ոչ մի ընդհանուր հարց այնքան չէ գրաւած հայ ժողովրդի ուշն ու միտքն, որքան Թրքական Հայաստանի վարչական, հասարակական և տնտեսական անտանելի վիճակի բարեփոխման խնդիրը։ Տասնեակ տարիներ մեր ժողովուրդը լարել է իր բովանդակ ոյժն և յանձն է առել ամեն կերպ բարոյական և նիւթական զոհողութիւն՝ այս նպատակի համար։ Միևնոյն ժամանակ՝ ոչ մի յոյս այնչափ դառն կերպով ի դերև չէ ելել, ոչ մի զոհողութիւն այնչափ դժբախտ արդիւնքի չէ յանգել և ոչ մի ձգտում այնչափ անյաջող վախճան չէ ունեցել, որչափ այն հարցն, որ յայտնի է իբրև «Հայկական Խնդիր», և որի պատճառով ամբողջ մի ժողովուրդ՝ Պատմութեան մէջ նմանը չտեսնուած սոսկալի հալածանքի և սարսափների է ենթարկուել։

Թրքական Հայաստանի ազատագրութեան խնդիրը թէև ի մօտոյ վերաբերում է օսմանեան հայերին, բայց այս շարժման մէջ սկզբից ի վեր այնքան բազմաթիւ ոչ-Թրքահպատակ և մանաւանդ ռուսահպատակ հայեր են մասնակցած, որ

Նրա ազդեցութիւնն և հետևանքը մեծ չափերով զգալի է եղած նաև Թիւրքիայի սահմաններից դուրս ապրող հայութեան համար։

Ձեռնարկելով գրել յատկապէս Հայկական Խնդրի պատմութիւնը՝ մենք անհրաժեշտօրէն պիտի զբաղէինք մի կարևոր ազգային հաստատութիւնով, որի շուրջն է դառնում օսմանեան հայոց ամբողջ ազգային, եկեղեցական և հասարակական կեանքն և որն անընդհատ ազդուել է Հայկական Խնդրից, ինչպէս և փոխադարձաբար ազդած է նրա վրայ։ Այս հաստատութիւնն «Ազգային Սահմանադրութիւնն» է, որով վարել են Թրքահայերն ահա կէս դարից ի վեր իրանց բոլոր ներքին ազգային կրօնական գործերը։ Ազգային Սահմանադրութիւնն որչափ ազգային, նոյնչափ և օսմանեան պետական օրէնք է։ Այս իրաւակարգի միջոցով 1850-ական թուականի գործիչները ձեռք էին բերել ցեղական կամ այսպէս ասենք «անձնական» (personnel) հայկական ինքնավարութիւն. իսկ նրանց յաջորդները կամ 70-ական թուականի գործիչներն՝ արծարծելով Հայկական Խնդիրն՝ աշխատում էին ստանալ տեղական կամ «հողային» (territorial) ինքնավարութիւն։ Հետևաբար, Հայկական Խնդրի պատմութիւնը թերի կերպով պիտի ներկայանար, եթէ միևնոյն ժամանակ զուգընթացաբար չուսումնասիրուէր և չնկարագրուէր նաև Ազգային Սահմանադրութիւնը։ Մէկը ծնունդ է տուած միւսին և երկուսն այնպէս շաղկապուած են, որ ազդում

են միմեանց վրայ և իրար փոխադարձաբար լրացնում։ Յատկապէս Ազգային Սահմանադրութեան նկատմամբ անցողակի կերպով յիշենք այստեղ, որ այս օրէնքն անձուկ կերպով վերաբերում էր միայն լուսաւորչական հայոց։ Հայ ազգի միւս՝ փոքրագոյն հատուածները, կաթոլիկ և բողոքական հասարակութիւնները, չեն մասնակցում նրա մէջ, այլ ունեն իրանց ուրոյն ներքին կազմակերպութիւնները, թէև աւելի սահմանափակ իրաւունքներով։

Ազգային Սահմանադրութեան պատմութեան մէջ մենք ընդարձակ տեղ ենք տուել Ազգային Երեսփոխանական Ընդհանուր Ժողովին, իբրև գլխաւոր, օրէնսդրական մարմնի։ Իսկ Ազգային Վարչութեան գործունէութիւնից մենք յիշատակել ենք մանաւորապէս այն, որ աղերս ունէր մեր Պատմութեան բուն նպատակին կամ որն ի մօտոյ շօշափում էր առանձնապէս ռուսահայոց ազգային-կրօնական շահերն, ինչպէս են օրինակի համար կաթողիկոսական ընտրութիւնները։

Ահա հայ կեանքի վերջին յիսնամեայ շրջանի այս մասն է, որ մենք ներկայացնում ենք մեր ընթերցողներին։ Երկար տարիների քննութեան և ուսումնասիրութեան արդիւնք է այս Պատմութիւնը։ Մենք աշխատել ենք կատարեալ անկողմնապահութեամբ դիտել և պատմել բոլոր անցքերն և երևոյթները։ Այս պատճառով էլ մենք երկար տարիների ընթացքում հաւաքել ենք և ուսումնասիրել այն բոլոր նիւթերն և աղբիւր-

ները, թէ պաշտօնական և թէ մասնաւոր, թէ տպուած և թէ ձեռագիր, թէ հայերէն և թէ օտար լեզուներով (թրքերէն, ռուսերէն, անգլիերէն, ֆրանսերէն և այլն), որոնք առնչութիւն ունէին մեր առաջադրած նպատակին կամ որոնք կարող էին լուսաբանել մեզ հետաքրքրող այս կամ այն երևոյթը։ Առանձնապէս օգտուել ենք անգլիական դիւանագիտական այն բոլոր Կապոյտ Գրքերից (Blue Books), որոնք 1876 – 1910-ի ընթացքում հրատարակուած են Թիւրքիայի մասին, ընդհանրապէս։ Միևնոյն ժամանակ՝ յիշեալ շրջանի դէպքերին անձամբ մասնակցող բազմաթիւ անձեր սիրայօժար կերպով մեզ բերանացի և գրաւոր նկարագրութիւն և բացատրութիւն են տուած, որոնց բոլորին այստեղ յայտնում ենք մեր ամենաջերմ շնորհակալութիւնը։

Անհրաժեշտ ենք համարում շեշտել այստեղ մի հանգամանք ևս։ Որովհետև մեր նկարագրած (կամ նկարագրելիք) դէպքերի հեղինակներից կամ վկաներից ոմանք — մանաւանդ այնպիսիները, որոնք գործել են կեղծ անուան տակ—դեռ ևս կենդանի են, ուստի մենք ստիպուած էինք որոշ զգուշաւորութիւն պահպանել նրանց նկատմամբ։

Յաւակնութիւն չունենք անշուշտ մեր այս Պատմութիւնն անթերի համարելու։ Կան հարկաւ դեռ այնպիսի աղբիւրներ—մանաւանդ պաշտօնական շրջանների կամ գաղտնի կազմակերպութիւնների գործունէութեան վերաբերեալ—որոնք մատչելի չեն եղած մեզ և որոնք գուցէ նոր

լոյս սփռէին այս կամ այն երևոյթի վրայ։ Բայց մենք կարծում ենք, թէ մեր այս աշխատութիւնն իր պակասաւոր կողմերով հանդերձ բաւականաչափ կը լուսաբանէ Հայաստանի և ընդհանրապէս Թիւրքիայի հայոց կեանքի վերջին յիսնամեայ արկածալից շրջանը։ Թէ որքան ենք յաջողած մեր ձեռնարկութեան մէջ, թողնում ենք այդ՝ անաչառ ընթերցողի դատողութեան։

Ա. ՄԱՍՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ամիրաներն և էսնաֆը։ Իսկիւտարի ճեմարանը։ «Միակամ» ընկերութիւնը։ Ժողովրդական իշխանավարութիւն։ Երկու դասակարգի մերձեցումը։ Ընտրողական սկզբունքը։ Ազգային կանոնադրութիւն։ Հոգևոր և գերագոյն ժողովներ։ Գաղափարական երիտասարդութիւն։ Ուսումնական խորհուրդը։

—

ԺԹ. դարի առաջին կէսին Կ. Պօլսի հայերի ազգային, հասարակական և մասամբ նաև կրօնական գործերի վրայ իշխում էր ամիրայական դասակարգը, որ բաղկացած էր սեղանաւորներից, մեծ վաճառականներից և պետական պաշտօնեաներից։ Սրանք էին որոշում ոչ միայն ժողովրդի, այլ նոյնիսկ պատրիարքների ճակատագիրը։ Իսկ ժողովուրդը ամիրաների հլու կամակատարն էր և միշտ խոնարհում էր նրանց անձնական հեղինակութեան և տնտեսական ուժի առաջ։

Բայց 30-ական թուականներին իրերի այս դրութեան մէջ սկսում է փոփոխութիւն նկատուել. խլրտում է ծագում մանուանոց էսնաֆ (արհեստաւոր) դասակարգի մէջ, որը, շնորհիւ իր միջի մի քանի գիտակից և համարձակ ոգու տէր անհատների, խուլ բողոքներ է բարձրացնում ամիրայական իշխանավարութեան դէմ։ Այս զժգոհութիւնը միայն յարմար առիթի էր սպասում ուժեղ կերպով երևան գալու համար։

Եւ վերջապէս ներկայացաւ այդ առիթը։ 1838-ին Կ. Պօլսում, պետական առաջին միջնակարգ դպրոցի (Գալաթասէրայի) բացումից 6 օր յետոյ, հայերը բա-

ցին իրանց ազգային դպրոցն Իսկիւտար, սախական Թաղում, Ճեմարան անունով։ «Իսկիւտարի Ճեմարանը» հիմնուել էր գլխաւորաբար ամիրաների ջանքով, որոնք խոստացել էին որոշ դրամական օժանդակութիւն։ Բայց եկամտի գլխաւոր աղբիւրն Երուսաղէմի վանքիցն էր, որ այդ Թաղում ունէր իր սեփական կալուածը։ «Ճեմարանը» կարճ ժամանակում մեծ համակրանք գտաւ ժողովրդի մէջ և առաջին լուրջ խթանը դարձաւ նրա գիտակցութեան։ Ամիրաները, զգալով այս նոր հոսանքի ամբողջ վտանգը՝ զղջացին, հրաժարուեցին իրանց խոստացած նպաստից, համոզեցին Երուսաղէմի պատրիարքին ևս մերժել վանքի պայմանագրած նիւթական օժանդակութիւնը, յորդորեցին իրանց ծանօթներին չուղարկել այնտեղ իրանց որդոց. մի խօսքով, ամէն ջանք գործ դրին, որ դպրոցը հասոյթի աղբիւրներից զրկուի և փակուի։ Այդ ժամանակ ժողովրդի առաջ անհրաժեշտ պահանջ դրուեց իր սեփական թոյլ միջոցներով պահպանել նրա գոյութիւնը։ Այս նպատակով կազմուեց մի յանձնաժողով, որ ստանձնեց ոչ միայն Ճեմարանի պահպանութեան համար սահմանուած տուրքը, այլ և ընդհանրապէս ազգային տուրքի հաւաքումը։ Բայց տուրքի գանձումը բնականաբար իր հետ պիտի բերէր նաև ձգտում ծախքի վրայ հսկելու, որ նշանակում էր՝ ազգային գործերի կառավարութեան մէջ մասնակցութիւն։ Այդպէս էլ եղաւ։ Յանձնաժողովը ներկայացրեց այս պահանջը։ Եւ որովհետև ամիրաների հեղինակութիւնը դեռ մեծապէս զգալի էր, մանաւանդ իրանց շրջանում, ուստի յանձնաժողովը դժուարացաւ գործերը վարել առանց նրանց գործակցութեան և նրանցից ևս հրաւիրեց 6 անդամ։ Սակայն խրոխտ ամիրաներն իրանց արժանապատուութեանը հակառակ համարեցին Էսնաֆի հետ անդամակից լինելը։ Նրանց մերժման մէջ հաւանօրէն չարախնդութեան զգացմունք ևս կար, որ էր ցոյց տալ, թէ ժողովրդական տարրը

անկարող էր ազգային գործերը կառավարել։ Էսնաֆը չվհատուեց նրանց այս մեկուսացումից. ընդհակառակն՝ այս հանգամանքը պատճառ հանդիսացաւ, որ առաջին անգամ Կ. Պօլսում հիմնուեց մի ընկերութիւն, Միակամ անունով, որի նպատակն էր ընդհանրապէս ուսման տարածումն և մասնաւորապէս Ճեմարանին նիւթական նպաստ հասցնելը։ Ապա կազմուեց մի տեսակ ազգային վարչութիւն, 24 անդամից բաղկացած, բացառապէս ժողովրդի միջից, որ իր ձեռքն առաւ պատրիարքարանի գործերի ղեկավարութիւնը։ Ամիրաները լուռ հանդիսատեսի դեր էին կատարում սկզբում, բայց յետոյ սկսեցին մեքենայութիւններ նիւթել և ծածկաբար արգելքներ յարուցանել։ Դժբախտաբար նրանք յաջողութիւն ունեցան. կարելի չեղաւ Ճեմարանի նիւթականը հոգալ, և նա հարկադրուեց իր դռները փակել։ Այս անյաջողութիւնը նոր յուզում առաջացրեց Էսնաֆի մէջ, որ ամիրաների դէմ նոյն-իսկ սուլթանին գանգատ ներկայացրեց։ Բայց ամիրաների ազդեցութիւնը շատ մեծ էր դեռ, և կառավարութիւնը բանտարկեց գանգատաւորների պարագլուխներին։ Այս բանտարկութիւնն աւելի ևս յուզեց ժողովրդին, որ այս անգամ իր բողոքի ձայնը բարձրացրեց նոյն-իսկ կառավարութեան դէմ։ Մի գինեպանի (Իսկէնտէր) առաջնորդութեամբ ահագին ամբոխը ցոյց կազմակերպեց Բ. Դրան առաջ, որ զիջեց և հրամայեց արձակել բանտարկուածներին։

Ամիրաներն այնու ամենայնիւ շարունակում էին արհամարհել ժողովրդական շարժումն և դիմադրել նրան։ Երբ երկու դասակարգի մէջ հակառակութեան ոգին ծայրայեղութեան հասաւ, այն ժամանակ միայն՝ թէ կառավարութիւնը և թէ պատրիարքարանը համոզուեցին, որ ամիրայական իշխանավարութեան վերադարձն անհնար էր այլ ևս և անհրաժեշտ էր գոհացում տալ ժողովրդական պահանջին։ Սկսուեցին միջամտու-

թիւններ և խորհրդակցութիւններ, որոնց արդիւնքն այն եղաւ, որ 1841 թ. դեկտ. 12-ին կայսերական հրովարտակով հաստատուեց 27 հոգուց մի նոր ազգային վարչութիւն, որի անդամները բացառապէս ժողովրդից էին, մեծ մասամբ արհեստաւորներ։ Միևնոյն ժամանակ ամիրաներին էլ կառավարութեան կողմից արգելուեց այսուհետև միջամտել ազգային գործերին։

Այսպէս հիմք է դրվում ժողովրդական իշխանավարութեան ոչ միայն Կ. Պօլսի հայերի, այլ և ամբողջ Թիւրքիայի հայերի մէջ։ Սակայն ձեռք բերուած յաջողութիւնն երկար չէ տևում. ժողովականների անփորձութիւնը մի կողմից, նիւթական միջոցների բացակայութիւնը միւս կողմից դժուարացնում են վարչական մեքենայի կանոնաւոր ընթացքը. գործերը սկըսում են կաղել, և 27-ի վարչութիւնը գլխիկոր իր տեղը զիջում է ամիրաներին։ Ամիրաների այս յաղթութիւնն էլ կարճատև եղաւ։ Ամբողջ վարչական մեքենան այնպէս էր փչացել, երկու հակառակ բանակներն այնպէս էին միմեանց փոխադարձաբար խանգարում, որ ոչ մի գործ առաջ չէր գնում։ Իսկ պատրիարքներն այս միջոցին կամ հրաժարվում էին և կամ գահընկէց լինում ու կարճ ժամանակ պաշտօնավարելով՝ միմեանց յաջորդում։ Երբ յուզումն և խռովութիւնն այսպէս անվերջ շարունակվում էր. Մատթէոս պատրիարքն իրաւախոհի դեր ստանձնելով՝ երկու կողմից մի քանի խոհեմ և բանիմաց անձերի օգնութեամբ հաշտութեան կամուրջը կանգնեց։ Թէ ամիրաներն և թէ էսնաֆը համոզուեցին այս երկարամեայ պայքարներից և ամուլ գործունէութիւնից, որ առանձին առանձին, առանց մէկը միւսի աջակցութեան, անկարելի էր ազգային գործերը վարել։ Փոխադարձ զիջումով նրանք ձեռք ձեռքի տուին և որոշեցին գործել համերաշխութեամբ։ Կազմուեց մի «Ազգային ժողով», որին անդամ էին 16 ամիրա և 14 էսնաֆ։ Եւ այսպէս երկարամեայ ոախները, հայ պլուտոկրատիան (plutocratie) և արհեստաւորը՝ իրաւունքի հաւասարութեան հիման վրայ՝ իշխանութիւնը բաժանեցին միմեանց մէջ։ Այս մերձեցումը ահագին դեր կատարեց Կ. Պօլսի հայերի կեանքում։ Ամիրաները նոյն-իսկ իրանց համար անզգալի կերպով և երկրի քաղաքական հանգամանքների էլ փոխուելով՝ խառնուեցին ժողովրդի հետ, կապուեցին նրա հետ. ամիրայութիւնը կորցրեց իր գոյութեան իրաւունքը, իբրև առանձին դասակարգ։ Այդ օրւայ ամիրաների նոր սերունդը մերձաւոր ապագայում մեծ դեր պիտի խաղար ժողովրդի հասարակական կեանքում, բայց այլ ևս ոչ իբր ամիրա, այլ իբր ժողովրդի մի անդամ, իբր անձնականապէս կրթուած, զօրեղ և արժանաւոր անձ։ Ժողովուրդը մեծապէս շահուեց այս ձուլումից, որովհետև փոխանակ ներքին պայքարի մէջ սպառելու իր նորահաս բարոյական և կրթական ոյժերը՝ նա հաւաքական ուժով նուիրուեց իր ընդհանրութեան կենսական, հասարակական շահերին։

Անշուշտ, այս արդիւնքն անմիջապէս ձեռք չբերուեց, բայց այդ մերձեցումն այլ ևս անխախտ պիտի մնար, չնայելով ժամանակի դժգոհութիւններին։ Դրա ապացոյցը շատ շուտով երևաց։ Մատթէոս պատրիարքը, որ ակնածում էր միայն ամիրայական ազդեցութիւնից, երբ նկատեց այս ազդեցութեան թուլանալը՝ սկսեց կարևորութիւն չտալ նոր Ազգային ժողովներին և միահեծան իշխանութեան ձգտումներով օրօրուել։ Նա գործում էր ինքնագլուխ. այլ ևս պէտք չէր զգում խորհրդակցելու ամիրաների կամ նրանց անդամակից ժողովականների հետ։ Եւ երբ Ազգային ժողովը որևէ վարչական կարգադրութիւն էր անում՝ նա հակառակում էր։ Օրինակի համար, երբ Ազգ. ժողովը որոշում էր արձակել կամ տեղափոխել այս կամ այն գաւառական առաջնորդին՝ Մատթէոս պատրիարքն ընդդիմանում էր այդ որոշման, եթէ ինքն անձնականապէս

տարբեր կարծիք ունէր այդ մասին։ Եւ նա առաջ էր մղում այն պատճառաբանութիւնը, թէ աշխարհականները իրաւունք չունէին խառնուելու հոգեւորականների և հոգեւոր գործերի մէջ, որոնք կախուած էին միմիայն իրանից, և թէ աշխարհական ժողովականները պարզապէս նրա խորհրդականներն էին միայն տնտեսական և կրթական գործերի մէջ։ Ամիրա և արհեստաւոր, միացած յանձին Ազգային ժողովի՝ մերժեցին պատրիարքի այս ինքնիշխանական յաւակնութիւնը։ Երկու նախկին ատեանները ընդհանուր հիմն էին դառել միութեան, որ այնուհետև անարգել շարունակուեց։ Նրանք, և գլխաւորապէս ամիրաները, ազգային գործերի կառավարութեան համար նոր ծրագիր մշակեցին, որ հիմնուած էր ժողովրդի ընտրողական սկզբունքի վրայ։ Այս ծրագրով թէ հոգևոր և թէ քաղաքական գործերը յանձնվում էին ժողովրդից ընտրուած ներկայացուցչական մի մարմնի։ Կառավարութիւնը ոչ մի ընդդիմութիւն ցոյց չտուեց։ 1847-ին վաւերացուեց այս նոր «Ազգային Կանոնադրութիւնը», որի հիման վրայ պատրիարքարանի գործերի ղեկը անցնում էր երկու ընտրուած «ազգային ժողովների» ձեռքը։ «Հոգևոր ժողովը» պիտի բաղկանար 14 եկեղեցականներից և պիտի զբաղուէր յատկապէս կրօնական գործերով, իսկ «Գերագոյն ժողովը» քաղաքական գործերի վրայ պիտի հսկէր. Նա աւելի բազմամարդ էր սահմանվում. 20 աշխարհական էին լինելու նրա անդամները, ընտրուած Կ. Պոլսի ժողովրդից՝ անխտիր։—Ըստ կանոնադրութեան տեղի ունեցան ընտրութիւնները, և նոյն տարին, մայիսի 20-ին, նորընտիր ժողովները կայացրին իրանց առաջին նիստը։

Ժողովրդական ընտրողական սկզբունքի այս յաղթանակը միայն եսնաֆ (արհեստաւոր, գործակատար, բանակիր և այլն), դասակարգի տկարութեան և գիտակցութեան արդիւնք չէր։ Այն միջոցին Կ. Պոլսի հայութեան մէջ արդէն սկսել էին գործել մի խումբ գա-

ղափարական երիտասարդներ, որոնք իրանց ուսումն և կրթութիւնն առել էին Կ. Պոլսում—կարճատև Իսկիւտարի ճեմարանում, Գալաթա-սէրայի պետական լիսէյում (lycée), Մխիթարեանների՝ Պարիզի և Վենետիկի վարժարաններում և հ. Գաբրիէլ վ. Այվազովսկու՝ Պարիզի «Արևելեան դպրոցում»։ Դրանք էին, որ 1846-ին հիմնեցին Կ. Պոլսում յայտնի «Համազգեաց ընկերութիւնը», որին անդամակցում էին լուսաւորչական և կաթոլիկ հայեր, և որ հանդիսանում էր առաջին փորձը համազգային համերաշխ գործունէութեան, առանց դաւանութեան խտրութեան։—Հայոց մտաւորական զարգացման մէջ աննշան դեր չեն խաղացել նաև բողոքական անգլիացի միսիոնարները, որոնց աջակցութեամբ 1846-ին հաստատուեց Կ. Պոլսում հայ-աւետարանական եկեղեցին, և սա անշուշտ աւելի արդիւնաւոր կը լինէր այս ասպարէզում՝ եթէ հալածանք չը սկսուէր հայ-բողոքականութեան դէմ այն ժամանակ, երբ նոյնպիսի հալածանքն ընդդէմ հայ-կաթոլիկութեան գրեթէ դադարել էր կամ գոնէ մեղմացել։—Վերոյիշեալ և այլ եւրոպական, յատկապէս ֆրանսիական դպրոցներից նորաւարտ այս երիտասարդութիւնը, որ ոգևորուած էր 1848-ի ֆրանսական յեղափոխութեան ազատական գաղափարներով, այնուհետև իրան նուիրեց ազգային դաստիարակութեան նուիրական գործին։ Հոգևոր և Գերագոյն ժողովների հաւանութեամբ նրանք հիմնեցին 1853 թ. հոկտեմբերի 21-ին առաջին «Ուսումնական Խորհուրդը», որին անդամներ հանդիսացան ապագայում «Ազգային Սահմանադրութեան» խմբագրողներն և հիմնադիրները, ինչպէս են դոկտոր Նահապետ Ռուսինեան, Նիկողոս Պալեան, Գրիգոր Օտեան, դոկտ. Սէրվիչէն (Սերովբէ Վիչէնեան), Կարապետ Ութուճեան և այլն։—Սրանք էին, որ ձեռնարկեցին կազմել մի ընդհանուր դպրոցական կանոնադրութիւն, ծրագրեցին դպրոցներ բանալ, և միևնոյն ժամանակ

գործում էին նաև մասամբ հայ հրապարակագրական ասպարիզում։ Իրերի դրութիւնը շարունակուեց այսպէս մինչև 1856 թ. արևելեան պատերազմի վերջը։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

1856-ի Պարիզի դաշնագիրն և Թիւրքիայի բարենորոգումները (Թանզիմաթ)։ Հայ «Սահմանադրական ժողովը»։ Պահպանողականների հակառակութիւնը։ Ազգային Սահմանադրութեան սկզբնաւորումը։

Երբ Թիւրքիան՝ Ռուսաստանի դէմ մղած պատերազմում, երեք եւրոպական պետութիւնների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և փոքրիկ Սարդինիայի զինուորական, իսկ Աւստրիայի բարոյական աջակցութեան շնորհիւ՝ պարտութիւնից ազատուեց, սուլթան Աբդիւլ Մէջիդ՝ իր դաշնակիցների յորդորով կամ աւելի ճիշտը՝ նրանց ճնշման տակ, Փարիզի կոնգրէսի (congrès) բացման նախորդ օրը, 1855 թ. փետրվարի 18-ին, հրատարակեց Օսմանեան «Թանզիմաթը» (բարենորոգումների հրովարտակ), մի նշանաւոր «Խաթթը Հիւմայուն» *), որով բացի ընդհանուր երկրի համար բազմաթիւ բարենորոգութիւններ խոստանալուց, նա առանձին արտօնութիւններ էր շնորհում իր քրիստոնեայ հպատակներին։ Փարիզի դաշնագրի (1856 թ. մարտ 30) 9-րդ յօդուածը, յիշելով այդ հրովարտակը՝ շեշտում է յատկապէս, որ նա պէտք է իբր հիմն ծառայէ Թիւրք կառավարութեան և սուլթանի քրիստոնեայ հպատակների փոխա-

*) Խաթթ (արաբ.) նշանակում է բառացի իմաստով ձեռագիր։ Երբ խօսքը սուլթանի ձեռագրի մասին է՝ սովորաբար աւելացնում են «շէրիֆ» (նուիրական) կամ «հիւմայուն» (արքունի) բառերը։ «Խաթթը շէրիֆ» կամ «Խաթթը հիւմայուն»—նշանակում է արքունի հրովարտակ։

դարձ յարաբերութիւնների։ — Որովհետև օսմանեան հպատակ հայերի և միւս քրիստոնեաների համար այդ Թանզիմաթը շատ մեծ կարևորութիւն է ունեցել իբրև մի կռուան, որի վրայ յենուելով՝ եւրոպական պետութիւններն անընդհատ ճնշում են գործ դրել Թիւրքիայի վրայ ի նպաստ նրա քրիստոնեայ բնակիչների, և այդ է եղել պաշտօնական հիմնաքարը Հայոց Ազգային Սահմանադրութեան, և առհասարակ պատրիարքարանների առանձնաշնորհումների՝ ուստի աւելորդ չենք համարում փոքր ինչ կանգ առնել այստեղ նրա վրայ։

Փարիզի դաշնագրի 9-րդ յօդուածն ասում էր.

«Ն. Մեծութիւն Սուլթանը՝ իր հպատակների բարեկեցութեան մասին ունեցած մշտական հոգացողութեամբը՝ յատուկ ֆէրման շնորհեց, որով բարւոքում է առանց ցեղի և կրօնի խտրութեան նրանց բոլորի վիճակը և դրանով նա նուիրագործեց իր վեհանձն դիտաւորութիւնները Թիւրքիայի քրիստոնեայ ժողովրդի նկատմամբ։ Միևնոյն ժամանակ ցանկալով մի նոր ապացոյց ևս տալ իր այս զգացումներին՝ նա հաղորդեց դաշնագիրն ստորագրող պետութիւններին վերյիշեալ ֆէրմանը (հրովարտակ), որը սուլթանի արքայական կամքի ինքնաբուղխ արտայայտութիւնն է։ Պետութիւնները ճանաչում են այս յայտարարութեան կարևոր նշանակութիւնը։ Ինքն ըստ ինքեան ենթադրվում է, որ այս հանգամանքը բնաւ իրաւունք չէ տալիս յիշեալ պետութիւններին՝ ոչ միասին և ոչ առանձին՝ խառնուել ոչ սուլթանի և իր հպատակների փոխադարձ յարաբերութիւնների և ոչ էլ նրա կայսրութեան ներքին գործերի մէջ»։

Փարիզի այս դաշնագրով Թիւրքիան առաջին անգամ պաշտօնապէս ընդունվում էր քաղաքակիրթ մեծ պետութիւնների շարքը, որի փոխարէն նրանից պահանջուել էր՝ բարեկարգել իր երկիրը և հաւասարութիւն շնորհել իր բոլոր հպատակներին անխտիր։

Եւրոպական այն պատմագիրները, որոնք ուսումնասիրել են Թիւրքիայի բարենորոգումների հարցը՝ վկայում են, որ այս Թանզիմաթի խմբագրութեան մէջ մեծ դեր են խաղացել Անգլիայի, Ֆրանսիայի և Աւստրիայի դեսպանները, և գտնում են, որ շատ անխորհուրդ քաղաքականութիւն և մեծ սխալ էր պետութիւնների կողմից նախ՝ թոյլ տալ, որ Թիւրք կառավարութիւնն ինքն իր կամքով ներմուծէ և գործադրէ 1856-ի ֆերմանով խոստացած բարենորոգումները. այս սխալը նրանք շատ շուտ հասկացան, երբ տեսան, որ բարենորոգումները մնում էին միշտ թղթի վրայ, իբրև մեռած տառ. Երկրորդ՝ մոցնել 9-րդ յօդուածի այդ վերջին պարբերութիւնը, որի վրայ էր հիմնվում Թիւրք կառավարութիւնը՝ մերժելու համար եւրոպական պետութիւնների միջամտութեան իրաւունքը Թիւրքիայի ներքին գործերում, թէև պետութիւնները այլապէս էին մեկնում այս միջամտութեան հարցը: Իսկ բուն ֆերմանի (Թանզիմաթի), մէջ քրիստոնեաներին վերաբերեալ տրամադրութիւնները հետևեալներն էին.

«Այն բոլոր առանձնաշնորհումներն և կրօնական արտօնութիւնները, որոնք մեր նախնիքներից ի վաղուց անտի շնորհուել են պետութեան մէջ բնակվող և իմ պաշտպանութիւնը վայելող բոլոր քրիստոնեայ և այլ ոչ—մահմեդական հասարակութիւններին՝ վաւերացուած են մեզանից և պիտի պահպանուին:—

«Իւրաքանչիւր քրիստոնեայ կամ ոչ—մահմեդական հասարակութիւն պարտաւորվում է մի որոշ ժամանակի ընթացքում իր միջից ընտրուած յանձնաժողովի միջոցով, Բ.—Դրան հսկողութեան տակ և իմ բարձր բարեհաճութեամբ, քննել իր ունեցած առանձնաշնորհումներն և արտօնութիւնները, սահմանել ժամանակի և քաղաքակրթութեան պահանջած բարենորոգումներն և հաղորդել Բ. Դրանը:

Փարիզի դաշնագրի և Թանզիմաթի այս տրամադ-

րութիւններից ամենից վաղ օգտուեցին հայերը, որոնք արդէն մինչև այդ ժամանակ մտել էին սահմանադրական վարչութեան ճանապարհը իրանց ներքին ազգային, հասարակական և կրօնական գործերի կարգաւորման համար, թէև սահմանադրութիւն բառը դեռ չէր գործածուել: Սուլթան Մէջիդի առաջին հրովարտակից (1854 օգոստ. 26) անմիջապէս յետոյ, Գերագոյն Ժողովը կազմեց մի առանձին մարմին, և առաջին անգամ «Սահմանադրական յանձնաժողով» անունը տալով նրան՝ յանձնարարեց կազմել մի նոր «Ազգային կանոնադրութիւն»՝ փոխուած՝ ըստ պահանջման նոր հանգամանքների: Այս յանձնաժողովը բաղկացած էր 9 հոգևորական և 12 աշխարհական անձերից: Ուսումնական խորհրդի անդամների մեծ մասը մասնակցում էր այս ժողովին և նրա մէջ գլխաւոր գործող ոգին էր հանդիսանում: Յանձնաժողովը իր գործն աւարտեց 1857-ի փետրվարին: Մի բազմամարդ ընդհանուր ժողովում, որին հրաւիրված էին մասնակցելու, բացի Հոգևոր և Գերագոյն ժողովներից, նաև բազմաթիւ եկեղեցական և աշխարհական երևելիներ, նոր կազմուած կանոնադրութիւնը հաւանութիւն գտնելով՝ հաստատուեց և որոշուեց գործադրել: Կանոնադրութիւնը կազմուած էր լայն, ժողովրդական ոգով և յառաջադիմական ձգտումներով, որ որոշ խմբի համար չափազանց անհաճոյ էր, և սա չուշացաւ իր խիստ դժգոհութիւնը յայտնելու: Հաստատումից հազիւ մի քանի ամիս էր անցել, երբ ամիրաների և կղերականների մի խումբ յայտնի կերպով հակառակութիւն յարուց նոր կանոնադրութեան դէմ: Այս խմբի պարագլուխներն իբր թէ կրօնի և ազգային աւանդութիւնների հակառակ կանոններ էին գտել նրա մէջ: Իրանց ընդդիմութիւնը բանը այնքան յառաջ տարին, որ յաջողեցան Թիւրք կառավարութեան ձեռքով խափանել տալ նրա գործադրութիւնը: Բայց սկսուած բարեփոխման շարժումը,

սահմանադրակա՛ն հոսանքը՝ հեշտ չէր կասեցնել։ Բժիշկ Սէրվիչէնի ջանքերով 1859-ին մի նոր յանձնաժողով վերստին ձեռք առաւ խնդիրը։ Այս անգամ յանձնաժողովի մէջ գերակշռում էր աշխարհական տարրը. հանդէս եկան դարձեալ նրանք, որոնք այնքան մեծ զարկ էին տուել սահմանադրական գաղափարի տարածման, այսինքն Գրիգոր Օտեան, դոկտոր Ռուսինեան, Կարապետ Իւթիւճեան և այլն։ Խմբագրիչ նոր յանձնաժողովը դեկտեմբերի սկիզբին ներկայացրեց իր կազմած ու բարեփոխուած նոր կանոնադրութիւնը ընդհանուր ժողովին։ Բայց այս անգամ էլ պատրիարքը (Գէորգ) հանդիսացաւ նրա անողոք թշնամին, որ վերև յիշուած պահպանողականների խմբի վրայ յենուելով՝ արգելքներ էր յարուցանում, չէր ուզում վաւերացնել տալ և գաղտնապէս աշխատում էր, եթէ կարելի է, իսպառ ջնջել նոր կանոնադրութիւնը։ Սահմանադրական խումբը, Սէրվիչէնի առաջնորդութեամբ, յուզվում է և բողոքում պատրիարքի ու սահմանադրութեան այլ հակառակորդների կամայականութեան և մեքենայութիւնների դէմ։ Այս նոր պայքարը հնի և նորի մէջ, բարեբախտաբար, երկար չտևեց։ Սահմանադրական խումբը նոյնպէս ունէր այս անգամ իր ազդեցիկ համախոհները, որոնց շնորհիւ շուտով հարցը լուծուեց նրա օգտին։ Եւ որովհետև նրանք համոզուեցին, թէ ներկայ պատրիարքի օրով յոյս չկայ յաջողելու՝ ուստի տապալեցին Գէորգին 1860 թ. ապրիլին, նրա տեղ նստեցրին Սարգիս եպիսկ. Գույումճեանին, և ահա այդ ժամանակ վերջապէս ընդհանուր ժողովից հաստատուեց և պատրիարքից վաւերացուեց նոր կանոնադրութիւնը, որը դոկտ. Ռուսինեան մկրտեց «Ազգային սահմանադրութիւն» փառաւոր տիտղոսով։ Նա սկսեց գործադրուել 1860 թ. մայիսի 24-ից։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Քննադատութիւն Ազգային Սահմանադրութեան։ Առաջին Ազգային Երեսփոխանական ժողովը։ Առաջին Քաղաքական ժողովը։ Առաջին ազգային բիւջէն։ Առաջին կնճռոտ հարցը։ Սահմանադրութեան վերաքննութիւնն և հաստատութիւնը կառավարութիւնից։ 1860 և 1863-ի Սահմանադրութիւնների տարբերութիւնը։

Ի՞նչ արժանաւորութիւններ և թերութիւններ ունէր 1860-ի Ազգ. Սահմանադրութիւնը։ Այս մասին մի բնական քննադատութիւն ունի բազմահմուտ միջազգային իրաւագէտ Րօլէն-Ժագմէն իր մի նշանաւոր գրուածքում, որի վերնագիրն է «Հայաստանը, հայերը և դաշնագրութիւնները» *)։

«Նախ կանգ առնենք,—ասում է յարգելի հեղինակը,—այս կանոնադրութեան անուան վրայ։ Նա կրում է՝ սահմանադրութիւն մեծաղղորդ կոչումը, ուր որ իսկապէս աւելի յարմար և իր բովանդակութեան աւելի համապատասխան կը լինէր անուանել պարզապէս «Կանոնադրութիւն հայ համայնքի», որի նպատակն ուրիշ բան չէ, եթէ ոչ կազմակերպումն կիսով չափ աշխարհական և կիսով չափ կրօնական մի հասարակութեան, որի իրաւունքները դադարում են ճիշտ այնտեղ, որտեղ սկսում են մի իսկական պետութեան իրաւունքները։ Ես հակուած եմ կարծելու, թէ այս խարուսիկ և բարձրագոչ անունը պարզ սխալմունքի արդիւնք չէ։ Թիւրք կառավարութիւնը, ընդունելով այս

*) Rolin-Jacquemyns, L' Arménie, les Arméniens et les traités, Paris 1877, որի անգլիերէն թարգմանութիւնն երևաց Լօնդոնում 1891-ին, իսկ ռուսերէնը Մոսկվայում 1896-ին։

Rolin Jacquemyns գրել է նաև Le droit international et la question d'Orient. Dand. 1876։ Բացի դրանից արևելեան խնդրի մասին ունի լուրջ ուսումնասիրութիւններ՝ «Revue de droit international et de legislation comparée» հանդէսում։

ԳՐԱԴԱՐԱՆ БИБЛИОТЕКА

սահմանադրութիւնը՝ հաւատարիմ է մնացել իր սիստէմին, որ է փառաւոր էտիքէտներ (etiquette) *) դնել դատարկ տուփերի վրայ։ Միւս կողմից հաւանական է, որ այս «ազգային սահմանադրութիւնը» յօրինող պոլսեցի հայերն ամենեւին ընդդէմ չէին այն պատրանքին, որ տալիս էր «սահմանադրութիւն» բառի բուն իմաստը։ Այս կարծիքն իմ մէջ հաստատւում է մանաւանդ նրանով, որ այս կանոնադրութեան մէջ խօսքն և գործը միմեանց կատարելապէս հակասում են։ Ըստ երեւոյթին այս 150 յօդուածները ներկայացնում են մի շէնք, որ կառուցուած է մեր ժամանակակից դէմօկրատական սահմանադրութիւնների (constitution) ոճով. այնտեղ կայ գեղեցիկ յառաջաբան հիմնական, ղեկավարող սկզբունքներով, կան կենտրոնական և գաւառական վարչութիւն, ազգային ներկայացուցիչների ժողովներ, թաղական և գաւառական ներկայացուցիչների տեղական ժողովներ և ազգային խորհուրդներ, որոնք պարտաւոր են հսկել ժողովրդի կրթութեան, վարչութեան, ֆինանսների և արդարադատութեան վրայ. կան կարգադրութիւններ, որոնցով կանոնաւորվում են՝ ընտրութեան և ընտրելութեան իրաւունքը, ընտրելու ձեւը, ժողովների կարգապահութիւնն և մինչև-իսկ սահմանադրութեան վերաքննութեան եղանակը. այնտեղ կայ ամեն ինչ, բացի մի յօդուածից, որի վրայ հայը կարողանար հիմնուել՝ արգելելու համար, որ քիւրդը չխլէ նրա ոչխարները, բէյը չանպատուէ նրա աղջկան և չաւերէ նրա կալուածը, որ հարկահաւաքը երկու և երեք անգամ չպահանջէ նրանից միեւնոյն հարկը,—մի խօսքով ամեն ինչ կայ, բացի մի այնպիսի կարգադրութիւնից, որ նրան, հային, իբրև երաշխաւորութիւն ծառայէր ընդդէմ թիւրք կառավարութեան կամայականութեան և ստիպէր սրան գործունէութիւն ցոյց տալու։ Այս սահմանադրութեան մէջ ոչ մի տեղ չկայ լուրջ երաշխաւորութիւն հայ ազգի ոչ հաւաքական և ոչ էլ նրա մասնաւոր անհատների անձնական իրաւունքների մասին... Չէ կարելի չխոստովանել, որ Ազգային սահմանադրութեան վարչական բարդ կազմուածքի բոլոր գործողութիւնները վերջի վերջոյ կախուած ունէին միշտ և մի միայն Բ. Դրան բարի կամքից, որ հասարակական ոյժի միակ տէրն էր։ Միւս կողմից անկարելի է, որ այսչափ մեծ թուով ժողովների և խորհուրդների (և դիւանների) մէջ թիւրիմացութիւններ և ընդհարումներ չծագէին, որոնք աւելի պիտի թուլացնէին ազգային գործը քան թէ զօրացնէին։

*) Ես աւելի նպատակայարմար եմ համարում գործածել այս՝ էտիքէտ, ռէժիմ, սիստէմ և այլն եւրոպական բառերը, քան նրանց բռնազբօսիկ հայերէն թարգմանութիւնները։ Այս բառերն արդէն քաղաքացիութիւն են ստացել մեր լեզուի մէջ և աւելի հասկանալի են։

«Բայց պէ՞տք է արդեօք եզրակացնել մեր ասածներից, որ այս կազմակերպութիւնը, որի գլխաւոր գծերը նշանակեցինք այստեղ, անօգուտ էր։ Ես հեռու եմ այս բանը հաստատելուց։ Ընդհակառակը, կարծում եմ, որ թէ ներքին տիրապետողների և թէ եւրոպական հասարակաց կարծիքի առաջ հայերի համար շատ կարևոր էր ունենալ այսպիսի մի օրգան, որչափ էլ նա թերութիւններ ունենար։ Եւ եթէ բուն Հայաստանում ապրող հայերը փոքր թուով են ներկայացուած Ընդհ. ժողովում՝ նրանց գանգատները այնու ամենայնիւ արձագանգ կը գտնեն իրանց Կ. Պօլսի եղբայրների և պատրիարքի սրտերում։ Այսպէս էլ եղաւ, շնորհիւ Սահմանադրութեան ըստ երեւոյթին աննշան և անորոշ մի յօդուածի, որտեղ ասուած է՝

«§ 8. Ազգային վարչութեան՝ Ազգին հետ, Արարատեան Մայր Աթոռին հետ, Բարձրագոյն Դրան հետ ունեցած յարաբերութիւնները սա սկզբանց վրայ հիմնուել պիտի ըլլան.

«Ազգին և ազգայնոց հետ միշտ հայրաբար վարուել.

«Արարատեան Մայր Աթոռին հետ՝ աւանդապահ մնալ միշտ նոյն յարաբերութեանց, որոնցմով նախնեացմէ անտի կապուած են իրարու հետ Ազգն ու Աթոռը.

«Բ. Դրան հետ՝ թէ Ազգին եւ թէ ազգայնոց կրօնական ու քաղաքական իրաւունքները պաշտպանելու համար տէրութեան պաշտպանութիւնը խնդրել եւ Ազգին հպատակութիւնը հաւատարիմ պահել առ տէրութիւնը:

«Սոյն յարաբերութեանց միջնորդ՝ պատրիարքն է *)»:

Ընդգծեալ կարգադրութիւնները թէև մատնանշում են հայ ազգի համեստ և կախեալ դրութիւնը, բայց գոնէ զանազանելու իրաւունք են տալիս նրան. իսկ հարստահարողներն առհասարակ այդպիսի իրաւունք ճանաչող չեն: Այդ իրաւունքի անմիջական հետևանքն այն է լինում, որ հարստահարուածների (ազգային) պաշտօնական ներկայացուցիչները քննութիւն են բաց անում տրուած գանգատների մասին:

Ռօլէն Ժաքմէնի այս ամփոփ տեսութիւնը լրիւ պատկերացնում է մեր առջև 1860-ի սահմանադրութիւնը իր բոլոր առաւելութիւններով և թերութիւններով: Բայց ինչ որ էլ լինի նա՝ Թիւրքիայի հայոց ազգային, հասարակական, կրօնական և նոյն-իսկ քաղաքական կեանքը 1860-ից յետոյ ամբողջապէս պտտվում էր այս սահմանադրութեան շուրջը: Նրանց բոլոր աչքի ընկնող գործիչները՝ ոչ միայն ազգային, այլ և պետականները՝ մասնակցել են սահմանադրական գործունէութեան՝ զանազան ասպարէզներում:

Այս սահմանադրութեան հիման վրայ առաջին անգամ Ազգային ընդհանուր ժողով գումարուեց Կ. Պոլ-

*) «Ազգային Սահմանադրութիւն Հայոց» Կ. Պոլիս, 1860 տպ. Միւհէնտիսեան, էջ 9—10.

սում 1860 թ. օգոստոսի 25-ին: Ժողովին մասնակցում էին 120 ընտրուած երեսփոխաններ և 60 «անդամակից»: Անդամակից կոչվում էին նրանք, որոնք իրանց վարած ազգային, պետական, կրթական, հոգևոր և լրագրապետական պաշտօններով իրաւունք ունէին մասնակցելու առանց ընտրութեան, ինչպէս էին բոլոր եպիսկոպոսները, բարձրաստիճան պետական հայ պաշտօնեաները, ազգային մատենագիրները, աւագ ուսուցիչները, լրագիրների խմբագրապետները և այլն[1]:

Այս առաջին նիստի օրակարգն էր.—

1, Ազգ. Սահմանադրութիւնը ստորագրել.

2, Կազմել Ընդհ. Ժողովի դիւանը.

3, Ընտրել Կրօնական և Քաղաքական ժողովները և

4, Առժամանակեայ Քաղաքական Ժողովի գործունէութեան հաշիւն առնել [2]:

Ընդհանուր ժողովի առաջին ատենապետ [3]) ընտրուեց սահմանադրութեան հիմնադիրներից մէկը՝ բժիշկ Սերովբէ Վիչէնեան, որ աւելի յայտնի է իր Սերվիչէն համառօտ անունով, և ատենադպիր՝ Մկրտիչ Աղաթօն, որ ապա Քաղաքական ժողովի անդամ ընտրուելով՝ նրան փոխարինեց Կարապետ Իւթիւճեան: Իսկ առաջին քաղաքական ժողովի անդամներ ընտրուեցին

1, Գէորգ Երամեան,

2, Ալթուն-Տիւրբի,

3, Յակոբիկ Նորատունկեան

4, Յովհ. Տատեան

1) 9-րդ յօդ. 1860-ի Ազգ. Սահմ.

2) Ատենագրութիւնք Ազգ. Ժողովոյ 1860—1870, Կ. Պոլիս 1890.

3) Ազգ. ժողովն ունի 3 ատենապետ, Ա. Բ. և Գ, որոնք ընտրվում են ընդհ. ժողովից: Ունի նաև նախագահ, որ ժամանակի պատրիարքն է կամ նրա բացակայութեան ժամանակ՝ տեղապահը:

5, Վարդերես Միսաքեան
6, Մինաս Մինասեան
7, Միրիճան Փափազեան
8, Պօղոս Օտեան
9, Յովհան. Այվազեան
10, Գրիգ. Մարկոսեան
11, Սիմոնիկ Նորատունկեան
12, Մանուէլ Նէվրուզեան
13, Եաղուպ Եաղուպեան
14, Սահակ Ապրօ
15, Յովհ. Մուպահեաճեան
16, Մկրտիչ Աղաթօն
17, Յարութիւն Սարուխանեան
18, Ասապա Համբարձումեան
19, Յովհ. Մարտիրոսեան և
20, Մկրտիչ Ֆրէնկեան.—

բոլորն էլ այն ժամանակի առաջնակարգ անձերը՝ զանազան դասակարգերից։ Այս առաջին սահմանադրական քաղաքական ժողովին ատենապետ է ընտրվում Գրիգոր Մարկոսեան և ատենադպիր՝ Մկրտիչ Աղաթօն։

Նորընտիր քաղաքական ժողովի առաջին գործն է լինում կազմել և ընդհ. ժողովին ներկայացնել 1861-ի բիւջէն—«Ազգային ընդհանուր ելեմտից հաշուեցոյցը»։ Այս բիւջէի համաձայն մուտք էր սպասվում 902,000 ղուրուշ (մօտ 90,000 ռուբլի) իսկ ելք՝ 1,236,000 ղուրուշ (մօտ 120,000 ռբլ.), ուրեմն առաջին տարուայ բիւջէն նախորոշվում էր մօտ 33,000 ռուբլի (334,000 ղր.) բացով։

Հետաքրքրական է անշուշտ գիտենալ, թէ ինչ բանի վրայ էին ծախսուելու պատրիարքարանի հաւաքած ազգային տուրքերն և այլ պատահական եկամուտները։

Ելքի բաժնի յօդուածներն էին.

Հիւանդանոց *)	772,000	ղր.
Պատրիարքարան	240,000	»
Կարօտեալ դպրոցաց	54.000	»
Տնանկ աղքատաց	70,000	»
Պատահական	100,000	»
	1.226,000	ղր.

բացի դրանից «Ազգային պարտք» կար, որի գումարը հասնում էր 872,686 ղուրուշի (մօտ 85000 ռուբլի)։

Ազգ. ժողովն երկարօրէն զբաղվում է այս բիւջէի հարցով և միջոցներ է գտնում թէ 1861-ի բացը ծածկելու և թէ պարտքը հանգցնելու։ Այս առիթով կատարուած հաշիւներից երևում է, որ 1860-ին Կ. Պօլսում բնակվում էին 85,000 հայ, որոնցից 70,000-ը բնիկ պօլսեցի կամ Կ. Պօլսում հաստատուած, իսկ 15,000-ը՝ գաւառացի պանդուխտ։

Մեծ էր ոգևորութիւնը թէ Ազգ. ժողովի և թէ ժողովրդի։ Բայց Սահմանադրութեան առաջին իսկ տարեշրջանը ցոյց տուեց, որ բազմաթիւ խոչընդոտներ կային 1860-ի սահմանադրութեամբ ղեկավարուելու։ Դեռ ևս մի տարի չէր անցել, երբ Երուսաղէմի վանքի պատճառով հակառակութիւն ծագեց Ազգ. ժողովի և նրա նախագահ՝ Սարգիս պատրիարքի մէջ։ Ազգ. երեսփոխանների մեծ մասը, պարագլուխ ունենալով ատենապետ Սէրվիչէնին, որ անձամբ գնացել էր Երուսաղէմ և տեսել այնտեղ տիրող կարգերը, կամ աւելի ճիշտ՝ անկարգութիւնները՝ պահանջում էր, որ Երուսաղէմի պատրիարքն էլ, սահմանադրութեան համաձայն՝ ազգ. երեսփոխաններից ընտրուի և ոչ թէ Ե-

*) Ս. Փրկչեան հիւանդանոցը հիմնել է Յարութիւն ամիրա Պէզճեան որ աւելի յայտնի է Ղազէզ Արթին անունով, նշանաւոր բարերար (ծն. 1771 ապր. 10, վախճան. 1834 յունվր. 3)։ 1860-ից յետոյ Ազգ. հիւանդանոցը շարունակ յառաջադիմել է. Կ. Պօլսի հայերի ամենից աւելի փայփայած ազգ. հիմնարկութիւնն է. Նրա տարեկան ծախքը հասնում է մօտ 150,000 ռուբլու։

րուսաղէմի վանքի Միաբանութիւնից, ինչպէս յանկանում էին պատրիարքն և իր կուսակիցները։—Վէճը շատ բուռն կերպարանք ընդունեց։ Սարգիս պատրիարքը մերժեց այս մասին Ազգ. Ժողովի որոշումները (1861 յուլիս 12) և նրա դէմ՝ միմիայն հոգևորականներից բաղկացած համագումար ժողով հրաւիրեց և սկսեց խառնակութիւն սերմանել ժողովրդի մէջ։ Նա մինչև իսկ մտածեց coup d'état անել Սահմանադրութեան դէմ, բայց չյաջողեցաւ։ Յաղթութիւնը մնաց սահմանադրականների կողմը, որոնք գահընկէց արին պատրիարքին։ Այն ժամանակ կառավարութիւնը միջամտեց, դադարեցրեց Ազգ. Ժողովի նիստերը և որոշեց քննութեան առնել Սահմանադրութիւնը, որ մինչև այն ժամանակ գործադրվում էր առանց կառավարութեան հաստատութեան։

1862 Թ. փետրվ. 14-ին Բ. Դուռը պատր. տեղապահ Ստ. արք. Մաղաքեանին գրած պաշտօնագրով պահանջեց, որ Ազգ. Ընդհ. Ժողովը իր միջից ընտրէ 7 հոգուց բաղկացած մի մասնաժողով, որ կառավարութեան կողմից նշանակուած յանձնաժողովի հետ, որի անդամները դարձեալ հայ էին, և մի բարձրաստիճան Թիւրք պաշտօնատարի ներկայութեամբ, վերաքննէ Ազգ. Սահմանադրութիւնը։ Ազգ. Ժողովը կատարեց պահանջուած Մասնաժողովի ընտրութիւնը, և այդ երկու ժողովները, անյապաղ գումարուելով, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում, մինչև 1862 Թ. ապրիլ ամիսը, վերջացրին իրանց գործն և ներկայացրին իրանց կազմած ծրագիրը։ Այս անգամ էլ կառավարութիւնն երկար ժամանակ անուշադրութեան մատնելով գործը՝ չէր ուզում հաստատել. հարկ եղաւ ազդեցիկ հայերի միջամտութիւնը, և վերջապէս 1863 Թ. մարտ 17-ին Բ. Դուռը պատրիարքարան ուղարկեց սուլթանից հաստատուած վերաքննուած Ազգային Սահմանադրու-

թիւնն ի գործադրութիւն իբրեւ պետական օրենք *)։—

1860-ի Սահմանադրութիւնն իր վերաքննութիւնից յետոյ էլ պահել է նոյն ոգին, այս տարբերութեամբ, որ նորը՝ 1863-ինը, աւելի ամփոփ է և աւելի գործնական կարգադրութիւններ է բովանդակում։ Յիշենք կատարուած կարևոր փոփոխութիւնները։

1860-ի նախնական Սահմանադրութիւնը բաղկացած էր 150 յօդուածներից, որոնք վերաքննելում ամփոփուեցին 99 յօդուածներում։

1860-ի 9-րդ յօդուածն ասում էր. «Ազգ. Ընդհ. Ժողովը կը բաղկանայ 220 ազգային երեսփոխաններէ, որոնցմէ 160-ը Պոլսի Թաղերուն եկեղեցեաց կողմէն ընտրեալ և 60-ը՝ առաջնորդանիստ գաւառներուն կողմէն ընտրեալ։ Ընդհանուր ժողովին մէջ ազգային երեսփոխանաց անդամակից են,—

Նախ՝ ազգային կենտրոնական վարչութեան անդամները, կրօնական ու քաղաքական ժողովներուն և չորս Տեսուչ խորհուրդներուն անդամներն ու Թաղական խորհուրդներուն ատենապետները։ Այս կարգի անդամոց թիւը իբր 100 է։

Երկրորդ՝ Ազգին կամ Տէրութեան ծառայութեանը մէջ գլխաւոր պաշտօնով մը պատուեալ անձինք, ինչպէս Պոլիս գտնվող եպիսկոպոսները, Պոլսոյ եկեղեցեաց քարոզիչ վարդապետներն ու աւագերէցները, ազգային մատենագիրներ, վկայեալ բժիշկներ, գլխաւոր դասատուներ, լրագրապետներ, արքունի ժողովոց անդամներ, Բ.-Դրան պաշտօնեաներ և այլն»։

Այս տարօրինակ «անդամակցութիւնը» գէթ փոքր

---

*) 1860-ի Ազգ. Սահմանադրութիւնն ամբողջովին թարգմանուած է ֆրանսերէն և հրատարակուած Պարիզի «Revue de l'Orient, de l'Algérie et des colonies» ամսագրում 1861-ին։ Իսկ Լինչ իր նշանաւոր Armenia երկհատոր աշխատութեան մէջ հրատարակած է 1863-ի վերաքննած Սահմանադրութեան անգլիերէն թարգմանութիւնը. Armenia F. B. Lynch, vol. II London 1901.

ինչ սահմանափակելու համար աւելացվում է. «Իբր սկզբունք՝ այս երկու կարգի անդամոց բովանդակ թիւը երբէք չպիտի հաւասարի երեսփոխանաց թուին»։

Հետեւեալ յօդուածում էլ ասուած է. «Ընդհանուր Ժողովը ամենաշատը 400-էն աւելի անդամ չպիտի ունենայ»...

Վերաքննածը՝ Կ. Պոլսին դարձեալ մեծ առաւելութիւն տալով հանդերձ՝ բոլորովին դուրս է հանում «անդամակիցներին» ու որոշում է Ընդհ. Ժողովի անդամների թիւը ոչ «էն շատը» 400՝ այլ ընդամենը 140 հոգի, բոլորն էլ ընտրուած։

Այս 140 երեսփոխաններից՝

40-ը գաւառներից, գաւառական Ընդհ. Ժողովներից ընտրուած.

80-ը՝ Կ. Պոլսի թաղերից և

20-ը հոգեւորական, Կ. Պոլսի բոլոր ներկայ եկեղեցականներից ընտրուած։

Ըստ 1860-ի § 12՝ ընդհանուր ժողով կը գումարուի նախ կանոնաւորապէս՝ ամեն տարի մայիս ամսին... և արտաքոյ կարգի՝ այնպիսի ծանր խնդիրներու համար, զորոնք Ազգային Ժողովները Ընդհանուր Ժողովով որոշել հարկաւոր դատեն։

Վերաքննածում Ընդհանուր Ժողովների գումարման թուականն այսպէս է որոշվում. սովորականը պիտի գումարուի 2 տարին մի անգամ և պիտի տեւէ 2 ամիս, իսկ արտաքոյ կարգի Ընդհ. Ժողովի համար ամեն անգամ պէտք է նախօրօք Բ.-Դրան յայտնել և և առանց նրա հաւանութեան չժողովուել։ Չնայելով այս սահմանափակման՝ Բ.-Դուռը առանձին դժուարութիւններ չէր յարուցանում ընդհանուր Ժողովների գրեթէ անընդհատ գումարուելուն, բացի մի երկու դէպքերից, որոնց մասին առանձնապէս կը խօսենք։ Այսպէս տեւեց մինչև 1882 թուականը։

Պատրիարքի անձի համար էլ վերաքննածն որո-

շում էր, հակառակ 1860-ի սահմանադրութեան, ուր այս կէտը ազատ էր թողնուած, որ պատրիարքը կառավարութեան վստահութեանը արժանի լինելուց զատ՝ պէտք է օսմանեան հպատակ լինի, գոնէ իր հօրից սկսած, և ոչ պակաս քան 35 տարեկան։ (§ 1)։ Պատրիարքի վրայ կարելի է գանգատուել և նրան պաշտօնանկ անել, եթէ նա Սահմանադրութեան կանոններին հակառակ ընթացք բռնէ (§§ 5 և 6)։ Առհասարակ պատրիարքի իշխանութիւնը շատ է սահմանափակուած՝ համեմատելով 1860-ի Սահմ. հետ։

Գաւառների կրօնական ու քաղաքական Ժողովների համար հինն ասում էր, թէ «ըստ տեղւոյն 7-էն մինչև 12 անդամներէ կը բաղկանան» (§ 80). իսկ վերաքննածում այս կէտն ազատ է թողնուած, որպէսզի պայմանում մի անգամ ընդ միշտ որոշուի, ամեն մի գաւառի բնակիչների թուի համաձայն։ Սահմանադրութիւնը գաւառական Ժողովների համար էլ (ինչպէս որ էլ էր Ազգ. Ընդհ. Ժողովի համար) անփոփոխ անդամակից էր որոշել «Ազգին կամ տեղական իշխանութեան ծառայութեանցը մէջ գլխաւոր պաշտօնով պատուեալ անձինք» (§ 75)։ Վերաքննածն իրաւամբ դուրս է թողել այս «անդամակիցներին», և որոշում, է որ անդամների ընտրութիւնը պիտի կատարուի կենտրոնական վարչութեան համար սահմանուած եղանակով։

Վերջապէս Սահմանադրութեան վերաքննութեան համար՝ հինն ասում էր մեծագոյն կերպով, թէ «Սահմանադրութեան վերաքննութիւնը՝ Ազգին համար անընդունելի է, երբ հիմնական սկզբանց տրամադրութեանցը համաձայն չըլլայ, այն սկզբանց՝ որոնցով ապահովեալ են Ազգին իրաւունքները, իրաւունք, որոնց վրայ Ազգն անգամ չունի իշխանութեան տնօրէնութեան, զի միանգամայն պարտիք են» (§ 150)։ Վերաքննածը՝ պահելով հանդերձ այն պարբերութիւնը, թէ «Ազգային Սահմանադրութեան հիմնական սկզբունք-

ներն անփոփոխելի են», աւելացնում է, թէ երբ հարկ լինի փոխել մի քանի կէտեր՝ այս փոփոխութիւնները պէտք է վաւերացուին Ազգ. Ընդհ. Ժողովի կողմից և ներկայացուին սուլթանի հաստատութեան:

Այս վերաքննած Սահմանադրութիւնը 1863 թ. մարտ 20-ին Ազգ. Ընդհ. ժողովն ընդունեց և միաձայն որոշեց, որ «Ազգին կողմէն շնորհակալութեան ուղերձ մը գրուի և ղրկուի առ Բ. Դուռն», որ անմիջապէս կատարվում է, և ապա ընտրեց 10 հոգուց բաղկացած «Սահմանադրական գործադիր ժողով», որին հրահանգ տուեց «ընտրական գործողութեանց համար պէտք եղածը գործադրել [1]: Այս որոշումից յետոյ Ազգային Ընդհ. Ժողովը ցրուեց: Նա ունեցել էր 12 նիստ: Այնուհետև գործադրութեան մտաւ վերաքննած Սահմանադրութիւնը, որ մի քանի փոփոխութիւններով շարունակվում է մինչև այժմ [2]:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Նոր Ազգային վարչութիւնը: Դարձեալ Երուսաղէմի վանքը: Գաւառները հանդէպ Սահմանադրութեան: Ազգային տուրքը: Գործերի անգոհացուցիչ վիճակը:

1863 սեպտեմբերի 20-ին կայացաւ Ընդհանուր Ժողովի Ա. նիստը՝ նոր Սահմանադրութեան հիման վրայ. մասնակցում էին 80 երեսփոխան, բոլորն էլ Կ. Պոլսից: Ատենապետ ընտրուեց Սէրվիչէն և ատենադպիր՝ Գր. Օտեան, որ երեսփոխանների մէջ տարիքով ամենից փոքրն էր. երկուսն էլ Սահմանադրութեան հիմնադիրներ և միևնոյն ժամանակ ամենաեռան-

[1]) Ատենագրութիւնք Ազգ. Ընդհ. Ժողովոյ 1860—1870, էջ 86.

[2]) Ազգ. Սահմանադրութեան ամբողջական բնագիրը՝ իբրև լրացուցիչ մասն կը տրուի աշխատութեանս վերջում:

դուն գործողներ: Հետևեալ նիստերում Ընդհ. Ժողովն ընտրեց իր դիւանի մնացած անդամներին և նոր Ազգային վարչութիւն, որ բաղկացած էր հետևեալ անձերից.

Ա. Կրօնական Ժողով

1. Ներսէս եպիսկոպոս Վարժապետեան, որ դարձաւ ատենապետ
2. Յովհ. Վ. Կապուտիկեան
3. Կարապետ Վ. Սերոբեան (պատր. փոխ.)
4. Մեսրոպ Վ. Սուքիասեան
5. Աբրահամ Վ. Սամաթեան
6. Տ. Գէորգ քհն. Արծրունի,
7. » Յովհ. » Հիւնքեարպէյէնտեան
8 » Աբիստ. » Մամբրէեան, որ եղաւ ատենադպիր.
9. Տ. Յովհ. քհն. Փափազեան, որ ընտրուեց փոխ-ատենապետ.
10. Տ. Յարութիւն քհն. Ղալաթիոյ
11. » Գաբրիէլ քհն. Պէրայի
12. » Սահակ » Միջագիւղի
13. « Յարութ. » Բէօյիւք-դէրէյի
14. » Փիլպպ. » Սամաթիոյ.

Բ. Քաղաքական Ժողով

1. Երամեան Գէորգ
2. Տատեան Յովհ.
3. Մինասեան Մինաս
4. Ասլանեան Սահփան, որ ընտրուեց ատենապետ
5. Միսաքեան Վարդերես
5. Նորատունկեան Յակոբիկ
7. Աշնանեան Պօղոս

8. Պէյլէրեան Յակոբ
9. Պռունուզեան Յակոբ
10. Սարուխանեան Յարութիւն
11. Տատեան Ներսէս
12. Պէհզատ Ումէտ
13. Ալեանաքեան Խաչիկ
14. Աղաթօն Գրիգոր,
15. Սիւրէնեան Յովհ.
16. Կրճիկեան Անդրանիկ, ատենադպիր
17. Քօլօլեան Աւետիս
18. Ֆրէնկեան Յակոբ
19. Միւհէնտիսեան Մարտիրոս
20. Փափազեան Գէորգ։

Բայց քաղաքական ժողովի այս կազմն իր սահմանադրական երկամեայ շրջանի ամբողջ տեւողութեան ժամանակ նոյնը չմնաց և փոփոխութեան ենթարկուեց՝ անդամներից ոմանց հրաժարուելովը, որոնց փոխարէն ուրիշներն ընտրուեցին։

Ընդհանուր ժողովն այնուհետև նոյեմբերի 12-ի նիստում ձեռնարկեց պատրիարքի ընտրութեան, որովհետև ամբողջ 2 տարի միայն տեղապահն էր կառավարում։ Ըստ Սահմանադրութեան պատրիարքի ընտրութիւնն այսպէս է կատարվում։ Տեղապահը կրօնական ժողովին ներկայացնում է Թիւրքիայում գտնվող հայ եպիսկոպոսների ընդհանուր ցանկը։ Կրօնական ժողովն էլ իր կողմից եկեղեցական համագումար է հրաւիրում, ուր պատրաստվում է պատրիարքացուների ցուցակը գաղտնի քուէարկութեամբ. այս ցուցակից Քաղաքական ժողովն ընտրում է 5 եպիսկոպոս, իբրև յարմարագոյն թեկնածու։ Բոլոր ցուցակները ներկայացվում են Ընդհ. ժողովին, որ իրաւունք ունի Քաղաքական ժողովի ցուցակից դուրս մնացած եպիսկոպոսներին էլ քուէ տալ, բայց Եկեղեց. Համագումարի ցուցակից դուրս ոչ ոքին կարող չէ ընտրել։ Այս ձևով ընտրու-

թիւն է կատարվում և պատրիարք է ընտրվում ու հաստատվում Զմիւռնիայի Առաջնորդ Պօղոս արքեպ. Թագթագեանը։

Ինչպէս յայտնի է, Երուսաղէմի հարցի առիթով էր, որ 1860-ի Սահմանադրութիւնը փոփոխութեան ենթարկուեց։ Երուսաղէմի վանքին վիճակուել է միշտ՝ այս կամ այն ձևով կռուածաղկի դեր կատարել Կ. Պօլսի ազգային իշխանութեան, նրա զանազան ճիւղերի և հայ հասարակութեան մէջ։ Վերջին 50 տարուայ ընթացքում շատ քիչ Ընդհ. ժողով է եղել — էլ չենք ասում Ազգ. Վարչութիւն, — որ քանի-քանի անգամ զբաղած չլինի այդ հարցով։ 1863-ի Սահմանադրութիւնը կազմողները յատկապէս Երուսաղէմի համար՝ «Գ. Պատրիարք Սրբոյ Երուսաղէմի» գլխի մէջ 7 նոր յօդուածներով (§ 17—23) որոշ օրէնք էին սահմանել, ճշտելով և շեշտելով Ազգ. Վարչութեան հսկողութիւնը Երուսաղէմի պատրիարքական իշխանութեան վրայ։ Այս նոր գրութեան վրայ հիմնուած՝ Ընդհ. ժողովն աշխատում է լուծում տալ Երուսաղէմի վանքի անկարգութիւններին։ Երկար վիճաբանութիւններից յետոյ, հազիւ 1865-ին, վերջանում է Երուսաղէմի վանքի կանոնագիրը։ 1864-ին Ազգ. ժողովի մէջ կատարուել էր նոր պատրիարքի (Եսայի) ընտրութիւնը Երուսաղէմի համար։ Ազգ. Վարչութիւնը հրաւիրում է նրան Կ. Պօլիս և մեծ ջանքերից յետոյ՝ նրան համոզում է ուխտ անել հնազանդուելու այս նոր կանոնագրութեան, որ քննուել էր նրա ներկայութեամբ, և Երուսաղէմի հարցն առժամանակ փակվում է դրանով։

Վերև յիշեցինք, որ Ազգ. Ընդհ. ժողովում բազմում էին միայն Կ. Պօլսում ընտրուած երեսփոխանները, որոնք այնուամենայնիւ իրանց համարում էին ամբողջ Թիւրքիայի հայութեան ներկայացուցիչ։ Ոչ մի իրական միջոցի չէր ձեռնարկվում Սահմանադրութիւնը գործադրելու համար նաև գաւառներում։ Այս

հանգամանքը մտածութեան առարկայ էր դարձել: Վաղուց սկսել էին տրտունջ յայտնել այդ մասին Թէ Կ. Պոլսի «պանդուխտները», որոնց սակայն պարտաւորեցնում էին ազգային տուրք վճարել, և Թէ բուն Հայաստանի նահանգները: Պատրիարքը յորդոր էր կարդում, որ օր յառաջ իրագործուի Սահմանադրութիւնը գաւառներում և երեսփոխանական ընտրութիւններ նշանակուին Ընդհ. Ժողովի համար, բայց գործը շատ դանդաղ էր առաջանում: Դեռ երկար տարիներ գաւառացիներն իրանց ներկայացուցիչները պիտի չունենային Կ. Պոլսի Ընդհ. Ժողովում նոյն իսկ այն Թուական չնչին մասնակցութեամբ, որ Սահմանադրութիւնը տալիս էր նրանց: Կ. Պոլիսը իր 70,000 հայ հաստատուն բնակիչներով (ըստ 1860-ի հաշուի) ընտրում էր 100 երեսփոխան (80 աշխարհական և 20 եկեղեցական), իսկ բոլոր գաւառները միասին՝ միայն 40: Սահմանադրութիւնն ինքնին ընդունում էր ապակենտրոնացման սիստեմը, քանի որ իրաւունք էր տալիս ամեն մի գաւառի ունենալ իր երեսփոխանական գաւառական ժողովը և յատուկ ազգային վարչութիւնները կենտրոնի դրութեան համաձայն: Բայց այս ապակենտրոնացումը հիմնվում էր զուտ տեղական գործերի համար: Երբ հարկաւոր էր ընդհանուր, բոլոր գաւառներին վերաբերեալ, որ է կարևոր որոշում կայացնել՝ այդտեղ Կ. Պոլիսը պիտի կատարէր առաջին և տիրող դերը՝ շնորհիւ իր երեսփոխանների Թուի ճնշող մեծամասնութեան՝ Ազգ. Ընդհ. Ժողովում, որից կախուած էր ամեն խնդրի վերջնական սահմանումը: Գաւառները դեռ այս կէտերի վրայ բողոքի ձայն իսկ չէին կարող հանել, որովհետև Ազգ. Վարչութեան կողմից ուղարկուած և «Սահմանադրութեան գործադիր» տիտղոսը կրող եկեղեցականները գտնում էին, որ նոյն-իսկ տեղական սահմանադրական ժողովների համար գաւառացի ժողովուրդը դեռ պատրաստ

չէր: Մինչև Խրիմեանի պատրիարքութեան բարձրանալը՝ գաւառներին առհասարակ շատ քիչ ուշադրութիւն էր նուիրվում Ազգ. Կենտ. Վարչութեան կողմից:

Ընդհ. Ժողովի այս առաջին սահմանադրական շրջանում (1863—1866) առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում «ազգային տուրքի» հարցը: Ըստ Սահմանադրութեան՝ ամեն հայ պարտաւորվում էր ըստ իր կարողութեան որոշ տարեկան հարկ տալ պատրիարքարանի ծախքերի հոգացման համար: Տուրքի տարեկան ընդհ. գումարն երկամեայ շրջանի համար պէտք է որոշէր Քաղաքական Ժողովը և ներկայացնէր Ընդհ. Ժողովի հաստատութեան: Այս տուրքը նախ (1861-ին) 4 կարգի էր բաժանուել, հարկատուների կարողութեան համեմատ.

ա. կարգ 20—25 ղրուշ *) տարեկան,
բ. » 50—60 » »
գ. » 100—120 » »
դ. » 120-էն վեր ըստ չափու կարողութեան և «ազգասիրութեան»:

Ընդհանուր պահանջուած գումարն էր տարեկան 400,000 ղրուշ, որ պիտի բաժանուէր. բոլորի վրայ, ի նկատ առնելով իւրաքանչիւրի կարողութիւնը: Բայց 1863-ի Սահմանադրութիւնից յետոյ հարկ տեսնուեց փոփոխել ազգային տուրքի բաժանման այս ձևը: Նոր Քաղաքական Ժողովը մի յատուկ Յանձնաժողով ընտրեց իր կողմից դուրս և նրան յանձնեց բաշխումի մի նոր ձև մշակել: Յանձնաժողովն էլ իր հաշիւը կազմելիս հիմնուեց վերջին երեսփոխանական ընտրութիւնների տուած արդիւնքի վրայ: Ամբողջ Կ. Պոլսում միայն 3000 հայ էր գտնուել տարեկան 75 ղրուշից ոչ պակաս ազգային տուրք տալու կարող, որոնք և ըստ

*) Մէկ ղրուշը կամ եւրոպ. բառով՝ պիաստրը հաւասար է մօտաւորապէս ռուսական 9 կոպէկին:

Սահմանադրութեան (§ 65) մասնակցել էին իբրև ընտրող և ընտրելի (երեսփոխանութեան)։ Առաջարկվում էր այժմ՝ ազգային տուրքը բաժանել ոչ թէ 4 կարգի, այլ 10 կարգի, աւելի դիւրացնելու համար նրա բաշխումն և հաւաքումը։ Այս ծրագրով ամենից բարձր (ժ. երորդ) կարգը պիտի վճարէր 500 ղրուշ, իսկ ամենից ցածը (ա. կարգ) միայն 5 ղրուշ։ Տարեկան պահանջվում էր դարձեալ 400,000 ղրուշ։ Հետաքրքրական է, որ տուրքի ընդհ. քանակութիւնը որոշել էր Քաղաքական Ժողովը և Ընդհ. Ժողովը նրա ներկայացրած բիւջէն հաստատում է առանց մանրամասնօրէն քննելու։ Երբ Ընդհ. Ժողովում տաղանդաւոր երեսփոխան Գրիգ. Օտեան պահանջում է, որ «Ազգային պէտքերը նախ քննուին, որոշուին և տուրքն անոր հետևելով որոշուի», նրան պատասխանում են, թէ «Ազգին պէտքերը քննելու համար կայ Տնտեսական Խորհուրդ» և բաւական են համարում այդ։ Չեն քննում ելեմուտքի հաշուի մանրամասնութիւնները՝ խնդիրը կարճ կապելու համար, բայց աննշան, շատ անգամ լոկ ձևական, խնդիրների համար աւելորդ տեղ ժամերով վիճում են։

Թէ ինչպէս էին առհասարակ ազգային գործերը յառաջ գնում այս շրջանում, շատ լաւ պատկերացած է պատրիարքի՝ 1865 հոկտ. 22-ին Ընդհ. Ժողովին ուղղած հետևեալ խրատականում. «Կենտրոնական վարչութիւնը ոչ միայն մայրաքաղաքիս ազգային գործոց, այլ և գաւառական գործոց տեսչութիւնը պէտք է վարէ, սակայն ցայսօր մեծ բան մը բրած չէ և Քաղաքական Ժողովները հետզհետէ կը հրաժարին։ Շատ բան մեր վրայ առած ենք և բան մը բրած չունինք։ Ուստի պատրիարքութիւնն ալ պարապ, ժողովականութիւնն ալ պարապ է, եթէ գործերը այս ցաւալի կերպով շարունակուին... Հասարակութեան մէջ շատ տարաձայն խօսքեր կը պտտին. ես միայնակ պատասխանատու կը ներկայանամ... Ես որչափ որ պատասխանատու եմ, դուք ալ նոյնչափ էք և ձեզմով է իմ պատասխանատուութիւնս» *)։ Իրօք ժողովրդի մէջ տըրտունջներ կային գործերի դանդաղ և անկարգ ընթացքի դէմ և շատերը բարձրաձայն գանգատվում և պատճառը վերագրում էին Սահմանադրութեան, որ շնորհիւ իր բարդ կազմակերպութեան և խիստ ձևականութեան՝ ամեն մի գործ ձգձգում էր երկարօրէն։ Որոշ ճշմարտութիւն կար այս գանգատների մէջ, բայց մի և նոյն ժամանակ փոքր դեր չէր խաղում և մի այլ կարևոր հանգամանք։ Ընդհ. Ժողովն Ազգային Վարչութեան անդամներ ընտրելիս՝ ոչ մի որոշ տեսակէտով չէր առաջնորդվում ընտրելիների նկատմամբ. ընտրվում էին շատ անգամ այնպիսի անձեր, որոնք ուղղութեամբ և համոզմունքով ոչ միայն համերաշխ չէին, այլ միմեանց օտար և գաղափարներով էլ հակառակ։ Այս պարագան յայտնապէս ջլատում էր մանաւանդ Քաղաքական Ժողովի գործունէութիւնը, որի վրայ էր ծանրանում հասարակական գործերի ղեկավարութիւնը, հետևաբար և պատասխանատուութիւնը։ Փոխանակ համերաշխ գործակցութեան՝ Քաղաք. Ժողովի անդամներն անընդհատ անհաճոյ ընդհարումներ էին ունենում կամ պատրիարքի, կամ Ընդհ. Ժողովի հետ և կամ միմեանց մէջ, և շատերը, իրանց օրինական երկամեայ պաշտօնավարութեան ժամանակը չլրացրած, թողնում, հեռանում էին, որով Ընդհ. Ժողովը շարունակ զբաղուած էր լինում կամ հրաժարուածներին խնդրելով, որ յետ վերցնեն իրանց հրաժարականները և կամ նոր ընտրութիւններ էր կատարում լրացնելու համար Քաղաքական Ժողովի կազմը։ Եւ ոչ մի էական միջոց գործ չէր դրվում այդ դրութիւնը բարւոքելու համար։

---

*) Ատենագր. Ազգ. Ընդհ. Ժողովոյ 1860—1870, էջ 253.

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

*Կաթողիկոսական երեք հարց Ազգային Ժողովում։ Պօլօժէնիէի *) քննադատութիւնը։ Պօլօժէնիէն և Ազգ. Սահմանադրութիւնը։ Կաթողիկոսական Յանձնաժողովը և իր տեղեկագիրը։ Ներսէս եպ. Վարժապետեան՝ կաթող. պատգամաւոր։ Սիսի և Աղթամարի աթոռները թափուր։*

1863—1866-ի շրջանում Ազգային Վարչութիւնը ըջօր էն զբաղվում է կաթողիկոսական հարցով, այն էլ ոչ թէ մի, այլ միանգամայն 3 կաթողիկոսի։ Օրակարգի մէջ կային արդէն Սիսի և Աղթամարի կաթողիկոսների հարցը, երբ վախճանվում է Էջմիածնում Մատթէոս Ա. Կաթողիկոսը։—Պատմենք համառօտ նախառաջին 2 Աթոռների պատճառով ծագած վէճը։

Սիսի կաթողիկոս Կիրակոս Աջապահեանի մահից յետոյ ոմն Նիկողոս եպիսկոպոս, ինչպէս ասուած է Ազգ. Ժողովի արձանագրութեան մէջ, «առանց Ազգին հաւանութեանը և որոշմանը սպասելու, արժանաւորութիւն չունենալով, գիշեր ատեն, ինքզինքը օծել տուեր է գողնի գող» և առել է Կիրակոս Գ. անունը։ — Իսկ Աղթամարի «ինքնակոչ» Խաչատուր Կաթողիկոսը՝ դեռ ևս Պետրոս Կաթողիկոս Պիւլպիւլեանի կենդանութեան ժամանակ «ինքզինքը Կաթողիկոս օծել տուած է»։ Այս բաւական չէր։ Պետրոս Կաթողիկոսը բնական մահով չէր վախճանուել. նա սպանուել էր քիւրդերի ձեռքով և Խաչատուր Կաթողիկոսը բացարձակ կերպով մեղա-

*) Положеніе „о управленіи духовныхъ дѣлъ христіанъ Армяно-Григоріанскаго исповѣданія". (Сводъ Законовъ, Т XI часть I, книга третья. (*Դրութիւն՝ հայ-լուսաւորչական դաւանութեան քրիստոնեաների հոգևոր գործոց կառավարութեան մասին։ Ռուս-օրէնսգրքի* XI *հատոր, մասն* I, *գիրք* III)։

գրվում էր իբրև այդ սպանութեան մեղսակից։ Ազգ. Ժողովն, ի նկատի առնելով այս հանգամանքները, որոշում է երկու կաթողիկոսներին էլ ապօրինի համարել և նրանց տեղ նորերին ընտրել։ Այս գործերը զբաղեցնում էին ոչ միայն Ազգային Վարչութիւնը, այլ և Թիւրք Կառավարութիւնը։ Բայց դեռ դրանց լուծումը չարուած, հարկաւոր է լինում զբաղուել անհամեմատ աւելի կարևոր կաթողիկոսական խնդրով։ Էջմիածնի Սինոդից առաջարկութիւն էր ստացուել, որ Պօլօժէնիէի հիման վրայ Թիւրքիայի թեմերը պէտք է յատուկ պատգամաւորներ ուղարկեն Էջմիածին Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեանն անձամբ մասնակցելու։

Ընդ. Ազգ. Ժողովը, մանաւանդ իր՝ դեկտեմբերի (1865) նիստերում, բուռն պայքար է մղում այս առիթով Պօլօժէնիէի դէմ ըստ էութեան։—Եկեղեցական երեսփոխաններից, իբրև ձեռնհաս անձեր, երկար բացատրութիւններ են տալիս Ներսէս եպիսկ. Վարժապետեան և Խորէն վարդապետ Գալֆայեան (Նար-Բէյլուսինեան)։ Վարժապետեանն այն միջոցին արդէն սկսել էր հռչակ հանել. նա, ինչպէս տեսանք, դեռ շատ երիտասարդ, 1861-ին ընտրուել էր Կրօնական Ժողովի անդամ և հետևեալ տարին Սիսի Կաթողիկոսից եպիսկոպոս օծուելով՝ վերադարձել էր Կ. Պոլիս։ Իսկ Գալֆայեանը մի քանի տարի առաջ միայն հրաժարուել էր կաթոլիկութիւնից և 1860-ին վերջնականապէս հաստատուել Թիւրքիայի մայրաքաղաքում։ Այս երկուսը՝ ազգային եկեղեցական երեսփոխանների մէջ եթէ ոչ ամենից լուրջ, գոնէ ամենից պերճախօսներն էին։ Էջմիածնից եկած հրաւէրները մեծ դժուարութիւն էին յարուցանում, որովհետև ռուսական օրէնքով (Պօլօժէնիէ) պահանջվում էր, որ ամեն մի թեմ իր յատուկ պատգամաւորների (1 հոգ. և 1 աշխ.) միջոցով մասնակցէ ընտրութեան, իսկ Թիւրքիայի հայոց ազ-

դային օրէնքով Ազգային Ընդհանուր Ժողովն էր միայն, որ պիտի մասնակցէր կաթողիկոսի ընտրութեան յանուն բովանդակ Թիւրքիայի հայերի (§60)։ Ի՞նչպէս պէտք էր հաշտեցնել այս՝ երկու միմեանց հակառակ կանգնած գրութիւնները։ Երկար վիճաբանութիւններ են տեղի ունենում Ազգային Ժողովում և այնտեղից դուրս, լրագրութեան մէջ։ Ներսէս Վարժապետեան ոգևորուած ճառեր է խօսում ընդդէմ Պօլօժէնիէի և միևնոյն ժամանակ յուզում է ընդհանրական կաթողիկոսութեան հարցը։ «Նշանաւոր ժամանակի մը մէջ կը գտնուինք,—ասում է նա,—3 կաթողիկոս ունինք ընտրելու. ասիկա չարիք մ'է. սակայն այս չարիքէն օգուտ մը քաղելու է, այն օգուտը, որ տարիներէ ի վեր կըսպասուի։ Կաթողիկոսական խնդիրը կենաց և մահու խնդիր է Ազգին համար։ Էջմիածնական Աթոռը պէտք է իւր անկախութեան վերածել, հզօր ճանկէ մը ազատել և անոր ընդհանուր իրաւասութիւնները ապահովել, որպէսզի ըլլայ մէկ ազատ և ընդհանուր կաթողիկոս, մինչդեռ այսօր Էջմիածնի Ընդհ. Կաթողիկոսէն զատ՝ ունինք ուրիշ երկու կաթողիկոսական աթոռներ, որոնք առաջնոյն իրաւասութիւնը չճանչնալովն ազգային կրօնական միութիւնը վտանգի մէջ ձգած են. հետևապէս պէտք է այս վերջին աթոռներուն յարաբերութիւններն ալ այնպիսի վիճակի մը մէջ մտցնել, որ ազգը միմիայն մէկ ընդհանրական Կաթողիկոս ունենայ ազատ և ինքնիշխան»։*) Իսկ Գալֆայեանը, որ յաճախ ընդդիմախօս է եղած Վարժապետեանին և այս հարցում նրա հակառակորդը, գտնում էր, որ «Ազգ. Ընդհանուր Ժողովը միմիայն ընտրութեան մասնակցելու իրաւունք ունի և ոչ թէ Հայաստանեայց Կաթողիկոսութեան վերաբերեալ օրէնքները քննելու» և ազգային պատմութիւնից օրինակներ է բերում, թէ

*) Ատ. Ազգ. Ժող. 1860—1870 էջ 283.

«Ժամանակին հայոց թագաւորը 3 ընտրելի ցուցնելու արտօնութիւն կուտար և անոնցմէ մէկն ինք կընտրէր.... Ուրեմն մեր թագաւորները կաթողիկոսական ընտրութեանց մէջ միշտ ազդեցութիւն ունին եղեր և Ռուսիոյ տէրութիւնն ալ այս օրինակին կը հետևի, որ մեր հին պատմութեան հետևութիւնն է». և նա առաջարկում է նախ կաթողիկոս ընտրել և ապա «անոր միջոցաւ պէտք եղած բարեկարգութիւնը (Պօլօժէնիէի վերաքննութիւնը) Ռուսիոյ կայսերմէն խնդրել»։

Զննելով, որ Գալֆայեանի առաջարկութիւնն աւելի գործնական և մօտ ապագայում իրագործելի էր, երեսփոխանների մեծ մասը հակվում է Վարժապետեանի կողմը և չէ կամենում, որ առ այժմ Պօլօժէնիէի պահանջած եղանակով կաթողիկոսական ընտրութիւն կատարուի։ Որոշվում է հարցը քննել իր ամբողջութեամբ և կազմվում է յանձնաժողով, որ «նախ պիտի նկարագրէ կաթողիկոսութեան վիճակը և ապա իր ծրագիրը պիտի պատրաստէ»։ Աղթամարի և Սիսի աթոռների Էջմիածնի աթոռի հետ յարաբերութեան խնդիրն էլ յանձնվում է նոյն յանձնաժողովի քննութեան։ Յանձնաժողովին անդամ են ընտրվում 4 եկեղեցական, որոնցից մէկը Վարժապետեան, և 4 աշխարհական երեսփոխան։ Գալֆայեան չէ ընտրվում իբրև հակառակ կարծիքի տէր։

Յանձնաժողովին պաշտօն է տրվում պատճառաբանեալ եզրակացութիւններ բերել հետևեալ հարցերի մասին.—

Ա. Կաթողիկոսական վիճակի քննութիւն.

Բ. Կաթողիկոսական ընտրութեան օրէնք և

Գ. Տաճկաստանի հայոց այս ընտրութեան մասնակցելու եղանակը։

Ուղիղ 5 ամիս վերջը, այն է 1866 թ. մայիսի 27-ին, Յանձնաժողովը, որի նախագահն էր Վարժապետեան, մի ընդարձակ տեղեկագիր բերեց, որտեղ

մանրամասնաբար վերլուծելով Պոլոժէնիէի կանոնները և համեմատելով ազգային աւանդութիւնների և սովորութիւնների հետ վերոյիշեալ 3 ծրագրային հարցերի նկատմամբ՝ հետեւեալ եզրակացութիւններն է անում։

Ա. «Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան արդի վիճակը հեռացած է նախկին՝ այսինքն բուն Հայաստանեայց կաթողիկոսական վիճակէն՝ իրաւասութեան, հայրապետական անկախութեան և եկեղեցեաց տեսչութեան նկատմամբ... Հայոց Ընդհանրական Հայրապետն ամենայն հայոց կաթողիկոսութեան անունը միայն կը կրէ»։

Բ. «Կաթողիկոսական Աթոռին արդի վիճակն և կաթողիկոսի ընտրութեան արդի սահմանադրութիւնը հիմնական ուղղութեան կը կարօտի և պէտք է ամենայն ինչ մեր եկեղեցւոյ նախնական օրինացն և աւանդութեան վերածել»։

Գ. Յանձնաժողովը ստիպված է լինում խոստովանել, որ «Կաթողիկոսական ընտրութեան մասին ընդհանուր և որոշ օրէնք մը չկայ, որուն համեմատ կարենան վարուիլ զանազան երկիրներու մէջ գտնուած ազգայինք», ուստի առաջարկում է, որ Թիւրքիայի հայերը հետեւեալ եղանակով մասնակցեն։ Կ. Պոլսի եկեղեցականներն իրանց համագումարում կազմեն արժանաւոր ընտրելիների մի ցուցակ, որ կը ներկայացուի Ազգային Ընդհ. Ժողովին և սա էլ «անոր (ցուցակի) մէջէն եւ միայն անոր մէջէն» գաղտնի քուէարկութեամբ 3 ընտրելի կորոշէ։ Եւ որովհետև Թիւրքիայում, Սիսի և Աղթամարի կաթողիկոսական թեմերն էլ մէջը հաշուելով, 65 առաջնորդութիւն կայ, ուստի «Ընդհանուր Ժողովոյ կողմէն ընտրուած երեք ընտրելեաց ամեն մէկը 130 քուէի արժէք կունենայ»։ Այնուհետեւ Ազգ. Ժողովն 2 պատգամաւոր պէտք է ընտրէ՝ մէկը եկեղեցական, միւսը աշխարհական, որոնք կըղնան

Էջմիածին և այնտեղ կատարուելիք քուէարկութեան ժամանակ՝ «իւրաքանչիւր պատգամաւոր իրեն յանձնուած 65 ձայնի արժէքով քուէնին կուտան միայն այն բարձրաստիճան եկեղեցականին, որ Տաճկաստանի Ընդհանուր Ժողովին մէջ քուէից բացարձակ առաւելութիւնն ստացած է»։

Այս եզրակացութիւնները ընդունվում են Ազգային Ժողովից, որ 3 կաթողիկոսների էլ ընտրութեան նախապատրաստութիւնները ըստ տեղեկագրի կատարելու պաշտօնը յանձնում է միեւնոյն Յանձնաժողովին *)։

Այս որոշման համաձայն Ազգ. Ժողովը կատարեց Էջմիածնի համար կաթողիկոսական ընտրելիների գաղտնի քուէարկութիւն, որտեղ ամենից շատ քուէ ստացաւ Կ. Պոլսի նախկին պատրիարք Գէորգ արք. Քէրէստէճեան, որ և ապա ընտրուեց կաթողիկոս Ամենայն Հայոց Գէորգ Դ. անունով։ Ազգային ժողովի հոգևորական երեսփոխանն էր՝ 65 ձայնի արժէք ունեցող քուէով նոյնինքն Յանձնաժողովի նախագահը Ներսէս եպ. Վարժապետեան։—

---

*) Այս Յանձնաժողովի Ազգ. Ընդհ. Ժողովին ներկայացրած Տեղեկագրում Պոլոժէնիէի յօդուածները մի առ մի ենթարկուած են խիստ քննադատութեան։ Անկողմնակալ ընթերցողի համար այդ տեղեկագիրը պարունակում է նաև այնպիսի մի քանի կէտեր, որոնց հետ դժուար է համաձայնել։ Վերցնենք, օրինակի համար, հետեւեալները. Նախ՝ Յանձնաժողովն անշուշտ որոշ դիտաւորով ռուսահպատակ հայերի թիւը չափազանց քչացրել, հասցրել է բոլոր հայերի 1/8-ականին։ Երկրորդ՝ եթէ համեմատութեան դնենք մի կողմից Պոլոժէնիէի և միւս կողմից Ազգ. Սահմանադրութեան տրամադրութիւնները կաթողիկոսական ընտրութեան եղանակի մասին, չենք կարող չեզրակացնել, որ Պոլոժէնիէն աւելի է հանդիսանում ժողովրդական իրաւունքի պաշտպան, քան թէ Ազգ. Սահմ., որովհետև երբ առաջինը անձամբ մասնակցութեան է հրաւիրում ամեն կողմի (Ռուսաստանի, Թիւրքիայի, Պարսկաստանի և այլն) հայերի հոգևոր և աշխարհական ընտրեալ ներկայացուցիչներին, Ազգ. Սահմանադրութիւնը ընտրութեան իրաւունքը վերապահում է իսկապէս միայն Կ. Պոլսի հայերին։ Պատգամաւոր-

Շատ աւելի դժուարութեամբ պիտի վերջանային Սսի և Աղթամարի կաթողիկոսական հարցերը։ Երբ Ազգային Վարչութիւնն՝ իր կատարած քննութիւններով պարզեց, որ այս երկու կաթողիկոսներն էլ թէ անձնականապէս անարժան են և թէ ապօրինի կերպով են ձեռք բերել կաթողիկոսական իշխանութիւնը, անմիջապէս միձահային Եկեղեցական Ժողովը գումարուելով որոշեց անվաւեր ճանաչել նրանց պաշտօնավարութիւնն և իր կողմից նոր ընտրելիներ առաջարկեց թէ մէկ և թէ միւս Աթոռի համար։ Աղթամարի համար ի միջի այլոց ընտրելի էր նշանակուել Մկրտիչ վարդապետ Խրիմեան, իսկ Սսի համար Ներսէս եպ. Վարժապետեան։ Ընդհանուր ժողովն իր 27 Յուլիս 1866 թ. նիստում ընդունեց եկեղեցական ժողովի յիշեալ որոշումն ինքնակոչ 2 կաթուղիկոսի մասին և որոշեց Սսի և Աղթամարի Աթոռները թափուր հրատարակել։ Զնայելով այս վճռին՝ ժողովքի մէջ լուրեր էին տարածւում, թէ անվաւեր կաթողիկոսներն այնու ամենայնիւ պիտի հաստատուին, և բողոքագիրներ են մատուցւում Ընդ. ժողովին։ Միւս կողմից ինքը Նիկողոսը, Սսից Կ. Պոլիս գալով և ապա ուրիշներն էլ Աղթամարից, նոյնպէս բողոքեցին եկեղեց. համագումարի վերոյիշեալ

ներ ուղարկում է Էջմիածին միայն Ազգ. Ընդհ. ժողովը. բայց գիտենք, որ այս «Ընդհանուր» ժողովը, որ իր պատգամաւորների միջոցով 130 ձայնի (Սիս և Աղթամարն էլ մէջը) վճռական դեր է վերապահել է իրան, բաղկացած է իրօք համարեա միայն Կ. Պոլսի հայերից։ Բացի դրանից նոյն իսկ Ընդհանուր ժողովն էլ իբրև կաթողիկոսական թեկնածու կարող էր տալ իր ձայնն այն եպիսկոպոսին, որ մտել էր կանխապէս Կ. Պոլսի հայ հոգևորականների պատրաստած ընտրելիների կամ թեկնածուների ցուցակը։ Դեռ չենք խօսում այն ոչ նուազ ուշագրաւ կէտի մասին, որ ռուսահայերի մի քանի հարիւր հազար ժողովուրդ ունեցող ընդարձակ թեմերն և Թիւրքիայի բազմաթիւ փոքրիկ—հազիւ տասնեակ հազարների համար—թեմերը նոյն ընտրողական իրաւունքն են վայելում հաւասար աստիճանով։

վճռի դէմ, մանաւանդ որ նոյն իսկ պատրիարքը՝ ապօրէն համարելով այդ վճիռը՝ չէր գործադրել, չնայելով որ Ազգ. ժողովը հաստատել էր արդէն։ Խնդիրը նորից ծեծվում է Ազգ. ժողովում, որ ուրիշ ելք չէ գտնում, բայց եթէ մի Նոր Յանձնաժողով ընտրել (4 աշխարհ. և 4 եկեղեց. անդամներից), որին հրահանգ է տալիս որոշել.

«Ա. Աղթամարայ և Կիլիկիոյ Կաթողիկոսաց ընտրութեան եղանակը։

Բ. Երեք Կաթողիկոսական Աթոռոց թէ իրարու հետ և թէ Կ. Պոլսոյ Կենտր. վարչութեան հետ ունենալիք յարաբերութեանց սահմանները»։

Զափազանց կարևոր խնդիրներ էին այս երկուսն էլ թէ ազգային հեղինակութեան անվթար պահպանման տեսակէտից և թէ յիշեալ երկու թեմերի եկեղեցական գործերի բարւօքման համար։ Բայց գործը մատնվում է անուշադրութեան։ Յանձնաժողովի անդամներից ոմանք հրաժարվում են, միւսները գործ չեն կատարում և դրանով վերջանում է խնդիրը։ Իսկ նոյն միջոցին թէ Սսում և թէ Աղթամարում խառնակութիւնները շարունակվում են կաթողիկոսական Աթոռների շուրջը։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Ազգ. Սահմանադրութեան դադարեցումը։ Նոր պետական հարուածի պատճառները։ Ընդհ. ժողովի quorum-ի հարցը։ «Գործ խառնարան»։ Նշանակուած Խառն Ժողով։ Սահմանադրութեան վերաքննութիւնը։ Վարժապետեան—Նարբէյ միջադէպը։ Օտեանի ճառը։ Խրիմեանի պատրիարք ընտրուիլն և առաջին գործերը։

Ազգային իշխանութիւնների վարած գործերը հետզհետէ այնքան անկարգ վիճակի էին հասել, որ 1866-ին կառավարութիւնը մի նոր պետական հարուա-

ծով Ազգ. Սահմանադրութիւնը դադարած հրատարակել։ Ազգ. Ընդհանուր Ժողովն իր զանազան Մասնաժողովների, Խորհուրդների և Յանձնաժողովների բարդ կազմութեամբ դանդաղաշարժ մեքենայի դերը էր ստացել, որի անհրաժեշտ բարեկարգման համար հեղինակութեան տէր երեսփոխաններն այլեայլ առաջարկութիւններ էին անում։ Ստ. Ասլանեան առաջարկել էր վարչութիւնը կազմել «համամիտ» անդամներից։ Ընդհ. Ժողովը նախ ընդունեց սկզբունքով, յետոյ պակասութիւններ գտաւ ընտրելիների ցանկում և թողեց հարցը հին վիճակում, այն է՝ իւրաքանչիւր երեսփոխանի հայեցողութեանը յանձնեց Վարչութեան այնպիսի անդամներ ընտրել, որ միմեանց «համամիտ» լինէին։ Իսկ Գրիգոր Աղաթօն առաջարկում էր Սահմանադրութիւնը վերաքննել և ազգային գործերը կառավարել վարձուած (վճարով) պաշտօնեաների ձեռքով։ Այն միջոցին ամենից ազդեցիկ երեսփոխանը Սերվիչէնն էր. շատերի աչքն ուղղուած էր նրա վրայ՝ այն վստահութեամբ, թէ նա միայն կարող էր փոթորկից երերուող ազգային նաւակը ղեկավարել, և նրանք բազմանք յայտնեցին, որ Սերվիչէնը յանձն առնէ Ազգ. վարչութիւն կամ աւելի ճիշտը՝ Քաղաքական Ժողով կազմել իր ատենապետութեան ներքոյ և որ իր 19 միւս ընկերներին ինքն ընտրէ՝ ուզած անձերից։ Բայց այս էլ չյաջողուեց։ Քաղաքական Ժողովը կազմուեց տարբեր ուղղութեան յարող անձերից, ուստի և Սերվիչէնը հրաժարուեց և ինքն էլ իր կողմից ոյժ տուեց նրանց, որոնք Սահմանադրութեան վերաքննութիւնն էին պահանջում։ Ընդհ. Ժողովը մերժեց վերաքննութեան հարցը՝ հիմնաւոր կերպով պատճառ բերելով, թէ Սահմանադրութեան պահանջած ժամանակամիջոցը դեռ չէր հասել *)։ Իրերի այս վիճակում մի մեծ վէճ էլ

*) Ազգ. Սահմանադրութիւնը կարող էր փոփոխութեան ենթարկուել միայն հաստատումից 5 տարի յետոյ (§ 99)։

ծագեց Կրօնական և Քաղաքական Ժողովների մէջ մի մատնիչ քահանայի գործի առիթով և երբ Պօղոս պատրիարքը յայտնի կերպով Կրօնական Ժողովի կողմն անցաւ ընդդէմ Քաղաքականի, ժողովրդի և երեսփոխանների մէջ մեծ դժգոհութիւն յառաջացաւ այս պատճառով։ Պատրիարքն էլ հրաժարական ներկայացրեց Բ. Դրան՝ յայտնելով թէ ինքն այս տեսակ Սահմանադրութեամբ ոչ ազգ կարող է կառավարել, ոչ էլ պատրիարքութիւն անել։

Արտաքին գործերի մինիստրը, որից կախում ունէին այն ժամանակ քրիստոնեայ պատրիարքութիւնները, հարկ համարեց, հրաժարականի պատճառները քննելով, տեղեկանալ հայոց ազգային սահմանադրական գործերի կացութեան. և քննութիւնից երեւաց, որ բացի վերոգրեալ առիթներից կար նաև որոշ օրինազանցութիւն, որ կայանում էր հետևեալում։

Ըստ օրինի՝ Ընդհանուր Ժողովի անդամների թիւը 140 լինելով, կանոնաւոր նիստ կազմելու համար հարկաւոր էր գոնէ կէսից մէկ աւելի, այսինքն 71 երեսփոխանի ներկայութիւնը, իսկ վերջին ժամանակները 50 և նոյն իսկ աւելի պակաս թուով անդամների ներկայութեամբ նիստեր էին տեղի ունեցել և որոշումներ կայացել։ Նոյն իսկ այնպիսի կարևոր վճիռ, ինչպէս էր Էջմիածնի կաթողիկոսի ընտրութեան մասնակցելու համար 130 ձայնի իրաւունքով պատգամաւոր ընտրելը, Ազգ. Ժողովը միայն 57 երեսփոխանի ներկայութեամբ էր արձակել։ Անկարելի էր լինում պահանջուած օրինական թիւը (71) հաւաքել՝ կանոնաւոր նիստը բանալու համար [1]), ուստի ուրիշ միջոց չգտնելով՝ որոշել էին «աւելի նուազ թուով նիստ կազմել», այսինքն 51 հոգով, այն հիման վրայ, թէ

[1]) Ազգ. Սահմ. 59-րդ յօդուածն ասում է. «Ընդհ. Ժողովը նիստ չկրնար ընել՝ մինչև որ անդամոց մեծագոյն մասը՝ այսինքն գոնէ եօթանասունմէկ (71) հոգի ներկայ՝ չըլլայ»։

գաւառական 40 երեսփոխանները դեռ չէին ընտրուել, հետեւաբար Կ. Պոլսեցի երեսփոխանների (100) կէսից 1 աւելին բաւական էր նիստն օրինաւոր դարձնելու համար։ Ընդհ. Ժողովն ինքն էլ զգում էր այս տեսակէտի առաձգական լինելը, ուստի երբ ծանրակշիռ մի հարց էր վճռւում, աշխատում էր նրան օրինականութեան ձև տալ բացակայ երեսփոխաններից նամակով քուէ խնդրելով, որպէսզի օրէնքով պահանջած 71 թիւը գոյանայ կամ պահպանուի... Այսպէս՝ Ընդհանուր Ժողովի՝ 1866 յուլիսի 22-ի նիստում, որի օրակարգն էր «Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ընտրութիւն», ներկայ էին միայն 58 հոգի, որոնցից անձամբ քուէ տուին միայն 55 հոգի։ Իսկ այն 77 քուէների գումարից, որ տրուած էր կաթողիկոսական ընտրելիներին [1], 22 քուէն պատկանում էր բացականերին, որոնք նամակով էին ուղարկել իրանց քուէները։—Հարկաւոր է լինում, որ թիւրք մինիստրը նկատողութիւն անէ, թէ 71 անդամից պակաս թուով նիստ կազմելը և որոշում կայացնելը ապօրինի է [2]։

Այն միջոցներում Ընդհ. Ժողովի նիստերն և առհասարակ պատրիարքարանն անկարգութեան այնպիսի ցաւալի տեսարան էին ներկայացնում, որ նոյն իսկ ջերմ սահմանադրական և հայրենասէր պատմագիրները առանց վրդովմունքի չեն կարողանում յիշել, թէ «այնքան յոգնութիւններով ու քրտինքով ձեռք անցուած Սահմանադրութիւն մը, իր սուրբ նպատակէն շեղելով, վէճերու և կիրքերու «զարդ խառնարան» մը կըլլար [3])»։

Այսպիսի հանգամանքներում, երբ կառավարութիւնը պատրիարքի հրաժարականը ստացաւ, կտրուկ միջոցի դիմելով՝ անմիջապէս դադարեցրեց Սահմանադրութիւնը՝ պահանջելով, որ նա վերաքննուի. լուծեց Քաղաքական և Կրօնական Ժողովները, արգելեց Ընդհ. Ժողով գումարել նոր ընտրութիւն կատարելու համար և Ընդհ. Ժողովին իրաւունք տուեց միայն առկախ մնացած կաթողիկոսական հարցերով զբաղուել։ Միենոյն ժամանակ պատրիարքը հաստատուեց իր պաշտօնում, իսկ Խառն Ժողովի (կամ Ազգ. Վարչութեան) անդամներին կառավարութիւնն ինքը նշանակեց, բժիշկ Սէրվիչէնի ատենապետութեամբ, որից կարելի է եզրակացնել, որ պետական այս կարգադրութիւններն առանց Սէրվիչէնի հետ խորհրդակցութեան և նրա գիտութեան չէին... Ամենից կարեւոր գործը Սահմանադրութեան վերաքննութեան խնդիրն էր, որի համար էլ կառավարութիւնն իր կողմից նշանակեց մի յատուկ Յանձնաժողով, 11 հոգուց բաղկացած, որի մէջ մտան նաեւ Վարժապետեան, Սէրվիչէն, Տատեան, Աղաթօն և այլն, բոլորն էլ Սահմանադրութեան վերաքննութեան կուսակիցներ։

Ամբողջ 2 տարի տեւեց այս վիճակը, մինչև որ բժիշկ Սէրվիչէն և Դր. Օտեան 1868 թ. մարտին, շնորհիւ իրանց մօտ յարաբերութիւններին Բ. Դրան հետ, յաջողեցան իրաւունք ստանալ Սահմանադրութիւնը գործադրելու ըստ առաջնոյն, մինչև վերաքննութեան վերջանալն և հաստատուիլը։ Կառավարութիւնը դարձեալ Ազգ. Ընդհ. Ժողովին յանձնեց վերոյիշեալ Յանձնաժողովի կազմած Սահմանադրութեան նոր ծրագիրը քննել, որի համար էլ, կառավարութեան պատուէրի համաձայն, Ազգ. Ժողովը 1868 թ. ապրիլի 12-ի նիստում 7 հոգուց բաղկացած մի Մասնաժողով ընտրեց։ Չնայելով այս նպաստաւոր պարագային, Պօղոս պատրիարքի և Սէրվիչէնի դէմ դժգոհութիւնը շարունակվում էր, ուստի երկուսն էլ հարկադրուեցին հե-

[1] Քուէների մեծամասնութիւնը, ինչպէս յայտնի է, շահեց Գէորգ արք. նախկին պատրիարք. որ յետոյ Ա. թեկնածու ընտրուեց Էջմիածնում (Գէորգ Դ)։

[2] Ատենագր. Ազգ. Ժող. 1860—1870, էջ 355։

[3] Դոկտ. Վ. Յ. Թ. Հանդէս Ամսօրեայ 1903, էջ 301։

ռանալ իրանց պաշտօններից։ Խառն ժողովի ատենապետ նշանակուեց Դր. Օտեան, իսկ պատրիարքական տեղապահ՝ Արիստակէս եպիսկոպոս, որ 6 ամիս յետոյ հարկադրուած էր հրաժարուել։ Բ. Դուռը հրամանագրեց արտաքոյ կարգի Ազգ. Ընդհ. Ժողով գումարել։ Շատ հետաքրքրական է այս մասին տեղի ունեցած Վարժապետեան—Նար Բէյ միջադէպը։ Այն ժամանակ «Արծիւ Վասպուրականի» հիմնադիրն արդէն հռչակ էր հանել և ժողովրդի մէջ եռանդով արծարծվում էր նրա թեկնածութիւնը, բայց երեսփոխանների մեծամասնութիւնն իր քուէն տուեց Իգնատ. եպ. Գագմաճեանին. իսկ Խրիմեան այնուամենայնիւ ստացել էր քուէների 1/3-ը։ Գագմաճեան՝ իր ընտրութիւնից հաշիւ 12 օր անցած՝ վախճանուեց և հարկ եղաւ նոր ընտրութիւն կատարել։ Այս անգամ՝ շատերի աչքը Ներսէս Վարժապետեանի վրայ էր, որին Կ. Պօլսի հոգևորականների եկեղեցական համագումարն ընտրելիների ցուցակից դուրս էր թողել, որովհետև Կ. Պօլսի պատրիարքական գահը բարձրանում էին միայն այն եպիսկոպոսները, որոնք Էջմիածնում էին օծուել, իսկ Վարժապետեանն օծուել էր Սիսի կաթողիկոսից։ Ազգ. Ժողովը, որ ի սրտէ ուզում էր իր եռանդուն և պերճախօս անդամին պատրիարք տեսնել, «Ծանուցագիր» է ուղղում Եկեղեցական Համագումարին, որ Ներսէսի անունն էլ աւելացուի ցուցակում։ Բայց հոգևորականներն անյողդողդ են մնում իրանց նախկին որոշման վրայ և պատասխանում են թէ «Երեսփոխանական Ժողովոյն առաջարկութիւնը թէ Մայր Աթոռոյ նուիրական և դարաւոր իրաւունցը և թէ Սահմանադրութեան ոգոյն համեմատ չէ» և իրանց կողմից չուզելով վիճել՝ պարտք են համարում դիմել այս մասին Էջմիածին, կաթողիկոսի դատաստանին։—Համագումարի այս որոշման ստորագրել են 8 եպիսկոպոս, 12 վարդապետ և 12 քահանայ. Նախագահն էր Խորէն Նար-

Բէյ, որ գլխավորում էր Վարժապետեանի հակառակորդների խումբը։ Ազգ. Ժողովում բուռն վիճաբանութիւն է տեղի ունենում այս առիթով Նար-Բէյի և Օտեանի մէջ (Վարժապետեանի ջերմ կուսակից)․ պարզվում է, որ 8 եպիսկոպոսներն իրանց կողմից այս մասին մասնաւոր հեռագիր էլ են խփել Էջմիածին՝ ի պաշտպանութիւն իրանց որոշման ընդդէմ Ներսէսի ընտրելիութեան։ Եպիսկոպոսները, տեսնելով Ազգային Ժողովի մէջ ծագած յուզումն և Ներսէսի բազմաթիւ կուսակիցների բուռն յարձակումներն իրանց դէմ, աշխատում են արդարանալ և ամբողջ մեղքը դնել Նար-Բէյի վզին, ասելով թէ «հեռագիրը գաղղիերէն էր և մենք գաղղիերէն չենք գիտեր... գրողը Խորէն սրբազանն է, պէտք է որ պատասխանէ». իսկ Նար-Բէյ բացատրում է, թէ «սրբազան եղբայրներս, ամեն մէկ բառին նշանակութիւնն իմանալով, ինձի հետ համաձայնութեամբ ստորագրեցին»։ Ազգային Ժողովն որոշում է մի բողոքի հեռագիր ուղարկել Էջմիածին 8 եպիսկոպոսների մասնաւոր հեռագրի դէմ և գրանով փակում է միջադէպը։ Բայց հարկաւոր էր վերջապէս պատրիարք ընտրել։ Վարժապետեան՝ իր անուան շուրջը կատարուած այս խնդիրները (intrigue) և հակառակութիւնը տեսնելով, մամուլի միջոցով յայտնում է, թէ ինքը Սահմանադրութեան պահանջած 35 տարեկան հասակը չունենալով՝ չէ ուզում ընդունել պատրիարքական պաշտօնը։ Այն ժամանակ Օտեան դարձեալ բարձրացնում է իր ձայնը։ «Ա՛լ ժամ է լռեցնել կիրքերը,—ասում է նա Ազգ. Ժողովում, — և պատրիարքի ընտրութեամբ գրաղիլ. բոլոր Ազգը անհամբեր անոր կը սպասէ։ Ազգը կուզէ, որ պարզ, անխարդախ և գրագէտ եպիսկոպոս մը պատրիարք ըլլայ, բայց անիկայ չպիտի կրնայ ըլլալ (Ներսէս), որովհետև ինքն ալ չընդունիր... Ես կառաջարկեմ ուրիշ մէկը, որ արդէն շատերուն սրտին համաձայն է, որ Ազգին ալ սիրելին է և որ ճշմարիտ

հայու զաւակ և ոչ նուազ փառք մ՚ է մեր եկեղեցւոյն:
—Խրիմեա՛նը»: Հազիւ թէ նա վերջացրել էր իր խօսքը՝ ամբողջ ժողովը, ներկայ գտնվող ժողովրդի հետ միասին, միաբերան աղաղակում են «կեցցէ Խրիմեան, կեցցէ Օտեան»: Նար-Բէյ, մասամբ գոհ լինելով, որ Վարժապետեանի թեկնածութիւնը վերցվում էր ասպարէզից, ինքն էլ ձայնակցում է՝ «կեցցէ Խրիմեան սրբազանի պատրիարքութիւնը», և ժողովուրդը նորից ծափահարում է:

Ահա այսպէս՝ բոլորովին անսպասելի կերպով Հայրիկը դառնում է պատրիարք, որովհետև Ազգ. ժողովը մի և նոյն նիստում անմիջապէս դիմում է քուէարկութեան և ձայների ստուար մեծամասնութեամբ կատարում է նրա ընտրութիւնը (1869 օգոստ. 28): Խրիմեան մի տարի առաջ (1868) էջմիածնում Գէորգ Դ. կաթողիկոսից եպիսկոպոս էր օծուել և նոր էր վերադարձել Տարօն, երբ լուր հասաւ իրան իր ընտրութեան մասին և իսկոյն մեկնեց դէպի Կ. Պոլիս:

Երբ նորընտիր պատրիարքը ներկայանում է Ազգ. ժողովին (1869 նոյեմբ. 12) իր երդման ուխտը կատարելու, հարց է յարուցանում, թէ «ինչ է պատճառը, որ Սահմանադրութիւնն ուխտի բեռը միայն պատրիարքի ուսնակը դրած է և երեսփոխանք ազատ են անկից», և պահանջում է, որ երեսփոխաններն էլ երդուեն իր հետ՝ Սահմանադրութեան վրայ: Վերջապէս համոզում են նրան, թէ ըստ Սահմանադրութեան միայն պատրիարքն է պարտական ուխտել և երբ ժողովի ատենապետը հարցնում է նրան, թէ պատրաստե՞լ է արդեօք իր ուխտի ձևը, Խրիմեանը պատասխանում է. «Ես ուխտ պատրաստելու պէտք չունիմ, քարոզներս անգամ անգիր կերպով կուտամ... Ես արդէն այդ ուխտ ըրեր եմ Հայաստանի մէջ, Մշոյ դաշտին մէջ, իմ մերկ ու բոկոտն զաւակացս առջև, իմ հարստահարեալ ժողովրդեանս քով» և կատարում է իր

ուխտը՝ հաւատարմութիւն երդուելով նախ՝ «Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ դաւանութեան, աւանդութեանց և սրբազան կանոնաց», երկրորդ՝ «Ազգային Սահմանադրութեան ոգոյն և սկզբանցը» և երրորդ՝ «Օսմանեան բարեխնամ տէրութեան, որուն մեր ազգը դարաւոր հաւատարիմ գտնուած է և որուն շահը նոյն է մեր ազգին շահուն հետ»: Այս ուխտից յետոյ նա դառնում է դէպի եկեղեցում խմբուած ահագին ժողովուրդն և հարցնում է, թէ գո՞հ են իր ուխտից և ժողովուրդը պատասխանում է «կեցցէ Խրիմեան» կոչելով և ծափահարելով:

Գրիգոր Օտեան, այս անկեղծ հայրենասէրն և միանգամայն հմուտ քաղաքագէտը, որ ջերմ պաշտպան էր Խրիմեանի և Վարժապետեանի, երբ յաջողեց ձեռք բերել թիւրք կառավարութիւնից Սահմանադրութեան վերականգնումն և պատրիարք ընտրել տալ իր համակրած անձին, իբրև հրաժարեալ ազգային վարչութեան ատենապետ, մի սքանչելի ճառ է խօսում Ազգ. ժողովի նիստում (9 դեկտ. 1869), ազգային գործերի մատակարարութեան մասին և գործնական յորդորներ է կարդում երեսփոխաններին: Ակնարկելով վերջին խռովութիւնները՝ նա ասում է. «Յուզմունքը կենդանութեան նշան է, բայց անընդհատ յուզմունքն ամուլ ճիգերով կըսպառէ ազգին ոյժը. երևակայեալ վտանգի մը դէմ խիզախելով, շատ անգամ իրական վտանգին դէմ անպատրաստ կը գտնուի մարդ: Ինչ ալ ըլլան պատճառները, որ ամեն տեսակ վարչութեան համար անվստահութեան զգացումը արթնցուցած են հասարակութեան մտքին մէջ, պէտք է գիտնալ հասարակութիւնը, թէ առանց վստահութեան գործ տեսնելն անկարելի է»: Խօսելով ժողովրդի տրտունջների և պահանջների մասին, նա ասում է. «Ուզելու է, այլ ոչ իբրև մանուկ մը, որ չիտէ որոշել պատեհութիւնն ու ժամանակը, որ միայն ափսոսց հանել ու աղաղակել

գիտէ, այլ իբրև կատարեալ մարդ ուզելու է»։

Ժողովրդի պահանջների թւում, որոնց ակնարկում էր Օտեան, կար մի շատ օրինաւոր կէտ։ Ներկայ Ընդհ. Ժողովի երեսփոխանների թիւը շատ էր պակասել, ոմանց հրաժարուելով և բացակայութեամբ և ոմանց մահուամբ։ Գաւառների համար որոշուած 40 երեսփոխանները դեռ մինչև այն ժամանակ չէին ընտրուած։ Շատ պարզ էր, որ Ազգ. Ժողովը իր օրինաւոր ամբողջական կազմը չունէր. այդ պատճառով էլ այն բոլոր վարչական մարմինները,—մանաւանդ Քաղաքական Ժողովը, որ կարևորագոյնն էր,—որոնք ընտրվում էին, անմիջապէս հրաժական էին տալիս՝ իրանց ընտրութիւնը ներկայ կիսկատար Ընդհ. Ժողովից ապօրինի համարելով։ Այս հարցը վաղուց տրտունջի և ընդհանուր դժգոհութեան պատճառ էր դարձել թէ հասարակութեան և թէ մամուլի մէջ և յանուն ժողովրդի հանրագրութիւն էլ ներկայացուել էր Ընդհ. Ժողովին՝ բողոքելով այս կացութեան դէմ և յայտնելով, որ այսպիսի հանգամանքներում ընտրուած Կրօնական և Քաղաքական Ժողովներն օրինաւոր իշխանութիւն չէին ներկայացնում։ Միևնոյն ժամանակ անտարբերութիւնը հասել էր այն աստիճանի, որ նոյն իսկ վաղուց ընտրուած և Կ. Պօլսում գտնվող երեսփոխանները չէին կատարում իրանց «ազգասիրական պարտականութիւնը» և չէին յաճախում Ընդհ. Ժողովի նիստերը։

Ազգային Ընդհ. Ժողովը չէր կարող չընդունել հասարակութեան բողոքի արդարացի լինելը, բայց նա էլ սպասում էր, որ բացակայ երեսփոխանները վերջապէս թողնեն իրանց անհոգութիւնը, բարեհաճեն ժողովի գալ, որ օրինաւոր մեծամասնութիւն գոյանայ, ըստ այնմ որոշելու համար Ընդհ. Ժողովի վերակազմութիւնը։

Այս կնճռոտ դրութիւնից մի կերպ դուրս գալու համար Ազգ. Ժողովը միակ ելքն այն է գտնում, որ

ամէն հոգ և պատասխանատւութիւն թողնում է Խրիմեանի վրայ, որի գործերը, շնորհիւ իր ժողովրդականութեան, նուազ քննադատութեան առիթ պիտի դառնային։—Եւ այսպէս Ընդհ. Ժողովը որոշում է, որ Խրիմեան պատրիարքն իր հայեցողութեամբ հրաւիրէ իր յարմար դատած անձերից մի Քաղաքական Ժողով «մինչև ի վերահաստատութիւն վերաքննեալ Սահմանադրութեան»։ Պատրիարքի անձնական հայեցողութեանն են յանձնում նաև թէ գաւառական երեսփոխանների և թէ մի «գործադիր յանձնաժողովի» միջոցով Կ. Պօլսի պակաս մնացած երեսփոխանների ընտրութեան գործը։

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Խրիմեանի պատրիարքութեան raison d'être։ Գաւառական հարստահարութիւնները։ Յանձնաժողովի տեղեկագիրը։ Գանգատի գլխաւոր առիթները։ Առաջարկուած բարեկարգութեան միջոցները։ Տեղեկագրի արդիւնքը։

Խրիմեանի պատրիարքութեան առաջին գործն եղաւ՝ լուրջ հայեացք դարձնել վերջապէս Կ. Պօլսից դուրս, Հայաստանի գաւառների վիճակի վրայ։ Նոր պատրիարքը խորապէս զգում էր, թէ անհրաժեշտ էր անմիջական դարման տանել թշուառ ժողովրդից հառած բազմաթիւ գանգատներին, իր կրած հարստահարութիւնների առիթով։ Եւ նա ուժգին կերպով ձեռք առաւ այս հարցը։

Խրիմեանի ընտրութիւնն էլ արդէն գլխաւորաբար այդ նպատակով էր կատարուած և համարեա թէ ուրիշ raison d'être չունէր։ «Հարկ է խոստովանիլ,— ասում է նա Ընդհ. Ժողովում 1870 նոյեմբերի 27-ին, —թէ ես հանճարեղ չէի, քաղաքագէտ չէի, ժամանակին պահանջած մարդը չէի... Ի՞նչ էր պատճառ, որ

Ազգն ընտրեց զիս: Չգիտելով ուրիշ պատճառներ, զորս Երեսփոխանական Ընդհ. Ժողովը կրնար ունենալ, սա միայն գտայ, որ ի վաղուց անտի թշուառներու հետ ապրեր էի, սիրտս կարեկից էր անոնց, ուրեմն Ազգը զայս կը պահանջէր յինէն: Խոնարհելով Ազգի ընտրութեան առաջ, եկայ ստանձնեցի այս ծանր լուծը: Մայր Եկեղեցւոյ բեմին վրայէն ժողովրդեան խուռն բազմութեան խոստացայ, որ պատրիարքութեանս մէջ ազգին թշուառութիւնը պիտի ներկայացնեմ բարեխնամ Տէրութեան և դարման խնդրեմ» *):

Ժողովրդական հանրագիրներն ույժ էին տալիս Խրիմեանի այս յայտարարութիւններին, որոնց հիման վրայ Ընդ. Ժողովը վերոյիշեալ նիստում մի Յանձնաժողով կազմեց «գաւառացի ազգայնոց կրած հարստահարութիւնների պատճառները քննելու և դարմանը խորհելու համար»: Այս Յանձնաժողովը, որ բաղկացած էր՝ Վարժապետեանի նախագահութեամբ՝ 4 եկեղեցականից և 5 աշխարհականից, 1870 դեկտ. 14-ին սկսեց գործել և 10 ամիս աշխատելուց յետոյ, 1871 հոկտեմբ. 8-ին բերեց իր տեղեկագիրն, որ մի կարևոր և ընդարձակ յիշատակարան է գաւառացի հայ ժողովրդի կացութեան մասին:

Տեղեկագրի Ա. մասում մանրամասնօրէն յառաջ են բերուած հետևեալ կէտերն իբրև գլխաւոր աղէթ ժողովրդի պանդխտանների.

1. Արքունի տուրքերի հաւաքման մէջ գործ դրուած անկանոնութիւնները,

2. Կառավարութեան պաշտօնեաների կատարած զեղծումները,

3. Դատարաններում քրիստոնեաների (կամ ոչ—մահմեդականների) վկայութեան չընդունուելը և

4. Մասնաւոր, անհատական հարստահարութիւնների բազմաթիւ դէպքեր:

*) Ատենագր. Ազգ. Ընդհ. Ժող. 1870, էջ 176.

Բերելով պատրիարքարանի դիւանական թղթերը՝ Յանձնաժողովը մի առ մի յիշում է, թէ ո՛ր վիլայէթում այս 4 դասի վերաբերեալ որչափ զեղծումներ և բռնութիւններ են կատարուել, որոնց համար պատրիարքներն ամեն անգամ թաքրիրներ *) են ուղղել Բ. Դրան: Տեղեկագիրը միևնոյն ժամանակ յիշատակում է, թէ կառավարութիւնն ինչ ընթացք է տուել այս դիմումներին: Կառավարութիւնը նոյն թաքրիրի համեմատ բացատրութիւն էր պահանջում տեղական իշխանութիւններից (իսթիլամ), և ահա՛ թէ ինչ էր լինում գործի արդիւնքն ըստ Յանձնաժողովի. «Այս Թաքրիրներու ազդեցութիւնն վուքիլամի եղանակաւ տկարացած է, ինչպէս կը հաստատեն գաւառներէն եկած տեղեկագրերը. զի Բ. Դրան հրամանագիրը կերթայ վալիին, անկէ ալ միւթէսարըֆին (նահանգապետին) և գայմագամին (գաւառապետ), ուր որ պատահեր է եղելութիւնը. և ի պատասխան՝ տեղեկագրով մը կը ստուէ, կամ ուրիշ կերպարանքի կը փոխուի, կամ թէ որ ծանր խնդրութիւն մ՚ է, խիստ թեթևցած կը դառնայ ի Պոլիս: Դժբախտաբար հայն ալ կը ստէ զայն՝ 1, կամ առ ակնկալութեան, ինչպէս կընեն գաւառական իշխանութեանց մէջ գտնուող ազաները. 2, կամ առ երկիւղի՝ ինչպէս կընէ ժողովուրդը, վասն զի ո՛վ կրնայ իր ստացուածքը, պատիւը, մինչև իսկ կեանքը վտանգի մէջ դնել, 3, կամ կեղծ կնիքներու շնորհիւ, որ բազմաթիւ են գաւառաց մէջ և 4, կամ խարէութեամբ, խնդիրն այլայլելով և ժողովրդէն ալ կնիք առնելով»:

Եւ այս կերպով պատրիարքարանի բոլոր դիմումները մնում էին ապարդիւն՝ կենտրոնական կառավարութիւնը շարունակում էր իր անտարբերութիւնն և մեղսակցութիւնը, գաւառական պաշտօնեաներն՝ ի-

*) Պատրիարքի՝ կառավարութեան ներկայացրած պաշտօնական գրաւոր դիմումները թաքրիր են կոչվում:

րանց անկարգութիւններն և զեղծումները, քիւրդն և չէրքէզն՝ իրանց բռնութիւններն, իսկ հայն՝ իր լացն ու գանգատը... Եւ տարիները գլորում են իրանց շրջանը միշտ նոյն դրութեամբ։

Յանձնաժողովը չէր բաւականացել յիշատակելով հարստահարութիւնների շարքը, պատճառներն և դիմումների հետևանքը. իբրև տեղեկագրի Բ. մաս՝ նա միշարք խելացի միջոցներ է առաջարկում երկրի բարւոքման համար։ Այս միջոցներից առանձնապէս ուշադրութեան արժանի են հետևեալները.—

1. «Զինուորական տուրքի փոխարէն մարդ՝ այսինքն զինուոր տալ, բարեկարգութեանց հրովարտակին համեմատ։ Այսպիսի խնդիր մը ինքնին հարկէ, որ ներկայացնենք և ցուցնենք, թէ մենք ալ պատւոյ և քաղաքացիութեան զգացում ունինք և Հայրենեաց ու Տէրութեան համար արիւն թափելէ չենք խորշիր մեր մահմետական հայրենակցաց հետ»։

2. «Տուրքերը Տէրութիւնն ինք հաւաքէ ուղղակի և ոչ թէ միւլթեզիմի (հարկահաւաք) միջոցով»։

3. «Կալուածոց վրայ փոխատուութեան սնդուկներ հաստատուին (Credit foncier)»։

4. «Գաւառական կառավարութիւններէ անկախ լիազօր քննիչներ ուղարկուին, որոնք ամեն կարգի մարդոց հետ բանակցելու և գաւառին իրական վիճակը քննելու կարող ըլլան»։

5. «Դիւստուրը (քաղաքացիական օրինագիրք) թարգմանուի գաւառացոց համար»։

6. «Կալուածական, առևտրական և ձեռագործական դատերը քննել Նիզամի (քաղաքացիական) դատարաններում և ոչ թէ շէրիի (կրօնական). և 7 «քիւրդերն և ուրիշ լեռնցի» ցեղեր, որոնց վրայ աւելացան վերջին տարիներս չէրքէզները, ոչ միայն հայոց, այլ և ուրիշ ազգաց ալ, մանաւանդ կառավարութեան պանձին ալ մեծապէս վնասակար են։ Ասոնք զէնք կը կրեն, կա-

ռավարութեան ոչ տուրք կուտան, ոչ զինուոր, և ապստամբ են. մինչդեռ միւս ժողովուրդներն անզէն են և կառավարութեան տուրք ու զինուոր կուտան, աւելի տուրք մ՚ ալ այդ ապստամբներուն տալու պարտաւորութեամբ։ Կառավարութեան կրնայ կամ քիւրդերուն և այլոց ձեռքէն զէնքն առնուլ և կամ միւս ժողովրդոց ալ զէնք տալ. այն ատեն երկիրը այս աղէտէն կազատի, վրանաբնակ գաղթները գիւղաբնակ մարդեր կըլլան»։

Բացի դրանից Յանձնաժողովը հարկաւոր է համարում յատկապէս Ազգ. Վարչութեան ուշադրութիւնը հրաւիրել այնպիսի միջոցների վրայ ևս, որոնք այս վերջինից էին կախուած, այն է՝ Սահմանադրութիւնն անմիջապէս գործադրել տալ գաւառներում և ուսումն ու դաստիարակութիւնը տարածել այնտեղ մեծ չափերով։

Երբ այս նշանաւոր տեղեկագիրը կարդացուեց, Խրիմեան ի պաշտօնէ ասաց. «Կեանքիս մեծ մասը մեր խեղճ ժողովրդեան մէջ անցուցած եմ... ուստի գիտել կուտամ ժողովոյն, որ ամենևին չափազանցութիւն չկայ տեղեկագրին մէջ և Յանձնաժողովը խնամով հաւաքած է ինչ որ ամենակարևոր էր»։ Երեսփոխաններից ոմանք էլ վկայում են, թէ «գաղտնի մնացած բարոյական ցաւեր կան (կանանց պատուի վերաբերեալ), որ տեղեկագրէն դուրս մնացած են»։

Ընդհ. Ժողովն երկար վիճաբանութիւններից յետոյ ընդունում է Տեղեկագիրն սկզբունքով, բայց ոմանք անյարմար են գտնում ճիշտ այդ ձևով ներկայացնելը կառավարութեան, ուստի որոշում են յանձնել Քաղաքական Ժողովին, որ նա մշակէ յատկապէս Բ. Դռան մատուցանելու համար մի այլ տեղեկագիր։ Ուղիղ 4 ամիս է հարկաւոր լինում, որ Քաղաքական Ժողովն այս յանձնարարութիւնը կատարէ։ Նրա բերածը համեմատաբար աւելի մեղմ ձևով էր կազմուած և բար-

ւորման միջոցների մէջ էլ զգալի փոփոխութիւն էր մտցնում։ Ի միջի այլոց զինուորագրութեան հարցը բոլորովին դուրս էր հանուած տեղեկագրից։ Ազգային Ժողովը ընդունում է այս տեղեկագիրը (1872 փետրուար 18-ի նիստում) և Ազգ. Վարչութիւնը տանում, ներկայացնում է Սադրազամին։

Ի՞նչ է լինում արդիւնքը։

Կառավարութիւնն իր կողմից մի Յանձնաժողով կազմեց՝ կէսը թիւրք և կէսը հայ անդամներից բաղկացած. այս վերջիններին ընտրեց ինքը՝ պատրիարքը։ Յանձնաժողովը իրօք բարեխղճօրէն գործելով բազմաթիւ զեղծումներ երևան հանեց և հաստատեց պատրիարքարանի ներկայացրած տեղեկագրի մէջ յիշուած բազմաթիւ փաստերը։ Մնում էր ուրեմն, որ կառավարութիւնը պատժէ յանցաւորներին և կատարէ հայոց պահանջած արդարութիւնը, իսկ ապագայի համար էլ ձեռք առնէ տեղեկագրի առաջարկած միջոցները... Համարեա թէ այդպէս էլ խոստացաւ կառավարութիւնը՝ այն է ուղարկել գաւառները մի ուրիշ լիազօր Յանձնաժողով՝ այս նպատակով։ Բայց խոստանալը թիւրք կառավարութեան համար կատարել չէր նշանակում. խոստումը մնաց խոստում և ամեն ինչ մնաց հին կարգով, մինչև որ 1876-ին հարկ եղաւ մի նոր դիմումով յիշեցնել կառավարութեան՝ իր հանդիսաւորապէս տուած և երբէք չգործադրած խոստումները։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Երեսփոխանական ընտրութիւններ։ «Քառակուսի անիւը»։ Սահմանադրութեան վերաքննութիւնը։ Խրիմեանի հայեացքները։ Անկանոն ժողովներ։ Նոր ընտրութիւն։ Մատթէոս Վ. Իզմիրլեան։ Հրահանգներ։ Սահմանադրութիւնը գաւառներում։ Հակառակութիւնը Խրիմեանի և Ազգ. վարչութեան մէջ։ Ժողովրդական յուզումներ։ Խրիմեանի հրաժարագիրը։ Վարժապետեան՝ տեղապահ։

Վերջապէս 1870-ին կարելի էր եղած Ազգային

Ընդհ. Ժողովի նոր անդամների ընտրութիւն կատարել, այն էլ դարձեալ միմիայն Կ. Պոլսում, և նոր տարեշրջանը 1871 օգոստոսի 21-ին բացուեց 71 երեսփոխանի, ուրեմն Սահմանադրութեան պահանջած մեծամասնութեան ներկայութեամբ։ Գրիգոր Օտեան ընտրուեց ատենապետ։

Հարստահարութիւնների տեղեկագրից զատ ամենից կարևոր խնդիրն, որով զբաղուած էին Ազգ. Վարչութիւնն և Ազգ. Ընդհ. Ժողովը, Սահմանադրութեան վերաքննութեան խնդիրն էր։ Իսկապէս չէ եղել մի հարց, որ այնքան երկար ժամանակ զբաղեցրած լինի Ազգ. Ժողովը, այնքան երկար տարիներ գրաւած լինի նրա բովանդակ ուշադրութիւնն, որքան այս «վերաքննութեան» խնդիրը՝ 1861-ից սկսած, գրեթէ, անընդհատ մինչև իր դադարումը (1891) Աբդիւլ Համիդի ձեռքով։ Ամենքը զգում էին, թէ Սահմանադրութիւնն՝ այն ձևով, ինչպէս որ կար. չափազանց դանդաղաշարժ մի մեքենայ էր, կամ ինչպէս սադրազամ Ալի փաշան ճիշտ կերպով նկատել էր, նա մի «քառակուսի անիւ» էր, որ չէր կարողանում տեղից շարժուել և յառաջանալ։ Այս պատճառով էլ փորձեր էին լինում թէ կառավարութեան և թէ ազգային իշխանութիւնների կողմից՝ պատշաճաւոր փոփոխութիւններ մտցնել նրա մէջ, բայց տարիների ընթացքում վիճաբանութիւններն այս հարցի շուրջը հետզհետէ ընդարձակվում էին և այնքան երկարում, որ ոչ մի վերջնական եզրակացութեան չէին կարողանում յանգել։ Վերաքննութեան պահանջն ամենից ստիպողական ձևով դրեց Խրիմեան, իր պատրիարքութեան օրով, նկատելով իրաւացի կերպով գաւառների կրած զրկանքն, ինչպէս քիչ յետոյ պիտի տեսնենք։

Երբ 1868-ին կառավարութեան կողմից նշանակուած Յանձնաժողովը պատրաստեց սահմանադրութեան մի նոր ծրագիր, Ազգային Ժողովը մի յատուկ

Մասնաժողովի յանձնից նրա քննութիւնը։ Իսկ այս Մասնաժողովը քննելով գտաւ, որ յիշեալ ծրագիրը «բոլորովին անգործադրելի» էր, ուստի մի տարբեր ծրագիր էլ ինքը յօրինեց և ներկայացրեց Ընդհ. ժողովին։ Այս կերպով 1870-ին 3 միմեանցից տարբեր Սահմանադրութեան օրինակ և ծրագիրներ կային հրապարակի վրայ. Նախ այն, որ 1863-ին հաստատուած էր և դեռ ևս մնում էր իբրև միակ օրինաւորը ցվերաքննութիւն. Երկրորդ՝ Բ. Դրան յանձնաժողովի կազմածն և Երրորդ՝ Ընդհ. ժողովից ընտրուած Մասնաժողովի ներկայացրած օրինակը։ Երկրորդ ծրագրի համաձայն՝ երեսփոխանների թիւը 140-ից պէտք է իջնէր 70-ի։ Խրիմեան՝ այսքանն էլ շատ գտնելով, առաջարկում էր միայն 50 երեսփոխան ունենալ, որոնց 20-ը Կ. Պոլսից, 20-ը գաւառներից և 10 էլ եկեղեցականներից ընտրելով։ Իսկ երրորդ ծրագրով, Ընդհ. ժողովը պիտի բաղկանար 100 անդամից, որոնց 20-ը հոգևորական՝ Եկեղեցական ժողովի կողմից ընտրուած և 80-ն աշխարհական՝ կէսը Կ. Պոլսից և կէսը գաւառներից։ Իսկ Քաղաքական և Կրօնական ժողովները պիտի ունենային միայն 12-ական անդամ։

1870 օգոստոսի 27-ին սկսվում է այս ծրագիրների քննութիւնը *)։ Թէ ինչպէս էր վերաքննութիւնն յառաջ գնում, այդ երևում է նրանից, որ Սահմանադրութեան 36-րդ յօդուածի փոփոխութեան համար, այն է որոշելու համար, թէ Քաղաքական ժողովը դարձեալ 20 հոգուց բաղկանայ թէ պէտք է պակսեցնել թիւը, երեսփոխանները վիճում են ամբողջ 5 նիստ և վերջապէս կանգ են առնում 14-ի վրայ։ Նկատելով այս դանդաղութիւնը՝ 17 երեսփոխան դեկտեմբերի սկիզբը մի յայտարարութիւն են տալիս, որ վերաքննութիւնն էլի յանձնուի մի ուրիշ, վերաքննիչ Յանձնաժողովի։ Վերջապէս Խրիմեանը չէ համբերում և Ազգ. ժողովի մէջ յայտնում է, թէ ինքն ինչ է մտածում առ հասարակ «Ազգ. Սահմանադրութեան» մասին։ «Մեր Ազգ. Սահմանադրութիւնը, ասում է նա, խմբագրուեր է մայրաքաղաքիս մէջ և այն անձանց հեղինակութեամբ, որոնք աւելի Եւրոպան կը ճանչնին քան Հայաստանի աշխարհացոյցը... և այսպէս մեր Սահմանադրութիւնը Եւրոպիոյ գաղափարաց վրայ ձուլուեր է աւելի՝ քան թէ Հայաստանի։ Օրէնսդիրը պարտաւոր էր քննել այն ժողովրդեան վիճակը, պիտոյքն ու բարքն, որու օրէնք սահմանելու կոչուած էր և այդ ժողովուրդը միայն Վոսփորի մէջ չէր բնակեր, այլ այս անձուկ շրջանակէն անդին՝ Հայաստանի հեռաւոր գաւառներուն մէջ, և երբ տակաւին այս կերպով խմբագրուած Սահմանադրութիւն մը մայրաքաղաքիս մէջ անգամ գործադրուած ատեն դժուարութիւններ կը ծագին, մտածելու է թէ գաւառներու մէջ ինչ հիմ կը բանէ և ինչ արդիւնք կունենայ» *)։

Եւ մեծապէս իրաւունք ունէր Հայրիկ։ Սահմանադրութիւնը հիմնուելուց ի վեր 10 տարի էր անցել, բայց նրա ամբողջ սահմանադրական գործունէութիւնը սահմանափակուել էր Կ. Պօլսի նեղ շրջանում. հազիւ 1870 հոկտեմբերին մի երկու երեսփոխան էին ընտրուել գաւառներից։ Այդ չէր նշանակում, ի հարկէ, թէ

*) Հետաքրքրական է մի երեսփոխանի (Իփէքճեան) առաջարկութիւնն այս քննութիւնների ժամանակ։ Թաղական մատակարարութեան վրայ խօսելով, նա առաջարկում է Սահմանադրութեան տրամադրած ձևն, այն է թէ «Թաղերը կը ներկայանան իւրաքանչիւրն իր եկեղեցւոյ ժողովուրդէն ընտրեալ Թաղական ժողովով մը» խօսքերը փոխել և մտցնել հետևեալ նոր իմաստը. «Իւրաքանչիւրն իր հայազգի ժողովուրդէն ընտրեալ Թաղական ժողովով մը»։ Առաջարկութեան հեղինակն այն հիմքն էր յառաջ բերում, որ «ամեն հայ անխտիր, թէ հռոմէական ըլլայ, թէ բողոքական, մեր ազգային իրաւանց հաղորդ գտնուի»։ (Ատ. Ազգ. Ժողով. 1870 էջ 242)։ Առաջարկութիւնը չէ անցնում։

*) Ընդհ. Ժողով. 1873 յունուար 26։

կազմ չկար Կ. Պոլսի և գաւառների մէջ։ Գաւառներից հաղորդում էին պատրիարքին իրանց տեղական պէտքերին և գանգատներին, իսկ Ազգ. վարչութիւնը՝ յանձին պատրիարքի՝ կարգադրութիւններ էր անում, շատ անգամ «թաքրիր»-ներով դիմելով Կառավարութեան, որ երբեմն ուշադրութիւն էր դարձնում, երբեմն՝ ոչ։ Բայց Սահմանադրութիւնը պահանջում էր, որ գաւառներն ևս վայելեն նոյն «իրաւունքն և պարտիքը» (Սահմանադրութեան Նշանաբանը)։

Սահմանադրութեան հիմնական օրէնքների այս խախտում դարեշրջանին՝ Ազգային վարչութիւնը կազմող երկու ժողովներն էլ ըստ այնմ անկանոն և անյարատև կեանք են ունեցած։ Կրօնական ժողովն, որ 1869 դեկտեմբերին էր ընտրուած, բաղկանում էր միայն 6 հոգուց, որոնց մէջ էր Ներսէս Վարժապետեան, և հազիւ տարի ու կէս անկարգ կերպով պաշտօնավարելուց յետոյ՝ ցրւում է և դադարեցնում իր անկանոն գոյութիւնը։ Նոյն վիճակն է ունեցած նաև Քաղաքական ժողովը։ Ընդհ. ժողովն՝ ինչպէս կրօնականի համար էր արել, նոյնպէս Քաղաքական ժողովի համար էլ առժամանակեայ կերպով միայն 6 անդամ էր ընտրել այն յուսով, թէ շուտով Սահմանադրութիւնը կը վերաքննուի, կը վերջանայ և նոր օրէնքի հաստատումից յետոյ ընտրութիւն կը կատարուի նոր սահմանուած թուով։ Բայց Քաղաքական ժողովի այդ ժամանակաւոր կազմից՝ 6 հոգուց 5-ը հրաժարուելով, չէին գործում։ Խրիմեան կառավարում էր մենակ, մի անդամի հետ (Ֆրէնկեան Յակոբ)։ Տեսնելով, որ օրինաւոր ընտրութիւն կատարելու հնար չկար, Ընդհանուր ժողովի որոշմամբ, Խրիմեան և Ֆրէնկեան իրանք են նշանակում Քաղաքական ժողովի մնացած 5 անդամին և առաջարկում Ընդհ. ժողովի հաստատութեան, որն և անմիջապէս կատարւում է։ Այս տարօրինակ Քաղաքական ժողովին ատենապետ է դառնում Սահակ Ապրօ և ատենադպիր՝

Տիգրան Եուսուֆեան, որոնք կարևոր դեր են խաղացած ազգային վարչական շրջաններում։ Սակայն սրանք էլ շուտով ձանձրանում են տիրող անորոշ դրութիւնից և հրաժարական են ներկայացնում։ Ընդհ. ժողովը հազիւ հազ համոզում է նրանց շարունակել իրանց պաշտօնավարութիւնն և նրանց իբրև օգնական տալիս է 4 նոր անդամակից։ Այս էլ շատ չէ տևում և 1872-ին վերջնականապէս բոլորն էլ հրաժարւում են։

Ի նկատի առնելով ազգային վարչութեան այս երերուն վիճակը՝ վերջապէս 1872-ին Ազգ. Ընդհ. ժողովը, առանց Սահմանադրութեան վերաքննութեան վերջանալուն սպասելու, ընտրեց նոր Կրօնական ժողով՝ 14 անդամից բաղկացած, ըստ օրէնքի, որի մէջ մտնում էր առաջին անգամ Մատթէոս վարդապետ Իզմիրլեան, որն և դառնում է ժողովի ատենադպիրը։ Իսկ Քաղաքական ժողովն ընտրւում է նոյնպէս 14 անդամից, փոխանակ 20 ի՝ ըստ Սահմանադրութեան։ Սա ևս շուտով մասնակի փոփոխութիւն է կրում։ Առհասարակ Խրիմեանի պատրիարքութեան ամբողջ տևողութեան ժամանակ պատրիարքի և Քաղաքական կամ առհասարակ Խառն ժողովի մէջ կատարեալ համաձայնութիւն գոյութիւն ունեցած չէ։ Այս հանգամանքն ևս աւելի խառնակ վիճակ էր յառաջացնում այն ժամանակի ազգային վարչութեան մէջ։

Խրիմեան իր համար նպատակ էր դրել իր պատրիարքութեան ժամանակ յառաջ մղել գաւառների բարւոքումն և Սահմանադրութեան տարածումը։ Նրա անընդհատ ստիպումների շնորհիւ Ազգ. Վարչութիւնը վերջապէս 1872 սեպտեմբերին կազմեց յատուկ «Սահմանադրական հրահանգ գաւառաց համար», որտեղ բացատրուած էր, թէ ինչպէս են կազմւում գաւառական Ընդհ. ժողովները, գաւառական վարչութեան Կրօնական և Քաղաքական ժողովներն, ինչ է լինելու նրանց պաշտօնն, ինչպէս է ընտրւում Առաջնորդն,

ինչ է նրա պաշտօնը, պարտականութիւնն և այլն։ Այս բոլորը բղխում էին Ազգ. Սահմանադրութիւնից։ Բացի դրանից կազմուեցին և առանձին հրահանգներ՝ 1, Թաղական խորհուրդների համար, որ պիտի գործադրուէր թէ Կ. Պոլսում և թէ գաւառներում։ Այս հրահանգի մէջ մտնում էր նաև թաղական դպրոցների ծրագիրը։ 2, Ազգային վանքերի համար, որտեղ ասուած է, թէ իւրաքանչիւր վանք պիտի ունենայ իր միաբանութեան Ընդհ. Ժողովն և Տնօրէն Ժողովը և ուր գծուած էին վանահօր իրաւունքներն և պարտականութիւնները։ Եւ 3, Հրահանգ Յարաբերութեան Առաջնորդաց և գաւառական վարչութեանց ընդ տեղական կառավարութեան»։ Նկատելով, որ հպատակ ազգերի, հետևաբար և հայերի, Առաջնորդները, ըստ Թրք. քաղաքացիական օրէնքի (Դիւստուր), իրանց գտնուած տեղերի պետական վարչական ժողովներում ի պաշտօնէ անդամակից են և տեղական կառավարութեան մօտ իրանց հօտն են ներկայացնում, այս Հրահանգը մանրամասն որոշում էր և խորհուրդներ էր տալիս, թէ առաջնորդներն և նըրանց ստորադրեալ եկեղեցականներն ինչ ընթացք պէտք է բռնէին։ *)։

Այս հրահանգները կազմելուց և ուղարկելուց յետոյ, Ազգ. Վարչութիւնը Կ. Պոլսից կրկին և կրկին շրջաբերականներ ուղարկեց, որ դրանց հիման վրայ գաւառներն էլ սահմանադրական կազմակերպութիւն ընդունեն. բայց այնուամենայնիւ գործը շատ դանդաղ էր յառաջ գնում։ Գաւառներից մի քանիսը միայն ձեռնհաս էին ընդունել և գործադրել այդ հրահանգներն, այն ինչ մեծ մասը բոլորովին անհոգ էր և չէր ձեռնարկում պահանջուած սահմանադրական ընտրութիւններին։ Կային այնպիսի գաւառներ, որոնց նոյն-իսկ

*) Համառօտութիւն Ազգ. Կենտր. Վարչութեան 1872—1873 ամի առ Ազգ. Ընդհ. Ժողովն. Կ. Պոլիս 1874։

Առաջնորդները բացասաբար էին վերաբերվում Սահմանադրութեան գաղափարին կամ իրանց ձևով էին հասկանում այդ։ Դրանցից մէկը գրում էր Կ. Պոլիս Ազգ. Վարչութեան և հարցնում—«զո՞վ ընտրեմ ժողովին ատենապետ և ժողովականները ուրկէ՞ գտնեմ»։ Մի ուրիշը գրում էր. «ընտրական գործողութիւնները կատարելու համար ոչ քուէտուփ կայ, ոչ սեղան և ոչ ալ տախտակ. զանոնք շինելու համար ինչ ընեմ»։ Մի վարդապետ էլ տեղեկագրում էր, թէ «գիւղացիները կարդալ չգիտեն, ինչպէս անոնց մէջ Սահմանադրութիւն գործադրելու է», և աւելացնում էր. «Աստուած անգամ արարչագործութեան ատեն, Եղիցի լոյս ըսաւ առաջ և լոյսն ստեղծեց, հետևապէս ժողովրդեան համար ամենէն առաջ լոյսն է հարկաւոր», ուստի խընդրում էր, որ Սահմանադրութեան տետրակից առաջ քերական ուղարկեն գաւառները…

Ահա այսպիսի տեղեկութիւնների վրայ հիմնուելով էր, որ Օրմեան առաջարկում էր, թէ «Սահմանադրութիւնը վերաքննելու համար՝ միայն պօլսեցւոյն կարծիքը չի բաւեր. գաւառացւոց դիտողութիւններն ալ ուզել պէտք է»։ Բայց իր սիրած վերաքննութիւնը դեռ չաւարտուած (որ երբէք չկատարուեց), նրա և նոր Քաղաքական Ժողովի մէջ (որի ատենապետն էր Սենեքերիմ Մանուկեան), անհամաձայնութիւնն այնքան յառաջ էր գնացել, որ 1873 յուլիս 31-ին նա ներկայացրեց իր հրաժարականը։

Օրմեանն, ինչպէս արդէն ասինք, շատ պատճառներ ունէր դժգոհ լինելու Սահմանադրութիւնից, բայց նա անբաւական էր նաև այն դիրքից, որ յատկացվում էր պատրիարքին։ Մի անգամ նա Ընդհ. Ժողովում ուղղակի ասել էր, որ եթէ պատրիարքի իշխանութեան սահմանը չընդարձակեն, ինքը չէ կարող իր պաշտօնը շարունակել։ Բացի դրանից նա միշտ պնդում էր, թէ քանի որ Սահմանադրութիւնը վերաքննութեան

տակ է, ինքն ունի իրաւունք ինքնագլուխ գործելու Սահմանադրութեան շրջանակից դուրս և այս հարցի շուրջը շարունակ ընդհարումներ էին տեղի ունենում նրա և Ազգային Վարչութեան անդամների մէջ։ Երբ ընդհարումը սուր կերպարանք առաւ թէ ինքը հրաժարական տուեց և թէ Քաղաքական Ժողովը։ Այս վերջինն իր հրաժարականը պատճառաբանում էր նրանով, որ Խրիմեան առանձին վայրկեաններու մէջ վարչութեան կը յայտարարէր, որ պատրիարքը վարչութեան որոշումները ուզէ նէ կը գործադրէ, թէ պատրիարքը պարտաւոր չէ վարչական ամէն գործ Վարչութեան իմացնել, թէ ինքն՝ (Խրիմեան) իր նախորդաց պէս չի կրնար որոշեալ չափով դրամ առնել... Իսկ Խրիմեան իր բովանդակալից ընդարձակ հրաժարականում յենվում է նրա վրայ, թէ Քաղաքական Ժողովը շաբաթը մի անգամ ժողովուելով, այն էլ միայն 3 ժամ զբաղուելով, անկարող է թէ Կ. Պօլսի տեղական և թէ գաւառների գործերը տեսնել, ուստի առաջարկում էր Ազգային Վարչութիւնը երկու մասի բաժանել, Տեղական և Գաւառական, կամ թէ չէ գաւառների պիտոյքը հոգալու համար անյապաղ առանձին պաշտօնէութիւն հիմնել։ Այս առաջարկութիւնը չէր ընդունուել ոչ Քաղաքական Ժողովից, ոչ էլ Սահման. Վերաքննիչ Յանձնաժողովից։ Միւս կողմից, ժողովրդի մի մասը, լսելով այս դէպքերը, յուզվում էր, հանրագրութիւններով պահանջում էր «Սահմանադրութեան անթերի գործադրութիւնը» ընդդէմ պատրիարքի ինքնագլուխ գործունէութեան կամ ուզածին չափ փող ծախսելուն, բայց Խրիմեան էլ ունէր իր բազմաթիւ կուսակիցներն, որոնք նոյնպէս հանրագրութիւն ներկայացնելով Ազգային Ժողովին՝ խնդրում էին, որ Հայրիկի հրաժարականը չընդունուի։ Գաւառացի հայեր, որոնք Խրիմեանի և Քաղաքական Ժողովի մէջ տեղի ունեցած թիւրիմացութեան տեղեակ էին՝ իբր թէ իրանց սիրելի

պատրիարքին պաշտօն պահելու համար՝ վայրենաբար, նոյն իսկ Խրիմեանի ներկայութեամբ, ծեծի են ենթարկում Քաղաքական Ժողովի անդամներին։ Խրիմեանի հակառակորդների պարագլուխ էին համարվում Մատթ. վարդ. Իզմիրլեան, Բր. Ղազարոսեան և ՍտՓափազեան եպիսկոպոսները։ Հայրիկի կուսակիցները պահանջում էին, որ դրանք հեռանան և այլևս ոչ մի ազգային պաշտօն չվարեն։ Ազգ. Ընդհ. Ժողովը շատ անյարմար դրութեան մէջ էր գտնվում, չէր իմանում ինչ վճիռ կայացնէ. վերջապէս նա որոշում է մի քննիչ Յանձնաժողով կազմել. այս Յանձնաժողովը լսում է թէ պատրիարքի և թէ Քաղաքական Ժողովի մանրամասն բացատրութիւններն և այնպիսի մանուածապատ պատճառաբանութիւններով տեղեկագիր է բերում, որից անկարելի էր յստակ կերպով ըմբռնել, թէ ո՛ր կողմն է յանցաւորը։ Միայն թէ, ի սէր խաղաղութեան, նա առաջարկում է երկու կողմի հրաժարականներն էլ ընդունել։ Բայց որովհետև երեսփոխանների մեծամասնութեան համակրութիւնը Խրիմեանի կողմն էր, ուստի Ազգային Ժողովն էլ այսպիսի հաշտեցնող մի վճիռ է կայացնում. «Սրբ. Պատրիարքին վարչական կազմակերպութեան վերաբերող դիտողութիւնը խնդրոյ կարգին (օրակարգի) մէջ անցընելէ ետև, առաջարկել սրբ. Պատրիարքին, որ ներկայ Սահմանադրութիւնը գործադրելու թեութեամբ իր հրաժարականը ետ առնու, այն պայմանով, որ եթէ ունենայ դժուար իրագործելի կէտեր, Ընդհանուր Ժողովին բերէ զանոնք անմիջապէս վերաքննելու համար»։ Այս պայմանով Խրիմեան ետ է առնում իր հրաժարականը։ Բայց խնդիրը դրանով չի լուծվում, որովհետև Խրիմեան, միևնոյն ժամանակ իր հրաժարականը Բ. Դրան ուղարկած լինելով, կառավարութիւնն արդէն շտապել ընդունել էր թէ նրա և թէ Քաղաքական Ժողովի հրաժարականները և պատուիրում էր նախ նոր

Քաղաքական Ժողով և ապա պատրիարքական՝ տեղապահ ընտրել: Արտաքին գործերի մինիստրը միևնոյն ժամանակ բերանացի յայտնել էր, որ եթէ Նրա պատուէրի համաձայն անմիջապէս ընտրութիւն չկատարուի, ինքը պիտի նշանակէ թէ Քաղաքական Ժողով և թէ տեղապահ...: Մինիստրի այս բերանացի խիստ պատուէրը հասկանալի էր: Խրիմեան մեծ ժողովրդականութիւն էր գտել, որովհետև նա էր եղել առաջին պատրիարքն, որ գաւառների մասին ամենամեծ հոգածութիւն էր ցոյց տալիս. նա էր յուզում հարստահարութիւնների հարցն և անընդհատ թէ գրաւոր և թէ բերանացի բողոքներ էր ուղղում կառավարութեան, գաւառներում հայ ժողովրդի կրած բռնութիւնների մասին: Խրիմեանի պատրիարքութեան օրով էր, որ Ազգային Ժողովը առաջին անգամ զբաղուեց ազգային քաղաքական խնդիրներով, եթէ կարելի է քաղաքական կոչել հարստահարութիւնների խնդիրը: Նրա ժամանակ էր, որ պատրաստուեց և Բ.-Դրան ներկայացուեց հարստահարութիւնների տեղեկագիրը, որի մասին խօսեցինք նախորդ գլխում: Թէ լրագրութիւնն և թէ ժողովուրդը ճնշում էին գործ դնում երեսփոխանների վրայ, որ նրանք Բ-Դրան պահանջած տեղապահի ընտրութիւնը չկատարեն, որպէսզի Խրիմեան շարունակէ պատրիարք մնալ: Ժողովուրդը լցուել էր Ազգային Ժողովի սրահն և ահագին աղմուկ էր յարուցանում, նոյն-իսկ սպառնալիք էր կարդում: Այս ճնշման տակ Ազգ. Ժողովի ատենապետն և իր աւագ օգնականը հրաժարուեցին: Քիչ էր մնում, որ կառավարութիւնը դարձեալ դադարեցնէ Սահմանադրութիւնը: Վերջապէս հնարաւոր է լինում համոզել Հայրիկի կուսակիցներին, գլխաւորապէս գաւառացիներին, հանդարտ մնալ և Ազգ. Ժողովը նոր Քաղաքական ժողով է ընտրում, որ Կրօնական Ժողովի հետ միացած՝ Խառն Ժողով է կազմում և ըստ Սահմանադրութեան պատ-

րիարքական տեղապահ էին ընտրում Նիկ. եպ. Աղասեանին, բայց սա շուտով հիւանդանում, մեռնում է և նոր տեղապահ ընտրվում է Ներսէս եպիսկ. Վարժապետեան:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Ներսէսի պատրիարքութիւնն և հրաժարականները: Սահմանադրութեան սրբագրուած կէտերն և նրա ընդհանուր վերաքննութեան խնդիրը: Ռուսինեանի Ներքին Կանոնագրութիւնը: Ազգային տուրքը: Աղթամարի կաթողիկոսը: Ներսէս և հարստահարութիւնների հարցը: Քրիստոնեաների շարժումն և Թիւրքիայի քաղաքական կացութիւնը:

Վարժապետեան տեղապահի պաշտօնը յանձն էր առել միայն 21 օրուայ համար, որպէսզի իսկոյն պատրիարքի ընտրութիւնը կատարուի և երբ այս նպատակի համար 1874 թ. մարտի 22-ին Ազգ. Ժողովը գումարուեց, նա անմիջապէս իր հրաժարականը տուեց: Նրա առաջին հրաժարականն էր այս. այնուհետև այս հրաժարականի խնդիրը Վարժապետեանի համար պարզապէս տակտիք (tactique) էր. ամեն անգամ որ դժուարին կացութեան մէջ էր գտնվում՝ կամ կառավարութեան և կամ երեսփոխանների կողմից ընդդիմութեան հանդիպելով, անմիջապէս «իր տոպրակէն հրաժարական մը կը հանէր և երեսփոխաններու քթին բերնին կը նետէր» *): Ներսէս մեծ ժողովրդականութիւն էր վայելում Կ. Պօլսում այնպէս, ինչպէս Խրիմեան՝ գաւառներում, և այն միջոցին իրօք նրանից արժանաւորն և յարմարը չկար հարստահարութիւնների խնդիրն յառաջ տանելու համար, որով զբաղուած էր այն ժամանակ հանրութեան ուշն ու միտքը: Այս պատճառով էլ պատրիարքական ընտրութեան ժամա-

*) Յ. Պարոնեան, «Ազգային Ջոջեր», տպ. Թիֆլիս 1896.

նակ Ազգ. Ժողովի ներկայ 64 երեսփոխաններից 60-ի քուէն շահեց և պատրիարք հռչակուեց։

Նորընտիր պատրիարքն ըստ օրէնի պիտի երդուէր Սահմանադրութեան վրայ, բայց ո՞ր օրինակի վրայ պարտաւոր էր արդեօք կատարել իր երդումը։ Նորից յուզուեց վերաքննութեան հարցը։ 1863-ի վաւերացեալ օրինակը մի քանի կէտերում արդէն քըննուած և փոփոխութեան էր ենթարկուած, ուստի Ազգ. Ժողովն որոշեց, որ առայժմ միայն այս կէտերը ներկայացուեն Բ. Դրան և նրանից վաւերացուելուց յետոյ նոր պատրիարքը կատարէ իր ուխտը։ Վաւերացման համար առաջարկուած բարեփոխեալ կէտերը հետևեալներն էին։

Ա. Քաղաքական Ժողովի անդամները 14 հոգի պիտի լինեն փոխանակ 20-ի (§ 36)։

Բ. Սահմ. Վերաքնն. Յանձնաժողովը պէտք է բաղկացած լինի 12 հոգուց փոխանակ 20-ի (§ 99)։

Գ. Ազգ. Ընդհ. Ժողով կարելի է հրաւիրել նաև լրագրական յայտարարութիւններով, առանց «գոնէ 6 օր առաջ պատրիարքարանի կողմէն յատուկ հրաւիրանաց գրեր ուղարկելու անդամներուն» (§ 89)։

Դ. Ժողովների նիստն օրինաւոր համարել՝ երբ ոչ թէ բոլոր ընտրուած անդամների կէսից մէկ աւելին ներկայ է, այլ երբ ընտրուած և ժողովականի պաշտօնն ի գործ դնող անդամների մեծամասնութիւնը ներկայ կը գտնուի։ Այս կերպով գրչի մի հարուածով փոխվում էին Ազգ. Սահմ. 27-դ, 40-դ և 86-դ, բայց մանաւանդ չարաբաստիկ 59-դ յօդուածն, որի համաձայն 71 երեսփոխանի ներկայութիւնն էր հարկաւոր Ազգ. Ժողովի նիստ կայացնելու համար և որն հաղուագիւտ դէպքերումն էր միայն պատահում։

Ե. Ջնջվում էր 63-դ յօդուածն, որ սահմանափակում էր եկեղեցականների ազգ. երեսփոխան ընտրուելը, ինչպէս՝ օրինակի համար՝ այն պայմանը, թէ «գոնէ

հինգ տարի առաջ ձեռնադրուած ըլլան»։

Բ. Դուռը խնդրի սահմանադրականութիւնն ի նկատի ունենալով և ենթադրելով, որ շուտով կը ներկայացուեն ի վաւերացումն նաև Սահմանադրութեան միւս վերաքննեալ մասերն, անմիջապէս՝ այն է 1874 թ. մայիսի 2-ին վաւերացրեց ինքնին վերոյիշեալ կէտերն այն պայմանով, որ յետոյ ամբողջ վերաքննեալ Սահմանադրութիւնը ներկայացուի սուլթանի հաստատութեան։

Ներսէս պատրիարքը նոյն տարին մայիսի 8-ին իր ուխտը կատարեց Սահմանադրութեան այն օրինակի վրայ, որտեղ արձանագրուած էին վերոգրեալ կէտերը։ Ոչ այն ժամանակ, ոչ էլ այնուհետև այս ժամանակաւոր արձանագրութիւնը չներկայացուեց սուլթանի վաւերացման, բայց նա մասամբ մնաց գործադրութեան մէջ մինչև հիմայ, կառավարութեան լռելեայն հաւանութեամբը։ Վերաքննութիւնը մնաց Ազգային Ժողովի օրակարգի վրայ երկար և երկար տարիներ. ոչ մի խնդիր այնքան չյոգնեցրեց պատուելի երեսփոխաններին, որքան Ազգ. Սահմանադրութեան այս «վերաքննութիւնը»։ Թէ ինչ արագութեամբ էր նա յառաջ գնում, երևում է նրանից, որ երբ Վերաքննութեան Յանձնաժողովն իր տեղեկագիրը բերեց, 1874 թ. նոյեմբերի 8-ին, Ազգ. Ժողովը Նախաձեռնութեան Դիւանի քննութեանը յանձնեց այս նոր ծրագիրն, որից յետոյ տեղի ունեցաւ երկար ամիսներ խառնիխուռն և ամուլ վիճաբանութիւն։

Ազգ. Ժողովը հազիւ 1876 թ. յունուարի 30-ին քուէարկութեամբ ընդունեց առաջին յօդուածն և այդտեղ էլ կանգ առաւ։

Ներսէս պատրիարքն իր իշխանութեան առաջին տարին իսկ աշխատեց փոքր ինչ կարգ մտցնել Ազգ. Ժողովի պարապմունքների մէջ։ Այս նպատակով էլ նա խնդրեց բժիշկ Ռուսինեանից մի ներքին կանոնա-

գիր կազմել Ազգ. Ժողովի համար։

Այսպիսի մի կանոնագրութեան պէտքը վաղուց էր զգացվում, որովհետև անկարգութիւններն և նոյն իսկ բծախնդրութիւններն երբեմն հասնում էին իրանց գագաթնակէտին։ Ի մէջ այլոց ահագին ժամանակ էր խլում նախորդ նիստերի արձանագրութիւնների ընթերցումն և հաստատութիւնը։ Երեսփոխանների մէջ կային այնպիսիները, որոնք սաստիկ բծախնդիր էին ոչ միայն իրանց արտասանած ճառերի իւրաքանչիւր բառին, այլ նոյն իսկ իրանց գործածած ոճի, լեզուի, դարձուածքների և մինչև իսկ ուղղագրութեան նկատմամբ։ Մի երեսփոխան Ազգ. Ժողովի նիստում գանգատվում էր, թէ նրա խօսքերը, կրաւորական բայերում, պաշտօնական արձանագրութեան մէջ վ-ով են գրուած և ոչ թէ ու-ով, և բացագանչում էր. «Ես չեմ ուզեր, որ ազգին պատմութեան առջև իբրև սխալ ուղղագրութեան տէր ներկայանամ.»։ Մի ուրիշն էլ, յայտնի աստուածաբան Տէրոյենց պատուելին, առիթ բաց չէր թողնում բողոքելու և պահանջելու, որ կիրակի և տօն օրեր Ազգային Ժողովը չգումարուի, որովհետև, ասում էր նա, «եկեղեցական և կրօնական պարտաւորութիւններնուս հակառակ է»։ Եւ երբ Ազգ. Ժողովը չանսաց նրա բարեպաշտական խորհրդին, աստուածաբան երեսփոխանը խռովեց և հրաժարուեց երեսփոխանութիւնից, որպէսզի գոնէ ինքն այն օրերը սուրբ պահէ և մեղքից ազատուի....։

Ազգային Ժողովն իր 1874 թ. հոկտեմբերի 4-ի նիստում հաստատեց Ռուսինեանի կազմած ծրագիրը, որ կոչուեց «Կանոնագրութիւն Ազգային Ժողովին»։ Այս կանոնագրութիւնը մեծ մասով ձևուած էր ֆրանսական խորհրդարանի ներքին կանոնագրի վրայ, տեղ-տեղ յարմարեցնելով հայկական միջավայրին։ Ներսէս պատրիարք ստիպել էր անյապաղ ընդունել, որպէսզի նրա քննութիւնն էլ երկար տարիներ չտևէ և մաղթուած նպատակը շուտով իրականանայ։ Ազգային Ժողովը՝ շուտով ընդունելով հանդերձ՝ պարտականութիւն էր սահմանել, որ նրա մէջ երևցած պակասութիւնները յետոյ քննութեան ենթարկուելով «հետզհետէ սրբագրուին»։ Այս վերջնական «սրբագրութիւնը» օրինական ձևով՝ նոյնպէս տեղի չունեցաւ։

Ազգային Ժողովի այս շրջանի զբաղումների մէջ յիշատակութեան արժանի են նաև հետևեալները։ Նախ նա քննեց և հաստատեց տարեկան բիւջէն (1875 մայիս—1876 մայիս), որով մուտք էր սպասվում 529,500 ղրուշ, և այս առթիւ կազմեց ազգային տուրքի համար մի նոր կանոնագրութիւն։ Ըստ այսմ ամեն չափահաս հայ պարտաւոր էր տուրք տալ «ազգային սնտուկին» (պատրիարքարանի)։ Այս ազգային տուրքը բաժանուած էր 8 աստիճանի, հարկատուի նիւթական միջոցների համեմատ. ամենաբարձր աստիճանը 500 ղրուշ էր և ամենացածը կամ ամենաքիչը 25 ղրուշ էր տարեկան։

Երկրորդ գործն Աղթամարի Խաչատուր կաթողիկոսի հարցն էր, որ վաղուց զբաղեցնում էր ազգ. վարչութիւնը։ Երկար վիճաբանութիւններից յետոյ Ազգ. Ժողովն անհնար գտաւ կաթողիկոսի վրայից բառնալ մարդասպանութեան մեղադրանքն և գործը բոլորովին թողեց կառավարութեան վրայ, որ յանձնէ նրան դատաստանի։

Վարժապետեան՝ իր պատրիարքութեան առաջին շրջանումն իսկ՝ շնորհիւ իր եռանդուն և անկողմնակալ գործունէութեան մեծ համակրութիւն գրաւեց։ Այս համակրութեան արդիւնքն էր, որ երբ 1875-ին նա վերստին հրաժարական տուեց պատճառ բերելով «անձի տկարութիւնը», Ստ. փաշա Ասլանեան՝ Ընդհ. Ժողովի ատենապետը՝ երեսփոխաններին դիմելով ասաց. «Ունինք պատրիարք մը, որ իր եկեղեցական կոչման արժանի խնկելի բարեմասնութեանց հետ՝ ազգասիրական վառ հոգի մը և ժամանակիս վայելուչ ուսմամբ և գի-

ութեամբ մշակեալ միտք կը կրէ և իր հեզահամբոյր բնաւորութեամբ ու ուղիղ և ճարտար քաղաքագիտութեամբ՝ տէրութեան, նախարարաց, ազգայնոց, օտարաց և մինչև իսկ ատելեաց սիրտն իրեն գրաւած է»: Եւ այսպիսի ընդհանուր յարգանքի ցոյցերից վերջը սովորաբար Ներսէս պատրիարք «մխիթարուած» էր զգում իրան և ետ առնում իր հրաժարականները:

Վարժապետեան իր պատրիարքութեան սկիզբն՝ հոգ տարաւ նաև պատրիարքարանի մնացել անձուկ վիճակին, որ այն միջոցին (ինչպէս և շարունակ՝ այնուհետև) ճնշուած էր պարտքի տակ, թէև համեմատաբար ոչ ծանր գումարի: Իր դիմումներին պատասխանեցին 2 հարուստ հայ, Աբրահամ Երամեան և Սարգիս Պալեան, որոնք յանձն առան իրանց անձնական միջոցներից հատուցանել պատրիարքարանի պարտքը» 2500 օսմ. լիրա:

Ինչպէս վերն ասացինք, Ներսէսի քանիցս տուած հրաժարականները միշտ մերժվում էին Ազգ. ժողովի կողմից, որովհետև նրա ներկայութիւնը պատրիարքական աթոռի վրայ՝ ժամանակի հանգամանաց համեմատ անհրաժեշտ էր նկատվում, իրաւամբ: Ներսէս իր քաղաքականութեամբ հեռու էր Խրիմեանին, որ արծարծեց և ստիպողական պահանջ դրեց գաւառներում հայ ժողովրդի վիճակը բարեկարգել: Գաւառական հարստահարութիւնները վերջին անգամ մատուցուած աղերսագրերից և տեղեկագրերից յետոյ ոչ միայն չէին դադարել, այլ քրօնիկական բնաւորութիւն էին առել, իսկ Ներսէսի կրկին և կրկին դիմումները բախվում էին Բ. Դրան պաշտօնեաների և մանաւանդ գաւառական թիւրք պաշտօնէութեան խորին անտարբերութեան: Ներսէս և իր խորհրդակիցները զգում էին, թէ պէտք էր որևէ նոր, աւելի ուժգին միջոցի դիմել կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրելու համար գաւառացի հայերի այս տխուր կացութեան վրայ: Այն միջոցին

նրան գործակցում էին ազգային վարչութեան երկու ժողովների ատենապետները, Սիմոն բէյ Մաքսուտ և Խորէն արքեպ. Նարբէյ Լուսինեան: Սակայն մեծ անորոշութիւն և անհամաձայնութիւն էր տիրում ձեռք առնուելիք այս նոր միջոցի էութեան մասին, որովհետև Թիւրքիայի քաղաքական հանգամանքներն սկսել էին արագօրէն փոխուել: Բօսնիա և Հերցէգովինա (Հէրսէք) գաւառների քրիստոնեայ բնակիչները՝ թիւրքական անհանդուրժելի վարչական կարգերի դէմ զինեալ ընդդիմութեան էին դիմել. յառաջացած արիւնահեղութեան հետևանօք Եւրոպան պաշտօնապէս միջամտել էր և պահանջում էր ընդհանուր բարենորոգումներ յօգուտ Եւրոպական Թիւրքիայի քրիստոնեաների: Եւրոպական դիւանագիտութեան ուժեղ ճնշման տակ, վախենալով մանաւանդ որ պահանջուած բարենորոգումները, գոնէ թիւրքերի ըմբռնումով, պիտի ծառայէին հպատակ քրիստոնեաների օգտին և ապագայում նրանց անջատման, Թիւրքիայի յառաջադէմ տարրն, որ յայտնի էր իբրև Յառաջադիմական երիտասարդ թիւրք կուսակցութիւն, ներքնապէս խմորվում էր և բորբոքվում ընդդէմ այս արտաքին միջամտութեան, ճիգ գործ դնելով որ բարենորոգումները տարածուեն ընդհանուր Թիւրքիայի վրայ, առանց ցեղի և կրօնի խտրութեան: Այս փոխադարձ ճնշումներն և բողոքները հետզհետէ աւելի լուրջ բնաւորութիւն էին ստանում. ներքին գրգռումն սպասուածից շատ աւելի ընդարձակ չափեր էր առնում: Այսպիսի հանգամանքներում հայ ազգային վարչութիւնը ստիպողաբար պիտի վճռէր մի ծանրակշիռ հարց: Պատրիարքն և ազգ. վարչութիւնն ամբողջ իրանց յոյսը պէտք է դնէին արդեօք թիւրք կառավարութեան և թիւրք բարենորոգչական կուսակցութեան վրայ թէ՞ պէտք է միանային միւս քրիստոնեայ հպատակների շարժման և դիմէին յօգուտ նրանց միջամտող եւրոպական պե-

ութիւններին։ Բայց նախ քան պատմելը, թէ Ներսէս և իր խորհրդատուներն ինչ դիրք և ընթացք են բռնել, ի նկատի առնելով կացութեան լրջութիւնն և կարևորութիւնը, անհրաժեշտ ենք համարում փոքր ինչ շեղուել այստեղ մեր պատմութեան ընթացքից և ամփոփ կերպով պատմել թէ Թանզիմաթի առաջին հրատարակութիւնից ի վեր (1839) ինչ ջանքեր են գործ դրուել Թիւրքիան բարեկարգելու, առանձնապէս կանգ առնելով 1876—7 թ. ներքին և արտաքին քաղաքական անցքերի վրայ այնչափ, որչափ նրանք հարկաւոր են մեր պատմութեան՝ և առհասարակ ժամանակակից ազգային դէպքերի լուսաբանութեան համար։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

1839-ի հրովարտակը, նրա նպատակն և հետևանքը։ Իսլամն և բարենորոգումները։ Քրիստոնեաների հաւասարութեան տեսական իրաւունքը։ 1845-ի ֆէրմանը։ Բանակցութիւններ Պարիզի կոնգրէսից յառաջ։ Եւրոպացիների սխալը։ 1856-ի խաթթը հիւմայունն և նրա արդիւնքը։ Եւրոպական միջամտութիւնը։ Ռուսաստանի պահանջումները ի նպաստ սլաւների Էրմէնիստան։ Վիլայէթների օրէնքը։ Հաւասարութեան բացակայութիւնը։

Թիւրքիայի ներքին, ընդհանուր բարեչրջումն սկսուեց սուլթան Մահմուդ Բ.-ի ձեռքով, բայց առանձնապէս քրիստոնեայ հպատակների նկատմամբ բարենորոգչական ուղղութեան ձեռնարկեց նրա որդին՝ սուլթան Աբդիւլ Մէջիդ, որ իր սադրազամի, առաջին լուսամիտ թիւրք պետական անձի, Րէշիդ փաշայի յորդորով, 1839-ին հրատարակեց առաջին Թանզիմաթի (բարեկարգութիւն) հրովարտակը, Գիւլխանէի*) խաթթը շէրիֆը։

*) Գիւլխանէ — վարդատուն, այն քիօշքի անունն է, Կ. Պոլսում, ուր կարդացուեց այս խաթթը։

Աբդիւլ Մէջիդի և իր խորհրդատուի գլխաւոր նպատակն էր դրանով մահմեդական ժողովուրդը մօտեցնել քաղաքակիրթ քրիստոնեայ ազգերին, որոնցից նա ամբողջ դարերով, թէ բարոյապէս և թէ քաղաքականապէս, հեռու էր ապրել, միմիայն իսլամական կրօնի ապաւինած։

Այս մերձեցման ձգտումն յառաջանում էր այն երկիւղից թէ՝ ոչ-հեռաւոր ապագայում քրիստոնեայ տէրութիւնները կարող էին համախմբուել և կանգնել ընդդէմ թիւրքական բարբարոսութեան, ինչպէս արդէն արել էին մի երկու տարի յառաջ Նավարինում, ուր եւրոպական միացեալ նաւատորմիղները ջնջել էին թիւրքական՝ թւով աւելի մեծ նաւատորմիղը։ Միեւնոյն ժամանակ սուլթան Մէջիդ այդ հրովարտակով աշխատում էր գոհացում տալ Եւրոպային, մտցնելով անհրաժեշտ բարենորոգումն, որի նպատակն էր հաւասարեցնել յաղթողների եւ յաղթուածների (մահմեդականների և հպատակ քրիստոնեաների) քաղաքական իրաւունքները։ Այս հաւասարութեան սկզբունքն էր քարոզվում առաջին անգամ, երբ յայտարարվում էր, թէ այդ հրովարտակով ծրագրուած նոր պետական հաստատութիւնները «պիտի երաշխաւորեն առանց ցեղի եւ կրօնի խտրութեան բոլոր հպատակների կեանքի, պատուի և գոյքի ապահովութիւնը»։ Չկարողանալով ձուլել իր մէջ իր 12—15 միլլիոն ռայաներին, որոնց նա երբեք չէ դադարել ճնշել այս կամ այն ձեւով, երբեմն աւելի՝ երբեմն պակաս, մահմեդական պետական իշխանութիւնը մտածում էր այս արտաքին բարենորոգման փորձերով շարունակել իր գոյութիւնը Եւրոպայի հողի վրայ, արեւմտեան ազգերին կից։ Եթէ չլինէին այս «բարենորոգման փորձերը», Թիւրքիան հաւանականաբար վաղուց իր դէմ կունենար ամբողջ Եւրոպան և գոնէ Եւրոպայից նա արդէն դուրս քշուած կը լինէր։

Իսլամը, մահմեդական կրօնը, Թիւրք պետութեան ուղղութիւն տուող միակ լծակն է եղել։ Կուրան և քաղաքացիական օրէնք նոյն բաներն էին. ազգային պետական կազմակերպութիւնը մահմեդական վարդապետութեան հետ մի մարմին կազմելով առել էր այս վերջինի անշարժութիւնը։ Ուստի եւրոպական քաղաքակրթութեան մտնելու համար անհրաժեշտ էր այս մեծ արգելքը կամ բոլորովին հեռացնել կամ հարթել, այսինքն կամ պետութիւնն աշխարհականացնել, ինչպէս էր քրիստոնեայ երկիրներում, և կամ գոնէ հետզհետէ պետութիւնը ազատել կրօնական օրէնքի լուծից, մահմեդական վարդապետութիւններին աւելի ազատամիտ մեկնութիւններ տալով...։ Թիւրք պետական անձինք այս վերջին ճանապարհն ընտրեցին, իրանց ագէտ և մոլեռանդ ժողովրդի դիւրադրգռութիւնը խնայելու համար, եթէ ընդունենք թէ իրանք անկեղծ էին իրանց այս ձգման մէջ։ Գիւլխանէի հրովարտակն առաջին անգամ իրաւունքի հաւասարութիւն էր քարոզում մահմեդականի և ոչ մահմեդականի միջև, որ Կուրանի սկզբունքներին՝ դարերից ի վեր տրուած մեկնութեան համաձայն՝ հակառակ էր իսլամական կրօնի ոգուն և աւանդութիւններին. այդ պատճառով էլ ոչ այն ժամանակ՝ ոչ էլ այնուհետև երբէք լիովին չիրագործուեց։ Թանզիմաթը Թիւրքահպատակ քրիստոնեային գերութիւնից չազատեց, նրան մահմեդականի հետ չհաւասարեցրեց, այլ միայն տեսականօրէն իրաւունք և հիմք տուեց նրան պահանջելու այդ ազատութիւնն և հաւասարութիւնը։ Ուստի րայաները, գիտակցելով իրանց համար ստեղծուած նոր կացութեան, աշխատում էին ամեն առթից օգտուել, որպէսզի կարողանան իրականացնել խոստացուած հաւասարութեան իրաւունքը. ընդհակառակն մահմեդականները բոլորովին չէին աճապարում ընդունել այս նոյն կացութիւնն և շարունակում էին փայփայել հին դրութիւնն, որի շնորհիւ

նրանք պահպանել էին անշէջ իրանց գերիշխանութեան զգացմունքը։ Ուստի զարմանալու չէ, որ ամբողջ 6 տարի անցնելուց յետոյ, 1845-ին, սուլթան Մէջիդ գնում է անձամբ Բ. Դուռն և այնտեղ՝ ամբողջապէս իր ձեռքով գրած մի նոր խաթթը-շէրիֆ ևս է կարդում, որտեղ ասում է, թէ «չէ կարելի ուրանալ, որ չնայելով այն ջանքերին, որ ես գործադրել եմ իմ գաղափարների իրականացման, իմ ծրագիրներից ոչ մին սպասուած արդիւնքը չտուեց, որի համար խորապէս ցաւում եմ»։ Բարեմիտ սուլթանի այս ինքնաբերաբար կատարած համակրելի քայլը մի փոքր մղում տուեց բարենորոգչական գործին և մի քանի նահանգներում, ի մէջ այլոց և Հայաստանում, հրամայուեց գործադրել 1839-ի Թանզիմաթի տրամադրութիւնները։ Վարչական մասում սկսեցին կատարուել մի քանի էական բարեփոխումներ։ Այդ թուականից վերջ աւազակութիւններն և զեղծումները նախորդ շրջանի հետ համեմատելով նուազեցին. դպրոցներ բացուեցին և երկիրը թէև դանդաղ քայլերով, բայց վերջապէս քիչ քիչ մտնում էր եւրոպական քաղաքակրթութեան, որից նա այնքան խրտչում էր ի սկզբան։ Քրիստոնեաները, որոնց մէջ և հայերն, այլևս չէին թաքցնում իրանց գոյքն և կարողանում էին համեմատաբար աւելի ազատ կերպով վայելել իրանց աշխատանքի արդիւնքը։ Բայց այն գլխաւոր վախճանն, որ ի նկատի էր ունեցել Թանզիմաթը, այն է՝ մերձեցումը քրիստոնեաների և մահմեդականների միջև, չէր կատարվում։ Րայան, ոչ-մահմեդականը, միշտ մնում էր արհամարհուած՝ հարազատ մահմեդականի աչքում, աստիճանով միշտ նրանից ստոր։ Քրիստոնեաներին խոստացուած հաւասարութիւնը չկար, նրանց քաղաքացիական իրաւունքները չէին ընդունուած։ Այս վիճակի մէջ էին քրիստոնեաները, երբ Թիւրքիան գնում էր Պարիզի կօնգրէին (congrès)։

Առաջին Թանզիմաթից անցել էր 15 տարի։ Քրիստոնեայ պետութիւններն իրանց արիւնով և դրամով պաշտպանել էին Թիւրքիան, մահմեդական տէրութիւնը, մի ուրիշ քրիստոնեայ տէրութեան դէմ։ Այս հանգամանքը նոր և աւելի մեծ պարտականութիւն էր դնում Թիւրքիայի վրայ ի նպաստ իր քրիստոնեայ հպատակների։

Ղրիմի պատերազմից յետոյ, 1855-ին, Թիւրքիայի պաշտպան տէրութիւններն՝ Աւստրիան, Անգլիան և Ֆրանսան՝ Վիեննայում բանակցութիւններ սկսեցին Ռուսաստանի հետ և փետրուարի 1-ին (ն. տ.) մի պրոտոկոլ (protocole) ստորագրեցին, որ իբրև հիմն պիտի ծառայէր խաղաղութեան դաշնագրին։ Այս պրոտոկոլի 4 պայմաններից մինն էլ Օսմանեան կայսրութեան քրիստոնեայ հպատակների ազատութեան հարցն էր։ Թիւրք կառավարութիւնն ամեն կերպ աշխատեց, որ ապագայ դաշնագրի մէջ այս կէտն իբրև առանձին պայման չգրուի։ Նա հանդիսաւորապէս խոստանում էր պահպանել այն բոլոր առանձնաշնորհումներն, որ սուլթանական ֆերմաններով ի հնուց շնորհուած էին քրիստոնեաներին, բայց պնդում էր այն հանգամանքի վրայ, թէ արդէն Թանզիմաթով բոլոր հպատակներին անխտիր հաւասարութիւն էր շնորհուել։ Երբ խաղաղութեան դաշնագրի պայմաններն էին քննւում, եւրոպական դեսպանները դարձեալ պահանջեցին, որ «խղճի ազատութեան» պայմանը մտնէ, այն է՝ որ նոյն իսկ մահմեդականն իրաւունք ունենայ ազատօրէն իր կրօնը փոխելու առանց մահուան պատժի երկիւղի։ Ամենից աւելի Անգլիան էր պնդում այս կէտի վրայ։ Բայց Բ. Դուռը յամառեց և ընդդիմացաւ, յայտնելով որ նոյն ինքն սուլթանն եթէ ցանկանար իսկ, չէր կարող համաձայնել այս կէտին, որովհետև՝ ըստ Կուրանի՝ հաւատադրուժ միւսլիմանը մահուան պատժի պիտի կրէր։ Վերջապէս փոխադարձ համաձայնութեամբ միայն հետեւեալ քողարկուած պայմանը ընդունուեց. «Թիւրքիայում բոլոր դաւանութիւններն ազատ են և ոչ մի օսմանեան հպատակ իր կրօնի պատճառով հալածանքի պիտի չենթարկուի»։

Ինչքան էլ որ այսպիսի պայմանների միջոցով եւրոպական տէրութիւններն աշխատում էին իսկապէս իրաւական հաւասարութիւն մտցնել մահմեդականի և քրիստոնէի միջև, այնու ամենայնիւ Թիւրք կառավարութիւնը թէ այն ժամանակ և թէ այնուհետև այնպիսի միջոցների էր դիմում, որ մի կողմից իբր թէ ըստ Թանզիմաթի բառացի տրամադրութեան՝ բոլոր հպատակներն անուանապէս միևնոյն իրաւունքները պիտի վայելէին, իսկ միւս կողմից էլ ոչ մի ջանք չէր խնայում, որ մահմեդական տարրն իր գերիշխող դիրքը պահպանէ։ Ամենամեծ զիջումն, որ Բ. Դուռն այս կէտում ցոյց տուեց, այն եղաւ, որ նա ընդունեց և հաստատեց այն սկզբունքը, թէ րայաների կրօնական իրաւունքները սերտ կապ ունէին իրանց քաղաքացիական իրաւունքների հետ և դրա հիման վրայ քրիստոնեաներին շնորհուեցին բազմաթիւ առանձնաշնորհումներ՝ ներքին, վարչական կազմակերպութեան մասին, որով հաստատուեց և օսմանեան հայերի Ազգ. Սահմանադրութիւնն, ինչպէս պատմեցինք վերև, Երկրորդ Գլխում։ Բայց եւրոպացիների մեծ սխալն այն եղաւ, ինչպէս իրանք էլ յետոյ խոստովանել են, որ նրանց մի մասը բոլորովին աւելորդ վստահութիւն ունեցաւ Բ. Դրան վրայ, և, փոխանակ ներքին բարենորոգումների վերաբերեալ պայմանները 1856-ի Պարիզի դաշնագրի մէջ մտցնելու, այնպէս ձևացրին՝ իբր թէ Թիւրք կառավարութիւնն ինքնաբերաբար, իր նախաձեռնութեամբ էր շնորհում այդ իրաւունքներն իր քրիստոնեայ հպատակներին։ Այս բանակցութիւնների արդիւնքն էր 1856 թ. փետրուարի 6/18-ի նշանաւոր խաթթը հիւմայիւնը, Պարիզի կոնգրէսի նախօրեակին։

Այս հրովարտակով սուլթան Մէջիդ դարձեալ շնորհում էր իր բոլոր հպատակներին՝ ապահովութիւն կեանքի, պատուի և գոյքի. հաւասարութիւն օրէնքի առջև. անխտիր ընդունելութիւն վարչական և զինուորական պաշտօններում, կրօնի և ուսման ազատութիւն մի քանի վարչական սահմանափակումներով, դատարաններում վկայութիւնների հաւասարութիւն և այլ դէմօկրատական (democratique) բարենորոգումներ...: Այս բոլոր բարենորոգումներից պիտի օգտուէին գլխաւորաբար ժողովրդի միջին և ստորին խաւերը: Այս պատճառով էլ ամենից աւելի դժգոհ մնացին հին պահպանողական թիւրքերն և քրիստոնեաներից էլ այն տարրերն, որոնք տիրող հին կարգերի շնորհիւ անարգել շահագործում էին ժողովուրդը: Յոյների կղերն և աւագները, հայերի էլ ամիրաները չափազանց անբաւական մնացին, որովհետև եթէ այդ բոլոր խոստացուած բարեկարգութիւններն իրօք գործադրուէին, նրանք բոլորն էլ պիտի զրկուէին իրանց գերիշխող դերից և նիւթական բազմատեսակ անձնական օգուտներից: Երբ այս ֆէրմանը՝ հրապարակով, բազմութեան առջև կարդացուելուց յետոյ նորից դնում էին իր մետաքսեայ պահարանը, մի յոյն եպիսկոպոս բացագանչել է. «Տայ Աստուած որ այնտեղ էլ մնայ...»: Այս իղձն, իր բոլոր ազնուութեամբ հանդերձ, մարգարէական գուշակութիւն էր, որովհետև նա մնաց իրօք իր տեղն և նրա խոստացած մեծ-մեծ բարենորոգումներն և ազատութիւնն ու հաւասարութիւնը մնացին մեռած տառ... Երկու հայրենասէր թիւրք պետական անձ, Ալի և Ֆուադ փաշաները, մին մեծ վէզիր (սադրազամ) և միւսն արտաքին գործերի մինիստր, անկեղծօրէն ձգտում էին երկիրը բարեկարգել, բայց նրանց բարի դիտաւորութիւնները, նոյն իսկ սուլթանից խրախուսուած լինելով հանդերձ, շատ քիչ իրականացում էին գտնում, որովհետև մի կողմից պալատականներն և հին

թիւրքերը հակառակում էին նորամուծ օրէնքներին, միւս կողմից էլ անշուշտ հսկայական ջանք էր հարկաւոր՝ դարաւոր արմատացած կարգերն արմատախիլ անելու համար: Այս պատճառով էլ ոչ մի բարեկարգում չէր յաջողվում և եւրոպական պետութիւններն 1859 թ. հոկտեմբերի 5-ին մի յիշատակագիր ներկայացրին Բ. Դռան, որով «ցաւ էին յայտնում, որ Թիւրքիան չէր կարողանում ինքն իրան օգնել, չէր ձեռնարկում բարենորոգումների աստիճանաբար և հաստատօրէն իրականացման, և թէ մինչև իսկ բաւականաչափ ձգտում չկար 1856-ի ֆէրմանը գործադրելու...»: Այս մեղմ, հաւաքական ազդարարութիւնից յետոյ կարգն եկաւ անհատական, առանձին նկատողութիւններին: Առաջինն եղաւ Ռուսաստանն, որ աշխատեց վերստին ձեռք բերել Թիւրքիայի քրիստոնեաների աչքում իր ունեցած ազդեցութիւնն, որ նսեմացել էր Ղրիմի պատերազմի հետևանքով: Ռուսաստանը պահանջեց տեղական կամ մասնակի բարենորոգումներ Եւրոպական Թիւրքիայի սլաւ քրիստոնեաների համար, որոնք անընդհատ գանգատվում էին իրանց անտանելի վիճակից թիւրք վարչական սիստեմի տակ: Դժբախտաբար Ռուսաստանի այս առաջարկութեան դէմ անմիջապէս ոտք ելաւ Անգլիան, նրա հինաւուրց նախանձոտ ախոյեանն Արևելքում, իբր թէ ի պաշտպանութիւն Թիւրքիայի արժանապատուութեան: Այս առաջին օտար միջամտութիւնը Թիւրքիայի քրիստոնեաների օգտին վերջացաւ նրանով, որ փոխանակ եւրոպական կամ միջազգային քննութեան, ինչպէս պահանջում էր Ռուսաստանը, միմիայն թիւրք յանձնաժողովի ձեռքով քննութիւն կատարուեց Եւրոպական Թիւրքիայի քրիստոնեաների գանգատների առթիւ: Խնդիրը բուն իսկ այդ քննութեան ձևականութեամբ էլ վերջացաւ թիւրք կառավարութեան համար: Բայց սլաւները դրանով չգոհացան: Բուլղարիա, Բօսնիա և Հերցէգովինա (կամ

Հերսէք ըստ Թիւրք.), շարունակելով հանդերձ իրանց դանգատները, կազմակերպեցին ներքին, գաղտնի յեղափոխութիւն և ամբողջ 15 տարի խուլ խլրտման վիճակում մնալուց յետոյ 1875-ին պարզեցին ապստամբութեան դրօշակը...։

Թիւրքիայի գաւառներն անուանապէս մի ուրիշ յեղաշրջում կրեցին սուլթան Մահմուդ II-ով սկսուած բարենորոգչական ձեռնարկներից։ Մինչև այն ժամանակ գաւառները պաշտօնապէս կոչվում էին այն ժողովրդի անունով, որ եղել էր նրանց պատմական, նախնական բնակիչը։ Այսպէս՝ Եւրոպ. Թիւրքիայում կային Բօսնիա (բօսնեակների բնակած երկիր), Բուլգարիստան (բուլղարների երկիր) և Ասիական Թիւրքիայում կային Արաբիստան, Լազիստան, Քիւրդիստան և Էրմենիստան, իբրև էրմէնիների, հայերի, երկիր։ Դրանք բոլորն ընդարձակ նահանգներ էին և կառավարվում էին մի ընդհանուր կառավարչի միջոցով։ Այս անուանակոչումներն և վարչական ձևը տևեցին մինչև Մահմուդ II, երբ Թիւրք կառավարութիւնը չկամեցաւ պահել այլ ևս՝ վերոյիշեալ անունները, որոնք ամեն անգամ յիշեցնում էին յաղթուած, հպատակ ազգերի պատմական կարևորութիւնն, և որոշեց նախ ջնջել այդ պատմական անունները և ապա բաժան բաժան անել այդ անուններով յիշուած ընդարձակ նահանգները (էեալէթ), նրանց փոխարէն ստեղծելով փոքր վիլայէթներ։ Այս ձևով պատմական Էրմենիստանը բաժանուեց 4 վիլայէթի (նահանգ)՝ Վան, Դիարբէքիր, Էրզրում և Խարփութ *)։ Իսկ 1856-ի խաթթից յետոյ հրատարակուեց յատկապէս գաւառների տեղական վարչութեան վերաբերեալ «վիլայէթների օրէնքը»։ Այս օրէնքը ձևուած էր ֆրանսա-

*) «Annexe au protocole №7 de la Conférence de Constantinople». A. Schipoff, «Les Réformes et la protection des chretiens en Turquie», Paris, 1904

կան համանման օրէնքի վրայ։ Հեղինակն, Ալի փաշան, այս օրէնքով գաւառներում մտցնում էր ապակենտրոնացման սկզբունքը, հրաւիրելով տեղական ժողովրդի մասնակցութիւնը գաւառական վարչական գործերում։ Սա մի մեծ, — յառաջադիմական քայլ էր. մանաւանդ նրանով որ զանազան վարչական խորհուրդներում՝ մահմեդականներն և քրիստոնեաներն իրանց ներկայացուցիչներն ունէին, իւրաքանչիւրն իր հասարակութեան կողմից ընտրուած։ Սակայն նոյն իսկ այս՝ համեմատաբար ազատական ոգով կազմուած օրէնքն այնպիսի սահմանափակութիւններ էր բովանդակում իր մէջ, որ ամեն տեղ առաւելութիւնը տրվում էր մահմեդականներին, որով հաւասարութեան սկզբունքը դարձեալ խախտվում էր։ Հաւասարութեան այս խախտումն ամենից աւելի զգալի էր դառնում մանաւանդ արդարադատութեան պաշտօնէութեան մէջ, քանի որ նոր կազմուած դատարաններում նախագահներն ամեն տեղ, անվրէպ, պէտք էին մահմեդական լինել, այն էլ իւլէմաներից (մահմեդ. հոգևորական). Բացառութիւն էր արվում միայն առևտրական դատարանների համար։ Կային այսպիսի այլ բազմաթիւ տրամադրութիւններ ևս այս օրէնքի մէջ, որոնք մահմեդական իշխանաւորների ձեռքում ամեն տեսակ զեղծումների և կողմնապահութեան առիթ կարող էին լինել, և երկար տարիների փորձերը ցոյց են տալիս, որ յիշեալ իշխանաւորները շատ յաճախ են օգտուել օրէնքի այդ տրամադրութիւններից յօգուտ անձնականապէս իրանց կամ ընդհանրապէս մահմեդական տարրի։ Գլխաւոր և ուշադրութեան ամենից աւելի արժանի կէտն այն էր, որ ամեն տեղ, ամեն անգամ շեշտվում էր մահմեդականի գերիշխանութիւնը քրիստոնեայի վրայ, չնայելով թէ 1839-ի և թէ 1856-ի խաթթերի բարձրագոյն յայտարարած և կրկնած հաւասարութեան սկզբունքին...։ Այսպիսի հանգամանքներում անհրաժեշտ էր դառնում

Թիւրքիան հովանաւորող և նրան դէպի քաղաքակրթութիւն մղելով հպատակ ցեղերի հաւասարութիւնը պահանջող եւրոպական պետութիւնների միջամտութիւնը։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ

Աբդիւլ Ազիզի յետադիմական ընթացքը։ Ֆրանսիայի և Ռուսիայի տարբեր քաղաքականութիւնները։ Ռուսական ձգտումը։ Ֆրանսիայի ծրագիրն ընդհանուր բարենորոգումների մասին։ Պետական Խորհուրդ։ Գր. Աղաթոն։ Լիբանան։ Զէյթուն։ Նոր յետադիմութիւն։ Համասլավութիւն։ Համիսլամութիւն։ Դեսպանախորհուրդ (Conférence)*։ Նոր սուլթաններ։*

1861-ին վախճանուեց Թանզիմաթի հիմնադիրը, բարի և իր ժողովրդից անկեղծօրէն սիրուած սուլթան Աբդիւլ Մէջիդ Ա., և նրան յաջորդեց իր եղբայրը՝ Աբդիւլ Ազիզ, որ թէպէտ իր առաջին ֆէրմանում յայտարարել էր, թէ պիտի հետևի իր եղբօր օրինակին, բայց արդէն 2 տարի վերջը նա ենթարկուել էր պահպանողականների, գլխաւորաբար մոլեռանդ իսլամայի ազդեցութեան և սկսել էր յետադիմական ընթացք բռնել. մինչև անգամ քիչ էր մնացել, որ տէրութեան ղեկը յանձնէ մի կրօնամոլ դէրվիշի ձեռքը, սադրազամ նշանակելով նրան։ Այս հանգամանքը ցաւ և զայրոյթ էր պատճառում թէ առաջադէմ Թիւրք կուսակցութեան և թէ Թիւրքիային անկեղծօրէն համակրող օտարներին։ Թիւրքիան հովանաւորող եւրոպական տէրութիւնները նկատել էին արդէն, թէ ինչ բարեշրջում, որ կատարուել էր 1856-ից յետոյ, կամ կատարուելու շրջանի մէջ էր, միմիայն արտաքին խիստ ճնշման, տէրութիւնների անընդհատ ազդարարութիւնների արդիւնք էր։ Իսկ ինչ որ համարեա ակամայ էր գործադրվում, նա չէր կարող արմատանալ, տարածուել և մարմ-

նանալ։ Զննելով դրան, եւրոպացիների մի մասը՝ այնու ամենայնիւ դեռ չէր կորցնում իր յոյսը, թէ Թիւրքիան վերջ ի վերջոյ կը տապալէ իր յետադիմականներին և կը փարի բարեկարգութեան։ Նրանք մինչև իսկ վստահութիւն էին յայտնում, անշուշտ երիտասարդ Թիւրքերի խոստումների վրայ հիմնուած, թէ երբ Թանզիմաթի տրամադրած բարենորոգումներն անթերի գործադրուեն, Թիւրքիայի զանազան ցեղերն իսկ կարող են ձուլուել։ Այս գաղափարի ներկայացուցիչն էր մանաւանդ Ֆրանսիան, երիտասարդ Թիւրքերի մեծ մասի կրթութեան օրրանը։ Եւ նա միմիայն իր համար չէր պահում այս յոյսը, այլ հաղորդում էր նաև միւս պետութիւններին։ Բոլորովին հակառակ գաղափարի էր ծառայում Ռուսաստանը։ Դեռ ևս Պարիզի կոնգրէսից էլ առաջ Գորչակով շատ որոշ կերպով յայտարարել էր, թէ օսմանեան կայսրութեան մէջ բնակուող ցեղերը երբեք չէին կարող ձուլուել և մի ընդհանուր ազգ կազմել, որովհետև «ոչ մի կողմը տրամադրութիւն չէր ցոյց տալիս այդ նպատակին հասնելու», ուստի միակ ելքն էր՝ այդ ցեղերից իւրաքանչիւրի կրօնական և հասարակական հաստատութիւններն երաշխաւորել, որպէսզի նրանք զարգանան և դառնան «ազգային հաստատութիւն»*)...։ Տասնեւկու տարի յետոյ ռուսական կառավարութիւնը միևնոյն միտքն էր յայտնում հիմնուելով վերջին տարիների բարենորոգչական փորձերի անյաջողութեան վրայ։ 1867-ի մի նոր յիշատակագրում Ռուսաստան պնդում էր, թէ արևելեան հարցի միակ գործնական լուծումը կը լինէր «քրիստոնեաների շահերը բաժանել մահմեդականների շահերից»**)։ 1856-ի

*) Գորչակովի յիշատակագիրը (memorandum) 1855 թ. յունվարի 7-ի։

**) Ռուսական կառավարութիւնը 1867-ի մարտի 12/24-ին պատասխանելով Ֆրանսիական դահլիճի 1867-ի փետրվարի 22-ի յիշատակագրին՝ ապացուցանում էր, թէ 1856-ի խաթթը հիմա-

խաթթը հիւմայունի պահանջած հաւասարութեան սկըզբունքը մեռած տառ էր մնացել և, ըստ ռուսական տեսակէտի, այլապէս չէր էլ կարող լինել, «քանի որ Թիւրքերը կը մնան թիւրք, այսինքն քանի որ Կուրանը մի անջրպետ գիծ է սահմանում մահմեդականների և քրիստոնեաների միջև։ Օրէնքի առջև հաւասարութիւնը միշտ ցնորք պիտի մնայ Թիւրքիայում, որովհետև օսմանեան հպատակ ցեղերը միևնոյն սկըզբունքը չեն դաւանում, և այնտեղ, ուր սկզբունքների նոյնութիւն չկայ, պարտականութիւնների նոյնութիւն էլ չէ կարող լինել»*)։

Այս գաղափարի վրայ էր պնդում դարձեալ Ռուսաստանը, երբ 1867-ին եւրոպական տէրութիւնները Թիւրքիայի բարենորոգումների խնդիրը խորհրդակցութեան առարկայ շինեցին։ Նա պահանջում էր գաւառական ապակենտրոնացում և տեղական ինքնավարութիւններ, սուլթանի վերին իշխանութեան տակ։ Միւս պետութիւններից Աւստրիան ի սկզբան համաձայնուեց ռուսական ծրագրին և նոյնպէս գտնում էր, որ սուլթանը նոյնիսկ իր սեփական շահերի տեսակէտով պէտք է որ իր քրիստոնեայ հպատակներին ինքնավարութիւն շնորհէր**)։ Աւստրիան մինչև իսկ առաջարկում էր միջազգային մի նոր խորհրդակցութիւն կազմել այս հարցը լուծելու համար, բայց դժբախտաբար իր ներքին քաղաքականութեան պարագաներից ստիպուած՝ շուտով նա իր միտքը փոխեց և ետ առաւ իր առաջարկութիւնը։ Ռուսական և ֆրանսիական այս երկու տարբեր հայեցակէտների ընդհարման ժամանակ Անգլիան լաւագոյն համարեց այն միջոցին չյարել ոչ մի կողմն և ձեռնպահ մնալ։ Այստեղ հարկաւոր է բացատրել, որ Ռուսաստանն իր վերոյիշեալ ծրագիրն (տեղական ինքնավարութիւններ կազմակերպել) առաջարկելով ի նկատի ունէր Բալկանեան թերակղզու քրիստոնեաներին, սլավ ցեղերը***)։ Բայց եթէ 1867-ին Եւրոպան ընդունէր այս սկզբունքն իբրև Թիւրքիայի քրիստոնեաների համար ընդհանուր վարչական սիստեմ, հաւանական է, որ առաջին յարմար առթիւ նոյն դրութիւնը տարածուէր նաև հայերի վրայ, ի նկատի ունենալով որ հայերն արդէն փոքր ի շատէ վարժ էին ինքնավարութեան, շնորհիւ իրանց Ազգային Սահմանադրութեան, բացի դրանից նրանք դեռ համեմատաբար հոծ բազմութիւն էին կազմում նախկին «Էրմէնիստան» (Հայաստան) ընդարձակ նահանգում, որ յետոյ բաժանուել էր Վան, Էրզրում, Դիարբէքիր և Խարփութ գաւառների, ինչպէս յիշեցինք նախորդ գլխում։ Բացի դրանից՝ այն «կրօնական և հասարակական հաստատութիւնները», որոնց մասին խօսում էր ռուսական

կանի մեծագոյն մասը մնում է չգործադրուած և ըստ երևոյթին գործադրուելիք էլ չունի։ Թիւրք կառավարութեան կեղծ ընթացքը խիստ քննադատութեան ենթարկելուց յետոյ, Պետերբուրգի դահլիճը շատ որոշ կերպով ցոյց է տալիս, թէ Թիւրքիայի զանազան տարրերի ձուլումն անկարելի է. հետևաբար խորհուրդ է տալիս միւս եւրոպական դահլիճներին «միջոցներ ձեռք առնել քրիստոնեաների շահերը մահմեդականների շահերից բաժանելու, դիւրացնելով տարբեր ցեղերի և կրօնների զուգահեռաբար զարգացումն և բարգաւաճումը սուլթանի իշխանութեան տակ և եւրոպական հաւասարակշռութեան պահանջի համաձայն»։ (Schipoff, «Les Réformes en Turquie», վաւերագրերի հաւաքածոյի № 32).

*) «Dossier de la question d'Orient», 1868, Amyot, Paris.

**) Աւստր. կառավ. յիշատակագիրը 22 յունվ. 1867-ի։

*) Ռուսաստանն այն միջոցին մի մանրամասն ծրագիր էր առաջարկել եւրոպական դահլիճներին—1) Թիւրքիայի եւրոպական նահանգների վարչական բաժանումն ըստ ցեղական բնակչութեան, 2) նրանց վարչական կազմակերպութիւնը, 3) դատական կազմակերպութիւնը, 4) զինուորական, 5) ֆինանսական, 6) կրթական և 7) ընդհանուր կարգադրութիւններ—աւելացնելով իբրև եզրակացութիւն, թէ առաջարկուած միջոցների գործադրութիւնը պէտք չէ յանձնել միայն թիւրք կառավարութեան, այլ եւրոպական հսկողութիւն պէտք է մտցնել։ (Schipoff «Les Réformes etc.», վաւերագիր № 33).

յիշատակագիրն, առանձնապէս և շատ աւելի զարգացած էին հայոց մէջ, քան այլ քրիստոնեայ հպատակների մէջ, որովհետև հայերը 1860-ից ի վեր սահմանադրական սկզբունքն էին ընդունել և գործադրում էին իրանց ներքին գործերում։

Բ. Դուռը վերին աստիճան անհանգիստ զգաց իրան Ռուսաստանի այդ առաջարկութիւնից. նա կասկածում էր, թէ իր դարաւոր թշնամու միտքն ուրիշ բան չէր, եթէ ոչ Թիւրքիայի անդամահատութիւնը տեղական ինքնավարութիւնների ձևի տակ, մանաւանդ որ մի այլ ռուս դիւանագէտ որոշ կերպով ասել էր նոյն տարին Կ. Պօլսում՝ «ou autonomie ou anatomie» (կամ ինքնավարութիւն կամ անդամահատութիւն)։ Ռուսաստանի այս հայեցակէտն և ուղղութիւնը պատասխան էր Ֆրանսիայի 1867 թ. փետր. 22-ի յիշատակագրին (Note sur le Hatti humayoun de 1856)։ Այս յիշատակագիրը բացատրում էր, թէ այդ հրովարտակի բովանդակած 35 կէտերից առաջին 16-ն արդէն գործադրուած են և միայն վերջին 19 կէտի նկատմամբ Բ. Դուռն անշարժ է մնացել, որոնց ի կատար ածման համար էլ ֆրանսիական կառավարութիւնը մի շարք միջոցներ էր առաջարկում, ինչպէս՝ քրիստոնեաների մասնակցութիւնը պետական այլ և այլ պաշտօններում, ընդհանուր ուսման տարածումը, դատարաններում քրիստոնեաների վկայութեան վերջնականապէս և ամեն տեղ ընդունուելն և այլ բարեկարգութիւններ ներքին վարչական սիստէմի։ Բայց գլխաւոր բարենորոգումը պիտի լինէր ուսման տարածումը ժողովրդի մէջ, որի վրայ առանձնապէս մատնանշում էր Ֆրանսիան, առաջարկելով որ բոլոր դպրոցներում մահմեդական և քրիստոնեայ՝ հաւասար իրաւունքներով և միասին ուսումնառանան։ Եւ իբրև առաջին փորձ, 1868-ին ֆրանսիական սիստէմով հաստատուեց Գալաթա-Սէրայի միջնակարգ վարժարանն (lycée), ուր իրօք բոլոր ցե-

ղերից ուսանողներ ընդունուեցին։ Բայց բուն ժողովրդական դպրոցների նկատմամբ ֆրանս. կառավարութիւնը հաշուի չէր առել մահմեդական իւլէմայի ընդդիմութիւնն, որի ձեռքին էր գտնվում, դարերից ի վեր, մահմեդական աշակերտի կրթութիւնն իբրև իր յատուկ գործն և իր առանձնաշնորհումը։ Ֆրանսիական ազդեցութեան շնորհիւ էր նոյնպէս, որ ձեռնարկուեց բարենորոգման երկրորդ մեծ քայլին, երբ սուլթան Ազիզ Պարիզի ճանապարհորդութիւնից վերադարձաւ։ Այս քայլը Թիւրքիայի Պետական Խորհրդի (Շուրայը Դէվլէթ) հիմնարկութիւնն էր, որին անդամակցել կոչուեցին անխտիր թէ թիւրք և թէ քրիստոնեայ, ինչ որ վաղուց առաջարկել էին նրան երկու մեծ քաղաքագէտները՝ Ալի և Ֆուադ փաշաները։ Եւ բոլոր պատրիարքները պալատ գնացին իրանց խորին շնորհակալութիւններն յայտնելու այս առթիւ։ Առաջին անգամ էր, որ Թիւրքիայում հայերը, յոյները, բուլգարներն և հրէաները կոչվում էին օրէնսդրի պաշտօն կատարելու թիւրքերի հետ հաւասար։ Պետական խորհրդում ոչ-մահմեդականները $^1/_3$ մասն էին կազմում։ Եւրոպական դեսպանները յայտնեցին իրանց գոհունակութիւնը*) բացի մէկից. Այս մէկը ռուսականն էր, որ ուղղակի ասել էր սադրազամին, թէ պէտք չէ շատ հաւատ ընծայել օտարների գովասանքներին, որովհետև նրանք «ի սկզբան կը հաւանեն յետոյ կը պարսաւեն» («on commence par l'approbation, on finit par le blâme»)։ Եւ նա մասամբ իրաւունք ունէր, որովհետև պետական խորհուրդը չարդարացրեց իր վրայ դրուած յոյսերը. շատ տեղերից գանգատներ լսուեցին և օրէնքների լուրջ մշակման համար հարկ եղաւ դիմել եւրոպացի մասնագէտների օգնութեան, որ անշուշտ անհամեմատ աւելի նպատակայարմար էր։

*) Անգլ. դեսպան լորդ Ստէնլիի հեռագիրն իր կառավարութեան, 1868 թ. մայիսի 18-ին։

Սուլթան Ազիզ՝ այս առաջին ձեռնարկութեան առթիւ իրան ուղղուած գովասանքներից քաջալերուած՝ 1868-ին մի ուրիշ քայլ եւս առաւ դէպի հպատակների հաւասարութիւնը։ Նա մտցրեց մինիստրական խորհրդի մէջ մի հայ, որ մինչև այն ժամանակ չլսուած երևոյթ էր։ Հին թիւրքերի համար սա՝ անախորժ բան էր, իբրև մահմեդական վերին իշխանութեան ուղղուած մի հարուած։ Այս առաջին քրիստոնեայ և հայ մինիստրը՝ Գրիգոր Աղաթոնն էր, որին յանձնուեց տնտեսական գործերի մատակարարութիւնն իբրև «հասարակաց շինութիւնների» (ումուրը Նաֆիա Նազըրը, ministre des travaux publics), կամ երկաթուղիների, ճանապարհների, նաւահանգիստների և այլն մինիստր։ Աղաթոն, մի ուրիշ քաղաքագէտ հայի՝ Գրիգոր Օտեանի հետ միասին, վայելում էր այն ժամանակի ամենից ազդեցիկ պետական անձի՝ Միդհատ փաշայի վստահութիւնն և բարեկամութիւնը։ Նոր մինիստրն ի սկզբան եռանդով և լուրջ կերպով ձեռնարկեց իր խնամքին յանձնուած գործերի կարգաւորման, բայց դժբախտաբար իր մինիստրական կեանքը շատ կարճատև եղաւ։ Նոյն տարին իսկ նա վախճանուեց, 45 տարեկան առոյգ հասակում, Պարիզում, ուր գնացել էր պետական կարևոր գործերով*)։

*) «Աղաթոն էֆէնդի, ի մանկութենէ լուրջ և ուսումնասէր, ստացեր էր Ճէզայիրլեան Մկրտիչ աղայի համարումը, որ զինքը Գաղղիոյ երկրագործութեան Գրինեօնի հռչակաւոր վարժարանը ղրկեց, ուսկից առաջին կարգի վկայականով դառնալով ի Կ. Պօլիս, Րէշիդ փաշա զինքը վերատեսուչ դրաւ Այաստեֆանօ հաստատուած երկրագործական վարժարանին, որուն փակուելէն վերջը դրամական անձկութեան պատճառաւ՝ Ճէզայիրլեան Մկրտիչ աղա, որ այն ատեն տնօրէնն էր Ասորւոց գաւառներուն մաքսերը, զԱղաթոն էֆէնդի գանձապահ բրաւ։ Մկրտիչ աղայի աղէտքներէն և մահուանէն վերջը, պետութիւնը, որ արդէն գնահատեր էր Աղաթոն էֆէնդիի հաշուակալական կարողութիւնը, զինքը անդամ անուանեց Գանձուն Հաշուակալութեան ժողովքին և ապա վերա-

Ֆրանսիական ազդեցութիւնն և դրա շնորհիւ ֆրանսիական բարենորոգումների ծրագիրը տևեցին Թիւրքիայում մինչև 1870 թ., երբ ֆրանս-գերմանական դժբախտ պատերազմը ջախջախեց Նապոլէոնեան կայսրութիւնը։ Ֆրանսիան երկար ժամանակից ի վեր համարվում էր և իրօք էր՝ ոչ միայն առանձնապէս կաթոլիկների, այլ և ընդհանրապէս քրիստոնեաների պաշտպանը Թիւրքիայում։ Նա այս դերով շատ անգամ է միջամտել Թիւրքիայում յօգուտ ընդհանուր բարենորոգումների, ինչպէս վերև պատմեցինք։ Բայց Ֆրանսիայի՝ թիւրքահպատակ քրիստոնեաների նկատմամբ հետևած քաղաքականութիւնը լրիւ ըմբռնելու համար աւելորդ չէ յիշատակել այստեղ նրա միջամտութիւնը յօգուտ Լիբանանի և Զէյթունի։ Երբ 1860-ին լեռնցի մահմեդական դիւրզիները ջարդ տուին քրիստոնեայ մարօնիտներին և ապա երբ նոյնպիսի ջարդ տեղի ունեցաւ նաև Դամասկոսում, Նապոլէոն Գ.՝ Անգլիայի և Ռուսաստանի հաւանութեամբ՝ անմիջապէս մի ամբողջ ֆրանսիական բանակ ուղարկեց ջարդի վայրն և ոչ միայն պատժել տուեց և պատժեց ոճրագործութեան հեղինակներին, այլ և ջարդուած քրիստոնեաների՝ կաթոլիկ մարօնիտների համար Լիբանանում ինքնավարութիւն հաստատեց, որ մինչև հիմա շարունակվում է անխախտ կերպով, Եւրոպայի հովանաւորութեան տակ։

տեսուչ թղթատարութեանց և ձեռագրոց. և այդ մատակարարութեան մէջ մնացած եւրոպական շատ մը կարգեր իրեն արդիւնքն են։ Այս պաշտօնով մասնակցեցաւ ի Փարիզ 1865-ի համաշխարհական թղթատարական ժողովքին և Նապոլէոն Գ. լէժիոն դ'օնէօրի մեծ խաչը նուիրեց իրեն...։ Մայրաքաղաքը (Կ. Պօլիս) արտասովոր շքեղ յուղարկաւորութիւն մը կատարեց իրեն. սիրելի էր ամենուն իր ընտանի զուարթ և խոհեմ բնաւորութեամբ...։ Աղաթոն էֆէնդի միայն մէկ մանչ զաւակ մը ունէր»։ («Ժամանակակից Պատմութիւն», Մասն Գ., հ. Մինաս վ. Նուրիխան, Վենետիկ, 1907, էջ 317—318)։

Այս դէպքից անմիջապէս յետոյ, հայկական Լիբանանը՝ Զէյթունն ևս շարժուեց: Մարոնիտներին շնորհուած ինքնավարութիւնից խրախուսուած, Հաճընից (Կիլիկիայում) Զէյթուն եկաւ ոմն Լեւոն «իշխան»*) և զէյթունցիներին յորդորելով մի հանրագրութիւն կազմեց յանուն Նապոլէոնի և ինքն անձամբ տարաւ Պարիզ: Այս աղերսագրում զէյթունցիք պատմելով թիւրք վարչութեան անիրաւութիւնները, իրանց բազմաթիւ ընդհարումները թիւրքերի հետ և վերջապէս Զէյթունի և շրջակայ հայաբնակ լեռնագաւառի առանձնացած դիրքը՝ խնդրում էին Լիբանանի պաշտպան կայսրից, որ միջնորդէ սուլթանի մօտ և իրանց համար ինքնավարութիւն ձեռք բերէ մի հայ իշխանի կառավարութեան տակ: Նապոլէոն ընդունում է աղերսագիրն և

*) Այս բախտախնդիր անձնաւորութիւնն ինքն իրան յայտարարում էր «Լեւոն Լուսինեան, հայոց արքայազուն իշխան» և իր մասին տարածած ազդերում պարծենում էր, թէ ինքն իբրև թէ Նապոլէոնի բարեկամն է, եւրոպական թագաւորների ազգականն է և թէ «բանակցութիւններ է վարում Պալմէրստոնի և Նապոլէոնի հետ՝ Կիլիկիան Թիւրքիայից խլելու համար»: (Աղ. Երիցեան, «Տաճկ. հայոց իրաւունքները», «Փորձ», 1877, № III, էջ 173):

1862-ի Զէյթունի շարժման հեղինակ այս Լեւոն «իշխանը» մեռաւ 1876-ի փետրվարին Միլանում: Նոյն տարի սեպտեմբերին վախճանուեց այնտեղ և նրա կինը, Antonia Lozzi: Միլանի «Secolo» թերթը նրա մահը ծանուցանելով գրում էր, թէ «իշխանուհի Լուսինեան թողել է 6 որբ երեխայ բոլորովին չքաւոր և կարօտ վիճակում, որոնցից անդրանիկ տղան ընդունուել է Marchioni ապաստանարանում, 2 աղջիկները մի ուրիշ ապաստանարանում, իսկ 3 փոքրիկներին վերցրել է պահելու մի իտալացի բանուոր, Merlini անունով: Մի ֆրանսիացի խմբագիր էլ հաղորդելով այս լուրը՝ շատ լուրջ կերպով յորդոր էր կարդում Կ. պօլսեցի հայերին հանգանակութեամբ 3—4000 ոսմ. լիրա հաւաքել, «դաստիարակելու և ապագան պատրաստելու այն երեխաների, որոնց նախնիքը ձեր (հայոց) անկախութեան վերջին ախոյեաններն են եղել»...: V-te de Gaston, «Revue de Constantinople», livr. du 1-oct. 1876)

խնդիրն յանձնում է իր Կ. Պօլսի դեսպանին, որ այս մասին դիմում է Բ. Դրան: Բայց խնդիրը մնում է ապարդիւն, քանի որ Լեւոն հաւատացրել էր իր աղերսագրում, թէ «Տօրոս լեռանց մէջ բնակող հայերը 70,000 զէնք բռնելու կարող մարդ ունէին»*), որ ի հարկէ չափազանցութիւն էր: Թիւրք կառավարութիւնը քննեց այս գործն, ուշադրութիւն դարձրեց Զէյթունի մինչև այն ժամանակ կէս ինքնավար դրութեան և առաջին պատեհ առթից օգտուելով ուզեց գրաւել Զէյթունը: Ազիզ փաշան 40,000-ի չափ քիւրդ, թիւրքմէն և չէրքէզ անկանոն զօրքով և կամաւորներով, որոնց առաջնորդում էին 150 շէյխ և մօլլա, 1862 թ. օգոստ. 2-ին պաշարեց Զէյթունը: Բայց արի և ազատասէր զէյթունցիք 5000 հոգի, այր, կին և տղայ, զինուած, դիրք բռնեցին և մեծ ջարդ տուին թիւրք բանակի չէրքէզական զօրամասին: Այս անակնկալ ընդդիմութիւնից սարսափած՝ Ազիզ փաշայի անկանոն զօրքը ցիրուցան փախուստ տուեց, և զէյթունցիք իրաւացի կերպով տօնեցին իրանց յաղթանակը: Բայց Կ. Պօլսից հրաման եկաւ Մարաշի նահանգապետին կանոնաւոր զօրքով յարձակուել և անպատճառ նուաճել Զէյթունը: Թիւրք կանոնաւոր զօրքի բանակը շրջապատեց Զէյթունն և կարեց ժողովրդի յարաբերութիւնն արտաքին աշխարհի հետ: Սարսափելի էր զէյթունցիների տնտեսական վիճակը. սպասւում էր, որ շուտով նրանք ստիպուած կը լինեն անձնատուր լինել և ահռելի ջարդ կը կրեն: Ահա այս տագնապալից վիճակում նրանց օգնութեան հասաւ Ֆրանսիա: Այս անգամ Նապոլէոնի առջև գլխաւոր միջնորդը Կ. Պօլսի հայ-կաթոլիկ պատրիարքն էր**): Նապոլէոնի պահանջով սուլթանը հրամայեց դադա-

*) Զէյթունցի, «Զէյթունի անցեալն և ներկայէն». Վիեննա. 1900, էջ 104:

**) Blue Book, Turkey, № 8 (1896). էջ 212.

բեցնել Զէյթունի պաշարումը և երկու կողմերի մէջ միջնորդելով հպատակութեան պայմանները որոշելու համար մի յանձնաժողով նշանակուեց, որի անդամներն էին մի թիւրք պաշտօնեայ և լուսաւորչական, կաթօլիկ և բողոքական հայոց տեղական հոգևոր առաջնորդները։ Զէյթուն գնաց նաև ֆրանսիական դեսպանատան թարգմանը՝ հսկելու համար բանակցութիւնների վրայ և պայմանների իրագործման։ Արդիւնքն այն եղաւ, որ զէյթունցիք հպատակութիւն յայտնեցին, ճանաչեցին թիւրք իշխանութիւնն՝ ընդունելով նրանից նշանակուած գաւառապետին և իբրև տուրք էլ մի որոշ գումար տալով, որ էր տարեկան 15,000 ղրուշ (մօտ 1300 ռուբլի) *)։

Ֆրանսիայի 1870-ի պարտութիւնը զգալի հարուած եղաւ նաև Թիւրքիայի բարենորոգումների իրագործման։ Թիւրքերի համար՝ ֆրէնկը, ֆրանսիացին, եւրոպական քաղաքակրթութեան հոմանիշ էր։ 1870-ից յետոյ հին կամ պահպանողական թիւրքերն, որոնք կազմում էին երկրի կառավարողների ստուար մեծամասնութիւնը, կարծես ազատ շունչ քաշեցին։ Նրանք ուղղակի ասում էին՝ «պրուսացիք յաղթեցին ֆրանսիացիներին, ուրեմն պիտի ազատուենք վերջապէս այդ ֆրէնկ եւրոպական քաղաքակրթութիւնից»։ Թէ այն ժամանակ և թէ մանաւանդ այնուհետև՝ վեհանձն Ֆրանսիայի ազդեցութեան տկարանալն անհապին յետադիմութիւն առաջ բերեց Թիւրքիայում ի վնաս քրիստոնեաների և նոյն իսկ ի վնաս ընդհանուր երկրի բարեկարգութեան։

Սուլթան Ազիզի առաջին գործն եղաւ շրջապատել իրան այնպիսի թիւրք խորհրդականներով, որոնց նպատակն էր ազատուել օտար միջամտութիւնից և

*) Տես նոյն Blue Book-ում անգլ. հիւպատոս Barnham-ի տեղեկագիրը։

վերադառնալ մահմեդական տարրի գերիշխանութեան։ Նոյն իսկ Թանզիմաթի պաշտպան Ալի փաշան դժգոհ չէր հանգամանքների այս փոփոխութիւնից, այն մտքով՝ որ այսուհետև թիւրքերն իրր թէ իրանց սեփական միջոցներով, առանց եւրոպական միջամտութեան, պիտի կարողանային բարեկարգել երկիրը։ Այս նոր քաղաքականութեան առաջին արդիւնքն այն եղաւ, որ թիւրք կառավարութիւնն աշխատեց՝ կրճատել քրիստոնեայ հասարակութիւնների առանձնաշնորհումները, սահմանափակել Լիբանանի ինքնավարութիւնն և առհասարակ արմատախիլ անել այն կարգերն, որ օտար միջամտութիւնն և մանաւանդ ֆրանսիական ազդեցութիւնն էր ներմուծել երկրին մէջ։

Թէ պետական խորհուրդն և թէ արդարութեան ատեանները զտման ենթարկուեցին, առանց ուշադրութիւն դարձնելու խաթթը հիւմայունների որոշումներին։ Հետզհետէ քրիստոնեայ պաշտօնեաներն արձակուեցին ոչ միայն Կ. Պօլսում, այլ նաև գաւառներում, ուր, տրուած որոշակի հրահանգի համաձայն, հալածանք սկսուեց ոչ միայն քրիստոնեայ պաշտօնեաների, այլ առհասարակ գեաւուռների դէմ...։ «Դիւրին է երեւակայել, —ասում է Թիւրքիան շատ լաւ ուսումնասիրած մի եւրոպացի հեղինակ,—այն խառնակութիւնն, որ առաջ եկաւ այս ընդհանուր հալածանքից, երբ մտաբերենք, թէ բարենորոգումների շրջանում՝ անցեալի մի քանի հաստատութիւններ դեռ մնում էին կանգուն՝ նորերին կից, և մէկից աւելի հիմնարկութիւններ բարեփոխման շրջանումն էին գտնւում... Ուրիշ որևէ երկրում ամենածանր անկարգութիւններ կարող էին առաջանալ այս սոսկալի կացութիւնից, երբ նոյն իսկ կառավարութիւնն էր այս դրութեան պատճառը։ Բայց ոչ Կ. Պօլսում և ոչ էլ գաւառներում մտքերի գրգռում ցոյց տուող ոչ մի արտաքին յուզմունք չնկատուեց։ Մահմեդականների հլու համակերպութիւնը և քրիստոնեաների

երկչոտ հպատակութիւնն ամէն տեղ ասպարէզը բաց թողին յետադիմական շարժման համար...»*)։

Ահա այս խիստ յետադիմութեան ազդեցութեան տակն էր որ գաւառներում հայոց վիճակը վատթարացաւ, և այն ժամանակ, Խրիմեանի առաջնորդութեամբ, հայ ազգային վարչութիւնը բողոքի ձևով կառավարութեանը ներկայացրեց «գաւառական հարստահարութիւնների տեղեկագիրն», որի մասին խօսեցինք եօթներորդ գլխում։

Ֆրանսիայի մեկուսացումից յետոյ, նրա նախկին զինակից Անգլիան այլ ևս չէր պնդում բարենորոգումների իրագործման վրայ. մինչև իսկ իր մասնաւոր շահերի տեսակէտից նա շատ անգամ զիջում էր Բ. Դրան առջև։ Աւստրիան և Իտալիան էլ մնացին անտարբեր, որով ռուս և թիւրք կառավարութիւնները դարձեալ եկան դէմ առ դէմ։ Եւ այսպէս՝ երբ Պարիզի կոնգրէսի գլխաւոր դերակատարը՝ Ֆրանսիան ստիպուեց ասպարէզից քաշուել, Ռուսաստան նորից ձեռք բերեց իր նախկին հեղինակութիւնը Բ. Դրան վրայ։ Բայց այս անգամ նրա քաղաքականութեան հիմքը կազմում էր համասլավութիւնը (panslavisme), նպատակ ունենալով միայն Թիւրքիայի սլավ ցեղերի շահերի պաշտպանութիւնը**)։ Համասլավութիւնը սերտ կերպով կապում էր ռուսական մեծ կայսրութիւնը բալկանեան փոքր սլավական ցեղերի՝ բուլգարների, սերբերի և սև-լեռնցիների (montenegriens, черногорцы) հետ, որոնք իրանց փրկութեան համար ապաւինեցին իրանց հիւսիսային մեծ ցեղակցի և կրօնակցի օգնութեան, և այս օգնութիւնը չխնայուեց նրանց։

*) «La Turquie et le Tanzimat», Ed. Engelhard, Paris, T. II, էջ 98.

**) 1867-ին առաջարկած ծրագրում Ռուսաստան միջնորդում էր ոչ միայն Եւրոպական Թիւրքիայի սլավների, այլ նաև յունաբնակ գաւառների և Միջերկրականի յունական կղզիների, այն է՝ բոլոր օրթոդոքսների համար։

Ճիշտ այդ միջոցին մի նոր քաղաքականութեան դրօշ էլ Թիւրքիան էր բարձրացրել։ Թիւրք պաշտօնական շրջաններն՝ երբ Ֆրանսիայի ազդեցութեան անկման շնորհիւ իրանց ներքին գործերում աւելի անկախութիւն ձեռք բերին՝ մի մեծ ծրագիր յղացան, անհամեմատ աւելի բարդ, աւելի լայնածաւալ և աւելի համարձակ, քան համասլավութիւնը։ Այս ծրագիրը համիսլամութիւնն (panislamisme) էր, որ ձգտում էր սուլթանի՝ իբրև Մուհամմէդի խալիֆի (յաջորդ) գաւազանի տակ միացնել բոլոր մահմեդականներին, ոչ միայն թիւրքահպատակ, այլ և օտար երկիրներում բնակուողներին։ Այս նոր քաղաքականութեան թիւրք առաքեալներն այնքան էին ոգևորուել, որ օգտուելով այն հանգամանքից, թէ Թիւրքիան Պարիզի կոնգրէսի շնորհիւ մտել էր մեծ տէրութիւնների շարքն, սկսել էին յոխորտալ և համիսլամութեան տարածման առջև կանգնած բազմաթիւ արգելքները բոլորովին չտեսնել։ Նրանց աչքին աննշան արգելք էր երևում նոյն իսկ այն ներքին բաժանումներն, որ մահմեդական կրօնն ունէր իր մէջ*)։ Այս չափազանց լաւատեսութիւնը շոյում էր մահմեդական ամբոխի կրքերն և ատելութիւն էր առաջացնում դէպի օտար տարրերը**)։ Նոյնիսկ քաղաքացիական օրէնքն, որ այն ժամանակ հրատարա-

*) Բացի ծանօթ երկու մեծ հատուածներից, այն է՝ սիւննի (թիւրք) և շիյի (պարսիկ) դաւանութիւններից, այս երկու հատուածներն իրանց-իրանց մէջ ունեն հերձուածներ։ Այսպէս՝ սիւննիները բաժանվում են հանէֆի (օսմանեան թիւրքերը), շաֆի (եգիպտացիներ), մալէքի (Ալժիրիայի, Տունիսի և Տրիպոլիսի արաբներ) և համբէլի (զանազան երկիրներում)։ Սրանք թէպէտ չեն տարբերվում բուն հիմնական վարդապետութեան, բայց զանազանվում են արարողութեամբ և Կուրանի «հադիսէ»-ների մեկնութեամբ։ Այս զանազան մահմեդական հատուածները նոյն կրօնական հակակրութիւնն են տածում միմեանց դէմ, ինչ որ քրիստոնէական դաւանութիւններն իրար մէջ։

**) Անգլիական Կապոյտ գիրք, 1877, № 16, էջ 110.

կուեց և որն ըստ Թանզիմաթի պէտք է որ անկախ լինէր իսլամական շէրիաթից*), ենթարկուեց իսլամութեան կրօնական պահանջումներին, քանի որ դեռ խառն դատարանների նախագահութիւնը յանձնուած էր կադիներին, որոնք, իբրև մահմեդական հոգևոր անձ, բնականաբար ձգտում էին շէրիաթի ազդեցութեան տակ և նոյն իսկ իրաւունք ունէին իրանց առջև բերուած դատը չքննել քաղաքացիական օրէնքով, այլ ուղարկել բուն կրօնական, շէրիի դատարաններին։ Այս յետադիմական զգալի շարժման պատճառով գաւառներում անիշխանական վիճակն հետզհետէ աւելանում էր և քրիստոնեաների բողոքի ձայնը բարձրանում։ Միւս կողմից էլ պետական գանձարանի ողորմելի վիճակն, որ արդիւնք էր սուլթան Ազիզի անհաշիւ շռայլութիւնների և պաշտօնեաների ընդարձակ չափերով կատարած գեղծումների, անտանելի էր դարձել և լուրջ կերպով մտահոգութիւն էր պատճառում եւրոպական պետութիւններին, որոնք դժբախտաբար չէին կարող որևէ համաձայնութեան գալ միմեանց մէջ՝ թէ ինչպէս պէտք էր դարմանել այս ծանր, քրօնիկական «հիւանդ մարդը»։

Եւրոպական անվերջ միջամտութեան երկիւղի տակ՝ Թիւրք պետական անձինք, մանաւանդ երիտասարդ Թիւրքերը, ճնշում գործ դրին սուլթան Ազիզի վրայ, որ 1875-ի հոկտ. 2-ին մի իրադէ և դեկտեմբերի

*) Շէրիաթը (շէրի բառի յոգնակին) մահմեդական սրբազան օրէնքն է, որ հիմնուած է «Կուրան»-ի, «Սիննա»-ի (մարգարէի խօսքերն ու գործերն աւանդող գրքեր), «Իջմի-Իւմմէթ»-ի (4 առաջին խալիֆների մեկնութիւններն և վճիռները) և «Կըյաս»-ի (4 մեծ իմամների վճիռների հաւաքածոյ) վրայ։ Այս վերջին հաւաքածոյի մէջ ամենից կարևորը «Մուլթէքա»-ն է, որ 8 օրէնսդրութիւն է պարունակում, այն է՝ կրօնական, քաղաքական, զինուորական, քաղաքացիական, քրէական, դատական, առևտրական և սպորդական։ (Ubicini, «Lettres sur la Turquie», Ա. հատ., 144)։

12-ին մի ֆերման հանեց, որոնցով կրկնվում էին այն բոլոր խոստումներն, որոնք սկզբունքով արդէն տուել էին 1839-ի և 1856-ի խաթթը հիւմայունների մէջ, բայց չէին գործադրուել, հետևաբար և չէին կարող գոհացնել եւրոպական տէրութիւններին։ Աւստրիական արտաքին գործերի մինիստրը, կոմս Անդրաշի, յանուն երեք կայսրութիւնների (Աւստրիա, Գերմանիա և Ռուսաստան), 1875 դեկտ. 30-ին միւս եւրոպական տէրութիւններին ուղղած յիշատակագրում, անբաւարար և անորոշ գտնելով սուլթանի խոստումները, յատկապէս ապստամբուած գաւառները խաղաղեցնելու համար՝ առաջարկում էր, որ սուլթանական հրովարտակներով խոստացուած բարենորոգումներից 5 կէտն, որոնց մէջ առաջին տեղն էր գրաւում «կրօնի կատարեալ և ամբողջական ազատութիւնը», անմիջապէս ի կատար ածուեն. միևնոյն ժամանակ նա պահանջում էր, որ մի խառն յանձնաժողով՝ քրիստոնեաներից և մահմեդականներից բաղկացած՝ հսկէ այս բարենորոգումների գործադրութեան վրայ։

Թիւրքիան չընդունեց այս առաջարկութիւնը միշտ այն հիման վրայ թէ ինք մտադիր էր նոյն բարենորոգումները գործադրել ընդհանուր երկրի մէջ և ոչ միայն յօգուտ Եւրոպական Թիւրքիայի սլաւների, որոնց համար նա ամենևին կամք չունէր առանձնաշնորհեալ վիճակ ստեղծել, զրկելով միւս նահանգների քրիստոնեայ և Թիւրք բնակիչներին։ Այս էլ պարզապէս դիւանագիտական մի խաղ էր եւրոպական և մանաւանդ Աւստրիոյ և Ռուսիոյ ճնշումից ազատուելու համար։ Այս երկու պետութիւններն ամենից աւելի էին շահագրգռուած այս հարցում, մինն իբրև սահմանակից ապստամբուած գաւառների և միւսն իբրև կրօնակից և ցեղակից այդ գաւառների բնակիչների։

Եւրոպական պետութիւնները դեռ չէին որոշել

իրանց բանկիք վերջնական գիրքն, երբ ապստամբութիւնը տարածուեց Բուլղարիայում և 1876 թ. մայիսին ֆրանս. և գերմանակ. հիւպատոսներն սպանուեցին Սալոնիքում։ Այս անգամ Գերմանիան առաջ անցաւ և Ռուսաստանի ու Աւստրիայի հետ միացած յայտնեց Թիւրքիային, որ եթէ իրանց առաջարկած բարենորոգումների ծրագիրը չընդունի, իրանք բռնի միջոցների պիտի դիմեն։ Այս սպառնալիքը դուր չեկաւ Անգլիայի այն ժամանակի պահպանողական կառավարութեան, և սա չմիացաւ միւսների քայլին։ Եւրոպացիների անհամերաշխութիւնը նորից քաջալերեց Բ. Դուռն, որ բարենորոգումների մասին իր դատարկ խոստումներով շարունակեց օրօրել նրանց, իսկ իր անհնազանդ և զէնքի ոյժով բողոքող քրիստոնեայ հպատակներին խաղաղեցնելու համար նա դիմեց իր սովորական միջոցին...։ Մի սոսկալի կոտորածով արեան և կրակի մէջ խեղդեց ամբողջ Բուլղարիան...։ Տպաւորութիւնը ոչ միայն Ռուսաստանի, այլ նոյն իսկ Անգլիայի վրայ սոսկալի եղաւ։ Այս կոտորածը միացրեց Անգլիան միւս պետութիւնների հետ։ Այժմ Անգլիան էր յանձնարարում միւսներին ընդունել այն սկզբունքն, որ դեռ 1867-ին Ռուսաստանն էր առաջարկել, ինչպէս տեսանք վերև, այսինքն գաւառներին շնորհել «տեղական վարչական ինքնավարութեան մի ձև, որ իրաւունք տար տեղացիներին հսկողութիւն ունենալ իրանց սեպհական գործերի վրայ և երաշխաւորութիւն ներկայացնէր վերին քմահաճոյ մի իշխանութեան դէմ»*)։ Իսկ ֆրանսիական կառավարութիւնն էլ պաշտօնապէս յայտարարում էր, թէ «եղած բազմաթիւ փորձերը ցոյց տուին, թէ ամենապարզ դիտաւորութիւնները մնում են անգործադրելի, և ամենից աւելի սկզբնական բարեփոխումները ձախողութեան են հանդիպում շնորհիւ

*) Լորդ Դէրբիի հեռագիրը, 1876 թ. հոկտ. 30.

մութ և անյաղթելի ընդդիմութիւնների»*)։ Ահա այս տեսակէտներով առաջնորդուած եւրոպական պետութիւնները 1876 թ. դեկտեմբերին մի դեսպանախորհուրդ (conférence) գումարեցին Կ. Պոլսում։ Բայց բուլղարական ջարդից մինչև այդ օրը շատ նշանաւոր փոփոխութիւններ էին պատահել Թիւրքիայի վերին վարչութեան մէջ։ Թէ հին և թէ երիտասարդ Թիւրքերին հաւասարապէս (թէև տարբեր պատճառներով) դժգոհութիւն պատճառող սուլթան Աբդիւլ Ազիզը գահընկէց էր եղել, նրան յաջորդել էր սուլթան Մուրադ Ե.։ Իշխանութիւնն անցել էր ազգային առաջադիմական Թիւրքերի ձեռքն, որոնք այս վերջինին էլ իր հիւանդութեան պատճառով, վար առնելով՝ արքայական գահի վրայ բարձրացրել էին նրա եղբօրը, Աբդիւլ Համիդ Բ.-ին և եւրոպական դեսպանախորհրդի բացման օրն իսկ մեծ դղրդոցով Օսմանեան Սահմանադրութիւն էին հրատարակել։

Տեսնենք այժմ թէ ինչպէս ծագում առաւ այդ Սահմանադրութիւնն և որո՞նք էին նրա հեղինակները։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Երիտասարդ Թիւրք կուսակցութեան ծագումն և ձգտումները։ «Սահմանադրական հայրենասէրներ»։ Միդհատ փաշա։ Դր. Օտեան։ Սուլթան Մուրադ։ Եւրոպայի պահանջները։ Սուլթան Աբդիւլ Համիդ։ Օսմանեան Սահմանադրութեան ծրագրումն և հրատարակումը։

Թիւրք «Երիտասարդ Թիւրք» առաջադիմական կուսակցութեան իսկական հիմնադիրը համարվում է Ռէշիդ փաշան, Աբդիւլ Մէջիդի խորհրդականն ու սադ-

*) Ֆրանս. արտաքին գործերի մինիստր Դեկազի հեռագիրը 1876 թ. նոյեմբ. 19-ին։

բաղամը։ Այս կուսակցութիւնը ծնունդ է առած եւրոպական, նոր գաղափարների ազդեցութեան տակ։ Բայց երկար ժամանակ, նա՝ իբրև անդամ և համակրող՝ ունեցել է միայն բարձր դասակարգին պատկանող անձեր, որոնց համար աւելի մատչելի էր եւրոպական դաստիարակութիւնը։ Բուն մահմեդական ժողովրդի մէջ եւրոպական կարգերի պահանջը շատ աննշան էր։

Բարենորոգումների կուսակից երիտասարդ կամ առաջադիմական թիւրքերը կարծում էին կամ գոնէ այնպէս էին ձեւացնում, թէ սահմանադրական օրէնքը կամ ներկայացուցչական ռէժիմը յանկարծ կարող էր բարեփոխել Թիւրքիայի այն բոլոր հիմնական թերութիւնները, որոնց վրայ մատնացոյց էին լինում թէ եւրոպացիք և թէ օսմանեան հպատակ քրիստոնեաները։ Այս սահմանադրութեան ծրագիրը հայրենասէր «երիտասարդ թիւրքերի» համար արտաքին միջամտութեան կամ Թիւրքիայի բաժանման դէմ միակ փրկարար միջոցն էր։ Այս պատճառով էր՝ երբ յայտնի դարձաւ ռուսական քաղաքականութիւնը քրիստոնեաների բնակած նահանգների ինքնավարութիւն արուելու մասին, նրանք ուժգին կերպով բողոքեցին և նրանց պարագլուխներից մին մի յիշատակագիր հրատարակեց, որտեղ գանում էր, թէ «միմիայն սահմանադրական ռէժիմը կարող է փրկել և զօրացնել Թիւրքիան» *)։

Աբդիւլ Ազիզի իշխանութեան ժամանակ Ալի և Ֆուադ փաշաների գլխաւոր ձգտումն էր ամեն գնով սուլթանների միահեծան իշխանութեան։ Նրանք դեռ վաղաժամ էին համարում Թիւրքիայի համար ժողովրդական ներկայացուցչական դրութիւնը։ Նրանք աշխատում էին նախ այժ տալ մի կողմից ժողովրդական

*) Խալիլ Շէրիֆ փաշայի յիշատակագիրը, 1867 թ. փետրվ. 12-ին։

կրթութեան, քանի որ ամբողջ Թիւրքիան թաւալվում էր ամենախորին տգիտութեան մէջ, և երկրի անտեսական զարգացման, միւս կողմից էլ որքան կարելի էր մօտեցնել հպատակ ազգերը թիւրք տիրող ցեղին, հաստատելով նրանց հաւասարութեան սկզբունքն, անշուշտ այնչափ միայն, որչափ հնարաւոր էր աստուածպետական (theocratique) դրութեամբ կառավարուող մահմեդական իշխանապետութեան մէջ։ Բայց նոյն իսկ այս համեմատաբար դեռ համեստ, բայց գործնական նպատակի իրագործման համար էլ նրանք ընդհանուր յատակագիծ չունէին, այլ մերթ այս, մերթ այն բարենորոգումները մտցնելով էր, որ յոյս ունէին հետզհետէ մօտենալ իրանց նպատակին. միևնոյն ժամանակ նրանք չափազանց զգուշաւորութիւն էին գործածում տգէտ և պահպանողական ժողովուրդն և կրօնամոլ իւլէման շատ չգրգռելու համար։

Թիւրք կառավարութիւնը նախ կարևորութիւն չէր տալիս երիտասարդ թիւրքերի շարժման յօգուտ սահմանադրութեան։ Բայց երբ տեսաւ, թէ նրանք իրանց գաղափարները սկսել են դրսում յիշատակագիրների ձեւով տարածել իրանց շուրջն, իսկոյն միջոցներ ձեռք առաւ ճնշելու այս «յեղափոխականներին», որոնք մեծ մասամբ պետական պաշտօնեաներ էին, զինուորական և քաղաքացիական, ոմանց պաշտօնից զրկելով և ոմանց էլ աքսորելով *)։ Բայց կուսակցու-

*) Հետաքրքրական է մի այլ յիշատակագրի բովանդակութիւնը՝ գրուած մի զինուորականի՝ Խայրէդդին փաշայի ձեռքով, որ յետոյ սադրազամութեան կոչուեց։ Այդտեղ ի մէջ այլոց ասուած է. «Արքաները մեզ բոլորիս նման ենթակայ են մարդկային տկարութիւններին։ Նրանք կամ ունեն ուրիշների վրայ իշխելու ընդունակութիւնն և երբ այդ կարողութիւնն ունեն, բաւականաչափ չեն զսպում իրանց կրքերն, և կամ չունեն ոչ այդ պահանջուած կարողութիւնն և ոչ էլ հարկ եղած եռանդը։ Եթէ նոյն իսկ ունենան էլ այդ ընդունակութիւնն ու կարողութիւնը, այնուամենայնիւ ազգի օգնութիւնը, մինիստրութեան

թիւնը դրանով չքանդուեց։ Ընդհակառակն երիտասարդ թիւրքերը, տեսնելով թէ Թիւրքիայում ասպարէզը փակուած է իրանց համար, գործունէութեան կենտրոնը փոխադրեցին Փարիզ, ուր իրանց համար յատուկ դրամենեակ հիմնեցին Մուսթաֆա Ֆազըլի ղեկավարութեան տակ։ Այնտեղ 1867 թ ապրիլի 30-ին հրատարակեցին իրանց ծրագիրն, որտեղ ի մէջ այլոց վստահացնում էին, թէ ի նկատի ունէին թիւրքահպատակ քրիստոնեաների ազատութիւնը։ Բայց նրանց այս առաջին ղեկավարների ազատամտութեանը չէ թէ միայն հայերն և այլ քրիստոնեաներն, այլ նոյն իսկ թիւրքերը չէին հաւատում։ Այս անվստահութիւնն ի զուր չէր։ Նրանց նոր պաշտօնաթերթը, «Մուխբիր», որ ի սկզբան՝ քրիստոնեաների և մահմեդականների կատարեալ պաշտպան էր ձևանում, շատ չանցած իր բուն գոյնը դուրս տուեց և մաքուր իսլամութիւն էր քարոզում ընդդէմ քրիստոնէից. նա մինչև իսկ վրդովւում էր, թէ ինչու համար քրիստոնեաներից դեսպան էր նշանակւում։ Բայց կուսակցութիւնն այնուամենայնիւ մնում էր միշտ բողոքողի դերում սուլթանի և իր շրջապատողների զեղծումների դէմ և գաղտնի յարաբերութիւն մշակում էր. Պօլսում մնացող բազմաթիւ առաջդիմական թիւրքերի հետ։ Սակայն քանի դեռ եւրոպական միջամտութիւն չկար, այս գործունէութեան

պատասխանատուութիւնը, մի խօսքով կօնտրօլը (controle) դրութիւնը չէր կարող ի գերև հանել այն բարիքն, որ այդպիսի արքան կը կամենար անել իր ժողովրդին։ Ընդհակառակն՝ նա պէտք է ուրախ լինէր, որ նրա գործերի վրայ հսկելու կոչուած անձերն օգնում են նրան»։ Յիշելով սուլթան Սիւլէյման Ա.-ի հիմնած կանոնամէն (օրէնսգիրքը), Խայրէդդին փաշան այն եզրակացութեան է գալիս թէ «Սիւլէյմանի եւ մինիստրների դերը ճիշդ այն է, ինչ որ եւրոպական սահմանադրական երկիրներում ժողովրդական ներկայացուցիչների խորհրդարանները»։ («La Turquie et le Tanzimat par Ed. Engelhardt, I, էջ 202).

ձայները բարձրաձայն չէին հնչւում բողոքողների կողմից, իսկ կառավարութիւնը նրանց բնաւ կարևորութիւն չէր տալիս։ Բայց երբ մանաւանդ Սալօնիքի արինալից դէպքից *) յետոյ եւրոպական պետութիւնները սպառնական դիրք բռնեցին Թիւրքիայի հանդէպ և նրանց միջամտութիւնն այլևս անհրաժեշտ դարձաւ, որի հետևանքները դժուար էր կանխաւ գուշակել, ահա այս արտաքին վտանգը մղում տուեց առաջդիմական թիւրք կուսակցութեան, որի պարագլուխն էր հանդիսանում Միդհատ փաշան։ Այս կուսակցութեան մէջ կային պալատականներ և կառավարչական ամենաբարձր պաշտօններ վարող անձեր, որոնք և յղացան Թիւրքիային սահմանադրութիւն տալու միտքն, ազատուելու համար միանգամայն թէ սուլթանի միահեծան իշխանութիւնից և թէ եւրոպական միջամտութիւնից, որ ոչ նուազ անհաճոյ էր։ Համոզելու համար եւրոպացիներին թէ ամբողջ չարիքը կայանում էր տիրող վարչական ռէժիմում, վերոյիշեալ խումբը՝ «Մահմեդական հայրենասէրներ» ստորագրութեամբ՝ մի յայտարարութիւն խմբագրեց և ուղարկեց բոլոր եւրոպական դահլիճներին։ Այս կարևոր յայտարարութեան խմբագրութեան մէջ բաժին ունէր և մի հայ, Դր. Օտեան, Միդհատ փաշայի խորհրդականն և աջակից բարեկամը։ Մենք առանձնապէս կանգ ենք առնում այս յայտարարութեան վրայ, որովհետև մահմեդական հայրենասէրներն առաջին անգամ էին այդպէս անկեղծ կերպով իրանց ձայնը լսելի դարձնում եւրոպական դահլիճներին։ Սա մի ամբողջ գործունէութեան ծրա-

*) 1875 թ. մայիսին Սալօնիկում, մահմեդականութիւն ընդունած մի բուլղար աղջկայ պատճառով, մոլեռանդ մահմեդական ամբոխը գրգռուելով սկսում քրիստոնեաներին ջարդ տալ, և երբ հիւպատոսները միջամտեցին, ամբոխը թիւրք իշխանութիւնների աչքի առջև սպանեց ֆրանսիական և գերմանական հիւպատոսներին։

գիր է, որն իրօք ի կատար է ածուած, ինչպէս ցոյց տուին 1876—7-ի դէպքերը։ «Հայրենասէրները» պահանջում էին սահմանադրութիւն սահմանափակ իրաւունքով, քանի որ նրանք ուզում էին Ազգային Ժողովը՝ խորհրդակցական ձայնով միայն։

«Այն խոստումները, որ օսմանեան այժմեան մինիստրական դահլիճը կանէ,—ասում էին «մահմեդական հայրենասէրները»,—չպիտի գործադրուեն, որովհետեւ եւրոպական կառավարութիւններն առանձնաշնորհումներ են պահանջում յօգուտ քրիստոնեաների և ի վնաս մահմեդական դասակարգի, որ նոյնչափ թշուառ է, որչափ քրիստոնեան...։ Եթէ Թիւրքիան, փոխանակ բռնակալի, մի խելօք միապետ ունենար, որ յենուէր մի խորհրդակցական Ազգային Ժողովի վրայ, որի անդամները լինէին երկրի բոլոր կրօնների եւ ցեղերի ներկայացուցիչները, նա կազատուէր։ Ահա արեւելեան խնդրի լուծման ճիշտ եղանակն. այդ հակառակ չէ Կորանին, որ ասում է՝ «Հաւատացեալները պէտք է կառավարուեն իրանց ազգային ժողովով...»։ Թող եւրոպական կառավարութիւններն իրանց Կ. Պօլսի դեսպաններին հրաման տան համաձայնութիւն կայացնել այն չափաւոր և եռանդուն կուսակցութեան հետ, որի պարագլուխներն են այս միջոցին Միդհատ փաշան և ուրիշ շատեր, որոնք նուազ յայտնի են, բայց նրա նման լուսամիտ են և քաջասիրտ, և ահա ամեն ինչ կը փոխուի...»։ Այս՝ եւրոպացիների համար։ Իսկ ներքին թշնամու դէմ նրանք դիմեցին ուրիշ միջոցի։ Միդհատի և իր կուսակիցների դրդմամբ սօֆթաները (կրօնական դպրոցների ուսանողներ) մի անարիւն յեղափոխութիւն սարքեցին Կ. Պօլսում և աղերսագիր ներկայացնելով սուլթանին՝ ստիպողաբար պահանջեցին սադրազամի և շէյխիւլ-իսլամի անկումը։ Սուլթան Ազիզ վախեցաւ և, զգալով թէ հարուածն որ կողմից էր գալիս, ստիպուած եղաւ նրանց արձակելով՝ նրանց տեղ

նշանակել նորերին, Միդհատի կուսակցութեան պատկանող անձերից։ Նոր մինիստրները նկատելով որ մինչև սուլթանի անձը միջակից չվերցնեն՝ ոչ մի էական բարեփոխութիւն կարելի չէր սպասել, գաղտնի դաւադրութեամբ Աբդիւլ Ազիզին գահընկէց անելով նրա տեղ նստեցրին թագաժառանգ Մուրադին։ Մահմեդական ամբոխն և հոգևորականութիւնն այս փոփոխութեան հետ հաշտեցնելու համար էլ նոր շէյխիւլ-իսլամը մի պատշաճաւոր ֆէթվայով շռայլ և ապիկար սուլթանի գահընկէցութիւնը կրօնական տեսակէտով օրինաւոր էր համարել։ Նոր սուլթանն իր առաջին ֆէրմանում բացարձակապէս բարեկարգութիւնների պահանջ էր դնում և խոստանում կատարել։

Մուրադ Ե-ի արձակած ֆէրմանից ժողովուրդը գոհ էր և ուրախ, որովհետև հաւատում էր նրա անկեղծութեան։ Բայց այս անարիւն յեղափոխութիւնը առաջացնող խմբի մէջ միաբանութիւն չկար։ Մեծամասնութիւնը հակառակ էր երկրի վարչութեան մէջ արմատական փոփոխութիւն մտցնելուն, այն է՝ սահմանադրութիւն հրատարակելուն, գտնելով այդ՝ դեռ վաղաժամ թիւրքերի համար, բայց Միդհատ փաշա անյողդողդ մնաց իր յայտարարած ծրագրի վրայ և յաղթանակեց։ Բարենորոգումների ծրագրի քննութեան համար մի մեծ խորհուրդ կազմուեց, որտեղ Միդհատ փաշա պահանջեց այնպիսի բարենորոգում մտցնել, որ «մահմեդականներն և քրիստոնեաները հաւասար իրաւունք ունենան և սահմանադրական Ազգային Ժողովում կատարեալ ազատութեամբ և եղբայրաբար քննեն նոր օրէնքներ և այն բարեկարգութիւններն, որ պէտք են ամբողջ երկրին»։ Իսկ սահմանադրութեան ծրագիրը մշակող յանձնաժողովին, որ կազմուեց սուլթան Համիդի գահակալութիւնից անմիջապէս յետոյ, անդամակցում էին 2 հայ՝ Վահան էֆէնդի Վահանեան (արդարադատութեան մինիստրի օգնական) և Միհրան

ըէյ Տիւզեան (պետական խորհրդի անդամ)։ Բայց պահպանողական տարրերն էլ անգործ չէին մնում։ Սուլթան Մուրադի հոգեկան անբուժելի հիւանդութիւնը պատճառ բերելով՝ Կ. Պոլսի պատերի վրայ յայտարարութիւններ էին փակցրել, թէ «Թագաւորը խենթ է, իսկ երկիրը կառավարողները Ռիւշդի և Միդհատ փաշաներն են»։ Իրերի այս վիճակում ասպարէզ իջաւ Աբդիւլ Համիդ էֆէնդին, սուլթանի եղբայրն և ժառանգը, որ ծածկաբար յարաբերութեան մէջ մտաւ յիշեալ փաշաների հետ։ Չկամենալով սահմանադրութեան գործը վտանգի ենթարկել և տեսնելով որ Մուրադ իրօք այլեւս անկարող էր գահակալել, Միդհատ փաշա դիմեց Աբդիւլ Համիդին, և, երբ սրանից գրաւոր խոստում առաւ, թէ ինքն էլ կուսակից է բարենորոգումների և անմիջապէս սահմանադրութիւն պիտի հրատարակէ, ըստ այնմ երկրի կառավարութեան ղեկը թողնելով մինիստրութեան ձեռքը, Միդհատի խումբը շէյխ-իւլ-իսլամի մի նոր ֆէթվայով հիւանդ Մուրադ Ե.-ին գահընկէց անելով օսմանեան գահը բարձրացրեց Աբդիւլ Համիդին (1876 թ. օգոս. 19/31), որ յետոյ այնքան ահռելի աղէտներ պիտի բերէր թէ Միդհատի, թէ ամբողջ Թիւրքիայի և թէ առանձնապէս հայ ժողովրդի գլխին...։ Նոր սուլթանը, շատ աւելի խորամանկ և անկախ կամքի տէր՝ քան երևակայում էին նրան բարձրացնողները, իր գահակալութեան առաջին իսկ օրերից ցոյց տուեց, թէ ինքն ամենևին մտադիր չէ հետևել Միդհատի ցուցումներին և այս վերջինի խմբագրած ֆէրմանից դուրս հանեց այն բոլոր կէտերն, որոնք վերաբերում էին սուլթանական միահեծան իշխանութեան սահմանափակման *)։

*) Միդհատ փաշայի որդին՝ Ալի Հայդար՝ իր հօր կենսագրութեան մէջ պատմում է, թէ Միդհատ փաշան ի մէջ այլոց ծրագրել էր, որ սուլթան Համիդ այդ ֆէրմանում յայտարարէ, թէ քէօլէ (ծառայ) և ճարիյէ (աղախին) առնել ծախելու սովորութիւնն, որ գերեվաճառութեան մի ձև է, բացարձակապէս ջնջվում է։ Սուլթան Համիդ դուրս է հանել ֆէրմանից այս պարբերութիւնը։ («Միդհատ փաշանըն հաեաթը սիասիյէսի», Կահիրէ, 1322 (արբ. թուական)՝ էջ 201)։

Միդհատ փաշան չէր ուզում ժամանակ կորցնել, որովհետև եւրոպական միջամտութիւնն սպառնական երևոյթ էր ստացել։ Նկատելով որ Թիւրք կառավարութիւնը բացարձակօրէն մերժում էր յեղափոխական նահանգներին ինքնավարութիւն շնորհել, խոստանալով շուտով ընդհանուր բարենորոգումներ մտցնել ամբողջ երկրի մէջ, որոնց այլ ևս հաւատ ընծայող չկար, Ռուսաստանն առաջարկում էր, որ ինքն ռուսական զօրքով Բուլղարիան գրաւէ, իսկ Աւստրիան իր զօրքով՝ սահմանակից Բոսնիան և Հերցէգովինան։ Այս պարագաներում Միդհատ շտապեցնում էր Աբդիւլ Համիդին, որ նա օր առաջ հրատարակէ սահմանադրութիւնը*)։ Եւրոպական այս կամ այն տէրութեան զինեալ միջամտութեան երկիւղի տակ Միդհատ փաշա համաձայնել էր այն բոլոր կրճատումներին, որ սուլթան Համիդ մտցրել էր յօգուտ իր իրաւունքների պահպանման։ Բայց միայն այս կողմից չէր նրա գտած ընդդիմութիւնը։ Սահմանադրութեան սկզբնական խմբագրութիւնը կատարել էր Գրիգոր Օտեան, բայց նոյնիսկ Միդհատի կուսակիցները շատ կարևոր կէտեր փոխել էին նրա մէջ։ Այսպէս՝ սադրազամ Ռիւշդի փաշայի պահանջմամբ դուրս էր հանուել մի շատ էական կէտ քրիստոնեաների հաւասար իրաւունքի նկատմամբ, այն է՝

*) Միդհատ փաշա գրում էր Համիդին այսպէս՝ իր տեղեկագրում. «Սահմանադրութեան ծրագիրը յանձնաժողովն արդէն պատրաստել է... Կրկնում եմ դարձեալ, որ մեզ համար միայն երկու ելք կայ այս վիճակից։ Մին այն է, որ ըստ մեր խոստման մեր ներքին բարեկարգութիւնն իրագործենք, սահմանադրութիւնը հրատարակելով եւրոպական դեսպանախորհրդից առաջ, որին հազիւ 3—4 օր է մնացել, իսկ միւսն՝ ընդունել եւրոպ. պետութիւնների առաջարկութիւնն և յաւիտեան մնալ նրանց խնամակալութեան տակ։ Եթէ առաջին միջոցն անմիջապէս չգործադրենք, երկրորդն արդէն պատրաստ է...» (Ալի Հայդար, նոյն, էջ 206)։

դատարաններում քրիստոնեաների վկայութեան ընդունելը, նոյնպէս և նրանց զինուորագրութիւնը, մահմեդականներին համահաւասար [1]։ Եւ սա այն մեծ պակասն է, որի դէմ շարունակ բողոքել են ի մէջ այլոց և հայերը։ Բայց «մահմեդական հայրենասէրներն» այդպէս էին պահանջել...։ Շատ ճիշտ է նկատում մի եւրոպացի ձեռնհաս հեղինակ, թէ հարազատ մահմեդականի համար հայրենասիրութիւնն իսլամական կրօնին հաւատարիմ լինելն է և ոչ թէ հայրենիքի սէրն և հպատակաց շահերին անձնուիրութիւնը [2]։ Այն հակասութիւնն, որ եղել է միշտ Թիւրք կառավարութեան սկզբնական խոստումների և ապա յանուն իսլամի դըրանցից ունեցած շեղումների մէջ, խոստովանում էին իրանք՝ երիտասարդ Թիւրքերն եւս։ Մի Թիւրք լրագիր գրում էր այն օրերը. «Բ. Դրան մինչև հիմայ ունեցած քաղաքականութիւնը կեղծիքի և սուտ քաղաքականութիւն էր. նա շատ բան է խոստացել և ոչինչ չէ կատարել։ Բայց սուտխօսը վերջապէս բռնուեց. ոչ որ չի հաւատայ այլ եւս թղթի վրայ արուած խոստումներին, գործ է պէտք» [3]։ Միդհատ փաշան ինքն անկեղծօրէն յարել էր սահմանադրութեան [4], նոյնպէս և իր կուսակից երիտասարդ Թիւրքերից շատերը, որոնք բոլոր հպատակներին անխտիր հաւասարութիւն շնորհելով մտածում էին նրանցից ձուլել մի ընդհանուր օսմանեան ազգ։ Բայց այս մի քանիսը բացառութիւն համարելով, ոչ մի տարակոյս չկայ, որ 1876-ի «մահմեդական հայրենասէրների» մեծամասնութեան համար այս սահմանադրութեան շտապով յայտարարումը պար-

[1]) M. Ubicini, «La Constitution ottomane», *1877*.

[2]) Ed. Engelhardt, «La Turquie et le Tanzimat», II, *էջ 159*.

[3]) *«Իթթիհադ», Կ. Պոլիս, 1876, նոյեմբ. 1.*

[4]) *Սըր Հէնրի Էլիօտի (նախկին անգլ. դեսպան Կ. Պոլսում) յօդուածը* «Nineteenth Century» *ամսագրում, Լօնդօն, փետրվար 1888, էջ 279.*

զապէս եւրոպական միջամտութիւնը հեռացնելու մի փորձ էր։

Երբ վերջապէս սահմանադրութեան ծրագիրը վերջնականապէս ընդունուեց, Աբդիւլ Համիդ նրա իսկական հեղինակին՝ Միդհատ փաշային յանձնեց գործադրութիւնը, նրան սադրազամ նշանակելով։ Եւ այսպէս հրատարակուեց օսմանեան սահմանադրութիւնը 1876 թ. դեկտեմբերի 11/23-ին, ճիշտ այն օրն, որ պաշտօնապէս բացվում էր եւրոպական դեսպանախորհուրդը (conférence)։ Արտաքին գործերի մինիստրը 2 օր յետոյ մի շրջաբերական էր ուղղում բոլոր իր դեսպաններին՝ յայտնելու համար իրողութիւնը։ Միդհատ և Սաւֆէթ (արտաքին գործերի մինիստր) փաշաները ծանուցանում էին այդ շրջաբերականում թէ «... մահմեդական և քրիստոնեայ ժողովուրդները միեւնոյն զգացմունքով և յոյսերով են համակուած։ Այս նոր հաստատութեան շնորհիւ օսմանեան կայսրութեան մէջ այսուհետև ազատութիւնն, հաւասարութիւնն և արդարութիւնը պիտի թագաւորեն, որ քաղաքակրթութեան յաղթանակն է...։ Սահմանադրութիւնը մի դատարկ խոստում չէ, այլ մի իրական և ճշգրիտ գործ, որ սեփականութիւն է դառնում բոլոր օսմանցիներին և որը կարող է դադարել միմիայն ազգի եւ միապետի միացեալ կամքով...»*)։ Եւ այսպիսի գեղեցիկ բառերով, յուսալից խոստումներով և շլացնող երևոյթով հռչակուած սահմանադրութիւնն իր աւետած ազատութեան, արդարութեան և հաւասարութեան սկզբունքներով միասին կարճ ժամանակից վերջ, սուլթան Համիդի գրչի մի հարուածով, պիտի դադարէր, առանց սպասելու նաև ազգի «միացեալ կամքին»...։

---

*) «Blue Book», Turkey, № 2 (1877), էջ 184—6, Սաւֆէթ փաշայի շրջաբերականը Թիւրք դեսպաններին, 14/26 դեկտ. 1876։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Նոր ազգ. վարչութիւն: Սերբիական պատերազմ: Ներսէս պատրիարքի հաւատարմական շրջաբերականն և թողած տպաւորութիւնը: Նոր քննութիւններ գաւառներում: Ժողովրդական յուզում և ցոյց Բ. Դրան առջև: Հարստահարութիւնների հարցն Ազգ. ժողովում: Հարստահարութիւնների մասին նոր ընդարձակ տեղեկագիր: Լրագրական գործունէութիւն տեղական և եւրոպական մամուլի մէջ: Ազգ. վարչութեան ընթացքը Բ. Դրան թելադրութեան համաձայն: Ընդհանուր դժգոհութիւն գնապատանխորհրդի մասնակի ծրագրից: Ներսէս պատրիարքի տեսակցութիւնն անգլիական դեսպանի հետ: Ազգ. վարչութեան առաջարկութիւնն և Ազգային ժողովի որոշումները: Միդհատ փաշան հայոց պատրիարքարանում:

1876 Թ. յունիսին ազգային վարչութեան երկու ժողովների (Կրօնական և Քաղաքական) անդամներն իրանց երկամեայ պաշտօնավարութեան սահմանադրական շրջանն աւարտելով հրաժարուեցին և նրանց փոխարէն ընտրուեցին բոլորովին նորերը: Քաղաքական ժողովի Ա. ատենապետի պաշտօնում Սիմոն բէյ Մաղաքեանին փոխարինեց Սահակ էֆ. Ապրօ, պետական բարձր պաշտօնեայ*): Դիւանի միւս անդամներն էին Կարապետ Շահպազ (Բ. ատենապետ), Սեպուհ Մաքսուտ (Գ. ատենապետ) և Յովհ. Փօլաճեան (Ա. ատենադպիր): Իսկ Կրօնական ժողովում Ա. ատենապետութիւնն անցնում-է Խորէն եպ. Մխիթարեանին:

*) Ապրօ (Abro) էֆէնդին յայտնի էր նաև եւրոպական շրջաններում. 1865-ին Թիւրք կառավարութեան յանձնարարութեամբ նա գնացել էր Եւրոպա: Այն միջոցին Անգլիան երաշխաւորել էր երկու օսմանեան արտաքին փոխառութիւն. և որովհետև պահանջատէրերն սկսել էին անհանգստանալ, Ապրօ էֆէնդին էր գնացել Լօնդօն հանգստացնելու անգլիական կառավարութիւնը, թէ «Թիւրքիան իր բոլոր ֆինանսական պարտականութիւնները ճշտութեամբ պիտի կատարէ»: («Blue-Book», Turkey, 1856—1875, էջ 37).

Քաղաքական ժողովում պետական պաշտօնեաների ներկայութիւնը շատ շուտով ցոյց տուեց իր ազդեցութիւնը պատրիարքական գործերի ընթացքի վրայ: Այն միջոցին Սերբիան և Չեռնոգորիան՝ ռուսական բազմաթիւ կամաւորների՝ զէնքով և համասլավեան ընկերակցութեան բարոյական և դրամական աջակցութեամբ՝ խրախուսուած, իրանց բովանդակ զինուորական ուժովն ասպարէզ էին նետուել իրանց ցեղակիցներին պաշտպանելու: Պատերազմը Թիւրքիայի և նրանց միջև պաշտօնապէս յայտարարուած էր: Բ. Դուռն այս առթիւ իր հրատարակած ազդի մէջ, խոստանալով որ այս կռուից անմիջապէս յետոյ՝ ծրագրուած բոլոր բարենորոգումները պիտի գործադրուեն, յորդոր էր կարդում անխտիր իր բոլոր հպատակներին օգնել պատերազմի աջողութեան: Այս յորդորին իբրև պատասխան Ներսէս պատրիարքը Քաղաքական ժողովի խորհրդով հետևեալ կոնդակն ուղղեց հայ ժողովրդեան.

«Այն օրէն ի վեր, որ հայոց ազգին ամենամեծ մասն օսմանեան հզօր տէրութեան հպատակաւէր քաղցըր հովանոյն ներքոյ մտաւ, իր հինգ դարուց պատմութիւնը կը ցուցնէ թէ ինչ մեծամեծ շնորհներ իրեն պարգևած է այս հզօր տէրութիւնը: Եթէ այսօր Թիւրքիոյ մէջ կը տեսնենք հայ ազգը, որ կը պահէ իր կրօնը, իր եկեղեցին, իր լեզուն, իր պատմութիւնն ու աւանդութիւնները և վերջապէս եթէ այսօր հայ ազգը կը զգայ իր էութիւնը, նոյն բարեխնամ տէրութեան շնորհաց արդիւնք են: Այս ճշմարտութեան՝ ամեն հայու միտք համոզուած է, և չկայ հայ մը գրեթէ, որ առոր դէմ խօսի առանց իր պատմութիւնը անգիտանալու և ազգին շահերը չճանչելու:

«Հայ ազգն ալ իր այս վայելած շնորհներուն փոխարէն հաւատարիմ հպատակութիւն ցուցած է արդեամբ և յարատև երախտագիտութիւն իր սրտին մէջ կրած է յորդւոց յորդիս: Ինչ ասպարէզ, որ բացուած

է իր առջև, հոն բերած արգասաւորած է իր բոլոր մտաւորական, բարոյական և նիւթական կարողութիւնները և ապացուցած է այսու, թէ օսմանեան պետութեան ամենակարևոր տարրն է։

«Ստոյգ է թէև, որ հայ ազգը մերթ ընդ մերթ գաւառներու մէջ բարեխնամ տէրութեան կամաց հակառակ հարստահարութեանց ենթակայ եղած ալ է, հարստահարութիւնք, որոնք միայն մարմինը կը վնասեն եւ հեռի են այն տեսակ ճարստահարութիւններէն, որոնք ոգին եւ մարմինը միանգամայն կը վնասեն եւ ազգին գոյութեանը կը սպառնան*), *սակայն վերջին օրերս ձեռք առնուած միջոցներով, մանաւանդ վեհափառ սուլթանի գահակալութեան առթիւ հրատարակուած հրովարտակին սկզբանց յենլով, մեծ յոյս ունինք, որ այնպիսի մասնաւոր ճնշմանց ու անկարգութեանց ալ հիմնական բարեկարգութեամբք առաջքը պիտի առնուի և մեր գաւառացի ազգայինք լիովին պիտի վայելեն բարեխնամ տէրութեան մեր ազգին վրայ ունեցած մասնաւոր սիրոյ և համակրութեան արդիւնքը։*

*«Արդ՝ հայ ազգն, որոյ ճակատագիրն այնչափ դարերէ ի վեր նուիրագործեալ կապերով միացած է օսմանցւոյն ճակատագրին հետ, չի կրնար անտարբեր մնալ օսմանեան տէրութեան գտնուած արդի ծանրակշիռ պարագայից մէջ, այլ պարտաւոր է ինչպէս ամեն ժամանակ, նոյնպէս և առաւել ևս ներկայ ժամանակիս մէջ անկեղծ օժանդակութիւն մատուցանել։ Այս օժանդակութիւնն ընելով հայրենասէր հայը՝ նոյն իսկ իր ազգային շահը պաշտպանած կըլլայ, վասնզի օս*մանեան երկիրը պաշտպանել՝ Հայաստանը պաշտպանել ըսել է, նոյն իսկ հայուն կրօնը, դպրոցը, ինչքը, տունը, ընտանիքը եւ պատիւն ու կեանքը պաշտպանել ըսել է։

«Ուստի, խորհրդակցութեամբ Խառն Ժողովոյ Ազգային Վարչութեան, նուիրական պարտք կը համարիմ այսու շրջաբերական կոնդակաւ յորդոր կարդալ բոլոր հայ ժողովրդեան, որ ամեն ոք իր կարողութեան սահմանին մէջ հայրենեաց պաշտպանութեան համար պէտք եղած օգնութիւններն ընել փութայ՝ նախ աղօթելով հրապարակաւ յատենի եկեղեցւոյ առ ամենաբարձրեալն Աստուած, Թագաւորն թագաւորաց, որպէս զի Հօր նախախնամութեան հզօր հովանեաց պաշտպանութեամբն մեր օգոստափառ սուլթան Մուրադ Ե. կայսրն ու նորա աթոռն անսասան պահպանէ, իր նախարարաց և պաշտօնէից խոհեմութիւն և իմաստութիւն պարգևէ, և կայսերական արիապանծ բանակաց և զինուց յաջողութիւն շնորհէ։ Նոյնպէս աղօթելով այն ամեն ազգէ կամաւորաց համար, որք հայրենասիրական եռանդով վառուած զէնք կառնուն հայրենեաց թշնամիներուն դէմ։ Երկրորդ ըստ կարողութեան իւրաքանչիւր ուրուք և ըստ յօժարութեան կամաց օգնելով թէ նիւթական, թէ անձնական ծառայութեամբ։

«Վերջապէս ամենքս ի մի բերան և մի սիրտ չխնայենք մեր վեհապետին և մեր հայրենեաց պաշտպանութեան համար որևէ զոհողութիւն և ծառայութիւն, որոնք ներկայիս և ապագային մէջ մեր ազգին համար փառք և օգուտ կը բերեն»։

Այս շրջաբերականն, որ Ներսէսի այն ժամանակի թիւրքամոլութեան կոթողն է համարվում, անմիջապէս թարգմանուեց Կ. Պոլսի բոլոր օտար լրագիրներում։ Թիւրք թերթերը մեծագովասանքներ ուղղեցին պատրիարքի հասցէին։ Առանձնապէս գոհ մնացին թիւրք պաշտօնական վարչական շրջանները։ Իսկ հայ ժողովրդից՝ գոհ էր գլխաւորապէս Կ. Պոլսի հայոց այն մասն, որ ամբողջապէս նախ իր նիւթական շահերով և ապա իր հայեացքներով և իղձերովը գտնվում էր թիւրքական այդ շրջանների ազդեցութեան տակ։ Առանձնապէս ուշադրութեան արժանի են այս կոնդակի մէջ մեր

*) *Ստորագծումը մերն է։* *Ս.*

տուրագծած տեղերը։ Կ. Պոլսի հայոց պատրիարքն՝ այս պաշտօնական կոնդակով չէր բաւականանում իր հլու հպատակութեան պարտքը կատարելով, որի բազմաթիւ ապացոյցները կան այնտեղ, այլ նա նոյն իսկ ջանք էր գործ դնում մեղմացնել Հայաստանում կատարուած հարստահարութիւնները, համեմատութեան դնելով աւելի մեծ հարստահարութիւնների հետ։ Աւելի պարզ խօսելով՝ Ներսէս և Քաղաքական Ժողովն ի լուր աշխարհի յայտարարում էին, թէ Թիւրքիոյ ձեռքով կատարուած հարստահարութիւնները այնքան խիստ և անտանելի չէին, քանի որ միայն մարմնին էին վնասում, իսկ կար մի ուրիշ երկիր. որտեղ հայերի վրայ կատարուած հարստահարութիւնները «թէ ոգին և թէ մարմինը միանգամայն կը վնասեն և ազգի գոյութեանը կը սպառնան», իբր թէ «միայն մարմնի» վնասելը վտանգաւոր չէ «ազգի գոյութեանն»...։ Ներսէս Վարժապետեան իր այս ակնարկները ռուսական քաղաքականութեան մասին՝ ուրիշ առթիւ աւելի թշնամական ոգով է արտայայտել, ինչպէս քիչ վերջը պիտի տեսնենք։

Թէ բուն Հայաստանի մէջ և թէ Կ. Պոլսում բնակուող այն գաւառացի հայերի կողմից, որոնք անձամբ իրանց «մարմնի» վրայ կրել էին և կրում էին այդ բռնութիւնները, բոլորովին չոգեւորուեցին պատրիարքի այս շրջաբերականով և այն «մեծ յոյսով», որ նա ունէր «բարեխնամ տէրութեան մասնաւոր սիրոյ և համակրութեան արդիւնքի» վրայ։ Բացի դրանից՝ նրանք չէին կարողանում համոզուել թէ եւրոպական պետութիւնների այն ժամանակ «Թիւրքիոյ քրիստոնեաներ» ասելն և նրանց պահանջներին պաշտպան կանգնելը՝ միայն եւրոպական նահանգների համար էր։ Այս թերին նրանք վերագրում էին այն հանգամանքին, թէ եւրոպական տէրութիւնները բաւականաչափ տեղեակ չէին հայոց անմխիթար կացութեան. ուստի ի-

րանց վիճակի վրայ ևս ուշադրութիւն հրաւիրելու համար, գաւառներից սկսեցին ընդարձակ տեղեկութիւններ հասնել մամուլին հայ ժողովրդի կրած զրկանքների մասին։ Հայ, մասամբ և օտար լրագիրները բազմաթիւ թղթակցութիւններ էին տպում, ցոյց տալու համար թէ այն անտանելի վիճակն, որին դարման էին պահանջում եւրոպական նահանգների քրիստոնեաները, գոյութիւն ունէր նաև Փոքր Ասիայի հայաբնակ տեղերում։ Այս ընդհանուր տեղեկութիւնների մէջ առանձնապէս յուզիչ էին Եօզգադից ստացուած վերջին լուրերն, որոնք հաղորդում էին, թէ ճիշտ այդ միջոցին թիւրք բէյերը (պահեստի զինուորներ) բազմաթիւ բռնութիւններ էին գործ դրել տեղացի հայերի վրայ։ Այս թղթակցութիւնների ազդեցութեան տակ մօտ 2000 հայ մի մեծ ցոյց սարքեցին Բ. Դրան առջև։ Սադրազամը ցուցարարների պատգամաւորներին ընդունեց Միդհատ փաշայի ներկայութեամբ. նախ նրանց մխիթարեց, թէ «հարստահարութիւններ այժմ 80% աւելի նուազ են գործվում Հայաստանում, քան թէ 30 տարի առաջ»*), և ապա, ըստ վաղեմի ընդունուած սովորութեան, խոստացաւ, որ քննութիւն կը կատարէ և պատժել կը տայ յանցաւորներին, բայց պայման դրեց, որ հայ լրագիրները մինչև քննութեան աւարտումն որևէ նոր բան չհաղորդեն հարստահարութիւնների և յատկապէս Եօզգադի դէպքի մասին**)...։ Կառավարութիւնը հարկ էր դատում մարել այս գործն, որ արդէն սկսել էր յուզուել եւրոպական թերթերում և առիթ էր տուել, որ նոյն իսկ անգլիական խորհրդարանում հարցապնդում լինի այս մասին և անգլիական արտաքին գործոց մինիստրը բացատրութիւն տայ։

Սակայն այս ժամանակի ժողովրդական ցոյցով յոյս

*) «Մշակ», 1876 թ., № 38.

**) «Revue de Constantinople», 1876 թ., էջ 588.

չկար ազդել կառավարութեան վրայ, ուստի ազգային վարչութիւնն ստիպուած զգաց իրան խնդիրը բերել Ազգ. Երեսփոխ. Ժողովին, որպէսզի յանուն ընդհանուր հայ ազգի դիմում լինի կառավարութեան, մանաւանդ որ այն ժամանակ միմեանց յաջորդող երկու սուլթաններն էլ մեծ-մեծ խոստումներ էին անում իրանց հպատակներին:

Երբ Աբդիւլ Ազիզ գահընկէց եղաւ և նրան փոխարինեց Մուրադ Ե., որի վրայ ի սկզբան այնքան մեծ յոյսեր էին դրուած, սա իր առաջին հրովարտակում խոստովանում էր, թէ երկրի կառավարչական րէժիմը մեծ պակասութիւններ ունէր, և խոստանում էր հիմնովին բարեկարգել ամեն ինչ: Ազգային Երեսփ. Ժողովը պատշաճ համարեց յանուն ազգի հաւատարմութեան ուղերձով շնորհաւորել նրան: Իսկ երբ նրանից 3 ամիս վերջը գահը գրաւեց Աբդիւլ Համիդ Բ., նոր սուլթանն իր եղբօրից աւելի ազատամիտ հանդիսացաւ իր հրովարտակում, որ խմբագրել էին Միդհատ և իր կուսակիցները նրա անունից: «Մեր միակ փափագն ու մտածմունքն է,—ասում էր ապագայ բռնակալն,—ազատութեան, անդորրութեան և արդարութեան բարիքը վայելել տալ մեր բոլոր հպատակներին»: Այսպիսի գեղեցիկ խոստումների ազդեցութեան տակ Ազգային Ժողովն սկսում է քննել վերստին գաւառական հարստահարութիւնների ցաւալի հարցը: Սեպտեմբերի 10-ի և 17-ի նիստերում կրկնվում է այն բոլորն, ինչ որ տեղի էր ունեցել Խրիմեանի պատրիարքութեան ժամանակ: Այս անգամ ևս երեսփոխաններն ազատ համարձակ պատկերացրին գաւառացի հայոց իսկական վիճակը: Ժողովի տրամադրութեան վրայ ազդելու համար, հարկ է լինում յիշեցնել, թէ ինչ է կատարուել նախորդ անգամ և ինչ պէտք է իրօք սպասել մտադրուած նոր միջնորդութիւնից: Այս ազդարարի դերն է ստանձնում Ստեփան Փափազեան, որ իր խո-

սած հետևեալ ճառում պարզ կերպով ցոյց է տալիս ժողովականների ընդհանուր տրամադրութիւնն այս հրատապ հարցի մասին:

«Ի՞նչ արդիւնք ունեցած է 5 տարի առաջ մատուցուած տեղեկագիրը, ի՞նչ դարման տարուած է ցարդ մեր հարստահարեալ ազգայնոց վիճակին: Փնտռել և հետազօտել կուզեմ թէ ինչպէս կըլլայ, որ կուսակալ մը, միւթէսարրիֆ մը, մինչև իսկ գայմագամ մը կարող կըլլայ բարձի տակ դնել և անգործադրելի թողուլ Բ. Դրան հրամանագիրները: Ես կրնամ օրինակներով ցուցնել թէ զանազան կարևոր պարագաներու առթիւ պատրիարքարանէն գրուած թագրիրներու (զեկուցագիր) վրայ շատ անգամ ամենաազդու հրամանագիրներ ղրկուած են Բ. Դռնէն առ կուսակալութիւնս, այնպիսի հրամանագիրներ, որք պատրիարքարանի դիւանագիրները շատ անգամ զմայլեցուցած են. բայց չգիտեմ ինչ է պատճառը, որ այդ գացած հրամանագիրներն արդիւնք մը չեն ունեցած. արդեօք այդ հրամանագրոց վերջին տողը առաջիններուն հակառակ իմաստ մը կուտայ, կամ այդ հրամանագրոց կէտերը ուրիշ ձև կամ գոյն ունին, որով բառերն իրենց նշանակութիւնը կարենան փոխել...: Ինչո՞ւ Զարանջախի Տէրսիմ և Օվաջըխ գիւղերուն մէջ մեր ազգայնոց պսակի հրաման տուողները քիւրդերը կըլլան. ի՞նչ է պատճառն, որ անզէն հայը տուրք տայ տէրութեան, իսկ զինեալ քիւրդը տուրք չտայ ու կեղեքէ զհայն և անկէ տուրք առնու... Բայց միթէ տուներնիս և ընտանիքնիս պահպանելու համար՝ եթէ կառավարութիւնը հրաման տայ՝ չե՞նք կրնար զինուիլ. ինչո՞ւ քիւրդ, ավշար, չերքէզ և այլք զէն համարձակ կողոպտեն, և կողոպտեալ հայը չկրնայ անոնց դիմադրել ...»:

Այնու ամենայնիւ Ընդհ. Ժողովն ուրիշ ելք չէ գտնում, եթէ ոչ մի նոր, ընդարձակ տեղեկագիր կազմելով նրանում ամփոփել ժողովրդի բողոքի բոլոր կէ-

տերն և միանգամայն առաջարկել անմիջապէս գործադրելու համար՝ բարւոքման որոշ միջոցներ։

Այս նոր տեղեկագիրն աւելի ընդարձակ էր, քան 1872 թ. ապրիլի 11-ին ներկայացուածը։ Նախորդ տեղեկագիրը գաւառացիների գանգատներն ամփոփում էր հետևեալ կէտերում.

«ա. Օրէնքն ու արդարութիւնն ի գործ դնելու մասին գաւառական պաշտօնէից ընդհանրապէս անփոյթ և անտարբեր մնալն և գանգատանաց քննութեան խնդիրները գրութեամբ կատարուելովն անոնց աւելի եւս ձգձգուիլը.

«բ. Գաւառական Արքունի ժողովոց թէզբիւլաթի օրինօք կազմութեամբն՝ անոր անդամակցութեան շահախնդիր անձանց առանձնաշնորհութիւն դարձած լինիլը.

«գ. Գաւառացի հայուն՝ իսլամաց մոլեռանդ մասին նախատանաց և թշնամանաց ենթակայ ըլլալը.

«դ. Արքունի շինուածոց համար տարապարհակ վարիլն ու դրամական անիրաւ պահանջմանց ենթարկիլը.

«ե. Ճանապարհաց շինութեան պատճառաւ կեղեքուիլը.

«զ. Պաշտպանել միւլթէզիմներու ապօրէն պահանջմանց առջև՝ բերոց տասանորդը դրամով վճարելու բռնադատուիլը.

«է. Նմանապէս՝ իր ընտանեաց ուտեստին համար մշակած տան պարտիզի բերքէն տասանորդ տալու բռնադատուիլը.

«ը. Բերքէն տրուած տասանորդն ինքն անձամբ միւլթէզիմին շտեմարանը փոխադրելու բռնաբարուիլը.

«թ. Միւլթէզիմի ժամանակին չգալուն համար, բերքն անձրևին տակ թողլով փտեցնելու և յետոյ փտած բերքին վրայ ողջի արժէքով տասանորդ տալու բռնադատուիլը.

«ժ. Միւլթէզիմն ու սորա գործակալներն իր տան մէջ հիւրընկալելով ձրիաբար կերակրելու և պատսպարելու պարտաւորիլը.

«ժա. Եւ երբեմն ալ մինչև իսկ եզանց լուծերու վրայ տասանորդ անուամբ՝ այսչափ ցորեն տալու բռնաբարուիլն, ինչպէս տեղի ունեցած է Կարնոյ Նահանգին գաւառաց մէջ.

«ժբ. Աստնցմէ զատ գաւառացի հայուն շահնալըք կամ եօլչէք-հագգը բառուած արգիլեալ տուրքեր վճարելու բռնադատուիլը.

«ժգ. Զինուորական տուրքէն՝ մեռնողաց, գաղթողաց և փախստականաց մասը վճարելու հարկադրիլը.

«ժդ. Թէմէթթիւ և էմլաքի տրոց անարդար բաշխմամբ՝ իսլամաց բեռը կրելը.

«ժե. Տրոց վճարման պատրուակաւ անհրաժեշտ կահ կարասին ու գործիքը ծախելու և մինչև իսկ ոստիկանաց ձեռօք ծեծուելու և բանտ մտնելու խստութեանց մատնուիլը.

«ժզ. Կիներու և անչափահաս մանկանց մահմեդական կրօնքն ընդունելու ստիպուիլը.

«ժէ. Կիներու, հարսներու և նոյն իսկ աղջիկներու առևանգիլն ու բռնաբարուիլը.

«ժը. Ոչ-մահմեդականաց վկայութեան չընդունելովն, առևանգութեանց, գողութեանց և սպանութեանց անյայտ ու անպատիժ մնալը.

«ժթ. Զինեալ քիւրդերու, լեռնցի ցեղերու, չէրքէզներու և բնիկ Թիւրք տէրէպէյիներու այլ և այլ հարստահարութեանց ներքև հայ ժողովրդեան տառապելն ու չարչարիլը»։

Առաջ բերելով վերոյիշեալ կէտերը, 1876-ի տեղեկագիրը շարունակում է.

«Յիշեալ տեղեկագրին մատուցուած Թուականէն ի վեր (1872 ապրիլ) հարստահարութեանց համար պատ-

բիւրքարանէն գրուած թաքրիրներն ալ կամ պաթթալ ըլլալով անպատասխանի թողուելով և կամ իսթիլամի ապարդիւն գրութեամբ յետաձգուելով, և առ առաւելն կեդրոնական կառավարութենէն առ կուսակալս ուղղեալ հրամանագրաց անգործադրելի մնալովը՝ մոռացութեան մէջ թողուած են, առանց դարման տանելու ժողովրդեան կրած տառապանաց։

«Իրաց այս աղէտալի և անհանդուրժելի վիճակին ամենամեծ պատճառ՝ հաւասարութեան գաղափարին իսլամ ժողովրդեան մէջ ընդդիմանելուն եւ արդարութեան անխտիր չգործադրուելն է...»։

Տեղեկագիրն այստեղ իր մատը դրել էր բուն վէրքի վրայ։ Նոր տեղեկագրի մէջ ներփակուած են 1872-ից յետոյ հարստահարութիւնների դէպքերի մասին պատրիարքարանի կողմից Բ. Դրան գրուած բազմաթիւ թաքրիրները, մի քանիսի ամբողջ պատճէնները և միւսների համառօտութիւնը, որոնք մեծ մասամբ ապարդիւն են մնացել։

Տեղեկագիրն իբրև դարման առաջարկում է հետևեալ եօթն միջոցները.

«Ա.—Հողային խնդրոյն նկատմամբ թագրիր մը խմբագրած և մատուցած էինք, որ Տիվանը հիւմայունի պաշտօնատունը յատկապէս կազմուած յանձնաժողովին և օրինաց ու արդարութեան համեմատ անոր պարունակութիւնն ընդունուած է. նորին գործադրութիւնը։

«Բ.—Վանօրէից կալուածները մահլիւլէ և տուրքէ ազատ ըլլան։

«Գ.—Շահ Հիւսէյին օղլու Հիւսէյին, Գիլլան օղլու Ազիզ և Աբդիւլ Ֆէթթա պէյերն և Քանդալ Աղասի և Աբդիւլ Րահման և սոցա նմաններն, որոնց հարստահարութիւնքն ու ապստամբական արարքը քանիցս հաստատուած են և ժողովուրդը շարունակ և դառնապէս կը գանգատի սոցա համար, ըստ օրինի պատժել և հեռացնել։

«Դ.—Յանձնաժողով մը կազմել Բ. Դուռը, որուն մէջ գտնուին նաև պատրիարքարանէս ցոյց տրուելիք անձեր, և լիազօր իշխանութեամբ Ասիա դրկել, որ հարստահարութիւնները քննէ և բարձմանը դարման տանի։

«Ե.—Բ. Դուռը մէզահիպ միւտիրլիկն (կրօնական գործոց տեսուչ) նախագահութեանը տակ մնայուն խառն ժողով մը հաստատէ, որ պաշտօն ունենայ պատրիարքարանէս ներկայացեալ խնդրոյ մասին հարկ եղածը խորհիլ և գործադրութեանը համար բարձրագոյն հրաման ստանալ։

«Զ.—Այն հայը, որ տակաւին 21 տարին լրացուցած չէ, երբ կրօնափոխութեան դիմէ, այնպիսւոյն դաւանութիւնն ու խօսքը չընդունուի, ինչպէս կը տրամադրէ անչափահասներու համար գործադրութեան մէջ եղած օրէնքը։

«Է.—Քրիստոնեաները վկայութիւն տալու իրաւունքէն չզրկել»։

Այս միջոցներից ոչ մինն իսկապէս ծանր և անգործադրելի չէր Թիւրք կառավարութեան համար, մանաւանդ որ ամեն ինչ թողնուած էր դարձեալ Թիւրք պաշտօնեաների բարի կամքին. այնուամենայնիւ Թիւրք լրագիրները թէ այս տեղեկագրի և թէ հայերի մի քանի հրապարակական թղթերի ցոյցերի առթիւ սկսեցին խիստ յօդուածներ գրել նրանց դէմ և մինչև անգամ նրանց «ապստամբ» էին հռչակում «բարեխնամ» կառավարութեան դէմ։ Այնքան գրգռիչ էին այս յօդուածները, որ Ներսէս պատրիարք պաշտօնապէս բողոքեց կառավարութեան և միայն այն ժամանակ սանձ դրուեց Թիւրք լրագիրների գրգռիչ յօդուածներին։

Տեղեկագիրը վերջանում էր այսպէս.

«Հայ ազգն իր տառապանաց բարձմանն ակնկալու՝ վերոյեղեալ միջոցները կառաջարկէ, վասնզի արդարութեան և հաւասարութեան շնորհն անխտիր վայե-

նելու իրաւունք ունի թէ մահմեդական և թէ ոչ-մահմեդական միւս հպատակ ազգաց չափ։ Վասնզի հայն իր դարաւոր հաւատարմութեան անժխտելի փորձեր է տուած կայսերական կառավարութեան։ Հայն իւրն գծուած սահմանին մէջ ամեն կարելի ծառայութիւն ինքնայօրդոր մատուցած է միշտ օսմանեան պետութեան և վերջապէս հայն իր ապագայն այս երկրին ապագային մէջ կը փնտռէ և իր ամեն խնդրածն իրեն և երկրին միապէս օգտակարն է, համաձայն իր օգոստափառ վեհապետին բարի դիտաւորութեանց»)։*

Այս տեղեկագիրը պատրաստող յանձնաժողովի նախագահը Մատթէոս եպ. Իզմիրլեանն էր, իսկ տեղեկաբերը՝ Ստ. Փափազեան։

Այս նոր տեղեկագիրն էլ նոյն հետևանքը պիտի ունենար, ինչ որ առաջինը։ Երկար սպասեցնելուց յետոյ սադրազամը պատասխանեց հայոց յիշատակագրին՝ խոստանալով լիազօր քննիչ յանձնաժողով ուղարկել «տեղնուտեղը քննելու գանգատներն և հարկ եղած միջոցները ձեռք առնելու»... Սովորական խօսքեր, որոնք կառավարութեան ներկայ տագնապալից դրութեան մէջ նուազ գործադրելի էին, քան 1872-ին, երբ առաջին անգամ Թրիմեան յուզում էր այս խնդիրը։ Մեծ յուզում էր տիրում այս առթիւ ժողովրդի մէջ, որին արձագանք էին տալիս հայ լրագիրները։ Նկատելով քաղաքական հանգամանքների առած չափազանց լրջութիւնն և այն մեծ հոսանքն, որ կար առհասարակ եւրոպական մամուլի մէջ ի նպաստ Թիւրքիայի քրիստոնեաների՝ Կ. Պոլսի ազգային գործիչները, չբաւականանալով տեղական լրագրութեան մէջ երեւցած թղթակցութիւններով և խմբագրական բաւական խիստ քննադատութիւններով, սկսեցին ընդարձակ տեղեկութիւններ հաղորդել եւրոպական գլխաւոր լրագիրներին հա-

*) *Ատեն. Ազգ. Ժողովոյ 1876—7, էջ 203—238.*

յերի գանգատների մասին։ Եւ այս՝ այնու մանաւանդ կարևոր էր համարվում, որ ոչ միայն եւրոպական դիւանագէտներից ոմանք, այլ նոյն իսկ Կ. Պոլսում ապրող եւրոպացի հրապարակախօսները ճիշտ գաղափար չունէին գաւառացի հայ ժողովրդի ձգտումների վրայ և մեծ ջանք էին գործ դնում համոզելու թիւրք կառավարութիւնը, թէ պէտք է գոհացում տալ միայն եւրոպական նահանգների քրիստոնեաների պահանջներին, քանի որ «Փոքր Ասիայի քրիստոնեաները գոհ են իրանց կացութիւնից»)։ Իսկ եւրոպական մեծ թերթերի տուած տեղեկութիւններով, որոնք երբեմն աննպաստ, բայց յաճախ նպաստաւոր էին լինում հայերին, եւրոպական երկիրների մէջ սկսել էր հետաքրքրութիւն զարթնել հայ ժողովրդի վիճակի մասին**)։*

Այն միջոցին փորձ եղաւ նոյն իսկ ուղղակի եւ-

*) «Revue de Constantinople», *1876 թ., էջ 533.*

**) *Երբ Թիւրքիայի քրիստոնեաների կացութիւնը 1876-ին և 1877-ին ընդհանուր եւրոպական հետաքրքրութիւն շարժեց, անգլ. կառավարութիւնը խորհրդարանին ներկայացնելու համար 1877-ին հրատարակեց № 16 (1877) «Կապոյտ Գիրքն», որ բովանդակում էր անգլ. դիւանագիտական գործակալների 1868-ից մինչև 1875 թ. Թիւրքահպատակ քրիստոնեաների վիճակի նկատմամբ ուղարկած տեղեկագիրներն, և ապա № 17 (1877) գիրքն, որ աւելի հին շրջանից սկսելով (1856) նոյնպէս առաջ էր բերում հիւպատոսների տեղեկագիրները Թիւրքիայի ֆինանսական և վարչական բարենորոգումների և քրիստոնեաների պաշտպանութեան մասին։ Այս գրքերում բազմաթիւ պաշտօնական վկայութիւններ կան այն զեղծումների և բռնութիւնների մասին, որոնք յիշուած են ազգ. վարչութեան մատուցած հարստահարութեանց կրկին տեղեկագիրներում։ № 17 (1877) գիրքն ամփոփում է ի մէջ այլոց այն հրահանգներն, որ անգլ. կառավարութիւնը 1856—1875 շրջանում ուղարկել է իր Կ. Պոլսի դեսպանին ընդհանրապէս քրիստոնեաների պաշտպանութեան և բարենորոգումների գործադրութեան մասին։ Բայց առանձնապէս հայոց վերաբերեալ յիշատակութիւն չկայ դեռ այդ հրահանգներում։*

րոպական դահլիճների ծանոթութեանը հասցնել Հայաստանի կացութիւնը, մի համառօտ յիշատակագրի ձևով *)։

Այս բոլոր հրատարակութիւնների, որոնք դեռ ևս անհատական ջանքերի արդիւնք էին, նպատակ ունէին հասարակաց նպաստաւոր կարծիք ստեղծել Եւրոպայում հայոց համար, որ պէտքի նրանից ազդուէին եւրոպական կառավարութիւններն և առաջիկայ դեսպանախորհրդում զբաղուէին նաև Փոքր Ասիայի հայաբնակ նահանգներով։ Քիչ չէին հաւատացողները, թէ եւրոպական դեսպանախորհուրդն աջողութիւն պիտի ունենար և տեղական ինքնավարութիւն պիտի մտցնէր Եւրոպական Թիւրքիայի սլաւաբնակ նահանգներում, հետևաբար պէտք էր յարմար առթից օգտուել և նոյնպիսի բարենորոգումներ պահանջել նաև Հայաստանի համար ուղղակի եւրոպական կառավարութիւններին դիմելով։ Բոլորովին տարբեր հայեացքի էին հետևում ժողովրդի «մեծամեծներն», այսինքն նրանք, որոնք մեծ մասով կապ ունէին տէրութեան պաշտօնատունների կամ բարձր աստիճանաւորների հետ (պաշտօնեայ, վաճառական, կապալառու, բժիշկ և այլն) և որոնց ազդեցութեան տակ էր գործում սովորաբար ազգային վարչութիւնը մանաւանդ ներկայ Քաղաքական ժողովի օրով։ Այս դասակարգն այն հայեացքն ունէր, որ այսպիսի մի կենսական հարցում պէտք չէր կառավարութեան քաղաքականութեան հակառակ ընթացք բռնել։ Ինչ որ էլ լինի այս ուղղութեան հետևողների իսկական շարժառիթը, նա ունէր այն գործնական և արդարանալի

*) Սէթ Աբգար, հնդկաստանցի հայ վաճառականը, լոյս ընծայեց Լոնդոնում ֆրանսերէն լեզուով մի յիշատակագիր («Memoire sur la situation actuelle des arméniens et sur leur avenir, respectueusement transmis aux chancelleries des grandes puissances», Londres, 1876, 12 էջ), որի մէջ պահանջում էր, որ Եւրոպան զբաղի նաև 4 միլիօն Թիւրքահպատակ հայերի վիճակով։

կողմն, որ դեսպանախորհրդի մէջ Հայաստանի խնդիրը ևս ծրագրի մէջ մտցնելու և քննութեան առարկայ դարձնելու համար անհրաժեշտ էր, որ շահագրգռուող գլխաւոր տէրութիւններից մէկը կամ միւսն՝ այսինքն կամ դեսպանախորհրդի նախաձեռնող Անգլիան և կամ Թիւրքիայի սահմանակից տէրութիւններն՝ Աւստրիան և մանաւանդ Ռուսաստանը յանձն առնէին միջնորդել և համոզել ոչ միայն միւս եւրոպական տէրութիւններն, այլ նաև Բ. Դուռն. իսկ այս բանը ժամանակի քաղաքական հանգամանքների համեմատ եթէ ոչ անկարելի, գոնէ չափազանց դժուար իրագործելի էր։ Այդպիսի մի ուժեղ միջնորդութիւն շարժման մէջ դնելու համար բաւականաչափ զօրաւոր պատճառներ չըկային յաչս դիւանագիտութեան*)։

Մի կէտում, սակայն, համաձայն էին ամբողջ ժողովուրդն և իր առաջնորդները։ Պատրիարք, վարչութիւն, մամուլ և հոգևորականութիւն (որ առանձնապէս մեծ դեր էր խաղում), բոլորն էլ համամիտ և հաւասար կերպով վրդովւում էին, մտածելով թէ դեսպանախորհրդի շնորհիւ բուլղարներն և բոսնիա-հերցեգովինացիք կարող էին առանձնաշնորհեալ դիրք և նոյն իսկ ինքնավարութիւն ձեռք բերել, որից պիտի զրկուէին իրանք, հայերն, որոնք նուազ չեն կրել Թիւրքական բռնութիւններն և ճնշումը։ Հայոց այս բացարձակ գանգատը կատարելապէս հաւանութեան էր արժանանում Բ. Դրան կողմից, որ ի հարկէ տարբեր տեսակէտով էր շարժւում այս հարցում։ Միդհատ փաշան և իր խումբն, որ ամենից առաջ Թիւրք ազգայնականներ էին, յայտնապէս քաջալերում էին հայոց պատրիարքն

*) Եւրոպական Թիւրքիայի յունաբնակ գաւառների (Թէսալիա և Էպիրոս) ժողովրդից և կրետացիներից ադերսագիրներ մատուցուեցին դեսպանախորհրդին իրանց վիճակի բարուոքման մասին, բայց դեսպանախորհուրդը հաստատ մնաց իր նախկին ծրագրի վրայ և թողեց նրանց անհետևանք։

և ղեկավարող շրջաններն, որոնք անկասկած գործում էին այն միջոցին նրանց գաղտնի թելադրութեամբ։

Թիւրք կառավարութեան ձեռքում մեծ զէնք էր այն հանգամանքն, որ միևնոյն երկրում բնակւում ուրիշ քրիստոնեայ ցեղեր, որոնք ոչ թւով և ոչ կրթութեամբ ետ չէին մնում բուլղարներից և բօսնիացիներից, բողոքում էին այս վերջիններին առանձնաշնորհումներ տրուելուն դէմ և պահանջում էին նոյնպիսի իրաւունք նաև իրանց համար։ Եւ այսպիսի բողոքներ ուղղւում էին ոչ միայն մամուլի մէջ, ոչ միայն Բ. Դրան, այլ այս վերջինի գիտութեամբ նաև եւրոպական դեսպաններին և յատուկ պատգամաւորներին։ Բ. Դուռը շատ լաւ գիտէր, որ այս բողոքները պիտի ծառայէին միմիայն ի վնաս բուլղարների և բօսնիացիների՝ առանց որևէ իրական օգուտ բերելու բողոքող միւս քրիստոնեաներին...։ Ուշադրութեան արժանի է այս առթիւ Ներսէս պատրիարքի տեսակցութիւնը 1876 թ. դեկտեմբերի 6-ին (ն. տ.) մեծ-բրիտանական դեսպանի հետ։ Ահա ինչպէս է նկարագրում սըր Էլիօտ իր զեկուցագրում այս տեսակցութիւնը*)։

«Հայոց պատրիարքն եկաւ երէկ ինձ մօտ։

«Նրա գալու նպատակն էր՝ յանուն այն ստուարաթիւ քրիստոնեայ հասարակութեան, որի գլուխն է ինքը, յոյս յայտնել, որ դեսպանախորհուրդը պիտի չպնդէ Բ. Դրան առաջ, թէ ապստամբուած նահանգներին տրուեն այնպիսի առանձնաշնորհումներ, որոնցից զուրկ պիտի մնան միւս նահանգներն, որոնք հանդարտ են կացել, բայց իրաւունք ունեն, որ իրանց վիճակն ևս նկատողութեան առնուի։

«Ես զգուշաւոր կերպով պատասխանեցի, թէ դեսպանախորհրդի նպատակը միայն խաղաղեցնել է այն նահանգներն, ուր ապստամբութիւնն սպառնում էր

*) «Blue Book», Turkey, № 2 (1877), էջ 34.

ընդհանուր խաղաղութեան, և, իմ կարծիքով, պիտի չխառնուի ամբողջ օսմանեան կայսրութեան վարչութեան բարեկարգութեան հարցով։

«Պատրիարքը պատասխանեց, թէ իր ժողովուրդը շատ գրգռուած է եւ եթէ եւրոպական պետութիւնների համակրութիւնը գրաւելու համար հարկաւոր էր ապստամբուել, ամենեւին դժուար չէր այդպիսի մի շարժում առաջ բերել։

«Նա բողոքեց նոյնպէս եւրոպական չերքէզներին Ասիա տեղափոխելու առաջարկութեան դէմ, որ յօգուտ սլաւների է, բայց ի վնաս հայերի։ Արաբիայի հեռաւոր մասերից դուրս, ուր անկարելի է քշել հիւսիսային կլիմայի վարժուած մարդկանց, (Փոքր) Ասիայում չկայ մի տեղ, ուր բազմաթիւ հայեր չբնակուեն, և պատրիարքը յոյս ունի, թէ հայերը չեն յանձնուի՝ իրանց բնակավայրերից հալածուելու պատճառով զայրացած չերքէզների ձեռքը»։

Այս տեսակցութեան մէջ Ներսէս պատրիարքի պահանջը, թէ «ապստամբուած նահանգներին պէտք չէ տրուեն այնպիսի առանձնաշնորհումներ, որոնցից զուրկ պիտի մնան միւս նահանգներն», և նոյն իսկ հայերն ապստամբեցնելու սպառնական ակնարկն անկասկած ույժ էին տալիս Բ. Դրան քաղաքականութեան, որ ճիշտ այդ պատրուակներն էր առաջ բերում սլավների պահանջները մերժելու համար։

Յամենայն դէպս ազգային վարչութեան հետևելիք ընթացքի վերջնական որոշումը կախուած էր ազգի գերագոյն իշխանութիւնից, որ էր Ազգային Ընդհանուր Երեսփոխանական ժողովը։ Այս բանը հարկաւոր էր նաև այն տեսակէտով, որ յանուն հայ ազգին պաշտօնական դիմում լինի Թիւրք կառավարութեան, այս վերջինի հայեացքին համապատասխան ձևով։ Ըստ այնմ էլ ազգային վարչութիւնը նոյեմբերի 26-ին (1876) ամբողջ խնդիրը բերում է Ընդհանուր Ժողո-

վին և հետևեալ առաջարկութիւնն է անում։

«Նկատելով, որ Թիւրքիոյ բարեկարգական ներկայ խնդրոյն մէջ քանի մը գաւառաց բացառիկ կերպիւ արտօնութիւն և առանձնաշնորհում տրուելու մասին դրսէ գուրս առաջարկութիւն կըլլայ, առաջարկութիւն՝ որ բարեկարգութեան խնդրոյն հիմն եղող հաւասարութեան սկզբան և տէրութեան գաղափար հաւատարիմ հպատակն եղող հայոց ազգին զգացման միապէս հակառակ է, հարկ գատեց Թիւրքիոյ հայոց երեսփոխանութիւնը կազմող պատկառելի ժողովոյ կողմէ խնդրագիր մը մատուցանել Բ. Դրան յետագայ իմաստով թէ՝ ամեն կողմանէ կը լսենք, որ բարեխնամ տէրութիւնը պէտք եղած ընդհանուր բարեկարգութիւնները պիտի շնորհէ բովանդակ օսմանեան երկրին, որոյ համար ուրախ ենք, բայց միւս կողմանէ խօսքեր ալ կը պտտին, որ միմիայն մէկ քանի գաւառներու բարեկարգութիւններ պիտի տրուին խտրողաբար։ Սոյն համբաւը (լուրը) մեծապէս կը վիրաւորէ հայոց ազգն, որ օսմանեան պետութեան բազմադարեան հաւատարիմ հպատակն է և բնաւ օր մը չէ վշտացուցած իր վեհապետ տէրութիւնը, և որ աւելի իրաւունք ունի իր հաւատարմութեանը համար տէրութեան շնորհաց մասնակից ըլլալու առանց խտրութեան»։

Այսպիսի մի առաջարկութիւն՝ այնպիսի մի Քաղաքական Ժողովի կողմից, որի կարևոր անդամների ներքին կապը Բ. Դրան հետ գաղտնիք չէր ազգային երեսփոխանների համար, զարմանք պատճառեց նրանց և նրանք՝ զգուշաւոր կերպով շարժել ուզելով՝ փոխանակ անմիջապէս ընդունելու՝ աւելի խոհեմութիւն համարեցին յանձնել գործը կանխապէս «Հարստահարութեանց Յանձնաժողովի» քննութեան։ Յանձնաժողովի մէջ ոմանք—որոնց մէջ էր նախագահը՝ Մատթ. եպ. Իզմիրլեան և ատենակալները՝ Ստ. Փափազեան—շատ լաւ

ըմբռնելով, թէ ինչ աղբիւրից էր ծագում առաջարկութիւնն և ինչ էր նրա իսկական նպատակը, հակառակ էին այդպիսի մի աղերսագիր տալ Բ. Դրան, պատճառաբանելով թէ «օսմանեան տէրութիւնն ինքն արդէն մտադիր է սահմանադրական ձև ընդունելու»։ Բայց մեծամասնութիւնն այնու ամենայնիւ որոշում է ընդունել ազգ. վարչութեան առաջարկութիւնն և հետևեալ իմաստով գրաւոր ղեկուցում է ներկայացնում Ազգային Ժողովին.

«Մեր ազգը այս երկրին ժողովրդոց մէջ այն միակ ազգն է, որ իր ազգային ներքին գործոց վարչութեան համար սահմանադրութիւն մը ունի, որու շրջանակն որչափ և անձուկ ըլլայ, անոր բարիքը սկսած ենք վայելել, թէև անոր տրամադրութեանց գործադրութեան մէջ ակամայ թերութիւններ կը նշմարուին տակաւին։ Արդ՝ երբ իրմէ անկատար ազգային կազմակերպութիւն ունեցող ուրիշ ազգերը, որոնք տակաւին աղնուապետական դրութեամբ կը կառավարուին, յարմար տեսան որևէ կերպով դիմել առ Բ. Դուռն և աղերսել, որ ըլլալիք բարենորոգմանց մէջ անմասն չմնան, մեր ազգին՝ զոր օրինաւորապէս ներկայացնող մարմինն է այս ժողովը՝ լուռ կենալը կրնար այլ և այլ մեկնութիւններու տեղի տալ, ինչպէս արդէն սկսած էր. մանաւանդ այն անհիմն զրոյցները, որ մեր ազգին եռանդն ու մտաւորական կեանքը չգիտցողները սովորած են տարածել, յարմար առիթ գտած էին սա սխալ գաղափարը տալու, թէ հայը քաղաքական կենաց օտար է բոլորովին, թէ հայն իր ապագան ճակատագրին հետ կը շփոթէ և վերջապէս հայը զուրկ է այն ամեն զգացումներէ, որ զազգ մը դէպի յառաջադիմութիւն կը մղեն...։ Եթէ (հայ ազգը) լռութիւն պահէ այս պարագային մէջ, նոյն իսկ իր ազգային կենդանութիւնը կասկածի մէջ կը թողու առաջի աշխարհի և իր արժանեաց վրայ նոյն իսկ օսմանեան կա-

ռավարութեան շատ տխուր գաղափար մը կընծայէ...»։

Ազգային ժողովը դեկտեմբերի 10-ի նիստում տաք կերպով քննում էր հարցը, երբ նիրս մտաւ երեսփոխան Սարգիս Ազարբէկեան և յայտնեց. «Շատ ուշ մնացինք և անտանացինք այնպէս, ինչպէս «մանանեխ յետ ընթրեաց», որովհետև վաղը արդէն օսմանեան սահմանադրութիւնը պիտի հրատարակուի»։ Այնու ամենայնիւ Ազարբէկեան ևս համաձայնվում է, որ «Ազգային ժողովը ձայն բառնայ և պահանջէ, որ ինքն ևս մասնակից լինի, եթէ ուրիշ գաւառներուն առանձին արտօնութիւններ շնորհուին», և աւելացնում է. «Ոմանք (երեսփոխաններից) կարծեցին, թէ ուրիշ ազգաց (բուլղար, բօսնիացի և այլն) թափած արիւնը իրաւունք կուտայ առանձնաշնորհումներ իրենց համար խնդրելու։ Իմ կարծիքով՝ մենք ուզելու այնքան իրաւունքներ ունինք այսօր, որ ուրիշներուն իրաւունքէն հազար անգամ աւելի է. թէ որ տախտակէ թնդանօթ չկրցանք շինել*), այս՝ մեր ուզելու իրաւունքէն չի կրնար զրկել զմեզ։ Մենք, որ այսքան դարերէ ի վեր հաւատարմութեամբ ծառայած ենք տէրութեան և երբեք ծանր վիշտ կամ ցաւ մը տուած չենք, ինչու իրաւունք չունենանք տախտակէ թնդանօթ շինողին տրուելիք արտօնութիւնը մենք ալ վայելելու. թէ որ այս իմաստով ձայն պիտի հանենք, աղէկ. չէ նէ՝ բնաւ ձայն չհանենք և սպասենք»։ Երեսփոխանների մեծ մասն, որոնք, ինչպէս վերև յիշեցինք, կասկածանքով էին վերաբերվում Քաղաքական ժողովի այս առաջարկութեան, կռահելով թէ նա շարժվում է Բ. Դրան թելադրութեան համաձայն և չուզելով բացարձակ գործիք դառնալ սրա ձեռքը, միջին ճանապարհ է ընտրում և փոխանակ Քաղաքական ժողովի առաջարկութեան համաձայն՝ Բ. Դրան խնդրագիր-բողոք մատուցանելու,

*) Ակնարկութիւն բուլղարներին։

ինչպէս արել էին յոյները*) նոյն Բ. Դրան թելադրութեամբ, որոշում են խնդիրը յանձնել Ներսէս պատրիարքին, որ գործէ պարագաների պահանջի համաձայն։ Հետևաբար Ազգային ժողովը միաձայն քուէարկում է հետևեալ օրակարգը.

«Ժողովը վստահ ըլլալով, թէ օսմանեան կայսերական կառավարութիւնն ինչ առանձնաշնորհութիւններ, որ պիտի տայ ուրիշ ազգաց՝ նոյնը պիտի շնորհէ նաև հայոց ազգին՝ անոր արդի վիճակին բարւոքմանը համար և այս կերպով որևէ դրկանք տեղի չպիտի ունենան, որ բողոքոյ առիթ ընծայեն հայոց ազգին, այս մասին պէտք եղած միջնորդութիւնը յանձնարարելով ամենապ. սրբ. պատրիարք հօր, կանցնի իր օրակարգին»։

Այս որոշումն այնուամենայնիւ գոհ թողեց Բ. Դուռը, մանաւանդ որ դեսպանախորհրդի անաջողութիւնն սկսել էր ակներև դառնալ։ Բացի դրանից օսմանեան կայսրութեան մէջ բնակուող քրիստոնեայ տարրերը տէրութեան հետ սերտ կերպով կապելու ձգտող Միդհատ փաշան, իր համակրութեան զգաց-

*) Յոյները թէև հայոց հետ համեմատելով նուազ առիթներ ունէին գանգատուելու, բայց թիւրք կառավարութեան քաղաքականութեան հետևելով և իրանց՝ սլաւների դէմ զգացած ցեղական նախանձից դրդուած մի պաշտօնական (Սինօդի և Խառն ժողովի կողմից) բողոք ներկայացրին Բ. Դրան, որտեղ արտայայտում էին, թէ «միևնոյն կառավարութեան ենթարկուած ազգութիւնների մէջ պէտք չէ զանազանութիւն ըլլայ. բարենորոգումները պէտք է որ բոլոր հպատակների վրայ տարածուին, առանց ցեղի խտրութեան, այլապէս ապագայում կարող է խռովութիւն ծագել» («La Turquie» 3/15 դեկտեմբերի 1876)։ Յոյն լրագիրներն էլ ամենախիստ լեզուով բողոքում էին սլաւ նահանգներին առանձնաշնորհումներ տրուելուն դէմ («Նէօլօգոս», 11/23 սեպտ. 1876)։ Այս ուղղութեամբ շարժվում էր նաև բուն Յունաստանը թէ պաշտօնական միջամտութեամբ և թէ ժողովրդական միտինգներով։

մունքը ցոյց տալու համար, որոշել էր անձամբ այցելել Ներսէս պատրիարքին։ Օսմանեան նորահաստատ սահմանադրութեան հայրն և Թիւրք կառավարութեան գլուխն՝ առաջին անգամ էր այցելում հայոց պատրիարքարանը։ Նա եկաւ յունվարի 9-ին (1877), դեսպանախորհրդի վերջին նիստի հետևեալ օրը։ Այստեղ աւելորդ չենք համարում առաջ բերել այդ ազատամիտ պետական անձի և Թիւրք անկեղծ հայրենասէրի խօսած ճառը հայոց պատրիարքարանում, ուր նա պարզում է իր հայեացքն հայ ժողովրդի մասին։

«Օսմանեան կայսրութեան հպատակ զանազան ազգաց պատմական կեանքը քննելու առենիս, կը տեսնենք, որ հայոց ազգին առ օսմանեան պետութիւնն ունեցած հպատակութիւնն ու սերտ կապակցութիւնը մասնաւորութիւն մը (առանձին տեղ է գրաւում), որ նոյն ազգին՝ ինքնայօժար փափագանօք օսմանեան դրօշակին ներքև հաւաքուիլ ուզելէն է յառաջ եկած։ Անցեալ դարերուն մէջ հայերն իրենց միութեան կապը և քաղաքական դիրքը խզուելուն պատճառով աշխարհի զանազան և հեռաւոր տեղերը ցրուելով, այն ինչ ազգութիւննին ջնջուելու մերձեցած էր, Յովակիմ վարդապետին (պատրիարք) շնորհիւ օսմանեան պետութեան հովանւոյն տակ ապաստանեցան, և ահա նոյն ժամանակէն ի վեր, որ չորս հարիւր այսքան տարի կընէ, հայք իրենց կրօնքն ու ազգութիւնը պահպանելով՝ կատարեալ անդորրութեամբ ու հանգստութեամբ ապրեցան և փորձով ու արդեամբ ցոյց տուին այն բարեհամբոյր կենցաղակցութեան ոգին, որ քաղաքակրթութեան և մարդավարութեան վսեմ յատկութիւններէն մէկն է, և վերջին դարուս մէջ ալ ուսմամբ, բարոյականութեամբ և արհեստիւք իրենց ազգային բարքն ու սովորութիւնները շքեղազարդելու մասին ջանադիր գտնուեցան։ Այսպէս՝ հայոց ազգը թէ ազգային և թէ մարդկային յատկութիւնները ճանչցած և սոյն յատ-

կութեանց կարևորութիւնն զգացած ըլլալով՝ մեր վեհափառ կայսեր առհասարակ իր բոլոր հպատակաց համար շնորհած սահմանադրութեան համեմատ օսմանեան պետութիւնը կազմող բնական տարերաց մէջ կը գտնուի, և իր ընդհանուր հայրենակցաց հետ ընդգրկած օսմանեան դրօշակին յարգն ու պատիւը պաշտպանելու գործն իր ազգային եւ քաղաքական բոլոր իրաւունքներուն պիտի նախադասէ, և ես իմ հայրենակցացս հետ հաւաստի եմ, որ հայոց ազգն այս մասին ամեն աշխատութիւն նուիրելէ ետ չպիտի մնայ»։

Միդհատ փաշային պատասխանում է Ներսէս պատրիարքը, յայտնելով իր խորին շնորհակալութիւնը «ի դիմաց աշխարհիս չորս կողմը բնակող միլիօնաւոր հայոց» և յայտնում է, թէ «օսմանեան մեծ ազգն ի բնէ ասիական ըլլալուն, մեր իրաւունքն է ըսել, թէ անոր ամենէն դրացի եղբայրը հայոց ազգն է», և վերջացնում է իր խօսքը կեցցէներով սուլթան Համիդի և Միդհատ փաշայի համար։ Խօսում են նաև Խորէն եպ. Նարպէյ և ազգ. վարչութեան անդամները, գովաբանելով Միդհատ փաշայի արժանիքն և վստահեցնելով հայ ազգի հաւատարմութեան մասին*)։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

Ռուսահայոց հայեացքը։ «Մշակի», «Մեղուի» և «Փորձի» տարբեր կարծիքները։ Կ. Պօլսի հայոց վերաբերմունքը Ռուսաստանին։ Յուզում մի սուտ լրի պատճառով։ Հայկական գաւառների վերաբերմունքը Ռուսաստանին։ Ռուսական քաղաքականութիւնը Թիւրքաց Հայաստանում։ Անգլիական դեսպանի և հիւպատոս Տէյլըրի զեկուցումները հայոց մասին։ Դր. Արծրունու նպատակն և ջանքերը։ Թիֆլիսի հայոց ուղերձն Ալեքսանդր Բ. կայսեր։

Թիւրքիայի 1876 թուականի դէպքերն իրանց վրայ հրաւիրեցին բնականաբար նաև ռուսահայերի

*) «Ատենագրութիւնք Ազգ. Ժողովոյ», 1876/7։

ուշադրութիւնը։ Բայց ռուսահայոց մտաւոր կենտրոնում՝ Թիֆլիսում ևս կարծիքները տարբերվում էին այն հարցի առթիւ, թէ ներկայ հանգամանքներում Թիւրքահպատակ ազգակիցներն ինչ դիրք պէտք է բռնէին։ Շարունակե՞լ անտրտունջ տանել իր վիճակը՝ վստահ լինելով կառավարութեան խոստումների վրայ և միմիայն նրանից յուսալով բարւոքում՝ թէ՞ ձայն բարձրացնել ընդդէմ Թիւրքական իշխանութեան և օտար պետութիւնների միջոցով բարենորոգումներ պահանջել, ծագեցնելով առանձին քաղաքական «հայկական խնդիր» ևս։ Այս վերջին կարծիքը ջերմագին ընդգրկեց Գրիգոր Արծրունին, որ «Մշակի» մէջ (դեռ ևս շաբաթաթերթ) եռանդով սկսեց այս ուղղութեամբ յորդորներ կարդալ Թիւրքահայերին։ «Ամօթ կը լինի հայերին, —գրում էր նա,— եթէ նրանք իրանց իրաւունքները պաշտպանելու և նոր իրաւունքներ սեփականացնելու համար ձայն չեն բարձրացնի, մինչդեռ Թիւրքիայի հպատակ այլ ազգութիւնները իրանց անձն են զոհում, իրանց արիւնն են թափում ազատութիւն ձեռք բերելու համար. մինչդեռ մահմեդականներն անգամ ոտքի են կանգնում տէրութիւնից սահմանադրութիւն պահանջելու համար»։ Եւ նա յորդորում էր դիմել Ռուսաստանի օգնութեան։ «Միայն Ռուսաստանը,—ասում էր նա,—կարող է հասկանալ որքան օգտաւէտ է թէ ընդհանուր մարդկային քաղաքակրթութեան տեսակէտից, թէ իրան՝ Ռուսաց պետութեան օգուտների համար որքան նշանաւոր է շահել, գրաւել՝ կորած, ընկած, յուսահատուած քրիստոնեայ տարրը Փոքր Ասիայում»։ Արծրունին ուղղակի քարոզում էր, որ Հայաստանն անցնի Ռուսաց ձեռքը, որովհետև «Ռուսաստանի ձեռքում, որի կոչումն է՝ տարածել Արևելքում համաշխարհային քաղաքակրթութիւնը, այդ տոկուն, աշխատասէր, քրիստոնէութեան գաղափարին (ինքն) իրան զոհած ազգութիւնը՝ հայերը կարող էին որպէս միջոց

ծառայել Փոքր Ասիայում Ռուսաստանի նպատակը իրագործելու համար...»*)։ Դժգոհ էր Արծրունին նաև Ազգային Սահմանադրութիւնից, որի նկատմամբ շատ իրաւամբ գրում էր, թէ «այժմ, երբ Թիւրքիան գտնվում է սարսափելի քաղաքական մի կրիզիսի մէջ... յայտնուեց, որ այդ երևելի Սահմանադրութիւնը անզօր է պաշտպանել հայերին՝ տէրութեան կամայականութեան և բարբարոսութեան դէմ, անզօր է պաշտպանել Թիւրքիաբնակ հայի ամենաանհրաժեշտ, անբռնաբարելի մարդկային իրաւունքը...։ Հայերին կողոպտում են, հարստահարում են, չարչարում են, ծեծում են, սպանում են. ո՞ւր է Սահմանադրութիւնը, որ պէտք է պաշտպանէր նրան»**)։

Այսպիսի գաղափարներ ունենալով Թիւրքահայերի դրութեան մասին, դժուար չէ գուշակել թէ ինչ վերաբերմունք պիտի ցոյց տային Արծրունին և իր ոչ աննշան կուսակցութիւնը Ներսէս Վարժապետեան պատրիարքի յուլիսի (1876) նշանաւոր շրջաբերականին։ Արծրունին ամենախիստ կերպով բողոքեց. բայց դժբախտաբար այս անգամ նրա բողոքը ցանկալի լրջութիւնը չունէր, որովհետև դատողութիւնների չափազանցութիւնը թուլացնում էր նրա ներքին արժանաւորութիւնը։

Առանց ուրիշ հիմք առաջ բերելու՝ նա իր ընդդիմախօսութեան ամբողջ ոյժը կենտրոնացնում էր կրօնական հանգամանքի վրայ։ «Այդ քրիստոնեայ հովիւը,—գրում էր նա Ներսէս պատրիարքի մասին,— անհրաժեշտ է համարում քրիստոնէական ազգի գոյութեան տևողութեան համար մահմեդականութեան հովանաւորութիւնը, քրիստոնեայի պատիւը ենթարկում է իսլամի պատուի հովանաւորութեան, Աւետարանը

*) «Մշակ», 1876 թ. յուլիս 1.

**) «Մշակ», 1876 թ. նոյեմբ. 25.

ստորագրում է Ղուրանին, Փրկչի հօտի գոյութիւնը կարող է համարում Մահմեդի պաշտպանութեան...»*), մեղադրանքներ, որոնց դէմ անշուշտ պիտի բողոքէր Ներսէս։

Ճիշտ հակառակ ուղղութեանն էր հետեւում ռուսահայոց «պահպանողական» համարուող կուսակցութիւնն, որի բերանն էր համարվում Թիֆլիսի «Մեղու» լրագիրը։ Այս խումբը բոլորովին համաձայն չէր այն մտքին, թէ Թիւրքահայերի ազատութիւնը Ռուսաստանի ձեռքումն է։ «Մեղուն» հանդարտութիւն էր քարոզում և խորհուրդ էր տալիս առ հասարակ հայերին, որ «պահպանելով իրանց պարզ հայկական կեանքը՝ հեռու մնան քաղքութիւնից և զարգանալով մտաւորապէս և բարոյապէս և ապահովելով իրանց նիւթապէս՝ դառնան անհրաժեշտ կարևոր խաղաղ քաղաքացիք այն երկիրներում և տէրութիւններում, ուր նոքա բնակվում են, և վայելեն տիրապետող ազգերի հետ հաւասար քաղաքական իրաւունքներ, պահպանելով իրանց ազգայնութիւնը, լեզուն և կրօնքը, զարգացնելով սոցա՝ ժամանակի պահանջի համաձայն»։ Իսկ յատկապէս «տաճկահայերի կոչումն մինչեւ անգամ աւելի լաւ է, քան այս. Թող նոքա ուսմամբ և և բարոյապէս զարգանալու ջանան և նրանք մեծ կշիռ կը ստանան այստեղ անշուշտ, վասնզի ժամանակը պիտի պահանջէ իր հարկը և՛ տաճկից, և՛ քիւրդից, և կիսավայրենի Թիւրքմէնից, որոնք այն ժամանակ ակամայ պիտի դառնան դէպի հայերը, սրանցից ժամանակի պահանջած ուսումն և գիտութիւնը ստանալու։ Հայի այս մտաւոր և բարոյական գերազանցութիւնն անշուշտ ժամանակով կը կազմէ Տաճկաստանի մէջ երկու զօրեղ տարրեր՝ տաճկական և հայկական՝ որոնց իւրաքանչիւրը կը լրացնէ միւսի պակասութիւնն և այսպէս երկուսը միասին

*) «Մշակ», 1876 թ. № 33.

ներդաշնակութեամբ կը կազմեն մի տաճկա-հայկական քաղաքական մարմին, որպիսի կերպարանք ունեն աշխարհի երեսին շատ զօրեղ քաղաքական մարմիններ»*)։

Ահա այս տարբեր հայեացքների տէր էին ռուսահայերը Թիւրքահայերի ներկայ կացութեան և ապագայ վարմունքի մասին։ Մի մասի ծայրայեղ յոռետեսութիւնը «մահմեդականութեան հովանաւորութեան» մասին և անապարանօք Ռուսաստանի իշխանութեան ներքև հրաւիրելը հաւասարակշռում էր միւս մասի նոյնպէս ծայրայեղ լաւատեսութեան Թիւրքահայի ներկայի և մանաւանդ ապագայի մասին, երազելով հային իբրև Թիւրքի, քիւրդի և Թիւրքմէնի ուսուցիչ և մի «տաճկահայկական քաղաքական մարմնի» կազմակերպող։ Միջին ճանապարհ երկուսի մէջ ուզում էր նախ գրաւել «Փորձ» եռամսեայ հանդէսը՝ յորդորելով Թիւրքահայերին կռուով ձեռք բերել իրանց իրաւունքներն և իսկոյն աւելացնում էր. «Կռիւ ասելով չենք ուզում հասկանալ յեղափոխական միջոցները, ապստամբութիւնը և այլն։ Հայերի դրութիւնը Թիւրքիայում, նրանց վայելած իրաւունքներն և արտօնութիւնները դեռ այնքան են, որ, առանց ապստամբութեան դիմելու, կարող են բարւոքել իրանց դրութիւնը»**)։ Բայց այնուհետև «Փորձ» շատ աւելի մօտեցաւ «Մշակին», երբ սկսեց հրատարակել Գամառ Քաթիպայի (Ռափայել Պատկանեան) «Ազատ Երգերը», «Բողոք առ Եւրոպա», «Վանեցու Հայր-Մերը» և այլ այսօրինակ ազատասիրական ոգով լցուած մարտական երգերն, որոնք յեղափոխական շարժման կոչեր էին և որոնք այնքան մեծ ժողովրդականութիւն ստացան ամբողջ հայութեան մէջ, յուզելով և ցնցելով բովանդակ երիտասարդութիւնը։

Իսկ ինչ էր մտածում ինքը Թիւրքահայը ռուսա-

*) Լէօ, «Գր. Արծրունի», Բ. հատոր, էջ 429.

**) Անդ (Լէօ), էջ 441.

հայոց այս յոյզերնէրի նկատմամբ։ Թիւրքահայերն ընդհանրապէս շատ քիչ էին ծանօթ ռուսահայ [illegible]րութեան, և այն փոքր մասն էլ, որ ծանօթ էր, զարմանք էր յայտնում, թէ ինչպէ՞ս կարելի էր նրանցից պահանջել այն շարժումը, որ հիմնական գաղափարն էր Գր. Արծրունու և Գամառ Քաթիպայի, այն էլ «այժմ կամ երբէք», ինչպէս գրում էր Արծրունին։ Ռուսաստանի օգնութեանը դիմելու և մանաւանդ նրան հպատակ դառնալու միտքը՝ Կ. Պոլսի գրագէտ և ազգասէր դասի համար, այն ժամանակները, դաւաճանութեան շատ մօտ մի գաղափար էր համարւում։ Այս դասակարգն այն խորին համոզումն ունէր, թէ Կովկասի և ընդհանրապէս Ռուսաստանի հայ ժողովուրդը վաղ թէ ուշ դատապարտուած էր բոլորովին կորչելու հայութեան համար։ Երբ նրանք, այն ժամանակի «ազգասէրները», համեմատութեան էին դնում Թիւրքիայի և Ռուսաստանի հայերի ներկան և մօտալուտ ապագան, զուտ հայկական ինքնաճանաչութեան և ազգայնութեան պահպանման տեսակէտից, ամեն առաւելութիւն գտնում էին Թիւրքիայի հպատակ հայի մէջ։ Տիրում էր այնպիսի համոզում, թէ Ռուսաստանում հայն՝ իբրև հայ՝ ապագայ բոլորովին չունէր և մատնուած էր կորստեան, այնպէս, ինչպէս ուրիշ օտար երկիրներում պատահել էր արդէն։ Այս միակողմանի սխալ հայեացքի դէմ ոչ մի էական միջոց չէր գործ դրւում, նոյն իսկ էջմիածնում, ուր գրեթէ նոյն գաղափարն էր իշխում բարձրագոյն կղերական շրջանում...։ Կ. Պոլսում թէ աւանդօրէն և թէ գրականութեան միջոցով տարածւում էին ռուսահայոց ազգային գործերի կամ հասարակական գործիչների մասին՝ յաճախ թերի և սխալ այնպիսի տեղեկութիւններ, որոնք Գ. Արծրունիների առաջարկած ռուսական հովանաւորութիւնն ամենևին գրաւիչ չէին դարձնում։

Կ. Պոլսի հայոց մեծամասնութեան՝ ռուսահայերի

և նրանց գործերի մասին ունեցած հմտութեան աստիճանն որոշելու համար աւելորդ չէ յիշել այն ժամանակ տեղի ունեցած մի դէպք։ Երեք հայ լրագիր, սկսելով «Նորագիր» թերթից, հետագրի ձևով յանկարծ լուր հրատարակեցին, թէ ռուս կառավարութիւնը կաթողիկոսին աքսորել է Սիբիր, Կովկասն ապստամբուել է, մեծ իշխան Միխայիլ Նիկոլայեվիչը թագաւոր է հրատարակուել յատկապէս Կովկասի վրայ, որ անջատուել է Ռուսաստանից և այլն։ Այս լուրը տալողները յորդոր էին կարդում զէնք առնել և օգնութեան փութալ կովկասցի հայերին ընդդէմ ռուսական իշխանութեան...։ Եւ մի քանի օր այս ծիծաղելի տեղեկութեան շուրջը յուզւում էր հայ ամբոխի միտքը։ Կային ոգևորուողներ և մարտական փող հնչեցնողներ։ Բարեբախտաբար գտնուեցին նոյն պոլսական հայոց մէջ մարդիկ, նաև լրջամիտ հրապարակագիրներ, ինչպէս Կ. Փանոսեան («Մանզումէի էֆքեար» հայատառ թիւրքաբարբառ թերթի խմբագիրը), որ Արծրունուն արժանի անողոք ոճով ցոյց էր տալիս իր լրագրում յիշեալ լրի բովանդակ անհեթեթութիւնը։ Գործը մինչև այնտեղ հասաւ, որ թէ ազգային վարչութեան և թէ կառավարութեան կողմից պաշտօնական հերքումներ տալով վերջապէս կարելի եղաւ հանդարտեցնել գրգռուած ոգիները։ Կ. Պոլսի օտար լրագիրներն իրաւացի կերպով սկսեցին ծաղրել հայ խմբագիրներին և մասամբ նաև հայ հասարակութիւնը*)։

---

*) Երբ կեղծիքը բոլորովին պարզուեց, օտար լրագիրների այդ ծաղրանքներին իբրև պատասխան գտնում ենք երիտասարդ Մինաս Չերազի մի նամակը, որտեղ նա ի մէջ այլոց գրում էր. «Ես առաջիններից մէկն եղայ յայտարարելու համար թէ Կովկասում հայոց ապստամբելը մեծապէս կասկածելի է...։ Հայը գիտէ թէ ինչ արժէ ապստամբութիւնը։ Ի՞նչ կը շահէին յոյները առանց Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի զինեալ աջակցութեան...։ Բայց թող չկարծեն թէ հայը զգօնութեան պատճառներ չունի.

Սակայն երբ այսպէս էր Կ. Պօլսում, ինչ էր մտածում բուն երկիրը, Հայաստանը, և ինչպէս էր այնտեղ իրերի վիճակը։ Ընդհանուր էր արդեօք ռուսասիրութիւնը հայ ժողովրդի մէջ, մանաւանդ գաւառներում, և ինչ քաղաքականութեան էր հետևում այնտեղ Ռուսաստանը։ Անգլիական դիւանագէտները, որոնք առիթ չէին կորցնում իրանց շրջանում կատարուող ամէն մի լուրջ դէպքի և հոսանքի մասին անմիջապէս տեղեկութիւն տալ իրանց կառավարութեան, սկսել էին ուշադրութիւն դարձնել 1876-ին հայոց մէջ տիրող դժգոհութեան վրայ ընդդէմ Թիւրք կառավարութեան և միևնոյն ժամանակ հետևում էին, թէ ինչ զգացմունք էին տածում նրանք Ռուսաստանի նկատմամբ։

Ահա ինչ էր հեռագրում Կ. Պօլսի անգլիական դեսպանը սեպտեմբեր 11/23-ին (1876) Լօնդօն.

«Հայերի մէջ արտայայտուեց դժգոհութեան շարժում, որ կարող է լուրջ կերպարանք ստանալ։ Նրանք իրանց գանգատները ներկայացրին Բ. Դրան (խօսքը Հարստահարութեանց Տեղեկագրի մասին է), և լսում եմ, որ մտադիր են նոյնիսկ սուլթանին դիմել»։ Այս գանգատների արդար լինելը հաստատելուց յետոյ դեսպանը շարունակում է. «Մի բարձրաստիճան հայ անձնաւորութիւն, որ ամենևին կապ չունի կառավարութեան հետ, ինձ յայտնեց այսօր, որ թէպէտ Բ. Դուռն է սկզբնական պատճառն իր ազգակիցների (հայերի) այժմեան դժգոհութեան, բայց տարակոյս չկայ, որ ներկայ յուզումը ռուսական գրգռումների արդիւնք է։ Նա կրկնեց, ինչ որ ես արդէն լսել էի. այն է, որ հայոց ուսեալ դասակարգի մեծամասնութիւնը խիստ կերպով հակառակ է Ռուսաստանին, բայց ժողովուրդը, բազմութիւնը, որոնք իսկապէս տանջւում են այդ հարստահարութիւններից, այդպէս չեն և հաւատացած են, որ եթէ փոփոխութիւն լինի (այսինքն եթէ ռուսական տիրապետութիւնը գայ) աւելի լաւ կը լինի»)։*

նա գուցէ տասն անգամ աւելի տեղի ունի գանգատուելու, քան թէ օրինակի համար բուլգարները, բայց նա գիտէ, որ շատ չարիք կայ, որ միայն ժամանակը կարող է բուժել...։ Նա այնպէս է մտածում, թէ իսկական ազատութիւնն այն է, որ առաջ է գնում աշխատութեան մեծ բանակի գլխին կանգնած...։ Ահա այն նկատողութիւնները, որոնց հիման վրայ ես այնքան անհաւատալի եմ համարում հայկական ազատամտութիւնը՝ Ռուսաստանում, որքան Թիւրքիայում և Պարսկաստանում»։ («Courrier d'Orient» (Կ. Պօլսում), 1876 թ. օգոստ. 2)։

Բուն երկրի, Հայաստանի տնտեսական և քաղաքական կացութեան, ժողովրդի տրամադրութեան և այնտեղ ռուսական գործակալների դերի մասին մի ընդարձակ և հետաքրքրական զեկուցում ունի Էրզրումի անգլիական հիւպատոսը՝ Տէյլըր (J. C. Taylor), *որ աշխատել է անկողմնապահ կերպով պատկերացնել իրերի վիճակը։ Այս տեղեկագիրը թէև վերաբերում է 1869-ին, բայց նա անտարակոյս պահել է իր թարմութիւնն և հարազատ նկարագրութիւնը նաև 1876—1877-ի շրջանի համար։*

«Ամեն տեղ, այս գաւառներում,—գրում է հմուտ զեկուցագրողը,—հայերը դառն կերպով գանգատւում էին Թիւրք կառավարութեան դէմ և միևնոյն ժամանակ անչափ գովում էին Ռուսաստանը, բայց և բաց յայտնելով թէ որոշել էին այնտեղ գաղթել։ Այս թիւր միտքը հետևանք է իրանց կղերի մշտական դրդման, բայց պէտք է խոստովանել, որ հայերը դժգոհութեան համար լիուլի պատճառներ ունեն, որոնք են՝ Թիւրք կառավարութեան իսկապէս յոռի վարչական սիստեմը, հարկերի անհաւասար բաշխումը, նրանց՝ ինչպէս և տասանորդի՝ չափազանց անկարգ հաւաքումն, արդարութեան կատարեալ բացակայութիւնը, անընդհատ կատարուող զեղծումներն և քրիստոնեաների՝ իսլամնե-

*) «Blue Book», Turkey, № 1 (1877), էջ 375.

րի հետ հաւասար նկատուելու մասին պահանջման բացարձակօրէն անգործադրելի լինելը...: Եւ մի պետութիւն (Ռուսաստան) ոչինչ չէ խնայում հայերի համակրութիւնը գրաւելու համար: Էրզրումի վիլայէթի բնակիչներն՝ իբրև ռուսաց սահմանակից՝ աւելի ունեն այս զգացմունքը, քան Դիարբեքիրի և Խարփութի հեռաւոր նահանգների հայերն, որոնք մեծ մասամբ երկրագործներ են: Սակայն չեմ կարծում, թէ այստեղ, Էրզրումում, դրամատէրերից որևէ մէկն աւելի կամ պակաս անկեղծօրէն այս զգացմունքը կրէ, չնայելով որ նրանց մեծ մասը՝ Թիւրքահպատակ լինելով հանդերձ՝ ռուսական անցագիրներ ունեն: Այս անցագրի առուտուրը շատ լաւ յայտնի է և ընդարձակօրէն տարածուած է, թէև՝ որքան հնար է՝ գաղտնի կերպով է կատարվում: Իմ (հիւպատոսական) շրջանում ոչ մի մեծ քաղաք ազատ չէ այս կեղծ-ռուսներից:

«Ռուսական հիւպատոսի՝ տեղական կառավարութեան հետ իր յարաբերութեան մէջ՝ բռնած հրամայողական դիրքը, չափազանց պահանջումները և ցուցամոլական ընթացքն, որոնցից հեռու են միւս հիւպատոսները, և Թիւրք պաշտօնեաների ռուսական հիւպատոսի հանդէպ ցոյց տուած ծառայական վարմունքը՝ տգէտ ժողովրդի մէջ չափազանց բարձրացնում են ռուսական հիւպատոսի կամ աւելի ճիշտ՝ նրա ներկայացրած տէրութեան կեղծ արժէքը: Եւ երբ ժողովրդի մէջ այս ձևով աւելի և աւելի ուժեղանում է այն միտքը, թէ միմիայն Ռուսաստանն է, որ կարող է կամ ուզում է նրան օգնել, ի հարկէ այդ մարդիկն իրանց վէճերի ժամանակ նրան են դիմում և ձեռք են բերում այնպիսի թղթեր (անցագիրներ), որոնք իբր թէ իրաւունք են տալիս մի օտար տէրութեան՝ միջնորդելու և պաշտպանելու նրանց: Ռուսական հիւպատոսի այս ընթացքն, որքան էլ Կ. Պօլսի դեսպանատունն անհամաձայն լինի դրան, կարող եմ հաստատել

թէ հաւանութիւն է գտնում Թիֆլիսի կովկասեան կառավարութիւնից, որից և նա ուղղակի կախում ունի...: Ես հարկ համարեցի տեղեկագրել այս նահանգի հայերի մէջ տիրող զգացմունքն, որովհետև հայերն իրանց թուով, դիրքով և դրամունքով ամենից ազդեցիկ դասակարգն են այստեղ. և որովհետև ներկայ պարագաներում ռուսական շահերի տեսակէտից այս զգացմունքը նպաստաւոր է, հետևաբար նա վտանգաւոր է այս պետութեան (Թիւրքիայի) համար: Այս թշնամական զգացմունքի դէմ ազդու կերպով դարման տանելը Թիւրք կառավարութիւնից է կախուած: Եթէ սա արմատական միջոցներ ձեռք առնելով ժողովուրդը գոհացնէ, նրան հարստահարողներին խստօրէն և անկողմնապահ կերպով պատժէ, տասանորդի և այլ տուրքերի ժողովման և գանձման սիստեմը կարգի բերէ և իրօք գործադրէ այն բազմաթիւ ֆէրմանները, որոնք արձակուած են ի նպաստ քրիստոնեաների, ես վստահ եմ, որ տիրող դժգոհութիւնը կը վերանայ և իր հպատակների մէջ հաւատարմութեան զգացմունքը կը հաստատուի և հետզհետէ կամրանայ: Այլապէս նրանք, հարկադրուած, կը մղուեն ծայրայեղութեան և՝ վաղ թէ ուշ՝ կամ դաւաճանութեան կը դիմեն կամ բացարձակ ապստամբութեան...»*):

Ահա ինչպէս էր պատկերանում հայ ժողովրդի վիճակը գաւառներում ըստ օտար խորաղնին և անկողմնակալ դիտողի: Այսպիսի հանգամանքներում շատ չէր սխալվում «Մշակի» թղթակիցն, երբ 1876-ին գրում էր Էրզրումից. «Փոքր Ասիայի հայերի ցանկութիւնն էր միանալ ռուսաց պետութեան հետ, հանգիստ ապրել եւ հաստատ օրէնքներ վայելել կարողանալու համար...»**):

---

*) «Blue Book» Turkey, № 16 (1877), էջ 31—32:

**) «Մշակ», 1876, № 36:

Գր. Արծրունին հիմնուելով ուրեմն այն տեղեկութիւնների վրայ, որ նա ստանում էր բուն երկրից, պաշտպանում էր ռուսական հովանաւորութեան գաղափարն, որ, ինչպէս տեսանք, օտար չէր արդէն Թիւրքիայի հայաբնակ գաւառներում և որի ճշդութեան վկայ են հանդիսանում նաև անգլիական հիւպատոսները։ Բայց միայն հայ լրագրի մէջ, այն էլ հայ ընթերցողների համար, արծարծելով այս միտքը՝ նա չէր կարող մեծ տարածում գտնել։ Պէտք էր ռուս հասարակութիւնն եւ ծանօթացնել, ռուս լրագրութեան մէջ եւ յուզել խնդիրն, որպէսզի կարելի լինի աւելի ազդեցիկ շրջանների հետաքրքրութիւնը շարժել Թիւրքահայերի վիճակի վրայ։ Այս տեսակէտով էլ Արծրունին, 1876-ից սկսած, եռանդուն կերպով յուզեց այս խնդիրը նախ ռուս և ապա մասամբ նաև եւրոպական մամուլի մէջ։ Այն տարին (1876) Արծրունին, գրում է նրա հարազատ պատմագիրը, «յուլիսի վերջից սկսեց տպագրել «Тифлисскій Вѣстникъ» լրագրում մի շարք յօդուածներ՝ «Հայերի դրութիւնը Թիւրքիայում» ընդհանուր վերնագրով։ Դա մի բարեխիղճ, մանրամասն ուսումնասիրութիւն էր, հիմնուած 1872-ի այն տեղեկագրի վրայ, որ հրատարակել էր Կ. Պօլսի հայոց պատրիարքարանը, և լուսաբանուած այն տեղեկութիւններով, որ տալիս էր Կ. Պօլսի հայոց մամուլը...»*)։ Այնուհետև նա հրատարակեց ռուսերէն մի փոքր գրքոյկ «Восточный вопросъ» (Արեւելեան հարց) վերնագրով, որտեղ նա իր սովորական կրակոտ ոճով, բայց նաև փոքր ինչ չափազանցրած պատճառաբանութեամբ, անհրաժեշտ էր գտնում, որ եթէ Եւրոպան ուզում է արեւելեան խնդիրը լուծել, պէտք է որ ազատէ ոչ միայն սլաւոններին թիւրքական ճնշող լուծից, այլ նաև Փոքր Ասիայի քրիստոնեաներին։ Արծրունու այս եռանդուն

*) Լէօ. «Գր. Արծրունի», Բ. հատ., էջ 463.

ջանքերի շնորհիւ «ռուսաց մամուլի մէջ սկսեց փոքր առ փոքր երեւան գալ համակրութեան մի հոսանք հայերի վերաբերմամբ»*)։ Այս միջոցներին է, որ Բրիւսէլի «Le Nord» լրագիրն, որ համարվում էր Ռուսաստանի բերանն Եւրոպայում, հրատարակում էր զանազան լրեր և փաստեր, որոնք նպատակ ունէին ապացուցանել, թէ Փոքր Ասիայի քրիստոնեաների, յատկապէս հայերի համար թիւրք տիրապետութեան ճնշումն այնքան անտանելի էր, որչափ եւրոպական մասի քրիստոնեաների, սլաւ ցեղերի համար»**)։

Գր. Արծրունու՝ իր մտադրած նպատակի համար, վերոյիշեալ հրապարակագրական դիմումներից յետոյ ամենալուրջ քայլը՝ ռուսաց կայսեր տրուած հայկական ադրեսագիրն էր, որ ամբողջապէս իր նախաձեռնութեան արդիւնքն էր։ Երբ նոյն տարին Աղեքսանդր Բ. կայսրը Մոսկվայում իր արտասանած ճառի մէջ ի լուր աշխարհի յայտնեց, թէ Կ. Պօլսի դեսպանախորհրդի անաջողութեան մասնակցելու դէպքում ինքն որոշած է նոյն իսկ միայնակ զէնքի դիմել Թիւրքիայի սլաւների ազատութեան համար, «կայսրի այդ խօսքերին արձագանգ տուեց ամբողջ Ռուսաստանը. ամեն կողմից ուղերձներ ուղարկեցին թագաւորին, որոնց մէջ յայտնում էին ռուս ժողովրդի պատրաստականութիւնն ամեն զոհողութիւն յանձն առնելու, որ քրիստոնեաների ազատութեան գործը կայսրը տանէ այնպէս, ինչպէս Ռուսաստանի պատիւն է պահանջում։ Թիֆլիս քաղաքն էլ, տեղական (վրաց) ազնուականութիւնն էլ ուղերձներ էին պատրաստում։ Արծրունին օգուտ քաղելով դէպքից նախաձեռնող հանդիսացաւ, որ մի առանձին ուղերձ էլ Թիֆլիսի հայերը ներկայացնեն։ Ամբողջ օրերով նա կառք նստած այս ու այն կողմն էր

*) Անդ, էջ 470.
**) «С. Петерб. Вѣд.», 1876, № 241.

գնում տարագրութիւններ հաւաքելու»*)։ Ուղերձը պատրաստուեց և մի պատգամաւորութեան ձեռքով դեկտեմբերի 3-ին (1876) Թիֆլիսի պալատում ներկայացուեց կայսեր եղբօր, Կովկասի փոխարքայ մեծ իշխան Միխայիլ Նիկօլայեւիչին։ Պատգամաւորութիւնը բաղկացած էր 9 հոգուց, որոնք զանազան շրջանի և դասակարգերի ներկայացուցիչ էին։ Այս ձեռնարկութեան փոքր ի շատէ պաշտօնական գոյն տալու համար՝ իբրև Թիֆլիս քաղաքի հայ հասարակութեան ուղերձ՝ պատգամաւորութեան նախագահ էր հրաւիրուած Թիֆլիսի այն ժամանակուայ քաղաքագլուխը՝ Դիմիտրի Ղիպիանի, որ ազգով վրացի էր, բայց ջերմ համակրող հայոց**)։

Ուղերձի բովանդակութիւնը հետևեալն էր.

«Ձերդ Կայսերական Բարձրութիւն,

«Բնակուելով ռուսաց կառավարութեան հովանու ներքև և վաղուց արդէն վայելելով մեզ համար թանգագին պետութեան հովանաւորութեան տակ՝ հանգստութեան և խաղաղութեան բոլոր պարգևները, մենք, Թիֆլիս քաղաքի բնակիչ հայերս, դրդուած քրիստոնէական մարդասիրութեան զգացմունքից, չենք կարող անտարբեր մնալ դէպի այն աներևակայելի տանջանքներն, որ կրում են Ասիական Թիւրքիայի սահմաններում բնակուող մեր ցեղակիցներն և համադաւաններն, ուր ոչ անհատն, ոչ սեփականութիւնն, ոչ կրօնն, ոչ քրիստոնեաների կեանքն և ոչ նրանց ընտանիքի, կանանց և աղջիկների պատիւն ոչնչով չէ ապահովուած։

«Գիտենալով թէ որքան մեր սիրելի Թագաւորն և ամբողջ Ռուսաստանն անսահման համակրում են

*) Լէօ, «Գր. Արծրունի», Բ. հ., էջ 471—2.

**) Է. Ակնունի, «Կովկասեան վէրքեր», էջ 267.

Թիւրքահպատակ քրիստոնեաների վիճակին, մենք թէ արիւնակից և թէ կրօնակից մեր եղբայրների դրութեան բարւոքման ամբողջ յոյսը դնում ենք Ռուսաստանի հզօր հեղինակութեան ուժի վրայ և ապաւինում ենք միմիայն Ինքնակալ Կայսրին։ Քրիստոնէական արդարասիրութեան խոր ցաւակցութեան զգացմունքը դէպի մեր եղբայրները դրդեց մեզ դիմել Ձերդ Կայսերական Բարձրութեան Օգոստափառ միջնորդութեան և ամենահաւատարմաբար խնդրել Ձերդ Բարձրութեանն արկանել Թագաւոր Կայսրի ոտների մօտ մեր ամենահպատակ խնդիրը՝ պաշտպանել Իր հզօր ձեռքով, Թիւրքիայի այլ քրիստոնեաներին հաւասար կերպով, մահմեդականութիւնից միշտ ճնշուած հայոց ազգն, այն միջոցներով, որ Նախախնամութիւնը յանձնել է Նորին Մեծութեանը և որ Նա աւելի յարմար կը համարի»*)։

Փոխարքան սիրով ընդունեց հայկական ուղերձն, յայտնեց իր համակրանքն հայոց միջնորդած նպատակին և ուղարկեց Ալեքսանդր Բ. կայսեր, որից շնորհակալութիւն ստացուեց յանուն Թիֆլիսի հայ հասարակութեան՝ այս ուղերձի համար։

Այս դիմումը Կ. Պօլսի հայոց մեծամասնութեան գոհութիւն պատճառեց **)։

*) «Մշակ», 1876, դեկտ. 16.

**) «Մշակ», 1876, № 49.

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

Դեսպանախորհրդի գումարումն և անյաջող վախճանը.—Օսմանեան մեծ խորհրդակցական Ազգային Ժողովը.—Երկու միջադէպ.—Դեսպանների հեռանալը.—Հայերի ուղերձն անգլիական դեսպանին.—Տպաւորութիւնը գաւառներում. — Գրիգոր Օտեանի բանակցութիւնները Լօնդօնում, Օսմանեան Սահմանադրութիւնը միջազգային կապակցութեամբ ապահովելու մասին. — Միդհատ փաշայի հրաժարականն և աքսորը.—Համիդական ռէժիմի առաջին արտայայտութիւնը.—Աբդիւլ Համիդի կասկածոտութիւնը.—Վահան էֆէնդու պաշտօնը Լօնդօնում. — Բարձրաստիճան հայ պաշտօնեաները։

Օսմանեան Սահմանադրութեան հրատարակումը բոլորովին արգելք չեղաւ դեսպանախորհրդի (conférence) գումարման և նա սկսեց իր գործունէութիւնը։ Թէ ինչ հայեացքով էին առաջնորդվում եւրոպական պետութիւններն այս հարցում, այդ երևում է նրանից, որ նոյն իսկ ամենից բարեացակամ համարւող պետութիւնն՝ Անգլիան իր պատգամաւորներին տուած հրահանգում ասում էր թէ եւրոպական Թիւրքիայի քրիստոնեաներին պէտք էր տալ «մի տեսակ տեղական ինքնավարութիւն (local self government), որ նրանց բարեկեցութեան ամենալաւ գրաւականը կը լինէր և միևնոյն ժամանակ ճանապարհ կը բանար ամբողջ երկրի համար մի բարենորոգեալ և սահմանադրական Թիւրքիա հաստատելուն»*)։ Այսպիսի դիտաւորութիւններով խորհրդի ժողովուած մեծ լիազօրները «տեղական ինքնավարութեան» երկու ծրագիր պատրաստեցին, մէկը Հերսէք-Բօսնիայի և միւսը Բուլգարիայի համար, հիմնուած՝ ապակենտրոնացման սկզբունքի վրայ։ Թէ սուլթան Համիդ*), թէ սադրազամ Միդհատ փաշան և թէ առհասարակ այս վերջինի խումբն ու նրանց ազդեցութեան տակ գործող բոլոր Թիւրք պետական անձերը սաստիկ ընդդիմացան այս ծրագրին, իբրև Թիւրքիայի արժանապատուութեան ծանր վիրաւորանք համարելով և բացէ ի բաց մերժեցին։ Այս մերժման ժամանակ նրանք դեռ այն ծածուկ յոյսն ունէին թէ Անգլիայի բարեացակամ միջամտութեան շնորհիւ գործը պատերազմի չի յանգի, մանաւանդ, որ իրանք քանիցս հանդիսաւորապէս յայտարարել էին թէ դեսպանախորհրդի ծրագրած բոլոր բարեկարգութիւններն Թիւրք կառավարութեան ձեռքով անշուշտ պիտի գործադրուէին բոլոր նահանգներում, ամբողջ Թիւրքիայում։ Թէև նրանց այս հանդիսաւոր և անընդհատ կրկնւող խոստումներին հաւատացող չկար այլ ևս, բայց եւրոպական համագումարի ներքին համերաշխութիւնը չվտանգելու և Թիւրքիային՝ բարեացակամութեան վերջին ապացոյցը տալու նպատակով դեսպանախորհուրդն երկար բանակցութիւններից յետոյ հարկաւոր համարեց զիջել և իր 8-դ նիստում կանգ առաւ 2 էական պայմանի վրայ, իբրև նուազագոյն պահանջներ, որոնք ինքն ըստ ինքեան շատ թեթև էին, բայց այն առաւելութիւնն ունէին որ եւրոպական հսկողութեան սկզբունքն էին մտցնում իբրև գործադրութեան երաշխաւորութիւն։ Այն ժամանակ թէ պահանջողները (եւրոպացիք) և թէ մերժողները (Թիւրքերը) մեծ կարևորութիւն էին տալիս այդ հսկողութեան սկզբունքին. ապագան դժբախտաբար ցոյց

*) Blue book. Turkey № 2 (1877) էջ 9.

*) Լօրդ Սալիսբըրի պատմում է թէ Աբդիւլ Համիդի հետ իր մասնաւոր ունկնդրութեան միջոցին Համիդը նրան յայտնել է թէ եթէ ինքը ընդունի դեսպանախորհրդի ծրագիրն նոյն իսկ իր կեանքը վտանգի մէջ կը դնէ։ Իսկ բուլգարական կոտորածի մասին խօսելիս Համիդ ասել է թէ դրա պատճառն եւ պատասխանատուն Ռուսաստանն է (?!)...։ Blue Book. Turkey № 2 (1877) էջ 174.

տուաւ, որ այդ՝ այնչափ հանդիսաւոր կերպով և բարենորոգումների իրագործման միակ կորական միջոց համարուող «հսկողութեան» իրաւունքն ոչ մի դրական երաշխաւորութիւն չէր ընծայում, մանաւանդ երբ հսկողները ներքին խուլ հակառակութեամբ շարունակ պառակտուած էին, որից վարպետօրէն օգտվում էր խորամանկ սուլթանը...: Վերոյիշեալ երկու պայմաններն էին. 1, Բուլղարիայի, Բոսնիայի և Հերցեգովինայի վալիների ընտրութիւնն առաջին 5 տարին՝ եւրոպական պետութիւնների հաւանութեամբ պիտի կատարուէր և 2, երկու վերահսկող յանձնաժողով պիտի նշանակուէր պետութիւնների կողմից, պայմանաւորուած կարգերի գործադրութեան վրայ հսկելու համար: Եթէ այս վերջնական պայմանները չնդունուէին դեսպանախորհուրդը պիտի լուծուէր, ամբողջ պատասխանատուութիւնը թողնելով Թիւրքիայի վրայ*):

Բարձրագոյն Դուռն այս պայմաններն եւ չուզեց ընդունել**) և որպէսզի պատասխանատուութիւնն ամբողջապէս իր վրայ չծանրանայ, Միդհատ փաշա մի օր վերջը մի ընդհանուր Խորհրդակցական Ժողով հրաւիրեց, որին մասնակցել կոչուած էին 237 հոգի գլխաւո-

*) Դեսպանախորհրդի գումարման ժամանակ Լորդ Սալիսբըրիին ներկայացուեց անգլիական քահանայ միստր Քըթիսի ձեռքով «յանուն Թիւրքիայի հայերի» մի անգլիերէն գրքոյկ՝ «Հայերն եւ Արեւելեան խնդիրը» վերնագրով, Լոնդոնում հրատարակուած, որի նպատակն էր անգլ. պատուիրակի միջոցով դեսպանախորհրդի ուշադրութիւնը հրաւիրել նաև հայոց վիճակի վրայ: Բայց ինչպէս տեսինք, դեսպանախորհուրդն իր սկզբնական ծրագրից շեղուեց, այն է զբաղուեց միմիայն եւրոպական Թիւրքիայի քրիստոնեաների հարցով:

**) Լորդ Սալիսբըրի տեղեկացնում է Լորդ Դէրբիին թէ տարակոյս չկայ, որ սուլթանն ուզում էր ընդունել պետութիւնների պայմանները բայց մեծ վեզիրը (Միդհատ փաշան) մերժելու կողմն էր և պետութիւնների առաջարկութիւններն այնպիսի ձեւով ներկայացրեց Խորհրդակցական Ժողովին, որ նրանց մերժումը կանխաւ որոշուած բան էր: Blue Book, Turkey № 2 (1877) էջ 310.

րաբար պետական աստիճանաւորներից և Բ. Դրան նախկին և ներկայ բարձր պաշտօնեաններից: Այս ժողովին ներկայացուեց դեսպանախորհրդի վերոյիշեալ վերջնագիրը: Խորհրդակցութեան հրաւիրուած էին նաև քրիստոնեայ պատրիարքները: Բայց թէ Ներսէս պատրիարքը, թէ հայ կաթոլիկ պատրիարքն և թէ յունականը վատառողջութիւն պատճառ բերելով անձամբ ներկայ չգտնուեցան, այլ ուղարկեցին պատրիարքական փոխանորդներին: Դժուար էր ինարկէ սպասել, որ հաւաքուածները տիրող կառավարութեան հայեացքին հակառակ կարծիք յայտնէին. գտնուեց սակայն մէկն, որ չվախեցաւ խօսել այնտեղ ի նպաստ խաղաղութեան և եւրոպացիների առաջարկութեան. այդ մէկը քաղաքական հայոց ազգապետն էր, Յակոբ Մաթէոսեան, որին համամիտ գտնուեցան միայն 2 թիւրք: Կառավարութեան սրտին մօտ և ընդդէմ եւրոպական ծրագրին խօսեցան հայոց պատրիարքական փոխանորդը՝ Յովհ. քհ. Մկրեան և հայ-կաթոլիկաց հակահասունեան խմբի պարագլուխ պերճախօս Գր. վարդապետ Էնֆիաճեան: Յոյները-թէ պետական պաշտօնեայ և թէ պատրիարքի ներկայացուցիչ սինոդական՝ ջերմ կերպով նոյնպէս պաշտպանեցին կառավարութեան հայեացքը: Եւ այսպէս ընդհանուր ժողովը գրեթէ միաձայն որոշեց մերժել դեսպանախորհրդի վերջնական պայմաններն, յանձն առնելով նոյն իսկ պատերազմի վտանգը Ռուսաստանի հետ: Այս որոշման վրայ յենուելով Բ. Դուռը բացարձակապէս մերժեց եւրոպական առաջարկութիւնն և դեսպանախորհրդի անդամ լիազօրներն այլ ևս ուրիշ միջոց չգտնելով փակեցին ժողովը 1877 Յունվար 8/20-ին և ցրուեցան:

Թէ ինչ ինքնավստահութիւն էր տիրում այն միջոցին Թիւրք բարձր շրջաններում երևում է ի միջի այլոց հետևեալ երկու դէպքերից:

Դեսպանախորհրդի գործունէութեան ընթացքում

երբ Թիւրք լիազօրների, Սաւֆէթ փաշայի և Էդհէմ փաշայի պատասխաններից և առարկութիւններից պարզւում է թէ Բ. Դ. ամենևին տրամադիր չէ ընդունելու եւրոպական առաջարկութիւնները, ռուսական դեսպանը մի վերջին փորձ է անում համոզելու Թիւրք կառավարութիւնն և դիմում է անձամբ սուլթան Համիդին, խորհուրդ տալով նրան, որ առիթ չտայ պատերազմի։ Համիդը խրոխտաբար մերժում է՝ յայտնելով թէ դեսպանախորհրդի առաջարկած պայմանները նա նկատում է իբրև ոտնձգում իր միապետական իրաւունքների դէմ և աւելացնում է. «Օսմանցիք շատ լաւ գիտեն թէ իրանց համար ո՞րն է օգտակար և ո՞րն է վնասակար։ Թէ մահմեդականներն և թէ քրիստոնեաներն այժմից պատրաստ են յարձակումն ետ մղելու։ Հասարակաց կարծիքն այնքան վրդովուած է և իմ հպատակների մէջ այնքան մեծ միաբանութիւն կայ, որ նոյն իսկ բուլղարները, որոնք Ռուսաստանի կարծիքով իբր թէ հարստահարութեան են ենթարկուած, ցանկանում են իրանց միւս հայրենակիցների հետ միասին պատերազմել թշնամու դէմ և նրանք (բուլղարներն) իրանց այս բաղձանքի ապացոյցներն էլ տուին...»*)։

Երկրորդ միջադէպը հետևեալն է։ Դեսպանախորհրդի նիստերից մէկում մի տաք վիճաբանութիւն է պատահում ֆրանսիական և Թիւրք լիազօրների մէջ։ Ֆրանս. լիազօր կոմս Շօդօրդի երկարօրէն կանգ էր առել Բուլղարիայում կատարուած վերջին սոսկալի գազանութիւնների վրայ, ապացուցանելու համար թէ եւրոպական հսկողութիւնը Բուլղարիայում՝ անհրաժեշտ էր։ Էդհէմ փաշան խիստ լեզուով պատասխանեց կոմսին՝ յիշեցնելով փոխադարձաբար Ֆրանսիայում կատարուած բռնութիւնները Բարթողիմէոսի գիշերի

*) Սուլթանի Ա. Քարաթոդորի պաշտօնական նամակը Միդհատ փաշային (22 Զիլհիջջէ 1293)։ Տէս—Ալի Հայդարի «Միդհատ փաշանըն հայաթը սիյասիյէսի» էջ 245։

կոտորածներից և dragonnades *)-ի հալածանքներից սկսած մինչև 1871 Պարիզի հասարակուրդի (Commune) գործած արհաւիրքը։ Շօդօրդի բնականաբար դայրացաւ. այն ժամանակ միւս լիազօրները մէջ մտնելով հազիւ հազ վերջ տուին նրանց ընդհարման։ Այս բուլղարական կոտորածի պատճառով կրած անընդհատ բողոքներից և յարձակումներից դառնացած, Բ. Դուռն այն միջոցին մինչև անգամ մի մեծ յիշատակագիր էր պատրաստել Ռուսաստանում մահմեդականների վրայ գործ դրուած բռնութիւնների մասին...**)։

Առ հասարակ այն միջոցին բոլոր Թիւրք պետական անձերը մեծ ջանքեր էին անում մի կերպ արդարացնելու բուլղարական գազանութիւնները։ Նոյն իսկ նոր կամ երիտասարդ Թիւրքերն, իրանց պարագլուխ Միդհատ փաշայով միասին, նեղ ազգայնական ոգով տոգորուած, չէին կարողանում անկողմնապահ և արդար լինել այսօրինակ հարցերում ***)։

Դեսպանախորհրդի կրած անյաջողութիւնից յետոյ ոչ միայն յատուկ լիազօրներն, այլ և բոլոր մեծ դեսպանները թողին Կ. Պօլիսը հեռացան, իբրև իրանց դժգոհութեան նշան, իրանց փոխարէն գործակատարներ (chargé d'affaires) թողնելով։ Հետաքրքրական է, որ

*) Նանտի հրովարտակի ետ առնուելուց յետոյ դրագոն (dragon) զօրքերի՝ ֆրանսիացի բողոքականների վրայ գործ դրած բռնութիւնները. (ԺԷ. դար)։

**) Օսման Նուրի. «Աբդիւլ Համիդ Սանի վէ Դէվրի Սալթանաթը» (Աբդիւլ Համիդ Բ. և նրա թագաւորութեան շրջանը) Կ. Պօլիս, 1327 (1910) Ա. հ. էջ 170—171.

***) Միդհատ փաշա նոյն իսկ պաշտօնանկ լինելուց և Եւրոպա աքսորուելուց յետոյ էլ գործում էր այս ուղղութեամբ։ Նա (1877-ին) Times-ում ֆրանսերէն լեզուով մի նամակ էր տպել, որտեղ աշխատում էր արդարացնել Թիւրք կառավարութեան վարմունքը բուլղարական կոտորածում և հաւատացնում էր թէ Բուլղարիայում «ռուսներն և բուլղարներն աւելի մեծ բարբարոսութիւններ են գործում քան Թիւրքերը»։ Մի բուլղար նոյն լրագրում պատշաճ պատասխանը տուեց նրան։

այն միջոցին հայերը, միւսկը քրիստոնեայ հասարակութիւններից, ուղերձներ ներկայացրին անգլիական դեսպան սըր Հէնրի Էլլիոտին՝ նրա մեկնումի առթիւ։ Անգլիական դեսպանատան գործակատարն այս ուղերձներն ուղարկելով իր կառավարութեան՝ պարծենում էր թէ ոչ մի ուրիշ դեսպան ուղերձ չէր ստացել և բացատրում էր այսպէս. «զանազան դաւանութեան պատկանող քրիստոնեաներն*) այս կերպով ինքնաբերաբար(?) յայտնելով իրանց շնորհակալութիւններն Անգլիային, ապացուցում են, որ միայն Մեծն Բրիտանիայի ջանքերի վրայ են դնում իրանց յոյսը՝ Թիւրքիայում իրանց վիճակի բարւոքման համար և ոչ մի այլ պետութեան վրայ»**)։

Աւելորդ չենք համարում քաղուածօրէն առաջ բերել այստեղ այդ ուղերձների բովանդակութիւնը։

Հայ-բողոքական հասարակութեան (թէև գրուած է միայն բողոքական—«Protestant Community» բայց ստորագրողները միայն հայեր են) Գործադիր Ժողովը գրում է. «Ձեր Կ. Պոլսից մեկնումի առթիւ մենք պարտք և բախտ ենք համարում յայտնել մեր սրտագին շնորհակալութիւնը ձեր գործդրած ջանքերի համար.... Դուք մեր ներկայացուցիչներին միշտ սիրով էք ընդունել և մեծ ուշադրութեամբ լսել մեր զեկուցումները կայսրութեան (Թիւրքիայի) զանազան մասերում գտնուող մեր ժողովրդի պէտքերի մասին.... Ձեր Գերազանցութեան ենք պարտական մեծապէս, որ մեր ազգը հետզհետէ աւելի և աւելի գրաւում է այստեղ այն դիրքն, որին նա արժանի է....»։ Ստորագրել են Գործ. Ժողովի անդամները. Յակոբ Մատթէոսեան, Յակոբոս Ճէճիզեան, Ստեփան Իւթիւճեան և Ս. Վարդանեան։

*) Այդ «զանազան դաւանութեան պատկանող քրիստոնեաները» բոլորն էլ հայեր էին, ինչպէս պիտի տեսնենք։

**) Blue book. Turkey № 15 (1877) էջ 67.

Բ. «Հայկական Պատգամաւորութեան» ուղերձն ամենից կարճն է.

«Այն րոպէին, որ դուք թողնում էք Արևելքը, հայ ազգը պարտականութիւն է համարում իր խորին համակրութիւնը յայտնել ձեր անձին։ Երջանիկ ենք, որ կարող ենք յայտարարել այս առթիւ թէ որքան բարձր ենք գնահատում այն հոգածութիւնն, որ անգլիական մեծ ազգն ամէն ժամանակ ունեցած է Օսմանեան տէրութեան նկատմամբ և այն խնամքն, որ Ձեր Գերազանցութիւնը ցոյց է տուած հաւասար կերպով՝ երկրի բոլոր տարրերին...»։ (Պատգամաւորների անունները չեն յիշուած),

Գ. Ամենից երկար է հայ-կաթոլիկ պատրիարքի ուղերձն, որ ասում է.

«Յանուն Թիւրքիացի բոլոր հայ-կաթոլիկ եպիսկոպոսների պարտք եմ համարում ներկայացնել Ձեր Գերազանցութեան իմ այս յարգալից ուղերձն, այն րոպէին երբ Դուք մեկնում էք այստեղից,—յուսանք թէ կարճ ժամանակով,—նորոգելու համար մեր խորին և անկեղծ երախտագիտութիւնն այն հաստատակամ և խելօք ընթացքի համար, որով Ձեր Գերազանցութիւնը հաճած է պաշտպանել արդարութեան և կրօնական ազատութեան իրաւունքի սկզբունքներն, որոնք զլացվում էին մեր հասարակութեան։ Ձեր Գերազանցութեան (Վսեմութեան) շնորհիւ է մանաւանդ, որ մեր հասարակութեան՝ անցեալ ռէժիմի ժամանակ կրած վիշտը մեղմացաւ և բուն խնդիրն իսկ, վերջապէս արդար և իրաւացի լուծում ստացաւ, շնորհիւ այն իմաստուն խորհուրդների, որ միշտ տուած էք յօգուտ թէ կայսերական կառավարութեան և թէ 100,000 հոգուց բաղկացած մի ժողովրդի (հայ-կաթոլիկների), որ հաւատարիմ է սուլթանին, ինչպէս և իր նախնեաց հաւատքին.... Իմ հասարակութիւնը թէև ամենածանր փորձանքների ենթարկուած, երբէք չէ շեղուել իր հա-

ւառքից և իր կրօնական պետերի գծած շաւղից...։ Ցոյս ունիմ, պարոն դեսպան, որ Միդհատ փաշայի բարենորոգիչ մինիստրութեան ժամանակ իմ հասարակութեան բոլոր օրինաւոր իրաւունքները կը վերադարձուին...»։ Ուղերձը վերջանում է գովելով դեսպանի բարեացակամ քաղաքականութիւնը Թիւրք կառավարութեան հանդէպ։ Ստորագրած է «Անտոն Պետրոս Թ. Հասուն, հայ-կաթոլիկ պատրիարք (Տանն) Կիլիկիոյ»։

Այս գրութեան վերջին տողերն և այն ընդհանուր ոճն, որով բոլոր ուղերձները գրւում են սըր Հ. Էլիօտի բարեացակամ վերաբերմունքը Թիւրքիային՝ կասկած չեն թողնում, որ երեք դաւանութեան պատկանող հայ եկեղ.—հասարակական իշխանութիւններն էլ որոշ mot d'ordre-ի են հետևել այս ուղերձները ներկայացնելու խնդրում։

Դեսպանախորհրդի նպատակի անյաջողութեան մասնովին անհաճոյ չէր հայերին, որոնք դժգոհութեամբ էին տեսնում թէ այնտեղ խօսւում, քննւում էր միմիայն եւրոպական Թիւրքիայի քրիստոնեաների համար բարենորոգման հարցը*)։

Դեսպանախորհրդի գումարուելն և ապա անհետևանք ցրուելն տպաւորութիւն թողեց նաև Կ. Պօլսից դուրս, գաւառներում։ Տրապիզոնի անգլ. հիւպատոսն այսպէս է նկարագրում այս տպաւորութիւնը։ «Կ. Պօլսի դեսպանախորհրդի սկսելուց յետոյ տարածուած շշուկներն երեւան հանեցին կամ հաստատեցին Անատօլուի այս

*) «Մասիս» թերթը ծաղրական ոճով գրում էր այն մէջոցին։ «Դեսպանախորհրդի թատերգը վերջացաւ ընդհանուր դժգոհութեան ցոյցերով... Ներկայացումը ծրագրին և ծանուցումներուն բարձրութենէն վար ինկաւ և ունկնդրաց շչիւններովը փակուեցաւ։ Այժմ դերասանները մեկնեցան, ամեն մին մի կողմ, և գուցէ իրենց պարապոյ ժամերուն մէջ մարդկային իրաց յեղակարծութեան վրայ կը խորհին...»։

մասին ժողովրդի թաքուն զգացմունքները...։ Այն տպաւորութիւնը թէ Եւրոպան ստորացուցիչ պայմաններ է ուզում ենթարկել Թիւրքիան, յուզում առաջ բերեց ժողովրդի մէջ և իր սովորական անտարբերութիւնից դուրս հանեց նրան։ ...Որովհետև մահմեդականների համար հայրենասիրութեան հիմը կրօնն է, բնականաբար նրանք երևակայում են թէ եւրոպացիների համար էլ այդպէս է։ Որքան ժամանակ, որ մէկ կամ աւելի եւրոպական պետութիւն, ըստ Թիւրքաց, իրանց կողմն էր, նրանց հայրենասիրութիւնը լիակատար ծաւալում չէր գտնում։ Բայց այժմ նա հասաւ իր ծայրագոյն սահմանին այն տպաւորութեան տակ թէ քրիստոնեայ տէրութիւնները լքել են նրանց։ Այնպէս են ենթադրում թէ նրանց դէմ դաւադրութեան նման մի բան կայ կազմուած... Թիւրքերն իրենք արիւնարբու չեն, ինչպէս կարծւում է և ոչ էլ նրանք հալածում են քրիստոնեաներին իրանց հաւատքի պատճառով։ Նրանք չեն ատում իրանց մէջ ապրող քրիստոնեաներին, բայց ատում են ռուսներին։ Եւ որովհետև Ռուսաստանը քրիստոնեաներին իբրև պատրուակ է գործ ածում Եւրոպայի միջամտութիւնը հրաւիրելու համար Թիւրքիայի ներքին գործերում, ուստի այդ պատճառով էլ այժմ քրիստոնեաները կասկածելի են դարձել Թիւրքերի աչքում... Գալով քրիստոնեաներին, որոնց մէջ այն գաղափարն էր տարածուած թէ՝ եթէ բոլոր եւրոպական տէրութիւնները Թիւրքիային դէմ են, ուրեմն իրանց ապահովութիւնը մեծապէս վտանգի մէջ է...։ Բայց քանի որ Եւրոպան ըստ երևոյթին միայն սլաւների ձգտումներն է պաշտպանում, բոլոր միւս քրիստոնեաներն այն եզրակացութեանն են հանում թէ ուրեմն իրանց համար միակ լաւագոյն միջոցը մնում է թիւրքերի հետ սերտ կապուել։ Հայերը մի փոքր յոյս են սնուցանում թէ կարող են Թիւրքիայում իրանց ազգութիւնը կենդանացնել, ուր որ ռուսաց իշխանու-

թեան տակ նրանք այդ յոյսի շուքն անգամ չեն կարող ունենալ։ Տեղացիներից նրանք, որոնք ռուսահպատակութիւն են ընդունել և ուրախ են որ Թիւրքիայում Ռուսաստանի պաշտպանութիւնն են վայելում, անշուշտ յուսահատութեան պիտի մատնուէին եթէ իրանց երկիրը Ռուսաստանին կցուէր։ Ըստ երևոյթին բոլորն էլ ներկայ թիւրքական կառավարութիւնը գերադասում են ռուսական վարչութիւնից...»։

Այսպէս էր տպաւորութիւնը գաւառներում ընդհանրապէս, դեսպանախորհրդից առաջ կամ նրա տևողութեան ժամանակ։ Իսկ թէ մտքերի վրայ ինչ ազդեցութիւն արաւ դեսպանախորհրդի առաջարկութիւնների մերժուելն և դեսպանների հեռանալը նոյն հիւպատոսը նկարագրում է այսպէս։ «Զարմանքի զգացման հետ միասին անհանգստութիւն էր տիրում այն մասին թէ Եւրոպան այժմ ինչ ընթացք պիտի բռնէր։ Տրամադրութիւնը դէպի քրիստոնեաներն ընդհանրապէս և եւրոպացիները մասնաւորապէս՝ բարեկամական չէ....։ Բայց մահմեդականները հանգստացան՝ կարդալով Կ. Պոլսի թրքական լրագիրներում թէ Եւրոպան առ առաւելն չեզոք պիտի մնայ Ռուսաստանի հետ պատերազմի դէպքում և վերջիվերջոյ նոյն իսկ ուրախացան թէ իրանց կառավարութիւնը յաղթանակ է տարել եւրոպական դիւանագիտութեան վրայ։ Երբ կարդացին Մեծ Ազգային Ժողովում զանազան քրիստոնեայ համայնքների պետերի ունեցած վարմունքը՝ նրանց յարաբերութիւնը տեղացի քրիստոնեաների հետ հետզհետէ աւելի բարեկամական դարձաւ և այժմ շատ սիրով են նրանց հետ...։ Այն իրական կապն, որ միացնում է այժմ մահմեդականներին քրիստոնեաների հետ, նրանց ընդհանուր ատելութիւնն է Ռուսաստանի դէմ...»։

Իսկ հայաշատ կենտրոններում ինչպէս օրինակ Վանում մոլեռանդ մոլլաներ աշխատում էին թիւրք ամբոխը գրգռել հայերի դէմ, ասելով—«Ալ քրիստո-

նեաներէն վրէժ լուծելու ժամը հնչած է, սոքա ևս սերբիացիներին և ռուսին կրօնակիցներն են։ Մեծ բազմութիւն կը հաւաքուի մօլլայի գլուխը, ամեն կողմէն խառնաշփոթ ձայներ կը բարձրանան, շուկային կողմը իրարանցումը կը սկսի և ամենն ալ փախուստի կը դիմեն... Թիւրքերը ժողով կը կազմեն և ջամին գոցելով նորա բանալիները կառնեն և խմբովին կառավարչի տեղապահին կը յանձնեն ըսելով թէ «մենք քրիստոնեաներու վրայ վստահութիւն չունինք և այլն»*)։ Բարեբախտաբար կառավարութիւնը յաջողել է խռովութիւնների առաջն առնել։

Դեսպանախորհրդի գումարման ժամանակ զուգընթացաբար հետաքրքրական և շատ լուրջ բանակցութիւններ էին տեղի ունենում Լօնդօնում, որոնց միջնորդը մի հայ էր, Դր. Օտեան։ Եթէ այս բանակցութիւններն իրանց ծրագրող և վարողների նպատակի համաձայն վախճան գտնէին, ահագին ազդեցութիւն գործած կը լինէին Թիւրքիայի ընդհանուր վարչական ռէժիմի վրայ, որից առանձնապէս կախուած էր հայ ժողովրդի վիճակը մերձաւոր ապագայում. Բայց այն անվստահութիւնն, որ ընդհանրապէս տածում էին եւրոպացիք թիւրք պետական անձերի բարենորոգչական ձգտումների անկեղծութեան մասին, որ դժբախտաբար հիմնուած էր բազմաթիւ անցեալ փորձերի վրայ, ի դերև հանեց կատարուած բոլոր ջանքերն և այս անյաջողութեան առաջին զոհերն եղան Թիւրքիայի անկեղծ սահմանադրականները՝ Միդհատ, ապա և Օտեան և իրանց համակիրների ամբողջ խումբը.

Երբ դեսպանախորհուրդն առանց ուշադրութիւն դարձնելու նորահաստատ օսմանեան սահմանադրութեան, շարունակեց պնդուել իր ծրագրով, Միդհատ փաշա որոշեց անգլիական դահլիճն իր կողմը գրաւել,

*) «Մշակ» 1877 ապրիլ 11.

բացատրելով նրան թէ ինչպիսի պարագաներում էր գտնվում նոր սահմանադրական կառավարութիւնն և թէ ինչու համար ստիպուած էր մերժել դեսպանախորհրդի առաջարկութիւնները։ Այս՝ այնու մանաւանդ համարձակութիւն էր տալիս նրան, որ անգլիական գահլիճը լաւ էր տրամադրուած Միդհատ փաշայի նըկատմամբ, համարելով նրան ազատամիտ և մեծ քաղաքագէտ, ըստ վկայութեան Կ. Պօլսի դեսպանի*) Այս գործը Միդհատ յանձնեց իր խորհրդակից Դր. Օտեանին, որ այն միջոցին Հասարակաց Շինութիւնների մինիստրի օգնական էր։ Սահմանադրութեան հրատարակումից անմիջապէս յետոյ Միդհատի ջերմ յանձնարարականով**) նա մեկնեց Լոնդոն։ Այնտեղ նա մի քանի անգամ ներկայացաւ լորդ Դէրբիին և բացատրեց այն դժուարութիւնները, որոնք արգելք էին հանդիսանում դեսպանախորհրդի առաջարկութիւններն ընդունելուն։ Առաջին մինիստր լորդ Բիկընսֆիլդին Օտեան ասում էր. «Ես էլ քրիստոնեայ եմ և հայ և շատ լաւ տեղեակ եմ թէ ինչ զգացմունք է տիրում Թիւրքիայի զանազան մասերում։ Սլավոնեան նահանգներին յատուկ առանձնաշնորհումների բաշխումն ամէն կողմ նախանձ և դժգոհութիւն է յառաջացնում»***)։

Այս բանակցութիւնների ժամանակ Օտեան մի կարևոր առաջարկութիւն է անում անգլիական գահլիճին, Միդհատի հաւանութեամբ։ Անտարակոյս Օտեան նոյնպէս՝ ինչպէս շատ շատերը, համոզուած չէր թէ նոր հրատարակուած օսմանեան սահմանադրութիւնը հաստատուն կռուանների վրայ է դրուած և թէ վաղը կամ մինիստրների փոխուելով և կամ գլխաւորաբար սուլթան Աբդիւլ Համիդի քմահաճոյքով ամբողջ այս

*) Blue Book, Turkey № 2 (1877) էջ 80.

**) Անդ, էջ 137—139.

***) Անդ, mémorandum № 186.

ազատական շէնքն ի հիմանց պիտի չքանդուէր։ Այս մեծ տարակուսանքին մի անգամ ընդ միշտ վերջ տալու համար Օտեան առաջարկեց անգլիական գահլիճին՝ հետևեալը. բայց թողնենք, որ լորդ Դէրբին ինքը խօսի.

«Օտեան էֆէնդին ներկայ պարագաներում ջերմագին յանձնարարում էր իր անձնական միտքը (personal suggestion), որ ըստ նրա ենթադրութեան կարող էր համաձայնութիւն յառաջ բերել և որն, ըստ նրա համոզման, Միդհատ փաշան պատրաստ էր ընդունել։ Այս առաջարկութիւնը կայանում էր նրանում, որ սուլթանի նորերս հաստատած Սահմանադրութիւնն այնպիսի մի ձևի տակ հաղորդուի պետութիւններին, որ նրա գործադրութիւնը միջազգային պարտականութիւն դառնայ Բ. Դրան և պետութիւնների մէջ և թիւրք մինիստրների ծրագրած գաւառական վարչութիւնների կազմակերպութիւնը պետութիւնների հաւանութիւնը ստանալուց յետոյ ընդհանուր ծրագրի մի մասը կազմէ և միևնոյն համաձայնութեան մէջ մտնէ»։

«Այս կերպով սուլթանի՝ իր հպատակներին շնորհած բարենորոգումների ամբողջ կազմակերպութիւնը պետութիւնների երաշխաւորութեան տակ կը դրուի, որոնք իրաւունք կունենան հսկելու նրա գործադրութեան վրայ»։

«Օտեան էֆէնդին ուզում էր իմանալ թէ այս առաջարկութիւնը նպաստաւոր ընդունելութիւն պիտի գտնէ՞ր անգլիական կառավարութեան կողմից և թէ օգուտ ունէ՞ր արդեօք այս առաջարկութեան՝ Բ. Դռան կողմից դեսպանախորհրդին ներկայացնելը»։

Միևնոյն պաշտօնական թղթում մենք գտնում ենք անգլ. կառավարութեան պատասխանն Օտեանին։ «Զափազանց անյարմար էր, ասում է լորդ Դէրբի, այստեղ վիճաբանել այնպիսի հարցերի մասին, որոնք վերաբերում են դեսպանախորհրդին։ Ուստի ստիպուած եմ որևէ կարծիք չյայտնել այս ծրագրի մասին։ Եթէ

Թիւրք կառավարութիւնն այդպիսի մի առաջարկութիւն ունի նա պէտք է այդ անէ Կ. Պօլսում և իր պատասխանատուութեան տակ» գրում է լօրդ Դէրբին իր լեագր Սալիսբըրիին *)։

Այս պատասխանից Օտեան չէ յուսահատվում. 4 օր յետոյ նա դիմում է ուղղակի առաջին մինիստրին, Բիկընսֆիլդին, որի հետ ունեցած երկար խօսակցութեան մէջ առաջարկում է. «Նորերս շնորհուած Սահմանադրութեան մասին մի յատուկ պրոտոկոլ (Protocole, արձանագրութիւն) կազմուելով դրուի եւրոպական երաշխաւորութեան տակ, որով եթէ սուլթանի հպատակների այս կամ այն մասը յոռի վարչութիւնից դժգոհութիւն ունենայ, պետութիւնները իրաւունք կունենան միջամտելու։ Բիկընսֆիլդին համոզելու համար հայ քաղաքագէտն օրինակ է բերում «Լիբանանին շնորհուած մասնակի սահմանադրութիւնն, որի համար ուրիշ երաշխաւորութիւն չկար բացի այդպիսի մի պրոտոկոլից և մինչև հիմայ ոչ մի մեղադրանք չէ ուղղուած Բ. Դրան թէ նա չէ կատարել իր պարտականութիւնը»**)։

Անգլիական կառավարութիւնն այնու ամենայնիւ համառ է մնում այն մտքի վրայ, թէ Օտեանի յարուցած հարցը պէտք է քննուի դեսպանախորհրդում, այն էլ եթէ Թիւրք կառավարութեան կողմից պաշտօնապէս ներկայացուի։

Այս տեսակցութիւնների հիման վրայ Օտեան հեռագրում է Միդհատ փաշային և խորհուրդ է տալիս նրան Սահմանադրութեան Հիմնական Օրէնքը (Կանունը էսասի) ներկայացնել դեսպանախորհրդին, մտցնել նրա արձանագրութիւնների մէջ և այս կերպով պաշտօնապէս Օսմանեան Սահմանադրութիւնը դնել եւրոպական երաշխաւորութեան տակ, որպէս զի Սահմա-

*)Blue Book, Turkey 2 (1877) էջ 183—184.

**) Անդ. էջ 259—260.

նադրութիւնը մշտատև լինի և այս կամ այն կողմից ոտնձգութիւնների և ջնջման չենթարկուի*)։

Բայց Թիւրք կառավարութիւնը պաշտօնապէս չի մտցրեց հարցը դեսպանախորհուրդն այլ միայն կիսապաշտօնական կերպով յիշատակութիւններ եղան։ Ըստ երևոյթին եթէ մտցնէր իսկ դեսպանախորհուրդը պիտի չընդունէր և զգոնանար, որովհետև թէ լիազօրներն և թէ դեսպանները չէին քաշվում քննադատել Սահմանադրութեան բազմաթիւ թոյլ կողմերը. հետևաբար նրանց համար Սահմանադրութիւնը չէր կարող փոխարինել այն երաշխաւորութիւնները, որ նրանք պահանջում էին**)։

Օտեանի առաջարկութեան չընդունուելն այն հետևութիւնն ունեցաւ, որ Օսմանեան Սահմանադրութիւնը մնաց Թիւրքիայի ներքին գործն, որի պահպանութիւնն այնուհետև բացառապէս կախուած էր Աբդիւլ Համիդի քմահաճոյքից և այս ձևով, ինչպէս ժողովրդական ոճն ասում է, եւրոպական տէրութիւնները սուլթան Համիդի հացին եղ քսած եղան. ուր որ եթէ նա, Սահմանադրութիւնը՝ միջազգային դաշնագրական ոյժ ունենար, դաշնագիր պետութիւնները հաւաքաբար կամ անհատօրէն միշտ իրաւունք կունենային միջամտելու և Թիւրքիայի վարչական ռէժիմն այնուհետև պարտաւորիչ կերպով կլինէր սահմանադրական։ Թիւրքիայի հպատակ ցեղերի քաղաքական կեանքն անկա-

*) Ալի Հայդար, «Միդհատ փաշա և այլն» էջ 243.

**) Առանձնապէս կարևոր են այս առթիւ ռուսաց դեսպան Իգնատիեվի՝ ճառը դեսպանախորհրդի վերջին յունվար 8/20-ի նիստում և Սալիսբըրիի գրածները իր կառավարութեան՝ Օսմ. Սահմանադրութեան թերութիւնների մասին, որտեղ ի մէջ այլոց նա զարմանալի հեռատեսութեամբ մատնացոյց է լինում՝ իբրև մեծ պակասութիւն, այն յօդուածի վրայ, որ անսահման իրաւունք էր տալիս սուլթանին՝ իր հպատակներից որին, որ կամենար աքսորել իր երկրից։ Ճիշտ այս յօդուածի հիման վրայ էր, որ քիչ յետոյ Աբդիւլ Համիդ աքսորեց նոյն ինքն Միդհատ փաշային։

կած կը զարգանար, որից մեծապէս կօգտուէր և հայ ժողովուրդը։ Հիմնական օրէնքի մէջ նկատուած այն թերութիւնները, որոնք քննադատվում էին եւրոպացիների կողմից, ժամանակի ընթացքում կը բարեփոխուէին՝ գուցէ նոյն իսկ եւրոպական տէրութիւնների պահանջմամբ կամ արտաքին ճնշմամբ, եթէ ներքին, բուն ժողովրդական ճնշումը չազդէր Աբդիւլ Համիդի վրայ։ Յամենայն դէպս 1876-ի Օսմանեան Սահմանադրութիւնն այդպիսի մի միջազգային կապակցութեան հիման վրայ եթէ անխախտ պահուէր, Թիւրքիացիք կընտելանային քաղաքական ազատութեան և Աբդիւլ Համիդ Բ.-ի բռնապետութիւնն իր բովանդակ հրէշաւոր արդիւնքովն հազիւ թէ տեղի ունենար...։

Դեսպանախորհրդի ցրուելուց յետոյ Միդհատ փաշայի դրութիւնն սկսում է խախտուել և Աբդիւլ Համիդի հետ նրա յարաբերութիւնները հետզհետէ լարվում են։ Միդհատ անկեղծօրէն մտել էր բարենորոգումների շաւղի մէջ և սկսել էր կառավարութիւնը մաքրել զանազան անարժան պաշտօնեաներից, որոնք սակայն գնալով խտացնում էին նրա հակառակորդների շարքերը։ Այս վերջիններից նա ոչ վախենում էր, ոչ քաշվում և անշուշտ վերջնական յաղթանակն իրը կլինէր եթէ շարունակէր նոյն հեղինակութիւնը պահպանել սուլթանի մօտ։ Բայց դժբախտաբար Աբդիւլ Համիդի հետ վարուելու եղանակում նա թերացաւ, և չկարողացաւ նրան իր ազդեցութեան տակ պահել։ Իրողութիւն է սակայն, որ Միդհատ իսկապէս ուզում էր գործել, ցոյց տալու համար թէ իր հակառակորդներին և թէ Եւրոպային, որ Թիւրք կառավարութիւնը՝ մերժելով եւրոպական միջամտութիւնը յօգուտ երկրի այս կամ այն մասին, իրօք որոշել էր ընդհանուր երկրի մէջ բարեկարգութիւն մտցնել։ Այս այնքան աւելի անհրաժեշտ էր, որ բարեկամ մի տէրութիւն, Անգլիան՝ ստիպողական կերպով խորհուրդ էր տալիս ինքնաբերաբար

անյապաղ իրագործել դեսպանախորհրդի այն առաջարկութիւնները, որոնք պարտաւորիչ էին դարձել արդէն ըստ Սահմանադրութեան։

Ցեղերի հաւասարութեան սկզբունքի անհրաժեշտ պայմաններից մէկն էլ զինուորական դպրոցի դռները բանալն էր անխտիր նաև ոչ-մահմեդականի առջև։ Միդհատ մեծ կարևորութիւն էր տալիս այս քայլին, որպէսզի դրանով սկիզբը դրուած լինէր Թիւրքիայի զանազան ցեղերի եթէ ոչ դեռ ձուլման, գոնէ ընդհանուր հայրենիքի համար համերաշխ գործակցութեան։ Բայց Աբդիւլ Համիդ՝ արդէն անձամբ անհամակիր այս ծրագրին՝ լսում էր այս մասին աւելի պահպանողական Թիւրք խորհրդատուներին քան թէ Միդհատին և իր աջակիցներին։ Այն ժամանակ Միդհատ ստիպուած եղաւ Աբդիւլ Համիդին յիշեցնել թէ նրա ընդդիմութիւնը «Սահմանադրութեան այս կարևոր պայմանին, որի գործադրութիւնն ամէնքն անհամբեր սպասում են, ջլատում է և վհատեցնում նրանց, որոնք անձնուիրաբար աշխատում են»*), Եւ այսպէս Միդհատի ծրագիրները փոխանակ անմիջապէս գործադրութեան մէջ դրուելու շարունակ յետաձգվում կամ հակառակութիւն էին գտնում Աբդիւլ Համիդի կողմից, որ չափազանց զգոն էր իր սահմանադրական առաջին մինիստրի անընդհատ բարենորոգչական գործունէութեան պահանջներից, մանաւանդ երբ նա ընդդիմանում էր սուլթանի միահեծանական ձգտումներին և ուզում էր իր սահմանադրական առաջին մինիստրի դիրքը պահպանել։—Միդհատ այլ ևս չկարողանալով համբերել, ուղղակի սուլթան Համիդին ներկայացրեց իր պատճառաբանեալ նշանաւոր հրաժարականն, որտեղ շատ դառն

*) Միդհատ փաշայի նամակը սուլթանի Ա. Քարտուղարին 6 Մուհարրէմ 1294 թ. Ալի Հայդար, «Միդհատ փաշա և այլն, էջ 263.

ճշմարտութիւններ էր ասում իր Թագաւորին։ Ահա ինչ էր գրում նա.

«Սահմանադրութիւն հաստատելով և հրատարակելով մեր բաղձանքն էր միահեծանութիւնը (խստիր-դադ, absolutisme) բառնալ, Ձեր Վեհափառութեան պարտականութիւնները պարզել, մինիստրների պարտականութիւններն որոշել և մեր ազգի մէջ կատարեալ հաւասարութիւն ապահովելով, իրօք աշխատել երկրի բարեկարգութեան։ Ձեր այժմեան խաթթը հիւմայունը պիտի չնմանի այն խաթթերին, որոնք 30 տարուց ի վեր հրատարակուած են եւ չեն գործադրուած. Նա չէ կարող անհետեւանք մնալ նոյն իսկ ներկայ փոթորիկն անցնելուց յետոյ էլ, որովհետև սահմանադրութիւն հրատարակելով մեր նպատակն՝ արևելեան հարցի յաջողապէս կարգադրուելուն ծառայելու և եւրոպացիների մեր դէմ բացած բերանները փակելու համար մի ցոյց չէր…։ Դուք պէտք է անպատճառ գիտնաք ձեր արքայական պարտականութիւններն, որովհետև պատասխանատու էք ձեր բոլոր արածների համար… Ես շատ յարգում եմ Ձեր Վեհափառութիւնը բայց Շէրիաթի տրամադրութիւնների համաձայն ինձ ներելի է չնպատակուել Ձեզ այն պարագայում, երբ մեր ազգի շահերին նոյն իսկ ամենափոքր վնաս է հասնում, որովհետև ծանր է իմ պատասխանատուութիւնը։ Ես վախենում եմ խղճիցս. իսկ հայրենիքի փրկութեան և երջանկութեան համար ես իմ խղճի առջև պատասխանատու եմ։ Վախենում եմ որ այս գործերի համար տէրութիւնն ինձ ճանաչէ մեղաւոր և պատասխանատու…։ Ով արքայ, ես մի ծանր բեռի տակ եմ. ես իմ պարտականութիւնը պիտի կատարեմ իբրև օսմանցի…։ Ինն օր է, որ բաւարարութիւն չէք տալիս իմ զեկուցումներին։ Դուք մերժում էք հաստատել այն կանոններն, որոնք նման են բանուորի գործիքներին. իսկ առանց գործիքների գործ կարելի չէ վարել…։ Երբ մենք

աշխատում ենք պետութեան հիմքը նորոգել, դուք պարզապէս կամենում էք քանդել…։ Այսպիսի հանգամանքներում հաճեցէք գործի ղեկավարութիւնը յանձնել այնպիսի մէկին, որ կարողանայ Ձեր արքայական քմահաճոյքը (միզաջը շահանէնից) համաձայնեցնել պետական ներկայ կարեւոր գործերի ընթացքին*»։

Մենք գիտմամբ ընդարձակօրէն յառաջ բերինք այս կարեւոր վաւերագիրն, որպէսզի երեւայ թէ ինչ նկարագրի տէր էր Աբդիւլ Համիդ՝ նոյն իսկ իր թագաւորութեան առաջին տարին։

Այս խիստ հրաժարագիրը փոխանակ համոզելու սուլթան Համիդին, ինչպէս գուցէ յոյս ունէր միամտօրէն նրա հեղինակը, կատարելապէս հակառակ արդիւնք ունեցաւ։ Համիդը կատաղեց նրա այս գրութիւնից։ Նա արդէն ճնշուած էր զգում իրան Միդհատի ժողովրդականութիւնից և արդար պահանջկոտութիւնից և առիթ էր որոնում ազատուելու նրանից։ Միդհատի հակառակորդներն էլ, աւելի գրգռեցին նրան, մեղադրելով թէ Միդհատ փաշա աւելի դիկտատոր (dictateur) էր քան թէ սահմանադրական մինիստր։ Մի քանի օրից յետոյ սուլթանը խորամանկութեամբ Միդհատ փաշային իր պալատը բերել տալով անակնկալ կերպով աքսորեց նրան երկրից դուրս**)։ Եւ Օսմ. Սահմանադրութեան

*) Ալի Հայդար, «Միդհատ փաշա…» էջ 264—266. այս հրաժարականը հրատարակուած է նոյն տարի, Պարիզի մի մեծ թերթում. République Française 1877 յունվ. 23.

**) Կանխապէս պատրաստուած «Իզզէտտին» շոգենաւը Միդհատին ցամաք հանեց իտալական Բրինդիզի նաւահանգիստը, որտեղից նա ուղևորուեց Նապոլի և այնտեղ հաստատուեց առժամանակեայ կերպով։ Այնուհետև նա գնաց Պարիզ և Լօնդօն, ուր մեծ պատւով ընդունուեց։ Վիկտորիա Թագուհին և Թագաժառանգն (ապա Էդուարդ VII) նրան յարգանքով ընդունեցին։ Անգլիայում նրան մինչև իսկ ուղերձ ներկայացրին։ Միդհատը յոյս ունէր դեռ թէ շուտով նա կը կանչուի իր պաշտօնին բայց իր յոյսերը չարդարացան։ Պատերազմից յետոյ երբ Թիւրքիան տապալուած հե-

հեղինակն աքսորուեց նոյն իսկ Սահմանադրութեան հիման վրայ, որի 113-րդ յօդուածն իրաւունք էր տալիս սուլթանին «արտաքսել այն անձին, որն ոստիկանութեան ձեռքով առնուած արժանահաւատ տեղեկութիւնների համեմատ տէրութեան ապահովութեան համար վտանգաւոր է ճանաչվում» ...։

Միդհատի գլխաւոր հակառակորդներն էին պատերազմական մինիստրն և Դամադ (սուլթանի փեսայ) Մահմուդ փաշա, մանաւանդ այս վերջինը։ «Սա էր, ասում է մի թիւրք պատմագիր, որ առաջին անգամ Աբդիւլ Համիդի սրտում երկիւղի և կասկածի թոյնը կաթեցրեց։ Սրա դրդմամբ էր, որ Աբդիւլ Համիդ «երիտասարդ թիւրք» անուանուած ազատականներին նկատեց իբր և Շէրիաթի հակառակորդներ, ամեն չարիք գործելու ընդունակ և իբրև խռովարարներ...։ Միդհատի հետ յարաբերութիւն ունեցողներին, իբրև կասկածելիներ, սկսեց հալածել։ Այս կերպով հիմ դրուեց սիստեմական լրտեսութեան։ Ամէն օր մինիստրների խորհուրդը գումարվում էր Աբդիւլ Համիդի նախագահութեամբ և երեւակայուած խռովութեան դէմ միջոց-

ծում էր հիւսիսային արծուի ճիրանների տակ, Միդհատը իր ծառայութիւնը առաջարկեց սուլթանին, բայց սա մերժեց։ Նրա հակառակորդները Կ. Պօլսի թիւրք մամուլի մէջ անուանարկիչ յօդուածներ գրել տալով աշխատեցին ժողովրդի աչքումն էլ նրան տապալացնել։

Բայց որովհետև Միդհատի նման մի յայտնի աքսորականի Եւրոպայում շարունակ բողոքողի դերում մնալն էլ խորամանկ Համիդի գործին չէր գալիս, ուստի վերջ ի վերջոյ նրան ետ կանչելով նախ նշանակեց Բէյրութի վալի, յետոյ Զմիւռնայի, միշտ Կ. Պօլսից հեռու։ 1881-ին սուլթան Համիդ՝ Աբդիւլ-Ազիզին գահընկեց անողներին դատի ենթարկելով միևնոյն ժամանակ ուզեց վերջնական հարուած տալ Սահմանադրութեան հեղինակներին։ Միդհատ փաշա իբր գլխաւոր մեղապարտ Աբդիւլ Ազիզի սպանութեան (թէև նա ինքնասպան էր եղած) մահուան դատապարտուեց։ Աբդիւլ Համիդ իբր թէ նրա կեանքը շնորհելով աքսորեց Թայիֆ (Արաբիայում) ուր և նա դաւադրաբար սպանուեց։

ների ձեռնարկում։ Մահմուդ փաշա լրտեսների մի խումբ էր կազմակերպել, որոնք շուտով ըմբռնեցին թէ ինչ էր նրանցից պահանջուածը և սկսան մատնել բոլոր «երիտասարդ թիւրք» կարծուածներին»։ Բանտերը լցուեցին «կասկածելիներով» և քաղաքական յանցաւորներով»*)։

Աբդիւլ Համիդական ռէժիմի այս սկզբնաւորութիւնը գրգռեց ազատականների խումբն և սրանք մի մեծ ցոյց կազմակերպեցին արքունի պալատի առջև։ Նրանք հետևեալ պահանջները դրին սուլթանին։

Ա. Միդհատ փաշային ետ կանչել և տալ իր նախկին պաշտօնը։

Բ. Դամադ Մահմուդ փաշային աքսորել և

Գ. Պատերազմական մինիստրին պաշտօնանկ անել։

Աբդիւլ Համիդ խորամանկութեամբ խոստացաւ քննել այս պահանջներն և ցուցարարները հեռացան։ Իսկ արդիւնքն այն եղաւ, որ ցոյցին մասնակիցների մի մասն, որ բաղկացած էր զինուորական դպրոցի ուսանողներից բանտարկուեցին, և միւս մասը, սօֆտաները, Կ. Պօլսից դուրս քշուելով ուղարկուեցին իրանց ծննդավայրերը։ Բայց սրանով էլ չբաւականանալով Աբդիւլ Համիդ որոշեց երկրից արտաքսել բոլոր այն անձերին, որոնք յայտնի էին իբրև Միդհատի ջերմ կուսակիցներ և նրա մերձաւոր խորհրդականները։ Այս ձևով Աբդիւլ Համիդ ճնշեց իրա դէմ կատարուած առաջին ցոյցն և այնուհետև նրա ռէժիմն աւելի և աւելի արմատացաւ. ժողովրդի ամեն մի բողոքը նա անմիջապէս խեղդում էր իր սաղմում։ Բայց նա չափազանց անհանգիստ էր ուրիշ կողմից։ Նրան լաւ յայտնի էր Անգլիայի վստահութիւնը Միդհատի վրայ. այժմ նրա այս կերպով պաշտօնից հեռացուելն և աքսորուելը

*) Օսման Նուրի. «Աբդիւլ Համիդ և նրա թագաւորութեան շրջանը» Ա. էջ 190—192.

բնականաբար մեծ դժգոհութիւն պիտի յարուցանէր Անգլիայում, որի բարեկամութիւնը ներկայ քաղաքական հանգամանքներում չափազանց կարևոր էր Թիւրքիայի համար։ Այս դժգոհութեան առաջն առնելու և իր վարմունքն արդարացնելու համար Աբդիւլ Համիդ որոշեց մի յատուկ պատգամաւոր ուղարկել։ Այս փափուկ պաշտօնը նա յանձնեց մի հայի, արդարադատութեան մինիստրի օգնական Վահան էֆէնդուն, որ արդարացուցիչ պատճառ էլ ունէր սուլթանի այս յանձնարարութիւնն սքօղելու և իր Եւրոպա մեկնելը տարբեր կերպով բացատրելու։ Այս պատճառը հետևեալն էր. Ոսմանեան Թրքական դատարանների անպէտքութիւնն ընդհանուր գանգատի նիւթ էր դարձել, ուստի կառավարութիւնը՝ ցոյց տալու համար թէ նա անկեղծօրէն ձգտում է բարւոքել իր վարչութեան դատական ճիւղերն և առանձնապէս արդարադատութեան ճիւղը, նա ուղարկում էր օգնական-մինիստր Վահան էֆէնդին Եւրոպա՝ դատական վարչութեան սիստէմն և պարագաներն ուսումնասիրելու և ապա ըստ այնմ բարւոքումն մտցնելու նաև Թիւրքիայում։ Նոր սադրազամ Էդհէմ փաշան լորդ Դէրբիին ուղղած յանձնարարական նամակում այս բարձրաստիճան հայ իրաւագէտի փորձառութիւնը, հմտութիւնն և ընդունակութիւնը գովելուց և նրա ճանապարհորդութեան նպատակը բացատրելուց յետոյ աւելացնում էր. «Վահան էֆէնդին, որ բնականաբար տեղեակ է կայսերական կառավարութեան հայեացքներին և զգացմունքներին, պաշտօն ունի միանգամայն հաղորդել ձեզ՝ տեղեկութիւններ այն ջանքերի մասին, որ անում է Բարձր. Դուռն իր վերակենդանութեան գործն ի կատար ածելու համար և առհասարակ իրերի ընդհանուր վիճակի մասին Կ. Պօլսում»։

Վահան էֆէնդին բարեխիղճ կերպով կատարեց իրան յանձնուած փափուկ պաշտօնը։ Նա մարտի 1-ին

(1877) ներկայացաւ լորդ Դէրբիին։ Ահա ինչպէս է պատմում Վիկտորիա Թագուհու արտաքին գործերի մինիստրն այս տեսակցութիւնը։ «Վահան էֆէնդին ինձ ասաց թէ սուլթանն անձամբ նրան յանձնարարել է գալ բացատրել ինձ Միդհատ փաշայի պաշտօնանկութեան և աքսորի պատճառները։ Նախկին մեծ վեզիրն ոչ դաւադրութեամբ և ոչ էլ որ և է ծանր հասարակական յանցանքով չէ մեղադրվում, ինչպէս լուր էր տարածուել, բայց սուլթանը նկատել էր, որ Միդհատ փաշան այնպիսի մի դիրք էր բռնել հանդէպ սուլթանին, որ ամենևին չէր հաշտվում այս վերջինի սեփական հեղինակութեան հետ։ Միդհատ փաշան ամբողջ իշխանութիւնն առել էր իր ձեռքը, չէր թողնում, որ սուլթանը ձայն ունենայ պետական գործերում և թոյլ էր տալիս իրան՝ անտեղի ոճով խօսել միապետի անձնական կարծիքների և ներշնչած գաղափարների մասին։ Պետական պաշտօնեաների նշանակումն իրան էր վերապահել և շրջապատել էր իրան այնպիսի անձերով, որոնց գործածած լեզուն ամենևին մինիստրի վայել չէր։ Նա թոյլատրում էր, որ սահմանադրութիւնը նրա անձնական գործն համարեն, սուլթանից բանի կորզուած, ուր որ իսկապէս սուլթանը գահ նստելիս որոշել էր սահմանադրութիւն շնորհել, այս բանն երկրին համար օգտակար համարելով...։ Նա աւելացրեց, որովհետև այնչափ շատ կուսակիցներ ունի Կ. Պօլսում, որ նրա ներկայութիւնը կարող էր անյարմարութիւն, նոյն իսկ հասարակական վտանգ յառաջ բերել. Եթէ այս փաստերն եւրոպական հասարակաց կարծիքի առջև չեն հանվում, պատճառն այն է, որ սուլթանը գնահատելով Միդհատ փաշայի ընդունակութիւնն և մատուցած ծառայութիւնները չէ ուզում, որ այս իրողութիւններն երևան գալով նրա՝ իբրև պետական մարդու՝ բնաւորութեան վրայ արատ գայ...»։ Այս բացատրութիւնները տալուց յետոյ Վահան էֆէնդին

աշխատում է համոզել լորդ Դէրբիին թէ օսմանեան կառավարութիւնը լուրջ միջոցներ է ձեռք առել բարենորոգումներն իրագործելու համար և խորին շնորհակալութիւն է յայտնում այն բարեացակամութեան համար, որ անգլիական կառավարութիւնը ցոյց էր տուել Թիւրքիային նրա ներկայ տագնապալից վիճակում։—«Իսկ ես, ասում է լորդ Դէրբին, պատշաճաւոր պատասխան տուի, չուզեցի ոչ մի կարծիք յայտնել այն պատճառների մասին, որոնք մինիստրական փոփոխութիւն յառաջ բերին և միայն շնորհակալութիւն յայտնեցի Վահան էֆէնտուն նրա տուած հետաքրքրական տեղեկութիւնների համար։ Գալով բարենորոգումներին՝ ես ասի թէ չափազանց կարևոր է, որ նրանց մի քանիսը վերջապէս, որքան կարելի է շուտով իրագործուին, որպէսզի կարելի լինի ցրել այն անվստահութիւնն որ գոյութիւն ունի Բ. Դրան յաճախակի կրկնուող խոստումների մասին» *)։

Սուլթան Համիդ՝ ցոյց տալու համար Եւրոպային և իր հպատակներին թէ ինք անձնականապէս Միդհատին դէմ էր և ոչ թէ Սահմանադրութեան, իսկոյն Միդհատի աքսորումից յետոյ մի ֆէրման հրատարակեց, մինիստրական փոփոխութեան առթիւ, որտեղ իրան սահմանադրութեան հաւատարիմ էր ներկայացնում։ Նոր մինիստրութեան մէջ հայերը կարևոր դիրք գրաւեցին։ Յովհ. էֆ. Զամիւ. (Զամչեան), որ պետական խորհրդի անդամ էր, ատեանի բարձրացում ընդունելով (Բալա) նշանակուեց վաճառականութեան և երկրագործութեան մինիստր։ Գրիգոր Օտեան պահեց իր պաշտօնն իբրև Հասարակաց շինութիւնների (ճանապարհների և այլն) մինիստրի օգնական, Վահան էֆէնտի Վահանեան մնաց դարձեալ արդարադատութեան մինիս-

*) Blue Book, Turkey № 15 (1877) վաւերագրեր № № 208 և 228.

տրի օգնական և Յովհաննէս էֆէնտի Սագըզ նշանակուեց կրթական մինիստրի օգնական։

Բացի դրանից ապստամբուած Բօսնիա-Հէրսէկ նահանգի կուսակալին էլ մի հայ օգնական տրուեց, (զմիւռնեացի Կոստանդ փաշա), որին Բ. Դուռը յետոյ ընտրեց նաև երկրորդ պատգամաւոր Չէրնօգօրեայի հետ խաղաղութեան բանակցութիւնները վարելու։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

Օսմանեան սահմանադրութեան ներքին արժէքը.—Հայ երեսփոխանները.—Թիւրքիայի ներքին կացութիւնը.—Կուսակցութիւնները և նրանց նպատակը.—Լօնդօնի պրօտօկօլն (protocole) և պատերազմի յայտարարութիւնը.—Հայ կրօնապետների դիմումն անգլիական դեսպանին ընդդէմ Ռուսաստանի.—Օսմանեան խորհրդարանը.—Հայ երեսփոխանների ճառերը Ռուսաստանի դէմ.—Հայկական խնդիրը օսմանեան խորհրդարանում.—Խորհրդարանի արձակումը։

Օսմանեան սահմանադրութեան յայտարարումն արտակարգ ուրախութիւն պատճառեց հայերին։ Ժողովուրդն առհասարակ մեծ և անկեղծ յոյս էր դնում երկրի ապագայի վրայ, կատարուած այս հսկայ առաջադիմական քայլի առթիւ, որի բոլոր շարժառիթներին նա տեղեակ չէր։ Հայ մամուլը խանդավառ յօդուածներ էր նուիրում սահմանադրութեան և նրա յայտնի հեղինակներին։ Բանաստեղծներն իսկ իրանց բաժինն ունէին այս ընդհանուր ոգևորութեան մէջ, այն լիուլի յոյսով, որ վարչական նոր կարգն—եթէ նա բարեխղճօրէն գործադրուէր — վերջնականապէս հաւասարութիւն, արդարութիւն պիտի մտցնէր ընդհանուր հայրենիքում *)։

*) Խրիմեան իր «Ժամանակ և խորհուրդք ինչ» գրքոյկում յափշտակուած գոչում էր. «... Հասաւ, հասաւ այն ազատաբեր

Օսմանեան սահմանադրութիւնը բաղկացած էր 119 յօդուածից և իբրև հիմնական սկզբունք ընդունում էր բոլոր Թիւրքիացիների հաւասարութիւնն (§ 17) օսմանցի ընդհանուր կոչման տակ (§ 8), անձի, բնակարանի անձեռնմխելիութիւնը (§ 22), մամուլի, ժողովների, ընկերակցութիւնների և ուսման ազատութիւնը: Օսմանեան սահմանադրութիւնն՝ իսլամութիւնը պետական կրօն ճանաչելով հանդերձ՝ կատարեալ ազատութիւն էր տալիս այլ դաւանութիւններին և հաստատում էր ոչ-մահմեդական հասարակութիւնների վաղեմի, որոշ առանձնաշնորհումները (§ 11): Խորհրդարանը (parlement) բաղկացած էր՝ երեսփոխական ժողովից (մէջլիսի մէբուսան, chambre des députés), և ծերակոյտից (մէջլիսի այեան, senat): Ծերակոյտի նախագահն և անդամները նշանակվում էին ուղղակի սուլթանից, բայց անդամների թիւը երեսփոխանների ընդ-

---

ժամանակ, քեզ աւետիս կուտամ, ժողովուրդ. կապած լեզուդ և փակուած բերանդ բաց այսուհետև, խօսէ և գրէ որչափ սահմանադրը օրէնք քեզ ազատութիւն կուտայ...: Ով բարեգուշակ ժամանակ, դու բարի եկիր մեր աշխարհ. քեզ կ'ակնկալէր և կը սպասէր Թուրքաստանի հինաւուրց մայր, որ ամուլ էր և հրաշք ծնաւ... մեզ համար մի նոր մանուկ՝ Սահմանադրութիւն...: Անուանիկ այդ զարգացած մանուկն է, որ Եւրոպիոյ քաղաքակրթութիւն կը ներմուծէ մեր հին աշխարհ... և օսմանեան կայսրութեան տան ազատ գաւազան յանձամ սահմանադրական թագով կը փառաւորէ»: Ապա փոքր ինչ մելամաղձոտ կերպով շարունակում է, մարգարէաբար գուշակելով մօտաւոր ապագան. «Եւ գիտէ՞ք ու կը տեսնէ՞ք քաջ, որ թէ՛ օտար և թէ՛ նոյն իսկ մեր աշխարհին մէջ զօրա թշնամիներ շատ կան, որ կը շրջին ամենուրեք: Դուցէ դաւան գործեն... գողնան այդ մեր սիրական մանուկը և կամ անդէն իր խանձարուրին մէջ ճնշելով ունելիով խեղդեն...: Եւ ինչ կը լինի յայնժամ, գիտէ՞ք դուք, ո՛հ, յետինն չար քան զառաջինն...»:

Իսկ Թովմ. Թէրզեան՝ Միդհատ փաշային նուիրած իր քերթուածում «Առ ազատարարն» ասում էր, թէ նրա շնորհիւ՝

...«Ճշմարտութիւն և ազատութիւն՝ օսմանեան անդնդակոր գահուն պատուար կանգնեցին»:

հանուր թուի $^{1}/_{3}$-ից աւելի պիտի չլինէր: Երեսփոխանները ընտրվում էին գաղտնի քուէարկութեամբ. 50,000 օսմանցի (միայն արու) ընտրում էին մի երեսփոխան (§ 65): Եթէ սուլթանն երեսփոխանական ժողովը արձակէր, նոր ընտրութիւնները պէտք է նշանակուէին ոչ ուշ քան 6 ամսի ընթացքում (§ 73): Երեսփոխանական ժողովը ընտրում էր իր միջից երեքական թեկնածու 1 նախագահի և 2 փոխ-նախագահի պաշտօնի համար, և սուլթանը դրանցից պիտի նշանակէր այդ պաշտօնների համար իր յարմար տեսած անձերին: Երեսփոխանների անձն անբռնաբարելի էր (§ 79): Խորհրդարանն իրաւունք ունէր պետական ամբողջ բիւջէն քննելու, փոխելու, հաստատելու կամ մերժելու: Գաւառական վարչութիւններն հիմնուած էին ապակենտրոնացման սկզբունքի վրայ (§ 108): Գաւառները պիտի ունենային իրանց տեղական վարչական ժողովները (մէջլիսի իդարէ): Իւրաքանչիւր գաւառակում (կազա)՝ ամեն հասարակութիւն (թիւրք, հայ, յոյն, և այլն) պիտի ունենար նաև իր առանձին խորհուրդը՝ իր կրօնական և բարեգործական հաստատութիւններն և կալուածքը կառավարելու համար (§ 111): Նախնական ուսումը պարտաւորիչ էր բոլորի համար (§ 114) և վերջապէս սահմանադրութեան փոփոխութիւնը կարող էր տեղի ունենալ միայն երեսփոխանական ժողովի հաւանութեամբ (§ 116):

Որովհետև դեռ ևս ընտրողական օրէնք գոյութիւն չունէր, ուստի առաջին օսմանեան երեսփոխաններն ընտրուեցին տեղական վարչական ժողովների ձեռքով և այնպիսի եղանակներով, որ նրանք այս առաջին անգամ աւելի նշանակուիլ էին, քան ընտրուիլ: Խորհրդարանի բացման ժամանակ նրանց ընդհանուր թիւն 86 էր, որից 38-ը քրիստոնեայ: Գաւառներն ուղարկել էին հետևեալ հայ երեսփոխանները. Զմիւռնիայից—Յակոբ էֆէնդի Սպարթալեան, Բրուսայից—Եավրուեան

էֆէնդի, Ադրիանուպոլսից—Ռուբէն էֆ., Հալէպից—Մանուկ էֆ. Խարաճեան, Սեբաստիայից—Յակոբ էֆ. Շիրինեան, Տիգրանակերտից—Յովսէփ էֆ. Գազազեան, Կարնից և նահանգից—Դանիէլ էֆ. Խարաճեան և Համազասպ էֆ. Պալլարեան, Ադանայից—Պզտիկեան էֆէնդի։

Իսկ մայրաքաղաքում հայերն աւելի փառաւոր յաղթութիւն էին տարել։ Ընտրուել էին բժ. Սերվիչէն, Սեպուհ Մագսուտ և Յովհ. Ալլահվերտի։ Այս վերջինը փոխ-նախագահ ընտրուեց, իսկ Սերվիչէն անցաւ ծերակոյտ, ուր մի ուրիշ հայ անդամ ևս էր նշանակուել սուլթանից՝ Միհրան բէյ Տիւզեան։

1877 թ. մարտի 19-ին Աբդիւլ Համիդ անձամբ բացաւ խորհրդարանն իր պալատում, մեծ հանդէսով։ Բացի ծերակոյտի անդամներից և երեսփոխաններից ներկայ էին նաև բոլոր մինիստրները, դեսպանական մարմինը, քրիստոնեայ պատրիարքները, նոյնպէս և բարձր պետական պաշտօնեաներ։ Աբդիւլ Համիդի անունից կարդացուած գահական ճառը գեղեցիկ խօսքեր և խոստումներ էր բովանդակում սահմանադրութեան և նրա նպատակների անթերի գործադրութեան նկատմամբ։ «Հարկաւոր համարեցի, — ասում էր նա,—իմ հպատակներիս ազատութիւնն և հաւասարութիւնն ապահովել, իդարէի քէյֆիյէ-ին (քմահաճ վարչական դրութեան) վերջ տալ...»։

Բայց չնայելով սահմանադրութեան հրատարակուելուն, մանաւանդ թէ մասամբ այս իսկ պատճառով, Թիւրքիայի ներքին դրութիւնը շարունակում էր տագնապալից լինել։

Վերջին տարիների քաղաքական դէպքերն և սահմանադրութեան շնորհած խօսքի և մամուլի ազատութիւնը մեծ մղում տուին Կ. Պոլսի ժողովրդի ինքնագիտակցութեան, և երկրի գործերով զբաղուող և հետաքրքրուողների թիւն զգալապէս մեծացաւ։ Այս վի-

ճակը բնականաբար յառաջ բերաւ կարծիքների և տեսութիւնների տարբերութիւններ, որոնցից ծագեցին որոշ համախմբումներ։ Այս համախմբումներ կազմողները, գոնէ մեծագոյն մասամբ, դեռ այնչափ հասունացած չէին, որ քաղաքական կուսակցութիւններ կազմակերպէին որոշ և ընդարձակ ծրագիրներով, բայց միմեանցից զգալապէս տարբերուող և նոյն իսկ միմեանց ուղղութեան հակառակ համախմբումների և կուսակցութիւնների գոյութիւնն աներկբայ էր։ Սրանք մօտաւորապէս հետևեալներն էին.

1) Ռուսասէրներ, բաղկացած Աբդիւլ Ազիզի տիրապետութեան վերջին շրջանի ազդեցիկ անձերից, որոնք դժգոհ էին կատարուած յեղափոխութիւնից. սրանց նպատակն էր Աբդիւլ Ազիզի վերջին սադրազամ Մահմուդ Նէդիմ փաշային աքսորից վերադարձնելով à tout prix ռուսասիրական քաղաքականութիւնն յառաջացնել։ Այս կուսակցութիւնը հակասահմանադրական էր։

2) Սահմանադրական-ազգայնականներ, որոնք հետևողներն էին Միդհատ փաշայի։ Սրանք, ինչպէս արդէն բացատրել ենք, անկեղծ կերպով ցանկանում էին երկրի մէջ տիրող զեղծումների և բռնութիւնների բարձումն և ամէն կերպ աշխատում էին սահմանադրութեան միջոցով Թիւրքիան բարեկարգել առանց օտար միջամտութեան։ Բայց նրանք միևնոյն ժամանակ ջերմ պաշտպան էին մահմեդական տարրի գերիշխանութեան։ Միդհատականներն էին, որ նախապատիւ համարեցին պատերազմի վտանգներին ենթարկուել, քան թէ ընդունել եւրոպական միջամտութիւնը յօգուտ քրիստոնեաների կամ որևէ մասնաւոր նահանգի։

3) Փանիսլամական հին-թիւրքեր, որոնց նպատակն էր ջնջել սահմանադրութիւնը, գահընկէց անել Աբդիւլ Համիդին, ճնշել և ջլատել քրիստոնեայ տարրը, նոյն իսկ ընդհանուր ջարդ կազմակերպելով։ Նրանց

նպատակն էր՝ այս կերպով միանգամից ազատել մահմեդական Թիւրքիան գեավուռ եւրոպացիների ձեռից։ Այս ծայրայեղ կրօնամոլներն, որոնք, բարեբախտաբար, փոքրագոյն թիւ էին կազմում համեմատելով միւս երկու Թիւրք կուսակցութիւնների հետ, ջանքեր էին գործ դնում միանալու առաջին, այն է՝ ռուսասէրների կուսակցութեան, որպէսզի հաւասար ընդդիմադիր ույժ կազմեն սահմանադրականներին *)։

Վերջապէս կար և մի այլ՝

4) Յառաջադիմական կուսակցութիւն, իսկապէս ազատամիտ Թիւրքերից կազմուած։ Հայերի և այլ քրիստոնեաների ստուար մեծամասնութեան համակրութիւնն այս կուսակցութեան կողմն էր, որին և աջակցում էին ի պահանջել հարկին։ Յառաջադիմականները, տեսնելով որ միմեանց յաջորդող բարենորոգչական ոչ մի խաթթը հիւմայուն, ոչ մի հանդիսաւոր խոստում ի կատար չէր ածուած և յոյս էլ չկար, թէ Թիւրքերն իրանք իրանց ձեռքով երբեւիցէ կարենային կամ կամենային կարգ ու կանոն մտցնել երկրի մէջ, ձգտում էին, որ եւրոպական տէրութիւնները միջամտեն և այնպիսի մի ամբողջական վարչական սիստէմ մտցնեն, որ անխտիր և հաւասար իրաւունք տայ Թիւրքիայի բոլոր բնակիչներին։

Սակայն այն Թիւրք փաշաներն, որոնք իրանց ձեռքն էին առել կառավարութեան ղեկը Միդհատի աքսորումից յետոյ, իսկապէս այս կուսակցութիւններից ոչ մէկին չէին պատկանում, այլ կազմում էին մի՝

*) Այս պահպանողական հին-Թիւրքերը դեռ եւս Կ. Պօլսի դեսպանախորհուրդը չգումարուած դաւադրութիւն էին կազմել՝ նախ տապալել Աբդիւլ Համիդին, որովհետև միդհատականների դահ հանած սուլթանը լինելով խոստացել էր սահմանադրութիւն հրատարակել, և ապա սպանել Միդհատին և նրա խորհրդակից շէյխ-իւլ-իսլամին։ Դաւադրութիւնն իր ժամանակին իմացուելով խափանուեց և դաւադիրներից 400 հոգի աքսորուեցին։

5) Պալատական խումբ, որի անդամները վայելում էին Աբդիւլ Համիդի վստահութիւնը։ Սրանք զուրկ էին վարչական ընդունակութիւնից, գործում էին խարխափելով, չունէին որևէ որոշ ուղղութիւն և այս պատճառով էլ նրանց քաղաքականութիւնը տատանում էր և անհետևողական։

Այսպիսի միմեանց ընդդէմ հոսանքներից տարուբերուած խումբերը ներքին փոխադարձ խուլ պայքարով էին զբաղուած։ Կար անշուշտ դեռ մի մեծ բազմութիւն, որ հեռու էր այս «կուսակցութիւններից», միակ բաղձանք ունենալով այն, որ երկրում կարգը չխանգարուի և արդար կառավարութիւն հաստատուի, բայց ինքնին ոչ մի ներգործական դեր չէր կատարում այդ ուղղութեամբ։ Կացութիւնը չափազանց լուրջ էր և լարուած. նա չէր կարող երկար տևել այսպէս։ Երկրի վիճակն որոշող վճռական ժամը պէտք է հնչէր, և նա չուշացաւ։

Եւրոպական պետութիւնները՝ Կ. Պօլսի դեսպանախորհրդի անյաջողութիւնից յետոյ՝ իբրև վերջին փորձ երկրորդ անգամ խորհրդակցութիւն ունեցան Լօնդօնում և 1877 թ. մարտի 19/31-ին պրոտոկոլ, (արձանագրութիւն protocole) կազմեցին, թէ Թիւրքիան խաղաղեցնելու ձեռնարկող պետութիւններն ընդունում են, որ այս նպատակին հասնելու համար ամենաապահով միջոցն է՝ խնամքով հսկել, որ օսմանեան կառավարութիւնն իր խոստացած բարենորոգումները գործադրէ. իսկ եթէ այս անգամ եւս նրանք յուսախաբ լինեն, այն ժամանակ, «պիտի խորհրդակցեն, թէ ինչ անհրաժեշտ միջոցներ պէտք են քրիստոնեայ ժողովուրդների բարեկեցութիւնն և ընդհանուր խաղաղութիւնն ապահովելու համար»։ Այս «խնամքով հսկելու» և «անհրաժեշտ միջոցների» մասին որոշումներն, որոնք ապացուցանում էին, թէ եւրոպացիք չէին հաւատում Թիւրք կառավարութեան խոստումներին և անհասարակ ան-

կեղծութեանը, սաստիկ զայրացրին Կ. Պոլսի ղեկավարող շրջանները. Թիւրք կառավարութիւնը մերժեց նաև Լոնդոնի «արձանագրութիւնը»՝ հիմնուելով Պարիզի դաշնագրի 9-րդ յօդուածի վրայ, որ իրաւունք չէր տալիս եւրոպացիներին միջամտել Թիւրքիայի ներքին գործերին։ Արտաքին գործերի մինիստր Սաւֆէթ փաշան՝ խրոխտաբար գրում էր Թիւրք դեսպաններին (մարտ 29/ապր. 9). «Ոչ մի նկատում մեզ չի կարող արգելել. մենք կը գործադրենք խոստացուած բարենորոգումները՝ առանց նահանգի, կրօնի և դասակարգի զանազանութեան։ Մենք բողոքում ենք այն ստորացնող խնամակալութեան դէմ, որ Եւրոպան ուզում է մեր վրայ դնել»։

Այս ինքնավստահ մերժողական պատասխանին՝ իր արդարացումը գտնում էր միայն այն գաղտնի հակառակութեան և փոխադարձ անվստահութեան մէջ, որ տածում էին Ռուսաստանն և Անգլիան միմեանց հանդէպ։ Այս վերջինը բացարձակապէս յայտնել էր, թէ ինքը «չէ միանալու միւս տէրութիւնների հետ Թիւրքիայի վրայ ճնշում գործ դնելու համար և ոչ էլ իր հաւանութիւնը կը տայ, որ մի ուրիշ տէրութիւն ճնշում գործ դնէ»։ Բայց Թիւրք կառավարութիւնը չափազանց սխալվում էր իր հաշիւների մէջ։ Ալեքսանդր Բ. Ազատարար կայսրն՝ երբ տեսաւ, թէ Թիւրքիան Եւրոպայի առաջարկած վերջին միջոցն էլ չընդունեց, նա չընկրկեց և ապրիլի 6/19-ին պատերազմ հրատարակեց Թիւրքիայի դէմ, «զէնքի ոյժով ձեռք բերելու համար այն, ինչ որ պետութիւնները չէին կարողացել անել համոզել ջանալով»։

Պատերազմի յայտարարութիւնից անմիջապէս յետոյ կառավարչական շրջանների թելադրութեամբ մի առ մի բրիտանական դեսպանին ներկայացան Թիւրքահպատակ քրիստոնեայ հասարակութիւնների հոգևոր պետերը՝ հայ-լուսաւորչական պատրիարքը, հայ-կաթո-

լիկ պատրիարքի փոխանորդը, սիրիացիների պատրիարքը, յունական պատրիարքարանի գործակատարն և այլն։ Սրանք բոլորն էլ միևնոյն յայտարարութիւնն էին անում Թիւրքիայի բարեկամ պետութեան ներկայացուցչին, այն է՝ թէ իրանք բոլորն էլ հակառակ էին Ռուսաստանին և նախընտրում էին մնալ Թիւրք կառավարութեան հպատակ, քան թէ ռուսական կառավարութեան ենթարկուել, որովհետև Թիւրքիայում նրանք դաւանութեան կատարեալ ազատութիւն էին վայելում, մինչդեռ ռուսական կառավարութիւնը կրօնական հարցերում անհանդուրժող էր։ Այս դիմումների բուն նպատակն էր ցոյց տալ, թէ Ռուսաստանի յառաջ բերած պատճառը պատերազմի համար, այն է՝ քրիստոնեաների պաշտպանութիւնը ճիշտ չէր, քանի որ իրանք, քրիստոնեաները հակառակ էին Ռուսաստանին, և այս կերպով Թիւրքիայի կողմը գրաւել Եւրոպայի, մանաւանդ Անգլիայի համակրութիւնն, որ շատ կարևոր էր։

Յառաջ բերենք Ներսէս պատրիարքի յայտարարութիւնն անգլիական դեսպանին, որ այնքան աղմուկ հանեց և դժգոհութեան առիթ տուեց նրա դէմ, ժողովրդի մէջ։

Ապրիլի 14/26-ին (1877) անգլ. դեսպան միստր Լէյըրդ հետևեալն է գրում կոմս Դէրբիին.

«Այսօր ինձ այցելեց հայ-գրիգորեան պատրիարքը։ Նորին սրբազնութիւնն եկել էր շնորհաւորելու իմ գալուստն և իր ժողովրդի վիճակի և կարիքների մասին ինձ հետ մտերմաբար խօսելու։ Նա ասաց հետևեալը. հայ ազգը շատ աւելի կը գերադասէ օսմանեան վարչութեան տակ մնալը, քան թէ ռուսական իշխանութեան ենթարկուելը։ Հայերը Թիւրքիայում բոլորովին ազատ են իրանց կրօնը դաւանելու և գործադրելու, մինչդեռ Ռուսաստանում այդպէս չէ. և նրանք ապացոյցներ ունեն, որ Ռուսաստանը մտադիր է ճնշել և հարկադրել, որ հայերն իրանց հայրերի հա-

ւատը թողնեն և յունադաւանութիւնն ընդունեն։ Բայց հայերն որոշել են երբէք այդպէս բան չանել։ Հայերի շահերը նոյնն են թիւրքերի շահերի հետ, և նրանք յոյս ունեն աւելի զարգանալ և աւելի մեծ ազատութիւն վայելել օսմանեան հպատակ մնալով, քան թէ ռուսահպատակութիւն ընդունելով։ Կ. Պօլսի և յարակից նահանգներում բնակուող հայերը բնաւ գանգատի տեղի չունեն. սրանք պատուաւոր և կարևոր պաշտօններ են գրաւած և մեծ ազդեցութիւն ունեն երկրի կառավարութեան և վարչութեան մէջ...։ Նորին սրբազնութիւնը պնդեց, թէ թիւրք կառավարութիւնը պարտաւոր է հայ ժողովրդի մէջ տիրող այս ոգին քաջալերել, ամեն հնարաւոր հովանաւորութիւն և պաշտպանութիւն ցոյց տալով հայերին։ Թիւրք կառավարութիւնը թող չմոռանայ, որ Էջմիածնի կաթողիկոսն, որ դեռ ահագին ազդեցութիւն ունի հայ ազգի վրայ, ռուսահպատակ է, և թէ ռուսական կառավարութիւնը Հայաստան՝ արշաւող իր բանակում հայերին դիտմամբ բարձր և վստահելի պաշտօններ է տուած, որպէս զի հայ քրիստոնեաների աջակցութիւնն և համակրութիւնը գրաւէ։ Նորին սրբազնութիւնը հաւատացած է, որ ռուսական կառավարութեան այս նպատակը չիրագործուի, եթէ Բ. Դուռը փաստերով ցոյց տայ, թէ մտադիր է հայերի հետ արդարութեամբ վարուել և նրանց կեանքն ու գոյքը պաշտպանել։ Եթէ Բ. Դուռն այսպէս վարուի, նա կարող է հայերից մի ազգային պահակախումբ (milice) կամ քաղաքային պահակների գունդ կազմել, որ մահմեդականների հետ միասին իրանց ընդհանուր հայրենիքն և քաղաքները կը պաշտպանեն ռուս արշաւողների դէմ...»*)։ Անգլ. դեսպանը չափազանց ուրախանում է Ներսէսի այս հակառուսական, ուղղակի անքաղաքագիտական յայտարարութիւնից, որի ամբողջ արդիւնքն

*) «Blue Book». Turkey, № 25 (1877), էջ 164.

այն է լինում, որ դեսպանն իր թարգմանին ուղարկում է Սավֆէթ փաշայի մօտ, խորհուրդ տալու նրան որ թիւրք կառավարութիւնը գոհացնէ հայերին, այն Սավֆէթ փաշայի մօտ, որի գիտութեամբն էր, որ թէ Ներսէս և թէ միւս կրօնապետները դիմել էին Լէյըրդին։ Քիչ ժամանակ վերջն, երբ անգլ. դեսպանի այս զեկուցագիրը «Կապոյտ Գրքից» թարգմանուելով հրատարակուեց Կ. Պօլսում, ժողովուրդն և մամուլն ընդհանրապէս, ինչպէս նաև ազգային երեսփոխաններից ոմանք չծածկեցին իրանց դժգոհութիւնը։ Այս գանգատն այնպիսի զգալի չափեր ընդունեց, որ Ներսէս ստիպուած եղաւ ոչ միայն ինքն իրան արդարացնել, յայտարարելով թէ իր խօսքերը սխալ են հաղորդուած, այլ և իր ստորագրութեամբ այդ իմաստով պատասխան-հերքում հրատարակել. բայց այնու ամենայնիւ Ներսէսի սկզբնական յայտարարութիւնն իբրև զէնք ծառայեց Բ. Դրան և անգլ. դեսպանի ձեռքը։ Միւս հայազգի պատրիարքն, Հասունեան, անձամբ չգնաց դեսպանի մօտ՝ հիւանդութիւն պատճառաբանելով. նրա կողմից այցելեց փոխանորդն իր հետևորդներով։ «Հայ-կաթոլիկ պատրիարքի փոխանորդ եպիսկոպոսն և իր հետևորդները,—պատմում է միստր Լէյըրդ,—շնորհաւորեցին իմ բարի գալուստն յանուն պատրիարքի և կաթոլիկ հայ ժողովրդի, միևնոյն ժամանակ շնորհակալութիւն յայտնելով այն աջակցութեան և պաշտպանութեան համար, որ թագուհու կառավարութիւնը միշտ ցոյց է տուել հայ ազգին։ Նրանք խիստ լեզուով խօսեցին ռուսական վարչութեան և ազդեցութեան ենթարկուելու դէմ և բաղձանք յայտնեցին թիւրքահպատակ մնալ։ Նրանք, միևնոյն ժամանակ, միւս քրիստոնեայ հասարակութիւնների պետերի նման, հարկաւոր էին համարում, որ թրքական յոռի և փչացած վարչութիւնը բարեկարգուի և սուլթանի բոլոր հպատակ-

ների համար հաւասարապէս՝ կատարեալ և անկողմնապահ արդարութիւն ապահովուի»։

Քրիստոնեայ կրօնապետների գործածած այս խիստ լեզուն, մանաւանդ այն միաձևութիւնն, որ նշմարվում էր նրանց յայտարարութիւնների մէջ, համոզել է անգլիական դեսպանին, թէ նրանց այս հակառուսական զգացմունքն անկեղծ է, «եթէ նոյն իսկ,—ասում է,—նրանց գործածած բացատրութիւնը փոքր ինչ չափազանցուած համարենք»*)։

Անգլիական կառավարութեան համար քրիստոնեայ հոգևոր պետերի յայտարարութիւնների չափ՝ եթէ ոչ աւելի՝ թանկագին էին այն ուղերձներն, որ դեսպանն ստացաւ նոյն ինքն օսմանեան խորհրդարանից, երկու անգամ, և այս երկու անգամին էլ հայ-օսմանեան երեսփոխանները գործունեայ դեր են կատարել։ Նախ՝ ապրիլի 3/15-ին նրան ներկայացաւ մի պատգամաւորութիւն 6 երեսփոխանից բաղկացած, որ նրան յանձնեց բարի գալստի առթիւ մի գրաւոր շնորհաւորութիւն, որին մասնակցողների և ստորագրողների մէջ էր Սեպուհ Մազլումեան։ Սա էր, որ խօսում էր յանուն իր ընկերակիցների և ջերմագին հաւատացնում էր, թէ «ամէն դաւանութեան քրիստոնեայ հասարակութիւնները վայելում են և անշուշտ պիտի վայելեն անհամեմատ աւելի մեծ կրօնական ազատութիւն և զարգացման աւելի մեծ յոյս ունեն թիւրքական իշխանութեան տակ, քան թէ ռուսականի»։ Բայց Մազլումեան միևնոյն ժամանակ խիստ կերպով դատապարտեց Թիւրքիայի յոռի և ապականուած վարչութիւնն և կեանքի, գոյքի ապահովութեան բացակայութիւնը**)։ Երկրորդ՝ երբ անգլիական կառավա-

*) Անդ. էջ 126։ Ուշադրութեան արժանի է, որ յոյն պատրիարքի ներկայացուցիչների յայտարարութիւնները չեն հրատարակուած «Կապոյտ Գրքում»։

**) Անդ. էջ 172.

րութիւնը՝ պատերազմի հրատարակուելու մասին իշխան Գորչակօվի շրջաբերականին՝ Թիւրքիայի համար նպաստաւոր բովանդակութեամբ մի պատասխան ուղղեց, օսմանեան խորհրդարանն ապրիլի 30-ին աւելի հանդիսաւոր կերպով շնորհակալութեան մի պաշտօնական ուղերձ քուէարկեց միստր Լէյըրդին, որի մէջ միևնոյն ժամանակ դառն գանգատներ կային Ռուսաստանի դէմ։ Ուղերձը մատուցին խորհրդարանի երկու փոխ-նախագահներն, որոնց մէկը հայ՝ Յովհ. էֆ. Ալլահվերտի։ Այս ուղերձի մէջ, որ բաւական ընդարձակ է, երկու տեղ կայ, որոնք ամփոփում են և պարզում նրա ամբողջ raison d'être-ն։ Ուղերձն սկսում է այսպէս. «Բազմաթիւ նախկին փորձերից յայտնի է, որ ամէն անգամ, երբ օսմանեան կայսրութեան մէջ յառաջադիմութեան նշան է երևացել, Ռուսաստանը՝ մեր ազգի այս դարաւոր թշնամին՝ անմիջապէս որևէ չնչին առիթ է գտել մեզ դէմ պատերազմ հրատարակելու։ Ահա այս փորձերից դատելով, այս անգամ ևս նրա կողմից յարձակման էինք սպասում օսմանեան ազգի դէմ»։ Այս խօսքերն ակնարկում են թիւրքերի մէջ տիրած այն՝ ոչ-բոլորովին անհիմն համոզումն, թէ Ռուսաստանը թշնամական աչքով էր դիտել Թիւրքիայի սահմանադրական երկիր դառնալը...։ Խօսելով քրիստոնեաների պաշտպանութեան խնդրի մասին, օսմանեանների ներկայացուցչական ժողովն ասում էր. «Ոչ-մահմեդական ժողովուրդներն, որոնք «օսմանցի» տիտղոսն ունին, և զանազան քրիստոնեայ հասարակութիւններն, որոնք կատարեալ ազատութիւն են վայելում օսմանեան կայսրութեան հովանու տակ, սոսկումով և քամահրանքով լսեցին մեր թշնամու պնդումը, թէ նա ուզում է եղել պաշտպան հանդիսանալ քաղաքակրթութեան և յառաջադիմութեան, որն իրանք արդէն վայելում են, ինչպէս քանիցս յայտարարել են...»։ Այսպիսի ջերմ համակրական ուղերձներ ստանալուց յետոյ՝ մա-

սամբ հասկանալի է դառնում այն լի գովասանքով զեկուցումն, որ պ. Լէյըրդ գրում է օսմանեան խորհրդարանի նկատմամբ*), այն ժամանակ, երբ ուրիշ եւրոպացի հանդիսատեսներ բոլորովին տարբեր կարծիք էին յայտնում այս մասին, և նոյն իսկ անգլիական մամուլն անխնայ քննադատում էր խորհրդարանի նախագահին և առհասարակ ամբողջ օսմ. սահմանադրութիւնը։

Օսմանեան խորհրդարանում հայ երեսփոխանները կարևոր դիրք գրաւեցին իրանց հմտալից ճառերովն և օսմանեան հայրենիքին ջերմ անձնուիրութեամբ։ Նրանք իրանց թիւրք հայրենակիցների հետ միասին եռանդագին մերժում էին օտար միջամտութիւնն երկրի ներքին գործերում։

Երբ ապրիլի 13-ի նիստում խորհրդարանը քննում էր Ռուսաստանի պատերազմ հրատարակելու ծանրակշիռ խնդիրը, Հալէպի երեսփոխան Մանուկ Խարաճեան մեծ եռանդով հերքում է Ռուսաստանի յառաջ բերած շարժառիթը, թէ քրիստոնեաների պաշտպանութեան համար է պատերազմ յայտարարել, և բուռն ոգևորութեամբ բացատրում է, թէ հայ ժողովուրդը, մանաւանդ Հալէպի իր ընտրողները, պատրաստ են ամեն կերպ զոհողութիւն յանձն առնել իրանց հայրենիքն և իրանց սիրելի թագաւորն օտար յարձակման դէմ պաշտպանելու համար։ Նոյնը կրկնում է Ս. Մագասուսեան, և բովանդակ խորհրդարանն եռանդագին ծափահարում է նրանց։ Կարնի երեսփոխանները՝ Պալլարեան և Խարաճեան չեն ուզում ետ մնալ իրանց ընկերակիցներից և աւելացնում են, թէ կարնեցիք արդէն մի տարուց ի վեր է զէնքի են դիմել իրանց իսլամ հայրենակիցների հետ ընդհանուր հայրենիքը պաշտպանելու համար արտաքին թշնամու դէմ և թէ Դանիէլ

**) «Blue Book». Turkey, № 26 (1877)՝ էջ 96—97.

Խարաճեան անձամբ հասարակ զինուոր է գրուել այդ նպատակով։ Նոյն ոգով խօսում է նաև Ադրիանուպօլսի հայ երեսփոխանը*)։ Իրանց հայ պաշտօնակիցներից ետ չեն ուզում մնալ միւս յոյն և այլ ոչ-մահմեդական երեսփոխաններն, որով բոլորն էլ արժանանում են մահմեդական երեսփոխանների և կառավարութեան ջերմ շնորհակալութիւններին։

Սակայն այս պատկերը փոխվում է, երբ Կ. Պոլիս լրեր են հասնում, թէ պատերազմի դաշտի վրայ օսմանեան անկանոն զօրքն և քիւրդերը սոսկալի արհաւիրք են տարածել հայ ժողովրդի վրայ, ամբողջ գիւղեր աւերի ենթարկելով և հազարաւոր հայ գիւղացիներ սրից անցընելով։ Այս կոտորածի լուրը խորապէս ցնցեց օսմանցի-հայ երեսփոխաններին, և նրանք խորհրդարանի յունիսի 14-ի նիստում չքաշուեցին իրանց սրտի ամբողջ դառնութիւնը թափել կառավարութեան գլխին։ Այն հայ երեսփոխանն (Պալլարեան), որ հազիւ 2 ամիս յառաջ այնքան եռանդուն կերպով պաշտպանում էր թիւրք բանակն, այժմ նոյնքան եռանդով յարձակվում էր գաւառական թիւրք վարչութեան և քիւրդերի վրայ. նա պատմում էր մանրամասն՝ նրանց արարքը պատերազմից առաջ. «Ասոնց (քիւրդերի) գլխաւորներն երբեմն կը բռնուէին,—ասում էր նա,—և կը բանտարկուէին, բայց շատ չանցած թող տրուելով աւելի կատաղութեամբ իրենց առջի գազանութիւնները

*) Ներսէս պատրիարք, որ համախոհ կերպով էր գործում այն միջոցին օսմանեան խորհրդարանի հայ երեսփոխանների հետ, ռուսական պատերազմի առթիւ մի շրջաբերական կոնդակ հանեց և Ս. Գրքից վկայութիւններ բերելով յորդորում էր հայ ազգը հաւատարիմ հպատակ մնալ և աղօթել առ Աստուած «վասն պահպանութեան անդին կենաց օգոստափառ թագաւորին օսմանեանց՝ սուլթան Համիդ Բ.-ի և վասն անպարտելի զօրութեան և յաջողութեան օսմանեան արիագունդ բանակին»։ («Մասիս», 1877 ապրիլ 28).

ձեռք կ՚առնէին։ Վալիներէն և միւթէսարըֆներէն շատեր ալ կան, որ այդ քրդաց գործակից և համախոհ գտնուած են, որոնց անունը հարկ չեմ տեսներ այժմ յայտնապէս յիշատակելու։ Իսկ շատ աղէկ գիտեմ, որ այդ քիւրդերուն ազատ թողնուելն ամեն անգամ 10,000 ոսկիի կ'ըլլար իրենց։ Երբ կը հարցնէի կուսակալներուն, թէ ինչո՞ւ քիւրդերը չեն պատժուիր, որոնց համար երկու վաշտ զօրք բաւական է, և այսպէս անպատիժ թող կը տրուի, որ շարունակեն իրենց չարագործութիւնները, կը պատասխանէին ինձ, թէ այս գործոյն մէջ հիքմէթը հիւքիւմէթ կայ (վերապահեալ պետական գաղտնիք)։ Վերջերս խելամուտ եղայ, թէ ինչ է եղեր այս «պետական գաղտնիք» բաձծինին։ Այդ հիքմէթը սա է եղեր, թէ կառավարութիւնը անոր համար այդ վիճակի մէջ կը պահէ եղեր քիւրդերը, որ երբ հայերը Հայաստանի մէջ ապստամբական շարժում մը ընեն, քիւրդերը զանոնք զսպեն, և մէկ մ'ալ որ՝ եթէ պատերազմ բացուի ռուսաց դէմ, քիւրդերը օսմանեան բանակին կամաւոր զօրք օգնութիւն պիտի ընեն եղեր։

«Ահա յետոյ յայտնապէս տեսնուեցաւ, թէ այդ քիւրդերն ի՞ր տէրութեան պիտի օգնէին, որո՞նց զօրքերն են եղեր. այն քիւրդերն, որք խաղաղութեան ժամանակ անպատիժ կերպով և անխղճօրէն հայերը չարչարեցին և կեղեքեցին, հիմա ալ պատերազմի ժամանակ տէրութեան մատնութիւն և դաւաճանութիւն կընեն։ Ասոնք իրենց ի՞ր օգտին և ի՞ր յաղթութեանցը համար արդեօք այսքան պաշտպանութիւն գտած էին, մինչև Հայաստանի բնակչաց արիւնը ծծելու չափ... Ուրեմն ասոնց չարեաց և աղէտից վախճան տալու համար՝ անմիջական միջոցներ ձեռք առնել հարկ անհրաժեշտ է»*)։

*) Հ. Մինաս Նուրիխան. «Ժամանակակից Պատմ.», մասն Դ., 1907, էջ 455—456.

Երկու յոյն երեսփոխան ազդուապէս պաշտպանում են հայերին։ Յոյն Սուլիոտէս առաջինն է խօսում այդ մասին և ասում է. «Ինչ զեղծումներ, որ գործուեցան Ռումէլիին և Բուլղարիայի մէջ, նոյնը գործուելու վրայ է երկար ատենէ ի վեր քրդաց ձեռօք Հայաստանի մէջ։ Սակայն յոյներն և բուլղարք Եւրոպայի մէջ տետրակներ հրատարակելով և բողոքոյ ձայներ բարձրացնելով Եւրոպիոյ ուշադրութիւնն իրենց կրած տառապանաց վրայ հրաւիրեցին, մինչդեռ հայերը զուրկ լինելով այդ միջոցէն՝ լռութեամբ տարին և հանդուրժեցին իրենց կրած դառն տառապանաց։ Բայց միթէ արդարութիւն է, որ հայը՝ տէրութեան ամենէն աւելի հնազանդ ազգն՝ այսպէս չարչարուի և կեղեքուի, նոյն իսկ մեր տէրութեան դէմ ապստամբող քրդաց ձեռօք»։ Բոլոր մահմեդական երեսփոխանները միանում են նրանց. և որովհետև քրիստոնեաների վրայ բռնութիւն գործադրուելու հարցն, որի հիման վրայ դեսպանաժողով էր գումարուել և պատերազմ էր հրատարակուել, այս պարագայում բացարձակապէս հաստատուում էր, ուստի խորհրդարանը որոշեց պահանջել Բ. Դռնից, որ անմիջական ազդու միջոցներ ձեռք առնէ այդ բռնութիւնները գործ դնողների դէմ...։

Այս եղաւ Հայկական Խնդրի առաջին հրապարակական արծարծումը թրքական պաշտօնական շրջաններում։

Առ հասարակ օսմանեան երեսփոխաններն սկսել էին իրանց համարձակ յայտարարութիւններով ճնշել կառավարչական շրջաններն, որոնք, մանաւանդ պատերազմի ընթացքում, չափազանց անյարմար էին համարում խորհրդարանի հարցապնդումներն և յարձակումները թէ պատերազմի անյաջող ընթացքի և թէ կառավարութեան քաղաքականութեան մասին։ Եւ որպէսզի ժողովուրդն երեսփոխանների այս յարձակողական ճառերը կարդալով չխրախուսուի և նոյնպէս

դժգոհութեան ցոյցեր չանէ, Աբդիւլ Համիդի հրամանով կառավարութիւնն արգիլեց լրագիրներին՝ խորհրդարանի ատենախօսութիւնները հրատարակել նախ քան պաշտօնական արձանագրութիւնների տպուելն, որտեղ շատ բան փոխվում էր կամ կրճատվում։ Իսկ երբ կառավարութիւնը տեսաւ, որ այնու ամենայնիւ խորհրդարանի մէջ խօսուածները հրապարակ են հանվում, կարգադրեց, որ նիստերը գաղտնի լինեն, որպէսզի կարելի լինի արձանագրութիւնները բոլորովին չհրատարակել։ Վերջապէս յունիսի 19-ին սուլթանի հրամանով նախագահը յայտարարեց, որ Կ. Պոլիսը պատերազմական վիճակի մէջ էր, հետեւաբար խորհրդարանի նիստերը պէտք էր դադարեցնել։ Թէև երեսփոխանները բողոքեցին և դիմեցին նոյն իսկ սուլթանին, բայց այնու ամենայնիւ նրանց իրաւունք տուեց միայն 2 նիստ եւս գումարել։ Այնուհետև սուլթանի իրադէով օսմանեան անդրանիկ խորհրդարանն արձակուեց և կարգադրութիւն եղաւ 3 ամիս յետոյ նոր ընտրութիւններ կատարելու։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՕԹՆԵՐՈՐԴ

Վանի հրդեհն և քննութեան արդիւնքը.—Մարկոս Աղաբէկեան և Մկրտիչ Աղաթօն.—Գաւառացի հայերի վիճակը պատերազմի ժամանակ.—Զարդ և բռնութիւններ.—Բողոքներ.—Սուլթան Համիդի և Ներսէս պատրիարքի սիրալիր տեսակցութիւնը.—Շքանշաններ պատրիարքին և առաջնորդներին.—Հայ փախստականները Կովկասում.—Գաղթականութեան հոսանքը.—Ռուսահայոց օգնութիւնը գաղթականներին։

Ռուս-թիւրքական պատերազմը բազմաթիւ աղէտներ յառաջ բերաւ գաւառաբնակ հայ ժողովրդի գլխին։ Բայց աղէտների շարքն սկսել էր արդէն դեռ պատե-

րազմը չսկսած։ Առաջին զոհը տուաւ Վանի հայութիւնը։ 1876 թ. դեկտեմբերի 1-ին սոսկալի մի հրդեհ հրոյ ճարակ դարձրեց քաղաքի ամբողջ շուկան։ Ոչնչացան հայերի 500-ի չափ խանութները. իսկապէս ապրանքի միայն մի քառորդն այրուեց, մնացածն ամբողջապէս կողոպտուեց հեծեալ, պահեստի և ոստիկան զինուորների ձեռքով. ուրիշ կողոպտող քիչ կար։ Ոչ միայն զօրքի պաշտպանութեան վրայ յոյս չկար, այլ աւարառուն գլխաւորաբար զօրքն էր։ Իսկ նահանգապետը հիւանդ պառկած էր։ Բայց հայերի կորուստը միայն խանութի ապրանք չէր։ Նրանք սովորութիւն ունէին իրանց բոլոր արժէքաւոր իրերն, ինչպէս ակնեղէն, մուրհակներ և նոյն իսկ փողը խանութների նկուղներում պահել իբրև ապահով տեղ. և ահա այս ամենը կորաւ նոյնպէս։ Հրդեհաձգութեան գլխաւոր նպատակն, ինչպէս օտար հիւպատոսները վկայում են, աւարառութիւնն էր*)։ Ներսէս պատրիարքն անմիջապէս պահանջեց խիստ քննութիւն և յանցաւորների պատժումը։ Նոր նշանակուած սադրազամ Միդհատ փաշան խոստացաւ գոհացում տալ, և իրօք մի քանի յաջող կարգադրութիւններ անմիջապէս իրագործուեցին։ Վան, որ մինչև այն ժամանակ Էրզրումի վիլայէթի մասն էր կազմում, 1877 թ. յունվարից դարձաւ անկախ վիլայէթի կենտրոն՝ իր մէջ առնելով Բիթլիսը (Բաղէշ), Մուշն և Հէքքեարին։ Վալի նշանակուեց մի վստահելի և անկողմնակալ թիւրք պաշտօնեայ, Հասան փաշա։ Բացի դրանից՝ նկատելով որ նոր կազմուած նահանգում բնակիչների մեծամասնութիւնը հայ էր, որոշուեց թիւրք կուսակալին մի հայ օգնական տալ։ Վանի այս առաջին օգնական-վալին եղաւ Մարկոս Աղաբէկեան, որ լուրջ կերպով ձեռնարկեց գործի։ Վան հասաւ թէ չէ՝ նա ամենից յառաջ աշխատեց տեղական

*) «Blue Book», Turkey, № 15 (1877), էջ 8.

ոստիկանութիւնը մաքրել վնասակար և անկարգ տարրերից: Ցեղական հաւասարութեան հիման վրայ, բոլոր անարժան մահմեդական ոստիկաններին հեռացնելով նրանց փոխարէն վստահելի մարդիկ նշանակեց հայերից, որոնց և յանձնեց քաղաքի կարգապահութիւնը: Եւ որ անտանելի էր մահմեդականների համար, թէ ոստիկան և թէ գիշերապահ հայերին պատուիրեց բակոյն զէնքի դիմել, եթէ կարգապահութիւնը խանգարող և ընդդիմացող լինի նոյն իսկ թիւրքերից: Այս կարգերը շատ ծանր թուեցան թիւրքերին, մանաւանդ նրանց երևելիներին, որոնք անսովոր էին հայի մօտ զէնք և իշխանութիւն տեսնելու: Նրանք բողոքեցին վալիին, որ իրանց պատասխանեց, թէ կատարուած բարենորոգումները բարձրագոյն իշխանութեան հրամանով էին եղած, և թիւրքերը պարտաւոր էին յարգել կառավարութեան կարգադրութիւնները:

Վանի հրդեհի և աւերման պատճառները քննելու և յանցաւորներին պատժելու նպատակով կառավարութիւնը մի խառն յանձնաժողով ուղարկեց Վան: Կատարուած քննութիւնները չկարողացան երևան հանել իսկական յանցաւորներին և աւարառուներին: Վանի թիւրքերը, մանաւանդ մեծամեծներն և իշխանաւորները, զօրքի և թիւրքերի գրգռման իբրև պատճառ ցոյց էին տալիս հայերի մէջ երևցած «կասկածելի տարրերն» աշխատելով դրանով արդարացնել իրանց վրիժառութիւնը. վնասների մասին էլ նրանք պնդում էին, թէ թիւրքերն էլ այնչափ էին վնասուել, որչափ հայերը, քանի որ այրուած շէնքերի կէսը թիւրքերի սեփականութիւնն էր. իսկ հրդեհը վերագրում էին պարզ պատահարի և զօրքի վարմունքը բոլորովին արդարացնում: Արդարութիւնը պահանջում է խոստովանել, որ հայ «կասկածելի տարրերի» մասին պատմուածը բոլորովին անհիմն չէր և այն էլ նրանց համար ոչ նպաս-

տաւոր կերպով*): Բայց մի քանի հոգու կամ «կասկածելիների» պատճառով հազարաւոր անմեղներ կործանելը վայրենի վրիժառութեան այն ծանօթ զգացմունքն է, որ թէ այն ժամանակ և թէ այնուհետև այնքան սարսափ և արհաւիրք է տարածած թիւրքիայի մերթ այս և մերթ այն մասում:

Քննիչ յանձնաժողովն իր քննութեան արդիւնքի մասին համերաշխ եզրակացութեան չկարողացաւ գալ: Քննիչներից մէկը՝ Մկրտիչ Աղաթօն՝ «այնպիսի տեղեկագիր շինեց, որով թիւրք հասարակութիւնն և զօրքերը կարդարացնէր.... Քննիչ յանձնաժողովի միայն թիւրք անդամները ստորագրեցին այդ տեղեկագիրն, իսկ հայ անդամները չստորագրեցին: Մարկոս Աղաբէկեան որչափ կրնար դէմ կեցաւ այդ տեղեկագրին, յայտնելով թէ բոլորովին անիրաւ և կողմնակալութեամբ գրուած է: Բ. Դուռն ընդունեց Աղաթօնեանի այդ ստայօդ տեղեկագիրը: Աղաբէկեան պաշտօնէ ձգուեցաւ, Աղաթօնեան վարձատրուեցաւ նորա տեղը անցնելով»**):

Վանեցիների այս մեծ դժբախտութիւնը բնականաբար անտարբեր չէր կարող թողնել իրանց մեծ հայրենակցին, Խրիմեանին, որ ուժեղ բողոքի ձայն ար-

---

*) Մի հայ թերթ այն միջոցին գրում էր. «Եթէ Վանայ մէջ մի քանի անխոհեմ տաք գլուխների ցոյցերը չլինէին, գուցէ Վանայ խանութները մինչև ցայժմ կանգուն և նոցա տէրերը թշուառութիւնից ազատ լինէին. այդ մեզ նոյնպէս ականատես վանեցիք պատմել են: Այդպիսի ցոյցերն ամենալուսաւորեալ տէրութիւնք էլ անպատիժ չեն թողնում, և այն՝ իրաւամբ. ուր մնաց բարբարոս մահմեդական տէրութիւնն, որ և բարբարոսաբար պատժեց, կամենալով թուլացնել այն ժողովուրդն, որի մէջ փոքր ինչ ույժ էր նկատում և երկիւղ էր կրում, որ այդ ույժն իւր դէմ կը կանգնի. և սա բարբարոսաբար ճնշեց այդ ույժը»: («Մեղու Հայաստանի», 1878, № 5).

**) «Մշակ», 1877 թ. յունիսի 27. Մ. Փորթուգալեանի յօդուածը:

ձակեց այս հրդեհի առթիւ և այդ պատճառով էլ զըրկուեց իր թոշակաբեր պաշտօնից*)։

Վանի հայոց վրայ կատարուած այս բռնութիւնն և նրա անպատիժ մնալը՝ քաջալերող օրինակ դարձաւ քիւրդերին, որոնք այնուհետև նորանոր սխրագործութիւնների դիմեցին։ «Ինչպէս երևում է,—գրում էր Էրզրումի անգլ. հիւպատոսը,—Բիթլիս, Մուշ և Մուտկան գաւառների քիւրդերն որոշել են օգուտ քաղել երկրի անկարգ վիճակից և կառավարութեան թուլութիւնից՝ ընդարձակ ծաւալով արշաւանքներ կատարելու. և չնայելով որ դեռ ձիւնը ծածկած է գետինը, նրանք իրանց գործողութիւններն արդէն սկսել են Բիթլիսի գաւառում»․ և նա մի առ մի թւում է այն հայ գիւղերն, որոնց վրայ յարձակուել, թալանել և կոտորել են քիւրդերը**)։

Իսկ ի՞նչ էին անում տեղական իշխանութիւնները։ Նահանգապետները ձեռքները լուանում էին յայտնելով իրանց անկարողութիւնը քիւրդերի դէմ։ Վանի վալին, օրինակի համար, ասում էր, թէ եթէ նա զօրք

*) Վանի հրդեհի առթիւ նախկին պատրիարք Մկրտիչ արքեպ. Խրիմեան Հայրիկ՝ «կուժ մի ջուր իւր այրած հայրենեաց վրայ» արկնելու համար գրեց «Վանգոյժ» տետրակն, որ նախ հրատարակուեց Կ. Պօլսում, 1877-ի սկիզբները. բայց կառավարութիւնն արգելեց նրա վաճառումը։ Այն ժամանակ նոյն տարին, ապրիլին, երկրորդ անգամ լոյս ընծայուեց Թիֆլիսում։

Խրիմեան՝ օսմանեան սահմանադրութեան հրատարակումից յետոյ նշանակուել էր ծերակոյտի անդամ, որի համար լաւ թոշակ էր ստանում. բայց այս տետրակի պատճառով հեռացուեց այդ պաշտօնից։

**) Երբ Կ. Պօլսի «Մանզումէի Էֆքեար» լրագիրը տպեց մի քանի թղթակցութիւն Վանից, որոնց մէջ նկարագրուած էին քիւրդերի այս շահատակութիւնները, կառավարութիւնն անմիջապէս խափանեց լրագիրն, իսկ խմբագրին (Կարապետ Փանոսեան) էլ բանտարկեց, իբրև «մտքեր գրգռող՝ սուտ լուր հրատարակելով...»։

կանգնեցնէ այն բոլոր քաղաքներում և գիւղերում, որոնց սպառնում են քիւրդերն, այն ժամանակ ռուսական սահմանագլուխն և բերդերը պաշտպանելու համար զօրք չէր մնայ...*)։ Բայց այս զօրքը, կանոնաւոր բանակն իր պաշտօնականներով՝ միթէ օրինակելի կարգապահ էին։ Կանոնաւոր զօրքի պաշտօնականները,—պատմում է նոյն դիւանագիտական աղբիւրը,—«մըտնում են խանութներն և ապրանքն առնում են իրանց ուզած գնով. խանութպանների ամենափոքր նկատողութեանը նրանք պատասխանում են ծեծով և քրիստոնէական կրօնը հայհոյելով։ Եւ այս բանը նրանք անում են հասարակ զինուորների առաջ, որոնք և հետևում են իրանց մեծերի օրինակին։ Այս՝ քաղաքներում։ Իսկ գիւղերում թէ պաշտօնակալ և թէ զինուոր՝ քրիստոնեաների հետ վարվում են ինչպէս իրանց քէյֆն է ուզում...»**)։

Անգլիական հիւպատոսները կանոնաւորապէս տեղեկագրում էին իրանց շրջանում կատարուած անկարգութիւններն, որովհետև լորդ Բիկընսֆիլդի թիւրքասէր կառավարութիւնն՝ իրերի այդ վիճակից դժգոհ խիստ շրջաբերական հրահանգ էր տուել իր բոլոր գործակալներին, որ խստիւ հետևեն և բռնութեան ամեն մի դէպք անձամբ ստուգեն և հաղորդեն Լօնդօն, որովհետև, ասուած է այդ հրահանգում, անգլիացիների հայեացքն այժմ շատ լուրջ կերպով ուղղուած է Թիւրքիայի վրայ։

Այս ամենը կատարվում էր արդէն դեռ պատերազմը չը յայտարարուած. իսկ երբ պատերազմական գործողութիւններն սկսեցին, գաւառական հայերի վիճակը՝ մանաւանդ սահմանագլխի մօտ՝ անտանելի դարձաւ։ Այս վերջինները պատերազմի ընթացքում չէին

*) «Blue Book», Turkey, № 15 (1877), էջ 146, 255.

**) Անդ. էջ 306.

կարող անտարբեր հանդիսատես մնալ զինուորական շարժումներին. հանգամանքներն այնպէս էին բարդուել, որ սահմանակից գաւառներում բնակուողներն ստիպուած էին նոյն իսկ գործնական մասնակցութիւն ունենալ: Եւրոպական Թիւրքիայում հայ քիչ կար, բայց այնուամենայնիւ այնտեղ եւ, յատկապէս Ռուշչուկում, նրանցից ոմանք զէնք էին առել և իբրև կամաւոր զինուոր օգնում էին Թիւրք բանակին, որի համար սուլթան Համիդի անունից առանձին շնորհակալութեան թուղթ էր ստացել պատրիարքը: Աւելի մեծ մասնակցութիւն ունէին հայերը Փոքր Ասիայի սահմանագլխի վրայ: Կարնից և շրջակայքից մի քանի հազար հայ կամաւոր էին գրուել և թէպէտ պատերազմի դաշտ չէին գնում, բայց բանակի ներքին պէտքերին օգնում էին:

Երբ պատերազմի առաջին շրջանում Լօրիս-Մէլիքովի և Տէր-Ղուկասովի բանակները հարկադրուած էին ետ քաշուել, Բայազէդի և Ալաշկերտի կողմերի հայ գիւղացիներն, որոնք իրանց ուրախութիւնն էին յայտնել քրիստոնեայ զօրքին և նրան որոշ համակրութիւն ցոյց տուել իրանց յարաբերութիւնների մէջ, այժմ ռուսաց նահանջելով՝ անպաշտպան էին զգում իրանց և իրաւացի կերպով վախենում էին Թիւրքերի և քիւրդերի վրէժխնդրութիւնից: Ուստի նրանք ամեն ինչ թողած՝ կցուեցին Տէր-Ղուկասովի բանակին և նրա հետ միասին անցան ռուսական սահմանը: Հայազգի զօրավարը մեծ շրջահայեցողութեամբ շարժելով թէ իւրն անվնաս ետ նահանջեց և թէ հազարաւոր փախստական հայեր ապահով կերպով բերաւ իր հետ: Բայց սոսկալի եղաւ այն հայերի դրութիւնն, որոնք մնացին իրանց տեղում: Վանի վալի Ֆայըկ փաշան, տեսնելով որ Տէր-Ղուկասով Բայազիդում հազիւ 1600 հոգուց բաղկացած մի փոքր զօրագունդ էր թողել, որոշեց պաշարել և նորից գրաւել քաղաքը: Եւ որովհետև ոչ իր

ձեռքի տակ եղած կանոնաւոր զօրքն և ոչ իր հաւաքած բաշի-բօզուքները բաւական չէին իր մտադրած նպատակի համար. ուստի նա դիմեց հայդերանցի քիւրդերի ցեղապետ շէյխ Ջէլալէդդինին, որի հրամանով 15,000-ից աւելի վայրագ քիւրդեր նետուեցին պատերազմի դաշտը: Քիւրդ շէյխի և իր վոհմակի գլխաւոր գործն աւազակութիւնն և աւարառութիւնն եղաւ: Նրանք դեռ փաշայի բանակը չհասած յարձակուեցին իրանց ճանապարհին հայ գիւղերի վրայ, 24 գիւղ հիմնայատակ կործանեցին, բնակիչներին ջարդեցին և նրանց բոլոր ինչքը թալանեցին: Ժողովրդի մի մասն ապաւինել էր ս. Բարթուղիմէոսի վանքն. անխնայ կոտորեցին այնտեղ բոլորին, գերելով կանանցից շատերին:

Այն ժամանակ, երբ կենտրոնական կառավարութիւնն աշխատում էր գրաւել հայ ազգի համակրութիւնն և համերաշխ գործակցութիւնը, գաւառացի հայերի վրայ գործ դրուած այս սարսափելի բռնութիւնները շատ մեծ յուզում յառաջ բերին Կ. Պօլսում թէ պետական և թէ հայկական շրջաններում: Բացի այն ազդու բողոքից, որ օսմանեան խորհրդարանի հայ անդամները բարձրացրին, ինչպէս տեսանք նախորդ գլխում, ազգային երեսփոխաններն էլ Ազգային Ժողովում մեծ աղմուկ հանեցին և բացատրութիւն պահանջեցին Ներսէս պատրիարքից, որ յայտնեց, թէ ինքն արդէն հարկ եղած դիմումն արել էր Բ. Դրան, որ շատ ցաւում էր այս անցքերի համար «և հաստատապէս որոշած էր ժողովրդեան անդորրութեան ու ապահովութեան համար ամեն ազդու միջոց ի գործ դնել. սակայն ինչ օգուտ, որ ասանիկ պատերազմի ատեն անկարելի է հաստատուն բարեկարգութիւններ ի գործ դնել» *): Ներսէս այս առթիւ դիմել էր նոյն իսկ շէյխ-իւլ-իսլամին, որ նա յորդոր կարդայ քիւրդ շէյխերին

*) Ատենագրութիւնք Ազգ. Ժողովոց.

և զսպէ Նրանց կրօնական մոլեռանդութիւնը։

Այս ջարդի և աւերմունքի թէ հայ ժողովրդի և թէ օտարների վրայ թողած ցնցող տպաւորութիւնը զէթ մասամբ փարատելու համար Աբդիւլ Համիդ որոշեց մի առանձին համակրական ցոյց անել Ներսէսին և՝ յանձին Նորա՝ ընդհանուր հայ ազգին. Այս նպատակով Նա իր մօտ հրաւիրեց պատրիարքին և Նրան մի բարձր շքանշան շնորհեց։ Աբդիւլ Համիդի և Վարժապետեանի այս տեսակցութիւնը բաւական բնորոշ կերպով ցոյց է տալիս սուլթանի պալատում այն ժամանակ տիրող քաղաքականութիւնն, ուստի աւելորդ չենք համարում այստեղ ամբողջապէս յառաջ բերել, ինչպէս որ նա պաշտօնապէս հաղորդուած է Ազգային Ժողովին *)։

«Օգոստոս 10/22-ին Ս. Պատրիարքն հայոց Տ. Ներսէս արքեպիսկոպոս յատուկ հրաւիրանօք ներկայացաւ Վեհ. Սուլթան Աբդիւլ Համիդ Կայսեր, ժամը 8-ին, ի կայսերական քէօշքն Եըլդըզի։ Երբ պալատ հասաւ, արքունի թէշրիֆաթճին (արարողապետ) ընդառաջ ելնելով առանձին սենեակ մը հրամցուց, յորմէ քառորդ մը զկնի Նորին Վեհափառութեան (սուլթանի) առեանն ելաւ։ Պատրիարքը մինչդեռ կը խոնարհէր առաջի գահոյից Կայսեր, Կայսրը, որ ոտքի վրայ էր, Պատրիարքի ձեռքէն բռնելով չթողուց, որ խոնարհի, և հրամայեց, որ պատրաստուած աթոռին վրայ նստի, իւր գահոյքին դէմը խիստ մօտ։ Պատրիարքը ըսաւ. «Վեհափառ Տէր, Ձեզ նման ինքնակալի մը առջև կանգնիլն ևս պատիւ է մեզ»։ «Խնդրեմ նստեցէք»—հրամայեց Կայսրը, և Պատրիարքը նստաւ խոնարհելով»։

Դրանից յետոյ տեղի է ունենում հետևեալ խօսակցութիւնը սուլթանի և հայոց պատրիարքի միջև.

«Կայսրը.—Ինչպէ՞ս էք, աղէ՞կ էք, հանգի՞ստ էք.

*) Առեն. Ազգ. Ժող. 12 օգոստ. 1877.

շատոնց ի վեր կը փափաքէի ձեզի հետ տեսութիւն ընել, բայց պատշաճ առենի մը կը սպասէի։ Ես զձեզ կը սիրեմ, այստեղը ձերն է, երբ որ կամենաք, կարող էք գալ ինծի։

«Պատրիարքը.—Վեհ. Տէր, մենք ինքզինքնիս մոռցած ենք բոլորովին, և միայն զՁեր Վեհափառութիւնը և կայսերական բանակը կը մտածեմք, գիշեր ցորեկ աղօթելով։ Հայոց ազգը կայսերական բանակին ամեն կերպ օգնութիւն չէ զլացած. թէ անձամբ և թէ իրենց կառքերովն, գրաստիւքը 40 հազար հոգւոյ չափ կը ծառայեն*)։

«Կայսրը. — Այո, գիտեմ, բայց շատ կը ցաւիմ ներկայ ժամանակին վրայ։ Ես, որ մրջիւնի մը վրայ կոխել կը խղճամ, այսչափ արիւնհեղութիւններ տեսնելուս յոյժ կը ցաւիմ, բայց սակայն գիտէ Աստուած, որ այս պատերազմին համար ես պատասխանատու չեմ։

«Պատրիարքը.—Թագաւորաց մեծագոյնն էք Դուք, և Ձեր նախորդները գերազանցած էք. նոքա իրենց ժամանակին գիտութիւններովը փառաւոր եղան, իսկ Դուք տագնապի մէջ, նեղութեան մէջ օսմանեան դրօշը փառաւորեցիք։ Դուք, Վեհ. Տէր, Ձեր կայսերական գահն ելնելէն ի վեր օր մը հանգիստ չունեցաք և առոր համար աւելի մեծ էք, և մենք, ազգովին, կաղօթեմք, որ Ձեր զէնքերը միշտ փառաւոր ըլլան և անցնին այս աղէտալի օրերը, որպէսզի կարող լինիք Ձեր գահակալութեան օրը փառաւոր խաթթով խոստացած բարեկարգութիւնները ի գործ դնել, վաճառականական և երկրագործական դպրոցներ հաստատելով և արուեստներու քաջալերում տալով։

«Կայսրը.—Իմ հայոց ազգիս յանչափս գոհ եմ և շատ շնորհակալ եմ իրենց ամենուն. կը խնդրեմ, որ հաղորդես ազգին՝ իմ շնորհակալութիւններս ու սէրս

*) Ընդգծումները մերն են։

գոհ եմ նաև Իմ Բ. Դուռը գտնուած հայ պաշտօնատարներէն, որք ամենայն անձնուիրութեամբ կաշխատին հաւատարմաբար։ Գիտեմ, որ հայ ազգս այս պատերազմին պատճառաւ շատ նեղութիւն կրեց. բայց պէտք է հաստատ գիտնան, որ այս ամէն տառապանաց փոխարէն շատ աղէկ օրեր պիտի տեսնեն և իրենց հաւատարմութեան պտուղը պիտի վայելեն և բաղդաւոր պիտի ըլլան։ Բոլոր հպատակներս կը սիրեմ, մանաւանդ հայոց ազգը՝ որ իր դարաւոր հաւատարմութեան արգասիքը այս անձուկ ժամանակին մէջ ալ ցոյց տուաւ։ Իմ աչքես իսլամ և քրիստոնեայ խտրութիւն չունին. ամէնքն ալ օսմանցի են. կրօնքն Աստուծոյ կը վերաբերի։ Ես իրենց կօնստիտիւսիօն (constitution, սահմանադրութիւն) տուի, որ ամէնքն ալ միենոյն կերպով յառաջադիմեն հաւասար եղբայրութեամբ»։

Պատրիարքը այստեղ մի երկար բարեմաղթութիւն է անում սուլթանի կեանքի, թիւրք բանակի յաջողութեան և իր բարի բաղձանքի կատարման համար, յայտնելով որ հայ ազգն անբաժանելի է օսմանեան տէրութիւնից, նրա արդարութեան աթոռին ապաւինած, միշտ նրա հաստատութիւնն և յարատեւութիւնն է ցանկանում։

«Կայսրն այս միջոցին ձեռնամած և խիստ ազնիւ վարմունքով ջերմեռանդութեամբ մաւիկ կընէր, քանիցս «շնորհակալ եմ» ըսելով։

«Պատրիարքը պատրաստ էր մեկնելու, բայց Կայսրը հրամայեց նստիլ, ըսելով. «Ձեր աղօթքն և խնդրուածքը Բարձրեալն Աստուած ընդունի, որ իմ բոլոր դիտաւորութիւններս ի գործ դրուին։ Սակայն, —ըսաւ Կայսրը.—շատ կը ցաւիմ բուլղարաց ազգին վրայ, որ հաւատարմութեան դէմ մեղանչեց։

«Պատրիարքը.—Իրաւունք ունի Ձեր Վեհափառութիւնը ցաւելու, բայց չեմ կարծեր, որ բովանդակ

բուլղար ազգը Ձեր անուն երախտեաց և հացին ապերախտ գտնուած ըլլայ. այլ փոքր մաս մը միայն՝ որ խաբուած են. ուստի Ձեր Վեհափառութիւնն անտարակոյս կը գթայ անոնց վրայ, որք մեղանչած չեն իրենց հպատակութեան մէջ։

«Կայսրը.—Շատ կը ցաւիմ, շատ կը ցաւիմ, բայց ինչ ըսեմ։ Ես պատասխանատու չեմ այս արիւնհեղութեանց»։

Նոյն միջոցին սուլթանի մի ակնարկով բերում են նրա արծաթէ ափսէի վրայ՝ Օսմանիէ շքանշանի Ա. աստիճանն և կօրդօնը և կախում են պատրիարքի վզից։

«Պատրիարքը կրկին բարեմաղթութիւն ըրաւ և շնորհակալութիւն յայտնեց, ըսելով որ «բոլոր հայ ազգը շնորհապարտ ըրիք կրկին, վասնզի Ձեր Վեհափառութեան առ այն ունեցած սիրոյն գրաւականն է»։

«Կայսրը.—Այս նշանը՝ յանուն և ի դէմս Իմ հայոց ազգիս կը շնորհեմ ձեզ, յորոց յոյժ շնորհակալ եմ»։

«Պատրիարքը՝ «Երանի թէ այսպիսի բարի և հազուագիւտ և հրեշտականման թագաւորի մը արժանաւոր հպատակն ըլլայինք» ըսելով խոնարհեցաւ և մեկնեցաւ կայսերական պալատէն»։

Երբ այս ջերմ ընդունելութեան նկարագրութիւնը Ազգային Ժողովում կարդացուեց, երեսփոխանները շնորհաւորեցին պատրիարքին և որոշեցին շնորհակալութեան ուղերձ ներկայացնել սուլթանին նրա հայասիրական զգացմունքի համար։

Համիդի այս համակրական ցոյցն այն արդիւնքն ևս ունեցաւ, որ Ներսէս մի առ ժամանակ դադարեց հրաժարականի մասին մտածելուց։ Դեռ ևս մի քանի ամիս յառաջ գաւառական վերջին հարստահարութիւնների պատճառով նա դարձեալ իր հրաժարականն էր ուղարկել Նոր սադրազամ Էդհէմ փաշային։ Բայց սա չէր ընդունել և, որպէսզի նրան հանգստացնէ, հրա-

մայել էր, որ Բ. Դռան մէջ վերստին գումարուի այն յանձնաժողովը, որի պաշտօնն էր գաւառական հարստահարութիւնների և մանաւորապէս հողային խնդրի քննութիւնը. Թէև այս գումարումն էլ այնքան աննպատակ էր՝ որքան առաջին գումարումները։ Միակ իրական հետևութիւնն, որ Ներսէսի այս հրաժարականն ունեցաւ, այն էր, որ, սադրազամի հրամանով, մի քանի գաւառական թիւրք պաշտօնեաներ, որոնց զեղծումների դէմ խիստ գանգատներ կային, անմիջապէս պաշտօնից արձակուեցին։

Սուլթան Համիդից վերջը Կ. Պօլսի կիսապաշտօնական մամուլն ևս սկսեց գովասանք կարդալ հայոց։ Առանձնապէս գովում էին Էրզրումի հայերին։ Էրզրումի կուսակալը հեռագրել էր, թէ հայոց առաջնորդը նրան այցելելով հանդիսաւոր կերպով հաւատացրել էր ռուսական պատերազմի առթիւ, թէ ինքն և իր ժողովուրդը խորին հաւատարմութեամբ համակուած են կառավարութեան նկատմամբ։ Սադրազամն այս պատճառով սրտագին շնորհակալութիւն յայտնեց Ներսէս պատրիարքին և տեղեկացրեց նրան, թէ «Օսմանիէ» շքանշաններ պիտի ուղարկէ Էրզրումի, Վանի, Մուշի և Կարսի հայ եպիսկոպոսներին.... Եւ երբ Կ. Պօլսում սուլթան Համիդ և իր Բ. Դուռը փաղաքշական խօսքերով և շքանշաններով աշխատում էին շլացնել հայոց աչքը՝ մոռացնելու համար տասնեակ հայ գիւղերի կործանումը, հարիւրաւոր հայերի ջարդն և հազարաւորների աւերումը, սահմանի միւս կողմը, Կովկասում, բոլորովին տարբեր ոգևորութիւն էր տիրում միևնոյն խնդրի առթիւ։

1877-ի սկզբից արդէն հայ գաղթականներ սկսել էին փախուստ տալ Կովկաս, պատերազմի երկիւղից և թիւրքաց անկանոն զօրքերի բռնութիւններից։ Այս թուականից սկսած՝ «Երևանի, Աղէքսանդրօպօլի և շրջակայ գիւղերի ճանապարհների վրայ կարելի էր

տեսնել բազմաթիւ թիւրքահայեր, պատառած հագուստներով և այլանդակուած մարմնով, որոնք փախել էին Հայաստանից, քիւրդերի գազանութիւններից»*)։ Այս միջոցին Բայազիդի շրջանից մի մեծ խումբ էլ փախաւ դէպի Պարսկաստան, Սալմաստ, բայց նրա մեծ մասը վերադարձաւ այնուհետև իր ծննդավայրը։

Երբ Տէր-Ղուկասովի բանակի հետ հազարաւոր թշուառ հայ փախստականների Կովկաս մտնելու լուրը հասաւ Թիֆլիս, անմիջապէս տեղական հայ հասարակութիւնը միջոցներ ձեռք առաւ նրանց օգնութեան հասնելու։ Արդէն յունիս ամսին (1877 թ.) եռանդուն կերպով վերստին հանգանակութեան ձեռք զարկին ի նպաստ թիւրքահայոց *)։ Թիֆլիսում այդ նպատակի համար էլ յատուկ մասնաժողով ընտրուեց, որ իր հանգանակած նուէրները—թէ փողով և թէ իրեղէններով—հասցնում էր գաղթականներին իր անդամների կամ տեղական օժանդակ մասնաճիւղերի միջոցով։ Բացի այս մասնաժողովից մեծ օգնութիւն հասցրին նրանց նաև Երևանի նահանգի գիւղացի հայերն, որոնք հիւրասիրեցին նրանց իրանց բնակարաններում և մի քանի ամիս անվարձ կերակրեցին բոլորին։

Զգալի նիւթական օժանդակութիւն մատոյց այս գաղթականներին նաև ռուսական կառավարութիւնը։ Երբ ՏէրՂուկասովի բանակի հետ եկած գաղթականները մտան Երևանեան նահանգը, Կովկասի գլխաւոր վարչութիւնը պետական պաշտօնեայ Յովհ. Խատիսեանին, որ միևնոյն ժամանակ Թիֆլիսի հայոց մասնաժողովի անդամ էր, ուղարկեց նրանց մօտ, որ տեղեկու-

---

*) «Մշակ», 1877 յուլիսի 11.

**) Մի քիչ առաջ արդէն Վանի հրկիզեալների համար նպաստ էր հանգանակուել ոչ միայն Կովկասում, այլ Ռուսաստանի զանազան կողմերում բնակուող հայերի մէջ, որոնք իրանց այս նպաստներն ուղղում էին կամ ռուսահայ լրագիրներին և կամ ուղղակի Կ. Պօլսի ազգ. պատրիարքարանին։

թիւններ ժողովէ նրանց վիճակի մասին և միանգամայն իր դիտողութիւնները ներկայացնէ, թէ ինչպէս և ում կարելի է տեղաւորել այն գաղթականներին Ռուսաստանի սահմաններում, ի հարկէ եթէ նրանք պատերազմը վերջանալուց յետոյ ուզեն մնալ Ռուսաստանում։ Մատիսեանի զեկուցման համաձայն՝ Տէր-Ղուկասովի բանակին հետևել են ընդամենը 2000 ընտանիք, որոնց մէջ էին 500 տուն եզիդիներ։ Այս 2000 ընտանիքից մի մասն անցել էր Պարսկաստան, 250 գերդաստան ետ էր դարձել Թիւրքիա, որով ռուսական սահմանն անցել էին իսկապէս միայն 900 հայ ընտանիք (թէև ի սկզբան տարածուել էր, թէ նրանց թիւը 3000-ի է հասնում)։ Մատիսեան իր պաշտօնական զեկուցման մէջ՝ այս գաղթականների մասին ասում էր, թէ «մեր (ռուսական) կառավարութիւնը ցանկանում է հովանաւորել նրանց՝ իբրև վարձատրութիւն այն համակրութեան համար, որ նրանք ցոյց տուին մեր զէնքի աջողութեան՝ Երևանեան բանակի (Տէր-Ղուկասովի հրամանատարութեամբ) արշաւած ժամանակ»*)։

Պատերազմի դադարումից վերջը, երբ յայտնի եղաւ, թէ ռուսաց զօրքը պիտի ետ քաշուի իր գրաւած տեղերի մեծ մասից, նորից զարթեց ժողովրդի մէջ Կովկաս գաղթելու ձգտումն, որ անշուշտ մեծ չափեր կառնէր, եթէ յորդորներ և արգելիչ միջոցներ չլինէին։ Այս գաղթականութեան կամ աւելի ճիշտը՝ փախուստի մտադրութեան պատճառներն էին նախ՝ թիւրքաց անկանոն զօրքի և քիւրդերի բռնութիւններն, որոնցից ազատուելու համար փախչելը միակ միջոց էր համարվում, երկրորդ՝ երբ ռուսական զօրքերը թըրքական գաւառներում յառաջացան, հայերից ոմանք քրիստոնեայ ազատարար զօրքի ներկայութիւնից քաջալերուած՝ թէ քաղաքներում և թէ գիւղերում փո-

*) «Մշակ», 1877, № 89.

խաղարձաբար բռնութիւններ էին կատարել տեղացի մահմեդականների վրայ. և երբ յայտնի եղաւ, թէ ռուսները պիտի թողնէին իրանց գրաւած այդ տեղերը, հայերը սկսեցին իրանց անապահով զգալ, վախենալով թիւրքերի վրէժխնդրութիւնից։ Էրզրումի անգլիական հիւպատոսը վկայում է, որ եթէ թիւրք հրամանատար Մուսա փաշայի խիստ կարգադրութիւնները չլինէին, իրօք այդպիսի մի վրիժառութիւն սպասելի էր։ Պատահել են դէպքեր, երբ նոյն իսկ քիւրդ ցեղապետներ, այս կամ այն գիւղերով, իրանց հովանաւորութեան տակ են առել իրանց շրջանի հայ գիւղացիներին և թէ պատերազմի ընթացքում և թէ յետոյ պաշտպանել են նրանց, չթողնելով որ գաղթեն*)։ Չնայելով այս պաշտպանողական միջոցներին, վրիժառութեան կամ աւելի ճիշտը՝ ջարդի և բռնութեան դէպքեր այնուամենայնիւ տեղի ունեցան, ինչպէս օր. Մարջուրում։ Ռուսական իշխանութիւնները՝ մանաւանդ հայազգիները՝ ընդհանրապէս ոչ միայն չէին քաջալերում, այլ ընդհակառակն ամեն կերպ աշխատում էին կանգնեցնել գաղթականութեան շարժումը։ Զօրապետ Յովհ. Լազարեւ, երբ դեռ Կարսի հրամանատարն էր, յատուկ գրաւոր յայտարարութեամբ յայտարարում էր, որ հայ ժողովուրդը չշարժուի իր հայրենի հողից. նա ապահովեցնում էր, թէ թիւրք կառավարութիւնն ամեն կերպ խոստում էր տալիս որևէ նեղութիւն չտալ նրանց։ Լազարևը նոյն իսկ աշխատում էր, որ պատերազմի ընթացքում գաղթողներն էլ պատերազմից յետոյ վերադառնան և տիրանան իրանց լքած տուն ու տեղին։ Այս ուղղութեամբ գործում էին նաև Կարինի ժամանակաւոր ոստիկանապետ նշանակուած Կոստանդին Կամսարականն և նրա օգնական Գրիգոր Նիկողո-

*) Առանձնապէս յիշվում է քիւրդ ցեղապետ Ջումշուդ աղան, Ալաշկերտի գաւառում։

սեանը: Բացի այս քաղաքական յորդորներից Կարսի և Կարինի ռուսական զինուորական իշխանութիւններն եւ նոյն մտքով ազդարարութիւններ արին և երբեմն նոյն իսկ բանի միջոցների դիմեցին գաղթականութեան հոսանքը կասեցնելու համար, որով միայն հնար եղաւ գաղթողների թիւը շատ սահմանափակել:

Այն գաղթականներն, որոնք արդէն փոքր ի շատէ տեղաւորուեցին Կովկասում, այլ եւ չուզեցին վերադառնալ Թիւրքիա: Նրանք բնակութիւն հաստատեցին, սահմանագլխի մօտերը, Երեւանեան նահանգում, թէև այն միջոցին Կ. Պոլսի հայ և թիւրք մամուլը լուր էր տարածել, թէ ռուս կառավարութիւնը նրանց համար բնակավայր է որոշել հոծ հայ ժողովուրդ ունեցող տեղերից հեռու, Աբխազիայում (դարձեալ Կովկասում), որ սխալ էր:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

Քրիստոնեաների զինուորագրութեան խնդիրը.—Բ. Դրան յայտարարութիւնն և ձեռնարկը 1855-ին.—Քրիստոնեաների մերժումը.—Ռուսական առաջարկութիւնը 1867-ին.—Բ. Դրան պատասխանը.—Թիւրք կառավարութեան ձեռնարկներն 1877-ին, պատերազմի ժամանակ.—Հայերի և յոյների ընդդիմութիւնը.—Ներսէս պատրիարքի վարմունքը.—Ազգային Ընդհանուր և Եկեղեցական Համագումար Ժողովների նիստերն և որոշումներն այս առթիւ.—Խնդրի փակուելը:

1877-ին հայ ժողովուրդն և առանձնապէս Կ.-Պոլսեցիներին ծանրապէս յուզող հարցերից մէկն էլ զինուորագրութիւնն էր: Մինչև այն ժամանակ Թիւրքիայում զինուորական ծառայութեան ենթարկվում էին միմիայն մահմեդականներն, իսկ ոչ-մահմեդականները

(քրիստոնեայ և հրէայ) ազատ էին այդ պարտականութիւնից և դրա փոխարէն վճարում էին որոշ զինուորական տուրք (բէդէլի ասքերիյէ): Այս տուրքը կոչվում էր ջիզիյէ և առնվում էր ամեն տարի 15 տարեկանից սկսած մինչև 75 տարեկան ոչ-մահմեդականից, մարդագլուխ մօտ 3 ռուբլի: Բացառութիւն էին կազմում միայն մայրաքաղաքի՝ Կ. Պոլսի բնակիչներն, որոնք ընդհանրապէս ազատ էին զինուորական թէ ծառայութիւնից և թէ տուրքից: Բայց այս խտրութիւնն իսկապէս ոչ այնքան արտօնութիւն էր քրիստոնեաների համար, որքան իրաւունքի զրկում, որովհետև քրիստոնեաների նկատմամբ ցոյց տրուած այս անվստահութիւնը խախտում էր այն ընդհանուր հաւասարութեան, որ 1839-ից ի վեր բազմաթիւ կայսերական հրովարտակներով քանիցս խոստացուել է նրանց և միշտ էլ մնացել է թղթի վրայ...: Այս պարագան շատ անգամ վէճի առարկայ էր Բ.-Դրան և Թիւրքիայի բարենորոգումների վրայ հոգացող եւրոպական տէրութիւնների միջև:

1847-ին թիւրք կառավարութիւնը ծովեզրաբնակ յոյներից նաւազ առաւ իր նաւատորմի համար և գոհ մնաց դրանից, ուստի 1850-ին փորձեց քրիստոնեաներից զինուոր առնել նաև իր ցամաքային ուժի լրացման համար: Բայց նրա այս փորձն անյաջող անցաւ, որովհետև կառավարութիւնը կրօնական խտրութիւնն արմատականօրէն լուծելու դժուարութեան առջև՝ ետ ընկրկեցաւ: Քրիստոնեաներն էլ իրանց կողմից ոչ մի փափագ և եռանդ ցոյց չտուին՝ թիւրքերի հետ նոյն դրօշակի տակ ծառայելու:

1855-ին, Ղրիմի պատերազմից յետոյ, դաշնակից տէրութիւնների, մանաւանդ Ֆրանսիայի ազդեցութեամբ, թիւրք կառավարութիւնն՝ ի մէջ այլ բարենորոգումների՝ զինուորական ծառայութեան հարցն եւ դրականօրէն աշխատեց լուծել և պաշտօնական յայ-

տարարութիւն*) հրատարակից, որտեղ անհրաժեշտ էր գտնում, որ այսուհետև ոչ-մահմեդական ժողովուրդները ևս մահմեդականների հետ միասին բաժանեն հայրենիքը զէն ի ձեռին պաշտպանելու պարտքը։ 1856 փետրվ. 18-ի Խաթթը Հիւմայունը նուիրագործեց այս յայտարարութիւնն առանձին յօդուածով (§ 17), իբր թէ վերջնականապէս հաստատելով քրիստոնեաների զինուորական ծառայութեան պարտքն և իրաւունքը։ Որոշուած էր, որ քրիստոնեայ ցեղերը զինուոր պիտի տային իրանց թուի համեմատութեամբ, բայց որովհետև դեռ յատուկ օրէնք չէր սահմանուած այս մասին, ուստի կառավարութիւնը կարգադրեց այս առաջին անգամ, իբրև բացառիկ միջոց, իր ճարկաւոր դատած թուով զինուոր առնել Ռումէլիի և Անատոլուի պատշաճ տեսած գաւառների բնակիչներից...։ Իսկ այս թիւը նա սահմանեց 1855-ին 15,000 հոգի։ Յայտարարութեան մէջ ասուած էր նաև, որ եթէ քրիստոնեայ զինուորներն ընդունակութիւն ցոյց տան, կարող են պաշտօնակալի (officier) աստիճանի բարձրանալ։ Բ. Դրան այս ազդը սպասուած արդիւնքը չունեցաւ։ Քրիստոնեաներն և առանձնապէս յոյներն ու բուլղարները հակառակեցին։ Հայերը նոյնպէս հաճութեամբ չընդունեցին այս հրաւէրը։ Բ. Դուռն այն ժամանակ իր հարկ դատած 15,000 հոգին իջեցրեց 7000-ի. դարձեալ նոյն դժկամակութիւնը քրիստոնեաների կողմից, որոնք չէին ուզում թիւրքերի հետ միևնոյն զօրաբաժնում ծառայել զանազան հիմնաւոր պատճառներով։ Այս անյաջող միջոցի հետ զուգընթացաբար կառավարութիւնը ձեռնարկել էր յատուկ օրէնք մշակելու զինուորական ծառայութեան համար. 1856-ի Խաթթից յետոյ, երբ Եւրոպայի պահանջած վարչական և օրէնսդրական բարեփոխումների խնդիրը լուրջ կերպով թիւրք կառավա-

*) 21 շաբան 1271 թուով (9 մայիս 1855)։

րութեան հոգածութեան առարկայ դարձաւ, Բ. Դուռն՝ ինչպէս Թանզիմաթի նախորդ շրջանում (1839) արել էր, այնպէս էլ այժմ դիմեց ֆրանսիական օրէնսդրութեան օգնութեան։ Բազմաթիւ եւրոպական բայց առանձնապէս ֆրանսիական զանազան օրէնքների ժողովածուներ բերել տուեց, որպէսզի նրանցից առաջնորդուելով օսմանեան նոր օրէնսդրութիւն կազմուի։ Այս նպատակով Բ. Դրան մէջ մի բարձրագոյն խորհուրդ հաստատուեց, որին անդամակցութեան հրաւիրուեցին յոյներ և հայեր ևս։ Այս խորհրդին յանձնուեց նախ և առաջ զինուորագրութեան օրէնք մշակել քրիստոնեաների կամ աւելի ճիշդը՝ ոչ մահմեդականների համար։ Խորհրդում սկզբունքով ընդունուեց, որ զինուորագրութիւնն սկսուի 1857-ից և այս առաջին տարին քրիստոնեաներից առնուի 3500 հոգի, որ տարէցտարի աւելանալով պիտի հասնէր մինչև 25,000 հոգու։ Բայց պէտք էր արդեօք քրիստոնեայ և մահմեդական զինուորները միացնե՞լ, թէ՞ նրանց իւրաքանչիւրից տարբեր գունդեր կազմել։ Խորհուրդն այս մասին երկու տարբեր կարծիքի էր բաժանուած. մի մասը պնդում էր, թէ պէտք էր միացնել, որովհետև «Եւրոպան ցանկանում էր Թիւրքիայի զանազան ցեղերի ձուլումն, և բանակն՝ ինչպէս բոլոր ուրիշ երկիրներում լինում է՝ ամենալաւ միջոցն էր այդ ձուլման համար*)»։ Բացի դրանից, և այս պատճառաբանութիւնն անիրաւացի չէր, քրիստոնէական զանազան դաւանութիւնների պատկանող ցեղերի միջև աւելի մեծ թշնամութիւն կար, քան թէ քրիստոնեաների և մահմեդականների միջև, որը հարկաւոր էր նոյնպէս չէզոքացնել։ Եթէ անհրաժեշտ համարուէր անպատճառ ուշք դարձնել կրօնական խտրութիւնների վրայ, այն ժամանակ պէտք էր առանձին առանձին գունդեր կազմել օրթոդոքս յոյներից,

*) Schipoff. «Les Reformes» etc., էջ 89.

կաթոլիկ հայերից, լուսաւորչական հայերից և նոյնիսկ հրէաներից։ Այս հիման վրայ կազմուած մի բանակ անշուշտ խայտաբղէտ և միմեանց թշնամի տարրերից բաղկացած մի զանգուած պիտի ներկայացնէր, որով, ներքին կամ արտաքին պատերազմի ժամանակ քրիստոնեաները կարող էին մահմեդականների դէմ կանգնել։ Այս կարծիքին հակառակ կողմը պնդում էր, թէ ճշմարիտ մահմեդականը չէր կարող քրիստոնեայ իշխանաւորին հնազանդել, և աշխատում էին համոզել, թէ ի պահանջել հարկին բանակի մահմեդական մասը հեշտութեամբ կարող էր ընկճել քրիստոնեայ մասի ըմբոստութիւնը։

Այս բոլորն ոչ մի իրական արդիւնք չունեցաւ։ Ինչպէս ոչ թիւրք կառավարութիւնն էր անկեղծօրէն կամենում քրիստոնեաները զինուորագրելով երկրի պաշտպանութեան գործը նրանց հետ բաժանել, ոչ էլ այս վերջինները, մանաւանդ Եւրոպական Թիւրքիայի բնակիչները, հաճութիւն չէին ցոյց տալիս այս նոր միջոցին։ Իսկ եւրոպական տէրութիւնների մէջ կար մէկն, որ մեծ դժգոհութեամբ էր դիտում սկզբից ի վեր այս հարցը՝ նրա դրական լուծումը բոլորովին աննպաստ համարելով շատ տեսակէտներով*)։ Երբ 1867-ին, Թիւրքիայի բարենորոգման վերաբերեալ նա մի ընդարձակ ծրագիր ներկայացրեց միւս մեծ պետութիւններին, այդտեղ պարզ կերպով նա պատճառաբանում էր, թէ ինչու էր հակառակում քրիստոնեաների զինուորական ծառայութեան։ «Քրիստոնեաները գիտեն, —ասում էր նա,—որ մի անգամ թրքական բանակի զինուոր գրուելուց յետոյ՝ նրանք ոչ կարող են աստիճանի յառաջացում ունենալ և ոչ էլ որևէ նշանաւոր դիրք գրաւել. ընդհակառակը՝ նրանք շարունակ թիւրք զինուորներից կախում պիտի ունենան և նրանց զոհը

*) Այս տէրութիւնը Ռուսաստանն էր։

դառնան։ Վերջապէս, քրիստոնեաները շատ լաւ են հասկանում, որ, զինուորագրուելուց յետոյ, նրանք շատ յաճախ՝ իրանց կրօնակիցների դէմ ուղղուած բռնութիւնների գործիք պիտի դառնան մահմեդական իշխանաւորների ձեռքին»։ Այս հիման վրայ էլ ռուսական կառավարութիւնն այս միևնոյն ծրագրում առաջարկում էր, որ «սուլթանի քրիստոնեայ և հրէայ հպատակներն ազատ լինեն դարձեալ զինուորական ծառայութիւնից և դրա փոխարէն տուրք վճարեն, բայց միայն 18-ից մինչև 35 տարեկան եղողները։ Իսկ այն քրիստոնեաներն և հրէաներն, որոնք ինքնակամ կը յօժարեն զինուոր գրուելու, պէտք է ընդունուեն և ծառայեն նոյն պայմաններով, ինչ որ մահմեդականների համար է սահմանուած»։ Պարտաւորիչ զինուորական ծառայութեան փոխարէն Ռուսաստանը լաւագոյն էր համարում, որ քրիստոնեաները մահմեդականների հետ հաւասար կերպով ընդունուեն տեղական միլիցիայի մէջ, (milice locale) հասարակաց խաղաղութիւնը պաշտպանելու նպատակով, և այս միլիցիայից ընտրուեն բոլոր ոստիկանները։ Միևնոյն ժամանակ էական պայման էր առաջարկվում, որ այս միլիցիան մնայ իր գաւառում և դուրս չուղարկուի։ Պատասխանելով այս ծրագրին Բ. Դուռն՝ իր դեսպաններին ուղղած շրջաբերականում (25 մայիս 1867) ասում էր. «Ոչ-մահմեդականների օսմանեան բանակ ընդունուելուն գլխաւոր արգելքն եղել է այն քամահրանքն, որ զինուորական ծառայութիւնը ներշնչել է նրանց։ Բայց թիւրք կառավարութիւնն ոչ միայն չէ թողել այս միտքն, որ նպաստաւոր է մահմեդականներին, քանի որ մինչև հիմայ սրանք էին բացառապէս, որ այս արեան հարկն էին տալիս, այլ ընդհակառակն աշխատում է միջոցներ գտնել իրագործելու համար ոչ-մահմեդականի զինուորական ծառայութիւնը կամ իբրև կամաւոր ընդունելով նրան և կամ այնպիսի հանգամանքների մէջ դնելով, որ տեղի ունեցած կաս-

կածներն և քամահրանքը փարատուէին: Բացի դրանից, օսմանեան բանակում կօզակային խառն երկու գունդ կայ՝ քրիստոնեաներից և մահմեդականներից բաղկացած»:

Իրերն այս վիճակումն էին, երբ հասաւ 1876-ի օսմանեան սահմանադրութիւնն, որի 8-րդ յօդուածի համաձայն՝ «օսմանեան կայսրութեան բոլոր հպատակներն, առանց կրօնի խտրութեան, օսմանցի էին կոչւում», և 17-րդ յօդուածն էլ ասում էր, թէ «բոլոր օսմանցիներն օրէնքի առջև հաւասար են և միևնոյն իրաւունքներն և պարտականութիւններն ունեն, բացի կրօնական հանգամանքներից»: Ուրեմն զինուորական ծառայութիւնն էլ հաւասարապէս պարտաւորիչ էր մահմեդականի և ոչ-մահմեդականի համար: Այս հաւասարութեան անյապաղ իրագործման համար Բ. Դուռը ձեռնտու գտաւ այն քաղաքական խառնակ հանգամանքներում զինուորական դրօշակի ներքև առնել քրիստոնեաներին և այդ միջոցով միևնոյն ժամանակ ուժեղացնել գոնէ իր պաշտպանողական դիրքն իր հաւանական թշնամու դէմ: 1877 թ. յունուարին Թիւրք կառավարութիւնն իր դեսպանների միջոցով տեղեկացրեց բոլոր եւրոպական տէրութիւններին, թէ ըստ տրամադրութեան երկրի նոր Հիմնական Օրէնքի՝ սուլթանը հրամայել է, որ այսուհետև քրիստոնեայ տղաներ եւս ընդունուեն զինուորական դպրոցներում: Այս որոշումը միևնոյն ժամանակ պաշտօնապէս յայտնուեց բոլոր ոչ-մահմեդական հոգևոր պետերին և հրատարակուեց լրագիրներում, որպէսզի ցանկացողները դիմեն զինուորական մինիստրութեան: Ընդունելութեան պայմանները նոյնն էին, ինչ որ մահմեդական ուսանողների համար: Բայց ահա Աբդիւլ-Համիդի մի նոր իրադէն քանդում է այս որոշումը: Սուլթանը ցանկալի չէր համարում*), որ քրիստոնեաները զինուորական դպրոց

*) Ինչպէս ժն. գլխում յիշել ենք:

մտնեն և այնտեղից պաշտօնականներ դուրս գալով հրամայեն մահմեդական զինուորներին...: Այս իրադէն սաստիկ զայրոյթ պատճառեց Միդհատ փաշային, որ անմիջապէս գրում է սուլթանի Ա. քարտուղարին, Աբդիւլ-Համիդին հաղորդելու համար, հետևեալը. «...Այն ժամանակ, երբ մենք աշխատում ենք անյապաղ ի կատար ածել բազմաթիւ կայսերական ֆէրմաններով խոստացուած բարենորոգումներից այն բոլորն, ինչ որ անմիջապէս իրագործելի է, ահա սուլթանն անցեալ օր հրամայել է, որ ոչ-մահմեդական աշակերտները զինուորական դպրոց չընդունուեն: Սահմանադրութեան այս կարևոր կէտի, որի իրագործմանը բոլորն սպասում են, այսպէս սկզբից խախտուելն և արգիլուելը մեզ չափազանց վիշտ է պատճառում...*)»:

Սակայն քրիստոնեաներին զինուորական ծառայութեան կանչելու որոշումն այնուամենայնիւ մնում է անխախտ: Կառավարութիւնը՝ Միդհատի աքսորից յետոյ, զինուորական դպրոցների մուտքը քրիստոնեաների առջև փակելով հանդերձ, այնուամենայնիւ ընդհանուր զինուորագրութեան ծրագիրն աշխատում էր յառաջ մղել և գործադրել առանց Խորհրդարանի բացման սպասելու, մանաւանդ մահմեդականներից և քրիստոնեաներից խառն ոստիկանութիւն կազմելու ծրագիրը: Նա որոշել էր այս գործը յաջողեցնել նախ մայրաքաղաքում, Կ. Պօլսում, և ապա նոյնը տարածել գաւառներում: Մայրաքաղաքի նոյն իսկ մահմեդական բնակիչները մինչև այն ժամանակ բոլորովին ազատ էին զինուորական ծառայութիւնից: Իսկ այժմ կառավարութիւնն որոշել էր 6000 զինուոր առնել Կ. Պօլսից, մահմեդական և ոչ-մահմեդական:

Յատկապէս հայերին զինուորագրութեան գրաւե-

*) Ալի Հայդար, «Միդհատ փաշանըն հայաթը սիյասիյէսի...», Կահիրէ, 1322 (արաբական թուական), էջ 263.

լու համար՝ սադրազամը կանչեց Ներսէս պատրիարքին և սուլթան Համիդի անունից յայտնեց նրան, թէ կայսրը՝ շատ գոհ լինելով հայերից և վստահ լինելով նրանց հաւատարմութեան վրայ՝ ուզում է նրանց էլ մասնակից անել հայրենիքի պաշտպանութեան սրբազան գործին։ Այս նպատակի համար առ այժմ կարգադրուած էր Կ. Պօլսի հայերից կազմել կամաւոր զինուորների 2 վաշտ, որ կանէր 300-ից մինչև 400 մարդ ընդամենը, և սուլթան Համիդ այդ հայկական վաշտերն իր բարձր հովանաւորութեան տակ պիտի առնէր։ Ներսէս ընդունեց այդ պատուէրն, և ըստ այնմ բոլոր հայ եկեղեցիներում քարոզներ և յորդորներ կարդացուեցին զինուորագրուելու, բայց ոչ մի հայ չներկայացաւ ինքնաբերաբար այս առաջին վաշտը կազմելու։ Ժողովուրդը մեծ յուզման մէջ էր, որովհետև ռուսական պատերազմի ամենատաք ժամանակին զինուորական ծառայութեան հրաւիրուելը նրան բոլորովին չէր գրաւում։ Ժողովրդի այս յուզմանը արձագանք տուին լրագիրներն իրանց խիստ, բայց շատ իրաւացի բողոքներով։ «Հայերը դարերով և սերնդից սերունդ չէին վարժվում զէնք գործածելու և այժմ յանկարծ կամենում են նըրանց ստիպել զէնք կրելու և պատերազմական բեմ երթալու։ Զինուորական գործին այդպէս անծանօթ և անպատրաստ մի ժողովուրդն, ինչպէս հայերն են, պատերազմի դաշտն ուղարկել՝ նշանակում է նրանց սպանդանոց տանել»—գրում էր Կ. Փանոսեանի Թիւրքաբարբառ, հայատառ «Մանզումէի Էֆքեարը»։ «Թիւրքիոյ ոչ-մահմեդական ժողովուրդը դարերէ ի վեր զէնք գործածելու վարժութիւնը կորսուած ըլլալէ զատ՝ հայրենիք պաշտպանելու գաղափարն ալ կորսուած ըլլալով, այդ գաղափարն ու ոգին անոնց մէջ արթննալու համար երկար ժամանակի պէտք կայ»—ասում էր «Մասիս»։ Աւելի խիստ տօնով էր խօսում և «Նոր-Դար», որի հրատարակումն այդ պատճառով էլ արգելուեց։

Նուազ կտրական տօնով չէին խօսում յունական թերթերը, թէև տարբեր պատճառաբանութեամբ։ Յոյներն էս բացէ ի բաց ասում էին, թէ մինչև որ Թիւրքահպատակ քրիստոնեաները մահմեդականների հետ կատարելապէս հաւասար իրաւունք չվայելեն, նրանք միշտ պիտի հրաժարուեն պատերազմի երթալ և արիւն թափել այն պետութեան համար, որ նրանց վրայ իբրև խորթ մայր է մտիկ տալիս։

Զինուորական ծառայութիւնն ընդունելու համար յոյն լրագիրները հետևեալ պահանջներն էին դնում, որ հայերն էս մեծապէս ցանկալի էին գտնում. «Քրիստոնեայ զինուորների բաժանումը, քրիստոնեայ պաշտօնակալների նշանակումը, բանակում քրիստոնեայ կրօնի անարգել գործածումը, ծառայութեան ամբողջ տևողութեան ժամանակ բացարձակապէս արգելել, որ քրիստոնեայ զինուորները դաւանափոխ լինեն յօգուտ իսլամութեան. բացի դրանցից՝ քրիստոնեաների և մահմեդականների քաղաքացիական և զինուորական անվրէպ հաւասարութիւնն և պետական պաշտօններում նոյնպէս լիուլի հաւասարութիւն» *)։

Օսմանեան խորհրդարանի անդրանիկ շրջանում քրիստոնեայ երեսփոխանները մէջտեղ դրին այս կարևոր հարցն և ընդդիմացան զինուորագրութեան անմիջապէս գործադրուելուն, այն առարկութեան հիման վրայ թէ՝ քրիստոնեայ կամ ոչ-մահմեդական օսմանցիներն, արդէն վճարել էին այն ելեմտական տարուայ «բէդէլը», հետևաբար չէր կարելի նրանցից թէ գինուոր առնել և թէ զինուորական տուրք, միանգամայն։

Երբ կառավարութիւնն այս ընդհանուր դժգոհութիւնը տեսաւ, նա փոխեց իր նախնական ծրագիրն և փոխանակ քրիստոնեաների վրայ իսկական զինուորա-

*) Paul Fesch, «Constantinople aux derniers jours d'Abdul Hamid». Paris, 1907. էջ 264.

կան ծառայութիւնը տարածելու՝ հարկադրուած եղաւ որոշել նրանցից քաղաքային պահակախումբ կազմել յատկապէս քաղաքի պաշտպանութեան համար։ Աճապարանօք նոր կանոնագրութիւն յօրինուեց այս մասին, Կ. Պոլսի բոլոր թաղերից զինուորութեան տարիքին հասած ոչ-մահմեդականների ցուցակը պահանջուեց և յատուկ զինուորագրական յանձնաժողովներ ընտրուեցին, որոնց մէջ հայերից մտան դոկտ. Սէրվիչէն, Գր. Օտեան, Միքայէլ Փորթուգալ, Սեպուհ Մաքսուտ և Յակոբ Գազազեան՝ այն ժամանակի ամենից նշանաւոր հայերը։ Այս նոր օրէնքի համաձայն, բոլոր 17 տարեկանից մինչև 45 տարեկան ոչ-մահմեդականները նոր կազմուած պահակախմբի մէջ (garde civique) պիտի առնուէին և ոչ միայն քաղաքների պահպանութեան, այլ և պահանջել հարկին նաև բերդերի պաշտպանութեան պիտի գործածուէին։ Այս օրէնքի գործադրութեան նկատմամբ Բ. Դուռը պատրիարքարաններից կանխապէս հաւանութիւն կամ խորհուրդ չխնդրեց, ինչպէս սովորութիւն էր այսպիսի ծանրակշիռ հարցերի համար։ Ներսէս պատրիարք այս առթիւ մինիստրների հետ իր ունեցած տեսակցութեան մէջ յայտնեց նրանց, թէ թէև հայերն առհասարակ պատերազմի գնալուց խրտնում են, որովհետև պարագաների բերմամբ անսովոր են զէնքի գործածութեան, բայց իրանց քաղաքը, տունն և ընտանիքը պահպանելու համար պատրաստ են զինուել, ինչպէս որ քանիցս արդէն խնդիրք է ներկայացուած կառավարութեանը՝ քիւրդերի հարստահարութիւններից և յարձակումներից ազատուելու համար։ Յոյն պատրիարքն էլ երբ տեղեկացաւ, թէ քրիստոնեայ զինուորները միմիայն քաղաքապահների դեր պիտի կատարեն և պատերազմի դաշտ պիտի չերթան, ընդունեց և մինչև իսկ շնորհակալութեան գիր գրեց կառավարութեան, միայն պահակների

կանոնագրութեան մի քանի կէտերի մասին նկատողութիւններ անելով։

Ազգային Վարչութիւնը յանձն չէր կարող առնել և իրաւունք էլ չունէր՝ այդպիսի մի արտաքոյ կարգի խնդիրն իր իսկ իշխանութեամբ և պատասխանատուութեամբ լուծելու, ուստի անմիջապէս Ազգային Ժողով հրաւիրելով ներկայացրեց նրա հայեցողութեան։ Բայց ժողովուրդն ընդհանրապէս հակառակ էր նոյն իսկ իբրև քաղաքային պահակ ծառայելու։ Եղան շատերը՝ զինուորացուներից, որոնք ծածկաբար Կ. Պոլսից մեկնեցին, ազատուելու համար։

Միայն Բ. Դռան պաշտօնեայ հայերն՝ իսկոյն քաղաքային պահապան զինուորի հագուստ հագան, որպէսզի ժողովուրդն էլ տեսնէ և այդ բարձրաստիճան անձերի օրինակին հետևի։ Այդ հագուստն ամեն զինուոր իր ծախքով պիտի հոգար. կառավարութիւնը միայն զէնք պիտի տար նրան։

Երբ լսուեց, թէ նոյեմբերի 25-ին (1877) Ազգ. Երեսփոխ. Ժողովը դռնփակ նիստ ունի յատկապէս այս հարցի մասին, ամեն կողմից՝ առանձնապէս շուկաներից՝ ժողովուրդը խումբխումբ թափուեց պատրիարքարան և անհամբերութեամբ սպասում էր այնտեղ, թէ հայ բարձրագոյն օրէնսդիր մարմինն ինչ դիրք պիտի բռնէր այս կարևոր խնդրում։

Ազգային Ժողովի նիստը տեղի ունեցաւ նմանը քիչ անգամ տեսնուած բազմութեամբ, բայց ոչ դռնփակ. ներկայ էին 91 երեսփոխան։ Նախ կարդացուեց Քաղաքական Ժողովի տեղեկագիրն, որ ներկայացնելով Բ. Դռան նոյեմբ 15. 1877 թուակիր ծանուցագիրը զինուորագրութեան մասին՝ հրահանգ էր խնդրում ըստ այնմ վարուելու համար։ Բ. Դռան այս ծանուցագիրն ասում էր, թէ քրիստոնեաների զինուորութեան կոչուելն առաջ էր գալիս սուլթանի՝ իր ընդհանուր հպատակաց վրայ ունեցած արդարակորով համակրութենէն

և առհասարակ բոլոր կայսերական հպատակներին հայրենեաց պաշտպանութեան փառքին մասնակից ընելու աննմանելի դիտաւորութենէն», և յոյս էր յայտնվում, թէ «այս նոր և վսեմ անօրէնութիւնը կատարելապէս պիտի գնահատուի և ընդունուի»։

Այս հրամանագրից և պատրիարքի տուած բացատրութիւններից երևում էր, որ կառավարութիւնն ուղղակի պատուիրում էր և ոչ թէ պատրիարքարանի կարծիքը հարցնում այս մասին. հետևաբար երեսփոխաններն անձնական պատասխանատուութիւնից ազատուելու համար պատրաստ էին Ազգ. Ընդհ. Ժողովի վերաբերեալ խնդիր չհամարել այդ. Նրանք ուզում էին այս ձևով խուսափել իրանց հաւանութիւնը տալուց։ Բայց ինչ որ աշխարհական երեսփոխաններն զգուշանում էին բացարձակօրէն ասելուց, եկեղեցականները չքաշուեցին, և Մատթէոս եպ. Իզմիրլեան համարձակութիւն ունեցաւ յայտնելու թէ՝ «Ազգ մը և տէրութիւն մը փոխադարձ պարտեօք և իրաւունքով կապուած են իրարու հետ. բայց ասիկա այն ժողովրդեան համար է, որ երկրին և կառավարութեան տէրն է (Թիւրքը), իսկ անոր համար չէ, որ հպատակ է և միայն տուրք տալու պարտաւոր (հայն և այլ ոչ-մահմեդականները)։... Հայոց ազգը չի փախչիր զինուորութենէ, բայց պէտք է գիտնայ, թէ ինչ փոխադարձ պայմաններով կապուած ենք կառավարութեան հետ. ասիկա առիթ մ'է, ինչ իրաւունքներ որ ունինք՝ պահանջելու կառավարութենէն. հաւասարութեան մէջ այնպիսի բաներ կան, որ դեռ գործադրութեան մէջ չեն. ուստի ինչպէս որ կառավարութիւնն իրաւունք ունի զօրք պահանջելու, մենք ալ իրաւունք ունինք հաւասարութեան ամեն կէտերուն գործադրութիւնը խնդրելու*)»։ Եւ իբրև փաստ, թէ դեռ ես օրէնքի առջև քրիստոնեան

*) Ատենագր. Ազգ. Ժող., 1877, նիստ ԺԵ.

և մահմեդականը հաւասար չեն, յիշում է դատարանում քրիստոնեայի վկայութեան չընդունուելը։ Ներկայ ժողովուրդը շատ եռանդուն կերպով հաւանութիւն է տալիս Իզմիրլեանի այս խօսքերին։ Խորէն եպ. Նար-Պէյ նոյնպէս համաձայնվում է հայերի զինուորագրութեան, բայց միայն՝ իրանց գերդաստանի և իրանց հայրենիքի պաշտպանութեան համար ընդդէմ այն «ձիւաղ ազգերու (քիւրդերի), որոնց ճնշման տակ է մեր ազգը հակառակ օրինաց և արդարութեան»։ Ժողովի եզրակացութիւնը հետևեալն եղաւ. «Բ. Դռնէն ազդարարեալ քաղաքային զինուորագրութեան խնդիրը դարձնել ս. պատրիարք հօր, որ Քաղ. և Կրօն. Ժողովոց և ի պահանջել հարկին Համագումար (եկեղեցական) Ժողովոյ խորհրդակցութեամբը գործէ»։ Ներսէս պատրիարք, որ կառավարութեան պատուէրն ընդունելու և գործադրելու կողմն էր, դժգոհ մնաց այս որոշումից և պատրիարքարանից Ընդհ. Ժողովի դահլիճը դառնալով յայտարարեց, թէ այս որոշման մէջ «պակաս բան մը կայ, այն է, որ զինուորութեան սկզբունքն, որ արդէն քանի մը տարի առաջ ընդունուած է այս Ժողովէն, այսօր ալ կը նուիրագործուի ու կը հաստատուի նորէն այս Ժողովի մէջ, եկեղեցական և ազգային պահանջմանց սահմանին մէջ. ասի չէ յիշուած*)»։ Բայց Ազգ. Ժողովը Ներսէսի այդ յայտարարութիւնը լսելուց յետոյ էլ մնում է իր նախկին որոշման վրայ, որից շատ դժգոհ մնաց Վարժապետեան։ Ներսէս աշխատում էր համոզել այն երեսփոխաններին, որոնք այս առթիւ յիշում էին հայ ժողովրդի կրած տանջանքները պատերազմի ժամանակ, թէ «այս դառն ժամանակէն ետև աղէկ օրեր պիտի յաջորդեն. տխրութեան բաժակը ցմրուրն քամեցինք մինչև հիմա, այսուհետև ուրախութեան բաժակը պիտի ըմպենք. անշուշտ գիշերէն ետքը

*) Անդ։

կը յաջորդէ ամառը և ձմեռն վերջ գարունը. աղօթենք, որ խաղաղութիւնը շուտով հաստատուի»: Ներսէս իր այս վարդագոյն յոյսերն ապագայի մասին հիմնում էր միմիայն Աբդիւլ-Համիդի խոստումների վրայ...» Երբ նա տեսաւ, թէ Ազգային Ժողովն այս խնդրում նրա հետ համաձայն չէ, դիմեց իր սովորական զէնքին. նա հրաժարուեց պատրիարքութիւնից, իր հրաժարականն ուղարկելով թէ Բ. Դրան և թէ Ազգային Ժողովին: Բ. Դուռը չընդունեց նրա հրաժարականը, քանի որ այն միջոցին նրա ընթացքը Թիւրք կառավարութեան հայեացքին համաձայն էր: Սադրազամը Գր. Օտեանին ուղարկեց նրա մօտ, յայտնելու համար թէ անյարմար է այսպիսի մի փափուկ ժամանակ պաշտօնից հրաժարուելը: Ազգային Ժողովը դեկտեմբերի 20-ին գումարած նիստում այս հրաժարականի խնդիրը քննած ժամանակ՝ ձախակողմեան երեսփոխաններից մէկը, Օդեան Խօճասարեան, շատ իրաւամբ դիտել տուաւ, թէ «ազգն երբ ընտրեց Ներսէս սրբազանը՝ յայտարարեց, թէ բարեբախտ է. բայց ասոր հետ դժբախտութիւն ունեցեր է ամեն հրաժարող պատրիարք մ'ընտրել. չգիտեմ ինչ պատճառ ունի չունի, բայց ընտրութեան օրէն սկսեալ գրեթէ միշտ հիւանդութիւնը պատճառ ցոյց տալով կը հրաժարի և ետ կառնէ: Եթէ այսօր ալ հրաժարականը ետ առնել տանք, երկու ամսէն նորէն կը հրաժարի և ժողովս հրաժարականի խնդրով կը զբաղեցնէ*)»: Հրաժարականը չընդունուեց Ազգային Ժողովում և Ներսէս շարունակեց պաշտօնավարել, անսալով Բ. Դրան և ազգի կողմից արտայայտուած կրկին բաղձանքին:

Զինուորագրութեան խնդիրը կրօնական-ազգային տեսակէտից քննելու կամ աւելի ճիշտը՝ նրա մերժումը կրօնական վարագոյրի տակ և եկեղեցականների միջո-

*) Ատենագր՝ Ազգ. Ժող., 1877, նիստ ԺԶ.

ցով քօղարկելու համար՝ Ազգ. Վարչութիւնն որոշեց եկեղեցական Համագումար ժողով գումարել, որ տեղի ունեցաւ Ներսէս պատրիարքի նախագահութեան տակ: Ներկայ էին 10 արքեպիսկոպոս և եպիսկոպոս, 40 վարդապետ և 60 քահանայ, որոնց միացել էին Խառն Ժողովի 28 անդամը: Չնայելով որ նիստը դռնփակ էր, դուրսը ժողովրդի մեծ բազմութիւն էր հաւաքուել, որի տրամադրութիւնը բացարձակօրէն աննպաստ էր զինուորական ծառայութեան: Ժողովի մէջ եկեղեցականները մեծ ոգևորութիւն էին ցոյց տալիս վիճաբանութեան ժամանակ և ընդհանրապէս հակառակ էին կառավարութեան այս առաջարկութեան: Համագումարը, պատճառաբանեալ 7 կէտերի վրայ հիմնուելով, որոշեց թէ «զինուորագրութիւնը ներկայ պատերազմի ժամանակ տարաժամ է»: Այս կէտերը հետևեալներն էին: 1) Հայը 5 դարից ի վեր զէնք չգործածելով, այժմ, պատերազմի ժամանակ, ժողովրդի վրայ զինուորական ծառայութեան պարտականութիւն դնելը յանկարծակի և խիստ կերպով փոխում է նրա գոյութեան պայմանները: 2) Հայն արդէն վճարել էր այս (1877) և եկող տարուայ զինուորական հարկը՝ «բէդէլն», որով և ազատուած պէտք է լինէր զինուորական ծառայութիւնից այս 2 տարուայ համար: 3) Պատերազմի սկըզբից ի վեր հայերն արդէն թէ անձամբ ծառայելով բանակում և թէ զանազան նիւթական զոհաբերութիւններով օգնել են և օգնում են օսմանեան զօրքին: 4) Պատերազմի ընթացքում հայ ժողովուրդը հազարաւոր զոհ է տուել, եկեղեցիները սրբապղծուել են, վանքերն այրուել և գիւղերն ամայացել. հետևաբար կառավարութիւնը պէտք է որ նոր զոհեր չպահանջէ հայ ժողովրդից: 5) Ներկայ պատերազմը մահմեդական կրօնական պատերազմի ձև է առած, քանի որ կառավարութեան բերան եղող թերթերն «իսլամական սրբազան կռուի» անուն են տուել նրան և այնտեղ մեռնողներին

«շէհիդ (մարտիրոս) են հռչակել. իսկ հայ եկեղեցին նզովում է այն հաւատացեալներին, որոնք սուր կը մերկացնեն իրան հակառակ մի այլ կրօնի պաշտպանութեան համար: 6) Կառավարութիւնը զինուոր է պահանջում բոլոր հպատակներից անխտիր, յանուն հաւասարութեան՝ օրէնքի առջև, բայց այս հաւասարութիւնը միայն տեսականապէս գոյութիւն է ունեցած: Շէրիաթը դեռ շարունակում է տիրապետել: 7) «Վակուֆի» (իսլամական հոգևորական կալուածք) օրէնքն, որ մահմեդական կրօնի մի մասն է, հողի սեփականութեան լիակատար իրաւունք չէ տալիս հային. հետևաբար հայն իսկապէս չունի սեփական հայրենիք, ուրեմն և ոչ էլ պարտականութիւն զէն ի ձեռին այս հայրենիքը պաշտպանելու:

Ինչ ասել կուզէ, որ թէ առհասարակ թիւրքերն և թէ կառավարութիւնը չափազանց դժգոհ մնացին հայերի այս մերժողական պատասխանից: Բայց դրա փոխարէն Թիւրքիայի բոլոր միւս քրիստոնեայ հասարակութիւնները լիուլի իրաւունք տուին հայոց*): Առանձնապէս հետաքրքրական են եկեղ. Համագումարի որոշումների 5-րդ և 7-րդ կէտերն, որոնց ճշտութեան վկայում էին նաև օտարները: Պատերազմի սկզբից Թիւրք լրագիրներից ամենից ազդեցիկը՝ «Վաքըթ» չէր քաշուել բացարձակօրէն գրել, թէ «ներկայ պատերազմը քրիստոնէութեան խաչակրական արշաւանքն է իսլամութեան դէմ..»**): Նոյն իսկ քաղաքային պահակների ծառայութեան համար, որոնք ըստ նոր օրէնքի պէտք է մահմեդականներից և քրիստոնեաներից բաղկանային, իսլամական կրօնի պաշտպանութեան նպատակն էր առաջ մղվում: Այդպիսի մի պահակախմբին, որ բաղկացած էր Կ.-պօլսեցի թիւրքերից, զինուորական

*) «Missions Catholiques» թղթ. Կ. Պօլսից 15 փետ. 1878.
**) «Le Temps» 26 մայիսի 1877.

դրօշակի նուիրման առթիւ յանուն սուլթանի խօսուած ճառի մէջ ճառախօսն ասում էր, թէ ռուսական արշաւանքն իսլամութեան վտանգ էր սպառնում, և վստահացնում էր, թէ Մուհամմէդ մարգարէն պիտի չթողնէր, որ իր հաւատացեալները պարտուէին: Իսկ դրօշակի վրայ էլ գրուած էր իսլամութեան ծանօթ պարբերութիւնն՝ «Աստուած մէկ է և Մուհամմէդ նրա մարգարէն է»: Այս պատճառով էլ այն մի քանի հայ և այլ քրիստոնեաներն, որոնք կամաւոր էին գրուել այդ պահակախմբի մէջ, յայտնեցին, թէ չէին կարող զէնք կրել այդպիսի մի դրօշակի տակ *): Քրիստոնեաներին գրաւելու համար, սուլթան Համիդ զինուորութեան առաջին կամաւորներից մի քանի հոգուն իրան թիկնապահ էր ընդունել, որոնց մէջ էին մի լուսաւորչական (Զայեան) և մի կաթօլիկ հայ (Տիւզեան):

Կառավարութեան յանձնարարութեամբ գրաքննութեան ատեանը լրագիրների խմբագիրներին կանչելով պատուիրել էր քրիստոնեաների զինուորագրութեան հակառակ չգրել: Զանազան թերթերը խափանվում էին, ինչպէս օր. «Նոր-Դարը»:

Զինուորագրութեան դէմ մաքառող եկեղեցականների մէջ ամենից եռանդուն բողոքողը Խորէն եպ. Նար-Պէյն էր, որ այդ շարժման մէջ առաջնորդի դեր էր կատարում: Նար-Պէյ եկեղ. Համագումարի վերոյիշեալ որոշումները տարաւ յանձնեց գերմանական դեսպանին: Նար-Պէյի այս ընթացքի միտքն ըմբռնելու համար հարկաւոր է գիտնալ, թէ Բէշիկթաշի այս քարոզիչ եպիսկոպոսը վաղուց մօտ յարաբերութեան մէջ էր ռուսական դեսպան Իգնատիևի հետ, որի մեկնելուց յետոյ նա շարունակում էր իր յարաբերութիւնները գերմանական դեսպան իշխ. Րէյսի հետ, որին էր

*) «Missions Catholiques» 1 փետր. 1878.

յանձնուած ռուսական շահերի պաշտպանութիւնը*)։ Գերմ. դեսպանը նոյնպէս մեծ ջանք էր գործ դնում, որ քրիստոնեաների զինուորագրութեան ծրագիրը չիրագործուի։

Այսպիսի հանգամանքների մէջ էր գտնվում գործը. Թիւրք կառավարութիւնն սկսել էր զգալ իր ծրագրի բոլոր դժուարութիւններն, երբ ռուսական յաղթական բանակի Կ. Պոլսի դռներին մօտենալը փոխեց երկրի վիճակը։ Քրիստոնեաների զինուորագրութեան հարցն այս կերպով մի անգամ ևս թաղուեց։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ

Ազգային Ժողովի նիստերում ատենապետի փակման ճառն և պատրիարքի բացման ճառը.—Միջադէպ պատրիարքի և ատենապետի միջև.—Քաղաքական Ժողովի հրաժարականն և նորի ընտրութիւնը.—Ազգային Վարչութեան և Երեսփոխանական Ժողովի գլուխները 1877-ի վերջը.—Ներսէս պատրիարք և Հայկական Խնդրի նախերգանքը։

1877 թ. մարտի 11-ին փակուեց Երեսփոխանական ժողովի 1876/7 տարեշրջանն, որ ունեցել էր 20 նիստ, 3 նիստ պակաս նախորդ 1875/6 շրջանից։ Սովորութիւն էր, որ տարեշրջանի բացման և փակման նիստերին՝ պատրիարքը կամ ժողովի ատենապետը բացատրութիւններ տային ազգային գործերի ընթացքի մասին։ Բացման օրը պատրիարքն՝ իբրև Ազգ. Վարչութեան գլուխ՝ երեսփոխաններին մի ճառով ներկայացնում էր երկրի վիճակն և խօսում էր այն պէտքերի և

*) Նար-Պէյի այս յարաբերութիւնների մասին աւելի մանրամասնօրէն կը խօսենք յետոյ, իր տեղում։

հարցերի մասին, որոնց քննութիւնն և լուծումը կախուած էր Ազգ. ժողովից։ Իսկ տարեշրջանի փակման օրն՝ ատենապետը յետադարձ հայեացք էր արձակում անցնող շրջանի վրայ։ Ցոյց տալու համար թէ ինչպէս դժգոհ էին իրանք, նոյն իսկ Ազգային ժողովի գլխաւոր գործիչները, ժողովի գործունէութիւնից, յառաջ բերենք այստեղ գլխաւոր կէտերն այն ճառի, որը խօսել է Ստեփան փաշա Ասլանեան՝ այդ շրջանի մասին։

«Արդարև, տեարք իմ, եթէ աչքէ անցունենք մեր տարեկան աշխատութեանց շարքը, մէջը նշանակութեան արժանի գործ միմիայն վերակազմութիւն վարչական ժողովոց կը գտնենք և այլ ոչինչ...։

«Նոր Վարչութիւն մը պաշտօնի կոչուեր է և ահաւասիկ տարին կը լրանայ, տակաւին անոր պիւճէն (budjet) չենք սահմաներ։

«Երկրին վարչական վիճակը բարենորոգուեր և ազգին աշխարհավարական դիրքը փոխուեր է և մենք մեր ազգութեան իրաւանց երաշխաւորութիւնը Ազգային Սահմանադրութեան մէջ փնտռելու պարտաւորեալ, փոխանակ զանի մասնաւոր հոգածութեամբ ամրապինդ հաստատելու և առաջի աշխարհի նուիրական և անհպելի ցոյց տալու, վերաքննութեան խաղով հիմունքը խախտելու զբաղեր ենք...։

«Տասն և եօթ տարի է սահմանադրական վարչութիւն ունինք և պատրիարքական դիւանատան մէջ ազգահամարի գրասենեակ, տակաւին այսօր Թիւրքիոյ մէջ քանի հայ գտնուիլը չգիտնալէն զատ՝ Կ. Պոլսոյ մէջ քանի հոգի ըլլալնիս ճշտիւ չը գիտենք...»։

Եւ ապա, կարծես մասամբ արդարացնելու համար այս ամուլ ընթացքը, աւելացնում է.

«Ստոյգ է, որ տարւոյս մէջ երկրին քաղաքական հանգամանքն անընդհատ սրտատրոփ յուզմանց տեղի տալով՝ թոյլ չտուին մեզ անվրդով մեր պաշտօնը շարունակել։ Ստոյգ է, որ տարւոյս սկիզբները մեր վար-

չական ժողովականք, զոր մենք այնչափ գուրգուրալով ընտրեցինք, և վերջերը մեր սրբազան պատրիարքը, զոր մենք այնչափ կը սիրենք, մեզ յաճախ միայնակ թողլով 'և երբեմն հրաժարականի յուսահատական ձայներ բառնալով՝ մեր պաշտօնին ըստ օրինի կատարման շատ դիւրութիւն չընծայեցին...»:

Ատենապետն իր ճառը վերջացնում է սրտաշարժ յորդորով.

«Անցեալին ողբն ապագային օգուտ չարտադրեր. թողունք զայն վշտագին և դառնանք նոր տարւոյ գարնան նոր արևն ողջունելու...: Ուխտենք այժմէն միաձամուռ, առաջիկայ տարւոյ մէջ մեր երեսփոխանական պաշտօնը սրտի մտօք և ճշտութեամբ կատարել: Մաքրենք, սրբենք մեր խնդրոց ամարէն վերաքննական, հրաժարական, հարցանողական, յարձակողական բոլոր խնդիրները, և անոնց տեղ զետեղենք կարգաւ.

«1) Պիւճէ,

«2) Համարատուութիւն (հաշիւ Վարչ. գործունէութեան),

«3) Կրթական օրէնք,

«4) Վիճակագրութիւն,

«5) Վարչական կանոնադրութիւն ժողովոց և խորհրդոց և առաջնորդաց ազգիս*)»:

Ահա ինչ լուրջ ծրագիր էր գծում Ստեփան փաշա Ասլանեան Ազգային Ժողովի 1877/8 շրջանի գործունէութեան համար: Թէ որքան յաջողուեց նրա այս բարի մտադրութիւնը, այդ պիտի տեսնենք քիչ յետոյ:

1877/8 տարեշրջանը բացուեց 1877 թ. մայիսի 6-ին, երբ Թիւրքիան պատերազմի մէջ էր իրանից ուժեղ մի պետութեան հետ, և երկիրն, ուրեմն և հայ ազգն, այն միջոցին գտնվում էր քաղաքական ծանր

*) Ատենագ. Ազգ. Ժողով.

օրերում: Պատրիարքն այս վիճակն է ակնարկում, երբ իր բացման ճառում ասում է.

«Գիտէք թէ ինչ տագնապալից ժամանակի մէջ կապրինք և թէ այս տարին բոլոր տարիներէ աւելի վշտոց և ցաւոց տարի է...: Ժամանակին երկրիս վրայ բերած նեղութիւններէն մեր ազգն ալ ազատ չէր կրնար ըլլալ իբրև այս երկրին ամենակարևոր մէկ տարրն և օսմանեան բարեխնամ տէրութեան ցաւոցը ցաւակից և վշտացը վշտակից մէկ ժողովուրդը...: Նոյն միջոցին աղէտն ալ սաստկացաւ, որոյ վասն պարտաւորեցայ գրել և իմացնել բարձր. մեծ եպարքոսին, թէ հայոց ազգը թէև ամենէն հաւատարիմ և հնազանդ հպատակն է տէրութեան, սակայն իւր կրած անչափ զրկանաց և հարստահարութեանց մասին մեր գրած ամեն խնդիրները և թակրիրներն ի Բ. Դրան դրկած շատ մը հրամանագիրներն անգործադրելի մնացին, և բոլոր յոյսերնիս սպառեցաւ. մէկ ճար մը միայն մնաց, այն է՝ երկրին տիրող վեհապետին ոտքը դիմել, բողոքել և հոն ձգել նաև իմ պատրիարքական իշխանութիւնս: Ասոր վրայ նախարարք ի ժողով գումարեցան և խօսք տուին մեզ՝ կարգադրել մեր ամեն խնդիրը: Նոյն միջոցին Վանայ հրդեհը վրայ եկաւ, որուն համար ալ ինչ որ պարտաւորութիւնս էր կատարեցի. նոր բարեխնամ կուսակալ մը դրկուեցաւ հոն, որ քիչ շատ խնամք և դարման կը տանի. այժմ Վանէն ինձ հասած գրութիւնք գոհունակութիւն կը յայտնեն»:

Դեսպանախորհրդի գումարման և այս առթիւ իր կատարած դիմումների մասին Ներսէս հետևեալ բացատրութիւնն է տալիս.

«Նմանը չտեսնուած դէպք մի ալ պատահեցաւ այս տարի. եւրոպական տէրութեանց դեսպանք եկան հոս, մայրաքաղաքիս մէջ դեսպանաժողով մը կազմեցին և խորհուրդներ ըրին. ես իբր պատրիարք հայոց և իբր Ներսէս եպիսկոպոս՝ առանց Վարչութեան Ժողովներն

ինձ հետ պատասխանատու ընելու, բնաւ ես չկեցայ խօսելէ ինչ որ պէտք էր. անկէց աւելի բան մը չէի կրնար. նոյն իսկ օսմանեան տէրութեան շահուցը համար, և այս մասին, նախարարք իսկ համոզուեցան, թէև երբեմն ոմանք խէթիւ ալ նայեցան ինձ»։

Պատրիարքի ակնարկած հարցերում Ներսէսին օգնել էին առանձնապէս՝ Գր. Օտեան, դոկտ. Սէրվիչէն և մանաւորապէս Յովհ. Նուրեան, որոնց նա հրապարակով էլ շնորհակալութիւն յայտնեց Ազգային ժողովում։ Այս անձերն այնուհետև ևս չդադարեցին նրա օգնականներն և խորհրդակիցները լինելուց բոլոր ազգային «յարաբերական» խնդիրներում։

Խօսելով ներքին հարցերի մասին՝ Ներսէս ասում է.

«Բովանդակ այս խնդիրներով զբաղելու՝ չկարացի ազգային դաստիարակութեան վրայ ունեցած սէրս գործով և արդեամբ ցուցնել»։

Այստեղ խօսում է Առաքել-Շահնազար-Նուպարեան միջնակարգ ուսումնարանի փակման մասին, որի պատճառն այն էր, որ ուսումնարանի դրամագլուխը բաղկացած էր օսմանեան պետական արժեթղթերից, և երբ Թիւրքիան, իրան սնանկ յայտարարելով, տոկոսների վճարումը դադարեցրեց, այս արժեթղթերի գինը սաստիկ ընկաւ և այս կերպով ուսումնարանը զրկուելով իր եկամտի միակ հաստատուն աղբիւրից՝ չկարողացաւ այլ ևս իր գոյութիւնը պահպանել։ Բայց դրա փոխարէն Ղալաթիայում հիմնուեց Կեդրոնական վարժարանը, նոյնպէս միջնակարգ։ Ահա ինչ է ասում դրա մասին Ներսէս՝ իր ճառում.

«Ազգ. Վարչութեան և Ուսումնական Խորհրդոյ ջանիւքը Կեդրոնական վարժարանը շինուեցաւ. շնորհակալութիւն տէր և գիշեր անձնուիրաբար աշխատողաց, շնորհակալութիւն փոխատու անձանց, սակայն ինչպէս ամենուս ալ բաղձանքն է, ըստ որում այն

վարժարանը պարտքով շինուեցաւ. պէտք ջանանք մէկ կողմէն պարտքերը վճարելով միւս կողմէն բանալ զայն՝ ժամանակ չանցուցած...։ Այսօր մեր ամենէն կարևոր և անհրաժեշտ եղող մահու և կենաց խնդիրը դաստիարակութեան խնդիրն է. ձեր մէջէն իսկ ճառեր խօսող եղաւ այս մասին. ուրեմն ամեն ճիգ թափենք ազգային դաստիարակութիւնն յառաջ տանելու համար։ Մինչև ցարդ ի չգոյէ տարերաց և նպաստից՝ գիւղանական ջանքերով զոհողութիւններ բրած ենք. նոյն ժողովուրդն ենք դարձեալ, պէտք է նոյն ջանքերնիս շարունակենք և կրկնապատկենք դաստիարակութեան համար, որ ազգին վերակենդանութեան միակ միջոցն է...»։

Ապա երկար յորդոր է կարդում երեսփոխաններին, որ նրանք միաբանութեամբ գործեն և իբրև ապացոյց այն բանի, թէ ինչպէս ներքին անմիաբանութիւնն ազգերի կործանման պատճառ է դառնում, յառաջ է բերում հրէաների օրինակն, որոնք «ամեն ժամանակէ աւելի ազգասէր եղած ատեն Երուսաղէմի կործանումը վրայ հասաւ և իրենց աղէտքը բազմացաւ առաւել այն ատեն, երբ տիւ և գիշեր բծախնդրութեան ելան, այնպիսի մեծ ազգ մը և Աստուծոյ ընտրեալ ժողովուրդն ըլլալով հանդերձ. քանզի կուսակցութիւնք բազում նախանձայուզութեամբ ելելս զմիմեամբք ատնէին և իրարու խօսք չհասկնալով զիրար կործանել, ջախջախել կը նկրտէին»։ Անմիաբանութեան կործանարար հետևանքի մասին նա շարունակում է.
«Լեհացւոց պատմութիւնն ալ կարդացէք. պիտի տեսնէք, որ լեհացիք ևս միևնոյն պատճառաւ իրենց ազգութեան ծառին արմատը գօսացուցած են և իսրայէլացուց վիճակին բախտակից գտնուած են»(!?)։ Այս անյաջող օրինակներից յետոյ Ներսէս պատրիարք հայրաբար խրատում է «ազգին ծառայողները չըվհատեցնել, անուանարկելով և տեսակ մը ահ ու դողով պաշա-

բերում»։ «Մխիթարեցէք,— ասում է նա,— քանզի շատ փափուկ ժամանակի մէջ կապրինք, վտանգներ պակաս չեն. մինչև անգամ մեր առ օսմանեան գահն դարաւոր և արևու լուսոյն նման յայտնի և անուրանալի հաւատարմութեան մասին մրցողներ ունեցանք, որոնք մենէ առաջ անցնիլ ուզեցին. բայց ինչպէս նախորդ մեծ-եպարքոս Միդհատ փաշային պատրիարքարանս այցելութիւն ըրած միջոցին ըսի, միմիայն մեր հայոց ազգն է, որ անկեղծ սէր և հաւատարմութիւն կը պահէ առ օսմանեան տէրութիւնն։ Զգոյշ կեցէք. մի՛ թողէք մեր անմխիթարութենէն օգուտ քաղել կամենան այլք...»։

Իր ճառի վերջում պատրիարքը գովեստով է խօսում օսմանեան խորհրդարանի հայ անդամների գործունէութեան մասին, որոնք «անտարբեր չգտնուելով վիլայէթի նիզամնամէին (գաւառների վարչական կանոնագրութիւն) մէջ կէս քրիստոնեայ կէս մահմեդական անդամոց ընտրութեան և տէրութեան գանձին զիմմէթ (պարտք) ունեցողները գաւառաց մէջ ժողովական և պաշտօնեայ չըլլալու խնդրոց մէջ, որք գաւառական հարստահարութեանց մեծամեծ պատճառներն են, համախոհութեամբ վարուեցան և ամենայն անաչառութեամբ, և բոլոր ազգին պարծանք բերելու չափ պերճախօս ատենաբանութիւններով պաշտպանեցին ու յաջողեցան՝ մինչև իսկ նախարարաց գովութեանն արժանանալ»։ Վերջացնում է նա իր խօսքը Աստուծոյ հայցելով, «որ այս յորդորական խօսքերը չըլլայ թէ ամպի պէս թեթևութեամբ անցնին, այլ Աստուծոյ շնորհիւն արմատ ձգեն ամենուդ սրտերուն մէջ»։

Այս պատրիարքական ճառն, ինչպէս տեսանք, ամփոփում էր այն բոլոր պարագաները, որոնց մէջ էր գտնվում այն միջոցին ազգային գործն, ուստի նա մի տեսակ փոքրիկ գահական ճառ էր, յատուկ բոլոր սահմանադրական երեսփոխանական ժողովներին։ Ըստ այնմ էլ նրան տալիս էին «նախագահական ճառ»

տիտղոսը։ Սահմանադրական կառավարութեան ամբողջ ձևակերպութիւնը պահպանելու համար հարկաւոր էր, որ Ազգ. Երեսփոխ. Ժողովն էլ պատասխան-ուղերձ ներկայացնէր պատրիարքին։ Այս բանը չէր նախատեսուած ոչ «Ազգ. Սահմանադրութեան» հիմնական օրէնքների և ոչ էլ Ռուսինեանի հեղինակած «Ներքին կանոնադրութեան» մէջ, ուստի և չէր գործադրվում։ Սահմանադրական վարչութեան ձևական մասին խիստ պաշտպան եղող երեսփոխաններ գտնւում էին, որ սահմանադրական հայերը պէտք է ետ չմնային ուրիշ սահմանադրական ազգերից այսպիսի մի «ստիպողական» խնդրում...։ Եւ այսպէս՝ սահմանադրական ազգի պատիւը պահպանելու և «ամեն սահմանադրական ազգաց մէջ տիրող սովորութեան» հետևելու համար Ազգային Ժողովը նոյն նիստում Ստեփ. Փափազեանի առաջարկութեամբ միաձայն ընդունում է, որ այնուհետև «Նախագահական ճառին ուղերձով պատասխանուի*)»։ Բայց Ազգ. Ժողովն այնքան դատարկ նիւթ ունէր վիճաբանութեան համար, որ ժամանակ չգտաւ ուղերձ-պատասխանով պարապուելու...։

1877 թ. մայիսին հրաժարուեց Սահակ Ապրոյի ատենապետութեան տակ գտնուող Քաղաքական Ժողովը, մի տարու չափ միայն պաշտօնավարելուց յետոյ. հրաժարման պատճառն՝ այն նկատողութիւններն և քննադատութիւններն էին, որոնք «Ղալաթիոյ օջախ» կուսակցութեան կողմից շարունակ ուղղվում էին նրա հասցէին, թէև Քաղաքական Ժողովի անդամներն իրանց պաշտօնական հրաժարագրի մէջ ասում էին, թէ «իրենց ազգասիրական զգացմանց համեմատ ազգին ծառայելու բաղձանքնին այլ ևս չկրնալ ի գործ դնելնուն համոզուած են», այդ էր պատճառը նրանց հրաժարուելուն...։ Ներսէս շատ դժգոհ մնաց և աշխատեց,

*) Ատենագր. Ազգ. Ժողով.։

որ հրաժարուածները վերստին պաշտօնի կոչուեն, մինչև իսկ պնդեց, որ եթէ նրանք նորից չընտրուեն, ինքն էլ կը հրաժարուի պատրիարքութիւնից։ Եւ իրօք, երբ տեսաւ, թէ այն անձերը չխնդրուեցին շարունակել իրանց պաշտօնավարութիւնը մինչև երկամեայ շրջանի վերջն և ոչ էլ նորից ընտրուեցին, ինքն ևս խռովեց և հրաժարուեց։ Հարկ եղաւ նորից պատգամաւորներ ուղարկել, նորից աղաչել, պաղատել, որ ետ դառնայ. և Ներսէս դարձաւ, բայց այս անգամ մի լաւ յանդիմանական կարդաց երեսփոխանների երեսին։ «Մէկ կողմանէ կը տեսնեմ, որ դուք իմ վրայ համակրութիւն ունիք, բայց միւս կողմանէ զիս մտիկ չէք ըներ։ Հազար անգամ կռիւ մ՚ընէք ըսեր եմ, դարձեալ կը կռուիք, կը գժտիք և կը պառակտիք իրարու դէմ փցուն բաներու համար...»։ Այս խօսքերը շատ ծանր էին, և Ազգ. Ժողովի Ա. ատենապետը, Ստեփան փաշա Ասլանեան, ուզելով ժողովի արժանապատուութիւնը պաշտպանել, հարկ համարեց շատ քաղաքավարի, բայց շատ կտրուկ կերպով Ներսէսին հասկացնել, թէ նրա նկատողութիւններն և խրատներն ևս պէտք է որ սահման ունենան։ «Սրբազան Հայր,—ասաց նա,—... Ձեզ մեծ յարգանք ու պատկառանք ունինք, ուստի կը տոկանք և կը հանդուրժենք։ Սակայն Դուք սահմանադրական պատրիարք էք...։ Ձեր Սրբազանութիւնը քաջ գիտէ, թէ սահմանադրական պատրիարք մը չունի իրաւունք «իմ խօսքիս մտիկ ըրէք» ըսելու Երեսփոխանական Ժողովին. չունի իրաւունք մեղադրելու Ազգային Ժողովը թէ փցուն բաներով ժամավաճառ կըլլայ...։ Պատրիարքնիս կը սիրենք, բայց անդր քան զպատրիարք Սահմանադրութիւնն ունինք. նա պէտք է տիրէ ամենուն վրայ»։ Ապա Ասլանեան ջատագովում է կուսակցութիւնների գոյութիւնն Ազգային Ժողովում և բացատրում է, թէ անկարելի է կուսակցութիւնները ժողովին մէջէն վանել»։ Ատենապետի այս

վերջին խօսքերին անմիջապէս աւելացնում է «Ղալաթիոյ օջախի» անդամներից մէկը՝ Օգսէն Խօջասարեան. «Ձէ թէ չենք կրնար վանել, այլ չպիտի վանենք կուսակցութիւնները»։ Ուրիշ երեսփոխաններ մէջ մտան և զանազան եղանակներով Ներսէսի սիրտը հանդարտեցրին, բայց այնուամենայնիւ նրա բաղձանքը՝ հրաժարուած Քաղաքական Ժողովի անդամների վերընտրուելու մասին՝ չիրագործուեց։ Այս վերջինների մեծ մասը, տեսնելով Ազգ. Ժողովի տրամադրութիւնը, յայտարարեց, թէ իրանց հրաժարականն անդառնալի էր։

Քաղաքական Ժողովի հրաժարականն ընդունուելուց յետոյ Ընդ. Ժողովն ըստ կանոնի իր Մայր Դիւանին յանձնեց, որ Ատենապետաց Դիւան հրաւիրելով նոր ընտրելիների ցուցակ պատրաստէ և ներկայացնէ Ազգ. Ընդհ. Ժողովին։ Այս «Ատենապետաց Դիւանն» իսկապէս Ընդհանուր Ժողովի մի խտացումն էր։ Ինչպէս յայտնի է, Ազգ. Ժողովի երեսփոխաններից ընտրուած 8 Դիւանները կամ Խորհուրդներն (3-ական անդամից բաղկացած) ընտրում են իրանց միջից մի մի ատենապետ։ Ահա այս 8 ատենապետներն Ընդհ. Ժողովի ատենապետի նախագահութեան տակ կազմում էին «Ատենապետաց Դիւանը»։ Երբ այս Դիւանը պատրաստեց ընտրելիների ցուցակն, որ Քաղաք. Ժողովի անդամների (14) կրկին թուովն անուններ էր պարունակում, ըստ Ներքին Կանոնագրութեան (յօդ. 47 Զ.) նախ և յառաջ նա հարցրեց պատրիարքի կարծիքը։ Ահա այն ժամանակ Ներսէս պահանջեց, որ հրաժարուած Քաղաք. Ժողովի բոլոր անդամների անուններն էլ մտցուեն թեկնածուների այդ ցանկում։ Ատենապետաց Դիւանը համաձայնուեց դրան, բայց այս անգամ հրաժարուածները չհամաձայնուեցին իրանց թեկնածութիւնը դնել, որով հարկ եղաւ, որ ցուցակը նորից լրացուի ուրիշ անուններով։ Քիչ էր մնում, որ այս հանգամանքը նորից պատճառ դառնայ Ներսէսի հրա-

ժարականին, որը նա հազիւ մի քանի օր յառաջ ետ էր առել։ Այս կերպով վերակազմուած ընտրելիների ցուցակի վրայ յուլիսի 1-ին 14 հոգի ընտրուեցին. բայց որովհետև նրանց մեծ մասը չպատասխանեց իրանց եղած հրաւէրին, ուստի յուլիսի 22-ին նոր ընտրութիւն և ապա սեպտեմբերին դարձեալ ընտրութիւն կատարելով հազիւ հազ կարելի եղաւ ամբողջացնել Քաղաքական Ժողովի կազմը, որ պիտի պաշտօնավարէր միայն մէկ տարուայ չափ, մինչև 1878 թ. յուլիս, այսինքն մինչև նախորդի ընդհատուած երկամեայ շրջանի վերջը, երբ լրանում էր նաև Կրօնական Ժողովի շրջանը։ Այս ձևով կազմուած Ազգ. Վարչութիւնն էր, որ ղեկավարում էր ազգային գործերն, երբ «Հայկական Խնդիրը» միջազգային հարց դարձաւ նախ Սան-Ստեֆանօյում և ապա Բերլինում։ Աւելորդ չենք համարում յիշատակել այստեղ, թէ որո՛նք էին կազմում ազգային պաշտօնական մարմիններն այդ պատմական շրջանում։

Քաղաքական Ժողովի Ա. ատենապետն էր Աւետիս Բօյօլեան, Բ. ատենապետը՝ Էլիաս Զայեան։ Ա. ատենադպիրը՝ Մատթէոս Ալիքսանեան, Բ. ատենադպիրը՝ Գէորգ Բըլըճեան։

Կրօնական Ժողովի Ա. ատենապետն էր Խորէն եպիսկ. Մխիթարեան, Բ. ատենապետը՝ Գէորգ աւագ քհնյ. Արծրունի։ Ա. ատենադպիրն էր Յակոբ Աշոտ վարդապետ Փափազեան, Բ. ատենադպիր՝ Խաչատուր քահ. Տէր-Գաբրիէլեան։

Այս երկու Ժողովները միասին կազմում էին Ազգային Վարչութիւն (Խառն Ժողով) պատրիարքի նախագահութեան տակ։

Այս միջոցին Ազգային Ժողովի անդամների թիւը միայն 122 էր, այն է՝ օրինական 140 թուից 18 պակաս. 18 երեսփոխանի տեղ բաց էր։ Այդ 122-ից էլ հազիւ կէսն էր կանոնաւորապէս ժողով յաճախում։

Ազգային Ժողովի դիւաններն էլ հետևեալ անձերից էին կազմուած.

1. Մայր Դիւան, այն է Ազգային Երեսփոխանական Ժողովի՝

Ա. ատենապետ՝ Ստեփան Ասլանեան
Բ. » Յովհաննէս Նուրեան
Գ. » Տիգրան Եուսուֆեան.
Ա. ատենադպիր Համբարձում Ալաճաճեան
Բ. » Մկրտիչ Մելիքեան
Գ. » Սամուէլ Տէրոյենց.

2. Ձեռնհասութեան Դիւան.
Խորէն արքեպ. Նար-Պէյ՝ ատենապետ։

3. Դաստիարակութեան Դիւան.
Յովհաննէս Նուրեան, »

4. Կալուածոց Դիւան.
Բարսեղ Հալաճեան, »

5. Յարաբերութեան Դիւան.
Միքայէլ Մամիկոնեան. »

6. Համարակալութեան Դիւան.
Սենեքերիմ Մանուկեան, »

7. Իրաւասութեան Դիւան.
Մատթէոս եպ. Իզմիրլեան, »

8. Նախաձեռնութեան Դիւան.
Գէորգ Սթիմարաճեան, »

9. Խմբագրութեան Դիւան.
Կարապետ Իւթիւճեան, »

Սակայն Ներսէս պատրիարք, ինչպէս ինք անձամբ էլ յայտնեց Ազգային Ժողովին, Քաղաքական և Կրօնական Ժողովները պաշտօնապէս մասնակից չէր անում Հայկական Խնդրի առթիւ իր արած դիմումներին, այլ գործում էր իր անձնական պատասխանատուութեան տակ։ Այսպէս էր կացութիւնը թէ Կ. Պօլսի դեսպանախորհրդի ժամանակ, երբ նա ջանքեր էր անում հայոց գանգատներն եւ նրա խորհրդակցութեան առարկայ

դարձնել՝ թէև անյաջող, թէ՛ այն ժամանակ, երբ Լոնդոնում և Պարիզում 1877-ի սկիզբները հրատարակել տուեց Հարստահարութիւնների տեղեկագիրն*), և թէ՛ երբ պատերազմից յետոյ Հայկական Խնդրի առթիւ Նրա դիւանագիտական յարաբերութիւններն անհամեմատ մեծ ծաւալ ստացան։

Ըստ այսմ՝ Ազգային Վարչութեան Խառն Ժողովը յամենայն դէպս պատասխանատուութիւնից զերծ էր մնում։ Ժամանակի պարագաների համաձայն՝ գործունէութեան այս եղանակն աւելի նպատակայարմար էր համարվում։ Իսկ այն անձերն, որոնց խորհրդով շարժվում էր Ներսէս կամ որոնք ազդում էին նրա վրայ, Ազգ. Վարչութեան մէջ պաշտօն չունէին և հրապարակի վրայ չէին երևում, ինչպէս պիտի պատմենք իր տեղում։ Վարժապետեան այն միջոցին, 1878-ի առաջին կիսամեակին, և ոչ իսկ գալիս էր պատրիարքարան. ուստի նրա և Խառն Ժողովի որոշումով, պատրիարքարանի ընթացիկ գործերը վարելու համար Խորէն եպ. Մխիթարեան պատրիարքական տեղապահի պաշտօն էր կատարում, խորհրդականի տիտղոսով։

Ազգային Ժողովը 1877 թ. դեկտեմբերի 20-ի նստից յետոյ այլևս գումարման չհրաւիրուեց ի նկատունենալով Կ. Պոլսի պատերազմական դրութեան մէջ

---

*) «Rapports sur l'oppression des arméniens en Arménie». Londres, Gilbert & Rivington, 1877, in 8⁰. 64 էջ։

«Les Arméniens de Turquie». Rapports du patriarche arménien de Constantinople à la Sublime Porte, Paris, 1877, in 8⁰.

Այս տեղեկագիրը (Ներսէսի Բ. Դրան ներկայացրած պաշտօնական զեկուցագիրը) 1877 թ. մարտին տպագրուած է Բրիւսէլի «Le Nord» լրագրում, որ ռուսական կառավարութեան բերանն էր արտասահմանում։

Այս միևնոյն լրագրում տպուած է նաև, բողոքի ձևով, Կ. Պոլսից մի հայի գրած հերքումը Ներսէսի՝ անգլ. դեսպան Լէյըրդի հետ ունեցած հակառուսական խօսակցութեան մասին, որն յիշատակել ենք ԺԶ. գլխում («Le Nord», 29 օգոստ. 1877)։

լինելն և առհասարակ երկրի ծանր քաղաքական կացութիւնը։ Ներսէս դեռ ևս 1877 թ. մայիսին խորհուրդ էր տուել երեսփոխաններին այդ իսկ պատճառով առժամանակ դադարեցնել Ընդհ. Ժողովի նիստը։

Երբ 1878 թ. յունիսին Ազգ. Երեսփոխ. Ժողովը նստի հրաւիրուեց, նա շատ տեսակէտներով՝ գոյութեան բոլորովին նոր շրջան էր սկսում։ Մի նշանաւոր դաշնագրում արձանագրուել էր Հայկական Խնդիրն, որ պիտի նուիրագործուէր մի ուրիշ՝ միջազգային դաշնագրով։ Այս էր, որ այնուհետև պիտի կազմէր գլխաւոր առանցքն հայկական կեանքի և ազգային գործունէութեան։ Ուստի մենք փակում ենք այստեղ Ազգային Սահմանադրութեան այս 17-ամեայ (1860—1877) ժամանակամիջոցն իբրև Առաջին Շրջան։ Բայց նախ քան յետագայ դէպքերի նկարագրութիւնն սկսելը՝ կարևոր ենք գտնում մի լրացուցիչ ընդհանուր տեսութիւն անել այս Առաջին Շրջանի վրայ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Ազգային Սահմանադրութեան ծագումն և նրա նախընթաց շրջանը.—Հանգուցեալ գործիչներ Նիկ. Պալեան, Յակոբ Կրճիկեան և Նահ. Ռուսինեան.—«Ղալաթիոյ օջախ» կուսակցութիւնն և նրա գործունէութիւնը.—Մի քանի դիտողութիւններ Ազգ. Երեսփոխանական Ժողովի մասին.—«Ազգ. Սահմանադրութեան» Թրքերէն բնագիրը։

Ազգային Սահմանադրութիւնը շատ բան պարտական է 1848-ի եւրոպական ազատագրական շարժման։ Այնտեղ մենք գտնում ենք այն բոլոր կարևոր տարրերն, որոնք սոյն շրջանի հիմնական սկզբունքներն էին կազմում, ինչպէս երեսփոխանական դրութիւն, հանրային կրթութեան և եկեղեցական գոյքի մատա-

կարգադրութեան աշխարհականացում, ընտրուած վարիչ մարմինների համարատւութիւն, ժողովրդային հակակշիռ, մի խօսքով կատարեալ ժողովրդապետական վարչական ձև։ Ինչպէս որ մինչև 1846 թ. գոյութիւն ունեցած վարչական դրութիւններն ազդուած են 1839-ի Գիւլխանէի խաթթը շէրիֆի և 1845-ի ֆէրմանի տրամադրած բարենորոգչական ձեռնարկութիւններից, այնպէս էլ այնուհետև ազգային գործերի կառավարութեան մէջ մտցուած ժողովրդապետական (դէմօկրատական) յատկանիշը հետեւանք էր այն բանի, որ 1857-ի ազգային կանոնադրութեան—որ ապա յանգեցաւ «Ազգ. Սահմանադրութեան»—յօրինողները տոգորուած էին 1848-ի ազատագրական շարժման սկզբունքներով, իսկ այս սկզբունքները Թիւրքիայում կարողացան մարմնանալ շնորհիւ 1856-ի նշանաւոր խաթթը հիւմայունի։ Ամիրայական գերիշխանութեան ժամանակ, այն է՝ մինչև 1846 թ., ամիրաներից ով որ ամենից ազդեցիկ էր, նա էլ ներկայացնում էր իսկական ազգային վարչութիւնն իր անձի մէջ. միւս ամիրաները պարզապէս այս ինքնակոչ ազգապետի մօլորակներն էին։ Պատրիարքը բացարձակօրէն ենթարկուած էր հզօրագոյն ամիրային։ Ինչ դիրք, որ բռնէին ամիրաներն աշխարհական գործերի նկատմամբ, նոյն դիրքին համապատասխան ընթացք էին ստանում նաև եկեղեցական գործերն, որոնց տնօրինումը պատրիարքից էր կախուած։ Եթէ կար մի պարագայ, որ երբեմն թուլացնում էր ամիրայական տիրապետութիւնն, այդ այն էր, որ շատ անգամ ամիրաները ներքին գժտութեամբ ջլատում էին իրանց ոյժը։ Այս պատահում էր այն ժամանակ, երբ սեղանաւոր ամիրաները հակառակորդ էին հանդիսանում վառօդապետ և ճարտարապետ ամիրաներին կամ ընդհակառակը։ «Էսնաֆի» (արհեստաւորաց դասակարգի) շարժման յաջողութեան քիչ չէ նպաստած ամիրայական այս ներքին հակառակութիւ-

նը։ Այս շարժումից և հակառակութիւնից ծնաւ 1847-ի կանոնադրութիւնն, որ ազգային աշխարհական և հոգևոր գործերի կառավարութիւնը յանձնում էր Հոգևոր և Գերագոյն Ժողովներին, որոնք փոխվում էին 2 տարին մի անգամ։ Ամիրաներն այնու ամենայնիւ դեռ պահել են իրանց գերակշիռ դիրքն առաջին Գերագոյն Ժողովներում, որ միայն աստիճանաբար է տեղի տուել վաճառականների և արհեստաւոր դասակարգի մղման առջև։ Վերջին, այսինքն 1858-ի Գերագոյն Ժողովի 20 անդամներից միայն 6-ը ամիրաներից էին (4 սեղանաւոր, 1 վառօդապետ և 1 ճարտարապետ), իսկ մնացած 14-ը ժողովրդից, այն է՝ 7 արհեստաւոր, 1 բժիշկ, 2 ոսկերիչ և 4 մանր վաճառական։

Հոգևոր և Գերագոյն Ժողովներն որևէ կանոնադրութիւն չունէին իրանց համար և յաճախ մեծ դժուարութեան էին հանդիպում իրանց հսկողութեան յանձնուած գործերը վարելու եղանակի մասին։ Այն ժամանակ այդ գործերը դառնում էին Պատրիարքարանի, Ազգային Հիւանդանոցի, Տնանկ Աղքատաց Սնդուկի և ուսումնարանների շուրջը։ Եւ երբ ձեռնարկուեց այդպիսի մի կանոնադրութիւն կազմելուն, անմիջապէս երևան եկաւ գաղափարների այն մեծ տարբերութիւնն, որ գոյութիւն ունէր հին կարգերի ներկայացուցիչների և նոր, եւրոպական ուսում ստացած, կամ ժամանակից գաղափարներով ներշնչուած երիտասարդների միջև։ Առաջինները «խաւարեալ» էին և երկրորդները «լուսաւորեալ»։ Այս երկու խմբերը՝ մաքառումի ամենից ծայրայեղ միջոցներն էին գործ դնում իրանց նպատակը յառաջ տանելու համար. եղբայրն եղբօր դէմ էր, հայրն որդու դէմ։ Գերդաստանը և նոյն իսկ եկեղեցին կռուի և փոխադարձ անարգանքի թատր էին դարձել։ Առաջին խմբի մէջ էին ամիրաներն, իսկ երկրորդի մէջ ուսեալ դասակարգի հետ միասին կային նաև արհեստաւորներն և վաճառականները։ «Լուսաւո-

բեալների» պետն էր համարվում բժ. Սէրվիչէնը։ «Լուսաւորեալների» կուսակցութեան մէջ էր նաև զմիւռնիացի այն խմբակն*), որ յետոյ այնչափ մեծ դեր պիտի խաղար Ազգ. Սահմանադրութեան մէջ։ Այս խիստ պայքարի մէջ յաղթութիւնը մնաց «լուսաւորեալներին», որոնցից էր կազմուած գլխաւորաբար՝ 1853-ի «Ուսումնական Խորհուրդն», որի անդամներն էլ պատրաստեցին 1857-ի «Ազգային Կանոնագիրն» և ապա 1860-ի «Ազգային Սահմանադրութիւնն»՝ ամիրայական կուսակցութեան ընդդիմութեան հակառակ։ Ըստ այսմ Հոգևոր և Գերագոյն Ժողովները փոխանցուկ մի դրութիւն էին ներկայացնում Ամիրայական և Սահմանադրական Իշխանութեանց միջև**)։

Օսմանեան հայոց ազգային ինքնավարութեան հիմնադիր և անձնուէր գործիչներից ոմանք արդէն հանգչում էին յաւիտենական քնով մեր պատմութեան այս Առաջին Շրջանը չաւարտած։ Դրանք են մասնաւորապէս Նիկողոս Պալեան, Յակոբ Կրճիկեան և Նահապետ Ռուսինեան։

Նիկողոս Պալեանն համարվում է Ազգ. Սահմանադրութեան «յղացողը»***), թէև անշուշտ ոչ այն ընդարձակ հիմքերի վրայ, ինչ որ էր 1860-ին մտցուածը։ Պալեանի այս գործունէութիւնն առանձին արժէք ևս ստանում է այն տեսակէտով, որ ինք իբրև հարուստ ամիրայի որդի ստիպուած էր գաղտնի գործել նոյն իսկ իր հօր՝ արքունի ճարտարապետ Կարապետ ամիրայի հակառակ, որ բուռն կերպով ձգտում էր ամիրայական իշխանութիւնը կանգուն պահել ժողովրդապետական ձգտումների դէմ։ Նիկողոս Պալեան վախճանուեց 1858-ին, դեռ 32 տարեկան հասակում։

Յակոբ Կրճիկեան, իր ժամանակի ամենից զարգացած հայերից մէկն, որ պետական բարձր պաշտօնեայ էր, շատ մեծ արդիւնք է ունեցած ազգային և հասարակական գործերում, յատկապէս «Պատրիարքարանի գործերը բարեկարգելու աշխատութեան մէջ, որուն առաջին հիմնադիրը ըլլալու պատիւը կը պատկանի» նրան։ Յակոբ Կրճիկեանին այս գործում օգնել է մի «լուսաւորեալ» ամիրա՝ Մկրտիչ Ճէզայիրլեան*)։ Կրճիկեան՝ Գերագոյն Ժողովի ատենապետ է եղած. այնուհետև 6 տարի լօղօֆէթի տիտղոսով պատրիարքարանի գործերն է կառավարած**)։ Կրճիկեանն էր, որ բժ. Սէրվիչէնի հետ միասին, երկուսն էլ Պարիզում

---

*) Գր. Մարկոսեան, Սահակ Ապրօ և Մինաս Մինասեան։ Մարկոսեան, որ Մոսկվայում էր ուսում ստացել, յետոյ դարձաւ Սահմանադրական առաջին Քաղաքական Ժողովի ատենապետը։ Ապրօ օսմ. բարձրաստիճան պաշտօնեայ էր և նոյնպէս գտնուած է Ազգ. Վարչութեան գլուխ։

**) Թէ այս նախնական շրջանի և թէ բուն Ազգային Սահմանադրութեան մասին—անձուկ մտքով—մանրամասն տեղեկութիւններ կարելի է գտնել Արշակ Յ. Ալպօյաճեանի «Ազգային Սահմանադրութիւնը, իր ծագումը և կիրառութիւնը» վերնագրով ընդարձակ պատմութեանը մէջ (Ազգային Հիւանդանոցի Ընդ. Օրացոյց 1910-ի), որ բարեխղճօրէն կատարուած մանրագիտական ուսումնասիրութիւն է այս նիւթի մասին։

***) Ռուսինեան 1870 նոյեմբ. 27-ի Ազգ. Ժողովի նիստում Յակոբ Պալեանի ազգ. երեսփոխանութիւնից հրաժարուելուն առթիւ արտասանած ճառում ասում է, թէ այս Յակոբի եղբայրն՝ այսինքն Նիկողոս Պալեանն է եղած, որ Սահմանադրութեան գաղափարը «յղացաւ» և «իւր ձեռօք գծագրեց ազգային կանոնագրութեան հիմնական սկզբանց հոյակապ յատակագիծը.... Ազգը ատոր կը պարտի իր Սահմանադրութեան գոյութիւնը»։ Իր մի ուրիշ ճառում (1874 հոկտ. 18) նոյն Ռուսինեան դարձեալ վկայում է, թէ «Սահմանադրութեան սկիզբը անուն մը կայ համեստօրէն պահուած՝—Նիկողոս Պալեան»։

*) Ա. Ալպօյաճեան. «Ազգ. Հիւանդ. Օրացոյց 1910», էջ 230—231.

**) Լօղօֆէթ=ազգ. ատենադպիր էր նշանակում և իսկապէս պատրիարքի խորհրդականն էր աշխարհական գործերի համար։ Այս տիտղոսը յունական է և շարունակվում է գործածուել Կ. Պոլսի յոյն պատրիարքարանում։

ուսում առած, նոր մտքերի և յառաջադէմ գաղափարների ռահվիրաներ հանդիսացան, որոնց արդիւնքն եղաւ նախ «Ազգային Կանոնագիրն» և ապա «Ազգ. Սահմանադրութիւնը»։ Նա վախճանուեց 1865-ին։

Նիկ. Պալեան և Յակ. Կրճիկեան արդէն գործում էին ասպարէզի վրայ, երբ 1851-ին նրանց միացաւ բժիշկ Նահապետ Ռուսինեան, որ, իր ժամանակ, Ազգ. Սահմանադրութեան ամենից եռանդուն գործիչն է եղած։ Ռուսինեան 11 տարի բնակուել էր Պարիզում և դեռ այնտեղ եղած միջոցին սերտ յարաբերութեան մէջ էր գտնվում Պոլսից եկած ուսանողների հետ։ Ռուսինեան ջերմ մասնակցութիւն է ունեցած 1860-ի Ազգ. Սահմանադրութեան ծրագիրը կազմելու մէջ։ Սահմանադրութեան հաստատումից մի քանի ամիս յետոյ Ռուսինեան յայտնի Ֆուադ փաշայի հետ, իբրև նրա անձնական բժիշկը, մեկնում է Բէյրութ և իր բացակայութեան ժամանակ էլ ընտրվում է Սահմանադրութեան նախ առաջին և ապա նաև երկրորդ Ուսումնական Խորհրդի անդամ։ Երբ մի տարի յետոյ նա Կ. Պոլիս դարձաւ, Ազգ. Սահմանադրութիւնն իր անդրանիկ ճգնաժամի մէջն էր, որպիսին նա այնուհետև քանիցս ունեցած է։ 1863-ի Սահմանադրութեան խմբագրութիւնը նոյնպէս Ռուսինեանի մասնակցութեամբ է կատարուած։ Նոյն տարին իսկ նա ընտրուեց Ազգ. Երեսփոխ. Ժողովի Բ. ատենապետ և ապա այնուհետև նա իր ամբողջ էութիւնը նուիրեց Սահմանադրութեան, որի գլխաւոր սիւնն է եղել մինչև իր մահը։ Նա նշանաւոր էր մանաւանդ իբրև Ազգ. Ժողովի «Ներքին Կանոնագրի» հեղինակ և այլ բազմաթիւ օրինագծերի նախաձեռնող։ Նա անընդհատ գործում էր կամ իբրև ատենապետ, կամ իբրև որևէ խորհրդի անդամ և կամ իբրև պարզ երեսփոխան։ 1876 հոկտեմբերի 15-ին նա վերջին անգամ ատենապետեց և մասնակցեց Ազգ. Ժողովին. նոյն տարին նոյեմբ. 29-ին 57 տարեկան

հասակում նա կաթուածահար եղաւ։ Նրա անձնական արժանիքը մեծ դրուատիքի առիթ դարձաւ իր մահուան առթիւ խօսուած ճառերի մէջ։ Ներսէս Վարժապետեան իր դամբանականում Ազգային Ժողովի «Սողոնը» տիտղոսեց նրան, իսկ նրա սահմանադրական գործի գործակիցը, Գր. Օտեան, գրեց նրա տապանի վրայ՝ «զքեզ լամք անդադար»*)։

Պատմութեանս ընթացքում արդէն մի քանի դիտողութիւններ արած ենք Սահմանադրութեան ներքին արժէքի և նրա վարչական մարմինների ընթացքի նկատմամբ։ Այժմ հարկաւոր ենք համարում առանձնապէս խօսել օրէնսդիր մարմնի, այն է՝ Ազգ. Երեսփոխանական Ժողովի գործունէութեան մասին։

Ամբողջ այս Առաջին Շրջանում (1860—1877) Ազգային Ժողովը փոքր ի շատէ կազմակերպուած միայն մի կուսակցութիւն է ունեցած իր մէջ, այն՝ որ յայտնի է «Ղալաթիոյ օջախ» կոչումով։

«Ղալաթիոյ օջախ» կամ թրքերէն ձևով «Ղալաթա օջաղը» կուսակցութիւնը՝ սահմանադրական օրէնքի և կարգերի անթերի պահպանման յարող մի խումբ երեսփոխաններից էր կազմուած, որոնք նպատակ ունէին ժողովրդի իրաւունքների պաշտպան հանդիսանալ և ընդդիմանալ Ազգ. Ժողովի այն երեսփոխաններին, որոնք ամիրայական իշխանութեան յիշատակներն էին պահպանում կամ ազնուապետական հակեր ունէին։ Բայց երկու երեսփոխան, որոնք իրանց բարձր դիրքի շնորհիւ ազնուապետական շրջանին էին պատկանում, այսինքն Գրիգոր Օտեան և բժշկապ. Սէրվիչէն, բարձր էին այդ կուսակցական պայքարից և

*) Նշանաւոր հայ բժիշկների յայտնի կենսագիրը դոկտ. Վ. Թորգոմեան՝ բժ. Նահապետ Ռուսինեանի վրայ մի հմտալից ընդարձակ ուսումնասիրութիւն է հրատարակած «Հանդէս Ամսօրեայում», 1902 և 1903 թ.։

վայելում էին «Ղալաթիոյ օջախի» յարգանքը։ Այս անունով կոչուելու պատճառն այն էր, որ Երեսփոխանական Ժողովը (մինչև 1877) գումարվում էր Ղալաթիոյ Խորհրդարանում և յիշեալ երեսփոխաններն այնտեղ կանխաւ հաւաքվում էին, քննում էին ժողովի օրակարգն և հարցերը բաժանում էին իրանց միջի ատենախօսներին, նայելով թէ ով որ հարցն աւելի է ուսումնասիրած և աւելի ձեռնհաս է։ Կուսակցութեան գլխաւոր անդամներն և ատենախօսներն էին Մատթէոս վ. Իզմիրլեան, բժ. Նահապետ Ռուսինեան, Քրիստոսատուր Ղազարոսեան, որոնց վրայ աւելացան յետոյ երկու պերճախօսներ ևս՝ Ստեփան Փափազեան և Օգսէն Խօճասարեան։ Կուսակցութիւնն իր ոյժը ցոյց տուաւ առաջին անգամ Խրիմեանի դէմ, երբ սա սկսեց Սահմանադրութեան օրէնքներից դուրս գործել։ Խրիմեանի հակասահմանադրական արարքի դէմ մաքառումը տեղի ունէր թէ Քաղաքական ժողովում, որի ատենապետն էր Սեննեքերիմ Մանուկեան, և թէ մայրաքաղաքի Թաղական ժողովներում։ 1873-ի ամառը շատ մեծ կռիւներ պատահեցին այնտեղ, և միայն ոստիկանութեան միջամտութեան շնորհիւ արիւնհեղութեան առաջն առնուեց։ Պայքարը վերջ գտաւ նրանով, որ Խրիմեան հարկ տեսաւ զիջել և հեռացաւ պատրիարքական աթոռից։ Եւ թէև այս պատճառով ժողովրդի մեծ մասը գրգռուած էր կուսակցութեան դէմ, բայց նրա ղեկավարներն՝ Իզմիրլեան, Ղազարոսեան և Փափազեան՝ աննկուն շարունակեցին իրանց ընթացքը։

«Ղալաթիոյ օջախն» յառաջադիմական ուղղութիւն ունէր։ Հետաքրքրական է յիշել երկու դէպք։ 1876-ին Ռուսինեան մի ծրագիր է առաջարկում, որ մեծ փոփոխութիւն էր մտցնում Սահմանադրութեան մէջ և նրան աւելի ևս ենթարկում էր Եկեղեցուն։ Պահպանողական-կրօնական ոգով կազմուած այս ծրագրին, որ անհատականապէս Ռուսինեանին էր պատկանում,

կուսակցութիւնն ուժգին դիմադրեց և վերջ ի վերջոյ տապալեց, երկար ձգձգելուց յետոյ նրա քննութիւնը։ 1877-ին Օգսէն Խօճասարեան դաստիարակութեան խնդրի մասին ճառելիս առաջարկում է, որ Ղալաթիոյ Նորակառոյց միջնակարգ ուսումնարանն, որ ուղղակի Ուսումնական Խորհրդի հսկողութեան տակ պիտի գտնուէր, համազգային կնիք ունենայ. «Հոն ընդունուելու են,—պահանջում է նա,—բոլոր այն մանկունքն ու մարդիկը, որք Հայ անունը կը կրեն՝ թէեւ ըլլան բողոքական կամ կաթոլիկ*)»։ Եւ Ղազարոսեան ու Փափազեան անմիջապէս ձայնակցում են նրան և պաշտպանում, թէև ծրագիրը մնում է ծրագիր։

«Ղալաթիոյ օջախն» ընդհանրապէս ընդդիմադիր խմբի դիրք է բռնած հանդէպ պատրիարքի և ազգ. վարչութեան, անողոք կերպով քննադատելով նրանց ընթացքը։ Ներսէս Վարժապետեան շատ էր նեղվում այս վիճակից և շարունակ յորդորում էր «սիրով և միաբանութեամբ գործել», միմեանց դէմ չկռուել և վերջապէս «կուսակցութիւնները վանել» ժողովից։ Դրան պատասխանում են «Ղալաթիոյ օջախի» անդամները. Իզմիրլեան նկատում է. «Սէրը թագաւորելու համար արդարութիւնը պէտք է գործադրել. երբ արդարութեան գործադրութիւն չըլլայ, սէրը չի կրնար թագաւորել»։ Իսկ Խօճասարեան բացարձակօրէն յայտնում է. «Չէ թէ չենք կրնար վանել, այլ չպիտի վանենք կուսակցութիւնները»։ «Ղալաթիոյ օջախը» միևնոյն ժամանակ, երբև հաշուական հարցերում ուղղամիտ, խիստ հակառակ էր նաև Երուսաղէմի Աթոռին և Միաբանութեան, այնտեղ տիրող հաշուական անկարգութիւնների և Կենտրոնի հեղինակութեան նկատմամբ ցոյց տրուած ըմբոստութեան պատճառով։

«Ղալաթիոյ օջախի» անդամների աջ ու ձախ, եր-

---

*) Ատենագր. Ազգ. Ժողովոյ, 11 մարտ 1877.

բեմն անզգոյշ և անխրատ, բայց շատ անգամ արդարացի և միշտ բուռն ու կտրուկ քննադատութիւնները՝ մեծ թշնամութիւն էին յարուցանում նրանց դէմ, որի պատճառով յաճախ վիրաւորանքի են ենթարկուել նրանք զանազան կողմերից։ Բայց մի անգամ նրանց դէմ թշնամական զգացմունքն այնքան սուր կերպարանք ստացաւ, որ նրանք մատնուեցին թիւրք կառավարութեան և քիչ էր մնում, որ այս պատճառով սաստիկ պատժուէին։ Այս հալածանք յարուցանողը պատրիարքական փոխանորդ Մկրեան տէր Յովհաննէս քահանան էր, որ Խառն ժողովին տուած բողոքագրով դատ էր պահանջում այդ երեսփոխանների դէմ, «որոց գործն եղած է,—ասում էր նա,—միշտ պատրիարքները և ժողովներ տապալել և հանդարտ ու խաղաղ ազգը երկպառակութեան և խռովութեան մէջ ալեկոծել»։ Այս բողոքագիրը՝ թէև Խառն ժողովից մերժուած՝ նա տպում է Իւթիւճեանի «Մասիս» և Փանոսեանի «Մանզումէի Էֆքեար» լրագիրներում։ Գանգատի առարկայ էին յատկապէս Ստեփան Փափազեան, Քրիստ. Ղազարոսեան և Օգսէն Խոճասարեան։ Կ. Պոլսի այդ միջոցին պատերազմի պատճառով պաշարման դրութեան մէջ էր։ «Օջախի» հակառակորդներն իրանց թերթերում («Լրագիր») խիստ կերպով նրանց վրայ յարձակուելուց յետոյ «իբրև պատրիարք ու ժողովներ տապալող և ազգի հանդարտութիւնը խռովողների» վրայ՝ միևնոյն ժամանակ չէին քաշվում ակնարկներով մատնանշել, թէ նրանք, յիշեալ երեսփոխաններն, իբրև օսմանեան հպատակ ևս հակապետական զգացմունք չունէին և այլն։ Ոստիկանութեան մինիստրը բացատրութիւններ է պահանջում Մկրեանից և ամբաստանուած երեսփոխաններից և որոշում է սրանց երեքին էլ աքսորել։ Ամբողջ 2 ամիս այս հարցն աւելի էր հետաքրքրում պատրիարքական շրջաններին, քան թէ պատերազմական դէպքերը։ Ներսէս պատրիարք մի-

ջամտեց և նրանց ազատեց աքսորից, բայց միևնոյն ժամանակ ազդու կերպով յորդորեց, որ Ազգ. Ժողովի նիստերին չյաճախեն...։ Այն ժամանակ Իզմիրլեան ամէն ջանք գործ է դնում իր կուսակիցներին ազատելու և Ազգային Ժողովի 1877 հոկտեմբ. 28-ի նիստում 46 երեսփոխանի ստորագրութեամբ մի առաջարկութիւն է ներկայացնում պատրիարքին, իբրև Ազգ. Երեսփոխ. Ժողովի նախագահին, որ նա միջնորդէ կառավարութեան առջև, քանի որ, ասուած է այնտեղ, «մինչև իսկ աքսորման վտանգի սպառնալեօք անոնց հրաժարականը կուզուի իրենց երեսփոխանութենէն և նկատելով, որ մեր վերոյիշեալ պաշտօնակիցները զբրպարտութեամբ մատնուած են»։ Այս առթիւ Ընդհ. Ժողովի ատենապետ Նուրեան յայտարարում է իր նախագահական աթոռից, որ ոչ թէ միայն պատրիարքն, այլ նոյն իսկ սադրազամն իրաւունք չունի ազգային երեսփոխանին իր պաշտօնից հրաժարեցնել։ «Ղալաթիոյ օջախն» յաղթանակեց մի անգամ ևս, և արգելուած երեսփոխանները յետագայ նիստին եկան գրաւեցին իրանց աթոռները։

Այժմ մի քանի դիտողութիւններ էլ Ազգ. Երեսփ. Ժողովի գործունէութեան մասին։

Ըստ Սահմանադրութեան՝ Ազգային Ժողովը պիտի գումարուէր երկու տարին մի անգամ ապրիլի վերջերին և պիտի տևէր «մինչև երկու ամիս» (յօդ. 61)։ Արտաքոյ կարգի դէպքերում արտակարգ նիստ կարելի էր հրաւիրել. «միայն թէ այս կերպ արտաքոյ կարգի ժողով գումարելէն առաջ՝ գումարման պատճառը Բ. Դրան իմաց տրուելով անոր հաճութիւնը առնուլ հարկ է» (յօդ. 62)։ Այս վերջին կէտն, որ ապագային Աբդիւլ Համիդի ձեռքում օրինական մեծ զէնք պիտի լինէր նոյն իսկ սովորական նիստերն արգելելու համար, լռելեայն անուշադրութեան էր մատնուած և Երեսփ. Ժողովի նիստերը գումարվում էին գրեթէ անընդհատ,

ամբողջ տարին: Նիստերը մեծ մասամբ տեղի ունէին ուրբաթ օրերն, որ մահմեդական տօնի օր լինելով կառավարութեան հայ պաշտօնեաների համար աւելի յարմար էր իրանց երեսփոխանական «ազգասիրական» պարտականութիւնը կատարել: Բայց այս յաճախակի նիստերն այն անյարմարութիւնն ևս ունէին, որ շատերն, որոնք իսկապէս կարող էին օգտակար լինել, ժամանակի սղութեան պատճառով յանձն չէին առնում երեսփոխանական պաշտօն ընդունել կամ եթէ ընդունում էին՝ զանց էին առնում կանոնաւորապէս յաճախել:

Ազգային Ժողովի պարապմունքի արդիւնաւէտութեան մեծապէս վնասել է ինքն ըստ ինքեան աննշան մի հանգամանք, այն է՝ որ նա հնարաւորութիւն չունէր գիշերները նիստ անել, կամ ցերեկն սկսուած նիստը շարունակել գիշերն ևս, որպէսզի վերջ տրուէր յարուցուած հարցերին: Դրա պատճառն այն էր, որ Կ. Պոլսում, ինչպէս դեռ հիմա ևս, արևի մուտքից յետոյ լայնածաւալ քաղաքի զանազան թաղերի միջև երթևեկութիւնը դադարում է, որովհետև գիշերային հաղորդակցութիւնը կամ անկարելի է և կամ չափազանց դժուար է և թանգ: Այս պատճառով էլ յաճախ պատահում էր, որ ատենապետից սկսած մինչև քարտուղարն և երեսփոխանները նիստի ժամանակ ուշադրութեամբ հետևում էին ժամացոյցի սլաքին, որ «շոգենաւը չփախցնեն», տուն դառնալու ժամանակը չանցնի, այլապէս գիշեր ատեն հնար չունէին իրանց բնակարանն երթալու: Շատ անգամ, երբ նիստը քիչ երկարում էր, նրանք ամեն ինչ կիսատ էին թողնում և փակում նիստը: Մի ամիս յետոյ կայացած հետևեալ նիստում շատ կէտ նորից էր յուզվում, նորից կրկնվում, և այդպէս ահագին ժամանակ էր կորչում ի զուր:

Ազգ. Ժողովի նիստերին յաճախում էին ընդհանրապէս այն երեսփոխանները, որոնք խօսելու փափագ և ընդունակութիւն ունէին. Նրանք սովորաբար ամեն

խնդրի մասին անպատճառ ուզում էին խօսել իրանց իսկական կամ կարծեցեալ հմտութիւնը ցոյց տալու համար և նեղանում էին, որ ատենա-պետներն երբեմն ձանձրացած՝ վիճաբանութիւնները փակելու որոշում էին առաջարկում: Դրանից հարցերը չափազանց ձգձգվում էին:

Ազգ. Ժողովն որոշ օր կամ նիստ չունէր հարցապնդումների համար, որով շատ անգամ աննշան խնդիրներ հարցումների հարցապնդումի ձևով վիճաբանութեան առարկայ էին դառնում և ամբողջ նիստեր էին գրաւում, մանաւանդ երբ կրքերն յուզուած էին անձնական նկատումներով, իսկ այդ ժամանակ օրակարգի վրայ գտնուած լուրջ խնդիրներ ինչպէս բիւջէն, դաստիարակութեան խնդիրը, Սահմանադրութեան վերաքննութիւնն և այլն անվերջ կերպով մնում էին առանց քննութեան և լուծման:

Ահա այս պատճառների շնորհիւ է, ի մէջ այլոց, որ Ազգային Ժողովը նուազ գործնական աշխատութիւն է ունեցած քան սպասվում էր:

Ազգ. Սահմանադրութեան (1863 թ.) թրքերէն թարգմանութիւնն, որ օսմանեան կառավարութեան համար բնագրի ոյժ ունի, հրատարակուած է Օսմ. Քաղաքացիական Օրէնքի մէջ և սրա մասն է կազմում*): Բայց ուշադրութեան արժանի է, որ հայերէն և թրքերէն օրինակները—երկուսն էլ պաշտօնական—մի քանի կարևոր կէտերում տարբերվում են միմեանցից: Նշանակենք գլխաւորները: Նախ՝ բուն անունը: Հայերէնն ասում է մեծահնչիւն կերպով—«Ազգային Սահմանադրութիւն Հայոց», իսկ թրքերէնը պարզապէս Կանոնադրութիւն (Նիզամնամէի միլլէթի էրմէնիան): Հայե-

*) Դիւստուրի Բ. հատոր, որտեղից թարգմանուած է նաև ֆրանսերէնի — (Georges Young, «Corps de Droit Ottoman» II vol., 79—92).

րէնի մէջ ասուած է «Ազգային Երեսփոխան», իսկ Թրքերէնը փոխանակ նրա համապատասխան «մէբուս»*) բառը գործածելու «միլլէթ վէքիլի» (ազգի փոխանորդ) կամ «մէջլիսի ումումի ազասը» (Ընդհանուր Ժողովի անդամներ) բացատրութիւնն է գործածում, որ շատ տրամաբանական է, քանի որ միայն հայերէն օրինակն ունի «սահմանադրութիւն» և յարակից կոչումներ, իսկ Թրքերէն օրինակն՝ ոչ։ Միւս տարբերութիւնները այնքան էական չեն։

ՎԵՐՋ Ա. ՄԱՍԻ

---

*) Այս մէբուս (երեսփոխան) բառի վրայ Ազգային Ժողովն իր 1877 Թ. օգոստ. 19-ի նիստում յատկապէս վիճում է, բայց որոշում է կայացնում չէ գործածել պաշտօնական Թղթերում։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Բ. ՄԱՍՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ռուսական յաղթութիւնն և Կ. Պոլսի հայերի ձգտումը դէպի Ռուսաստան. — Հայկական մասնաւոր ժողով 1877 հոկտ. 21-ին.— Հայոց pia desideria-ն.—Ներսէս պատրիարքի պահպանողականութիւնը.—Նոր քաղաքականութեան պահանջը. — Խրիմեան Վարժապետեանի դէմ.—Եպիսկոպոսների գաղտնի խորհուրդը.—Վարժապետեանի՝ նոր քաղաքականութեան յարելը.—Թիւրք կառավարութիւնն՝ ակամայ պատճառ քաղաքական հայկական խնդրի ծագման.—Զինադադարի պայմանները.—Հայոց յուսահատութիւնն և ձեռք առած եռանդուն միջոցները.—Հայ պատուիրակների տեսակցութիւնն Ադրիանուպոլսում մեծ իշխանի և Իգնատիեւի հետ.—Կ. Պոլսի հայերի ընդհանուր ոգևորութիւնն և մեծ յոյսերը.—Կիլիկիա.—Հայ եպիսկոպոսների աղերսագիրներն Ալէքսանդր Բ. կայսեր և իշխան Գորչակովին.—Իգնատիեւի դերը հայկական խնդրում

Ռուս-թիւրքական պատերազմն իր ամենատաք շրջանի մէջ էր։ Փոքր-Ասիայում Լօրիս-Մելիքեանի բանակը վերջնական հարուած էր հասցրել Մուխթար փաշային Ալաջա լեռան լանջերի վրայ և պատրաստւում էր Կարսը պաշարել։ Եւրոպական Թիւրքիայում ռուսական բանակը ռումինական բանակի օգնութեամբ պաշարել էր Պլէվնան, որի մօտալուտ անկումն օրէ օր սպասւում էր։ Մինչև իսկ յանդուգն մի ռուս զօրախումբ յաջողել էր Բալկանները անցնել և դէպի Ֆիլիպպօպօլի դիմել։ Ռուսական բանակի վերջնական յաղթութիւնը՝ գոնէ քրիստոնեաների համար՝ այլ ևս տարակոյսի տակ չէր։ Եւ այս հաւանական վախճանից

յառաջ գալիք անհրաժեշտ բարեփոխութիւնները լուրջ մտածութեան առարկայ էին Կ. Պօլսում։ Հայերը նոյնպէս չէին կասկածում, թէ շուտով հիւսիսային արծիւը՝ պարտուած և ընկճուած մահիկին իր պայմանները պիտի առաջարկէր հաշտութիւն կնքելու համար և թէ առաջիկայ խաղաղութիւնը Թիւրքիայի քրիստոնեաներին քաղաքական ազատութիւն պիտի բերէր։ Այսպիսի պարագաներում շատ բնական էր, որ Կ. Պօլսի հայերն իրանց աչքերը յառէին յաղթական Ռուսաստանին, որի բարեհայեցողութիւնից էր կախուած Թիւրքիայի ապագան։ Եւս առելի, որ հայերն օրինաւոր պատճառներ ունէին Թիւրքական ըէժիմից դժգոհ լինելու։ Գաւառական հարստահարութիւնների բարձման և հայերի կեանքի, պատուի և գոյքի ապահովման մասին Թիւրք կառավարութեան ներկայացուած կրկին տեղեկագիրները (1872 և 1876) մնացել էին անհետեւանք և ապարդիւն։ Ժողովուրդը—գոնէ մեծագոյն մասը—կորցրել էր իր հաւատը դէպի իր կառավարութիւնը, թէև նոյն իսկ սուլթան Համիդ և սրա խօսքերի վրայ հիմնուելով Ներսէս պատրիարք քանիցս կրկնել էին, թէ պատերազմից յետոյ հայերը «շատ լաւ օրեր պիտի տեսնէին»։ Միևնոյն ժամանակ բոլորին յայտնի էր, որ Ռուսաստան իր սուրը մերկացրել էր Թիւրքահպատակ քրիստոնեաներին ազատելու համար։ Եւ որովհետև մօտ էր Ռուսաստանի յաղթութիւնն, ուրեմն այս հաշուով մօտ պէտք է լինէր և այս ազատութիւնը. պէտք էր միայն ոչ մի ջանք չխնայել, որ հայերն անմասն չմնային այն բարիքից, որ ռուսական յաղթութիւնը պիտի շնորհէր քրիստոնեաներին, որոնց ազատութեան անունով սկըսուած էր պատերազմը։ Չէ՞ որ հայերն էլ քրիստոնեայ էին. չէ՞ որ հայերն էլ Թիւրքիայում նոյնչափ, եթէ ոչ աւելի, զրկանք և հարստահարութիւններ էին կրել և կրում էին՝ որչափ բուլղարները, բօսնեակները և այլն, որոնց դատը պաշտպանվում էր յատկապէս Ռուսաստանի կողմից զինու զօրութեամբ. ինչո՞ւ հայերը պիտի լռէին, ինչպէս լռել էին մինչև հիմա, և չպիտի պահանջէին, որ գոնէ վճռական րոպէին, երբ Թիւրքիայի բախտը պիտի որոշուէր, հայի և Հայաստանի վիճակի վրայ էլ համանման ուշադրութիւն դարձուէր։

Ահա այս նկատումներով «Ազգային Ժողովոյ մեծագոյն և ուղղամիտ մասը»*) 1877 հոկտեմբեր 21-ին, ուրբաթ օր, Ղալաթիոյ Կենտրոնական Վարժարանում գումարուելով՝ մասնաւոր խորհրդակցութիւն ունեցաւ։ Ազգային երեսփոխաններն այս ոչ-պաշտօնական ժողովում որոշեցին հայկական դատը ներկայացնել յաղթական Ռուսաստանի բարեհայեցողութեան։ Այս նպատակով նրանք մշակեցին իրանց pia desideria-ն, այն «չափաւոր բաղձանքները» կամ պահանջները, որ հարկաւոր էին համարում իրանք Հայաստանի կամ Թիւրքիայի հայութեան ապագայի համար։ Բայց ո՞վ պիտի լինէր միջնորդը—Ի հարկէ Էջմիածնի ընդհանրական կաթողիկոսն, որ թէ իբրև Թիւրքիայի հայոց վերին հոգևոր գլուխն և թէ իբրև ռուսահպատակ՝ միակ յարմարն էր համարվում այս կենսական հարցը ռուսաց կայսեր ներկայացնելու։ Ուստի ժողովականներն որոշեցին մի յատուկ հոգևորական պատգամաւոր ուղարկել Էջմիածին մանրամասն ծրագրով և հրահանգներով, բայց երբ իմացուեց, թէ Ներսէս վարդապետ Տէր-Բարթուղեան արդէն մեկնում է այն կողմ, այդ պաշտօնը յանձնեցին նրան։ «Մնդրեցի յերեսփոխան տեարց,—ասում է այս արժանաշնորհ պատգամաւոր վարդապետն իր տեղեկագրում,—որ պաշտօնս վաւերացնող թղթերն յանձնուին ինձ յանուն Աստուածօրհեալ Վեհափառութեանդ, բայց թղթերն թերևս ի ճանապարհին վտանգի

*) «Տեղեկագիր արժանաշնորհ Ներսէս վ. Տէր-Բարթուղեան առ Գէորգ Դ. կաթողիկոսն Էջմիածին, 1878 յունուար 14. (Կաթող. Դիւան)։

ցալէն կասկածելով չհամարձակեցան տալ. սակայն ամենքեան յետին կալով՝ քանիցս առաջարկութիւնները կրկնելէն վերջը քահանայական կարգիս վրայ ալ երդում պահանջեցին, որ ամեն ինչ բառ առ բառ խօսիմ յանուն Վեհիդ. Նոքա թէև բանիւ բերանոյ ինձ պատուիրեցին, բայց կասկածելով որ անկարող լինիմ ըստ արժանւոյն նոցա միտքը մի առ մի բացատրել, որոշեցի գրովս խօսիլ, որն որ կարէ և Վեհափառութիւն Ձեր պատգամաւորութեանս իրականութեան իբր երաշխաւորութիւն պահել, ապագային ծառայիդ հաւատարմութիւնն ստուգելու համար»: Մի մեծ արգելք կար սակայն կաթողիկոսի կողմից, որ էր այս վերջինի հակառուս քաղաքականութիւնն. և ահա դրա դէմ է, որ ազդում են այնուհետև թէ այս առաջին պատգամաւորը, թէ նրանից վերջ եկող Մատթէոս եպ. Իզմիրլեան, թէ Ներսէս պատրիարք և թէ իրան՝ Գէորգ կաթողիկոսին բարեկամ պոլսեցի յայտնի անձինք: Այս առաջին դիմումի ժամանակ երեսփոխանները նախ արդարացնում են Գէորգի մինչև այն ժամանակ ունեցած վարմունքն և ապա աշխատում են համոզել, որ նա փոխէ այժմ իր դիրքը: «Գոնէ արդի քաղաքականութեան այս վտանգաւոր ժամանակին կը խնդրուի Նորին Վեհափառութենէն՝ փոխել իր մինչև ցարդ բռնած քաղաքականութիւնը...»: Այս յառաջաբանից յետոյ «Ազգային ժողովոյ մեծագոյն և ուղղամիտ մասը», միշտ ըստ Տէր-Բարթուղեանի տեղեկագրի, խնդրում է կաթողիկոսից, որ սա կայսեր ներկայացնէ Հայաստանի ապագայի նկատմամբ հետևեալ խնդիրները.

«Ա) Կամ մինչև Եփրատի սահմանն, որ է Մեծ Հայքն, կրկին Տաճկաց չվերադարձնել, այլ իբր կայսերական իշխանութեան մէկ մասն համարել, միացնելով Արարատեան նահանգին հետ...*):

*) Այս Ա. կէտի տակ, փակագծի մէջ, աւելացուած է հետևեալը. «Այս առաջարկութեան ի սրտէ փափագող ենք, սակայն

«Բ) Կամ եթէ, ինչպէս կը լսենք, իրօք խօսք տրուած է երկիր ճշգրտելու, ինչ շնորհներ որ պիտի լինին Բուլգարստանի և ինչ արտօնութիւններ, որ պիտի տրուին բուլգար ժողովրդոյն, նոյնը շնորհուի — ըստ բարեհաճ կամաց Նորին Կայսերական Մեծութեան — նաև Հայաստանի այս մասին և հայ ժողովրդեան, ընդ պաշտպանութեամբ և երաշխաւորութեամբ կայսերն ամենայն ռուսաց:

«Գ) Եւ կամ եթէ կրկին այն երկիրներն ետ պիտի տրուին Օսմանեան պետութեան, նիւթական երաշխաւորութիւն պահանջուի երկրին բարեկարգութեան և հպատակաց հաւասարութեան համար, ու այս երաշխաւորութիւնը լինի ռուսական զօրաց Հայաստանէն չելնելով և պահանջուելիք բարեկարգութիւններն ալ մեր ազգին շահաւոր լինելու պայմանաւ, որ է՝

«1. Ոստիկանութիւնը մեծ մասամբ հայերէն բաղկանայ,

«2. Հայք ալ կանոնաւոր զինուորական կրթութիւն ստանան,

«3. Քիւրդերն ու չերքեզներն կամ բոլորովին Հայաստանէն հեռանան՝ կամ լեռներէն իջնելով քաղաքներու և գիւղերու մէջ կանոնաւոր բնակութիւն հաստատեն, և անոնցմէ ոստիկան չառնուի ժամանակ մը:

«4. Հայք ալ քաղաքային պաշտօններու մէջ անխտիր գործածուին, մանաւանդ թէ այս երկիրներուն

եթէ թոյլ տրուի Ռուսիոյ՝ այդ երկիրները գրաւելոյ, այլինչ չենք կարող ընել. այլ եթէ կարելի է՝ կը խնդրենք Նորին Վեհափառութենէն, որ հաւատարիմ հոգևորս կաններու ձեռօք ջանացուի, որ սոյն քաղաքներն ու գիւղերն իրենց ազգային ներքին վարչական ձևը չփոխեն, և կայսեր յիշատակութիւնը «Որ օրհնես զայնոսիկն» մէջ յիշատակել սկսին. Թերևս այդ կերպով ամբողջութիւն մը դառնայ ազգային, բոլոր ռուսաց իշխանութեան մէջ գտնուած Հայոց եկեղեցիներուն համար ալ»:

կուսակալներն և գաւառապետներն հայ լինին։

«Եւ այս ամէն բարենորոգումները լինելէ յետոյ կայսերական զօրքն ելնեն երկրին միջէն»։

Երկրորդ

«Նորին Վեհափառութիւնը՝ բանիբուն և լեզուագէտ մի բարձրաստիճան եկեղեցական իւր կողմանէ փոխանորդ դրելէ՝ քիչ ժամանակէն գումարուելիք դեսպանաժողովին, որոյ միջոցաւ նոյնպէս իւր առաջարկութիւններն եւրոպական գումարման ներկայացնէ իբրև հայոց ազգին Ընդհանրական Հայրապետն և Գլուխն և Տէրը։ Գնացող պատգամաւորը վերոյիշեալ առաջարկութիւններէն Բ. և Գ-ը. թղթով ներկայացնէ դեսպանաժողովին, որոյ մէջ՝ «ըստ բարեհաճ կամաց և ընդ պաշտպանութեամբ և երաշխաւորութեամբ կայսեր և այլն» խօսքերու փոխարէն նշանակուին՝ «ըստ բարեհաճ կամաց եւրոպական պետութեանց, և ընդ պաշտպանութեամբ և երաշխաւորութեամբ եւրոպական դաշնակից մեծ պետութեանց»։

«Գնացող պատգամաւորն իրաւունք ունենայ նաև մեծ տէրութեանց խորհրդարանաց հետ ալ բանակցելու յանուն Նորին Վեհափառութեան Ընդհանրական Հայրապետին, մանաւանդ Անգղիոյ, Գաղղիոյ և Բրուսիոյ տէրութեանց հետ, որոնք արդէն ձեռք առնուած են Կ. Պօլսոյ Ազգային ժողովոյ կողմանէ, բայց ոչ պաշտօնական ձևով։ Անգղիան ի պաշտօնէ դեսպանաժողովին ներկայացնելու մեծ գործը Նորին Ազգասէր Վեհափառութեան կը թողուն...»։

Ուշադրութեան արժանի է, որ «Ազգային ժողովոյ մեծագոյն և ուղղամիտ մասին», ինչպէս ասում է ինք, պատգամաւորը տեղեկագրում ոչ մի տեղ չէ յիշում Ներսէս պատրիարքի անունը։ Վարժապետեան այն ժամանակ դեռ շարունակում էր հետևել այն քաղաքականութեան, թէ պէտք չէր գործել Թիւրքիայի դէմ, օտար կամ եւրոպական միջամտութիւն խնդրելով, այլ

թիւրք կառավարութեան միջոցով ձեռք բերել այն բոլոր բարենորոգումներն, որոնք անհրաժեշտ էին Հայաստանին։ Եւ որովհետև առհասարակ Թիւրք կառավարութեան վրայ այլ ևս նախկին վստահութիւնը չկար, ուստի պատրիարքը շատ հեռու էր ժողովրդի ընդհանուր համակրութիւնը վայելելուց*)։

Ներսէսի այս պահպանողական ընթացքին դէմ էր նաև բարձրաստիճան եկեղեցականների մեծ մասն, որ գտնում էր, թէ հասել էր ժամանակը մինչև հիմա գործադրուող այդ քաղաքականութիւնը փոխելու։ Փոխանակ Թիւրք կառավարութեան շարունակ կրկնած և երբէք չկատարած կամ կատարել չկամեցած խոստումներին հաւատալով այս կացութեան համակերպելու, անհրաժեշտ էր հիմա, գտնում էին շատերը, Թրքահպատակ միւս քրիստոնեաների օրինակին հետևել, նրանց նման՝ օտար տէրութիւններին դիմել և նրանցից սպասել ազգի ցաւերի դարմանը, Հայաստանի վիճակի բարւոքումը։ Եւ այս դիմումն ևս աւելի և անպատճառ պէտք էր այժմ անել, որպէս զի նրանց, միւս քրիստոնէաբնակ նահանգներին վարչական ինքնօրինութիւն տրուած ժամանակ, ինչպէս արդէն որոշուած էր համարւում, նոյն շնորհին մասնակից լինէր նաև Հայաստան։ Այսպէս էր ընդհանրապէս տիրող կարծիքը Կ. Պօլսում։

Բայց այսպիսի մի պաշտօնական դիմում՝ ազգի

*) Ճիշտ այն ժամանակ, այն է 1877 հոկտ., Կ. Պօլսից գրում էին Թիֆլիս, «Մշակին». «Խեղճ Խրիմեան Հայրիկ. հայրենիքի այս անձնուէր կենդանի նահատակը բանաստեղծութիւններ գրելով և տպել տալով և Հայաստանի վրայ լալով, ողբալով ժամանակ կանցունէ։ Գալով պատրիարք Ներսէս սրբազանին, սա ալ ազգի վէրքերն իր փառասիրութիւնով և անձնասիրութիւնով կուզէ դարմանել, որով թէ կը մխիթարուի և թէ կը փառաւորուի, և «ազգասէր» ածականն ալ «քաղաքագէտ» ածականին հետ կընդունի իր վրայ։ Վայ քեզ, խեղճ հայ ազգ»։ («Մշակ» 1877 № 80)։

պաշտօնապէս ճանաչուած Գլխի միջոցով միայն կարելի էր անել։ Ըստ Սահմանադրութեան՝ ազգային գործերի ղեկը գտնվում էր պատրիարքի ձեռքին, որ թէ Ազգային Վարչութեան պետն էր և թէ Ազգ. Երեսփ. Ժողովի Նախագահը։ Պէտք էր, ուրեմն, Ներսէս Վարժապետեանին հակեցնել վերև գծուած նոր քաղաքականութեան։ Ո՞վ ունէր բաւականաչափ հեղինակութիւն այս քայլն անելու։ Եւ այս փափուկ բովէին ասպարէզ իջաւ Խրիմեան Հայրիկ։

Խրիմեան՝ պատրիարքութիւնից հրաժարուելուց յետոյ ապրում էր Կ. Պոլսում, Բոսֆորի ասիական ափի մի փոքր գիւղում, Կուզգունջուքում։ Վարչական պաշտօններից հեռու՝ նա լուռ ու մունջ հետևում էր գլխաւորապէս գաւառական կեանքին և պարապվում էր գրականութեամբ։ 1876-ի և 1877-ի մի շարք ծանր ազգային աղէտները դարձեալ արձակեցին Վասպուրականի արծուի թևերն, և նա ուժգնապէս իր ձայնն սկսեց լսելի դարձնել նախ Վանի հրդեհի և ապա Ալաշկերտի և Բայազիդի կոտորածների առթիւ։ Ոչ,— ասում էր նա հայ ժողովրդին,— բաւական եղաւ այսպէս ոչխարի նման համակերպուելը. անհրաժեշտ էր վերջապէս ինքնապաշտպանութեան համար զինուելը*)։

Եւ երբ սուլթան Համիդ Վարժապետեանին իր բարձր գոհունակութիւնն էր յայտնում հայոց՝ թիւրք բանակին մատուցած ծառայութիւնների համար և նրա կուրծքը շքանշանով զարդարում, Խրիմեան դիմեց նրան, Վարժապետեանին, և հարց տուեց՝ «իսկ ինչ մի-

*) «Հայրգոյժի» մէջ նա ասում էր հայ ժողովրդի հասցէին. «Յուշ յուշ ով կոտորուած գառներ, ով հայոց ազգ ու մնացորդ որդիք, որ դեռ պիտի կոտորուիք, դեռ պիտի մորթուիք, քանի որ անզէն, անմեղ իբր կապրիք։ Դուք մարդ էք. ձեռք և բազուկ ունիք. միթէ անզգայացած, մեռե՞լ է ձեր մտածութեան հոգին. միթէ կը հաւատաք, որ իշխանութեան աչքը հասնի մինչև հայոց ամայի լեռներ ու դաշտեր և ձեզ պաշտպան լինի»։

ջոցներ են ձեռք առնուած, որ հայերի կոտորածը չկրկնուի»։ Նա պահանջում էր, որ այս ջարդի մանրամասն տեղեկագիրը կազմուի և հրատարակուի ի տեղեկութիւն ընդհ. ազգի և ի գիտութիւն Եւրոպայի։ Խրիմեանի այս քայլը մեկնուեց իբրև կառավարութեան դէմ ըմբոստութիւն և առիթ տուեց զզուելի յարձակման նրա դէմ, բայց թէ հոգևորականների և թէ ժողովրդի մեծամասնութիւնն արժանաւոր պատասխանը տուին նրա հեղինակին*)։

Խրիմեան՝ մի օր, նոյեմբերի մէջ (1877), իր Կուզգունջուքի բնակարանը հրաւիրեց բոլոր եպիսկոպոսներին և երկարօրէն խօսելով Ներսէսի բռնած դիրքի վնասակարութեան և իր մտադրած քաղաքականութեան օգտակարութեան մասին՝ առաջարկեց տապալել Վարժապետեանին և նրա տեղ, պատրիարքական աթոռի վրայ, ազգային քաղաքականութեան նոր ուղղութիւն տալու ընդունակ մի այլ յարմար անձ բազմեցնել։ Մատթէոս եպ. Իզմիրլեան առաջարկում է՝ նախ քան այս ծայրայեղ միջոցին դիմելը՝ տեսնուել Ներսէսի հետ և համոզել նրան, որ փոխէ իր ընթացքը։ Իզմիրլեանի այս առաջարկութիւնն ընդունվում է և ըստ այնմ եպիսկոպոսների մի պատգամաւորութիւն Խրիմեանի առաջնորդութեամբ գնում է Ներսէսի մօտ։ Պատգամաւորութիւնը, լրջօրէն քննելով իրերի ընդհանուր կացութիւնը բացատրում է, թէ քաղաքական նոր

*) Այն միջոցին (1877 թ. օգոստոս) Կ. Պոլսի «Լրագիր» թերթն՝ «Ո՞վ է մատնիչը» վերնագրով մի յօդուած հրատարակեց, որի մէջ իբր խռովայոյզ և կառավարութեան դէմ դաւադիր էր ներկայացնում Խրիմեանին, Խորէն Նար-Բէյին և նրանց համակարծիք ազգային երեսփոխաններին և այլ գործիչներին։ Այս յանդուգն ամբաստանութիւնը մեծ վրդովմունք յառաջ բերաւ Կ. Պոլսում։ «Ազգն ամբողջ այնչափ զզուեցաւ «Լրագիր»էն»,— գրում էին Կ. Պոլսից,— որ ալ ոչ ոք կը գնէր այդ թերթը, որի խմբագրապետն էր Նիկողոս Թիւլպէնտճեան»։ («Մշակ» 1877 թ. № 87)։

հանգամանքները պահանջում են, որ Ներսէս փոխէ իր մինչև այն օր բռնածվարմունքն և քաղաքականութիւնը: Ներսէս համաձայնում է Խրիմեանի և իր ընկերների յառաջ բերած պատճառաբանութիւնների հետ և յայտնում է, թէ ուր որ ազգի ճշմարիտ շահերն են, ինքը միշտ այնտեղ է: Միայն նա պահանջում է, որ եպիսկոպոսներն իր հետ գործակից և համերաշխ լինեն: Ահա այս կերպով՝ Խրիմեանի ճնշման տակ՝ Ներսէս փոխեց իր ընթացքն, ստանձնեց իրան թելադրուած նոր քաղաքականութիւնն և այնուհետև եռանդով ղեկավարեց «Հայկական Խնդիրը»*)։

Այն միջոցին քաղաքական հանգամանքներն էլ այնպէս էին դասաւորուել, որ մասամբ նոյն իսկ թիւրք կառավարութիւնն էր մղում տուողն այս խնդրի յարուցման: Ինչպէս ուրիշ առթիւ էլ ասել ենք, թիւրք կառավարութիւնը համարեա ճնշում էր գործ դրել Ներսէսի վրայ, որ սա եւրոպական տէրութիւններին դիմէ և բողոքէ սլաւ ցեղերի համար առանձնաշնորհեալ կացութիւն ստեղծելուն դէմ և նոյնպիսի կացութիւն պահանջէ նաև հայերի համար: Ներսէս՝ Սաւֆէթ փաշայի ներշնչած այս քաղաքականութիւնն ազգային շահերին համաձայն գտնելով՝ ըստ այնմ վարուեց և մինչև իսկ այնքան յառաջ գնաց, որ նոյն իսկ Ռուսաստանի դէմ յարձակողական լեզու սկսեց գործ ածել եւրոպական դեսպանների հետ: Այս դիմումներն և բողոքներն այն արդիւնքն ունեցան, որ թէ Ներսէս և թէ ժամանակի այլ ազգային յայտնի անձնաւորութիւններ՝ դրա շնորհիւ յարաբերութիւններ պահպանեցին եւրոպական դիւանագէտների հետ, զուտ քաղաքական հարցերի վերաբերեալ: Այս յարաբերութիւնները նախ կատարվում էին ի հաշիւ թիւրք կառավարութեան. և

*) Այս դէպքն անձամբ պատմած է մեզ հանգուցեալ Իզմիրլեան կաթողիկոս, Հայկական Խնդրի վերաբերեալ մի քանի այլ մանրամասնութիւնների հետ:

երբ, հանգամանքները փոխուելով, ազգային նոր քաղաքականութեան պահանջն երևան եկաւ, Ներսէս և իր խորհրդակիցները նոյն յարաբերութիւնները շարունակեցին մերթ գաղտնի և մերթ յայտնի կերպով, այլ և իրանց հաշուին, այն է՝ իբրապես Հայաստանի ինքնավարութիւնը պահանջելու կամ խնդրելու համար՝ եւրոպական պետութիւններից ընդհանրապէս և ռուսականից մասնաւորապէս:

Ռուս-թիւրքական պատերազմը մօտենում էր իր վախճանին: 1878-ի սկիզբները Թիւրքիան՝ զգալով իր յուսահատական վիճակը՝ ճարպիկ դիւանագիտական շրջաբերականով աշխատեց համոզել եւրոպական պետութիւններին, որ միջամտեն իր և Ռուսաստանի մէջ հաշտութեան բանակցութիւն սկսելու համար: Բայց միմիայն Անգլիան յանձն առաւ գէթ բարոյական աջակցութիւն ցոյց տալ և առաջարկեց, որ զինադադար լինի: Բայց Ռուսաստանն, օգտուելով իր գերակշռող դիրքից, ձգձգեց այս առաջարկութիւնը, մինչև որ եւրոպական Թիւրքիայի մեծագոյն մասն իր ձեռքն անցաւ, և ապա յայտնեց, թէ նա կընդունէր միայն այնպիսի զինադադար, որ իր մէջ պարունակէր նաև հաշտութեան գլխաւոր պայմանները: Բ. Դուռն ստիպուած եղաւ զիջել և իր լիազօրներն ուղարկեց ռուսաց բանակի գլխաւոր հրամանատար մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչի մօտ այս պայմաններն իմանալու: Իսկ մեծ իշխանը մինչև Ադրիանուպօլիսը չգալուց՝ ոչ մի բանակցութեան մէջ չմտաւ նրանց հետ:

Յունուարի 15/27-ին մեծ իշխանն և թիւրք լիազօրներն, որոնք մի շաբաթից ի վեր հետևում էին նրան, հասան Ադրիանուպօլիս և յունուարի 19/31-ին ստորագրեցին զինադադարի դաշնագիրն, որ իր մէջ պարունակում էր հաշտութեան հիմնական պայմանները: Ըստ այս պայմանագրի՝ թիւրքահպատակ սլաւներին քաղաքական ազատութիւն էր ապահովվում.

հագմվում էր մի ընդարձակ բուլղարական ազգային քրիստոնեայ իշխանապետութիւն: Օսմանեան բանակը բոլորովին դուրս էր գցվում Բուլղարիայից: Բօսնիացիներին, հերցեգովինացիներին և Թիւրքիայի եւրոպական մասի միւս քրիստոնեայ հպատակներին տեղական ինքնավարութիւն էր շնորհվում, բաւականաչափ երաշխաւորութիւններով: Իսկ Փոքր-Ասիայի քրիստոնեաների և առանձնապէս հայերի մասին, որոնք առաջիններից ոչ նուազ չափով կրել էին և կրում էին թրքական միևնոյն բռնութիւնները, ոչ մի խօսք չը կար այնտեղ: Անտես էր առնուած հայի ամեն տեսակէտներով: Դիւրին է ըմբռնել այն մեծ ցաւն ու յուսահատական հիասթափութիւնը, որ զգացին Կ. Պօլսի ղեկավարող հայ շրջանները, երբ տեղեկացան այս պայմաններին:

Ահա ինչպէս է նկարագրում Ներսէս' այդ վիճակն և դրան իբրև հետևանք ձեռք առնուած միջոցները.

«Ընդհանուր պայմանաց մէջ (յունուար 19/31) հայոց ազգին անունն անգամ չկար և դաշնագրութեան վճարանութիւնը այն պայմանաց սահմանին մէջ միայն կրնար ըլլալ: Գրեթէ յուսահատելու էր, և ես չգիտեմ թէ ինչպէս չյուսահատեցանք: Անկարելի է նկարագրել ազգին մորմոքը, զոր, թողէք ըսեմ, զգացի ի սիրտ և ի բովանդակ անձն իմ. միանգամայն զգացի ահեղն այն պատասխանատուութիւն, որ այն հանդիսաւոր ժամուն կը ծանրանար իմ վրաս, զի ազգը' իր Երեսփոխանական Ժողովովը' ազգին խնդիրն ինծի էր յանձնած մասնաւորապէս: Յաջողիլ անկարելի էր սովորական միջոցներով, ոչ ալ սպասելը ներելի էր... Ձեր պատրիարքը մտածեց, խորհրդակցեցաւ: Իր շուրջը ունէր բոլոր եպիսկոպոսական դասը' պատրաստ գործելու իրեն հետ յանուն ազգին, և յանուն ազգին զոհուելու' եթէ պէտք ըլլար: Միացաւ իր սրբազան եղբարց հետ, և որոնք արդէն իրենց կոչման օրն առաջի Աստուծոյ երդուեալ էին, նորէն երդուան նուիրել զանձինս ազգին: Օսմանեան լիազօր դեսպանք դեռ չէին ուղևորած յԱդրիանուպօլիս, ես ու իմ սրբազան եղբայրակիցներս գործել սկսանք...»*):

Երբ Բ. Դուռն յունուարի սկիզբներն իր լիազօրներն էր ուղարկում հաշտութեան սկզբնական պայմանների մասին բանակցելու, Ներսէս պատրիարք էլ իր հրահանգներն էր ուղարկում Ադրիանուպօլսի առաջնորդական փոխանորդ Գէորգ վարդապետ Ռուսճուգլեանին, որ հետևեալ կերպով է նկարագրում իր' գործի սկսելը**).

«Հարկ կը լինէր ինձ ըստ քաղաքական պաշտականութեանց ներկայանալ կրան տէր (graud duc) Նիքօլայի և քօնթ Իկնաթիեֆի' բարի գալուստ մաղթելու...: Մինչդեռ կը սպասէի պատեհ առթի, ահա Փիլիպպուպօլսոյ նախկին ռուսական հիւպատոս Մ. Կիրօֆ հայասէր բարեկամս, որ պուլղարական գործերուն մէջ դեր ունեցած էր, իբր խորհրդական ռուսական դեսպանի յԱդրիանուպօլիս եկած էր...: Խնդրեցի որ բարեհաճի քօնթ Իկնաթիէֆի զիս ներկայացնել և Հայաստանի ապագայ վիճակին համար ստոյգ տեղեկութիւններ առնելու շնորհ ընել: Մ. Կիրօֆ ընդունեց մեր այս առաջարկութիւնն և հետևեալ գիշեր ներկայացուց զիս քօնթ Իկնաթիէֆի, ինքն թարգման լինելով մեր խօսակցութեանց, ապահովելով միանգամայն զքօնթն թէ իբր գաղտնապահ կրնայ խօսիլ մեզ հետ: Ըստ օրինի նախ փութացինք ջերմ բարեմաղթութիւններ ընել ի բարօրութիւն կենաց Ռուսիոյ կայսեր, որ ի սէր քրիստոնէութեան պատերազմ հրատարակեց յազատում արևելեան քրիստոնէից, և աստուածպարգև յաջողութեամբ ազատեց պուլղար-քրիստոնեաներն,

*) Ազգ. Ժողովի 21 յուլիս 1878-ի ատենագրութիւնից:

**) Ռուսճուգլեանի յիշատակագիրը' «Ծագումն Հայկական Խնդրոյ». «Մուրճ», 1907.

ինչպէս նաև ասիական հայերն, որք մի քրիստոնեայ ազգ են ոչ նուազ հաւատարիմ և թշուառ քան զպուլղարն, և, շարունակելով խօսքս, ինչպէս կը լսեմք, ըսի, Ռուսիոյ բանակն Հայաստանի մէկ մասը գրաւած է, ընդ որս Կարս և Կարին և գուցէ ուրիշ գաւառներ ևս. քաղցր է մեզ յուսալ, թէ հայք ևս, ինչպէս պուլղարք, այն ազատութիւնը կը վայելեն. և որքան փափաքելի է մեզ գիտնալ այս, քանզի մեր ամեն յարաբերութիւնքն ընդ Կ. Պոլսոյ խզուած լինելով՝ բնաւ տեղեկութիւն մի չեմք կարող ստանալ Հայաստանի մէջ բնակող մեր եղբարց վրայ»։

Շատ հետաքրքրական և նշանակալից է Իգնատիեվի տուած հետևեալ պատասխանը.

«Այո, Ռուսիոյ բանակն մինչև Կարին յառաջացած է և գրաւած է։ Հայաստանի այդ մասն այժմ ազատութիւն կը վայելէ, բայց հայ ժողովուրդն ազգովին կամ Հայաստանի մեծ մասը պիտի չկարենայ գտնել առ այժմ այն ազատութիւնը, զոր ունեցած են պուլղարք, վասնզի հայք անպատրաստ գտնուեցան եւ Հայաստանի մէջ դարձած են մեռեալ տարերք։ Ես երեք տարին է ի վեր հայոց դատին պաշտպանն և փաստաբանն եղած էի. Թողունք գաւառայի հայոց աղքատութիւնն և անտարբերութիւնը, մանաւանդ ցիրուցան պանդխտութեան դատապարտեալ վիճակը, մինչեւ իսկ Կ. Պոլսոյ հայոց ողջախոհ եւ գործօն մասն՝ սկսեալ Նուպար փաշայէ, արգելք եղած են իմ բարենպատակ գործոցս։ Բայց մի վհատիք, կը յուսադրեմ զձեզ։ Քանի որ Թիւրքիոյ հպատակ էք, ապագային յուսով, այս վայրկեանէս սկսեցէք պատրաստ լինիլ, պատրաստ՝ դաստիարակութեամբ, ուսմամբ և քաղաքագիտութեամբ, պատրաստ՝ նիւթապէս և բարոյապէս, պատրաստ՝ ներքին կազմակերպութեամբ. պատրաստ եղիք այն օրուան համար, յորում քաղաքականութիւնը պիտի առաջնորդէ զձեզ յազատութիւն, և ես պատրաստ եմ

միշտ օգնել ձեզ։ Պատրիարքնիդ թող ժամավաճառ չլինի, թող սկսէ գործելու, ժամ է»։

Ռուսճուգլեան իր տեսակցութեան արդիւնքը հաղորդում է Ներսէս պատրիարքին, յունուար 20-ին։

Իգնատիեվի այս պատրաստակամութիւնը, մանաւանդ պատրիարքին արագօրէն գործելու յորդորը մեծ ոգևորութիւն պատճառեց Կ. Պոլսում։ Ներսէս և իր խորհրդակիցների խումբն անմիջապէս գործի սկսեցին։ Ամենքը համերաշխ էին այնուհետև։ Ազգային Ժողովի Ա. և Բ. ատենապետները, Ստեփան փաշա Ասլանեան և Յովհ. էֆ. Նուրեան, գաղտնի պատուիրակ կարգուեցին, որպէս զի յանուն Թիւրքիայի հայութեան և ի դիմաց պատրիարքին՝ բանակցեն ռուսական պատշաճաւոր իշխանութեան հետ Հայաստանի ապագայ կացութեան մասին։ Այս երկու ազդեցիկ անձերը մեծ յարմարութիւն ունէին այս փափուկ պաշտօնին, որովհետև վաղուց արդէն զբաղվում էին այս հարցով, մանաւանդ Նուրեան, և հայ հասարակութեան մէջ մեծ վստահութիւն էին վայելում։ Բացի դրանից, նրանք, առանց որևէ կասկած յարուցանելու, կարող էին ռուսաց բանակը գնալ. Ասլանեան իբրև զինուորական բժիշկ պիտի գրաւուէր Թիւրքաց զինուորական հիւանդանոցում, իսկ Նուրեան՝ իբրև Կարմիր Մահիկի (որ նոյնն էր, ինչ որ քրիստոնէից մօտ Կարմիր Խաչը) ներկայացուցիչ՝ պիտի հոգար նոյնպէս հիւանդների փոխադրութեան համար։ Սրանք՝ պատրիարքի 1878 թ. յունուարի 31 թուակիր յանձնարարական նամակով մեկնեցին Ադրիանուպոլիս, արտաքուստ իբրև Թըրքական պաշտօնեաներ օսմանեան լիազօրների տրամադրութեան տակ, իսկ ծածկաբար՝ իբրև հայոց պատրիարքի լիազօրները նոյն ռուսական հրամանատարի մօտ։ «Նոքա յայտնեցին մեզ,—շարունակում է Ռուսճուգլեան վարդապետ,—ս. պատրիարքի գաղափարներն և հրահանգը՝ թէ պատրիարքը կը փափագի և

կարտօնէ Ռուսիոյ դեսպանին և կրան-տիւք Նիքոլայ իշխանին ներկայացնել հայոց թշուառ և հարստահարեալ վիճակն, և Ռուսիոյ կայսեր գթութիւնն հայցել, որոյ ի շնորհս միայն հայերն, իբրև արևելեան քրիստոնեայ ազգ, պիտի կարենան ազատութեան հասնիլ Նման պուլղարաց»։ Բայց այն միջոցին այդ երկու պատգամաւորներից զատ կար և մի ուրիշ նշանաւոր հայ, որ՝ չնայելով իր անհամեմատ աւելի փափուկ դիրքին՝ շատ մեծ ծառայութիւն է մատուցած ազգային դատին և մեծապէս նպաստած է Սան-Ստեֆանոյի դաշնագրի մէջ 16-րդ յօդուածը մտցնելուն։ Այս անձը Համամճեան Սարգիսն էր, արտաքին գործերի մինիստրութեան ընդհ. քարտուղարն, որ օսմանեան-լիազօրներ Սաֆվէթ փաշայի (արտ. գործերի մինիստր) և Սադուլլահ բէյի (Բեռլինի դեսպան) խորհրդական էր կարգուած։ Այն միջոցին այնպիսի ոգեւորութիւն էր տիրում Կ. Պոլսում, որ մեծից սկսած մինչև փոքրը, բոլոր գիտակից հայերը միասիրտ և միահոգի, աչքները ռուսական բանակատեղին ուղղած, ուր յաղթական «Մոսկոֆը» Թիւրքիայի ապագան պիտի որոշէր, սպասում էին այնտեղից Հայաստանի ազատութիւնն, այսինքն մօտաւորապէս այն, ինչ որ ապահովապէս պիտի շնորհուէր Եւրոպական Թիւրքիայի քրիստոնէաբնակ նահանգներին։ «Այժմ ասա ոչ կուսակցութիւն կայ և ոչ վէճ,—գրում է Իգմիրլեան*), —ամենքեան՝ մեծ ու պզտիկ ամեն բարձր գիրք ունեցող աստիճանաւորք իսկ միահամուռ այդ նպատակին հասնելու գուն կը գործեն...։ Յաջողութեան բանակցութեան առաջին ժամուն սա շարժեցաւ ազգն համայն»։ Նոյն իսկ չալաբասակ կրօնական խարութիւնները տեղի էին տուած Հայաստանի, ընդհանուր

*) Իգմիրլեանի նամակը Վ. եպ. Մանկունիին Կ. Պոլսից, 13 փետր. 1878.

ազգի վերածնութեան մեծ գաղափարի առջև։ Նշանաւոր կաթոլիկ հայեր Գրիգոր Օտեանի շուրջը խմբուած եռանդով գործում էին իրանց ազգակիցների հետ նոյն ընդհանուր նպատակի համար[1])։ Միայն թէ Ներսէսի խմբի և միւս, այն է՝ բողոքական և մանաւանդ կաթոլիկ գործիչների մէջ ծրագրային մի մեծ տարբերութիւն կար։ Այս վերջինները «Գաղղիոյ և Անգղիոյ միջոցաւ Կիլիկիոյ մասին համար կ'աշխատին յանուն հայութեան»—գրում է Իգմիրլեան[2])։ Այս վերջին գաղափարը ներքնապէս փայփայում էր նաև Խորէն եպ. Նար Բէյ, ոչ իբրև նախկին կաթոլիկ, այլ, ինչպէս ենթադրվում է, այն յոյսով, թէ ի միջի այլոց իր եղբօր թեկնածութիւնը կարելի կը լինի յաջողեցնել ապագայ հայ իշխանութեան պետի պաշտօնի համար[3])։ Կիլիկիայում հայկական ինքնօրինութիւնը կենդանացնելու մասին եղած այս ջանքերին պատշաճաւոր կարևորութիւն չտուին այն ժամանակ և խնդիրը ծրագրային շրջանից դուրս չելաւ։

Բացի Ադրիանուպօլիս պատգամաւորներ ուղարկելուց, որոշուեց ծածկաբար անմիջապէս երկու ազեր-

1) «Գրիգոր Օտեան մէկ կողմէ պատրիարքի գաղտնի խորհրդականն է իր խօսքովը կամ գրիչովը, միւս կողմէ իր տունը եղած է ժամադրութեան վայր մը, ուր Սերվիչէն, Բեաթիքեան, Մ. Փորթուգալ, Յովհ. Սագըզ և Գէորգ Սամանճեան (այս վերջին երեքը հայ-կաթոլիկներ էին. Փորթուգալ և Սագըզ ապագայում բարձրացան մինիստրական պաշտօնի) պիտի գային գիշերուան մթին և լուռ ժամերու ատեն, իրենց մտքին լոյսը բերելու մեծ հարցի մը մէջ, որ այնքան յուսալից եղած էր ի սկզբան...»։ («Գր. Օտեան», Կ. Պոլիս, 1910, էջ ծե.)

2) Տես Իգմիրլեանի վերոյիշեալ նամակը (Կաթող. Դիւան Էջմիածնի)։

3) Նար Բէյի եղբայրն էր Գուիտոն Լուսինեան, նախկին հ. Ամբրոսիոս վ. Գալֆայեան, Վենետիկի Մխիթարեան վարդապետ։ Այս Լուսինեանը տարիներ վերջը դարձեալ ասպարէզ պիտի իջնէր հայկական խնդրի առթիւ, իբրև նախկին հայկական արքայական աթոռի ժառանգ...։

սագիր պատրաստել յանուն Թիւրքիայի հայութեան, յաղթական Ռուսաստանի կայսեր և իր գլխաւոր խորհրդականի՝ պատասխանատու մինիստրին ներկայացնելու համար։ Յառաջ բերենք ամբողջապէս Աղեքսանդր Բ. կայսեր և իշխ. Գորչակովին ուղղուած այս կարևոր վաւերագրերի պատճէնները*)։

Ա) Աղերսագիր Աղեքսանդր Բ. կայսեր.

«Տէր Արքայ,

«Այն պատերազմէն յետոյ, որ վախճան առաւ Ձեր Կայսերական Մեծութեան զինուց յաղթութեամբ, և որ ամենէն աւելի փառաւորն է, թող ներուի Թիւրքիոյ Հայոց եկեղեցական գլխաւոր պաշտօնէից ներկայացնել իրենց զարմացումը, յարգանքը և խոնարհ շնորհաւորութիւնները, յառ Ձեր Կայսերական Մեծութեան Աթոռոյն, որոյ հետ կը միանան նաև Հայոց ազգի ուխտն ու փափաքները։

«Տէր Արքայ, Ձեր զէնքերն յաղթանակեցին այնպիսի մի ժողովրդեան, որ քաջ պատերազմիկ ժողովրդոց մին է, որով Ձեր Կայսերական զօրութիւնը նոր փայլ մը ստացաւ աշխարհի վրայ։ Ձեր սուրը յաղթանակ կանգնեց թէ Եւրոպիոյ և թէ Ասիոյ մէջ, և Ձեր զօրապետներն ու զօրքերը, ինչպէս Պուլկարիոյ դաշտաց մէջ իրենց ամենամաքուր արիւնը թափեցին, նոյնպէս թափեցին Հայաստանի այն հնօրեայ հողոյն վրայ, ուր մեր ծնուիլը տեսաւ և զոր մեր հայրերն ի սկզբանէ դարուց իրենց քրտամբն և արտասուօքն ոռոգեցին։

«Տէր Արքայ, Ձեր խոստումներն ամենուն համար էին, Ձեր խնամքը պէտք է ամենուն համար հաւասար

---

*) Այս աղերսագիրների բնագիրը ֆրանսերէն է։ Մենք յառաջ ենք բերում հայերէն թարգմանութիւնն, ըստ այն օրինակին, որ ուղարկուած է Կ. Պոլսից Գէորգ Դ. կաթողիկոսին ի գիտութիւն։

տարածուի։ Հայերն ալ ունին այնչափ իրաւունք, որչափ ունին Թիւրքիոյ միւս քրիստոնեայ հասարակութիւնք՝ այն հոգատարութեան, որ կը գործէ աշխարհի վրայ առանց շահասիրութեան, և այս անշահասիրութիւնն ամենէն աւելի գեղեցիկ յատկութիւնն է իշխանի մը, որ աշխարհի զօրաւորն է և զոր Աստուած Մեծութեան տիտղոսով պսակած է։

«Այո, Տէր Արքայ, Հայերն այս նշանաւոր պարագային մէջ, յորում իրենց կրօնակից եղբարց վիճակը կորոշուի, կը համարձակին Ձեր Կայսերական Մեծութեան զօրաւոր պաշտպանութիւնն հայցել։ Նոքա ալ վշտացած են, նոքա ալ կը յուսան, խառնիճաղանճ վայրենիներէ շրջապատեալ և Եւրոպայէն հեռի մի անկիւն նետուած, իրենց տառապանքներն աւելի անգթաբար կը գործուին քան թէ միւս քրիստոնէից, առանց իրենց աղաղակները լսելի լինելու։

«Ինչ բան, որ այսօր կը խնդրենք, և ինչ բան, որ համարձակութիւն առած կը հայցեմք Ձեր Կայսերական Մեծութենէ յանուն նոցա, ուրիշ բան չէ՝ եթէ ոչ Եւրոպական Թիւրքիոյ քրիստոնէից վիճակին նմանութիւնը։ Եթէ Եւրոպական Թիւրքիոյ գաւառաց ինքնօրէն վարչութիւնը՝ միևնոյն երաշխաւորութիւններով տրուի հայոց հասարակութեան, այն ատեն նոցա սրտեռանդն ցանկութիւնները լսուած պիտի լինին, և վախճան պիտի առնու իրենց ընդերկար նահատակութիւնը։

«Տէր Արքայ, խիստ դառն է մեզ համար, որ խաբուինք մեր յուսոյն մէջ. բայց այս կարելութեան չեմք ուզեր հաւատալ միայն Ձեր վեհանձնութեան վրայ ունեցած հաւատոյս շնորհիւ։

«Կ'աղաչեմք Ձեր Մեծութիւնը հաճիլ ընդունելոյ մեր սրտաբուղխ օրհնութեանց հետ մեր խորին յարգանքներն, ընդ որոյ պատիւ ունիմք լինել»

Տէր Արքայ,

«Ձեր Կայսերական Մեծութեան

«ամենախոնարհ և ամենահնազանդ ծառայք

(ստորագրութիւններ)

«Պատրիարքարան Հայոց

«Կ. Պոլիս, 1/13 փետր. 1878».

Բ) Աղերսագիր իշխան Գորչակովին.

«Վսեմափայլ Տէր,

Մենք, ստորագրեալքս, գլխաւոր եկեղեցական պաշտօնեայք հասարակութեան հայոց Թիւրքիոյ, կը համարձակիմք Նորին Կայսերական Մեծութեան մի աղերսագիր մատուցանել, և կաղաչեմք յարգանօք Ձեր Վսեմութիւնը, որ բարեհաճիք զայն յոտս Նորին Կայսերական Աթոռոյն դնել։

«Ձեր Վսեմութիւնը թող չզարմանայ, որ Արևելքին մէջ տեղի ունեցած մեծամեծ փոփոխութեանց ժամանակ, հայերն իրենց կողմանէ բոլոր յոյսերն Ռուսիոյ մեծազօր Կայսեր, որ թէ Ասիոյ և թէ Եւրոպիոյ մէջ փառաւոր յաղթանակ կանգնեց, վեհանձնութեան և Նորին գլխաւոր պաշտօնէից բարձր իմաստութեան վրայ դնեն, որոյ հանճարը իւր քառորդ դարէ ի վեր իր երկրին քաղաքականութիւնը փառաւորապէս կը վարէ։ Չեն ուզեր (հայերը) մանրամասնաբար իրենց տառապանքները նկարագրել, որովհետև հարկ չէ այսօր նոր դատախազութիւն մը կազմել իրենց տէրերուն դէմ։

«Սա ճշմարիտ է, որ եթէ միւս քրիստոնեայ ժողովուրդք կը նեղուին, հայերը կրկնապատիկ հարստահարեալ են, այնպիսի թշնամեաց մէջ լինելով, որք հայ չեն և ամենուրեք անտարբերութիւն կը ցուցնեն իրենց՝ իրենց ցաւոց նկատմամբ։

«Այսօր ալ երեսի վրայ ձգուած կը կարծուին. միայն իրենք կը զգան, թէ պիտի պաշտպանուին, սա բարեբախտութիւնն ունենալով որ Ռուսիոյ համար օտար չեն, զի իրենց ազգութենէն մի նշանաւոր հատուած արդէն այս երկրին՝ Ռուսիոյ մէջ կը բնակին՝ և իրենց Մայր Եկեղեցին Նորին Կայսերական Մեծութեան բարի պաշտպանութիւնը կը վայելէ։

«Արևելեան քրիստոնէից վրայ եղած այս պաշտպանութիւնը զիրենք կը համարձակեցնէ և իրաւունք կուտայ յուսալու, թէ իւրեանց բողոքը այս վայրկեանին պիտի լսուի և պիտի տեսնեն Թիւրքիոյ մէջ հաստատուելիք նոր օրէնքները։ Եթէ իրենց գոյութիւնը պաշտպանութիւն չգտնէ՝ ծանրապէս վտանգի պիտի ենթարկուի։

«Ձեր Վսեմութիւնը, որոյ հայեցողութիւնը և բարձր հեռատեսութիւնը իւր Օգոստափառ Տիրոջ նպատակաց զարմանալի կերպով կը ծառայէ, հարկաւ մեր խնդրոյն կարևորութիւն պիտի տայ և անտարակոյս իւր արդար միջնորդութիւնը պիտի գործադրէ առ Կայսրն, զԱյն հաճեցնելոյ համար։

«Այս խնդիրը կը ներկայացնեմք Անոր, որ իւր սուրը արևելեան քրիստոնէից պաշտպանութեան համար մերկացոյց. ուրիշ բան չեմք խնդրեր, եթէ ոչ Ռումէլիի մեր կրօնակից եղբարց նմանիլ։ Թիւրքիոյ մէջ կայ մաս մը, որ իւր նախնեաց անունը կը կրէ (Հայաստան), և ուր հայոց մեծամասնութիւնը ժողոված է. ուստի վարչութիւն մը հաստատելը շատ դիւրին պիտի լինի։ Կուզենք, որ այնտեղ ազգային կեանքով ապրինք, ընդ օրինօք տանուտէրական վարչութեան՝ առանց քաղաքական որևէ ամբարտաւանութեան և արգելիչ կառավարութեան մը ազդեցութիւնն ունենալոյ և այնտեղ պաշտպանել մեր Հայրենիքն ու տաճարները։

«Հայք՝ կը համարձակիմք ասել թէ՝ այս նոր կեանքն զարգացնելոյ ամեն տարերք ունին իրենց մէջ,

զոր Ազատարար Կայսեր վեհանձնութեան պիտի պարտին։ Ո՞չ ապաքէն Թրքական ամենալաւ գործակալներն հայոց մէջ ալ գտնուած են, ինչպէս այլ քրիստոնէից։ Կրթութիւնն աւելի տարածուած է ի հայս, քան թէ Թիւրքիոյ մի քանի հասարակութեանց մէջ։ Եթէ այլոց ուշադրութիւնը գրաւելոյ չափ կառավարչական կարողութիւն ալ չունենան, զի այսչափ ատեն ուրիշները կառավարեալ են, սակայն այն երաշխաւորութիւնք, որով նոր կարգադրութիւնները Ռումէլիի մէջ եղածին պէս տեղի պիտի ունենան, բաւական են սոյն գործոյն յաջողութեան համար, որ հայոց ցանկութեան վերջին կատարումն է։

«Չեմք վարանիր զրուցել Ձեր Վսեմութեան թէ այս երաշխաւորութիւններն, որ գլխաւորաբար Հայաստանի ազատութեան կը վերաբերին, ամենայն կերպով իրենց պատճառն ունին, զոր յանուն բոլոր ազգին կը խնդրեմք իբրև մեր գերագոյն փրկութիւնը։

«Արդեօք լսելի պիտի լինի՞ն մեր ձայներն. երանի թէ, Վսեմափայլ Տէր, մեր սրտերուն մէջ կարդայիք թէ մեր և թէ ամբողջ ժողովրդեան մը յաւիտենական և խոր երախտագիտութիւնը։

«Պատիւ կը համարիմք, Վսեմափայլ Տէր, լինել Ձեր Բարձրութեան

«Խոնարհ ծառայք ի Յիսուս Քրիստոս.

(ստորագրութիւններ)

«Կ. Պոլիս, 1/13 փետրուար 1878».

Ստորագրել են Ներսէս պատր. Վարժապետեան և 9 եպիսկոպոս։

Այս աղերսագիրներն երկերկու օրինակ ստորագրուեցին։ Որովհետև ժամանակը շատ կարճ էր, օրէ օր սպասւում էր հաշտութեան կնքուելն, ուստի մի·մի օրինակն առանձին օրհնութեան գրով յանուն մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչի՝ աճապարանքով ուղար-

կուեց Ադրիանուպոլիս*), Իգնատիեվին, իսկ միւս օրինակները յանձնուեցին Խրիմեան և Նար Բէյ սրբազաններին։ Նախ այնպէս էր որոշուած, որ այս երկու արքեպիսկոպոսներն՝ իբրև Թիւրքիայի հայոց լիազօրներ, գնան Էջմիածին, իրանց հետ տանելով վերոյիշեալ աղերսագիրներն, և Գէորգ կաթողիկոսի միջոցով մատուցանեն կայսեր և Գորչակօվին։ Իսկ Իզմիրլեան Մատթէոս եպիսկոպոս նրանցից յառաջ անմիջապէս պիտի մեկնէր Էջմիածին՝ կաթողիկոսին բերանացի բացատրութիւններ տալու համար, որ երբ կաթողիկոսը յարմար համարի և հեռագրէ՝ երկու արքեպիսկոպոսներն էլ իսկոյն մեկնեն Ռուսաստան։ Սակայն, ինչպէս յետոյ պիտի տեսնենք, Գէորգ կաթողիկոս չարգարացրեց Կ.-պոլսեցիների յոյսերն և ամբողջ այս սկզբնական ծրագիրը հարկ եղաւ փոխել։ Միայն Իզմիրլեան եկաւ Էջմիածին, այն էլ բաւական ժամանակ վերջը. իսկ Խրիմեան և Խորէն ուրիշ կողմ մեկնեցան դարձեալ ի հարկէ նոյն նպատակով**)։

---

*) Հայոց պատրիարքարանի և Ադրիանուպօլսի ռուսական բանակատեղու մէջև այս յարաբերութիւնը բնականաբար շատ գաղտնի էր կատարվում։ Ադրիանուպօլսից, այն միջոցին, ամեն օր երկաթուղու յատուկ գնացք էր մեկնում Կ. Պոլիս մեծ իշխանի և ռուսական դիւանագիտական թղթակցութիւնը տանելու համար. այս կառախմբին էին յանձնվում նաև հայոց թղթերը։ Բարեբախտաբար թղթատար պաշտօնեան հայ էր, և անձամբ բերում տանում էր նամակները պատրիարքին։

**) Իզմիրլեան շատ ջերմ գործունէութիւն է ունեցած հայկական խնդրի այս շրջանում։ Նա մեզ պատմել է նաև հետևեալ բնորոշ դէպքը։ Մի օր Ներսէս պատրիարք կանչում է Իզմիրլեանին և նրան ասում, թէ ինք անյարմար է համարում խորհրդակից եպիսկոպոսներին իր մօտ հրաւիրել, պատրաստուած մի կարևոր

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Հայ պատուիրակների գործունէութիւնն Ադրիանուպոլսում.—Իգնատիեւի համակրական վերաբերմունքը.—Հայաստանի ինքնավարութեան մասին հայոց խնդիրը, Նախնական յօդուածն և Թիւրք լիազօրների ընդդիմութիւնը.—Անգլիայի հակառակութիւնը.—Քաղաքական բարդութիւնների երկիւղը.—Մեծ իշխանի Սան-Ստեֆանօ տեղափոխուելը.—Խորէն եպ. Նար-Բէյի գործունէութիւնը.—Սան-Ստեֆանօյի դաշնագիրն և նրա տրամադրութիւնները հայոց մասին.—Ներսէս պատրիարքն և դաշնագրի թողած տպաւորութիւնը հայերի վրայ. — Ինքնավարութեան անյաջողութեան պատճառները.—Քննական տեսութիւն 16-դ յօդուածի մասին.— Արգայլի դքսի քննադատութիւնը։

Հայ պատուիրակները շատ փափուկ կացութեան մէջ էին գտնւում Ադրիանուպօլսում։ Նուբեան և Ասլանեան, իրանց պաշտօնական դիրքի պատճառով, անկարող էին մի քայլ իսկ անել առանց Թիւրք լիազօրների գիտութեան։ Բայց միւս կողմից չէր կարելի ժամանակ կորցնել. պէտք էր անյապաղ կատարել իրանց յանձնած ծանր և պատասխանատու ազգային պարտականութիւնը։ Նուբեան Յովհաննէս էֆէնդին է լինում, որ յաջողում է առաջին տեսակցութիւնն ունենալ։ Մի գի-

---

թուղթը ստորագրելու, որպէս զի ոստիկանութեան ուշադրութիւնն և կասկածը չգրաւէ. ուստի անհրաժեշտ էր, որ Իզմիրլեան անձամբ տանէր պտտցնէր թուղթը բոլոր եպիսկոպոսների մօտ և ստորագրել տար նրանց։ Մատթէոս եպիսկոպոս յանձն է առնում։ Ռուսական պատերազմի ժամանակ էր և քաղաքը պաշարման դրութեան մէջ էր, ուստի զգուշութեան համար նա այդ գաղտնի պաշտօնագիրը կարում է իր մէջքին, ամբողջ օրը քաղաքի զանազան, միմեանցից բաւականաչափ հեռու թաղերը շրջելով այցելում է բոլոր եպիսկոպոսներին, բացատրում է գործի հանգամանքն և ստորագրել է տալիս բոլորին։ Ներսէս ամբողջ օրը խիստ անհանգիստ կերպով սպասում էր իր բնակարանում. և երբ Իզմիրլեան երեկոյեան գալիս է և թուղթը մէջքից հանելով յանձնում է նրան, Ներսէս չափազանց ուրախանում է։

չեր՝ Ռուսճուգլեանի ընկերութեամբ ծածուկ գնում է Իգնատիեւի մօտ և ծանօթացնում է նրան երկրի վիճակը, ներկայացնելով այն բաղձանքները, որ հայերը տածում էին իրանց երկրի ապագայի նկատմամբ, իբրև հետևանք ռուսական յաղթական պատերազմի։ Մի ժամ տևող այս խօսակցութեան արդիւնքն այն եղաւ, ըստ Ռուսճուգլեանի, որ Իգնատիեվ խոստացաւ մեծ իշխան հրամանատարին հաղորդել հայոց խնդիրը, նպաստաւոր կերպով, և առաջարկեց, որ 2 օր վերջը գնայ նրա մօտ։ Որոշուած օրը, դարձեալ գիշեր ժամանակ, Ասլանեանին եւս միասին առնելով նա գնում է Իգնատիեւի մօտ և երկար տեսնվում նրա հետ։ Իգնատիեվ բերել է իր խոստացած պատասխանը. «Տեսնուած եմ կրան տուքի (մեծ իշխանի) հետ և մինչև մէկ ամսից յաջող է ձեր խնդիրը։ Կայսեր հետ բանակցութեան մէջ եմ. մէկ երկու օրէն կայսեր հաւանութիւնն և հրահանգը կը յուսամ որ պիտի ընդունիմ։ Աղօթեցէք, որ Աստուած յաջողէ»։ Ռուսճուգլեան՝ այս տեղեկութիւնը տալուց յետոյ պատմում է, որ իր յատուկ հրաւէրի համաձայն՝ մեծ իշխան Նիկօլայ Նիկօլայեվիչ իր շքախմբով փետրուարի 8-ին գնացել է Ադրիանուպօլսի հայ եկեղեցին, ուր գոհաբանական աղօթք է կատարուել Ռուսաստանի կայսեր համար և հոգեհանգիստ՝ պատերազմի մէջ ընկած քրիստոնեայ զինուորների յիշատակին։ «Նորին բարձրութեան ընկերացած էին,—շարունակում է Ռուսճուգլեան իր յիշատակագրում,—քնեզ Իգնաթիէֆ, կոմս Նէլիտօֆ, 16 ժէնէրալ և բարձրաստիճան պաշտօնեայք. յետ բարեմաղթութեան, որ շատ կանոնաւոր տեղի ունեցաւ, հրաւիրեցի զնորին բարձրութիւնն յառաջնորդարան, ուր թէյ պատրաստուեցաւ։ Ներկայ գտնուեցան նաև Ստեփան փաշա Ասլանեան և Յովհ. էֆ. Նուբեան, որոց համար Սավֆէթ փաշա թոյլտուութիւն ըրած չէր ներկայ գտնուիլ բարեմաղթութեան, անշուշտ ինչպէս

կը ցանկայինք խակ։ Այս տեսակցութեան նիւթն Հա-
յաստանի հայ կեղեքեալ ժողովուրդը պիտի լինէր։ Ի
մէջ այլոց կրան տիւք այնպիսի հարցումներ ուղղեց
ինձ Հայաստանի աշխարհագրական դրից և բնակչաց
վիճակին նկատմամբ, որ զինքը գոհացնելու չափ տե-
ղեկութիւններ չունէի, ուստի այս՝ յարմար առիթ ե-
ղաւ ինձ Ստեփան փաշան և Նուբեան էֆէնդին կրան
տիւք Նիքօլայ իշխանին ներկայացնելու, ուստի նո-
րին բարձրութեան պատասխանեցի թէ՝ «Ձերդ բարձ-
րութեան այս հարցմանց լիովին տեղեկութիւններ
կրնան տալ Կ. Պօլսոյ Ազգ. Երեսփոխանական ժողովոյ
երկու ատենապետներն՝ Ստեփան փաշա և Նուբեան
էֆէնդի, որք հոս կը գտնուին Սավֆէթ փաշայի քով.
եթէ հրաման կընէք՝ անմիջապէս կրնան գալ և ներ-
կայանալ»։—«Այո, կը փափագիմ տեսնել, թող գան»
պատասխանեց դուքսն. և անմիջապէս թիկնապահներէն
մին ղրկուեցաւ Սավֆէթ փաշայի տուն, ուր մեր խոր-
հրդականք (Ասլանեան և Նուբեան) լուր կը սպասէին ի
մէնջ։ Սավֆէթ փաշա այս բարձրագոյն հրամանին
չկրնալով դէմ դնել՝ կ՚արտօնէ, որ ներկայանան։ Կրան
տիւք սիրով ընդունեց մեր վսեմ. խորհրդականներն, և
առաւել քան կէս ժամ խօսեցան մէկտեղ և պաղատա-
նօք խնդրեցին Հայաստանի ազատութիւնը. ի պահուն,
երբ մեծ դուքսը կը մեկնէր, դարձեալ կրկնեցի, որ
չմոռնայ հայ տառապեալ ժողովուրդն. այն ատեն իմ
ձեռքը սեղմելով ըսաւ. «Ոչ ես և ոչ եղբայրս կայսրն
չեմք մոռնար զձեզ»։ Հետևեալ օր քոնթ Իկնաթիէֆի
երթալով, կրան տիւք Նիքօլայի ներկայանալու և շնոր-
հակալութիւն յայտնելու համար հրաման և ժամադրու-
թիւն խնդրեցի. սիրով ընդունելով որոշեց օրն և ժամ։
Որոշեալ ժամին երբ ներկայացանք նորին բարձրու-
թեան՝ Իկնաթիէֆ և Նէլիտօֆ հոն գտնուեցան։ Ցանուն
հայ հասարակութեան շնորհակալութիւն յայտնեցի այն
մեծ պատուոյն, զոր ընծայեց ազգին, որ այժմ լի է

յոյսով և սիրով առ բարեխնամ ռուս կառավարու-
թիւնն։ Յայնժամ իշխանն համակրանօք սեղմեց ձեռքս
և ըսաւ. «Հայոց սիրալիր ընդունելութենէն շատ գոհ
մնացի և կայսեր՝ եղբօրս անմիջապէս հեռագրեցի իմ
գոհունակութիւնս, թէ այսպիսի ընդունելութիւն, սէր
և համակրութիւն չտեսայ ոչ ի յոյնս և ոչ յայլ ազգս.
յետ մի քանի աւուրց պիտի մեկնիմ քաղաքէս յԱյ-
Ստէֆանօ, ուր մօտ պիտի լինիմք ի Գում-Գափու ձեր
պատրիարքին։ Գրէ պատրիարքին, թէ ձեր խնդիրն և
յոյսն ի դերև չպիտի ելնեն, անհոգ եղէք, եղբօրս հետ
բանակցութեան մէջ ենք»։

Մեծ իշխանը հայ եպիսկոպոսների 2 աղերսագիր-
ներն ստացել էր Ադրիանուպօլսում և ուղարկել Պե-
տերբուրգ, ուր այս հարցի նկատմամբ հողն արդէն
փոքր ի շատէ պատրաստ էր, շնորհիւ այն աղերսագ-
րի, որ Գրիգոր Արծրունու նախաձեռնութեամբ Թիֆ-
լիսի հայերը մատուցել էին Կովկասի փոխարքային,
կայսեր ներկայացնելու համար։ Ուստի երբ Կ.-պօլսե-
ցիների աղերսանքի մասին էլ տեղեկութիւն է ստա-
նում Ադրիանուպօլսից, մեծահոգի Աղէքսանդր Բ.
կայսրը տալիս է իր համաձայնութիւնն, որ առաջիկայ
հաշտութեան դաշնագրում պայման դրուի հայ ժողովր-
դի վիճակի բարւոքման մասին ևս։ Կոմս Իգնատիեվ,
այս պատասխանն ստանալով, կանչում է իր մօտ
Ռուսճուգլեանին և նրան աւետում է. «Աչքդ լոյս. գոր-
ծերնիդ յաջող է. կայսեր հաւանութիւնն ստացանք։
Ձեր խնդիրը պիտի անցնի ի կարգս յօդուածոց ռուս-
թիւրք դաշնագրութեան մէջ. ընդ փոյթ պարտիք մի
ծրագիր ներկայացնել կրան տիւքին (մեծ իշխանին) թէ
ինչ են հայոց իղձն ու փափագը»։ Աւելորդ է ասել,
թէ որքան ուրախանում են պատուիրակներն այս բա-
րեյաջող լուրն ստանալով։ Բայց ոչ ժամանակ կար և
ոչ էլ պէտք՝ Կ. Պօլսից հրահանգ ուզելու այս ծրագրի
մասին, որի հիմունքն արդէն որոշուած էին ազգային

երեսփոխանների 1877 հոկտ. 21-ի խորհրդակցական ժողովում։ Ինչպէս նախորդ Գլխում տեսանք, այնտեղ մշակուած էին երեք խմբեր՝ երեք տարբեր պարագաների համաձայն։ Այժմ պարագաներն այնպէս բերին, որ, ըստ երկուստեք կայացած ռուս-թրքական համաձայնութեան, Հայաստանի մեծագոյն մասը պիտի վերադարձուէր թրքական իշխանութեան, ուստի հայկական ծրագրի Ա. կէտն, որ արդէն մեծ տհաճութեամբ էր ընդունուել, ինքնին ջնջուելով՝ մնում էր Բ. և Գ. կէտերի համաձայն վարչական ինքնավարութիւն խնդրել։ Ասլանեան և Նուրեան, արդէն իբրև նոյն ժողովի ղեկավարները, շատ լաւ ծանօթ էին ծրագրի բոլոր մանրամասնութիւններին կամ առհասարակ Կ. Պոլսի եկեղեցական և աշխարհական ղեկավարող շրջանների մտքին և իղձերին։ Նրանք շատ լաւ էին իմանում նմանապէս, որ Ներսէս պատրիարք, եպիսկոպոսական դասի հետ իր համաձայնութիւնը կայացնելուց յետոյ, եռանդով զբաղուած էր այս հարցով։ Իր խմբի հետ խորհրդակցելով Ներսէս արդէն պատրաստել էր իր պատճառաբանեալ ծրագիրն Հայաստանի ինքնավարութեան մասին՝ յատկապէս Բ. Դրան ներկայացնելու համար։ Ինքնավարութեան գլխաւոր հիմունքն այն էին, ինչ որ Լիբանանը վաղուց վայելում էր։ Ներսէս այս ծրագիրը Խառն Ժողովի հաստատութեանն առաջարկեց (1878) յունուարի սկիզբները։ Թէև «այս առաջարկութիւնը Խառն Ժողովին մէջ յափշտակուած կուսակիցներ ունեցաւ»*), բայց տիրող հանգամանքների շնորհիւ անյարմար էր համարուել գործել յանուն Ազգային Վարչութեան և այս պահանջն անել Բ. Դռնից։ Այս բոլորին ծանօթ լինելով անշուշտ, հայ պատուիրակները դժուարութիւն չունեցան կազմել «մի ծրագիր՝ հանդերձ խնդրագրով, որով կը խնդրուէր,—ասում է

*) «Մշակ», 1878 № 15. Նամակ Կ. Պոլսից 13 յունուար 1878.

Ռուսճուգլեան,—ազգային ինքնօրինութիւն մը Հայաստանի այն գաւառներուն համար, ուր կը գտնուին բազմաթիւ հայեր, ինչպէս Վան, Մուշ, Կարին, Տիգրանակերտ և այլն»։ Եւ որովհետև թէ Ասլանեան և թէ Նուրեան իրանց պաշտօնական դիրքի բերմամբ ստիպուած էին գաղտնաբար գործել և երևան չելնել, ուստի ծրագիրն և խնդրագիրը թէ ստորագրեց և թէ ներկայացրեց Իգնատիևին՝ Գէորգ վարդապետ Ռուսճուգլեան, որ դրանց մի օրինակն էլ ուղարկեց Կ. Պոլիս Ներսէս պատրիարքին։

«Մի քանի օր վերջ,—գրում է Ռուսճուգլեան,—քոնթ Իգնաթիէֆ աւետեց մեզ թէ դաշնագրոյն 16-րդ յօդուածը Հայկական Խնդիրը կը պարունակէ. ահաւասիկ իմաստը։ «Թիւրքիոյ եւրոպական գաւառաց մէջ տեղի ունեցած անկարգութեանց և հարստահարութեանց համանմանն ասիական գաւառաց մէջ տեղի ունենալով, ասոր առաջքն առնելու համար սուլթանն երաշխաւոր կը կենայ Ռուսիոյ կայսեր քով, որոշմամբ թէ՝ Կովկասեան նահանգի սահմանակից հայաբնակ գաւառներուն (Կարին, Մուշ, Վան, Տիգրանակերտ, Սեբաստիա և այլն) վարչական ինքնօրինութիւն մը տայ, վիլայէթի օրինաց մէջ հարկ եղած փոփոխութիւններն ընելով և զայն ապահովել իրական երաշխաւորութեամբ սուլթանին»։ Այս յօդուածն, որի խմբագրութիւնը պատրաստում էր Իգնատիևին, բովանդակում էր հայ պատգամաւորների գլխաւոր պահանջներն և գոհացում էր տալիս նրանց բաղձանքին։

Դժբախտաբար այս պահանջը Թիւրք լիազօրների բուռն ընդդիմութեանը բաղխեցաւ. Նրանք բացէ ի բաց մերժեցին, յայտնելով որ առանց կանխապէս սուլթանի հաւանութիւնն առնելու չէին կարող ընդունել հայկական «ինքնավարութիւնը»։ Թիւրքերը չափազանց զարմացած էին, որ յանկարծ Փոքր-Ասիայի մի կարևոր մասի համար էլ «վարչական ինքնօրինութիւն»

էր պահանջվում յօգուտ հայերի, որոնք մինչև այն օր երբէք օտարի միջամտութեան չէին դիմել իրանց վիճակի բարեփոխման համար, ուր մնաց այժմ Թիւրքիայի յաղթական թշնամուն...: Նրանք անմիջապէս կանչում են առաջնորդական փոխանորդին և նրանից բացատրութիւն պահանջում: Ռուսճուգլեան անգիտանալ է ձևանում և պատասխանում է մինչև իսկ, թէ «հաւանականութենէ շատ հեռու է հայոց կողմանէ բողոք տեղի ունենալը, այլ Ռուսիոյ շահը կը պահանջէ նոր խնդիրներ յարուցանել, այն յուսով որ եթէ հայերն իմանան՝ գուցէ գործիք մը լինին իւր ձեռք, բայց հայ ժողովուրդը գիտէ որոշել իւր շահն և վնասը. գիտէ Ռուսիոյ քաղաքականութիւնն, անցեալին մէջ փորձեր ունի, փորձառու է: Նամանաւանդ հայերն հինգ դար է ի վեր գոհ են իրենց կառավարութենէն, Ռուսիոյ գործիք չեն ըլլար: Ռուսիա այս պատրուակաւ կուզէ Հայաստանի մէկ մասը գրաւել և այլն և այլն»*):

Վերջապէս Իգնատիեվի պնդումի վրայ, որ ասել էր, թէ կայսեր պահանջն է այդ, թիւրք լիազօրները հարկադրուած եղան Սան Ստեֆանոյում ընդունել հայոց վերաբերեալ յօդուածը, բայց բոլորովին տարբեր պատճառաբանութեամբ և տարբեր պարտաւորութեամբ:

Հաշտութեան բանակցութիւններն երկարում էին. առհասարակ նկատելի էր, որ թիւրքերն, որոնք յառաջ այնքան ցանկանում էին իրանց համար աղէտալի պա-

---

*) Ճիշտ դրա նման հայեացք է յայտնում այժմ՝ մի թիւրք պատմագիր Սան-Ստեֆանոյի 16-րդ յօդուածի մասին.

«Ռուսաստանը բալկանեան քրիստոնեաների նկատմամբ իր մտադրութիւնն իրագործելուց յետոյ իր ուշադրութիւնը դարձրել էր Փոքր Ասիայի վրայ: Ընդդէմ Բ. Դրան՝ հայերի կողմը պահելով, նա աշխատում էր Անատոլիայում մի հայկական խնդիր ստեղծել: Ռուսաստանի բուն նպատակը հայերին յոյս տալով նրանց օսմանեան իշխանութեան դէմ գրգռել էր»: («Աբդիւլ Համիդի Սանի վէ դէվրը սալթանաթը». Կ. Պոլիս, Դ. հատ., էջ 818).

տերազմը շուտափոյթ վերջացնել և զինադադար կնքել, այժմ, երբ այս վերջինը կատարուած էր, այլ ևս չէին շտապում խաղաղութեան դաշն կապելու համար: Այս մասին պաշտօնական բանակցութիւններն սկսել էին փետր. 2/14-ին, բայց շարունակվում էին չափազանց դանդաղ: Պատճառն այն էր, որ քաղաքական հորիզոնը մթագնել էր, և թիւրքերը ծածուկ յոյս ունէին այդ հանգամանքից օգտուելու: Անգլիան շատ անհանգիստ էր բանակցութիւնների ընթացքի մասին, մանաւանդ երբ Ռուսաստանը մերժեց նրա միջնորդութիւնը զինադադարի մասին և ուղղակի Թիւրքիայի հետ պայմանաւորուեց, որի մանրամասնութիւնները գաղտնի էին պահվում Եւրոպայից: Անգլիան վախենում էր, թէ Ռուսաստանն անակնկալ կերպով կը մտնէ և կը գրաւէ Կ. Պոլիսը: Ուստի այս պատահականութեան առաջն առնելու համար հրաման էր ուղարկել Միջերկրականի իր նաւատորմղին, որ նոյն իսկ բռնի ուժով անցնի Դարդանէլի նեղուցն և մտնէ Կ. Պոլիս՝ իբր թէ անգլ. հպատակներին պաշտպանելու նպատակով: Այս կարգադրութիւնը սաստիկ զայրոյթ պատճառեց ռուս կառավարութեան, որ անգլիական դահլիճի այդ սպառնալիքին պատասխանեց, յայտարարելով թէ Ռուսաստանն ևս ճիշտ նոյն նպատակով, այսինքն իր հպատակներին պաշտպանելու համար, իր բանակը պիտի մտցնէ Կ. Պոլիս: Այս դիւանագիտական ընդհարումը, մանաւանդ ռուսների գալը, մեծ իրարանցում պատճառեց Կ. Պոլսում: Աբդիւլ Համիդ իր բոլոր աւագանին հրաւիրեց ժողովի, որ այն եզրակացութեան եկաւ, թէ այլ ևս անհնար էր զէնքի ուժով արգելք լինել ռուսական բանակի մուտքին, բայց պէտք էր աշխատել, որ Ռուսաստանը ետ կենայ իր մտադրութիւնից, այլապէս ամբողջ հետևանքի համար նա պիտի մնայ պատասխանատու: Աբդիւլ Համիդ այնպէս վրդովուել էր, որ մինչև իսկ ծրագրում էր Կ. Պոլիսը թողնել հեռա-

նալ և Բրուսա տեղափոխուել, որպէս զի թշնամու ձեռքը գերի չընկնի։ Ռուսական կառավարութիւնը մահմեդական ամբոխի մոլեռանդութիւնը չգրգռելու համար պատշաճ գտաւ սուլթանի և Բ.՝Դռան խնդիրքն ընդունել և զօրք չմտցրեց Կ. Պոլիս։ Բայց դրա փոխարէն որոշուեց, որ բանակն աւելի մօտենայ մայրաքաղաքին և հաշտութեան բանակցութիւնները՝ փոխանակ Ադրիանուպոլսի՝ Սան-Ստէֆանօյում կատարուեն։ Թիւրք լիազօրներն այս ամբողջ ժամանակ Անգլիայի և Ռուսաստանի միջև մինչև իսկ պատերազմական ընդհարման սպասելով յոյս ունէին օգտուել դրանից՝ լաւագոյն պայմաններ ձեռք բերելու համար, և այդ իսկ պատճառով շատ դանդաղ էին վարում հաշտութեան բանակցութիւնները։ Բայց երբ պատերազմի հաւանականութիւնը հեռացաւ, մանաւանդ երբ ռուսական բանակը Կ. Պոլսի դռների առջև իր վրանները կանգնեց, Իգնատիեվ պահանջեց արագացնել առանց որևէ այլ պատրուակների, և Թիւրք լիազօրներն ստիպուած եղան շուտով համաձայնութեան գալ։

Մեծ իշխանը փետրուար 14/26-ին հասաւ Սան-Ստէֆանօ և իջևանեց Տատեան Առաքել բէյի տունն, որ այնտեղի ամենամեծ և ամենայարմար բնակարանն էր և որն Առաքել բէյ դրել էր նրա կարգադրութեան տակ*)։ Սան-Ստէֆանօյում հայկական խնդրի պաշտպանութեան հոգն ընկնում է Խորէն եպ. Նար-Բէյի վրայ, որ, ինչպէս ինքը պատմում է, մօտ երկու շաբաթ Իգնատիեվի մօտ դեգերելով, շնորհիւ իր անձնական մօտիկ յարաբերութիւններին, կարողանում էր ազդել նրա վրայ**)։ Խորէն բնականաբար աշխատում

*) Տատեանի աղջիկը նոյնպէս միջնորդել է մեծ իշխանի մօտ, որ առաջիկայ դաշնագրում ի նպաստ հայոց յօդուած մտցուի։

**) «Զոյգ եօթնեակ մի առ նմա (Իգնատիեվի մօտ) դեգերեալ եմ, յաջողեցաք տալ մուծանել ի դաշնագրին յօդ. 16-րդ»։ (Նար-Բէյի նամակը Պետերբուրգից Գէորգ կաթողիկոսին, 21 մարտ 1878 թ.)

էր, որ Նուբեան Ասլանեանի Ադրիանուպօլսում ներկայացրած ծրագիրն, որ համապատասխան էր հոկտ. 21-ի ժողովի որոշման, ամբողջապէս իրականանայ։ Այս ծրագիրը նա ձևակերպում է այսպէս. «Ի նախագծի անդ յօդուածոյն, զոր առաջարկեալ էր մեր առ կոմս Իգնատիեֆ, երկու ինչս եդեալ էր մեր ի կէտ նպատակի։ Առաջին՝ տալ ընդունել զանմիջական իշխանութիւն Առաքելական Աթոռոյն և Վեհ. Գահակալի (Գէորգ կաթողիկոսի) ի վերայ Տաճկաստանեայց Հայոց, և Երկրորդ՝ ինքնավարութիւն Հայաստանի»*)...։ Թիւրք լիազօրները բացէ ի բաց մերժում են թէ մէկն և թէ միւսն՝ այս կէտերից։ Հայոց խնդիրը շատ մեծ դժուարութեան էր մատնուած։ Սան-Ստէֆանօ եկաւ նոյն նպատակով նաև Ներսէս պատրիարք և տեսնուեց Իգնատիեվի հետ, որ մի կերպ կարելի լինի դաշնագրական ոյժ տալ և պարզ որոշել Հայաստանի բարենորոգումների ձևը կամ էութիւնն, որ, ինչպէս գիտենք, հայոց բաղձանքի համեմատ ուղղակի վարչական ինքնավարութիւնն էր։ Բայց նա ևս չէ յաջողում։ Իգնատիեվ, ինչպէս հաղորդում է Նար-Բէյ, «չունենալով մասնաւոր հրաման ի կառավարութենէ իւրմէ պնդել եւ տալ ընդունել զմերս զայս աղերս, և միւսմէ կողմանէ ի քաղաքական հանգամանաց անտի զոլով ստիպեալ փութացուցանել զստորագրութիւն դաշնագրին, հարկ եղեւ բարեփոխել զայն և մուծանել ի կերպարանս առաջիկայ 16-դ յօդուածի**)։ Եւ այսպէս՝ մի կողմից Թիւրք լիազօրների բացարձակ ընդդիմութիւնը, միւս կողմից՝ ռուս լիազօրների Պետերբուրգից այդ մասին կարուկ հրահանգ չստանալը, միևնոյն ժամանակ Անգլիայի սպառնալիքների շնորհիւ քաղաքական հանգամանքների բարդուելը՝ պատճառ դարձան, որ Իգնա-

*) Անդ.

**) Անդ.

տիվ ստիպուեց զիջել, և Հայաստանի ինքնավարութեան պայմանը վերցուեց մէջտեղից։ Չիրականացան հայոց տածած յոյսերը՝ չնայելով գործ դրուած խելապէս մեծ ջանքերին։ Ռուսների պահանջմամբ՝ խաղաղութեան դաշնագիրը ստորագրուեց Սան-Ստէֆանոյում ճիշտ փետրուարի 19-ին (մարտի 3-ին), Ռուսաստանի ճորտերի ազատութեան օրն, որով, դիտաւորեալ զուգադիպութեամբ, դարձեալ նոյն օրն ազատութիւն էին գտնում միլիոնաւոր սլաւներ (բուլգարներ և սերբական ցեղին պատկանողներ) Թրքական բռնակալութիւնից։ Դաշնագիրը բաղկացած էր 29 յօդուածից, որոնց 16-դը վերաբերում էր Հայաստանին։ Ֆրանսերէն բնագիրն ասում էր.

«Comme l'évacuation, par les troupes russes, des territoires qu'elles occupent en Arménie et qui doivent être restitués à la Turquie, pourrait y donner lieu à des conflits et des complications préjudiciables aux bonnes relations des deux pays, la Sublime Porte s'engage à réaliser sans plus de retard les améliorations et les reformes exigées par les besoins locaux, dans les provinces habitées par les Arméniens et à garantir leur sécurité contre les Kurdes et les Circassiens„.

«Որովհետև ռուսական զօրքի՝ Հայաստանում գրաւած, բայց Թիւրքիային վերադարձնելիք տեղերից մեկնելը կարող է յառաջ բերել ընդհարումներ և շփոթութիւններ, որոնցից երկու երկիրների (Թիւրքիայի և Ռուսաստանի) լաւ յարաբերութիւնները պիտի վնասուէին, ուստի Բարձրագոյն Դուռը պարտաւորվում է հայերի բնակած նահանգներում անյապաղ իրականացնել տեղական պէտքերի պահանջած բարւոքումներն և բարենորոգումներն, և երաշխաւորել նրանց ապահովութիւնը քիւրդերի և չէրքէզների դէմ»։

Հայերի և Հայաստանի հետ մասամբ կապ ու-

նեն նաև դաշնագրի հետևեալ կէտերը.

Յօդ. 25. «Ռուսական զօրքն Ասիական Թիւրքիայից պիտի հեռանայ 6 ամսի ընթացքում, վերջնական հաշտութիւնը կայանալու թուականից սկսած»։

և Յօդ. 27. «Բ. Դուռը պարտաւորվում է ոչ ինքը պատժել և ոչ էլ թողնել, որ ուրիշները պատժեն՝ այն օսմանեան հպատակներին, որոնք պատերազմի ժամանակ ռուսական բանակի հետ յարաբերութիւններ ունենալու պատճառով կասկածի տակ են գտնվում։ Եթէ ոմանք իրանց ընտանիքներով ռուսական զօրքին կցուելով երկրից (Թիւրքիայից) հեռանալ ուզեն, օսմանեան իշխանութիւնները նրանց մեկնելուն պիտի չընդդիմանան»։

Այս վերջին պարբերութիւնն առանձնապէս կարևոր էր հայերի համար, որովհետև կային շատերն, որոնք, ենթադրելով թէ ռուսների գրաւումը վերջնական է և թիւրքերն այլ ևս չեն վերադառնայ, առանձին համակրանք էին, ցոյց տուած և ծառայութիւններ էին մատուցած ռուսական բանակին*)։ Բացի դրանից, յի-

*) Զօրապետ Սեմիօն Քիշմիշեան պատմում է, թէ ռուսական զօրքը Թրքական Հայաստան ոտք կոխեց թէ չէ՝ սիրով ընդունուեց հայ հովիւների կողմից։ Արշաւանքի երկրորդ օրն իսկ հայ հոգևորականութիւնը գոհաբանական աղօթք կատարեց ռուսական բանակի համար, որ գալիս էր հարստահարուած քրիստոնեաներին պաշտպանելու։ Հայերի ցոյց տուած բարեկամական տրամադրութիւնն այնքան մեծ էր, որ զօրքը կարծում էր, թէ իր հողի վրայ է գտնվում և ոչ թէ թշնամու։ Թէ ուտելիքի պաշար և թէ խոտ ու գարի՝ զօրքը գնում էր թղթադրամ վճարելով, և ոչ թէ ոսկի, ինչպէս Բուլգարիայում, որովհետև հայերը հաւատում էին։ Արդահանի գրաւումից վերջ ռուսական հրամանատարն իր արձակած ընդհանուր հրամանի մէջ զօրքին՝ ասում էր, թէ հայերն «արժանաւոր որդիք են իրանց հայրերի, որոնք շատ անգամ զոհուել են իրանց քրիստոնեայ եղբայրների համար»։ Այս համակրութիւնն, որքան որ հնարաւոր էր, հայերը ցոյց տուին ռուսական բանակին, մինչև պատերազմի վերջանալը...։ («Война въ Турецкой Арменіи 1877—1878 г. г.» генералъ С. О. Кишмишева, С. Петербургъ, 1884 г.).

չելով այն դառն հալածանքը, ջարդն և բռնութիւնները, որոնց ենթարկուեցին մանաւանդ Բայազիդի, Ալաշկերտի և Բագրևանդի հայերը թէ տեղական Թիւրքերից և թէ յատկապէս գաղթականաբարոյ քրդական վոհմակներից*), հայերից ոմանք, մանաւանդ ռուսական զօրքի երկրորդ արշաւանքի կարճ տևողութեան ժամանակ, սկսել էին բռնականաբար յոխորտալ իրանց բռնակալների և հալածողների վրայ։ Պէտք էր սպասել, որ ռուսների քաշուելուց յետոյ նոր կատաղած և հալածանք սկսուէր նոյն տեղերում հայերի դէմ։ Ուստի այս յօդուածով պահանջվում էր, որ Թիւրքաց զինուորական իշխանութիւնները խիստ միջոցներ ձեռք առնէին նրանց պաշտպանութեան համար։

Երբ յայտնի եղաւ Սան Ստէֆանոյի դաշնագրութեան՝ հայոց վերաբերեալ վերոյիշեալ 16-րդ յօդուածը, հայերը նախ դժգոհ մնացին, որովհետև իրանց յուսացած «ինքնավարութիւնը» չկար այնտեղ, բայց յետոյ այնու ամենայնիւ որոշ գոհունակութիւն և ուրախութիւն տիրեց նրանց վրայ, որովհետև՝ ինչպէս Նար-Բէյ գրում էր Գէորգ կաթողիկոսին՝ «ա) Անուն Հայաստանի պաշտօնապէս ընկալեալ եղև Օսմանեան պետութենէ. բ) Հաստատեալ եղեն և երաշխաւորեցան անմիջական բարեկարգութիւնք ի Հայաստան. գ) Բացաւ մեզ դուռն դիմելոյ առ կայսրութիւնն ռուսաց և

*) Այս բռնութիւնները մանրամասն նկարագրել է «Թայմզի» յատուկ թղթակից Նորման (C. B. Norman), «Armenia and the campaign of 1877», London, 1879, էջ 293—298։ Ցաւօք են բերուած այս գրքում գաղթականութեան սոսկալի դէպքեր, և թղթակիցն ասում է, թէ ինքը պատմում է միայն այն դէպքերն, որ ինքն անձամբ տեսել է կամ եւրոպացի վկաներից է լսել։ Այս գազանութիւնների և ջարդերի մասին մանրամասնութիւններ կան նաև «Կապոյտ Գրքի» մէջ, «Turkey» № 4 (1880), Captain Everett-ի տեղեկագրում, էջ 105—111, ուր յառաջ են բերուած վիճակագրական թուեր և կոտորած սպանուածների առաջնորդների անունները։

առ այլս ի պետութեանց ի գործադրութիւն յօդուածոյ դաշնագրին ի Բ. Դրանէ»։ Ի հարկէ այս երեք կէտերն ևս իրօք քաջալերական էին՝ համեմատելով այն անյայտ և կղզիացած դիրքի հետ, որի մէջ գտնվում էր մինչև այն ժամանակ հայ ժողովուրդը, բայց բաղդատելով այն վիճակին, որ դաշնագիրը ստեղծում էր Եւրոպական Թիւրքիոյ քրիստոնեաների համար, շատ չնչին էին։ Իսկ հայերի ակնկալածն, ինչպէս գիտենք, այն էր, որ Հայաստանն ևս ստանայ ճիշտ այն առանձնաշնորհեալ դիրքն, ինչ որ Բուլգարիային էր յատկացուելու։ Այս կողմից էր, որ մեծ եղաւ յուսախաբութիւնը։ Դաշնագիրն ստորագրելուց յետոյ ռուսական լրագրներն իրանք ևս զգում էին, թէ չարդարացրին հայերի հաւատն և ակնկալութիւնն, ուստի նրանք աշխատում էին հայ պատուիրակներին մխիթարել և ոգևորել ապագայի յոյսով։ Թէ յօդուածի հեղինակը՝ կոմս Իգնատիև և թէ նրա մօտ գտնուած դիւանագիտական պաշտօնեաները՝ Գիրս, դը-Համբուրգէր և այլն, գրում է Նար-Բէյ, «ետուն ինձ յուսալ և յուսացուցանել զազգն թէ յապագային կարէ յօդուածն այն զկարեւոր ընդլայնումն ստանալ, շատ է զի գիտասցուք յօդուած ի կիր արկանել զհանգամանս, որ եղանեն և եղցեն մեզ ընդ առաջ ի լուծման անդ բազմակնճիռ խնդրոյն Արեւելից, յաջորդութեանց Բարձրելոյն Աստուծոյ»։

Ներսէս պատրիարք և իր խորհրդականների խումբն ևս ապագայի նկատմամբ այս յոյսի և այս լաւատեսութեան ազդեցութեան տակ էին գտնվում, որով և մխիթարվում էին, թէ նրանց ջանքերը գոնէ բոլորովին ի զուր չանցան։ «Հիմա տեսաք պատուականք, —աւետում էր Ներսէս ուրախութեամբ, —... ալ մոռցուած չենք. ալ այն անհանդուրժելի սոսկալի մոռացումը վերջացաւ. հիմա «հայ ենք» ըսելու ակռան չամչ-

նալ անոնք, որ կամէնային երբեմն...*)»։ Ներսէս ի հարկէ զգում էր, թէ իր ձեռնարկութիւնը չունեցաւ այն յաջողութիւնն, որին նա սպասում էր, և նա արդարանում էր ասելով. «Քաղաքականութեան մէջ երբ չես կրնար ընել ինչ որ կուզես, պէտք է ընես ինչ որ կրնաս»․ և ապա իր լաւատեսութիւնն աշխատում էր տարածել ազգային երեսփոխաններին վրայ. «Այս յօդուածին ուժովը,—շարունակում է նա,—քիւրդերուն ու չէրքէզներուն հարստահարութեանց դէմ ապահովեալ էին հայք. իրենց տասը տարին ի վեր արձակած աղաղակը վերջապէս արձագանգ կը գտնէր ու մեր յանուն ազգին ներկայացուցած խնդրոյն մէկ մասը կը լուծուէր ըստ սկզբան, և համազգային իրաւանց կարգին մէջ կը մտնէր։ Այլ մեր ազգային խնդիրը՝ Արևելեան Ընդհանուր Խնդրոյն հետ նոր կերպարանք ու նշանակութիւն առած էր**)։

Այժմ մօտից քննենք 16-դ յօդուածը։

Ինչպէս տեսնում ենք, շատ զգալի տարբերութիւն կայ Ադրիանուպօլսում խմբագրուած սկզբնական յօդուածի***) և Սան-Ստէֆանօյում ձևակերպուածի մէջ։ Այն ժամանակ, երբ առաջինը շատ որոշ կերպով պարտաւորեցնում էր Թիւրք կառավարութիւնը՝ «վարչական ինքնօրինութիւն տալ Կովկասի սահմանակից հայաբնակ գաւառներուն» այնպէս՝ ինչպէս խնդրել էին հայ պատուիրակները, ընդհակառակն Սան-Ստէֆանօյում այս ամենաէական և որոշ կէտը—վարչական ինքնավարութիւնը—բոլորովին հանուած է և փոխարինուած է «տեղական պէտքերի պահանջած բարւոքումները և բարենորոգումները» առաձգական իմաստով։

*) «Ատենագր. Ազգ. Ժողով.», 2 յունիսի 1878.

**) Անդ.

***) Ռուսճուքլեանի այս մասին տուած տեղեկութիւնը հաստատւում է Իգմիրլեանի՝ Գէորգ կաթողիկոսին գրած նամակով ևս։

Այստեղ սա է կարևորը, թէ ինչու Իգնատիեվ չկարողացաւ յաջողեցնել իր ծրագրած սկզբնական խմբագրութիւնն և չպնդեց, որ Հայաստանին—կամ «Կովկասի սահմանակից հայաբնակ գաւառներուն»—ևս վիճակուի այն քաղաքական ազատութիւնն, որին արժանանում էր Բուլղարիան։ Դրա պատասխանը տալիս է մեզ Նար-Բէյի նամակն, որ հաղորդում է, ինչպէս վերև յիշեցինք, թէ Պետերբուրգից կարգադրութիւն չկար, որ Իգնատիեվ պնդէ այս մասին...։ Ինչու չկար։ Որովհետև՝ 1) հայերն ոչ կրօնակից էին և ոչ էլ ցեղակից ռուսաց, հետևաբար չէին կարող նոյն համակրանքը գրաւել, ինչ որ ունէին բուլղարներն և սերբերը։ 2) Յայտնի էր արդէն, որ Ռուսաստանը զէնքի ուժի էր դիմել յատկապէս Եւրոպական Թիւրքիայի իր ցեղակից քրիստոնեաների ազատութեան համար։ 3) Հայաստանն այնպիսի աշխարհագրական դիրք ունէր, որ այնտեղ՝ ռուսական միջամտութեամբ ստեղծուած, ուրեմն՝ ռուսական հովանաւորութեան և ազդեցութեան տակ գտնուող հայկական ինքնավարութիւնը՝ Ռուսաստանի մշտական նախանձորդ Անգլիայի քաղաքական շահերի տեսակէտից, այն ժամանակի անգլ. պահպանողական կառավարութիւնն անթոյլատրելի էր համարում։ Խնդրի այս մասը մենք աւելի կը պարզենք, երբ կարգը գայ Կիպրոսի դաշնադրութեան մասին խօսելու։ Ահա գլխաւորաբար միմեանցից տարբեր այս նկատումների հիման վրայ էր, որ Պետերբուրգի կառավարութիւնը չպնդեց, թէ Հայաստանին ևս ինքնավարութիւն տրուի։ Ուրիշ բան էր, եթէ Թիւրքիան բուռն ընդդիմութիւն ցոյց չտար. այն ժամանակ խնդրի դժուարագոյն մասը կը վերանար։ Բայց Թիւրքի հոգեբանութիւնն ևս պէտք է հասկանալ։ Քրիստոնեայ ինքնավարութիւն երկրի եւրոպական մասում, և նոյնպիսի իշխանութիւն Փոքր Ասիայում բոլորովին տարբեր բաներ էին նրա համար։ Հայկական ինքնավարութիւնը՝ Հայաստանում, ուր հոծ

մահմեդական ընակչութիւն կար, և որ շրջապատուած էր աւելի մեծ թւով մահմեդական ժողովրդով, ցանկալի չէր ոչ միայն Թիւրք կառավարութեան այլ և այդ այլացեղ և այլադաւան ժողովրդի համար։ Թիւրք կառավարութեան համար՝ իր այդպիսի մի նահանգի տեղական ինքնավարութիւնը նախադուռն էր նրա կիսանկախ դրութեան, կամ հարևան մի մեծ պետութեան կողմից կլանուելուն, մանաւանդ երբ սա դաշնագրական որևէ իրաւունք էր ձեռք բերում այդ նահանգի վրայ։ Ինչ վերաբերում էր բարենորոգումներին, Բ. Դուռը պատրաստ էր այդ խոստանալ որչափ ուզում էր, միայն թէ նրանց գործադրութիւնն էլ իրանից կախուած լինէր...։

Սան Ստեֆանոյի 16-րդ յօդուածն երկու որոշ մաս ունի իր մէջ, որոնց առաջինը պատճառաբանական է և վերաբերում է երկու նոր հաշտութիւն կայացնող կողմերի փոխադարձ յարաբերութեան, իսկ երկրորդը հիմնական է և որոշում է կամ տնօրինում հայ ժողովրդի վիճակը։ Պատճառաբանական մասում հոգ էր տարւում, որ Թիւրքիայի և Ռուսաստանի լաւ յարաբերութիւնները չխառնուէին այնպիսի առիթներից, որոնք բարդութիւններ և կնճիռներ կարող էին յառաջ բերել։ Այս նշանակում էր, թէ հայերի դէմ քիւրդերի և չէրքէզների ձեռքով նորից բռնութիւններ գործ դրուելը կամ հայերի հարստահարուելը՝ Ռուսաստանի համար դժգոհութեան առիթ պիտի համարուէր Թիւրքիայի դէմ։ Ուստի Թիւրք կառավարութիւնը պարտաւորւում էր այնպիսի միջոցներ ձեռք առնել, որ երկու երկիրների յարաբերութիւնները չխառնուէին։ Ահա այս «միջոցները» կազմում են յօդուածի հիմնական մասն, այսինքն բարենորոգումների անյապաղ գործադրութիւնն ի նպաստ հայոց։ Սակայն խնդրի թէ պատճառաբանական և թէ հիմնական մասերը կախուած էին այն երաշխաւորութիւնից, որ Ռուսաստան յուե-լեայն վերապահում էր իրան։ Երաշխաւորութիւն՝ թէ

«բարւոքումներն և բարենորոգումներն» անյապաղ և անտարակոյս պիտի գործադրուէին։ Ո՞րն էր այս երաշխաւորութիւնը, քանի որ 16-րդ յօդուածը որևէ նսկողութեան իրաւունք չէր տալիս Ռուսաստանին։ Անշուշտ այն, որ ռուսական զօրքը պիտի մնար Հայաստանում, մինչև որ խոստացուած բարենորոգումներն իրականանային։ Այսպէս են հասկանում 16-րդ յօդ.-ի քաղաքական իմաստն եւրոպական պատմագիրները, ինչպէս Ռօլեն Ժակմէն*), Էնգէլհարտ**) և ուրիշներ։ Միւս կողմից՝ գիտենք արդէն, որ այս յօդուածը դրուած է Ալանեանի և Նուբարեանի ներկայացրած ծրագրի համաձայն, որ հիմնուած էր 1877 հոկտեմբեր 21-ի մասնաւոր ժողովում ընդունուած «բաղձանքների» Գ. կէտի վրայ, որտեղ բառ առ բառ ասուած էր. «Նիւթական երաշխաւորութիւն պահանջուի երկրին բարեկարգութեան և հպատակաց հաւասարութեան համար, ու այս երաշխաւորութիւնը լինի ռուսական զօրաց Հայաստանէն չելնելով»։ Եւ վերջապէս՝ թէ իրօք այս էր Ռուսաստանի միտքն, հաստատւում է նաև նրանով, որ երբ Բերլինի կոնգրէսում այս յօդուածն սկսում է քննուել և անգլիական պատուիրակը պահանջում է հանել առաջին 3 տողերը (պատճառաբանական մասը), ռուսական պատուիրակը՝ կոմս Շուվալով նկատում է թէ՝ «եթէ ռուսաց զօրքը Հայաստանից մեկնի նախքան խոստացուած բարւոքումների իրականանալը, կարող են այնտեղ լուրջ շփոթութիւններ ծագել»։ Այս պնդումն էլ աւելի համոզում է անգլիական պատուիրակներին, թէ ռուսական զօրքի Հայաստանից մեկնումը պայմանաւորուած է բարենորոգումների գործադրութեամբ. և անգլօ-թրքական պահանջումով՝ այդ պայմանը դուրս է հանվում Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը կազ-

*) «L'Arménie, les Arméniens et les Traités». Paris, 1887.
**) «La Turquie et Le Tanzimat» II, Paris, 1884.

մելու ժամանակ։ Այս կերպով ռուսական երաշխաւորութիւնը փոխարինվում է ընդհանուր եւրոպական հսկողութեամբ, կամ աւելի ճիշտն՝ Անգլիայի պատասխանատուութեամբ։ Իսկ թէ ինչ արդիւնք է ունեցած այս փոփոխութիւնը, ահա թէ ինչ է ասում այս մասին անգլիացի մի բարձրաստիճան և հեղինակաւոր քննադատ, որ է ինքն՝ Արգայլի դուքսը։ Ըստ երևոյթին այս փոփոխութիւնն իբր թէ աւելի նպաստաւոր պիտի լինէր հայերին, ասում է այս հեղինակը, «բայց եթէ մենք մտիկ տանք իրողութիւններին, որոնք ծածկուած են բառերի ետև, և այն պատճառներին, որոնք այս հարցում աւելի են ծառայել երկու պայմանագիր կողմերին*), պիտի տեսնենք, որ այս փոփոխութիւնը հայերի համար աղէտալից է եղած։ Այս փոփոխութիւնը վերացրած է Ռուսաստանի հսկողութիւնն և իրաւացի փաստաւորութիւնն, իսկ Թիւրքին հաճոյք է պատճառած... Թիւրքն իսկոյն տեսաւ, թէ այս կերպով նա ազատվում էր Ռուսաստանի ճնշումից, որ վտանգաւոր էր իր համար, և դրա փոխարէն կրում էր այնպիսի ճնշում, որը նա կարող էր շատ դիւրութեամբ խուսափել, անվերջ յետաձգելու մէջ իր ունեցած անսահման ճարպիկութեամբը։ Ինչ վերաբերում է դժբախտ հայերին, այս փոփոխութիւնը՝ պարզապէս իրանց բռնակալների աւելի խիստ ատելութեանն էր ենթարկում նրանց, երբ միևնոյն ժամանակ թուլացնում և վնասում էր այն միակ պաշտպանութիւնն, որ հնարաւոր էր Հայաստանի անողոք աշխարհագրական պայմաններում...»**)։

Ահա ինչպէս են դատել նոյն իսկ լրջամիտ անգլիացիք՝ 1878-ին Անգլիայի պատուիրակների, յատկապէս լորդ Բիկընսֆիլդի խաղացած դերն, որի շնորհիւ է կատարուած այս «փոփոխութիւնը»...։

---

*) Անգլիայի և Ռուսաստանի։

**) «Our responsibilities for Turkey», by the Duke ot Argyll, London, 1896, էջ 72—74.

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Իգնատիեվի յարաբերութիւնները Գէորգ Դ. կաթողիկոսի հետ.—Ռուսական հիւպատոսարաններ Հայաստանում.—Իշխ. Գորչակով.—Պօլօժէնիէի առթիւ թղթակցութիւններ.—Գէորգի երկիւղը Սիսի աթոռից.—Գէորգ Դ. և Խրիմեան պատրիարք.—Իգնատիևի միջամտութիւնն և թղթակցութիւնը Գէորգի հետ.—Իգնատիևի ծրագիրները Կ. Պօլսում.—Խորէն Նար-Բէյ.—Գէորգի գերեզմանատան հարցն և Իգնատիևի միջամտութիւնը.—Քաղաքականութեան փոփոխումը։

Մենք տեսանք, թէ ինչպէս կոմս Իգնատիեվ Ադրիանուպոլսում Ռուսճուքլեան վարդապետին գանգատվում էր, թէ ինք «հայոց դատին պաշտպան և փաստաբան եղած է, բայց հայերը նրա նպատակներին արգելք են եղած»։ Ռուսական դիւանի այս խօսքերը կարօտ են բացատրութեան, և մենք աւելորդ չենք համարում պատմել այստեղ, միջանկեալ կերպով, այն դերն, որ կատարել է այս ճարտար զինուորական-դիւանագէտը*) թէ Էջմիածնի կաթողիկոսութեան և թէ Կ. Պօլսի հայութեան վերաբերեալ եկեղեցական-հասարակական խնդիրներում։ Առանձնապէս հետաքրքրական

---

*) Կոմս Նիկոլայ Պաւլովիչ Իգնատիեվ, զօրապետ, զինուորական ակադեմիայի աւարտաւոր, ծնուած է 1832-ին. 1855-ին զինուորական գործակալ է նշանակուած Լոնդոնում և մասնակցած է Պարիզի դաշնագրի (1856) կնքելուն։ Կ. Պօլսի դեսպան նշանակուեց 1864-ին և շատ շուտով գրաւեց սուլթան Աբդուլ-Ազիզի վստահութիւնը։ Իգնատիեվն էր, որ յաջողեցրեց բուլղարական եկեղեցու անջատումը յունականից։ Նա հզօր պաշտպան էր թրքահպատակ քրիստոնեաներին, առանձնապէս սլաւական ցեղին և մեծապէս գործակցած է 1877-ի պատերազմի ծագմանը։ Բայց երբ գլխաւորապէս նրա մասնակցութեամբ կնքուած Սան-Ստէֆանոյի դաշնագիրը Բերլինում վերաքննութեան ենթարկուեց, այս հանգամանքը մի տեսակ անյաջողութիւն նկատուեց նրա համար և դրանով վերջացաւ նրա դիւանագիտական գործունէութիւնը։

է այն յարաբերութիւնն, որ գոյութիւն է ունեցել 1870—1876-ի շրջանում Գէորգ Դ. կաթողիկոսի և Իգնատիեւի միջև։

Գէորգ կաթողիկոս հայրապետական աթոռը բարձրանալու առաջին տարուց սկսած՝ Թիւրքիայի գաւառներից գանգատներ էր ստանում, թէ այնտեղ իր հօտը մահմեդականների հարստահարութիւններին էր ենթարկուած և ոչ մի պաշտպան չունէր, երբ հայ ազգի միւս փոքրագոյն հատուածները, կաթոլիկներն և բողոքականները, վայելում էին օտար պետութիւնների հովանաւորութիւնն, առաջինները Ֆրանսիայի, երկրորդներն Անգլիայի։ Այս պատճառով Գէորգ Դ. 1867-ին դիմեց ռուսական կառավարութեան և՝ նկարագրելով վերոյիշեալ հանգամանքը՝ խնդրեց, որ հայ-լուսաւորչականների պաշտպանութիւնն էլ Ռուսաստանն ստանձնէ*)։ Նա միևնոյն ժամանակ խնդրում էր, որ այս պաշտպանութիւնն անմիջապէս ի գործ դնելու համար՝ Ռուսաստանն ևս հիւպատոսներ նշանակէ այն բոլոր տեղերում, ուր որ ֆրանս. և անգլ. հիւպատոսներ կային. Կաթողիկոսը նոյն իսկ որոշում է այն տեղերն, ուր ինքը բաղձալի է համարում, որ ռուս. հիւպատոսներ գտնուեն, այն է՝ Մարաշ, Գաղատիա, Խարփութ, Դիարբէքիր, Սեբաստիա և Թէքիրդաղ։ Բացի դրանից՝

*) «Բուն հայք, որք բնակին ի սահմանս Թուրքիոյ, զուրկ զրկեալ յանուղղակի հովանաւորութենէ անգամ քրիստոնեայ տէրութեանց, անկանին յաճախ ընդ նեղութեամբն և ընդ վշտակրութեամբ, այլ ինչ հնարաւորն ի հայոց Հայաստանեայց եկեղեցւոյ, հայ-կաթոլիկք և բողոքականք, ունելով պաշտպանս ինքեանց գործակատարս Գաղղիոյ և Բրիտանիոյ, գտանին ի բարւոք վիճակի, և Պրօպագանդայն կաթոլիքական՝ վայելելով զհզօր պաշտպանութիւն նոցին յօր աւուր զօրանայ ի վնաս եկեղեցւոյ բուն Հայոցս»։

Գէորգ կաթողիկոսի նամակը Կովկասի Գլխ. Կառավարութեան պետ բարոն Նիկոլային, № 13, 23 ապրիլի 1867. (Կաթող. Դիւան էջմ.)։

Նա առաջարկում է հիւպատոսական գործակալներ դնել Ադանա, Մուշ և Մալաթիա քաղաքներում։ Ինչպէս որ իբրև հիմն այս միջնորդութեան՝ ծառայեցնում էր այլադաւան հայերի եւրոպական հիւպատոսներից գտած պաշտպանութիւնը, նա նոյն ուղղութեամբ շարունակելով փաստաբանում էր նաև, թէ «նշանակումն հիւպատոսաց կարէ տանել բարւոք ներգործութիւն վասն լրութեան եկեղեցւոյ հայոց և առաւել ևս քաղաքական տեսութեան Ռուսական Կառավարութեան յԱրևելս»*)։

Ռուսական կառավարութիւնն այն ժամանակ ուշադրութեան առաւ այս խնդիրն և գտաւ, թէ ռուսական շահերի տեսակէտից օգտակար կը լինէր հիւպատոսներ կարգել Կովկասի սահմանակից Թրքական 6 վիլայէթներում, սակայն այս բանն այնքան էլ հեշտ իրագործելի չէր, որով հարցն երկար ժամանակ բաց էր մնացել, երբ 1872-ին, Գէորգ՝ առիթ բռնելով ատանձնապէս Վանից իրան եկած դիմումները քրդերի բռնութիւնների դէմ՝ այս անգամ ուղղակի Գօրչակովին**), Պետերբուրգ, կրկնեց իր նախորդ խնդիրքը, բացատ-

*) Անդ։

**) Այս նշանաւոր պետական անձը շատ կարևոր դեր է խաղացած Արևելեան Խնդրում։ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչ ծնուած է 1798-ին և վախճ. 1883-ին։ Շնորհիւ իր իշխանական ծագման և դիւանագիտական ընդունակութիւնների՝ շատ շուտ յառաջացած է ունեցած դիպլօմատական ասպարէզում, ուր մտած է 23 տարեկան հասակում։ 1856-ին նշանակուած է արտաքին գործերի մինիստր և պետական կանցլեր։ Այս պաշտօնի մէջ մնացած է մինչև 1882։ Իր ժամանակի եւրոպական բոլոր նշանաւոր քաղաքագէտներն իր անձնական բարեկամներն են եղած, ինչպէս Թիէր, Բիսմարկ և Գլադստօն։ Իշխ. Գօրչակով ԺԹ. դարի ռուսական ամենամեծ քաղաքագէտն է համարվում։ Գօրչակովն էր, որ պահանջում էր Թիւրքիայի վարչական բարենորոգումը գաւառական ապակենտրոնացման և տեղական ինքնավարութիւնների հիման վրայ, ինչպէս այդ բացատրել ենք մեր այս աշխատութեան Ա. Մասում (Գլ. ԺԱ.)։

րելով դարձեալ թէ ռուսական հիւպատոսները Հայաստանում՝ ռուսական տէրութեան համար այն առաւելութիւնն ունէին, որ նրանք, «պաշտպանելով զշահս քրիստոնէից արեւելեան եկեղեցւոյ ի դրունս դատաւորաց և նահանգապետաց, կարեն միշտ յիշեցուցանել նաև զզօրութենէ և նշանակութենէ հզօր Պետութեան Ռուսաց, որ խիստ ազդեցութեամբ ոչ պակաս քան զԱրեւմտեանն է», և ապա միջնորդում է, որ առայժմ գոնէ Վանի մէջ հաստատուի ռուսական հիւպատոսութիւն, ինչպէս որ խնդրում էին վանեցիք և ինչպէս միջնորդում էին այս առթիւ նաև «դասք բարձրաստիճան եկեղեցականաց և բազմանայից Կ. Պօլսոյ»*)։

Անկասկած՝ կաթողիկոսի այս միջնորդութեան ծանօթ էր Իգնատիեւ, քանի որ նրա միջոցով միայն պիտի կատարուէր պաշտօնական բանակցութիւնը Բ. Դրան հետ, հիւպատոսներ դնելու մասին։

Բայց Գէորգ ուղղակի թղթակցում էր նաև Իգնատիեւի հետ, հայ եկեղեցական և հասարակական խնդիրների մասին։ Նրանց ծանօթութիւնը սկսում էր Բրուսայից 1866-ին, երբ դեռ Գէորգ՝ կաթողիկոս չէր ընտրուած և Իգնատիեւ այցելել էր նրան այնտեղ։ Նրանց միջև մտերմութիւնն այն աստիճանի էր հասնում, որ կաթողիկոսը մտերմաբար խորհրդակցում էր նրա հետ, իր նամակներով, այնպիսի նշանաւոր հայ եկեղեցականների մասին, ինչպէս էին Ներսէս Վարժապետեան և Խորէն Նար-Բէյ *)։

Առաջինի մասին գրում է. «Այժմեայ հանգամանքներին նայելով, ես կը կարծեմ, որ Ներսէս եպիսկոպո-

*) Կաթող. գրութիւնը № 280, 30 մայիսի 1872. (Կաթող. Դիւան էջմ.)

**) Գէորգ Դ. 1867-ին Պետերբուրգում եղած միջոցին վայելել է Իգնատիեւի հօր հիւրասիրութիւնն ես, նրա յանձնարարութեամբ, և այնտեղից է սկսել իր մտերմական թղթակցութիւնը նրա հետ։

սի (նման) նաճճայեղ բշնամի*) Տաճկաստանի մէջ Մնալը մեզ վնասակար է։ Կ. Պօլիս եղած ատենս շատերը կը խնդրէին, որ ես էջմիածնական եպիսկոպոս ճանաչեմ զնա, բայց ես մերժեցի իսպառ այդ խնդիրքը, իսկ այժմ ըստ վերոյիշեալ հանգամանաց կը կարծեմ, որ թէ նա խոնարհեալ գլխով ու զղջացեալ անձամբ գալու լինէր յէջմիածին, կարելի էր ընդունիլ զնա իբրև էջմիածնական եպիսկոպոս»**) և հարցնում է նրա խորհուրդը։

Իսկ Նար-Բէյի մասին գրում է, թէ նա խաբել է նրան և հակառակ իր խոստման չէ մնացել Էջմիածնում. ապա շարունակում է. «Կարի անբարեխիղճ մարդ երևցաւ, որ ամենայն հնար սուրբ կը համարէ իր անձնական օգտին համնելու համար. Նա հոս փորձ կը փորձէր ինքզինքը պատգամաւոր ցուցնելու ի դիմաց Թիւրքիարնակ Հայոց. կարծեմ որ պէտք է աչքի տակ ունենալ զնա, որ այնտեղ ես մէկ պաշտօնական կոչումն չսեպհականէ իրեն»***)։

Թէ այն տարիներում որքան մօտ էր Գէորգ Դ.-ի յարաբերութիւնը ռուսական դեսպանի հետ, երևում է նաև հետևեալ թղթակցութիւնից, որի մէջ նա՝ յանուն ռուսական կառավարութեան շահերի՝ խնդրում է միջամտել զուտ հայկական ներքին գործերում։

Կ. Պօլսի հայ լրագիրների մասին նա գրում է Իգնատիեւին (1868 փետր. 14, № 14). «Յառաջ քան զելանելն իմ ի Կ. Պօլսոյ, խմբագրիչք ոմանք ի հայերէն լրագրաց, որ անդ, խնդրեցին յինէն ստանձնել զմիջնորդութիւն առ ի մուծանել զլրագիրս, զորս նոքա հրատարակեն, ի ցուցակ անդրասահման ժամանակաւոր տպագրութեանց, զորս տայ բերել փոշտային կառավա-

*) Ստորագծումները մերն են։

**) Գէորգ կաթող. նամակը Պետերբուրգից, 10 հոկտ. 1867, № 279. (Կաթող. Դիւան Էջմիած.)։

***) Անդ։

բութիւն մեր, առեալ ընդ ձեռն ի վերայ իւրեանց ըզ-պարտաւորութիւն չգրել ինչ ընդդէմ Ռուսաստանի»: Եւ միջնորդում է, որ գոնէ «Մասիս» լրագիրն ազատ մուտք ունենայ Ռուսաստան, իբրև «պաշտօնական բե-րան Կ. Պօլսոյ Հայոց պատրիարքութեան»:

Սիսի եւ Աղթամարի կաթողիկոսութիւնների մա-սին նոյն տարին գրում է նրան (ապրիլի 30, № 155).

«Մանաւանդ եղանակաւ ընկալայ ի Պօլսոյ զտե-ղեկագիր Յանձնաժողովոյն, որ մատուցեալն էր ի նկա-տողութիւն Կենտրոնական Վարչութեան Հայոց, յա-ղագս հաստատութեան՝ ի ձեռս պատրիարքական Աթո-ռոյս Էջմիածնի զկաթողիկոսութիւնս Սսոյ և Աղթամա-րայ: Թէպէտ չյուսամք զի առաջարկութիւն այս կա-րիցէ առնել զարձագանգ ի սիրտս ողջախոհ մասին հա-յազնէից, սակայն ի վերայ այնր ամենայնի լրութիւն եկեղեցւոյս Հայոց և քաղաքական նպատակ կառավա-րութեան մերոյ յԱրեւելս յորդոր եղեն ինձ կանխել գրել ըստ այսմ գիրուածոյ ընդհանրական կոնդակ առ պատրիարքն Պօլսոյ... Զամանէ կարևոր վարկայ հաղոր-դել Ձեզ ի գիտութիւն»:

Հայ կաթոլիկների մասին՝ Էրզրումի առաջնորդ Յարութիւն արքեպ. Վեհապետի Պոլիս կանչուելու առ-թիւ գրում է (1868 մայիսի 13, № 185).

«Հայ-կաթոլիկ պրօպագանդայն, որ միշտ ի վէճս էր ի ձեռս Ազգիս Հայոց հանդիպեալ է ընդդիմու-թեան օգնութեամբ հիւպատոսին օրհնաբանեալ Ռուսիոյ ի դիմաց յիշատակեալ եպիսկոպոսի, բայց յայսմանէ վառելով նախանձու առ այդպիսի շնորհս պետութեան Ռուսիոյ առ հայ հոգևորականս, բարեկամեն առիթ ինքեանց համարելով յայս նուագ, ամբաստանեալ են զնմանէ առաջի տեղական փաշայի իբր թէ յանհնա-զանդութեան նորա առ կառավարութիւն Տաճկաց, և այս այնու նպատակաւ, զի հեռացուցանելով զնա զեր-կեսցեն զտեղական հայազգիս յարթուն հովուէն և ի բաց

մերժելով զմիջամտութիւնս Ռուսիոյ ի գործս և գոլով պատսպարեալ ի գործակալաց Գաղղիոյ արձակեսցեն յամենայն զօրութենէ խզել զհայս ի ծոցոյ մայրենի ե-կեղեցւոյ իւրեանց: Ծանուցեալ զայսմանէ Ձերդ Գե-րազանցութեան, ես խնդրեմ ի Ձէնջ, Յարգոյ Տէր, ի կարևոր դէպս չթողել զրկել զնա ի պաշտօնէ և այնու զոհել զնա կրից կաթոլիկական պրօպագանդայի...»:

Իգնատիևի հետ այս նամակագրութիւնն այնքան մտերմական բնաւորութիւն է ստանում, որ նոյն իսկ Կ. Պօլսի այն ժամանակի նշանաւոր հայերի կեանքի և վարքի մասին տեղեկութիւնները նիւթ են կազմում այդ թղթակցութիւններին:

1870-ին Կ. Պօլսի լրագիրները խիստ կերպով յարձակվում էին Գէորգ կաթողիկոսի վրայ, գլխաւո-րաբար Պօլօժէնիէի մի քանի տրամադրութիւնների պատճառով: Այս առթիւ Իգնատիևին գրած նամակում կաթողիկոսն արդարացնում է իր անձը, թէ ինքն ան-կարող է փոփոխել տալ ըստ իր կամաց Պօլօժէնիէի այդ տրամադրութիւններն, որոնք ռուսական օրէնքի մաս են կազմում, և նրան դէմ եղած յարձակումներին նա հետևեալ մեկնութիւնն է տալիս. «Ի ժամանակաց հետէ ձգտումն երևեալ ի Կ. Պօլիս ի կողմանէ ոմանց ի հիմնել զինքնօրինութիւն Եկեղեցւոյ Հայաստանեայց հե-ռանալով յԱթոռոյն Էջմիածնի, յամենայն դէպս գտեալ է զիս հակառակորդ հզօր, քանզի յարգելով ի վսեմա-կան տեսութեան զօգուտ և զշահ հոգևոր զաւակաց իմոց, ես օրինակաւ անձինս և բանիւ քարոզութեան ցուցեալ եմ նոցա միշտ, թէ միմիայն ընդ հովանեաւ սրբոյ Աթոռոյն Լուսաւորչի կարող են նոքա պահպանել ի վտանգէ զկրօնական զգացմունս իւրեանց, որք թան-գագին են սրտից նոցա»: Գէորգ վստահացնում է Իգ-նատիևին, թէ ինքը նոյն բարեացակամն է, ինչ որ էր ի սկզբանէ. «Ոչ ի գործողութիւնս իմ,—ասում է նա,—և ոչ իսկ ի նպատակի իմում չեն պատահեալ փո-

փոխութիւն ինչ, վասն զի որպէս յառաջ, նոյնպէս և այժմ արգոյ վասն իմ համարիմ զմտադրութիւն Ձեր. և հաճելի է ինձ լսել օգտաբեր խորհրդոց Ձերոց վեհաբերելոց հոգևոր կառավարութեանս...»: Նոյն նամակում Գէորգ Դ. պատմելով իր կատարած յառաջադիմական գործերն, ինչպէս եկեղեցու վարչութեան բարեկարգութիւնը, ճեմարանի հիմնարկութիւնն, «Արարատի» հրատարակումն, եկեղեցական ծխական դպրոցների բացումն և այլն, իբրև դրանց նպատակ ցոյց է տալիս այն, որ «յայսպիսի մրցմունս աներկբայ լիցի յաղթութիւն մեր, գերազանցութեամբ երջանկութեան Հայոց Ռուսիոյ քան զՀայս Տաճկաստանի...»*):

Պոլոժէնիէի փոփոխութեան խնդիրը մեծ անհանգստութիւն էր պատճառում Գէորգ կաթողիկոսին։ Երբ նա Կ. Պոլսից մեկնում էր Էջմիածին, Կ. Պոլսի պատրիարքը ներկայացրել էր նրան Ազգային Ժողովի որոշումն և խնդիրքն, որ հայրապետական Աթոռը բազմելուց յետոյ նա անմիջապէս հարկ եղածը կատարէ Պոլոժէնիէն փոխել տալու հայ ժողովրդական իրաւունքի համեմատ։ Որովհետև դրանից յետոյ անցել էր արդէն 4 տարի և այդ մասին ոչինչ չէր ձեռնարկուել, ուստի Կ. Պոլսում դժգոհութիւնն երթալով աւելանում էր, որի արձագանգ էին դարձել լրագիրներն անձնական յարձակումներով Գէորգ Դ.-ի վրայ։ Կաթողիկոսը վախենում էր, թէ այդ դժգոհների բուն նպատակն էր, ինչպէս ինք գրում էր Իգնատիևին, «զպաշտօն անուանական կաթողիկոսութեան Սսոյ յանձնել այնպիսւոյ առն ճարտարի և ծանօթի բնակչաց Պոլսոյ և տեղական կառավարութեան, զի յետ ընդունելոյ զնոյն պաշտօն և գնալոյ ի Սիս, ոչ զկնի բազմաց ինչ ժամանակաց մարթասցի գտանել զելս հնարից, և անտի պատճառանօք ինչ տեղափոխել ի Պոլիս, առ ի տալ

*) Դրութիւն № 279. 1870 սեպտ. 2։

զվերջին հարուած Մայր Աթոռոյս»: Եւ այս անջատումն այնու մանաւանդ հաւանական էր գտնում, որ մօտաւորապէս նոյն Թուականին ճիշդ այդպիսի մի իրողութիւն պատահել էր հայ կաթոլիկների մօտ։ Անտոն արքեպ. Հասունեան մեծ ճարպիկութեամբ յաջողել էր միացնել Լիբանանի պատրիարքական և Կ. Պոլսի նախագահ-արքեպիսկոպոսական աթոռներն և իբրև «պատրիարք կաթողիկեայ Հայոց և կաթողիկոս Տանն Կիլիկիոյ» հաստատուել էր Կ. Պոլսում։ Գէորգ Դ. լրջօրէն երկիւղ էր կրում, թէ Հասունի այս օրինակին կարող էր հետևել մի այլ «այր ճարտար», ընտրուելով նախ Սսի կաթողիկոս և ապա աթոռն այնտեղից փոխադրելով Կ. Պոլիս, որով Թիւրքահայոց մի որոշ մասը կարող էր անջատել Էջմիածնից։ Ուստի այս պատահականութեան առաջն առնելու համար Գէորգ կաթողիկոս որոշել էր այլ ևս չուշացնել և անմիջապէս ձեռնարկել Պոլոժէնիէի բարեփոխութեան գործին։ Որպէս զի Էջմիածնի ընդհանրական Աթոռի վերին իրաւասութիւնն անխախտ մնայ Ռուսաստանից դուրս գտնուող հայոց վրայ, նա ծրագրել էր այնպիսի մի յանձնաժողովի յանձնել այս գործն, որին պիտի անդամակցէին թէ եկեղեցականներ և թէ աշխարհականներ ինչպէս Ռուսաստանի, այնպէս և արտասահմանի հայերից։ Նա ձգտում էր նոյնպէս, որ այս յանձնաժողովը զբաղուի նաև Թիւրքիայի Հայոց Ազգային Սահմանադրութեան քննութեամբ, որպէս զի կաթողիկոսական ընտրութեան նկատմամբ այս վերջինի բովանդակած յօդուածները յարմարեցուէին բարեփոխուած Պոլոժէնիէի տրամադրութիւններին։

Բայց նախ քան իր այս ծրագիրը ռուսական կառավարութեան առաջարկելը՝ Գէորգ իր այս միտքն յայտնում է Իգնատիևին և նրանից խորհուրդ է հարցնում*)։

*) Գէորգ կաթ. գրութիւնն Իգնատիևին 1871 ապրիլ 28, № 91.

Իգնատիեվիը պատասխանի մէջ մանրամասն քըն-
նելով այս առաջարկութիւնը նրա իրագործումն անյար-
մար է համարում և հաւաստիացնում է կաթողիկոսին,
թէ Կ. Պօլսում այլ ևս նախկին դժգոհութիւնը չկայ և
լրագրական յարձակումները նրա և էջմիածնի դէմ շա-
պակասած են։ Կաթողիկոսը համաձայնում է, թէ Իգնա-
տիեվի յառաջ բերած առարկութիւններն իրաւացի են,
և թողնում է «Համազգային Յանձնաժողով» գումարե-
լու միտքը։ Բայց Սիսի «հակաթոռ» կաթողիկոսութեան
հարցը հանգիստ չի տալիս նրան։ Եւ նա դառնապէս
գանգատվում է Իգնատիեվին Խրիմեան պատրիարքից։
«Յայս առաջին նուագ է, որ լսի զի անզգամութեամբ
պատրիարքի Պօլսոյ և ոմանց երէցփոխանաց ժողովոյն,
մի ոմն յեպիսկոպոսաց էջմիածնի Մկրտիչ՝ ընտրեալ
լինի ի կաթողիկոսութիւն Սսոյ. ցաւալի է յոյժ, զի
պատրիարքն Խրիմեան ըստ պարտուց կոչման իւրոյ և
սրբոյ ուխտին և երդմանն, որ ի Մայր Տաճարի սրբոյ
էջմիածնի, ոչ միայն չէ ի գործ եդեալ զփոյթ իւր ի
պաշտպանութիւն դարաւոր ժամանակօք սրբացեալ ի-
րաւանց Հայաստանեայց Եկեղեցւոյ խախտելոյ պար-
զապէս, այլ վստահացեալ իսկ է յԱզգային ժողովոյ
իբրև զիմ Փոխանորդ ճանաչել զայն ընտրութիւն վա-
ւերական...»*)։ Մի տեղ էլ նոյն նամակում ասում է,
թէ «Խրիմեանն այնպիսի իմն վստահութեամբ մղեալ
է յայն ասպարէզ, որ զոգցես բոլորովին մոռացեալ
իցէ զգոյութիւն Ծայրագոյն Հոգևոր Իշխանութեան,
յանուն փոխանորդութեան կաթողիկոսի ամենայն հա-
յոց, ի պատրել զժողովուրդն և զքահանայս ինքն միայն
ի վերայ իւր առնու զբոլոր իշխանութիւն որոշելոյ
զյարաբերութիւնս նորոգ ընտրեալ կաթողիկոսի ընդ
պատրիարքարանի Պօլսոյ և Մայր Աթոռոյս...»։ Խորէն

**) Գէորգ կաթ. նամակը Կ. Պօլսի դեսպանին 1871 դեկտ. 15, № 281. Կաթող. Դիւան։

Նարբէյին էլ, որ այս ընտրութիւնը ծանուցանելով
խնդրել էր օրհնել, Գէորգ յանդիմանական պատասխան
է գրում։ Այս խնդիրը կարևորութիւն է ստանում հե-
տզհետէ, և դեսպանն իր տեսութիւնն է գրում Պետեր-
բուրգ, պաշտպանելով ընդհանրապէս Գէորգի հայեցա-
կէտը։ Պետերբուրգում՝ կամենալով աւելի մօտից ծա-
նօթ լինել գործի մանրամասնութիւններին՝ ներքին
գործերի մինիստրութիւնը մի տեղեկագիր է կազմում
այս խնդրի մասին և Կովկասի Գլխ. Կառավարութեան
միջոցով ուղարկում է էջմիածին։ Գէորգ բացատրու-
թիւններ է տալիս, դարձեալ մեղադրում է Խրիմեանին
և առթից օգուտ է քաղում Պօլօժէնիէի բարեփոխու-
թեան պահանջը յիշեցնելու համար, որպէսզի արտա-
սահմանի հայոց դժգոհութեան պատճառները վերանա-
լով՝ նրանք «ինքնին փութասցեն բառնալ զհակաթոռն
Սսոյ և Աղթամարայ, որպէս զի առաւել բարձրասցի
անուն և նշանակութիւն էջմիածնի, որ այնքան ցան-
կալի է և վառն պետութեան մերոյ»*)։

Իգնատիեվ, թէ էջմիածնի հեղինակութիւնն իբրև
Մայր Աթոռ բարձր պահելով թրքահայերի հետ նրա
ունեցած կապն աւելի ամրացնելու և թէ անշուշտ մի-
ևնոյն ժամանակ այս միջոցով ռուսական ազդեցութիւ-
նը նրանց վրայ տարածելու համար, 1871-ին միտք է
յղանում Կ. Պօլսում հիմնել էջմիածնատուն, նրան կից
ռուս-հայկական դպրոց և ապա, որ աւելի կարևորն է,
նաև առանձին էջմիածնայ Փոխանորդութիւն. այս վեր-
ջինն այն պատճառով, որովհետև Գէորգ Դ. հակառակ
էր Կ. Պօլսի այն ժամանակի պատրիարք Խրիմեանին,
նրան չէր ճանաչում իբրև իր փոխանորդն և իր կող-
մից յատուկ նուիրակներ էր ուղարկում Կ. Պօլիս, ինչ-
պէս էին Պետրոս եպիսկոպոս Վեհապետեան և Սարգիս
եպ. Ջալալեանց։

*) Անդ.

Երբ կաթողիկոսը ռուսական դեսպանի այս ծրագրին տեղեկանում է, անմիջապէս պատասխանում է նրան և իր համաձայնութիւնն է յայտնում, միայն թէ, աւարկում է նա, պէտք է «նախ զփոխանորդն և զփոխանորդարանն պատրաստել, զկնի եկեսցէ դիւրութեամբ շինութիւն դպրոցին»*): Այս կէտի նկատմամբ նրանց միջև տարաձայնութիւն տեղի ունէր: Իգնատիեվ, ընդհակառակն, գտնում էր, որ աւելի յարմար էր նախ դպրոցի համար շէնք գնել Էջմիածնի անունով, որովհետև թիւրք կառավարութեան կողմից դպրոցի հիմնարկութեան արգելք չէր սպասւում. և ապա այդ իսկ շէնքի մէջ պէտք էր լուսեղայն հաստատել թէ Էջմիածնատունն և թէ Էջմիածնի Փոխանորդութիւնը: Եւ Իգնատիեվ եռանդով ձեռնարկում է իր այս մտադրութեան իրականացման. դրա համար անմիջապէս գնում է Պէրայում 3000 ոսմ. լիրայով Մաղաք Մուրատեանի տունը: Այս գործի մէջ Իգնատիեվ՝ իրան խորհրդակից ունէր Խորէն եպ. Նար-Բէյին, որ այն ժամանակ Բէշիկթաշ էր ապրում և որին նա յանձնել էր ապագայ դպրոցի ծրագիրն և նախահաշիւը կազմել: Դպրոցը գիշերօթիկ պիտի լինէր. ըստ այնմ էլ Նար-Բէյ նախահաշիւ շինելով ենթադրում էր, թէ տարեկան ընդամենը 320,000 ղրուշ (մօտ 30,000 րուբլի) ծախքով կարելի էր 80 գիշերօթիկ աշակերտ պահել: Նրա հաշուով այս գումարն ամբողջապէս պիտի ծածկուէր աշակերտների թոշակով: Իգնատիեվ, սակայն, կասկածում է, թէ, գոնէ առաջին 2—3 տարիները կարելի լինի աշակերտական վճարումներով դպրոցի ծախքն ապահովել, ուստի ուզում է իմանալ, թէ Էջմիածինն իր կողմից ինչ նիւթական օժանդակութիւն կարող էր անել: Գէորգ բացարձակապէս յայտնում է, թէ Էջմիածնից որևէ դրամական նպաստ պէտք չէր սպասել: Նար

*) Դրութիւն կաթող. առ Իգնատիեվ, № 250, 24 նոյեմբ. 1871.

-Բէյ դարձեալ պնդում է իր նախահաշուի վրայ և վստահացնում է, թէ առանց դեսպանատնից նոր դրամական զոհողութիւն պահանջելու, միմիայն աշակերտական թոշակներով և մասնաւոր անձերի օգնութեամբ՝ ինք կարող է պահպանել դպրոցը: Եւ նա ըստ այնմ էլ, Իգնատիեվի հաւանութեամբ, կազմում է դպրոցի հիմնարկութեան ծրագիրը*):

Իգնատիեվը այս ծրագիրն ուղարկում է Գէորգին և խնդրում է նրա շուտափոյթ հաւանութիւնն, որպէս զի դպրոցը բացուի 1873 թ. սեպտեմբերին: Բայց այն ժամանակ, երբ նա կաթողիկոսից համակրութեան և համաձայնութեան գիր էր սպասում, նրանից այնպիսի մի պատասխան է ստանում, որ բոլորովին շփոթեցնում է Իգնատիեվին: Գէորգ յայտնում է նրան, թէ նախ Էջմիածինն իր կողմից որևէ դրամական նպաստ տալ անկարող է, և ապա, որ գլխաւորն է,

*) Այս ծրագիրը հետևեալն էր.

Ա. Դպրոցը պիտի բացուի կաթողիկոսի թոյլտուութեամբ. Նրա ամբողջ պատասխանատուութիւնն և ղեկավարութիւնը յանձնվում է Խորէն եպ. Նար-Բէյին:

Բ. Դպրոցը պիտի համարուի Էջմիածնայ տուն:

Գ. Տեսուչը (Նար-Բէյ) պիտի կազմէ ուսման ծրագիրը Թրքահայոց պէտքերի համաձայն: Նա պիտի նշանակէ ուսուցիչներ:

Դ. Որովհետև գնուած տան մէջ 40 աշակերտ հազիւ կը տեղաւորուեն, ուստի տարեկան ծախքը 40,000 ֆրանքը պիտի չանցնի:

Ե. Եթէ կաթողիկոսն ուզէ 10 աշակերտ պահել իր ծախքով, տարեկան 800 ֆրանք պիտի վճարէ ամեն մէկի համար:

Զ. Դպրոցական ուսումնավարձի համեմատաբար մատչելի լինելն և այլ նպաստաւոր հանգամանքները վստահացնում են, որ դպրոցը յաջողութիւն կունենայ:

Է. Դեսպանատունը դպրոցը պիտի ընդունի իր պաշտօնական հովանաւորութեան ներքոյ:

Ը. Դեսպանատունը պիտի հոգայ դպրոցի բացման և կահաւորման վերաբերեալ սկզբնական ծախքերը:

Թ. Տարին 2 անգամ կաթողիկոսին տեղեկագիր պիտի ուղարկուի դպրոցի վիճակի մասին:

պայման է դնում, որ դպրոցը բացուի Էջմիածնի անունով և յանձնուի «տեղական (Կ. Պօլսի) հայ հասարակութեան»։ Բացի դրանից տեսուչն էլ պէտք է լինի ոչ թէ Իգնատիևի համակրած Խորէն Նար-Բէյ եպիսկոպոսը, այլ Արմաշի վանքի վանահայր Խորէն վ. Աշըգեան։ Միևնոյն ժամանակ Գէորգ մի ծրագիր էլ է պատրաստում և ուղարկում Իգնատիևին, որի համեմատ՝ այս դպրոցը պիտի լինէր պարզապէս «Ժառանգաւորաց դպրոց» և զուտ հոգևորականներ պատրաստելու պիտի ծառայէր, առաջին տարին էլ 20 աշակերտներով պիտի բաւականանար։ Իգնատիևը շատ էր նեղացած այս պատասխանից, որ բոլորովին ուրիշ հողի վրայ էր դնում ամբողջ ձեռնարկութիւնը։ Նա պատասխանում է անմիջապէս, թէ ինք չափազանց զարմացած է, որ կաթողիկոսը զգալի կերպով փոխել է իր նախկին մտադրութիւնը*), և այս առթիւ նա պարզ ասում է, թէ ինչ էր ռուսական կառավարութեան հայեացքը. «Կայսերական կառավարութիւնը,—բացատրում է Իգնատիև,— Կ. Պօլսում էջմիածնատուն և նրան կից դպրոց հաստատելու համար դրամական միջոցներ շնորհելով՝ նպատակ ունէր ոչ միայն բարիք անել հայ պատանիներին, այլ և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարոյական ու կրթական ազդեցութիւնը բարձրացնել, հայ ժողովուրդն Էջմիածնի հետ միացնող կապը զօրեղացնելով։ Էջմիածնատունը կարող էր, դեսպանատան պաշտպանութիւնից օգտուելով, առաջին յարմար առթին Փոխանորդութիւն հիմնել... Բայց Ձեր առաջարկած ձևով

*) «Не скрою отъ Вашего Святѣйшества, что я былъ крайне удивленъ усмотрѣвъ изъ этого письма, что Ваши намѣренія значительно измѣнились и расходятся какъ съ первоначальною цѣлью учрежденія такъ и съ прочими Вашими видами,—насколько они мнѣ извѣстны...»։ Ռուսական դեսպանի գրութիւնը Գէորգ Դ.-ին 1873 թ. յուլիսի 30-ին. (Կաթող. Դիւան Էջմիածնի)։

դպրոց հաստատելով էջմիածնատան կերպարանքը փոխվում է. դպրոցն այն դիրքի մէջ է դրվում, ինչ որ ունեն Կ. Պօլսի հայոց միւս դպրոցները, որով դեսպանատունը զրկվում է նրա պէտքերը հոգալու և ի պահանջել հարկին նրան պաշտպանութիւն անելու հնարաւորութիւնից։ Այս ձևով դպրոցը կախուած պիտի լինի պատրիարքարանից, իսկ պատրիարքարանի Խառն Ժողովի անդամները թուրքական պաշտօնեաներ են...»։ Եւ վերջապէս դեսպանը հարցը դնում է կտրուկ կերպով. «...Ես անյարմար եմ գտնում էջմիածնատունն և դպրոցը յանձնել Արմաշի վանքին. ուստի եթէ Դուք անկարելի էք գտնում ընդունել այն հիմունքն, որ ես բացատրել եմ նախորդ թղթակցութեանս մէջ, և որոնց Դուք մինչև հիմա համաձայն էիք, խոնարհաբար խնդրեմ իմացնէք ինձ։ Որովհետև այն ժամանակ ես լաւագոյն կը համարեմ ծախել գնուած տունն և դրա գումարը պահել ինձ մօտ՝ մինչև որ Ձեր Սրբութիւնն հնարաւորութիւն տեսնէ հիմնել այստեղ իսկապէս էջմիածնատուն և դպրոց, որոնք կախուած ունենային միմիայն Էջմիածնից»։

Իգնատիևի այս պաշտօնական գրութեան Գէորգ պատասխանում է նոյեմբերի 7-ին (1873) մի մտերմական նամակով, որտեղ ծածկում է իր բուն միտքն և աշխատում է նախ հաւատացնել, թէ իր մտադրութիւնները փոխուած չեն, բայց վերջ ի վերջոյ ստիպուած է լինում յայտնել իբրև արդարացում իր վարմունքին, թէ «տեղական հանգամանքները փոխուել են», որից դեսպանն իրաւամբ եզրակացնում է, թէ այն նպատակն, որի համար կաթողիկոսն և դեսպանը կանխաւ համաձայնութիւն էին կայացրել, այլ ևս գոյութիւն չունէր Գէորգի համար։ Եւ իրօք, Գէորգ կաթողիկոս ռուսական միջամտութեան էր դիմել, որովհետև, ինչպէս բացատրեցինք, վախենում էր այն ժամանակ, թէ Սիսի Աթոռն իր մի ճարպիկ գահակալի շնորհիւ կարող էր իր իրաւասութիւնն ընդարձակել և

տարածել մինչև Կ. Պօլիս, ի փառս Էջմիածնի գահաւոր իրաւունքի։ Այս նպատակով էլ նա, Մայր Աթոռի իրաւունքն և հեղինակութիւնն անխախտ պահելու համար, որոշել էր մի անկախ Փոխանորդութիւն հիմնել Կ. Պօլսում, Իգնատիևի աջակցութեամբ։ Էջմիածնատունն և դպրոցն այս վերջնական նպատակի նախաշաւիղներն էին։ Բայց երբ Խրիմեան, որի վրայ Գէորգ ամենևին վստահութիւն չունէր, հրաժարվում է պատրիարքութիւնից, Սիսի մասին նրա երկիւղը գրեթէ փարատվում է։ Միևնոյն ժամանակ Կ. Պօլսի որոշ շրջաններից հաւանականաբար զգուշացնում են նրան առանձին Փոխանորդութեան յառաջ բերելիք պառակտման մասին։ Իսկ այնուհետև երբ Վարժապետեան տեղապահ և ապա պատրիարք է ընտրվում՝ Գէորգ բազմաթիւ համակրալից կոնդակներ է ուղղում նրան՝ «քաջարթուն, սիրեցեալ» և այլն մակդիրներով։ Ահա այս էր անշուշտ «տեղական (Կ. Պօլսի) հանգամանքների փոփոխութիւնն», որին ակնարկում էր Գէորգ՝ Իգնատիևին ուղղած իր նամակներում։ Կաթողիկոսը մինչև անգամ պահանջում է, որ տան գնումից աւելցած մօտ 10,000 րուբլին Իգնատիևը Էջմիածին ուղարկէ կամ այս վերջինի հաշուին Արևելեան Երկաթուղիի վիճակախաղի թղթեր գնէ, բայց Իգնատիևը մերժում է թէ մէկն և թէ միւսը։ Նա դեռ ես աշխատում էր համոզել կաթողիկոսին համակերպել իր մտքին և նախ Էջմիածնատուն ու դպրոց բանալ։

«Փոխանորդութիւն հաստատելու մասին մեր հանդիպած դժուարութիւնները,—գրում է նա,—յառաջ եկան նրանից, որ թիւրք կառավարութիւնը, Կ. Պօլսի պատրիարքն (Խրիմեան) և սրա համախոհները ձգտում էին հայերի համար Էջմիածնի տեղ Կ. Պօլիսը դարձնել ծանրութեան կամ ձգողութեան կենտրոն, չնայելով որ ժողովուրդը յարած է Էջմիածնի։ Ի նկատի ունենալով Սարգիս եպ. Ջալալեանցի գրութիւնն, որ ամբողջ ժա-

մանակ կեղծ կացութեան մէջ էր գտնվում այստեղ, և որպէս զի այս վիճակը չկրկնուի ապագայում, ես համոզուեցի, որ Կ. Պօլսում Էջմիածնի Փոխանորդութիւն հիմնելը կարելի է միայն այն ժամանակ, երբ Բ. Դուռն և հայերն այս մտքին աստիճանաբար ընտելանան. Էջմիածնի Աթոռի Փոխանորդի յանկարծակի Կ. Պօլիս երևալը թշնամութիւն պիտի յարուցանէր այստեղ։ Ուստի այս գործը թէ հաստատուն հողի վրայ դնելու և թէ Բ. Դրան կամ որևէ օտար տէրութեան ներկայացուցչի և կամ նոյն իսկ մեզ հետ թշնամաբար վարուող հայերի ինտրիգներից (intrigue) պաշտպանելու համար էր, որ ես ուզում էի նախ Էջմիածնատուն և նրան կից էլ դպրոց հաստատել։ Այս իրագործուելուց վերջը՝ Փոխանորդութեան խնդիրն երկրորդ տեղը պիտի բռնէր և Կ. Պօլսում Էջմիածնի եպիսկոպոսի գըտնուելը ոչ մի կասկած կամ վտանգ չէր յարուցանի։ Նրա ներկայութիւնը շատ բնական պիտի երևար, քանի որ սկզբնապէս նա պիտի զբաղուէր Էջմիածնատան և դպրոցի տնտեսական գործերով և այլն։ Յետոյ՝ Էջմիածնատան մէջ գտնուող եպիսկոպոսը կարող էր դառնալ Ձեր Փոխանորդն, եթէ Դուք այս օգտակար և անհրաժեշտ համարէիք։ Բայց այս ծրագիրն հնարաւոր էր իրագործել միայն այն հանգամանքում, եթէ Էջմիածնատան և դպրոցի կառավարութիւնը գտնուէր անպատճառ այնպիսի մի անձի ձեռքում, որ այստեղի հայոց պատրիարքից և Խառն Ժողովից կախում չունենար, այլ ենթարկուած լինէր միմիայն Ձեր Սրբութեան։ Միայն այս հանգամանքում Կայսերական Դեսպանատունը պիտի կարենայ իր պաշտօնական հովանաւորութեան տակ ընդունել Էջմիածնատունն և դըպրոցն իբրև այնպիսի հաստատութիւններ, որոնք հիմնուած են ռուսական պետական գանձարանի միջոցներով»*)։

*) Իգնատիևի գրութիւնը՝ 10 նոյեմբ. 1873, № 636.

Որչափ և Իգնատիեվ իրաւացի էր իր տեսակէտով և հիմնվում էր կանխաւ նրանց մէջ կայացած համաձայնութեան, այնու ամենայնիւ Գէորգ չէ ընդունում նրա առաջարկութիւնը։ Այն ժամանակ դեսպանն էլ ծախում է դպրոցի համար գնուած տունը, գումարը պահելով դեսպանատան կարգադրութեան տակ, մերժելով ուղարկել այդ՝ կաթողիկոսին, ինչպէս նա պահանջել էր։ Բացի դրանից՝ Արտաքին Գործերի Մինիստրութեան Իգնատիեվի միջնորդութեամբ յատկացրած նոր գումարը, 15,000 ռուբլի, որ պիտի ծախսուէր Կ. Պոլսում Էջմիածնի Փոխանորդութիւն հաստատելու, այլ ևս նա չէ պահանջում Պետերբուրգից։

Տարի ու կէս վերջն, այն է՝ 1875-ին, Իգնատիեվ մի վերջին փորձ ևս է անում և դարձեալ յուզում է էջմիածնատան և դպրոցի խնդիրը. նա պնդում է, թէ դպրոցի հիմնարկութիւնն ոչ մի դժուարութեան չի հանդիպի նիւթական միջոցների կողմից։ Ռուսական գանձարանի տալիք նպաստն, աշակերտներից ստացուելիք ուսումնավարձն և մասնաւոր նուիրատուութիւններ՝ կատարելապէս կապահովէին դպրոցի տնտեսական մասը։ Իգնատիեվի համար թէև աւելի հաճելի էր, որ իր բարեկամ և խորհրդակից Խորէն Նար-Բէյին յանձնուէր գործի ղեկավարութիւնը, բայց քանի որ Գէորգ Դ. վստահութիւն չունէր նրա վրայ, ուստի դեսպանը գրում է կաթողիկոսին, որ իր վստահութիւնը վայելող մի այլ հայ եկեղեցականի, օրինակի համար՝ Ներսէս պատրիարքին կամ Խորէն Աշըգեանին, յանձնարարէ, որ դեսպանատան հետ համաձայնութիւն կայացնէ, և օր յառաջ դպրոցը բացուի։ «Յոյս ունեմ,—վերջացնում է նա,—որ այս անգամ Ձեր Սրբութիւնն այլ ևս որևէ արգելք չի դնի դպրոցի հիմնարկութեան, որը միայն կարող է յառաջ տանել նախ էջմիածնատան, ապա և, ժամանակով, Փոխանորդութեան հաստատումը»*)։

*) Իգնատիեվի նամակը, 22 մարտի 1875, № 200.

Այս նամակն ստանալով Գէորգ ըստ այնմ հրահանգ է տալիս Ներսէս պատրիարքին, բայց նրա այս կոնդակից յառաջ Վ. վարդապետ (Վահրամ Մանկունի) մասնաւոր նամակով հաղորդում է պատրիարքին Գէորգի հայեացքն այս մասին։

Ներսէս պատրիարք մայիսի վերջերը (1875) անձամբ գնում է Իգնատիեվի մօտ և երկարօրէն տեսակցում է նրա հետ։ Իգնատիեվ դարձեալ մեծ համակրանօք է վերաբերվում այս խնդրին և աշխատում է իր կողմից ամեն դժուարութիւն հարթել իր այս ռուսհայկական դպրոցի գաղափարն իրականացած տեսնելու համար։ Նա համաձայնվում է, որ գնուելիք նոր դպրոցական շէնքը կալուածագրուի էջմիածնի անունով և համարուի էջմիածնի սեփականութիւն (թէև գումարը ռուսական գանձարանից պիտի վճարուէր), տեսուչը կամ վերատեսուչը նշանակուի կաթողիկոսի կողմից։ Նա նոյն իսկ ուսման ծրագրի կազմելն էլ յանձնում է Ներսէս պատրիարքին. իր կողմից այս պայմանն է միայն դնում, որ դպրոցը միմիայն հոգևորականներ կրթելու նպատակ չունենայ, այլ այնտեղ թէ հոգևորական կոչման հետևող և թէ աշխարհական աշակերտներ սովորեն, և, որ գլխաւորն է, դպրոցում պարտաւորիչ լինեն այն լեզուները, որոնք հայոց վրայ տիրող երեք տէրութիւնների պետական լեզուներն են, այսինքն ռուսերէնը, թիւրքերէնն և պարսկերէնը։ Ներսէս այս պայմանները գոհացուցիչ է գտնում, զեկուցանում է Խառն ժողովին ու մինչև իսկ «ուրախ եղև յոյժ» ասում է ինքն և ըստ այնմ էլ հաղորդում է էջմիածին*)։

Այս երկար բանակցութիւնները դեռ չէին աւարտել, երբ Թիւրքիայում քաղաքական հանգամանքներն այն կերպարանքն առին, որ թէ ռուս-հայկական դպ-

*) Ներսէս պատրիարքի նամակը Գէորգ Դ. կաթողիկոսին, Կ. Պոլիս, 7 յունիսի 1875. (Կաթ. Դիւան)։

դպրոց կառուցանելու և ոչ թէ Իգնատիեվի յղացած էջմիածնատան ուսումնարան։ Ըստ երևոյթին Ներսէս պատրիարք և իր խորհրդակիցներն այդպէս էին վարուել համաձայնութեամբ նաև կաթողիկոսին, որ հետեւեալն էր գրել պատրիարքին այս մասին. «Ցանձն առնեմք խոհեմութեան ձերոյ, որպէս զի նախ խորհրդակցեալ ընդ ազգասէր անդամս Վարչութեան և ընդ այլ հեռատես ազգայինս, եթէ ոչ ունիցի զվնասակար ինչ հետևանս և ըստ ամենայնի օգտակար դատեսցի, զարժանն հոգացեալ խնդրեսջիք ի Բ. Դրանէ օսմանեան բարեխնամ կառավարութեան զլուծումն առ ի շնորհել զհրաման հիմնելոյ դպրանոց ժառանգաւորաց ի վերայ գետնոյ գերեզմանատան Հայոց Բէբայի, որում խոստանայ վսեմափայլ դեսպանն օգնել ի յաջողութիւն ստացման հրաման Բ. Դրանն»*)։

Եւ ահա այսպէս Իգնատիեվի ծրագիրները հայոց նկատմամբ՝ անյաջողութեան են մատնվում։ 1873-ից յետոյ Գէորգ կաթողիկոսի յարաբերութիւնները ռուսական կառավարութեան հետ սկսել էին լարուել Պօլօժէնիէի բարեփոխութեան, դպրոցների վրայ՝ պետական հսկողութեան և այլ մի քանի երկրորդական խնդիրների պատճառով, որ հաւանականաբար կողմնակի կերպով ազդած կը լինի և նրա՝ Իգնատիեվի հետ ունեցած յարաբերութիւնների վրայ։ Այս խնդրում փոքր դեր չէ խաղացած Վ. վ. Մանկունի, որի ազդեցութիւնը կաթողիկոսի վրայ ակներև էր։ Միևնոյն ժամանակ Ներսէս պատրիարք և Կ. Պօլսի ազգային շրջանում որոշ ազդեցութեան տէր հայերն էլ, ի բնէ հակառուսական զգացումներով տոգորուած, ոչ միայն ընդ յառաջ չէին գնում Իգնատիեվի ձեռնարկութիւններին, այլ խանգարում էին նրանց։ Սակայն կարճ ժամանակ վերջը, շնորհիւ ռուս-թրքական պատերազմի, հանգամանքներն

*) Գէորգ Դ.-ի նամակը Ներսէս պատրիարքին, 1875 հոկտ. 29, № 358.

այնպէս պիտի փոխուէին, որ նոյն Վարժապետեան և իր խորհրդակիցների խումբը ստիպուած եղան փոխել իրանց այս քաղաքականութիւնը։ Նրանք ոչ միայն խոնարհ աղերսով դիմեցին նոյն Իգնատիեվին, այլ ամեն ջանք գործ դրին համոզելու համար նաև Գէորգ կաթողիկոսին և իր մտերիմ խորհրդական Մանկունի եպիսկոպոսին, որ սրանք էլ փոխեն իրանց ընթացքը յանուն նորածին, աւելի բարձր, կենսական ազգային շահերի։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Իզմիրլեան էջմիածնում.—Գէորգ կաթողիկոսի և Մանկունի եպիսկոպոսի վերաբերմունքը.—Սէրվիչէնի նամակը.—Նար-Բէյը Պետերբուրգում.—Հայաստանի ինքնավարութեան ծրագիրը.—Ալեքսանդր Բ. կայսրն և Նար-Բէյ.— Ռուսահայերն և ռուս լրագիրները Հայկական Խնդրի մասին։

Ինչպէս Ա. Գլխում պատմեցինք, Կ. Պօլսի ազգային վարչական շրջաններն անհրաժեշտ էին գտնում, որ Գէորգ Դ. կաթողիկոս միջամտէ Հայկական Խնդրին և թրքահայոց աղերսն անձամբ կամ պատգամաւորութեան միջոցով ներկայացնէ ռուսաց կայսեր և ապա եւրոպական լիազօրների համագումարին։ Կաթողիկոսին համոզելու դերը յանձնուած էր Մատթէոս եպ. Իզմիրլեանին, որ շուտով պիտի մեկնէր էջմիածին։ Ներսէս պատրիարք՝ 1878 փետր. 4 թուով Իզմիրլեանի ձեռքը տուած յանձնարարական նամակում Գէորգին գրում էր, թէ Կ. Պօլսի պատգամաւորը «ունի բազումս խօսել ընդ Վեհափառութեանդ, կամաւ ամենեցուն, եկեղեցական եւ աշխարհական ազգայնոց...»։ Յուսով եմ զի արժանի լինելոց են թէ Մատթէոս եպիսկոպոսն թէ

պատգամաւորքն երկոքին եկեղեցականք*), որք դիմել ունէին առ ոտս Վեհափառութեանդ»։

Իգմիրլեան ճանապարհ չգտաւ դէպի Կովկաս, անմիջապէս մեկնելու համար։ Պատերազմը նոր դադարած լինելով, Կ. Պոլսի և Կովկասի միջև կանոնաւոր հաղորդակցութիւն դեռ չէր սկսած. Երթևեկութիւն կար միայն Կ. Պոլսի և Օդեսայի միջև, բայց այստեղից դէպի Փօթի (այն ժամանակ Կովկասի ամենայարմար նաւահանգիստը) դեռ շոգենաւ չէր բանում. Իգմիրլեան, տեսնելով որ իր մեկնումն այս կերպով շատ է ուշանում, անհրաժեշտ համարեց անմիջապէս նամակով գործի էութիւնը մանրամասն պարզել Վահրամ եպ. Մանկունուն, իբրև կաթողիկոսի մտերմին։ Վարժապետեանն էլ հարկաւոր գտաւ իր կողմից դարձեալ գրել կաթողիկոսին փետրուարի 13-ին, թէ «ի նամակէ Մատթէոս եպիսկոպոսի և այլոց, որք այդր են**), Վեհափառութիւն Ձեր կարող է իմանալ զհարկերորդ ազգիս», և ապա որոշ կերպով ասում է, թէ «Ազգն խնդրէ ի Վեհափառութենէդ դիմել անձամբ առ Կայսրն նախ քան, կամ եթէ չէ հնար՝ գէթ ի պահու գումարման գեսպանախորհրդոյն և շնորհ խնդրել ի նմանէ վասն Հայաստանի, որպէս և այլ...»։ Եւ որովհետև Կ. Պոլսում գիտէին, որ Գէորգ Դ. հակամէտ չէր Ռուսիայի օգնութեան դիմելուն, թէև այնչափ էլ ռուսատեաց չէր, որչափ Մանկունին, «աշակերտն Նորին Ս. Օծութեան», որի ազդեցութեան տակ էր գտնվում կաթողիկոսն, ուստի Իգմիրլեան աշխատում էր Մանկունու վրայ ազդել, որպէս զի այս միջոցով Գէորգ Դ. հետևի Կ. Պոլսից տրուած խորհուրդներին։ Նա գրում էր Մանկունուն.

«Ժամանակին ըրածը ոչ ոք կրնայ ընել. ժամանակը շատ բան կը փոխէ. պարագաներուն և դէպքերուն պէտք է հնազանդինք. մեր հին ընթացքը փոխելու ենք. մեր խորագիտութիւնը և շրջահայեցութիւնը պահելով դիմելու ենք կայսեր։ Այսօր Թիւրքիա անոր ոտից ներքև է. մէկ մեծ ու նշանաւոր մասը կորոյս. ասիական մասին ալ մենք տէր ըլլալու ջանալու ենք։ Թիւրքիա այդ մասին մէջ մնայ ալ, այսուհետև Ռուսիոյ խոնարհ ծառան է։ Ամեն պարագային մէջ Ռուսիոյ պաշտպանութեանը կը կարօտինք, փութանք միշտ նորա համակրութիւնն ու սէրը գրաւել. փութանք այս անգամ բան մ՛ըլլալ, կամ գէթ ապագայի նախապատրաստութիւն ընել, Հայկական խնդիրն այժմէն հանելով, և օր մը, որ շատ չպիտի ուշանայ, երբ Ասիական Թիւրքիոյ խնդիրն ելնէ (եթէ այս անգամ չելնէ) մեր երկրին վրայ մեր բաժնին տէրն ըլլանք»*)։

Այս նամակը յղելուց մի քանի օր յետոյ Իգմիրլեան ինքն ևս հնարաւորութիւն ունեցաւ մեկնելու և նա մարտի սկզբներին արդէն Էջմիածնումն էր։ Այստեղ Իգմիրլեանի նոյն իսկ առաջին քայլերը Մանկունի եպիսկոպոսի ընդդիմութեանը բախեցան։ Վահրամ եպ. ուզեց, որ Իգմիրլեան իր յանձնարարականները տայ նրան, որ նա, Մանկունին, տանի կաթողիկոսին և այս վերջինի պատասխանը բերէ։ Մանկունին պատճառաբանում էր, թէ կաթողիկոսը հիւանդ է և անկարող է ընդունել։ Բայց Իգմիրլեան չզիջեց այս առարկութիւնների առջև և Պետրոս եպիսկոպոսի միջոցով մի զեկուցագիր ներկայացրեց կաթողիկոսին և խնդրեց, որ անձամբ ընդունի իրան, յոյս յայտնելով որ կաթողիկոսը «մինչև իսկ իր անձնական տկարութեան ժամանակ Հայոց Ազգին այս կենաց և մահու խնդրոյն լուծմանն համար կը հաճի ի գործ դնել իւր. հայրապետ-

---

*) Այս պատգամաւորներն էին՝ Խրիմեան և Նար-Բէյ։

**) Ակնարկում է արմաշեցի Ներսէս վարդապետին։

*) Իգմիրլեանի նամակը Մանկունուն, 13 փետր. 1878.

տական սրբազան պաշտօնը…»*)։ Գէորգ Դ. անմիջապէս հրամայեց, որ Իզմիրլեան ներկայանայ իրան։ Այս տեսակցութիւնն և նրան հետևող ուրիշ տեսակցութիւններն ոչ մի դրական արդիւնք չը տուին։ Էջմիածնի բարձրագոյն հոգևոր իշխանութիւնն «իր ընթացքը չփոխեց» և Իզմիրլեան ստիպուած եղաւ ձեռնունայն վերադառնալ կաթողիկոսի հետևեալ խուսափողական պատասխանովը յանուն պատրիարքի.

«Յանցելում եթնեկի եկն եհաս այսր ի Ս. Էջմիածին հոգեզգօն Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան հոգևոր որդի մեր, մինչ մեք դառնապէս չարաչար ի բազմատագնապ վիշտս, կրկնատեսակ անձնական տկարութեան յոգիս ապաստան եղեալ, և յետ աւուրց՝ ի թեթևանալ ցաւոցս զոյգն ինչ, ներկայացեալ մեզ պատմեաց ի դիմաց Ձերոց զհանգամանաց փափուկ խնդրոյն, զոր ակնարկէք յերկոսին գրութիւնքս Ձեր ի թուագրեալս ի 4-ն և ի 13-ն փետրուար ամսոյ անցելոյ։ կամելով մեր ընդարձակագոյնս լսել ի բերանոյ նորա՝ քանի քանիցս խօսակցեալ նմա և ապա աւանդեալ, որ ինչ հարկ և կարևոր թուէր մեզ յօգուտ Ազգի և Եկեղեցւոյ Հայաստանեայց, թոյլատրեցաք նմա վերադառնալ առ Ձեզ առ ի հաղորդել սրբազնութեան Ձերում զբարենպատակ դիտաւորութիւնս մեր և զպատասխանիս»**)։

Իզմիրլեան ապրիլի սկիզբները վերադարձաւ Կ. Պոլիս և պատմեց այնտեղ իր գտած անյաջողութիւնն Էջմիածնում։ Երբ այս վիճակն յայտնի եղաւ Կ. Պոլսում, Գէորգ կաթողիկոսի հին ծանօթները հարկաւոր համարեցին իբրև վերջին փորձ իրանց կողմից եւս ուղղակի կաթողիկոսին դիմելով փարատել նրա տարակուսանքն և բացատրել անկեղծօրէն իրերի դրութիւնը։

*) Իզմիրլեանի զեկուցագիրը, 10 մարտի 1878 (Կաթող. Դիւան)։

**) Էջմիածնի Կաթ. Դիւան։

Շատ հետաքրքրական է այս առթիւ ամենից յարգուած մի պատկառելի ազգային գործողի, Սահմանադրութեան ամենահին սիւներից մէկի գրածը Գէորգին։ Ահա ինչպէս էր բացատրում այս նշանաւոր հայը, դոկտոր Սէրվիչէն, պօլսական հայեացքն և ուղղութիւնը 1878 ապրիլ 12 թուակիր իր նամակում։

«Ինձ կը թուի, որ որչափ որ Ձեր Սրբազնութիւնը զիսկը ճանչէ, նոյնչափ ալ ես Ձեր Սրբազնութիւնը, իր սիրտը բոլոր հանգամանքներով։ Ցաւալին այն է, որ մէկզմէկէ ի հեռու եւ քաջ տեղեկութիւն չունիմ Ձեր կողմի պարագաներուն, ինչպէս ալ Ձեր Սրբազնութիւնը մեզմէ հեռանալէն ետքը այստեղի պարագաներու փոփոխութեանց…։ Ուստի ինծի պարտքը կը համարիմ ինչ որ գիտեմ մեր կողմի պարագաներուն վրայ՝ պարզապէս պատմել, Ձեր խոհականութեան ձգելով բռնուելիք կամ արդէն բռնուած ընթացքներն, վասն որոյ զգաստութիւն ընել։ Նախ որ Ձեր գիտցած պարագաներն անյայտ եղած են այն օրէն, որ Ֆուատ և Ալի մեռան, առանց մէկը ձգելու, որ զիրենք շարունակէ. ասոր տեղը երևան ելած է գայմագամ (?) պարագաները, այսինքն դարերէ ի վեր այստեղի ժողովուրդը խումբ խումբ զատ կեանք վարելէն ետքը փորձ մը եղած էր ետքի ժամանակները ասոնք միացնել և միահամուռ ժողովուրդ կազմել, առանց դիպչելու ամեն մէկ խումբի ազգային աւանդութեանց։ Այս փորձը, որ թելադրութեամբ Անգղիոյ և Գաղղիոյ ի գործ դնելու աշխատած են Ռէշիտ, Ալի և Ֆուատ, չը պսակուելով, տէրութեան զօրութիւնն ալ հին դարերու մէջ ունեցած կացութիւնը վերանորոգելու անբաւական ըլլալուն, ամեն խումբի համար միակ ընելիք մը մնացած է, այն է զատուիլ*) և ամեն մէկ խումբ իր ճամբը տեսնէ. ահա հիմակուան կացութիւնը։ Դուք քաջ գի-

*) Ընդգծումները մերն են։

տէք, Վեհափառ Տէր, որչափ ես և ինձպէսները աշխատեցան իմացնելու այս տէրութեան, որ իր շահը Հայը առաջ բերելն է, Ասիան զօրացնելով. ասոր փոխարէն իրօք սա ցուցուցին, որ թէև միտում ալ ունենան, անկարող են էական բան մը ընելու»։

«Արդի շարժման մէջ ի՞նչ ընել հարկ էր։ Երբ կը տեսնէինք պուլղարը, յոյնը, պօշնակը (բօսնիացին)՝ նմանապէս արաբացին ազգայնութեան խնդիր մէջ կը բերեն, մենք, Հայք, ի՞նչ պէտք էր որ ընէինք։ Տաճկաց հետ միանա՞լ. անցեալը արդեն ապացուցած է, որ ատոնց հետ միանալու համար ուրիշ ճար չկայ, այլ մահմետական ըլլալ, այսինքն Ազգը ուրանալ։ Ահա հայ խնդիրը այսպէս երևան ելաւ. մենք երևան չհանեցինք, պարագաները հանեցին»։

«Մենք որ մեր նախնեաց աւանդութիւնները, որոնց մէջ կան կրօնքնիս, լեզունիս և յիշատակարաններնիս, երկրպագելի կը համարիմք, ճար մը փնտռեցինք յաղթողին դիմելով, յաղթողը քաջ ճանչնալով և յաղթողին ապագային մէջ ունենալիք դիրքը աղէկ գիտնալով։ Իրեն դիմեցինք խնդիրքներով, որպէս զի մեր ազգը օրինաւոր կացութիւն մը ունենայ։ Մենք, ինչպէս որ քաջ գիտէք, ոչ թրքանալ և ոչ ռուսանալ գիտենք. հայ եմք և մինչև ի վախճան հայ պիտի մնամք։ Հայութեան նպատակին ծառայելու դիտմամբ գործեցինք և պիտի գործեմք. թէև արդիւնք ալ ձեռք չբերենք, գոնէ մէկը չի կրնար մեզ ամբաստանել, որ հայութեան պարտքը չկատարեցինք. թէև սխալինք, գոնէ պարտազանց չենք ըլլար»։

«Ձեր Սրբութիւնը կը կասկածի, որ մեր կողմէն ինքզինքնիս կամ միևնոյն բանն է՝ Ազգը կը ծախենք որու որ ըլլայ. բայց ասանկ չէ, ծախող չկայ, կարելի է առնել ուզող ըլլայ»։

«Կը սխալի՞նք արդեօք այս բռնած ընթացքնուս մէջ, բայց ինչպէ՞ս, երբ որ մեր նպատակը Ձեզի յայտնի է։

Աղէկ գիտցէք, որ այսօր Թուրքաց կառավարութիւն չկայ. միակ քրդերու հարստահարութիւն կայ Հայոց համար. միանգամայն ազգ կազմելու կամ անհետանալու խնդիրը կայ մէջտեղը։ Ասանկ պարագային մէջ քրէական յանցանք է ընդ մեզ թէ որ չգործենք»։

«Դուք, որ մեր լոյսը ըլլալու կոչուած էք, Ձեր Աթոռը, որ մեր նախնեաց սրբազան աւանդութեան կեդրոնն է բոլոր ազգայնոց համար, նաև անոնց համար, որ Ձեր Աթոռոյն հակառակ կը համարիք, պարտազանց կըլլաք թէ որ մեզ աջակից չըլլաք։ Ի՞նչ կը վախէք, մենք մահկանացու եմք. պարտք կատարելու համար միայն այս աշխարհ եկած եմք, պարտք կատարելով պէտք է կեանքերնիս կնքեմք. ահա իմ կարծիքս, իմ սկզբունքս. չեմ կարծեր որ այս մասին մէկզմէկէ զատուինք»։

«Ուրեմն, Վեհափառ Տէր, աղէկ գիտցէք, որ ոչ միայն Ռուսաց, այլ Գերմանացւոց, Անգղիացւոց, Գաղղիացւոց և բոլոր Եւրոպիոյ դիմեցինք, Ազգին համար քաղաքական ապագայ մը ճարելու համար։ Ով որ մեզի հետ է, մեզի բարեկամ է։ Մենք բնաւ մէկու մը անձնատուր չենք եղած և չեմք ըլլար. պաշտպան կը փնտռենք մեր խեղճութեանը։ Թէ որ մէկուն շահը հայու շահուն հետ կրնայ միանալ, անոր հետ, թէ որ չէ, ուրիշի հետ։ Վերջապէս մեզի առաջնորդող սկզբը ազգին շահն է։ Ձեզի համար ալ այդպէս է, տարակոյս չունիմ»։

«Ահա մեր ըրածը ու ընելիքը. կը մնայ Ձեր Վեհափառութեան իր բարձր հաւանութեամբը վաւերացնել։

«Մնամ Ձեր Բարձր Սրբազնութեան ամենախոնարհ ծառայ և որդի Սէրվիչէն»։

Իր գործնական արդիւնքովը աւելի յաջող չէր Ռուսաստան եկող միւս հայ պատուիրակի՝ Նար-Բէյի վրայ դրուած յանձնարարութիւնը։ Իզմիրլեան և Նար-Բէյ միասին էին եկել Օդեսա, որտեղից առաջինը մեկնել էր Թիֆլիս և Էջմիածին իսկ երկրորդն ուղղակի

Պետերբուրգ։ Իզմիրլեան ի մէջ այլոց խօսել էր կաթողիկոսին և Մանկունուն՝ Նար-Բէյի ուղևորութեան նպատակի մասին՝ և խնդրել, որ նրանք աջակցեն ինչպէս և որչափ հնարաւոր էր։ Ըստ այսմ Նար-Բէյ էլ ամբողջ երկու շաբաթ Պետերբուրգում նստած էջմիածնից հրահանգի էր սպասում։ Եւ երբ տեսաւ, թէ էջմիածինը չէզոք է մնում, իսկ Կ. Պոլսից էլ այդ միջոցին նոր հրահանգ էր եկել, որին կցուած էր մի կարևոր յիշատակագիր, նա այլ ևս չսպասեց և սկսեց իր վրայ դրուած յանձնարարութեան կատարման։ Նար-Բէյ հրահանգ ունէր ռուսական կառավարութեան հաւանութեանը ներկայացնել մի ծրագիր Հայաստանի վարչական ինքնօրինութեան մասին և միանգամայն պիտի խնդրէր, որ ռուսական զօրքը Հայաստանում իր գրաւած տեղերից չհեռանայ, մինչև որ Հայաստանի ինքնավարութիւնը չիրագործուի....։

Ահա այն ծրագիրը, որ Նար-Բէյ ներկայացրեց Պետերբուրգի վարչական բարձր շրջաններին։

Ա. Հայաստանը պիտի ունենայ ընդհանուր կառավարիչ, անպատճառ հայ-լուսաւորչական, որին պիտի ընտրէ սուլթանը ռուսական ցարի հաճութեամբ։ Կառավարիչը պիտի կոչուի մարզպան և վալի, պիտի ունենայ «միւշիրի» աստիճան։

Բ. Հայաստանի նահանգապետներն և գաւառապետները նոյնպէս լուսաւորչական պիտի լինեն, բայց սրանք պիտի ընտրուեն Հայաստանի Երեսփոխանական ժողովից և վաւերացուեն Բ. Դռնից։

Գ. Երկրի կարգապահութիւնը հայոց ձեռք պիտի լինի. ոստիկանութիւնը հայերից պիտի կազմուի։

Դ. Դատարանները շէրիաթից ազատ պիտի լինեն և պիտի գտնուեն հայ դատաւորների նախագահութեան տակ։

Ե. Քիւրդ արտօնեալների (չօրբաջը, դէրէբէյի) արտօնութիւնների ջնջումը։

Զ. Տուրքերի նոր և արդար բաշխում։

Է. Վաքըֆի (մահմեդական հոգևորական կալուածք) բարեկարգութիւն. առհասարակ կալուածական օրէնքի վերաքննութիւն։

Ը. Թրքերի գինաթափումը Հայաստանում։

Թ. Հայաստանի համար վարչական նոր կանոնագրութիւն, որը պիտի վաւերացնէ սուլթանը՝ Ռուսաստանի հաւանութեամբ։ Եւ վերջապէս

Ժ. Զէյթունի հնգադարեան ինքնավարութեան երաշխաւորումը։

Այս ծրագրում երկու կէտ կայ առանձնապէս ուշադրութեան արժանի։ Նախ՝ այն մեծ վստահութիւնն է, որ Կ. Պոլսի ժողովը (պատրիարքն և խորհրդակիցները) ըստ երևոյթին ունի մի կողմից իր դատի արդարութեան և միւս կողմից քաղաքական հանգամանքների նպաստաւորութեան մասին, այլապէս այնքան խորին լաւատեսութեամբ տոգորուած գլխաւորները չէր անի և ըստ այնմ էլ ծրագիրներ չէր կազմի և չէր ներկայացնի։ Երկրորդ՝ այն նոր քաղաքականութիւնը, թէ Հայաստանի ինքնավարութիւնը Ռուսաստանի հաւանութեամբ և նրա պաշտպանութեան տակ միայն կարելի է իրականացնել, ուստի նրա հաճութիւնը գրաւելու համար էլ ծրագրում գրուած էին համապատասխան կէտեր, ինչպէս «ցարի հաճութեամբ», «Ռուսաստանի հաւանութեամբ» և այլն։

Նար-Բէյի խօսքից՝ նրա բարեկամ Իգնատիևը արդէն Պետերբուրգ էր վերադարձել, որով և կարողացաւ դիւրացնել նրա մուտքը պետական բարձր շրջանները։ Մարտի 14-ին նա ընդունվում է իշխան Գորչակովից, որին ներկայացնում է յիշատակագիր Հայաստանի ինքնավարութեան մասին և թախանձանօք խնդրում է նրա աջակցութիւնը։ Ըստ Նար-Բէյի՝ Գորչակով ասել է նրան, թէ վեհ. կայսրն և ինքը Գորչակով մեծապէս ցանկանում էին, որ Հայկական խնդիրն ևս

«լաւագոյն լուծումն» ստանայ, բայց Անգլիան իր նենգաւոր ընթացքով խոչընդոտ էր հանդիսանում և Թիւրքիային ոյժ էր տալիս ի վնաս իր հարստահարուած քրիստոնեայ հպատակներին, որոնց մէջ էին և հայերը։

Գօրչակօվ փոխադարձ այցելութիւն է տալիս Նար-Բէյին և յաջողեցնում է, որ յաղթական ինքնակալն ևս ընդունի նրան։

Մարտի 18-ին Աղէքսանդր Բ. կայսրը ունկնդրութիւն է շնորհում նրան։ Ահա ինչպէս է նկարագրում ինքը Նար-Բէյ այս ունկնդրութիւնը։

«Բազումք սպասէին ի գահլիճի անդ ընդունելութեան, այլ մուծին զիս նախ քան զամենեսին առաջի մեծի ինքնակալին։ «Ճանաչեմ զձեզ,—ասաց,—և ուրախ եմ տեսանել զձեզ այսր վերստին։ Տեսի զյիշատակագիր ձեր և եթէ հանգամանք քաղաքական ներեսցեն, կամիմ զի գոհ լինիցի ազգն Հայոց յաջողագային»։ Ինարց ապա թէ ես կարծէք երաշխաւորել ձեզ զբարեկեցութիւն 16-րդ յօդուածոյ դաշնադրի Սան-Ստեֆանոյի։ Պատասխանի ետու թէ բազմիցս պատրեալ ի Տաճկաց, չկարեմք այլ ևս յուսալ ի խաբուսպատիր խոստմունս նոցա. թող զի՛ և եթէ կամիցին իսկ չկարասցեն զսպել զՔիւրտս և զայլազգի վոհմակս բարբարոսաց, բնակելոց ի Հայաստան։ Ապա ի վերայ բերի թէ չիք մեզ այլ օրինակ զերծանիլ ի հարստահարութեանց, բայց եթէ պաշտպանութեամբ Ռուսիոյ և յերկարացմամբ զինուորական գրաւման, մինչև հաստատեսցի ի Հայաստան ինքնավարական իմն վարչութիւն պէս գունակ Լիբանանին»։ Այստեղ Նար-Բէյ ներկայացնում է կայսեր՝ Հայաստանի ինքնավարութեան ծրագիրը։ Նա այսպէս է շարունակում իր նկարագրութիւնը. «Ընկալաւ ինքնակալն զծրագիրն և յակն արկեալ մի անգամ, «բարւոք է,—ասէ,—ջանն գործեսցուք։ Աղօթս արարէք զի օգնեսցէ ինձ Աստուած»։ Յայտ է թէ ջան ի վար ար-

կի տալ միշտ զպատշաճական պատասխանիս։ Յիշեցուցի նմա (որ և Կորչաքով իշխանի) չընդդիմանալ մեր ազգովիմք, չառնուլ զէն ընդդէմ սորոյ Ռուսին, զոր նա ինքն ինքնակալն ունէր ի ձեռին ի դրօշ ազատարար քրիստոնէութեան։ «Գովելի էր քաջութիւն այդ Ձեր» ասէ։ Յաւելի քաղաքավարութեամբ և զգուշաւոր բանիւք շնորհակալ լինել զի կամեցաւ ի հանդէս ածել յանս աշխարհի զհաւատարմութիւն և զքաջութիւն հայ զօրավարաց։ «Նոքա զոհ արարին զիս» պատասխանեաց ինքնակալն սիրով հաճութեամբ դիմաց։ «Մի ևս զբխաւոր խնդիր մեր ասեմ ի Վեհ. Տեառնէդ այս է, զի բարեհաճեսջիք զիւրացուցանել Առաքելական Աթոռոյ մերոյ տարածել զլուսաբանել և զփրկաւէտ ազդեցութիւն իւր ի վերայ ամենայն Հայոց»։ «Այլ,—ասէ,—ապաքէն դուք ինքնին ընդդէմ կայք այդմ, եւ այս ի մեծ վնաս Ձեզ»։ «Ներեսցէ ինձ Վեհափառութիւնդ տալ գիտել թէ ազգ մեր զՍ. Աթոռն իւր համարի կեդրոն կրօնական միութեան իւրոյ, և ցանկալով ցանկայ զի սրբազնագոյն գահակալն նորա ունիցի զնախնին իւր ընդարձակ և լիուլի հովուապետական իշխանութիւն ի վերայ մեր, զի այն է օգուտ մեր և շահ և փրկութիւն. այլ Բ. Դուռն ընդդիմանայ այդմ, և կոմսն Իկնատիէվ վկայ է բղձից այսց մերոց, և բուռն է հակառակութիւն տաճկաց ոչ միայն յընթացս տասնևհինգամեայ պաշտօնավարութեան իւրոյ, այլ և նոյն իսկ յաւուրս վերջինս կնքելոյ դաշնադրին։ Աղէ Վեհափառութիւն Ձեր բարեհաճեսցի տալ ի գլուխ հանել և զայս մեր խնդիր, զոր կենսական համարիմք, ի բարգաւաճումն Եկեղեցւոյ մերոյ»։ «Այո, կենսական խնդիր է այդ,—յաւել ինքնակալն,—և զկարևորն հոգասցուք ի ժամանակին»։ «Ներեսցէ ինձ Վեհափառ Տէրդ,—ասացի,—զի տարջացայ ասել համազգեացս զիրալիր համակրանս և զխոստմունս զոր բախտ եղև ինձ լսել յՕգոստափառ շրթանց Ձերոց»։ «Ասացեք համազգեացդ զի ես սիրեմ

զազգն Հայոց», պատասխանի եւ կայսրն։ Եւ մինչ խոնարհէաք միմեանց, յափշտակեցի զձեռն նորա և համբուրելով գոչեցի. «Օծեալդ Աստուծոյ, թոյլ տուր զի յանուն չորս միլիոն տառապեալ հայոց համբուրեցից զաջն զայն, որ տայ փրկութիւն Հայաստանի»։ «Այո, ունիցիք դուք միշտ զիմ համակրութիւն, վստահ լերուք յիմ վերայ»։ Այս եղեն վերջին բանք ինքնակալին, և ես մեկնեցայ արտասուագին խնդութեամբ, խնդրելով ի Տեառնէ և բարեմաղթական բանս ինչ ասելով վասն կենաց Նորա և Օգոստափառ Ընտանեացն և Զաւակացն»*)։

Վեհանձն կայսեր այս սիրալիր ընդունելութիւնը Նար-Բէյ անմիջապէս հեռագրում է Կ. Պոլիս Ներսէս պատրիարքին։

Հետեւեալ կիրակի օրը, ապրիլի 23-ին, հայ եկեղեցում պատարագի ժամանակ Նար-Բէյ իր քարոզումն էլ աւետեց կայսեր այս բարեհաճութիւնը հայերի նըկատմամբ։

Սակայն ռուս պետական անձերի հետ Նար-Բէյի տեսակցութեան արդիւնքն այն եղաւ, որ նա համոզուեց, թէ իր ներկայացրած ինքնավարութեան ծրագիրը հաւանականութիւն չունէր յաջողելու...։ Ոչ միայն նրա իրականացումը Ռուսաստանի բարի կամքից և առատաձեռնութիւնից չէր կախուած, այլ մինչև իսկ ռուսական դիւանագէտները չէին խոստանում, թէ յառաջիկայ կօնգրէսում պիտի պաշտպանէին այդ ծրագիրը։ Եւ հայ եպիսկոպոս-պատուիրակը գրեց Կ. Պոլիս Վարժապետեանին, թէ, չնայելով իրան եղած սիրալիր ընդունելութեան, գործնականի մասին այնքան անորոշ պատասխաններ էր ստացել, որ ինքն իսկ գոհ չէր՝ և թէ հետևաբար իր վրայ դրուած յանձնարարութիւնն ակնկալուած յաջողութիւնը չէր ունեցել։

*) Նար-Բէյի զեկուցումը Գէորգ կաթողիկոսին Պետերբուրգից, 21 մարտի 1878 թ.։

Նար-Բէյի պատուիրակութեան այս անյաջողութիւնը վհատում պատճառեց Կ. Պոլսում, ուր առանց այն էլ նրա պատճառով ազգային վարչութիւնն և առանձնապէս պատրիարքը շատ նեղն էին դրուած թիւրք կառավարութեան կողմից։ Սադրազամը բացարձակապէս իր խորին դժգոհութիւնն էր յայտնել Նար-Բէյի այս առաքելութեան նկատմամբ և պահանջել էր, որ անմիջապէս վերադառնայ նա այնտեղից։ Կառավարութեան այս զայրոյթն ի նկատի ունենալով, բարեկամներ գրել էին Նար-Բէյին, որ նա մի առ ժամանակ չվերադառնայ Կ. Պոլիս, մինչև որ հանգամանքները փոխուեն։ Ներսէս պատրիարքը էլ համապատասխան հրահանգ ուղարկեց նրան, և Նար-Բէյ ըստ այնմ Պետերբուրգից մեկնելով անցաւ Եւրոպա և միացաւ այնտեղ Խրիմեանին։

Այժմ տեսնենք, թէ ինչ վերաբերմունք ցոյց տուին ռուսահայերն և բուն ռուս ժողովուրդը Թիւրքահայոց դատին՝ Սան-Ստեֆանոյի դաշնագրի առթիւ։

Հայկական Խնդրում Գէորգ կաթողիկոսի ի սկզբանէ ի վեր՝ գլխաւորապէս Մանկունու ազդեցութեան տակ՝ ցոյց տուած անտարբերութիւնը միայն Թիւրքահայերին չէ, որ վիշտ էր պատճառում։ Ռուսահայերի մեծ մասը նոյնպէս եռանդով իր աչքերն ուղղած էր այն կողմը, նոյն ոգևորութեամբ հետեւում էր պօլսական խմբի կատարած ջանքերին և նոյնպիսի իղձեր էր սնուցանում Թիւրքական Հայաստանի ժողովրդի վիճակի բարւոքման մասին, ինչպիսին ունէին պօլսեցիք։ Ուստի ռուսահայերն ևս պահանջում էին, որ Գէորգ Դ. ազդուապէս աջակցի այս ուղղութեամբ կատարուած ջանքերին, նոյն իսկ ինքնաբերաբար հարկ եղած քայլերն անելով*)։

*) Այն միջոցին, 1878 փետր. 15 թուով Բաքուից մի հետաքրքրական նամակ է ուղղուած Գէորգ կաթողիկոսին, «Հայկազի» ստորագրութեամբ, որից աւելորդ չենք համարում մի քանի հատուածներ յառաջ բերել։

Ռուսահայ լրագիրներն ևս մի բանում համերաշխ էին, այն է՝ որ անհրաժեշտ էր ինքնավարութիւն պահանջել Հայաստանի համար։ «Մշակում» Գրիգոր Արծրունին երկարօրէն զբաղվում էր Թիւրքահայերի վիճակով և գտնում էր, թէ կամ Հայաստանին տեղական լիակատար ինքնավարութիւն պէտք էր տալ, և կամ, եթէ այս անկարելի էր, այն ժամանակ լաւագոյն էր, որ երկիրն ուղղակի միացուէր Ռուսաստանին։ Թիւրք կառավարութեան սովորական տիրապետութեան տակ Հայաստանի վիճակի ոչ մի բարեփոխում հաւանական չէր գտնում նա։ «Մեղու» կողմնակից էր առաջին միջոցին, այսինքն ինքնավարութեան, բայց ոչ երկրորդին։ Երբ յայտնի եղաւ, որ Սան-Ստեֆանոյի դաշնագրում ոչ մին է որոշուած և ոչ միւսը, «Մշակ», ընդհանրապէս դժգոհ 16-րդ յօդուածից, խորհուրդ էր տալիս, որ գոնէ այսուհետև Կ. Պոլսի ազգային վարչու-

«Բազմազարեան և բազմակնճիռն Արևելեան Հարցը լուծուելու վրայ է. գրեթէ բոլոր ազգերն անպատմելի հոգածութեամբ և զգուշաւոր ու հեռատես պատրաստականութեամբ հետազօտում են այդ լուծման եղանակը, ընթացքը և նրա հետևանքը։ Թէ մեծամեծ և թէ փոքրիկ ազգութիւններն աշխատում են որքան հնար է շատ օգուտներ քաղել այս դէպքից, որովհետև այդպիսի դէպքերը հազուադէպ են և անգին են ազգերի գոյութեան համար նոցա կեանքի պատմութեան մէջ... Ամենայն տեղերի հայեր մեծ յոյս ունէին, որ պատերազմից յետոյ Հայաստանն ևս իւր հաւատարմութեան և կրած անթիւ չարիքների փոխարէն մի բան կը ստանայ իւր կենտրոնում իւր ազգաց պատսպարութեան համար։ Իւրաքանչիւր օր մի հեռագիր և լրագիր խաղաղութեան պայմանների մասին զանազան լուրեր բերելով, մեծ զարմանքով և սրտի ցաւով տեսնում ենք, որ ոչ մի տեղ հայի և Հայաստանի անունը չկայ... Ձեր օրով աշխարհի մէջ մեծ պատմական իրողութիւն է կատարվում... Արդեօք մի հոգացողութիւն, մի նախագիծ ունիք պատրաստած, մի որևիցէ գործնական քայլ արած կամ անելու էք այս մասին։ Ռուսաց կայսեր և միւս եւրոպական տէրութիւնների առջև միջնորդելու երաշխութեամբ պաշտպանելու էք Հայկական խնդիրը... Բայց առ հասարակ ամենքը

թիւնն իր գլխաւոր ուշադրութիւնը կենտրոնացնէր Հայաստանի վրայ, և առաջարկում էր, որ Ազգային Երեսփոխանական Ժողովը տեղափոխուի Վան կամ Էրզրում։ Արծրունին մտածում էր, թէ եթէ վարչական-տնտեսական ինքնավարութիւն չէր մտցվում այնտեղ, այս միջոցով գէթ Ազգային Սահմանադրութեան ծրագրած սկզբունքներն աւելի շուտով մատչելի կը դառնային մայր երկրի ժողովրդին։ Որչափ և բաղձալի լինէր այսպիսի մի ծրագրի իրագործումը, բայց տարակոյս չկար, որ նրա իրականացումը դժուարին էր և մեծ խոչընդոտների պիտի հանդիպէր։

Բուն ռուս լրագիրներն ևս 1877—1878-ին յաճախ զբաղվում էին Հայկական Հարցով և շատերը նոյնպէս կողմնակից էին Հայաստանին ինքնավարութիւն տրուելուն։ Եղան այնպիսիներն, որոնք նոյն իսկ անկախութիւն էին պահանջում Հայաստանի համար։ «Московскія Вѣдомости» հանրածանօթ պահպանողական լրագիրն

կարծում են, որ դուք անհոգ նստած էք և միայն ձեր անձնական հանգստութեան վրայ էք մտածում... Անցեալ ամառ (1877) Բաքուի հասարակութիւնը մի բազմաստորագիր աղերսով դիմեց Ձեր Վեհափառութեանը և աղաչեց, որ հոգար ռուսահայոց խորհրդով մի պատրաստութիւն կազմակերպել և փոքրոր ուղարկել ուր հարկն էր։ Այս աղերսին Դուք ինչ նշանակութիւն տուիք։ Դուք պատասխան՝ անգամ չտուիք հասարակութեան, որը երկար խորհրդակցելուց յետոյ էր որոշում տալ Ձեզ դիմելու... Այս տասնամեակ պատերազմի ժամանակ Ռուսաստանի մեր հոգևորականութիւնը բոլորովին անտարբեր մնաց, ոչինչ չգործեց, երբէք գործնական կերպով չաշխատեց մեր թշուառ եղբայրների աղաղակի համար։ Կարծում ենք, որ նոքա ամենքը Ձեզ էին նայում, Ձեր քաղաքականութեանն էին հետևում որ լուռ և անտարբեր նստեցին մինչև այժմ. եթէ ոչ հոգևորականութիւնը կարող էր մեծ գործ գործել, եթէ հետևէր իւր աշխարհական եղբայրների քաղաքականութեանը։ ...Տէրութեան (Ռուսաստանի) քաղաքականութիւնը ոչ միայն չէր արգելի, այլ և ամենայն ուրախութեամբ կօժանդակէր մեզ գործ տեսնելու...»։

(Կաթող. Դիւան)

առաջինն եղաւ, որ 1876-ից սկսեց զբաղուել Արևե-լեան խնդրով և նպաստաւոր յօդուածներ էր գրում հայերի մասին, թէև նա մինչև այն ժամանակ առան-ձին համակրանք չէր տածում նրանց նկատմամբ։ Ան-շուշտ արտաքին հանգամանքներից դրդուած, նա՛ հա-յերի համար էլ նոյն իրաւունքներն էր պահանջում, ինչ որ պիտի տրուէին բալկանեանքրիստոնեաներին։ Միթէ,—ասում էր ռուս լրագիրը,—հայերը պիտի չըս-տանան քաղաքական իրաւունքներ, լոկ այն պատճա-ռով, որովհետև նրանք տանջուել են, չարչարուել են, բայց համբերել են և չեն ապստամբուել։ Նրանից վերջ ուրիշ ռուս լրագիրներ ևս սկսեցին հետաքրքրուել Հայ-կական խնդրով և շարունակ հրատարակում էին լու-րեր, տեղեկութիւններ և յաճախ ընդարձակ յօդուած-ներ թէ ինքնուրոյն և թէ Կովկասի և Եւրոպայի լրա-գիրներից քաղուած։ Ռուսական լրագիրներից շատերն այժմ հերքում էին այն «սխալ և ծուռ գաղափարնե-րն», որոնք մինչև հիմայ կազմուել են «այս աշխատա-սէր և ընդունակ ազգի» վրայ։ Ռուս օրթոդոքս եկեղե-ցու բերան թերթերն ևս նպաստաւոր էին Հայկական Դատին։ «Православное Обозрѣніе» կրօնական ամսա-գրի մարտի (1878) համարում Թէօֆան եպիսկոպոսն, որ 10 տարուց աւելի բնակուել էր Արևելքում, առաջար-կում էր... «Փոքր Ասիայում վերականգնել հայկական թագաւորութիւնը»։ Այս մտքով էր խօսում այժմ նաև Պետերբուրգի կիսապաշտօնական «С.-Петербургскія Вѣдомости» պահպանողական թերթն, որ դրանից քիչ ժամանակ յառաջ հայերի դէմ էր գրել և այս պատճա-ռով վիճաբանութիւն էր ունեցել Պետերբուրգի յայտնի «Голосъ» յառաջդիմական լրագրի հետ, որ միշտ հա-մակիր էր հայոց և պաշտպանում էր հայ ժողովուրդն ուրիշների անիրաւ յարձակումներից։ Այս նպաստաւոր տրամադրութեան ներքին շարժառիթը պարզուած ենք տեսնում Բրիւսէլի «Le Nerd» լրագրում, որ ռուսական

հայեացքի արտայայտիչն էր համարվում արտասահ-մանում։ «Le Nord» առաջարկում էր Փոքր Ասիայում կազմակերպել հայկական իշխանութիւն, «որն, անկախ թէ հարկատու, փոքր և թոյլ լինելով միշտ Ռուսաս-տանի ազդեցութեան տակ պիտի գտնուի և նրանից պիտի ստանայ իր քարոյական ու մտաւոր, ինչպէս և նիւթական ու քաղաքական կենդանութիւնն և միևնոյն ժամանակ մի նախադուռ պիտի կազմէ Թիւրքերի դէմ»։ Եւ ճիշտ այս հիման վրայ էլ Անգլիան պիտի հակառակէր այսպիսի ինքնօրէն Հայաստանի կազմա-կերպման...։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Օսմանեան Խորհրդարանի երկրորդ շրջանը.—Հայ երեսփոխաններն և նրանց քննադատական ճառերը. — Խիստ քննադատութիւն և յարձակում կառավարութեան դէմ. — Խորհրդարանի փակումն և փակման պատճառները. —Աբդիւլ Համիդի վերաբերմունքը. Նրա ծայրայեղ կասկածոտութիւնը։

Պատերազմի տաք միջոցին, բացուեց Օսմանեան Խորհրդարանի երկրորդ շրջանը։ Ըստ սահմանադրու-թեան՝ նոյեմբերի սկիզբը գումարուած պիտի լինէր նա արդէն, բայց իրօք միայն դեկտեմբերի սկիզբը կարո-ղացաւ ժողովուել։ Ընտրութիւնները դարձեալ նախկին ձևով, այն է՝ ժամանակաւոր կանոնների համաձայն կատարուեցին, որովհետև Խորհրդարանի Ա. շրջանի քուէարկած ընտրողական օրէնքը կառավարութեան կողմից չէր ընդունուել։

Նոր երեսփոխանների թիւն այս անգամ 107 էր, որոնց 60-ը մահմեդական և 47 ոչ-մահմեդական։ Հա-

յերն այս անգամ ևս մեծ յաջողութիւն ունեցան և համեմատաբար մեծ թուով ներկայացուցիչ ուղարկեցին նոր շրջանի համար։ Այս երեսփոխաններն էին՝

Կ. Պօլսից—1) Յովհ. Ալլահվերդի, 2) Ալէքսան Ծաղայեան և 3) Յակոբ Գազազեան (որ յետոյ դարձաւ Աբդիւլ Համիդի հաւատարիմ բարձր պաշտօնեայ և ծառայեց նրան մեծ անձնուիրութեամբ իբրև Անձնական Գանձի մինիստր և կարճ ժամանակով նաև Ելևմտից մինիստր)։

Սեբաստիայից—4) Գէորգ Փափազեան,
Տրապիզոնից—5) Յովհ. Կիւրեղեան,
Կարինից—6) Խաչատուր Ներսիսեան,
Երզնկայից—7) Կիրակոս Գազանճեան,
Ադրիանուպօլսից—8) Ռուբէն,
Հալէպից—9) Մանուկ Խարաճեան,
Դանուբեան նահանգից—10) Յակոբ Գազանճեան,
Բրուսայից—11) Եավրուեան,
Ադանայից—12) Պզտիկեան և
Զմիւռնիայից—13) Յակոբ Սպարթալեան։

Խորհրդարանի այս երկրորդ շրջանը սուլթան Համիդ անձամբ բացաւ և գահական ճառում չվարանեց յայտնելու, թէ «օրէնսդրական և քաղաքական գործերում հշմարտութեան վերահասու լինելու, ինչպէս և պետական ու հանրային շահերը պաշտպանելու համար անհրաժեշտ է խօսքի ազատութիւնը...»։ Իր ճառը վերջացրեց աւելի մեծ կեղծիքով, այն է թէ «Տէրութեան միակ փրկութիւնը Սահմանադրութեան գործադրութեան մէջն է կայանում...»*)։

Ցեղերի հաւասարութեան հիմնական սկզբունքով իբր թէ ոգորուած նոր մահմեդական երեսփոխանները դժգոհութեան ձայն բարձրացրին, երբ յայտնուեց,

*) Սայիդ փաշա (նախկին սադրազամ) իր Յիշողութիւնների մէջ ասում է, թէ ինքն է խմբագրել սուլթանի խօսած այս ճառը։ («Սայիդ փաշանըն Խաթըրաթը», Ա. հատ. էջ 14)։

որ ամենածեր երեսփոխանն, որ ժամանակաւորապէս նախագահական աթոռը պիտի գրաւէր, պատահմամբ քրիստոնեայ էր, մի յոյն, Միխալաքիազգանունով։

Վերջնական ընտրութեան ժամանակ այնուամենայնիւ մի քրիստոնեայ փոխ-նախագահ ևս անցաւ, որ էր Յովհաննէս Ալլահվէրդի։

1878 յունուարի 12-ի և 19-ի նիստերում Թիւրք պետական պաշտօնեաների զեղծումները դարձեալ խիստ քննադատութեան առարկայ դարձան, որին մասնակցեցին երկու հայ երեսփոխան, Խարաճեան և Գազազեան։ Բայց ընդդիմադիրների բուն պարագլուխը մի ազատասէր մարդ էր, Ահմէդ էֆ. Եէնիշէհիրլիզադէ, որ ուղղակի նրանց՝ այդ պաշտօնեաներին գող և կաշառակեր էր անուանում։ «Իմ գաւառում (Այդընի վիլայէթ), —ասում էր նա,—կառավարութեան պաշտօնեաները հարստահարում են ժողովուրդը, դատարանների պաշտօնեաները գողանում իրանց իբրև աւանդ յանձնուած գումարները, իսկ ոստիկաններն ուղղակի կեղեքում են ժողովուրդը...»։ Եւ հայ ու թիւրք երեսփոխաններ փոխըն ի փոխ երևան էին հանում իրանց գաւառներում պաշտօնեաների կատարած զեղծումներն և պահանջում էին նրանց պաշտօնանկութիւնը։ Բայց այս պահանջումներն և բողոքներն անլսելի էին մնում կառավարութեան կողմից, որ արդարացնում էր իրան, ասելով թէ պատերազմի ժամանակ որևէ բարենորոգում անկարող է կատարել։ Այնուամենայնիւ Խորհրդարանը գահական ճառի պատասխանում իր դժգոհութիւնը յայտնեց գործադիր իշխանութեան (ալէթը իջրաիյէ) անկարողութեան մասին։

Յունուարի 28-ի նիստում հայ երեսփոխանները յարմար առթից օգտուելով անվախ կերպով յուզեցին գաւառական հարստահարութիւնների խնդիրը։ Խարաճեան երկարօրէն բացատրելով միւլթեզիմների (հարկահաւաքների) գործած զեղծումներն՝ առաջարկում էր,

հաստատելու։ Եւ երբ ձայները տարապայման բարձրանան և զայն հոն թողուլ անհնար ըլլայ, կամ ուրիշ տեղի մը հետ փոխել (բէջայիշ) և կամ անկից հանելով անմիջապէս ուրիշ լաւագոյն պաշտօնի մը դնելու։

«Գ. Տէրութեան և ազգին վնասակար պաշտօնէից անպատիժ մնալն։

«Դ. Կաշառառուի և կաշառատուի համար հաստատեալ կանոնի ծուռ ըլլալը, որով պաշտօնատարք կաշառակերութենէ չեն վախնար։

«Ե. Կողմնակալութիւն, պաշտպանութիւն (իլթիմաս) և մարդ շահեցնելու սովորութիւնը...»*)։

Այս պատճառներին իբրև բացատրութիւն ճառախօսը բազմաթիւ փաստեր է յառաջ բերում, մանաւանդ վերջին ժամանակները կատարուած բռնութեան և անկարգութեան դէպքերից, և ապա աւելացնում է. «Ասոնք և ասոնց նման հազարաւոր զեղծմունք տեսնող ժողովրդեան քով համբերութիւն կը մնայ»։

Ուշադրութեան արժանի է, որ այս վաղամեռ խորհրդարանի հայ երեսփոխանները գանգատուելով հանդերձ թրքական վարչութեան դէմ՝ միևնոյն ժամանակ իրանք իրանց ջերմ օսմանցի էին ցոյց տալիս։ Երբ պատերազմը մօտենում էր իր վախճանին և լուրեր էին տարածուել, թէ Թիւրքիան պիտի ստիպուէր իր երկրի մի մասը զիջել յաղթական Ռուսաստանին, Հալէպի երեսփոխանը, «յանուն 500,000 հայոց, որոնք կը գտնուին Հայաստանի մէջ և որոնց նախնիքը 500 տարիէ ի վեր այնքան հաւատարմութեամբ ծառայեր են օսմանեան պետութեան, յանուն և Երեսփոխանական Ժողովոյն մէջ գտնուած իր ընկերներուն» խնդրեց, որ «եթէ Ռուսիոյ տէրութեան պատերազմական ծախք հարկ ըլլայ վճարել, կը խնդրենք վեհափառ սուլթանէն, որ Հայաստանէն երկիր չտրուի, տեղը դրամ վճա-

*) «Մասիս», 1878 № 2082

րուի. և եթէ այս անհնար ըլլայ, մեր բողոքն յանուն ազգին՝ բարեկամ տէրութեանց ուշադրութեանը ներկայացուի։ Իսկ եթէ ռուսաց անպատճառ հող պիտի տրուի, կը խնդրենք, որ, չտրուի Հայաստանէն, տէրութեան ամեն ժամանակ տագնապ բերող կողմերէն տրուի»*)։ Հայ երեսփոխանների այս բողոքը մասամբ անշուշտ հիմնուած էր նաև այն երկիւղի վրայ, թէ եթէ Թրք. Հայաստանը Ռուսաստանի իշխանութեան տակ մտնէ, այնտեղ հայութիւնն իբրև առանձին ազգ իր գոյութիւնը վտանգի պիտի ենթարկէ, կորցնելով իր մայրենի լեզուն և նախնեաց հաւատը...։ Իսկ թիւրք երեսփոխաններն այդ խօսքերն ամբողջապէս նրանց օսմանեան հայրենասիրութեան վերագրելով չափազանց գոհ մնացին։ Խորհրդարանն որոշեց, որ այս խնդիրը ներկայացուի կառավարութեան նկատառութեան։

Որչափ էլ կառավարութեան թուլութեան, անկարգութեան և պաշտօնեաների զեղծումների դէմ խօսուածները անհաճոյ էին սուլթանին և կառավարութեան, այնու ամենայնիւ մինչև մի աստիճան տանելի էին, և այդ պատճառով Խորհրդարանի գոյութիւնը չէր վտանգուի, եթէ չլինէր ուրիշ, աւելի ծանրակշիռ պահանջում Խորհրդարանի կողմից․ Կառավարութիւնն ամենից աւելի անհանգստացնողը Խորհրդարանի պատերազմական գործերի մէջ խառնուելն և յատկապէս բանակի կրած անյաջողութիւնների պատճառները քննելն էր, որ մինիստրութեան համար չափազանց անցանկանալի էր համարվում, թէև Խորհրդարանն այդ խիստ հարցապնդումներն և նոյն իսկ յարձակումներն անելով պարզապէս ժողովրդի մէջ տիրող զգացմունքին արձագանգ էր հանդիսանում։ Պատերազմի առաջին շրջանումն իսկ, երբ օսմանեան զէնքը համեմատաբար

*) Հ. Մ. Նուրիխան, «Ժամ. Պատմ.», Գ. հ. էջ 552.

յաջող վիճակի մէջ էր, մի Թիւրք երեսփոխան հար-
ցումներ էր ուղղել բանակի հրամանատարների անըն-
դունակութեան մասին և առանձնապէս յարձակուել էր
պատերազմական մինիստրի և թնդանօթարանի միւշիր
Մահմուդ փաշայի դէմ։ Երբ Արդահանի գրաւման լուրն
հասաւ, դժգոհութեան ձայներն այդ փաշաների դէմ ևս
աւելի մեծացաւ և վերջապէս նրանց անկումն յառաջ
բերաւ։ Խորհրդարանի երկրորդ շրջանում պատերազ-
մական գործողութիւնների վարման եղանակի դէմ շատ
աւելի խիստ ձայներ լսուեցին, որոնք պահանջում
էին, որ կառավարութիւնը բացատրութիւն տայ այդ
մասին Խորհրդարանին։ Երբ որոշուեց, որ պարտուող
գլխաւորական հրամանատարներից ոմանք պատերազ-
մական ատեանի առջև դատուին, Խորհրդարանը պա-
հանջեց, որ դատավարութիւնը հրապարակային լինի և
ոչ գաղտնի. իսկ հայ երեսփոխաններից մին յարմար
էր համարում, որ Օսման փաշան լինի պատերազմական
ատեանի նախագահն՝ իբրև ամենից արժանաւոր զի-
նուորականը։ Այս պահանջումները խիստ կերպով նե-
ղացնում էին կառավարութիւնը։ Եւ ահա 1878 փետ-
րուար 2/14-ին առաջին մինիստր Ահմէդ Վէֆիկ փա-
շան սուլթանական մի հրաման է կարդում, որով Խոր-
հրդարանը լուծվում էր անորոշ ժամանակով։ Իբրև
պատճառ յառաջ էր բերուած երկրի քաղաքական լուրջ
կացութիւնը։ Աբդիւլ Համիդի այս անակնկալ քայլը
շատ մեծ տպաւորութիւն թողեց բովանդակ Խորհրդա-
րանի վրայ։ Ոչ ոք չէր հաւատում, թէ պատճառն իրօք
այն էր, ինչ որ յիշուած էր հրամանագրի մէջ, և ա-
մենքն սկսեցին զանազան շարժառիթներ փնտռել այս
խիստ միջոցը բացատրելու համար, որովհետև արդէն
զուշակում էին, թէ փակումը ժամանակաւոր լինելու
բնոյթը չունէր։ Ոմանք հաւատացնում էին, թէ սուլ-
թանին այս խորհուրդը տուողը ռուսական կառավա-
րութիւնն էր, որի համար շատ հաճելի չէր, ասում էին,

իր դաների մօտ, Թիւրքիայում, սահմանադրական ռէ-
ժիմի հաստատումը, թէև այդ անկատար իսկ լինէր։ Իսկ
ուրիշները պնդում էին, թէ իսկական շարժառիթը
Խորհրդարանի բռնած թշնամական վերաբերմունքն էր
կառավարութեան դէմ։ Բայց ահա թէ ինչ էր գրում
այս մասին մի լուրջ եւրոպական թերթ՝ երաշխաւորե-
լով իր տուած տեղեկութեան ճշդութիւնը.

«Ռուսական կառավարութիւնն անմասն է այս
գործում։ Ճշմարիտն այս է, որ Աբդիւլ Համիդ շատ մեծ
տհաճութեամբ էր տեսնում, թէ երեսփոխաններն ազա-
տօրէն վիճում էին կառավարութեան բոլոր գործողու-
թիւնների մասին, քննադատում էին իր սիրելիներին
և այնչափ յառաջ էին գնում, որ նոյն իսկ իր մինիս-
տրների և զօրապետների դատի ենթարկուելն էին պա-
հանջում։ Վերջին ժամանակ նրա դժգոհութիւնն իր գա-
գաթնակէտին էր հասել երեք զայրացուցիչ իրողու-
թիւնների պատճառով։ Նախ՝ երբ սուլթան Համիդ սա-
դրազամութիւնը վերածեց առաջին մինիստրի (premier
ministre) պաշտօնին, Խորհրդարանը նկատողութիւն
արաւ, թէ այս փոփոխութիւնը հակասահմանադրական
գործողութիւն էր։ Երկրորդ՝ կառավարութիւնն երբ
մամուլի, վիլայէթների և պաշարման վիճակի մասին
օրինագծերը պահպանողական ոգով փոփոխելուց յետոյ
երկրորդ անգամ Խորհրդարանին ներկայացրեց, Խորհր-
դարանը դարձեալ մերժեց՝ չնայելով կառավարութեան
ստիպումներին։ Եւ վերջապէս Խորհրդարանն ամենա-
խիստ կերպ յարձակուեց սուլթանի սիրելի պատերազ-
մական մինիստր Րէուֆ փաշայի վրայ»։

«Անցեալ օր Աբդիւլ Համիդ մի մեծ ժողով էր
հրաւիրել պալատ՝ երկրի վիճակի և առանձնապէս ան-
գլիական նաւատորմղի ներս մտնելու և ռուսական բա-
նակի դէպի Կ. Պոլիս արշաւելու վերաբերեալ ամենա-
լուրջ հարցերը քննելու համար։ Մինիստրներից զատ
հրաւիրել էին նաև բոլոր նախկին մինիստրներին և

Խորհրդարանից հինգ անդամի, նախագահին, 2 փոխնախագահներին, և երկու երեսփոխանի՝ Ահմէդ էֆէնդիին և Թէձալ էֆէնդիին: Սրանց առաջինը հասարակ վաճառական էր, իսկ երկրորդը հրէայ շաքարագործ: Անշուշտ յոյս ունէին, թէ այս պարզ մարդիկն ոչ մի ընդդիմախօսութիւն պիտի չանէին կառավարութեան առաջարկութիւններին, բայց հաշիւը սխալ դուրս եկաւ...: Երբ առաջին մինիստրն երկրի դրութիւնը պարզելով ժողովականների կարծիքը հարցրեց, երեսփոխան Ահմէդ էֆէնդին ոտք ելաւ և սուլթանին մօտաւորապէս հետևեալ խօսքերն ուղղեց. «Շատ ուշ էք մեր կարծիքը հարցնում: Երբ դեռ կարելի էր աղէտի առաջն առնել, այն ժամանակ պէտք էիք մեզ հետ լըրջօրէն խորհրդակցել: Խորհրդարանը չէ կարող պատասխանատուութիւն ստանձնել այն բանի համար, որ առանց նրան է կատարուած: Արդէն Խորհրդարանի՝ զանազան խնդիրների նկատմամբ յայտնած կարծիքներին ոչ մի կարևորութիւն չէր տրուած: Նրա տուած որոշումներից ոչ մէկը չէ գործադրուած: Կրկնում եմ, Խորհրդարանը մերժում է որևէ պատասխանատուութիւն ներկայ աղէտների պատճառների մասին»:

Երբ Ահմէդ էֆէնդին խօսում էր, սուլթան Համիդ յայտնապէս սարսափելի զայրոյթ էր զգում: Նա այլ ևս անկարող եղաւ ինքն իրան զսպել և գոչեց. «Ես սխալուել եմ իմ հօրս, Աբդիւլ Մէջիդին նմանիլ ուզելով, որ ցանկանում էր բարեկարգել համոզելով և ազատական հաստատութիւններ մտցնելով: Ուստի ես պիտի հետևեմ իմ պապի՝ սուլթան Մահմուդի օրինակին: Ես էլ նրա նման տեսնում եմ, որ Աստուծոյ ինձ յանձնած ժողովուրդները միայն բիրտ ույժի միջոցով կարելի է քալեցնել»:

Ժողովը վերջացաւ թէ չէ՝ սուլթանը մինիստրներից պահանջեց, որ Խորհրդարանն ընդհատուի»*):

*) «Le Temps», 23 փետրուարի 1878.

Եւ Աբդիւլ Համիդ իր խօսքը կատարեց. այնուհետև նա ոչ միայն բիրտ ույժ գործ դրեց իր ժողովուրդները կառավարելու համար, այլ նաև խաբէութիւն և ոճիրներ՝ իր բռնապետութեան շահի համար:

Խորհրդարանը փակելու հետևեալ օրը 10 երեսփոխան, որոնց մէջ մէկը հայ էր, Խարաճեան Մանուկ, հրաման ստացան անմիջապէս իրանց քաղաքները վերադառնալ: Եւ երբ սրանք բողոքեցին, թէ այս հրամանն ընդդէմ էր Սահմանադրութեան, 48 ժամ վերջը նրանց բոլորին էլ բռնի կերպով Կ. Պոլսից դուրս վանեցին*):

Եւ այսպէս վերջ գտաւ Օսմանեան Խորհրդարանն, որի դռներն ամբողջ 30 տարի փակ մնացին Աբդիւլ Համիդի բռնաւորական ճիրանների ճնշման տակ:

Աբդիւլ Համիդի համար Խորհրդարանի անդամներն աւելի կամ պակաս արգելք էին իր սանձարձակ միահեծան իշխանավարութեան:

Սահմանադրութեան հրատարակման առաջին օրից իսկ նա աշխատեց ջլատել Խորհրդարանի գործունէութիւնն, որովհետև միայն ակամայ էր համաձայնել նրա հաստատման: Առաջին շրջանի բացման ժամանակ նա յայտնապէս նեղուած էր, ջղայնութիւն էր ցոյց տալիս և յաճախ ձեռքն իր ճակատին և մօրուքին էր տանում**): Երբ գահական ճառի ընթերցումը վերջացաւ, «ամեն մարդ սպասում էր, թէ բարի գալուստ պիտի մաղթէր երեսփոխաններին»***), բայց «մի արագ ձեռքի շարժումով ողջունեց միայն, և մտաւ իր սենեակը»****): Նրա այս վարմունքը հիասթափութիւն յառաջ բերաւ և դեռ այն ժամանակ վատ նշան համարուեց:

Օսմանեան Խորհրդարանը նման էր այն մարտի-

*) «Le Temps», 2 մարտի 1878.
**) «Le Temps», 26 մարտի 1877.
***) Նոյն:
****) De Mouy, «Lettres du Bosphore».

րոս մանուկներին, որոնց երեւան գալը գայրոյթ է պատճառում ծնողներին։ Այս ծնողները չկարենալով անմիջապէս անհետացնել այդ մանուկներին՝ արգելքի տակ են դնում նրանց, փակում են նկուղի մէջ, տանջում են, զրկում են հացից, լոյսից և կրակից մինչև այն օրը, երբ վերջին հարուածն են տալիս և սպանում, այն պատրուակով թէ այդ տղայք անուղղելի էին և լաւագոյն էր նրանց ոչնչացնել։ Ահա այսպէս է վարուած Աբդիւլ Համիդ իր Խորհրդարանի նկատմամբ»*)։

Աբդիւլ Համիդի այս բռնապետական վարմունքը մասամբ բացատրվում է այն ծայրայեղ կասկածոտութեամբ, որին նա ենթակայ է եղել իր թագաւորութեան առաջին տարուց սկսած, երբ նա շարունակ անդուլ երկիւղի և հալածանքի վախի տակ էր գտնւում։ Այս պատճառով էլ նա ոչ մի միջոց չէր խնայում իր անձն ապահովելու համար. ամեն տեղ և ամեն վայրկեան դաւադրութիւն էր երևակայում իր անձի դէմ։ Ահա ինչ է պատմում մի արժանաւոր թղթակից նրա մասին 1877-ին. «Երբ որոշուած է, թէ ծովի վրայ պտոյտ պիտի անէ, յանկարծ փոխում է միտքը. հրամայում է, թէ պատրաստութիւն տեսնեն իր որևէ ցամաքային քէօշքն այցելելու և վերջին վայրկեանին փոխում է իր որոշումն և նաւակ է նստում ծովով շրջագայելու։ Իր պալատի բոլոր սրահներում, բոլոր գաւիթներում պահակներ են դրուած։ Խալիֆի բնակած մասի բոլոր դըռների վրայ ծանր կողպէքներ են դրուած. անհիմն երկիւղը պաշարել է ամբողջապէս նրա միտքը»**)։ Երբ Եւրոպա պատուիրուած թնդանօթները պատերազմի միջոցին Կ. Պօլիս հասան, փոխանակ պատերազմի դաշտն ուղարկելու, ինչպէս սահմանուած էր, Աբդիւլ Համիդ իր պալատի, Եըլդըզի բարձունքի վրայ շարել տուեց,

*) Paul Fesch, «Constantinople aux derniers jours d'Abdul Hamid», Paris, էջ 285—6.

**) «Le Temps», 19 փետր. 1877.

բերանները քաղաքի վրայ ուղղուած։ Այդ թուականից ի վեր ամբողջ 30 տարի այս երկիւղամոլ ոճրագործն իր պալատի խորքերում փակուած էր ինչպէս Կայէնն իր գերեզմանում*), և իր եղբայր Մուրադի և իր բիւրաւոր զոհերի ուրուականները հալածում էին նրան…։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Տեղեկագիր Հայաստանի ինքնավարութեան մասին.—Դիմումներ Բ. Դրան և եւրոպական տէրութիւններին.—Եկեղեցականների և աշխարհականների դերը Հայկական Խնդրում.—Հայոց քաղաքական հայեացքներն և տարբեր ուղղութիւնները.—Ռուսասէրներ, անգլիասէրներ և թրքասէրներ.—Հայ-կաթոլիկները.—Ընդհանուր ազգային համերաշխ գործունէութիւնը.—Ներսէսի այցելութիւնը մեծ իշխանին Սան-Ստեֆանոյում.—Հայկական պատուիրակութիւն ուղարկելու որոշումը։

Հայաստանի ինքնավարութեան մասին Ներսէս պատրիարքի և իր խորհրդակիցների կազմած սկզբնական ծրագիրը՝ Ներսէս, ինչպէս արդէն յիշեցինք (Գլ. Բ.), դեռ ևս Սան-Ստեֆանոյի դաշնագրութիւնից յառաջ ներկայացրել էր Ազգ. Վարչ. Խառն ժողովին, առիթ առնելով զինուորագրութեան խնդիրը։ Նա բացատրել էր, թէ քանի որ Թրքահպատակ ուրիշ քրիստոնեայ ազգեր զանազան ցեղական և տեղական արտօնութիւններ են պահանջում, հայերը նրանցից նուազ իրաւունք չունեն նոյնանման պահանջի համար. այս հիման վրայ էլ ինք որոշել էր կառավարութիւնից խնդրել, որ Հայաստանին շնորհուի վարչական այնպիսի ձև, որպիսին

*) «L'oeil etait dans la tombe et regardait Cain» ասել է Վիկտոր Հիւգոն։

գոյութիւն ունէր Լիբանանում։

Այս առաջարկութիւնն եռանդուն կուսակիցներ գըտաւ Խառն Ժողովում, բայց Մեծամասնութիւնն անյարմար համարեց, որ այն ժամանակի պարագաներում պաշտօնապէս այդօրինակ պահանջ դրուի կառավարութեան։ Այնուամենայնիւ քիչ յետոյ Ազգ. Վարչութեան հաւանութեամբ Ներսէս մի տեղեկագիր ներկայացրեց Սադրազամին, որտեղ յիշելով Հայաստանի հարստահարուած վիճակն և հայերի վրայ գործ դրուած բռնութիւններն և քանիցս խոստացուած բարենորոգումների չգործադրուելը՝ Հայաստանի համար ինքնավարութիւն էր պահանջում։ Տեղեկագրի ներկայացրած պահանջներն էին. 1) Աշխատանքի ազատութիւնն և պաշտպանութիւնը. 2) Անձի ապահովութիւնը, 3) Ինչքի ապահովութիւնը, 4) Դպրոցների, վանքերի, եկեղեցիների և ազգ. կալուածների երաշխաւորումն և 5) որ ամենից գլխաւորն էր, երկրի այժմեան ոստիկանական կազմակերպութեան փոխարէն՝ այնպիսի վարչական դրութիւն հաստատել, որ ներկայ հանգամանքներին համապատասխան լինէր*)։

Կառավարութիւնն և ոչ իսկ ժամանակ ունէր զբաղուելու այս թղթերով, և նա մնաց անհետևանք։ Սան-Ստէֆանոյի դաշնագրութիւնից յետոյ, երբ վերջնականապէս հաստատուեց, թէ Անգլիայի պահանջմամբ եւրոպական կոնգրէս պիտի գումարուի յիշեալ դաշնագրութիւնը վերլուծելու, Ներսիսեան Խումբն իսկոյն գործի ձեռնարկեց մի ընդհանուր դիմում անելու մեծ տէրութիւններին։ Այս դիմումի նպատակն էր աշխատել, որ ոչ միայն 16-րդ յօդուածը չհանուի Սան-Ստէֆանոյի դաշնագրից, այլ աւելի մեծ ընդլայնում ստանայ ի նպաստ հայոց, այսինքն ինքնավարութիւն երաշխաւորուի Հայ-

*) «Голосъ», 16 փետրուարի 1878. «Մեղու Հայաստանի», 1878, № 10.

աստանին։ Խնդրագիր-յիշատակագիրը ստորագրողները միայն եպիսկոպոսներ էին։ Այն միջոցին հրապարակի վրայ երեւցողները միայն եկեղեցականներն էին, Ներսէս պատրիարք և եպիսկոպոսները, բայց իրօք գործը պատրաստողներն և նոյն իսկ ղեկավարողներն աշխարհականներ էին, թէև վարագոյրի ետև ծածկուած։ Գրիգոր Օտեան, Սէրվիչէն, Յովհ. Սագըզ*) և ուրիշներ, որոնց անունները արդէն վերև համանման առթիւ յիշել ենք, այնպիսի խորհրդականներ էին Ներսէսի և եկեղեցականութեան, որ առանց նրանց հաւանութեան կամ գիտութեան ոչ մի վճռական քայլ չէր առնվում**)։

Այն ժամանակ մեծ փութով Հայաստանի վիճակագրութիւնն և քարտէսն էլ պատրաստուեց, մեծ պետութիւններին ներկայացնելու համար, որպէս զի պետութիւնները խնդիրը չդատեն միայն թրքական աղբիւրների հիման վրայ, այլ փոքր ի շատէ ճիշտ գաղափար կազմեն հայաբնակ նահանգների աշխարհագրական դիրքի, ազգաբնակութեան թուի և բնակիչների

*) Նշանաւոր հայ-կաթոլիկ գործիչ, որ վերջը մինիստրական պաշտօնի բարձրացաւ փաշայութեան տիտղոսով։

**) Ա. Զօպանեան «Անահիտի» մէջ հրատարակած է Ստեփան փաշա Ասլանեանի 1887-ին գրած երկու նամակները Ստեփ. Փափազեանին ուղղուած, որոնց մէջ մի քանի հետաքրքրական կէտեր կան 1878-ի գործունէութեան վերաբերեալ։ Ասլանեան գրում է. «Ազգային Խնդիր ըսելով պարզապէս Հայկական Խնդիրը կը հասկնամ։ Այս խնդրոյն ծնունդ տրուեցաւ այն ժամանակ, որ հարկ էր, որ ծագէր, չէր կարելի չծագել, և ասոր ապացոյցն այն է, որ նոյն իսկ Տէրութիւնը մասնակցեցաւ ազգային ջանից»։ Թէ ինչ տեսակ էր օսմանեան տէրութեան մասնակցութիւնը, մենք արդէն պատմել ենք (Գլ. Ա.)։ Ներսէս պատրիարքի գործունէութեան նկատմամբ էլ ասում է. «Մեր ազգային լէժանտը (legende) Ներսիսի անուան վրայ յօրինուեալ է. ձգելու է այնպէս, թէեւ կատարեալ իրաւացի չըլլայ», և շարունակում է՝ «ամէն մեծ գործ անունի մը կարօտ է. անուն մը տրուեր է, այն կը մնայ և պէտք է մնայ, թէեւ սխալ ըլլայ...»։ («Անահիտ», 1907, թիւ 6—7—8—9)։

ցեղական բաժանումների մասին։

Ազգի ապագայի և մանաւանդ քաղաքական ապագայի մօտալուտ բարեփոխման յոյսերն այնչափ ուժեղ և այնչափ տարածուած էին ժողովրդի բոլոր դասերի մէջ, որ Սան-Ստէֆանօյի դաշնագրից էլ յառաջ, երբ Հայկական Խնդիրն իբրև միջազգային քաղաքական հարց դեռ հրապարակի վրայ չէր, հայութիւնն սկսել էր ապրել քաղաքական կեանքով։ Կարծես թէ նա խոր քնից էր զարթել և նախ զարմացմունքով, յետոյ մեծ ակնկալութեամբ հետևում էր քաղաքական աշխարհի մէջ արագօրէն միմեանց յաջորդող դէպքերին։ Տիրում էր ընդհանուր ոգևորութիւն։ Քաղաքական կեանքն և հայրենասիրական եռանդը նոր հորիզոններ էին բանում ժողովրդի և մանաւանդ նրա ղեկավարների առջև։ Այս նոր կեանքի աստիճանաբար զարգացումը բնականաբար իր հետ բերում էր նաև քաղաքական հայեացքների տարբերութիւն, որ սկսել էր նկատուել թէ ժողովրդի և թէ առանձնապէս նրան առաջնորդ հանդիսացողների մէջ։ Ուստի կարևոր է աւելի մօտից շօշափել այս հարցն և նրան յառաջացնող ժամանակակից քաղաքական պարագաները։

Թիւրքիան՝ ընկճուած և տապալուած՝ իր յաղթական թշնամու գթութեանն էր ապաւինել, որքան կարելի է քիչ կորուստով ազատուելու համար։ Ռուսաստանը շարունակում էր սեղմել իր հակառակորդի պարանոցը՝—Դարդանէլից Բօսֆոր, որպէս զի որսը ձեռքից չթողնէ, մինչև իր անհուն զոհաբերութեան համապատասխան վարձատրութիւն չստանայ նրանից։ Եւ ահա երևան էր եկել մի այլ զօրեղ պետութիւն, որ պաշտպան էր հանդիսանում պարտուածին և նոյն իսկ զէնքի սպառնալիքով աշխատում էր գէթ մասամբ վերականգնել ընկածին։ Այս հզօր պետութիւնն Անգլիան էր։ Եւ այսպէս՝ 3 տէրութիւն հսկայական ջանքեր էին գործ դնում, որ Թիւրքիայի ժողովրդի ապագան, նրա

այլացեղ հպատակների վարչական ներքին կեանքն և առհասարակ Թրքական քրիստոնէաբնակ գաւառների քաղաքական կացութիւնն այն ձևն ստանայ, ինչ որ տէրութիւններից իւրաքանչիւրն իր անհատական շահերին համապատասխան էր համարում։ Հայ ժողովուրդը բնականաբար անտարբեր չէր կարող մնալ տէրութիւնների այս մրցման մէջ։ Իրանց ներքին համոզմունքով, իրանց ցեղական մասնաւոր շահերի և նոյն իսկ իրանց գոյութեան պահպանման տեսակէտից հայերը հարկադրուած էին եթէ ոչ բոլորովին յարել, գոնէ համակրել յիշեալ տէրութիւններից մէկին կամ միւսին և ըստ կարելւոյն ոյժ տալ նրա ջանքերի իրականացման։ Ո՛ր պետութեան մերձաւոր կամ հեռաւոր նպատակը հայ ազգի ապագայ բարօրութեան համար աւելի շատ երաշխաւորութիւն էր ընծայում, ազգն և իր ղեկավարներն էլ բնականաբար նրան պիտի համակրէին և նրան դիմէին ի պահանջել հարկին։ Միևնոյն ժամանակ շատ բնական էր, որ հայոց մէջ այս նկատմամբ հայեացքները տարբերուէին. այսինքն ոմանք գտնէին, թէ Անգլիան կամ անգլիական քաղաքականութիւնն էր ամենից աւելի նպաստաւո՛րը հայ ժողովրդի անմիջական շահերին, և նրան ապաւինէին. ուրիշներն աւելի վստահութիւն ցոյց տային ռուսական քաղաքականութեան և որոշակի յարէին նրան. իսկ մի մասն էլ հաւատարիմ մնար իր դարաւոր տիրապետողին և չնայելով սրա ամենայայտնի սնանկ քաղաքականութեան՝ այնու ամենայնիւ շարունակէր իր գոյութիւնը կապել նրա բախտի հետ։ Այս տարբեր հայեացքները հարկաւ ծնունդ պիտի տային տարբեր ուղղութիւնների։ Եւ իրօք գոյութիւն էին առած այս զանազան ուղղութիւններն ըստանձնող կուսակցութիւններ, որոնք թէև ոչ որոշ կազմակերպութիւն առած, բայց իրանց տարբեր կողմեր ուղղուած հայեացքներովն և ձգտումներովը մինչև մի աստիճան բաժանում էին մտցնում ընդհանուր ազգային

գործունէութեան մէջ և ջլատում նրա ներքին և արտաքին բարոյական ոյժը։

Այս կուսակցութիւնները մօտաւորապէս հետևեալները էին.

ա) Ռուսասէրները, որոնք ամենից բազմաթիւն էին։ Մանաւանդ վերջին յաղթութիւնից յետոյ հայ ժողովրդի մեծագոյն մասը համակիր էր Ռուսաստանին և շատ կարևոր մասը ոյժեր Ռուսաստանի թևարկութեան տակ մտնելը հայ ազգի ապագայ բարօրութեանը միակ շօշափելի գրաւական էին ընդունում։ Այս պատճառով էլ ռուսական իշխանութեան ապաւինելով նրա միջնորդութեամբ Թիւրքիայում տանելի կեանք ստեղծելը՝ հայի համար միակ գործնական ճանապարհն էին համարում։ Ռուսասէրների պարագլուխներն էին Մատթէոս Իզմիրլեան և Խորէն Նար-Բէյ եպիսկոպոսները, որոնց հետ էր ազգային երեսփոխանների մեծամասնութիւնը։ Այս կուսակցութիւնը գտնում էր, որ միակ պետութիւնն, որ կարող էր էական պաշտպանութիւն ցոյց տալ Հայաստանին, Ռուսաստանն է։ «Մենք պաշտպանութիւն կը յուսանք Ռուսաստանէն,—գրում էին «Մշակին» Կ. Պօլսից,—որովհետև նա մեզ սահմանակից մի տէրութիւն է, գիտէ մեր խղճալի դրութիւնը, աւելի մօտէն կրնայ դիտել զմեզ և հարկաւոր եղած ժամանակ կարող է շուտով եւ նիւթական միջոցներով ալ օգնել մեզ, քանի որ մեզ դրացի է և շատ անգամ գոհողութիւններ յանձն առած է արևելեան քրիստոնեայ ազգերու պաշտպանութեան անունով, իսկ Անգղիան ոչ մեզի մօտիկ է, ոչ ալ քրիստոնեաներուն պաշտպան և փաստաբան կանգնած է երբէք Թուրքին դէմ, այնպէս՝ ինչպէս Ռուսիան։ Նաև Անգղիայի մէջ գրեթէ հայ չկայ, բայց Ռուսիայի մէջ միլիօնէն աւելի եղբայրակիցներ ունինք, որք մեզ դրացի և ազգակից են, կարող են օգնել ու պաշտպանել հարկաւոր եղած ժամանակ, մինչդեռ անգղիական քաղաքականութեան հետևելով, որի

խաբէութիւնն և խարդաւանանքներն անվստահութիւն ներշնչած են մեզ, մենք կը հրաւիրենք մեր վրայ հակակրութիւնը մի այնպիսի տէրութեան, որու հզօր բազկին ներքև կը գտնուին բազմաթիւ հայեր, հետևապէս մեր անխոհեմ և անքաղաքագէտ շարժումներով գուցէ վնաս հասցընենք մեր այդ սիրելի եղբայրակիցներուն...*)»։

Միևնոյն լրագրին գրում էին Կ. Պօլսից դեռ 1878-ի սկիզբը հետևեալը.

«Ամեն հեռատես հայեր կը խորհին, թէ Լայարդի (Կ. Պօլսի անգլիական դեսպանի) թելադրութիւններուն անսալով երբ խաբուինք և Ռուսիայի դէմ բողոքել ելլենք, Անգլիայի ինտրիգան կառավարութիւնը յետոյ զմեզ անպաշտպան կը թողու, միմիայն իր սեփական շահերու վրայ մտածելով և համաձայնուելով Ռուսիայի հետ, և մենք ի զուր տեղ Թիւրքիայի ատելութիւնը հրաւիրած կը լինինք մեր խեղճ ազգի վրայ...»**)։

Իսկ թէ բուն երկրում, մանաւանդ Կովկասի սահմանակից հայաբնակ գաւառներում, հայ ժողովուրդն ինչ հայեացք ունէր Ռուսաստանի մասին, այդ մենք արդէն պատմել ենք Ա. Մասում (Գլ. ԺԴ.)։

Երկրորդ կարևոր կուսակցութիւնը կազմում էին անգլիասէրները։ Սրանց մէջ առաջին տեղը բռնում էին բողոքական հայերն, որոնք ի սկզբանէ անտի վայելած լինելով բողոքական Անգլիայի հովանաւորութիւնը՝ նրա բնական դաշնակիցներն էին Թիւրքիայում։ Բայց անգլիասէրների մէջ շատ աւելի կարևոր էին հայոց ազգայնական-ազատամիտները (national-liberal)։ Այս խումբն իր քաղաքական համոզմունքներովը համակրում էր ազատական Անգլիային, մանաւանդ երբ վերջին տարիներն անգլիական հասարակութիւնն և նոյն իսկ

---

*) «Մշակ» 1878, № 15.

**) Անդ։

կառավարութեան անդամները յաճախ իրանց համակրութիւնն էին ցոյց տալիս հայոց։ Անգլիասէրներ էին գլխաւորաբար առաջնակարգ դասի և Ռուսաստանի դէմ ի սկզբանէ հակակրութիւն ունեցող բազմաթիւ ազգային գործիչներ, գրագէտներ և ազդեցիկ հոգևորականներ, ինչպէս էր օրինակի համար Մկրտ. արքեպ. Խրիմեան։ Անգլիասէրների գլխաւոր ոյժն էր Դր. Օտեան, որ գրեթէ ուղղութիւն էր տալիս այն ժամանակ ազգային կեանքին, Ներսէս պատրիարքի բացարձակ վստահութեանը վրայ յենուած։ Այս կուսակցութեան թև ու թիկունք էին Անգլիայի և առանձնապէս Հնդկաստանի հայերից մի քանի կարևոր գործիչներ, յատկապէս Սէթ Աբգար հնդկահայն, որոնք Լոնդոնում սերտ յարաբերութիւն էին մշակում անգլիական խորհրդարանական և կառավարական շրջանների հետ։ Բացի դրանից՝ Նրա կողմն էր անցել նաև հայ-կաթոլիկների խումբը։ Անգլիասէրները պայքար էին մղում ռուսական կուսակցութեան դէմ։ Նրանք շարունակ խորհրդակցում էին անգլիական դեսպան Լէյըրդի հետ, որ եռանդով գործում էր հայոց մէջ ընդդէմ Ռուսաստանի։ Միևնոյն ժամանակ հայերն աշխատում էին անգլիական ազդեցիկ մամուլի միջոցով գրաւել անգլիական հասարակաց կարծիքն իրանց կողմը։ Այս նպատակով նրանք ազդում էին անգլիական թղթակիցների վրայ։

«Ուղարկում եմ Ձեզ,—գրում էր «Թայմզի» թղթակիցը Կ. Պօլսից,—այն վաւերագիրն (document), որի մէջ, ինչպէս ես կարծում եմ, կատարելապէս արտայայտուած է զարգացած հայերի կարծիքը, թէ ինչ ազդեցութիւն պէտք է անի նրանց երկրի վրայ Ռուսաստանի և Թիւրքիայի միջև կայացած դաշնադրութիւնը։ Մի հայ գրում է ինձ, որ իր հայրենակիցները վախենում են, թէ Ռուսաստանը կարող է քաջալերել թիւրքերի անկարգութիւնները, որպէս զի դրանից օգուտ քաղէ և աստիճանաբար կլանէ Հայաստանը։ Այս պատ-

ճառով հայերն աղաչում են Անգլիային, որ օգնէ նրանց ինքնավարութիւն ձեռք բերելուն, Եւրոպայի երաշխաւորութեան տակ։ Հայերը յուսադրում են, թէ ինքնավար Հայաստանն արգելք կը դառնայ ռուսաց դէպի Հնդկաստան արշաւելուն և թէ հայերն իրանց ազգային բնաւորութեամբ աւելի սիրով կընտելանան անգլիական քաղաքականութեան, որ իսկական քաղաքականութիւն է, քան թէ ռուսաց կեղծ քաղաքականութեան հետ»*)։

Անգլիասէրներն ոչ մի միջոց չէին խնայում հայ ժողովրդի մէջ Ռուսաստանի հմայքը կործանելու համար, որպէս զի ռուսասէրների ջանքերը չէզոքացնեն։ Անգլիական կուսակցութիւնը պնդում էր, թէ «Ռուսաստանն ամբողջ այս դարի (ԺԹ.) ընթացքում իբր թէ ոչինչ չէ արել ի նպաստ հայոց։ 40 տարի յառաջ Ներսէս Ե. կաթողիկոսն, ասում են այս ազգասէրները, չխնայեց ոչ մի զոհաբերութիւն, Պասկէվիչին օգնեց Երևանը պարսից լուծից ազատելու։ Իսկ այն թշուառութիւնները, որ այս պատերազմի ժամանակ հայերը կրեցին. հրդեհ Վանում և Բայբուրդում, կոտորած Բայազիտում, խմբովին գաղթ Ալաշկերտից և այլն։ Եւ Ռուսաստանն ոչինչ չարաւ դրանց առաջն առնելու համար։ Սան-Ստեֆանոյի դաշնագրում ԺԶ. յօդուածը բարենորոգումներ է պահանջում հայերի համար։ Բարենորոգումներ, շարունակում են անգլիասէրները, մեզ խոստացուած էին թէ 60-ական թուականներին և թէ Միդհատի Սահմանադրութեամբ։ Ի՞նչ եղաւ դրանից։ Նայեցէք մեր կաթողիկոսին Էջմիածնում. օգտվում է նա արդեօք որևէ արտօնութիւնով։ Զվերցրի՞ն նրանից հարիւրաւոր գիւղեր։ Ո՞ւր են մեր ազատ դպրոցները, ո՞ւր է հայերէնի ազատ գործածումը պաշտօնական հիմ-

*) «Times», նամակ Կ. Պօլսից, 6 մարտի 1878 թ.։ «Մշակ», 15 մարտի 1878 թ.։

նարկութիւններում...։ Անգլիացիների բոլոր ընդդիմախօսութիւններն այս ոգով են...»*)։

Երրորդ՝ կաթոլիկական կուսակցութիւնը նոյնպէս ազդեցիկ անձեր ունէր իր մէջ, որոնց գլխաւորն էր Յովհ. Սագըզ։ Բայց այն միջոցին մեծ դեր էր խաղում ազգային հարցում Անտոն Հասուն պատրիարք-կաթողիկոսը։ Շատերի համար բոլորովին անսպասելի կերպով Հասուն եռանդով մասնակցում էր հայկական խնդրին։ Նա պաշտպանում էր անգլիացիների կողմն ընդդէմ ռուսասէրների։ Իտալական և ֆրանսիական դեսպանների վրայ իր ունեցած ազդեցութիւնը գործածելով միջնորդում էր, որ Իտալիան և Ֆրանսիան պաշտպանութիւն անեն Թիւրքիայի հայերին և չթողնեն Ռուսաստանի ձեռքն, որովհետև Ռուսաստանն իւր թէ ձգտում է Արևելքի բոլոր միւս կրօնները ջնջել...։ Ռուսաստանի դէմ մղուած այս պայքարին մասնակցում էր անգլիական դեսպանատան երէցն, որ մօտ յարաբերութեան մէջ էր անգլիացիների հետ և գործում էր սրանց հետ իբրև միևնոյն քաղաքական համոզմունքի տէր։

Չորրորդ կուսակցութիւնը կազմում էին թրքասէրները, որոնք պատերազմից յառաջ ամենից ազդեցիկ և ամենից աւելի տիրողն էին։ Գրեթէ բոլոր մեծ վաճառականները, կապալառուներն և սեղանաւորները Թրքասէրներ էին։ Շատերն էլ այդպէս էին ձևանում մահմեդական մոլեռանդութիւնը չգրգռելու և իրանց անձնական շահերը չվտանգելու համար։ Սակայն Թիւրքիայի պարտութիւնը մեծ հարուած եղաւ Թրքասէրներին, որոնց խումբն այս պատճառով սաստիկ փոքրացաւ։ Այժմ այդ խումբին պատկանում էին միայն կառավարութեան ստորին աստիճանաւորները, քաղաքապետութեան պաշտօնեաներն և այն կարգի անձերն, որոնք իբրև փոքր հարստահարիչներ՝ օգտվում էին

*) «Обзоръ» (Թիֆլիս), № 129, 16 մայիսի 1878 թ.։

Թրքական լուծի վարչութիւնից։ Այս կուսակցութիւնն իր ծրագրի պաշտպանութեան համար յառաջ էր բերում միայն այս պարագան, թէ Թրքական իշխանութեան տակ ազգային եկեղեցին անվթար պահպանուած է...։

Բայց կուսակցական այս բաժանումն երկար չըտևեց։ Քաղաքական դէպքերը շատ արագ փոփոխութիւն էին մտցնում գործի ընթացքում և ըստ այնմ էլ հանգամանքները նոր դասաւորութիւն ստանում։ Սան-Ստէֆանոյի դաշնագրութիւնը կազմելուց յետոյ նրա բոլոր պայմանների եւրոպական քննութեան ենթարկելու որոշումն, Իզմիրլեանի էջմիածնում և Ներսէսի Պետերբուրգում ունեցած անյաջողութիւններն և Բ. Դրան իսկ իր աչքերը մեծ յոյսով դէպի ապագայ կօնգրէսն ուղղելն առանց ազդեցութեան չմնացին հայոց համար։ Այնուհետև համարեա բոլոր ազգային գործիչները լռելեայն համերաշխութիւն կայացնելով՝ կուսակցութիւնները գրեթէ դադրեցին առանձին առանձին գործելուց և բոլորը համախմբուեցին Ներսէսի շուրջը, Բերլինի կօնգրէսի մէջ Հայկական խնդիրը պատշաճաւոր կերպով ներկայացնելու և եւրոպական հասարակական կարծիքն ազգային դատին նպաստաւոր դարձնելու։

«Այստեղ,—գրում էին Կ. Պոլսից,—ազգային զգացումը շատ ոգևորուած է այժմ. ամեն հայ կը զգայ, թէ հայրենիքի փրկութեան ժամն հնչած է և թէ պէտք է գործել։ Կուսակցական ոգիները լռած են և Հայաստանի ոգին է, որ կը խօսի միայն. սրբազան Ներսէս պատրիարք իր ազգասիրական եռանդով և գործունէութեամբ մոռցնել տուաւ իր բոլոր անցեալ սխալներն և ամեն կուսակցութեան ալ սիրելին եղած է այժմ...»*)։

Ներսէս պատրիարք այլևս իր սովորական հրաժարագիրները չէր ուղղում Ազգ. Ժողովին։ Նա շրջա-

*) «Մշակ», 1878, № 48.

պատուած եպիսկոպոսներով և աշխարհական խորհրդա-կաններով, որոնց անունները տուած ենք վերև, գրա-ւուած էր մեծ եռանդով, ղեկավարելով «Հայկական Խնդիրը»*)։

Այս համերաշխութիւնը միմիայն լուսաւորչական հայերի մէջ չէր, այլ այլադաւան ազգայիններն ևս ա-մեն հասարակական խտրութիւն թողած՝ միացել էին և գործում էին նրանց հետ, որ քիչ ուրախութիւն չէր պատճառում թէ Կ. Պոլսում **) և թէ Թիֆլիսում***)։ Հայ կաթոլիկ հոգևորականներ եռանդով ազգային գա-ղափարներ էին տարածում։ Նոյն իսկ հայ կաթոլիկ եկեղեցին ազգային համերաշխութեան տեսարան էր

*) Ահա ինչ էին գրում այս առթիւ Կ. Պոլսի լրագիրները։ «Հիմա ս. պատրիարք հայրը հրամայականի խօսք ըրած չունի։ Եկեղեցականութեան եւ պատրիարքի մէջ քիչ ատեն առաջ ան-համաձայնութիւն կար. հիմա այդ չկայ։ Երեսփոխանութեան մէջ կուսակցութիւնները բաժանեալ էին կարծեաց տարբերութեամբ. հիմա այդ կուսակցութիւնները միացած են։ Ազգի մէջ բաժա-նումներ կային. գլխաւորաբար Բ. Դրան հայ պաշտօնեաներէն ոմանք ազգին մտածմանցը հակառակ կը մտածէին. հիմա այդ տարբեր մտածումն ալ չկայ։ Վերջապէս չենք կարծեր թէ հայոց ազգը հիմակուան չափ միացեալ ժամանակ մը ունեցած ըլլայ» («Նոր-Դար», Կ. Պոլիս)։

**) «Ազգը կրօնքով զանազան մասանց մէջ բաժանեալ ըլ-լալով ամեն մաս իր շահուն համեմատ կը մտածէր. հիմա՛ ամենքը ազգային բարձրագոյն շահերուն վրայ միացած են», —գրում էր Կ. Պոլսի «Նոր-Դարը»։

***) Ահա ինչ էր գրում «Մշակ» այս առթիւ. «Ինչպէս առաջին անգամ ռուսաց կառավարութեան՝ Թիֆլիսի հայերի կող-մից ներկայացրած ուղերձին մասնակցեցին իրանց ստորագրու-թիւններով Թիֆլիսի կաթոլիկ և բողոքական հայերը, այնպէս էլ այժմ Կ. Պոլսի հայերի բոլոր կուսակցութիւնները և դաւանու-թիւնները, թողնելով իրանց դարևոր վէճերը, միացան ընդհանուր գործի համար»։

ներկայացնում*)։ Այս միևնոյն խնդրի մասին ահա ինչ էր գրում պրոֆէսոր Անդրէաս Արծրունին Բեռլինից. «Այս ընդհանուր գործի մէջ ոչ կուսակցութիւնների, ոչ դաւանութիւնների տարբերութիւն կայ։ Թէ այսպէս անուանուած Ռուսաստանի կուսակիցները, թէ Անգլի-այի կուսակցութիւնը, թէ լուսաւորչական, կաթոլիկ և բողոքական, բոլորն էլ միասին մի կուսակցութիւն են կազմում, որ կարելի է ազգային անուանել. ամենքն էլ մոռացան իրանց անձնական հաշիւներն և միաւորուել են մի ընդհանուր գործի համար**)։

Սան-Ստեֆանոյի դաշնագրութիւնից յետոյ մար-տի 14/26-ին մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչ Կ. Պո-լիս այցելութեան եկաւ սուլթան Համիդին, որ մեծ պատիւներով ընդունեց նրան և փոխադարձ այցելու-թիւն տուեց Բոսֆորի եզերքի վրայ Բէյլէրբէյի պալա-տըն, որ մեծ իշխանի բնակութեանն էր յատկացուած։

*) Այն միջոցին Կ. Պոլսում վախճանուեց Վիեննայի Մխի-թարեան հայրերից հայր Կղեմէս վ. Սիպիլեան, յայտնի հայ դրա-մահաւաք, հնագէտ և եւրոպական հնագիտական ընկերութիւնների անդամ։ Սիպիլեան 12 տարի շարունակ Հայաստանի զանազան կողմերը ճանապարհորդելուց և հնագիտական խուզարկութիւններ կատարելուց յետոյ անցել էր Կիլիկիա և այնտեղ էր գործել նոյն նպատակով։ Հ. Սիպիլեան եռանդուն ազգասէր էր. թէ ընտանե-կան շրջաններում, թէ ազգային լսարաններում և թէ մասնաւոր անհատների մօտ Հայաստանի և հայութեան սէրն էր քարոզում բոլորին։ Նրա մահը ընդհանուր համազգային ցոյցի առիթ եղաւ։ Միջագիւղի (Կ. Պոլսի մի արուարձանը) հայ-կաթոլիկ եկեղեցում հոգեհանգստի ժամանակ Կ. Պոլսի ամեն կողմից հաւաքուել էին մեծ բազմութեամբ, առանց կրօնական խտրութեան, թէ լուսաւոր-չական և թէ բողոքական հայեր։ Հայ-լուսաւորչական հոգևորա-կաններ կանգնել էին կաթոլիկ եկեղեցու դասում։ Դամբանական խօսելու հրաւիրուեց մի հայ-կաթոլիկ երիտասարդ վանական (Անտոնեան միաբանութեան անդամ հայր Մաղաքիա վ. Օրմա-նեան), որ ազգային ոգով ներշնչուած մի գեղեցիկ ճառ խօսեց այնտեղ։

**) «Մշակ», 1878, № 108.

Մեծ իշխանն այնուհետև երկար չմնաց բանակում և պատրաստվում էր մեկնել Ռուսաստան։ Ներսէս պատրիարք երախտագիտական պարտք ունէր հատուցանելու իշխանին, ուստի Զատկի երկրորդ օրը գնաց Սան-Ստէֆանօ թէ այդ պարտքը կատարելու և թէ Զատկի տօնը շնորհաւորելու։ Պատրիարքին սիրալիր ընդունելութիւն ցոյց տուեց։ Ներսէս իր երախտագիտական զգացմունքը յայտնելով մի գեղեցիկ ոսկէ խաչ մատոյց, որը Նիկոլայ Նիկոլայեվիչ ընդունեց շնորհակալութեամբ։ Բայց այս տեսակցութիւնը պարզ քաղաքավարական կամ Զատկի շնորհաւորութեան այցելութիւն չմնաց։ Այդտեղ, պարագայից օգտուելով, Ներսէս երկարօրէն խօսեց Հայկական Խնդրի և Հայաստանի վիճակի վրայ և մի տեղեկագիր էլ ներկայացրեց, թէ ինչ բռնութիւնների և աւարի են ենթարկուել մի քանի հայ գիւղեր ռուսական զօրքի այն տեղերից քաշուելուց յետոյ։ Ներսէս խնդրեց, որ իրերի այս վիճակը ներկայացուի Աղէքսանդր Բ. կայսեր, «որի վրայ են դրած հայերն իրանց միակ յոյսը. միայն նրա մէջն են,—ասաց նա,—հայերը տեսնում իրանց փրկութիւնը»*)։

Մեծ իշխանի յանձնարարութեամբ Սկոբելեվ կրտսեր զօրավարը փոխադարձ այցելութեան եկաւ Կ. Պօլիս Ներսէս պատրիարքին, որ պատշաճաւոր ընդունելութիւն ցոյց տուեց նրան։

Սան-Ստէֆանօյից յետոյ Ներսէս պատրիարք Վարժապետեան Օտեանի և հակառուս խմբերի պատճառաբանութիւններն ընդգրկելով իր աչքերն ուղղեց դէպի Անգլիան, առանց սակայն իր յարաբերութիւնները խզելու ռուսական քաղաքականութիւնից, գոնէ արտաքուստ։ Նա սկսեց յաճախ տեսնուել դեսպան Լէյըրդի հետ, որ բացարձակօրէն խորհուրդ էր տալիս

*) «Голосъ», 2 մայիսի 1878 թ.։ «Մեղու Հայաստանի», 1878 № 18։

Հայաստանի համար տեղական ինքնավարութիւն պահանջել, ընդդիմանալով ռուսական տիրապետութեան տակ մնալու մտքին, և յուսադրում էր, թէ Անգլիան առաջիկայ կօնգրեսում կը պաշտպանէ այս ծրագիրը։ Եւ որովհետև սադրազամ Ահմէդ Վէֆիկ փաշան, իբրև ջերմ անգլիասէր, մտերիմ էր անգլիական դեսպանին, ուստի այս վերջինի, գուցէ և հայ պաշտօնեաների միջոցով թիւրքական կառավարութիւնը տեղեակ էր անշուշտ անցած-դարձածին և բնականաբար քաջալերում էր Հայկական Խնդրի առած այս նոր ուղղութիւնը։ Այս հանգամանքներումն էր, որ որոշուեց յանուն հայ ազգի պատուիրակութիւն ուղարկել այն բոլոր եւրոպական տէրութիւններին, որոնք պիտի մասնակցէին առաջիկայ կօնգրէսին և որոնց արդէն մատուցուած էր Հայաստանի վիճակի մասին մի ընդարձակ յիշատակագիր։

Բայց թէ եւրոպական տէրութիւններին Հայաստանի մասին քաղաքական յիշատակագիր ներկայացնելն և թէ եւրոպական մայրաքաղաքները յատուկ պատգամաւորներ ուղարկելն այնչափ համարձակ քայլեր էին համարվում, որ ի սկզբան շատ գաղտնի պահուեցին թիւրք կառավարութիւնից։ Պատուիրակութիւնն ուղարկելիս Ներսէս և նրա խորհրդականների կամ աւելի ճիշտը նրա գործակիցների խումբն առանձնապէս յոյս ունէին Անգլիայի վրայ, որ Թիւրքիայի պաշտպանն էր հանդիսանում այն ժամանակ, և գլխաւորաբար Լօնդօնումն էր, որ պատուիրակութիւնը պիտի աշխատէր գործել յօգուտ Հայաստանի ինքնավարութեան իրականացման, ինչպէս գրեթէ խոստացել էր Լէյըրդ։ Օտեանի խորհրդով պատուիրակ կարգուեց Խրիմեան, իբր նախկին պատրիարք, իբր Հայաստանի վիճակին շատ լաւ տեղեակ և իբր իր դիրքով ու դէմքով տպաւորութիւն անող անձ։ Եւ որովհետև Խրիմեան ոչ մի եւրոպական լեզու չգիտէր, ուստի նոյն Օտեանի

յանձնարարութեամբ իբրև քարտուղար և թարգման նրան ընկերացաւ Մինաս Չերազ։ Ազգային վարչութիւնն և ազգային երեսփոխանները լիովին համամիտ էին այս պատուիրակութեան։ Խրիմեան իր մեկնելուց յառաջ Կ. Պօլսում տեսնուեց ֆրանսիական նոր դեսպան Ֆուռնիէի հետ էլ, որ գործում էր իբրև Անգլիայի համակիր, ուրեմն և ընդդէմ Ռուսաստանի*)։

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Հայ պատուիրակութիւնը. — Խրիմեան Հայրիկ և Մինաս Չերազ. —Նրանց մեկնումը Կ. Պօլսից.—Պատուիրակութեան գործունէութիւնը Հռոմում և Պարիզում։

Եւրոպական պալատներին հայ դատը ներկայացնելու համար որոշուած պատուիրակութիւնը Կ. Պօլսից մեկնեց մարտի 8/20-ին։ Ոչ բուն պատուիրակն և ոչ իր թարգմանը՝ խստիւ դատելով՝ չէին այս պաշտօնի համար բուն յարմար անձինք կամ, ինչպէս անգլիացիք ասում են, the right man in the right place. Խրիմեան անծանօթ էր Եւրոպային, չունէր դիւանագիտական հմտութիւն և ոչ մի եւրոպական լեզու չգիտէր**). միայն իր Նախկին-պատրիարք***) տիտղոսն էր, որ որոշ դիրք

*) «Politische Correspondenz», նամակ Կ. Պօլսից, 22 մարտի 1878 թ.։

**) Նրա այցետոմսի վրայ գրուած էր՝ «Մկրտիչ Խրիմեան, արքեպիսկոպոս Տարօնի և նախկին պատրիարք Թիւրքիոյ հայոց»։

***) Խրիմեան ապրիլին Մանչեստրում գտնուած ժամանակ երբ այնտեղի հայ գործիչների հետ խորհրդակցութիւններ է կատարում, թէ ինչ ուղղութեան պէտք էր հետևել Լոնդոնում և Բեռլինում, մէկը նրան հարցնում է, թէ ինչպէ՞ս պիտի կարողա-

պիտի տար նրան։ Աւելի յաջող չէր իր քարտուղարի և թարգմանի ընտրութիւնը։ Եթէ Խրիմեան, բուն պատուիրակը, անտեղեակ էր եւրոպական կարգերի, անտեղեակ էր քաղաքականութեան և հնարաւորութիւն չունէր անձամբ իր միտքը յայտնելու, գոնէ իր թարգմանը մասամբ պէտք էր լրացնէր այս պակասը։ Բայց Մինաս Չերազ կատարելապէս անփորձ*) մի երիտասարդ էր. Նրա միակ առաւելութիւնն այն էր, որ ֆրանսերէն էր իմանում և ազգասիրական խանդ ունէր, որ անշուշտ բաւական չէր այսպիսի ամենալուրջ գործի համար։ Եւ այսպէս՝ ոչ առաջին պատուիրակն և ոչ իր թարգմանը համապատասխան չէին, որ հաւանականաբար առանց հետքի չէ մնացած իրանց պաշտօնավարութեան ժամանակ։ Խորէն եպ. Նար-Բէյ, ճիշտ է, գիտէր եւրոպական լեզուներ, բայց իր յեղյեղ բնաւորութեամբն և իր քաղաքագիտական անհմտութեամբ նոյնպէս մեծ յարմարութիւն չունէր իրան յանձնուած պաշտօնին։ Այս մասին դեռ այսչափ։

Խրիմեան դուրս եկաւ Կ. Պօլսից դէպի Իտալիա

նալ յաջողութեամբ կատարել իր պատուիրակի պաշտօնը քանի որ ոչ մի եւրոպական լեզու չէր իմանում։ Եւ նա պատասխանում է. «Պիտի խօսիմ լեզու մը, որ համաշխարհային է և ատաղձանքի լեզուն է միևնոյն ժամանակ. այսինքն պիտի լամ»...։

Խրիմեան, սակայն, շատ չանցած ինքն էլ համոզուեց, թէ լացը քաղաքական աշխարհի համար շատ անզօր լեզու է, և վերադարձին պէտք դ. ը խօսել երկաթէ գդալով «հարիսա» ուտելու մասին...

*) Ահա թէ ինչ է գրում Չերազ ինքն իր մասին. «Կոնգրէսին մէջ՝ կեանքս երկու տարիճան միայն ունեցած էր. ուսանող եղած էի, ապա ուսուցիչ. տեսած էի գաւառներ միայն և ոչ մի պաշտօնատուն նշմարած էի երբէք. դիւանագիտական ասպարէզն անծանօթ էր ինձ, որպէս աշխարհն անծանօթ էր Ադամի, երբ սա դրախտի մէջ էր դեռ։ Ուստի ոչ ոք պիտի զարմանայ լսելով թէ երբ պաշտօնատանց (Հռոմի արտաքին գործերի մինիստրութեան) քարէ սանդուխները վեր ելայ, սիրտս տրոփեց կրծքիս մէջ...»։ («Հայաստան և Իտալիա», Կ. Պօլիս, 1879, էջ 28)։

և երկիւղ ունէր, թէ իր մեկնումը կը յայտնուի, և կառավարութիւնը կարգելէ ճանապարհը շարունակել*). բայց կառավարութիւնն այնչափ մեծ վտանգ չէր տեսնում նրա ճանապարհորդութեան մէջ, որ արգելք հանդիսանար։ Նրանք իջան Բրինդիզի, որտեղից երկաթուղով մեկնեցին Հռոմ։ Սա առաջին եւրոպական մայրաքաղաքն էր, ուր ի գործ պիտի դնէին իրանց առաքելութիւնը։

Այն յիշատակագիրը, որ Խրիմեան պիտի ներկայացնէր դաշնագիրներին, հայերէն էր յանձնուել նրան, և Չերազին է թողուել ֆրանսերէն թարգմանել ճանապարհին։ Բացի դրանից՝ Խրիմեան ունէր մի պաշտօնական վկայագիր Թիւրքիոյ հայոց պատրիարքից, իր պատուիրակութեան պաշտօնը հաստատող։

Եթէ ճիշտ են այն բացատրութիւնները, որ Մ. Չերազ գործածել է իտալական արտաքին գործոց մինիստրութեան մէջ, պէտք է ասել, որ պատուիրակութեան առաջին իսկ քայլն անյաջող էր, որովհետև իսկոյն մտածում էր, թէ Խրիմեան և իր թարգմանը չափազանցութիւններով են ուզում շլացնել իրանց խօսակիցներին՝ փոխանակ միշտ ճշմարտութեան շաւղի մէջ մնալու**)։

Մարտ 15/27-ին Խրիմեան և Չերազ ներկայացան արտաքին գործերի մինիստր կոմս Կորտիին (Corti), որ Կ. Պոլսից էր եկել նրանց հետ միևնոյն շոգենաւով, բայց առիթ չէին ունեցել ծանօթանալու։ Թէ որքան

*) Մ. Չերազ գրում է. «...անհնար չէ, որ երբ մեր երթի համբաւն տարածուի Բրինդիզիոնի մէջ, մի հեռագիր կասեցնէ զմեզ այդ նեղուցի մէջ...»։ («Հայաստան և Իտալիա», էջ 24)։

**) Մ. Չերազ պատմում է, թէ ինչ ասել է կոմս Տորնիէլլին. «Հայաստանի բարձրաւանդակ նախկին պատրիարքն, գլուխ մի եկեղեցիի, որ 5,000,000 քրիստոնեայ կը վարէ Արևելքի մէջ...»։ Թիւրքիոյ հայոց պատրիարքը գլուխ հինգ միլիոն հայի... այսինքն չափազանցրած աւելի քան երկու անգամ։

տեղեկութիւն ունի մինիստրը Հայաստանի մասին, այդ երևում է նրա հարցումից. բայց թողնենք, որ Չերազ ինքը խօսի։

Կոմս Կորտի ուզում էր լսել, թէ հայ պատուիրակներն ինչ էին խնդրում, և ասում է. «Կարդացի արդէն այն պաշտօնագիրները, որք երէկ յանձնուեցան ընդհանուր քարտուղարին։ Հայերը վարչական ինքնօրէնութիւն կը պահանջեն, այլ Եւրոպակա՞ն թէ Ասիակա՞ն Տաճկաստանի մէջ»։

Եւ Խրիմեան հարկադրուած է ուղղել մինիստրի աշխարհագրական ծանօթութեան պակասը։ «Ճշմարիտ է,—ասում է նա,—հայեր կան Տաճկաստանի եւրոպական մասին մէջ, այլ ազգի մեծամասնութիւնն ասիական մասին մէջ է, Օսմանեան Հայաստանի մէջ, ուր կը ցանկամք ունենալ վարչական ինքնօրէնութիւն»*)։ Պարզ էր, որ Կորտի չէր կարդացած հայոց յիշատակագիրը կամ շատ վեր ի վերոյ կերպով, այլապէս նա, որ Կ. Պոլսի դեսպան էր եղած, չէր կարող չգիտենալ գոնէ, որ յիշատակագրի մէջ յիշուած քաղաքները Փոքր-Ասիոյ մէջ էին և ոչ թէ Եւրոպական Թիւրքիայի մէջ։ Այս մտածումով էլ Չերազ ի դիմաց Խրիմեանի բացատրութիւններ է տալիս։ Նոր բան չէ, ասում նա. փաստականից աւելի ազնուականն է, որ խօսում է նրա բերանով։ Մի քանի պատանեկական եռանդից բղխած շողոքորթութիւններ և անճշտութիւններ դարձեալ սահում են նրա լեզուից, բայց իտալական մինիստրին, որ չգիտէր թէ Հայաստանը Ասիական Թիւրքիայումն է թէ Եւրոպականում, նա աւելի չէր կարող անդրադառնալ այս անմեղ չափազանցութիւնների վրայ**)։ Հայ պատուիրակութեան երկար բացատրութիւններին կոմս Կորտի պատասխանել է. «Շատ շնոր-

*) «Հայաստան և Իտալիա», Կ. Պոլիս, 1879 թ., էջ 35.

**) Հետաքրքրական է, թէ ինչպէս թեթևութեամբ խաղում է Չերազ թուերի հետ։ Մի օր յառաջ Թիւրքիայի հայոց թիւը

հակալ եմ այն համակիր զգացումներէ, զորս հայ ժողովուրդն կը տածէ մեր ազգի նկատմամբ: Գոհ եմ այն բացատրութիւններէ, որովք լուսաբանեցիք ձեր դատ: Դեռ երէկ դեսպան էի Տաճկաստանի մէջ և կը խոստովանիմ, թէ ձեր գանգատներ չէին անիրաւ: Որպէս յայտնեցի ձեզ, կարդացած եմ ձեր յիշատակագիր և մեծ կարևորութիւն կուտամ հայ ազգի դատին: Կը խոստանամ ձեզ պաշտպան կանգնիլ ձեր դատի, վեհաժողովին (կօնգրէս) մէջ, եթէ տեղի ունենայ, և ամեն առթի մէջ, եթէ վեհաժողով չգումարուի: Գիտէք թէ ազգայնութիւնն մի սկիզբ(սկզբունք) է, ու Իտալիա կը պարտի իւր գոյութիւն. ձեր դատ կը պատկանի այդ սկզբի, ուստի ապահով եղէք թէ ոչ մի պետութիւն աւելի համակիր է նմա, քան Իտալիա»*):

Խրիմեան՝ գոհ այս խոստմնալից պատասխանից՝ հեռանում է օրհնելով իտալական նորապսակ թագաւորին և իր նոր մինիստրութիւնը:

Ուրախացած այս առաջին սիրալիր ընդունելութիւնից, Զէրազ՝ իրան տրուած հրահանգի համաձայն՝ արդիւնքը հեռագրում է Կ. Պոլիս Ստեփան Փափազեանին, որ նա հաղորդէ պատրիարքին և իր խմբին: Ուղղակի պատրիարքին դեռ չէր հեռագրվում, որովհետև պատուիրակութեան մեկնումը և նպատակը, ինչպէս արդէն յիշեցինք, դեռ գաղտնի էր պահվում կառավարութիւնից, բայց միևնոյն ժամանակ Զէրազ յատուկ նամակներով ամեն ինչ բացատրում էր պատրիարքին:

հասնել էր հինգ միլիոնի: Իսկ այս անգամ իր միևնոյն ճառի սկզբում յիշեցնում է նախ 4 միլիոնի և ապա՝ ճառի վերջում 3 միլիոնի, որ դարձեալ ճիշտ չէր: (Անդ, էջ 37):

*) Անդ էջ 40—41.

**) Հեռագրի պատճէնը Զէրազ յառաջ է բերած իր գրքոյկում, այս ձևով. «Ընտիր առողջութիւն: Մանրամասնութիւնները նամակով: Վաղը պիտի մեկնիմ Պարիզ: Լուր տուէք ընտանիքիս: Մինաս»:

Խրիմեան և իր քարտուղարը Հռոմից մեկնելով մարտի 19/31-ին հասնում են Պարիզ:

Պարիզ հասնելու երկրորդ օրը Խրիմեան այցելեց Նուպար փաշային, իր պատուիրակութեան նպատակի մասին նրա հետ խորհրդակցելու համար: Նուպար գիտէր արդէն, թէ Ներսէս-Օսեան խումբն ինչ յանձնարարական էր տուած իր պատուիրակին: Նրան յայտնի էր նաև, թէ պատրիարքն և իր խորհրդակիցները՝ ոչ աւել և ոչ պակաս՝ Հայաստանի ինքնավարութիւն էին պահանջում Լիբանանի իշխանութեան նման, այն է՝ տեղական ինքնօրինութիւն սուլթանի գերիշխանութեան և Եւրոպայի հովանաւորութեան տակ: Պոլսում ենթադրում էին և յոյս իսկ ունէին, թէ քաղաքական ներկայ հանգամանքներում ամենայարմար առիթն էր մի անգամ ընդ միշտ ազատուելու տառապող ժողովրդի կացութիւնից և ձեռք բերելու ինքնավար ազգի իրաւունքը: Նուպար փաշա շատ ընդարձակ էր գտնում ինքնավարութեան ծրագիրը, չէր հաւատում, թէ Ռուսաստանի և Անգլիայի միջև տիրող ներկայ թշնամութեան րոպէին նրանք համաձայնէին Հայաստանին ինքնավարութիւնտալու և թէ ոչ էլ Թիւրքիան իր հաւանութիւնը կը տար դրան: Իսկ միւս եւրոպական տէրութիւնները շատ քիչ էին շահագրգռուած Հայաստանի վիճակով, յիշեալ 3 տէրութիւնների վրայ ճնշում գործ դնելու համար ի նպաստ հայոց: Նուպար փաշա իրան եղած դիմումն ընդունելով՝ առանձին ծրագիր պատրաստեց, որ զգալապէս տարբերվում էր պօլսական, այն է՝ ինքնավարութեան ծրագրից: Մենք յառաջ պիտի բերենք երկու ծրագիրներն էլ:

Ապրիլի 2-ին (ն. տ.) Զէրազ*), յանուն Խրիմեա-

---

*) Մ. Զէրազ իր՝ Պարիզում հրատարակած «L'Arménie» թերթում պարբերաբար լոյս է ընծայած հայ պատուիրակութեան գործունէութեան պատմութիւնը Եւրոպայում, որ սկսել է «L'Arménie»-ի 1890 մարտի 15-ի № 5-ից և վերջացել է 1893 թ. յու-

նի, արտաքին գործերի մինիստրութեան յանձնելով իրանց բերած յիշատակագիրն ու ծրագիրը խնդրեց, որ ֆրանսիական արտաքին գործերի մինիստրն ընդունի հայ պատուիրակութիւնը։ Տեսնուեց նաև «Le Temps»-ի տնօրէն-խմբագիր Էբրարի հետ և խնդրեց, որ սա ի նպաստ Հայկական Դատի յօդուած գրէ իր ազդեցիկ լրագրում։ Այդ ֆրանսիացի նշանաւոր քաղաքագէտ օրագրողը խոստանում է, բայց ասում է, թէ լաւագոյն է, որ «կօնգրէսի գումարուած ժամանակ գրեմ, որպէս զի մինչև այն չմոռացուի»։ Ապրիլի 5-ից Խրիմեանն և իր քարտուղար-թարգմանն սկսում են իրանց պաշտօնական այցելութիւնները Պարիզի դիւանագիտական ժարմիններին։ Այն օրը նրանք գնում են գերմանական դեսպան իշխ. Հօհէնլօհէի մօտ, որ նրանց ասում է. «Հայոց պատրիարքը Գերմանիայի Կ. Պոլսի դեսպանին յանձնել է մի յիշատակագիր իր ժողովրդի դատի մասին։ Դեսպանն այդ յիշատակագիրը Բեռլին ուղարկած լինելով, մեր արտաքին գործերի մինիստրութիւնն էլ դրա մի պատճէնն ինձ էր ուղղել. ես կարդացել եմ և ձեր պահանջներն իրաւացի եմ գտել։ Բայց մի կէտ կայ, որ ինձ մութ է թւում։ Հայերը բաւականաչափ ոյժ ունի՞ն մահմեդական հրոսակները զսպելու և իրանց երկիրը կառավարելու...»։ Խրիմեան պատասխանում է, թէ եթէ հայերը զէնք ունենան, կարող են այդ անել։ Ապա իշխ. Հօհէնլօհէն խորհուրդ է տալիս նրանց, թէ «հայերն ինչպէս որ շահել են իրանց կողմ Ռուսաստանի համակրանքն, այնպէս էլ պէտք է աշխատեն գրաւել նաև Անգլիայի բարեկամութիւնը։ Ռուսաստանը,— ասել է նա,— ի նպաստ հայոց դատին լաւ տրամադրուած է երևում»։ Դեսպանը յայտնել է ի վերջոյ,

լիսի 15-ի № 57-ում։ Այս պատմութիւնը կրում է «Memoires d'un délégué au congrès de Berlin» (Բեռլինի կօնգրէսի մի պատուիրակի յիշողութիւնները) ընդհանուր վերնագիրը։ Մենք օգտուել ենք նրա այս պատմութիւնից։

թէ գերմանական կառավարութեան համակրութիւնն էլ հայոց կողմն է։

Հետաքրքրական է ֆրանս. արտաքին գործերի մինիստրի հետ տեղի ունեցած տեսակցութիւնը։

Պ. Ուադինգտօն, մինիստրը, հարցնում է, թէ հայ պատուիրակ նախկին-պատրիարքը ֆրանսերէն չէ՞ խօսում արդեօք։ Պատասխանը բնականաբար բացասական է լինում, և Չէրազ թարգմանում է մինիստրի խօսքերը։ Մինիստրն, ըստ Չէրազի նկարագրութեան, ասել է հետևեալը. «Կարդացի ձեր յիշատակագիրը։ Հայաստանի մի մասը պիտի կցուի Ռուսաստանին։ Դուք ո՞ր մասի համար էք ինքնավարութիւն պահանջում, Էրզրումի նահանգի համար»։ Խրիմեան իր թարգմանի միջոցով բացատրութիւն է տալիս, թէ իրանք ոչ միայն Էրզրումի, այլ և Վանի նահանգի, նոյնպէս մասամբ նաև Դիարբէքիրի ու Տրապիզոնի նահանգների համար են ինքնավարութիւն խնդրում և այս առթիւ խորին համակրութիւն են յայտնում Ֆրանսային և ֆրանս. կառավարութեան։ Մինիստրը շնորհակալութիւն յայտնելով շարունակել է. «Կարող էք ապահով լինել, որ Ֆրանսիան անտարբեր չէ Հայաստանի վիճակին։ Ես անձամբ համակրում եմ ձեր դատին, որովհետև պատել եմ Ասիայում, ուսումնասիրել եմ ձեր ժողովրդի պատմութիւնն և գրականութիւնը և ճանաչել եմ բազմաթիւ նշանաւոր հայեր։ Ես տրամադիր եմ ձեր դատը պաշտպանելու կօնգրէսում, ուր ոչ ոք ինձանից լաւ չէ ճանաչում ձեր ազգն և ձեր երկիրը...»։ Մինիստրն ունկնդրութեան վերջում պարզ կերպով իր հետևեալ գործնական դիտողութիւններն է անում Հայկական Խնդրի մասին. «Դուք,— ասում է,— կօնգրէսին դրական տեղեկութիւններ պէտք է ներկայացնէք, և այն ժամանակ աւելի լաւ կը հասկանան ձեր դատը, որ այդ կերպով գործնական շաւղի մէջ կը մտնէ։ Ձեր յիշատակագիրն ընդհանուր գաղափարներ է միայն բովանդա-

կում, իսկ մեզ հարկաւոր են շօշափելի ապացոյցներ: Յիշատակագիրը Հայաստանի համար այնպիսի վարչութիւն է պահանջում, ինչպէսին ունի Լիբանանը. բայց Լիբանանը կարելի չէ Հայաստանին նմանեցնել: Լիբանանում թիւրք չկայ, իսկ ձեր երկրում շատ կայ: Հետևաբար Լիբանանի վարչական դրութիւնը չէ կարելի յարմարեցնել Հայաստանին: Պէտք է մի այլ, ընդունելի ծրագիր ներկայացնել կօնգրէսին: Պէտք է մանրամասն վիճակագրական ցուցակ ներկայացնել, թէ հայերն ո՛ր գաւառում մեծամասնութիւն են կազմում, ո՛ր գաւառում փոքրամասնութիւն: Կօնգրէսի անդամները սառնասիրտ մարդիկ են, պլատօնական վաւերագրերով չեն կարող բաւականանալ. անհրաժեշտ է մի գործնական միջոց ցոյց տալ: Կօնգրէսի գործը հեշտացնելով դուք ձեր դատի յաղթանակը հեշտացրած կը լինէք...»:

Պատուիրակութիւնը Ուադինգտօնի այս վերջին դիտողութիւնն ընդունելով նրան ներկայացնում է ապագայ ինքնավար Հայաստանի կանխօրէն կազմուած աշխարհագրական քարտէզն, որի վրայ նշանակուած էր, թէ այն ո՛ր նահանգներն և գաւառներն էին հոծ հայաբնակ, որոնց համար ինքնօրինութիւն էր պահանջւում: Բայց Լիբանանի և Հայաստանի միմեանցից տարբեր վիճակ ունենալու մասին փրանս. մինիստրի կատարած նկատողութիւնն առանց հետևանքի է մնում:

Այնուհետև Խրիմեան և Չէրազ գնում են անգլիական դեսպանի մօտ, որ նրանց նոյնպէս մի լուրջ դիտողութիւն է անում. «Ես ձեր խնդրին ծանօթ եմ,— ասում է նա.—ապահով եմ, որ Լօնդօնում լաւ ընդունելութիւն կը գտնէք, եթէ չափաւո՛ր լեզու գործածէք: Անկասկած՝ դիւրին է ոստիկանութիւնն և դատարանները քարկոծել և հարկային սխալները կանոնաւորել, բայց խնդրի մի կէտը կասկածելի է երևում ինձ: Հայ տարրը դարերից ի վեր զուրկ է զէնք կրելու վարժութիւնից. կարո՞ղ է նա մի օրից միւսը զինուորական

տարր դառնալ և զսպել այն վայրենի խումբերն, որոնք վխտում են ձեր երկրում»: Դրան իբրև պատասխան, Խրիմեան յիշեցնում է հայ բեռնակիրներին, որոնք, ասում է, եթէ զէնք ունենան, լաւ զինուորներ կարող են դառնալ»: Դեսպանը ըստ երևոյթին գոհանում է հայ համալների մասին արուած վկայութեամբն և յորդորում է, որ հայ պատուիրակը շուտով Լօնդօն գնայ՝ լորդ Սալզբըրիի հետ տեսնուելու, խոստանալով որ ինքն էլ իր կողմից կը գրէ նրան:

Խրիմեան և իր թարգմանն ապրիլի 11-ին մեկնում են Պարիզից և երեկոյեան հասնում են Լօնդօն:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Մանչեստրի և Լօնդօնի հայ գաղութների գործունէութիւնը յօգուտ հայկական դատի.—Ջէյմս Բրայս.—Խրիմեանը Լօնդօնում և Մանչեստրում.—Ներսէսի կոնդակն և ծրագրական նամակը.—Անգլիական կառավարութեան հայեացքը.—Խրիմեանի տեսակցութիւնները Լօնդօնում քաղաքական շրջանների հետ.—Դեսպանների և քաղաքագէտների կարծիքը.—Սալիզբըրիի ճառը լորդերի ժողովում և Խրիմեանի պատասխանը.—Հայաստանի վիճակը.—Ցոյցն և ոգևորութիւնը գաւառներում և Կ. Պօլսում.—Ներսէս պատրիարքի ճառն Ազգային ժողովում.

Ինչպէս ուրիշ առթիւ էլ յիշել ենք, անգլիաբնակ հայերը վաղուց հետաքրքրւում էին հայկական խնդրով: Շատ բնական էր այս, քանի որ նրանք գրեթէ բոլորն էլ ծննդեամբ նոյն թիւրքահայերն էին, միայն գործով տեղափոխուած Անգլիա: Այստեղ հայերի գլխաւոր կենտրոնը Մանչեստրն էր, ուր բաւական հոծ հայ գաղութ կար, և ապա Լօնդօնը: Նրանք շարունակ յարաբերութեան մէջ էին ոչ միայն իրանց ազգականների և բարեկամների հետ այս խնդրի առթիւ, այլ նաև ազ-

գային ղեկավարող շրջանների հետ։ Կ. Պոլսից անընդհատ տեղեկութիւններ էին տրվում նրանց՝ գործերի ընթացքի մասին, որպէսզի նրանք էլ իրանց կողմից իրանց շրջանում ձեռնարկներ անեն նոյն ընդհանուր նպատակի յաջողութեան համար։

1876 նոյեմբերի 4-ին Մանչեստրի հայ գաղութն ընդհանուր ժողով գումարելով խորհրդակցում է, թէ ինչ միջոցներով կարելի է օգտակար հանդիսանալ հայկական դատին, և որոշում է. «Այսպիսի ամենավճռական խնդրոյ մը առթիւ, որ Հայկական քաղաքականութեան մէջ նոր ուղղութեան մը ծագումն է, լրջօրէն մտածելի և գործի ձեռնարկելէ յառաջ դիմելի Պատրիարքարան, կարևոր հրահանգներ առնելու համար անկէ։ Այս տեսակ դիմումի մը պէտքը անհրաժեշտ է նախ անոր համար, որ պէտք է ազգային կեդրոնին ուղղութեանը մօտէն գիտակցիլ, անոր հետ համընթաց քալելու և իրարու հակառակ ուղղութեան մէջ չգտնուելու համար»։

Ըստ այնմ էլ գրվում է Կ. Պոլիս։ Կ. Պոլսից արդէն Խրիմեան Հայրիկ յարաբերութեան մէջ էր իր Մանչեստրի ծանօթների հետ, որոնք հոգացել էին նրա «Դրախտի Ընտանիք» հեղինակութեան տպագրութեան ծախքն, և ջերմ յորդորներ էր կարդում, որ նրանք չմոռանան «տառապեալ Մայր Հայաստանն... և յիշեն մեր հայրենեաց արդի աղէտները»։ Խրիմեան յանձնարարում է նրանց՝ այս մասին դիմել Անգլիական Խորհրդարանին։ «Ժամ հասեալ,—գրում է նա,—յիշեցէք և յիշեցուցէք Մեծին Անգլիոյ Խորհրդարանին ականջ, որ դեռ կը հաւատայ կանգուն պահել այն գահը (Թիւրքիոյ), յորմէ իմաստութիւն և արդարութիւն հրաժարեր են ի վաղուց։ Եւ նա շարունակում է. «Վշտալից հոգւոց հանելով կը ցաւիմ, զի մենք Հայքս չկարողացանք մեր կեանք, մեր վիճակ, մեր իրաւունք յառաջ Եւրոպացւոց հանել, պարզել և ողբել նոցա պաշտ-

պանութիւն և գթութիւն։ Եթէ ասեմք միջոցներ մեզ ձեռնտու չեն, կը սխալիմք. Ժամանակ և պարագաներ Հայուն ձեռք շատ միջոց տուած են, սակայն Հայն անհոգ է, դեռ կը տատանի, դեռ Պրովպատիկ աւազանին քով անդամալոյծի պէս ինկած կը սպասէ յայլոց օգնութեան»*)։ Այս ջերմ տողերը չէին կարող չազդել Խրիմեանի անկեղծ յարգողների վրայ, որոնք բազմաթիւ էին Մանչեստրում։

Լոնդոնում նոյնպէս զբաղուած էին հայկական հարցով։ Թէև հայերի շրջանն այստեղ աւելի նեղ էր, որովհետև իրանք սակաւաթիւ էին համեմատաբար Մանչեստրի գաղութին, բայց լոնդոնցի մի քանի հայբնաւէր հայերի եռանդը մանչեստրցիներից պակաս չէր։ Շարժման ղեկավարներն էին 2 վաճառական՝ Սէթ Աբգար հնդկաստանցին և Գաբրիէլ Փափազեան զմիւռնիացին, որոնք ուղղակի յարաբերութեան մէջ էին Կ. Պոլսի հետ և Լոնդոնում իրանց կողմն էին շահել մի քանի արևելասէր անգլիացիներ, որոնք այնուհետև եռանդով պաշտպանեցին հայկական հարցը։ Լոնդոնի հայերից առանձնապէս յիշատակութեան արժանի է նաև Յ. Յակոբեան, որ անգլիական մամուլի մէջ հայն ու իր ընիկ երկրի ցաւերը ներկայացնում էր անգլիական հասարակութեան և իր այս լրագրական հրատարակութիւններով նպաստաւոր հասարակաց կարծիք ստեղծում հայոց համար։ Այս ջանքերի ազդեցութեան տակ՝ Լոնդոնում մի յատուկ ընկերութիւն էլ կազմուեց՝ «Արևելեան Խնդրի Ընկերութիւն» (Eastern Question Assosiation), որի նպատակն էր հետազօտել «արևելեան քրիստոնեաների» արդի դրութիւնն և դարման առաջարկել նրանց թշուառ վիճակը բարուոքելու։ Այս ընկերութիւնը 1877-ին հրատարակեց «Հայաստան

*) «Մանչէսթրի հայ գաղութը», Մուշեղ եպիսկոպոս, տպուած իբր թերթօն Բոստոնի «Ազգ» շաբաթաթերթում։

և Լիբանանը»*) վերնագրով մի գրքոյկ, որի մէջ նկարագրուած էր Հայաստանի վիճակը, յառաջ էին բերուած այնտեղ կատարուող բռնութիւններն և Թրքական վարչութեան սիստեմական պակասութիւնները։ Միևնոյն ժամանակ պատկերացվում էր և Լիբանանի վիճակը, թէ ինչպէս թշուառ էր նա յառաջ և ինչպէս 1860-ից յետոյ՝ շնորհիւ իր ստացած վարչական ինքնօրինութեան՝ ամեն ինչ բարեփոխուած էր այնտեղ։ Այս համեմատական նկարագրութեան նպատակն էր ցոյց տալ, թէ Հայաստանին էլ ճիշտ նոյնանման վարչական դրութիւն էր հարկաւոր, որ այնտեղ ևս միանգամ ընդ միշտ վերջ գտնէին շարունակ տիրող անկարգութիւնները։ Հայաստանի վերաբերեալ տեղեկութիւնները քաղուած էին Հարստահարութեանց ծանօթ Տեղեկագրից։

Նոյն տարին (1877) Ջէմս Բրայս**) (James Bryce) իր հայասիրական պրօպագանդին սկիզբ դրեց մի հրապարակական դասախօսութիւն կարդալով հայերի և Հայաստանի մասին, Լօնդօնի Royal Institution դահլիճում։

Իսկ 1878-ի մարտին Լօնդօնի հայերը հրատարակեցին «Դեսպանախորհուրդն և Հայերը» վերնագրով մի գրքոյկ («The Confererce and the Armenians»), որի

*) «Armenia and Lebanon», by J. W. Probyn, esq. Cassel Petter & Galpin, London, 1877 թ.։

**) Այս նշանաւոր անգլիացին 1876-ին ճանապարհորդած է Կովկասում և վեր է ելած Մեծ-Արարատի գագաթը։ Իր այս ճանապարհորդութիւնը նա հրատարակեց 1877-ի սկզբներին։ Գիրքը բաղկացած էր ի սկզբան 11 մեծ գլուխներից և միմիայն ուղևորական նկարագրութիւններ էր պարունակում, բայց 1896-ին չորրորդ հրատարակութեանը մէջ Ջ. Բրայս մի նոր գլուխ աւելացրեց, որտեղ ընդարձակօրէն խօսում է վերջին 20 տարուայ (1876—1896) հայկական անցքերի մասին հայոց համար համակրական ուղղութեամբ։ («Transcaucasia and Ararat», by James Bryce, 4-th edition revised, London, 1896).

մէջ համառօտ կերպով հայոց ներկայ կացութեան մասին խօսելուց յետոյ յիշեցնում էին անգլիացիներին, թէ հայերը քիչ չեն օգնել անգլիացիներին Հնդկաստանի մէջ իրանց ազդեցութիւնը տարածելուն, և առաջարկում ու խնդրում էին, որ փոխադարձաբար Անգլիան էլ օգնէ, որ հայերի համար ևս Թիւրքիայում այնպիսի քաղաքական վիճակ ստեղծուի, ինչպիսին պիտի որոշուէր բուլղարների համար։ Այս գրքոյկն ուղարկուեց անգլ. թագաժառանգին, բոլոր մինիստրներին և բազմաթիւ քաղաքական և եկեղեցական բարձր անձնաւորութիւններին։

Առ հասարակ Սան Ստեֆանոյի դաշնադրութիւնից յետոյ 1878-ի առաջին կէսին ոչ մի եւրոպական երկրում այնքան չէր խօսվում և գրվում հայերի մասին, որքան Անգլիայում։ Անգլիական հասարակաց կարծիքը համակիր էր հայերին, և այս համակրութիւնն արտայայտվում և արծարծվում էր ժողովներով և լրագրական յօդուածներով։ Եղան պատկերազարդ թերթեր (ինչպէս Good Worlds»), որոնք այս առթիւ հայոց թագաւորի պատկերներ էլ հրատարակեցին։ Եւ այսպէս՝ երբ Խրիմեանի պատգամաւորութիւնն Անգլիա հասաւ, այնտեղ հասարակաց կարծիքն ընդհանրապէս նպաստաւոր էր արդէն նրա նպատակին, այն է՝ Հայաստանի ինքնավարութեան։ Այս համակրանքը չէր հիմնուած միմիայն մարդասիրական և առհասարակ թոյլին օգնելու բնական զգացմունքի վրայ, որ սովորական է ամեն մի բրիտանացու, այլ նա ունէր անշուշտ և իր շահադիտական պատճառը զուտ բրիտանական ազգային տեսակէտից, այն է՝ Սան Ստեֆանոյի դաշնադրութեամբ Հայաստանի մի մասի ռուսաց ձեռքն անցնելն և հետևաբար Ռուսաստանի ազդեցութեան աւելանալը դէպի Հնդկաստան տանող ճանապարհի վրայ, որի դէմ պէտք էր թումբ կանգնել...

Այն միջոցին, ինչպէս տեսանք, Լօնդօնի և Ման-

չէտարի հայերն ոչ թէ անգործ չէին մնում, այլ մեծ եռանդով գործում էին Անգլիայում, նորանոր փաստերով այդ նպաստաւոր վիճակն և համակրանքը միշտ վառ պահելու համար։ Այս կողմից առանձնապէս յիշատակելի են Գարեգին Փափազեան, Յովհաննէս Անդրէասեան, Գառնիկ Յովակիմեան և այլ վաճառականներ, որոնք այս խնդրում տեղացի մի քանի հայերի ցոյց տուած նախանձի և չկամութեան զգացումներից բոլորովին չվհատուելով՝ անձնուիրութեամբ շարունակում էին գործել։ Յ. Անդրէասեան ի մէջ այլոց մի յատուկ ընկերութիւն է կազմում Society for promoting the interests of Armenia (Հայաստանի շահերը յառաջացնող ընկերութիւնը) անունով, որի նպատակն էր «Հայ ազգին իրական (և ոչ վերացական կամ երևակայական) շահերը պաշտպանել և յառաջացնել»։ Մի մասնաժողով, որի նախագահն էր ինքն Յովհ. Անդրէասեան, ջանքեր էր անում ընկերութիւնն ընդարձակ հիմքերի վրայ հաստատելու, բայց մեծ յաջողութիւն չունեցաւ, և երբ Թրիմեան իբրև հայ պատուիրակ Անգլիա եկաւ պաշտօնապէս հայկական դատը պաշտպանելու, Անդրէասեան մի շրջաբերական հանեց, թէ իր կազմած ընկերութիւնն այլևս raison d'être չունէր և լուծւում էր, «ազգային հանրական խնդիր մը» թողնելով «հանրութեան՝ պարտ ու պատշաճը անօրինելու»։

Անգլիական առաջին լուրջ համակրական ժողովը գումարեց Ջ. Բրայս՝ մարտի 7/19-ին Գ. Փափազեանի աջակցութեամբ։ Բազմաթիւ նշանաւոր անգլիացիներից զատ այնտեղ ներկայ էին նաև 9 հայ։ Ժողովում որոշուեց կազմել Anglo-Armenian Association անունով մի միութիւն, որի պատուաւոր քարտուղարութիւնը յանձն առաւ կատարել Ջ. Բրայս, իսկ պատուաւոր նախագահութիւնն ընդունեց լորդ Կարնարվօն։ Միևնոյն ժամանակ մի պատգամաւորութիւն ընտրուեց, որին պաշտօն տրուեց ներկայանալ մինիստր լորդ Դէրբիին

և հայկական խնդրի վրայ մի յիշատակագիր ներկայացնելով նրա աջակցութիւնը խնդրել։ Այս առթիւ Գ. Փափազեանի թելադրութեամբ Կ. Պոլսից և Զմիւռնիայից շնորհակալութեան ուղերձներ ուղարկուեցին Ջ. Բրայսին և միևնոյն ժամանակ փաստեր և տեղեկութիւններ հայկական խնդրի վերաբերեալ։ Շնորհակալութեան մի նամակ էլ Ներսէս պատրիարք գրեց Ջ. Բրայսին, որն անձամբ յանձնեց Մ. Ջէրազ։ Այս բազմաթիւ համակրական ցոյցերից զգացուած՝ Ջ. Բրայս եկաւ Թրիմեանի մօտ, շնորհակալութիւն յայտնեց իր ստացած նամակի և ուղերձների համար և խոստացաւ եռանդով աշխատել հայկական դատի յաջողութեան համար։

Հայ պատուիրակութիւնը Լօնդօնում իջաւ Սէթ Աբգարի տանն և ամբողջ ժամանակ վայելեց նրա հիւրասիրութիւնը։ Թրիմեան իր առաջին տեսակցութիւնն ունեցաւ պարսկական արտաքոյ կարգի դեսպան Մելքոն խանի հետ, որ աւելի իբրև հայ ներկայանալով, քան իբրև օտար քաղաքագէտ, նոյն խորհուրդը տուաւ, ինչ որ Նուպար փաշան՝ միւս հայ քաղաքագէտն էր տուել, այն է՝ համեստ պահանջ ներկայացնել կօնգրէսին։

Թրիմեան իր հետ բերել էր իր պաշտօնը հաստատող պաշտօնական նամակներ յանուն լորդ Դէրբիի և լորդ Սալիսբըրիի, որոնք, նրանց քարտուղարների միջոցով, յանձնուեցին իրանց։

Դիւանագիտական շրջաններին պաշտօնական այցելութիւն տալուց յառաջ՝ Թրիմեան գնաց Մանչէստր և յանձնեց այնտեղ Ներսէս պատրիարքի հետևեալ կօնդակը.

«Ազնիւ և օրհնեալ ժողովուրդ Հայոց, որ ի Մանչէստըր ու յԱնգլիա.

«Դուք ի Ձեր ընդարձակ ազգասիրութենէ և օրինակաւ ազնիւ Անգլիացւոց շարժեալ, ոչ սակաւ օգնու-

թիւնս մատուցիք ցարդ թշուառ ազգակցաց Ձերոց, որք յարեւելս. արդ ի քանի ամաց և այսր Հայաստան աշխարհ, նախկին որրան մարդկութեան և բուն Հայրենիք մեր, ցմրուրն քամեաց զբաժակ դառնութեան և չարչարանաց՝ սովու, հրդեհօք քաղաքաց և գիւղօրէից, վանուց, եկեղեցեաց և դպրոցաց, անգութ աւարառութեամբք, յափշտակութեամբ և լլկմամբ կուսից օրիորդաց և համեստաբարոյ կանանց, և բանի կրօնափոխութեամբք, և արհաւրօք պատերազմաց, որք ընդամենայն տեղիս հաչակեցան այսրեկ արարք գազանականք և դառնաղէտք, և դուք իսկ հրատարակութեամբք բազումս օգնեցիք մեզ. և մեք առ որս անկն էր գոհացէս և բարձրաձայն զբոռոք բարձաք. այլ չև էր հասեալ ժամն փրկութեան։ Արդ անասաւելի հնչեաց ժամ բարեպատեհ, յորում յուսամ յԱստուած թէ փրկելոց իցեմք յահագին տառապանս այսր Բանգի բարեխնամ քրիստոնեայ տէրութիւնք Եւրոպայ, յորս փայլէ մարդասիրութեամբ և վեհանձնութեամբ և գթասրտութեամբ Մեծն Բրիտանիա, համախորհուրդ գտեալ են ելից աղագս զտանել արեւելեան խնդրոյն, առ որս գործոց զաչս իւր և Ազգ Հայոց առ ի խնդրել դարման խոր և խայթեալ վիրաց իւրոց և անհնարին չարչարանաց զորս չարչարի ոչինչ գործեալ արժանի չարչարանաց։

«Վասն որոյ յայս բարեպատեհ ժամ կամօք և հաճութեամբ ազգիս և մեր՝ գայ հասանէ առ Ձեզ ամենապատիւ նախորդն մեր Տէր-Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմեան, որ պատկեր է Հայաստանի, և պատկերացուցանելոց է զամենայն զաւարառութիւնն հէգ Հայրենեաց մերոց, որ պատմելոց է Ձեզ և առ որս պէտք իցեն՝ զամենայն թշուառութիւնս մեր, և ի խորհուրդ մտեալ ընդ Ձեզ խնդրելոց է և ցուցանելոց իսկ զդարմանս վիրացն։ Սրբազան Խրիմեան պատգամաւոր լիազօր և փոխանորդ և ներկայացուցիչ համայն ազգիս, տանելոց է զամենայն զոր պարտ իցէ տանել. չեն պէտք

յանձնարարութեան, զի սրբազան եղբայրն մեր ինքնին ծանօթ է ձեզ բարեպաշտ հայրենասիրութեամբն իւրով և ազգասիրական առաքինութեամբ։ Այլ և չէ հարկ կրկնել անդանօր, զի առանց Ձեր, առանց օժանդակութեան Ձերոյ և գործակցութեան՝ իբրև օտարական որ յԱնգղիա չկարէ գործել։ Յամենայն գործունութիւնս իւր Նորին Սրբազնութիւն կարօտի աջակցութեանց Ձերոց։ Խնդրեմ և աղաչեմ զՁեզ, բոլորեցարու՛ք շուրջ զնովաւ, իբրև արդարև զփրկիչ և պատուական Հայր. առաջնորդեցարուք նովաւ և առաջնոր-դեցէք նմա. ընկալարուք զբանս յորդորանաց նորա, և հաղորդեցէք նմա զխորհուրդս Ձեր զիմաստունս. իբրև առեալք լուսափայլք զոր առէք զարևու Ն. Սրբազնութեան, գլուխ և կեդրոն Ձեզ, սիրելեաց մերոց եղիցի նա, ո պատուական հայկազունք եայլն եայլն։ Տուեալ ի պատրիարքարանէս հայոց յամի Տեառն 1878 մարտի 1 և յազգային թուականին ՌՅԻԷ. Պատրիարք Կ. Պօլսոյ Ներսէս արքեպիսկոպոս»։

Պատրիարքական այս կոնդակի վրայ Մանչէստրի հայերն առաջնորդարանում ժողով գումարելով միաձայն որոշեցին աջակցել Խրիմեանին ամեն հնարաւոր միջոցներով։ Բայց վերոյիշեալ կոնդակից աւելի կարևոր է Ներսէս պատրիարքի Լոնդոնի իր մի հայ խորհրդակցին գրած մասնաւոր նամակն, որի մէջ իր այն ժամանակի քաղաքականութիւնը պարզ կերպով յառաջ է բերում։

«...Եթէ պէտք ըլլայ բոլոր ազգը մէկտեղ աշխատիլ, ամենքը պատրաստ են աշխատելու։ Այդ գործողութեան մէջ միութիւնը պահելու համար պարտաւորուած եմ ձեռս յիս ամփոփելու ամենայն աշխատութիւն ու պատասխանատուութիւն*)։

«Վստահութեամբ դիմեցէք ինծի, վստահութիւն

*) Ստորագծումները մերն են։

ունեցէք կատարեալ մեր Սրբազան եղբօրը, Խրիմեան Հայրիկին, որ այժմ ի Լոնտոն Ձեր քով կը գտնուի։ Քաջալերեցէք զինքը, օգնեցէք իրեն. ինչ որ անոր ընէք՝ բոլոր ազգին, մեր սիրելի ու կարօտ հայրենեաց ըրած պիտի ըլլաք։ Այս խօսքերն ոչ միայն Ձեզի կուղղեմ, այլ՝ ի Ձեզ և՛ Ձեր ազնիւ ու հայրենասէր ընկերաց, որ միեւնոյն ոգւով կաշխատին մեր ազգային դատին համար»։

«Մեր հոս կարծիքն ու յոյսն այն է, որ Դեսպանաժողովը (կոնգրէսը) պիտի գումարուի։ Եթէ այս ըլլայ՝ թէ մենք հոս, և թէ դուք հոդ մեր ջանքերը կրկնապատկելու ենք։ Դեսպանաժողովին մէջ մեզի ի նպաստ ձայներ պիտի բարձրանան, բայց առաջարկութիւնը պէտք է Անգլիայէն գայ։ Անգլիան որ ուզէ՝ Հայաստանը փրկուած է»։

«Հայաստանը, կամ ինչ որ մնաց Հայաստանէն, կամ բոլորովին Ռուսաց ձեռքը պիտի անցնի կամ չէզոք երկիր մը պիտի ըլլայ, այսինքն ինքնօրէն կառավարութիւն մը։ Ո՞րն աւելի յարմար է Անգլիայի շահուն։ Այս կէտը լաւ բացատրած էք և Դուք Ձեր յիշատակագրին մէջ, որն որ կը ցուցնէ որ անկարելի է հիմայ ազգին կողմէն տրուիլ պաշտօնական կերպով, զի արդէն կառավարութեանց մատուցինք մեր պաշտօնական յիշատակագիրը։ Բայց մասնաւորաց կրնայ տրուիլ և օրագրաց մէջ հրատարակուիլ ոչ թէ ազգին կողմէն, այլ Լոնտրայի ազգայնոց կողմէն»։

«Հիմակ մի առ մի պատասխանեմ Ձեր զանազան հարցմանց.

«Ա.—Մեր քաղաքականութիւնն է Ռուսիոյ երախտապէտ ըլլալով՝ յուսալ յԱնգլիա եւ Անգլիոյ շնորհիւ ապահովել մեր քաղաքական եւ նիւթական բարեկեցութիւնը։ Այս բարեկեցութիւնն ուրիշ կերպով ձեռք չենք կրնար բերել, այլ միայն ազգային ինքնօրինութեամբ Հայաստանի մէջ։ Այլ որպէսզի այս բառը չի խրտչեցնէ

զոմանս, ահաւասիկ մեր formule-ը. Administration de l'Arménie par les Arméniens»։

«Բ.—Խորէն սրբազանը, որ Բեթերսպուրկ է, մեր քաղաքականութեան առաջին մասին կը ծառայէ, ինչպէս Խրիմեան սրբազանն ալ ի Լոնտոն՝ երկրորդ մասին։

«Գ.—Երբ Դեսպանաժողովին գումարման որոշում ըլլայ, ազգին կողմէն անպատճառ պատգամաւորութիւն մը պիտի գտնուի հոն։ Արդէն Խրիմեան սրբազանն այդ պաշտօնն ունի Եւրոպայի մէջ։

«Դ.—Գերմանիոյ և Իտալիոյ քով պէտք եղածը ըրած ենք արդէն, և այս երկու տէրութեանց համակրութեանն և օժանդակութեանը վրայ բոլորովին վստահ ենք։ Գաղիոյ քով ինչ որ այստեղի դեսպանին ձեռօք կրնայինք ընել, ըրած ենք։ Ինչ որ Խրիմեան սրբազանը պիտի ընէր ի Փարիզ, զայն չգիտեմք թէ ըրա՞ւ, և ի՞նչ աստիճան յաջողեցաւ. նմանապէս չգիտեմք թէ ինչ ըրաւ Աւստրիոյ համար, վասն զի Փարիզէն նամակ չգրեցին մեզ...»։

«Եւ ես Ձեզնէ յանուն ազգին կը խնդրեմ, որ ամեն ջանք ու զոհողութիւն ընէք որչափ որ կարելի է ամեն օր մէյմէկ բան գրել տալու համար Լոնտոնի լրագրաց մէջ Հայոց համար։ Կառավարութիւնները բաւական արթնցան մեզի համար, բայց հասարակաց կարծիքն՝ ոչ։ Ուստի հրատարակութեան տալու է հարստահարութեանց տեղեկագրերն և Քիւրտերու ըրած նորանոր բռնութիւնները, որոնք Խրիմեան Հայրիկի քով կան, ինչպէս նաև ընդհանուր տեղեկութիւնք Քրդաց կեանքին և այլն վրայ, զորոնք խիստ լաւ գիտէ Խրիմեան սրբազան»*)։

Այս հետաքրքրական գրութիւնն ապացուցանում է, որ այն ժամանակ Ներսէսի և իր խմբի բովանդակ

*) «Մանչեսթրի հայ գաղութը» Բօստոնի «Ազգ» թերթում։

յոյսն Անգլիայի վրայ էր, թէ նա կաշխատի, որ Հայաստանին ինքնավարութիւն տրուի Ռուսաստանի յառաջխաղացման դէմ թումբ կանգնելու համար: Այս մտքին էին արծարծում այն ժամանակ նաև հայերի անգլիացի բարեկամները: «Եթէ ուզում ենք Ռուսաստանի դէպի Ասիա յառաջանալը արգելել,—գրում էր Ջէյմս Բրայս, «Fortnighty Review»-ի մէջ.—դրա համար ամենալաւ, գուցէ միակ տեղական միջոցն է հայ ազգութեան զարգանալը: Հայերը շատ վստահութիւն չունեն Ռուսաստանի վրայ: Նրանց ազդեցութիւնն, որ արդէն զօրաւոր է Փոքր Ասիայում, հակառուսական մի ազդեցութիւն պիտի լինի. հայերին գոհացում տրուելով՝ ռուսական միջամտութեան պատրուակները պիտի ջնջուեն: Հայերին պէտք եղածը մի կենտրոն է, մի երկիր, որը կարենան իրանցը կոչել և որը կարողանան ապագայում, երբ նրա հարստութիւնն և թուական ուժն աւելանայ, մի պետութեան վերածել...»:

Իսկ անգլիական կառավարութիւնն, որ անշուշտ թէ հայերից և թէ նրանց անգլիացի բարեկամներից լաւ էր իմանում, թէ որն էր այն միջոցին Անգլիայի շահն, և թէ ինչպէս պէտք էր Ռուսաստանի յառաջխաղացութիւնն արգելել, պակաս եռանդով զբաղուած չէր այս վերջին հարցով. բայց նա այս խնդիրը լուծեց ոչ թէ Հայաստանին ինքնավարութիւն շնորհելով, այլ Կիպրոսի դաշնադրութիւնը կնքելով Թիւրքիայի հետ... և այն էլ Բէրլինի դաշնագրի նախօրեակին:

Վերջապէս մայիսի 10-ին (ն. տ.) անգլիական արտաքին գործերի նոր մինիստրը՝ լորդ Սալիսբըրի ընդունում է հայ պատուիրակութիւնն, որ խնդրում է Մեծն Բրիտանիայի օժանդակութիւնը Հայաստանի ինքնավարութեան: Ահա ինչ է պատասխանում անգլ. մինիստրն, ըստ Մ. Ջէլալի. «Հայերն իրաւունք ունեն լաւ վարչութիւն (une bonne administration) պահանջելու, բայց ոչ մի պետութիւն չէ կարող այժմից որոշ

ասել, թէ ինչ ձևի վարչութիւն պիտի շնորհուի նրանց, որովհետև դրա բանաձևը դեռ չէ գտնուած (la formule est à trouver) և միմիայն կօնգրէսը կարող է այդ վճռել: Ամենայն դէպս դուք կարող էք վստահ լինել, թէ հայերը պիտի ունենան այնպիսի մի վարչութիւն, որ նրանց պիտի երաշխաւորէ բարեկեցութիւն, ապահովութիւն և խաղաղութիւն»*):

Գեղեցիկ, յուսատու և մանաւանդ վճռական խօսք: Բայց ահա թէ լորդ Սալիսբըրի ինք ինչպէս է պատմում այս տեսակցութիւնը Կ. Պօլսի դեսպան Լէյըրդին գրած իր պաշտօնական նամակում:

«Տաճկի արքեպիսկոպոս և Թիւրքիայի հայոց նախկին պատրիարք Խրիմեան երէկ տեսակցութեան եկաւ ինձ մօտ. Նրա այցելութեան նպատակն էր խնդրել, որ պետութիւնների կօնգրէսում հայերի շահերն էլ նկատողութեան առնուեն և միջոցներ գործ դրուեն նրանց համար լաւ վարչութիւն հաստատելու, և քրդերի բռնութիւնների և հարստահարութիւնների դէմ պաշտպանելու:

«Մանաւանդ պէս նա ինձ յայտնեց, թէ Բ. Դուռն դէմ թշնամական մտքով չէր խօսում, թէ իր ժողովուրդը Օսմանեան կայսրութիւնից անջատուելու ցանկութիւն չունի, և թէ Հայաստանի բիւրք բնակիչներն եւս հաւասարապէս հալածւում են անօրէն կառավարութեան բիւրդերից**): Ես էլ Վեհ. Թագուհու կառավարութեան յայտնած հայ ազգին զգացած անկեղծ համակրութիւնը յայտնելով ապահովացրի նրան, թէ մեր բոլոր ջանքը գործ կը դնենք հայերի վիճակը բարւոքելու, բայց հարկ չհամարեցի կօնգրէսի կողմից գործադրելի մասնաւոր միջոցների նկատմամբ խոստումներ տալ»***):

Ինչպէս տեսնում է ընթերցողն, այստեղ լորդ Սա-

*) «L'Arménie» 15 փետրուարի 1890 թ. № 20.

**) Ստորագծումը մերն է:

***) «Անգլ. Կապոյտ Գիրք», 1878 թ.:

լիզբրիի պատասխանն աւելի անորոշ է, քան Չերազի պատմածի մէջ։ Նոյն իսկ Խրիմեան դժգոհ է մնում, երբ տեղեկանում է Սալիզբրիի այս նամակի բովանդակութեան, և գաղտնի իմացնում է Ներսէսին, թէ իր տեսակցութիւնը Սալիզբրիին սխալ է հաղորդած դեսպանին։ Ո՞րն էր այդ սխալը։ Արդեօք սխալը Սալիզբրիի՞ մօտ է թէ՞ թարգմանի մօտ, որ տարբեր կերպով է հաղորդել Խրիմեանի խօսքերն անգլ. մինիստրին, դժուար է պարզել։ Մի բան միայն շատ որոշ է, որ հայ գլխաւոր պատուիրակի եւրոպական լեզու չգիտնալը շատ մեծ անյարմարութիւններ ունէր, որ թէ այն ժամանակ և թէ այնուհետև ամէն քայլափոխին երևան էր գալիս։

Հայ պատուիրակութիւնն ամենևին չկարողացաւ ազդել անգլիական կառավարութեան վրայ, որն այնուհետև իր բռնած ընթացքով էլ ցոյց տուեց, թէ ոչ միայն Հայաստանի ինքնավարութեանը համար պիտի չաշխատէր, այլ նոյն իսկ համոզուած էլ էր, կամ գոնէ պաշտօնապէս նրան ձեռնտու էր այդպէս մտածել, թէ հայերն ընդունակ էլ չեն ինքնավարութեան, ինչպէս քիչ յետոյ պիտի տեսնենք…։ Այս համոզմունքով կամ այս դիտաւորութեամբ էլ Բիկընսֆիլդ և Սալիզբրի գնացին Բէրլին։

Այս տեսակցութիւնից յետոյ Խրիմեան ամբողջ մի ամիս մնաց Լոնդոնում, ուր տեսնվում էր դեսպանական մարմնի անդամների և անգլիական քաղաքական գործիչների հետ, աշխատելով գոնէ նրանց միջոցով հող պատրաստել ինքնավարութեան ծրագրի յաջողութեան համար։ Պատմենք այս տեսակցութիւններից կարևորները, հետևելով Մ. Չէրազի հաղորդածին։

Որովհետև ժամանակ չունէին Վիեննա անցնելու, ուստի Խրիմեան և իր թարգմանը Լոնդոնի աւստրիական դեսպանին այցելելով՝ նրան յանձնեցին Ներսէս պատրիարքի մի նամակն յանուն Աւստրիա-Հունգա-

րիայի արտաքին գործոց մինիստրի, և մի օրինակ յիշատակագիր, որպէսզի դեսպանն ուղարկէ մինիստրին։ Դեսպանը խոստանում է անձամբ էլ կարդալ այս թղթերն և ապա ուղարկել կոմսԱնդրաշիին։ Այս պետական անձն այն կարծիքն է յայտնում, թէ «Հայերը, յոյներն և կաթոլիկներն ազօթք պէտք է անեն Աստուծուն, որ սուլթանը Կ. Պոլսում մնայ, որովհետև եթէ նա Ասիա անցնի, այսինքն եթէ նա Եւրոպական Թիւրքիան բոլորովին կորցնէ, այն ժամանակ նրա ատելութիւնը պիտի ծանրանայ Ասիոյ քրիստոնեաների վրայ…»։

Մայիսի 1/13-ին Խրիմեան այցելել է Անգլիական Եկեղեցու պետին, Կէնտըրբըրիի արքեպիսկոպոսին և նրան խօսել է հետևեալ ճառը*), որ ամբողջապէս ներկայացնում է Խրիմեանի սիրտն և զգացմունքն՝ առանց դիւանագիտական ոճերի։

«Բարձրաշնորհ Սրբազան Տէր,

«Ես, որ մի նուաստ ներկայացուցիչ և պատգամաւորն եմ Կ. Պոլսոյ Պատրիարքին և Թուրքիոյ Հայոց ազգին կողմէն, կը փութամ այսօր նախ իմ շնորհակալութիւնս նուիրել Ձեր Բարձր Սրբազնութեան, որ Ձեր անձուկ ժամերու մէջ բարեհաճեցաք մեր խոնարհ այցելութիւնն ընդունիլ քրիստոնէական եղբայրասիրութեամբ, զոր ընդունեցիք Աւետարանի ներշնչութենէն, որ կաւանդէ իր աշակերտաց թէ «Դուք ամենեքին եղբայր էք»։

«Ահաւասիկ Աւետարանին քարոզած քրիստոնէական եղբայրասիրութեան այդ գերագոյն օրէնքն իրաւունք կուտայ մեզ՝ համարձակ ազատութեամբ դիմել Ձեր բարձր եղբայրութեան, ուշադրութիւն և պաշտպանութիւն հայցել Հայոց Դատին համար, որոյ հա-

*) Այս ճառն օրինակուած է նոյն ինքն Խրիմեանի ձեռագրից։ («Մանչէսթըրի հայ գաղութը» Մ. եպ.-ի)։

մար պաշտօն ընդունած եմ հանել զայն Եւրոպիոյ քրիստոնեայ աշխարհին ատեանը։

«Ողորմած Տէր, բաւ գիտակ էք, թէ ներկայ Արեւելեան Խնդրոյն մէջ, Հայոց ազգն ևս իբրև քրիստոնեայ ժողովուրդ նոյն իրաւունք և հաւասար բաժին ունի այն ազատութեանց, զորս պիտի վայելեն միւս քրիստոնեայ ժողովուրդներ. վասնզի միայն Պուլկար և Յոյն ժողովուրդներ չեն, որ կը չարչարուին Թուրքաց բռնութեան տակ, հապա ասիական մասին մէջ Հայոց աշխարհն և Հայոց անպաշտպան ազգ բնիկ անգամ առաւել ենթակայ եղած է նոյն չարչարող ձեռքին տակ։ Գրեթէ հինգ ամբողջ դար է, որ իբրև մարտիրոս կը տանջուի, և կապրի միայն ազգային ազատութեան յուսով։ Հին աղէտներու վրայ բազմապատիկ բարդեցան ներկայ պատերազմին աղէտները, որոց նկարագիրն աննկարագրելի է։ Եւ այդ ամենը կրեց Թշուառ Հայաստան և իր դառն բաժակ մինչև ցմրուրն նախատինք հասաւ, հազարաւոր գիւղերը աւերակ դարձան խաժադուժ քիւրտերուն ձեռքէն, և Հայոց Թշուառ ժողովուրդ մերկ, կողոպուտ, հողի վրայ նստաւ։ Ոմանք ևս Թողլով քաղցր հայրենիք, շնչասպառ, գացին օտար աշխարհները։ Պատերազմ դադրեցաւ. կը կարծէինք, որ մեր ապերջանիկ ժողովուրդին հարստահարութիւն ևս կանգ կառնու. բայց աւաղ, ևս աւել սաստկացած է առ այժմ, և ամէն օր Հայաստանեայց գաւառներէն սոսկալի հարստահարութեան և անլուր ոճիրներու լուրերներ կը հասնին Հայոց Պատրիարքարանը։

«Ողորմած Տէր, զարման, զարման կը խնդրենք Ձեր քրիստոնէական մարդասիրութենէն։ Հայը կը հաւատայ, որ իր տառապանաց վախճանը հասած է, և թէ Նախախնամութիւնը բռնակալն պիտի համարի զայն։

«Կը հաւատանք նաև, որ Նախախնամութեան կողմէն պատրաստուած Հայոց հինգդարեան գերութեան շղթան արձակող ձեռքը Մեծին Բրիտանիոյ համատա-

րած Պետութեան հզօր և ազատասէր ձեռքն է, որ ստրկացած ազգերուն ազատութիւն կը բաշխէ։ Ահաւասիկ այդ պաշտպանող ձեռքէն Հայոց ազգն ևս իր արդար բաժինը կը խնդրէ»։

Անգլիացի արքեպիսկոպոսը պարագային յարմար քաղաքավարական պատասխան է տալիս, առանց որոշ խոստումի, և հիւրասիրում է սուրճով։ Ապա հրաւիրում է նրանց հանդիսաւոր ճաշի լորդերի պալատի նիստին։ Հետևեալ օրը պ. Ջէյմս, խորհրդարանի ազատական մի անդամը, հրաւիրում է Խրիմեանին իր տունն երեկոյթի։

Մայիս 3/15-ին մի հնդիկ բաջա ճաշ է տալիս Խրիմեանին և կալկաթացի 2 հնդիկ-մահմեդական համակրական կենաց են առաջարկում հայկական դատի յաջողութեան համար։

Խրիմեան դեռ չէր գնացել լորդ Բիկընսֆիլդին այցելութեան։ Նախ քան առաջին մինիստրին այցելը՝ Խրիմեան գնում է նրա քաղաքական հակառակորդ մեծ ծերունուն՝ Գլադստոնին տեսնելու*)։ Նախորդ օրն արդէն Ջէրազ տարել յանձնել էր նրան Պատրիարքարանի Յիշատակագրի մի պատճէնը։ Գլադստոն սիրով ընդունում է հայ արքեպիսկոպոսին, ծանօթացնում է իր կնոջ և աղջկան. հիւրասիրում է և երկարօրէն խօսում է նրանց հետ եկեղեցական հարցերի և հայ լեզուի ու գրականութեան մասին։ Քաղաքական խնդրի նկատմամբ, նա յայտնում է, թէ ինքը համակրում է հայկական դատին, բայց աջակցութիւն չէ խոստանում, որովհետև իշխանութիւնից հեռու լինելով «այսօր մեծ ազդեցութիւն չունի»։ Նա բացատրում է,

*) Այս հանգամանքը նեղացրել է Լոնդոնի հայերին, որոնք Մ. Ջէրազին են վերագրել այս այցելութիւնը։ Գ. Փափազեան և իր ընկերները գտնում էին, որ անքաղաքավարական էր Խրիմեանի և Ջէրազի այս վարմունքը։

թէ խորհրդարանի վրայ բացարձակօրէն տիրողը Բիկընս Ֆիլդն է։

Այնուհետեւ հայ պատգամաւորութիւնն այցելում է դեսպաններին։ Մայիսի 4/16-ին ներկայանում են ֆրանս. դեսպանին, որ ասում է ի մէջ այլոց. «Ինքնավար նահանգների համար ես միշտ մի վախ եմ ունեցել. այն է, որ երբ Թրքական իշխանութիւնը հեռանում է այնտեղից, քրիստոնեայ և մահմեդական կռւում են միմեանց հետ։ Արդեօք նոյն բանը պիտի չպատահի՞ նաև Հայաստանում, եթէ սրան ինքնավարութիւն տրուի։ Այս նկատողութիւնը գուցէ բոլորովին անհիմն չէր։ Գերմանական դեսպանը, Մինստէր, խորհուրդ է տալիս շուտով գնալ Բէրլին, յուսացնելով թէ Բիսմարք պիտի աշխատի Թրքահպատակ քրիստոնեաներին Թրքական լուծից ազատել, և շատ համակրական կերպով համաձայնում է, որ «Հայաստանն ինքնավարութիւն ձեռք բերէ քիւրդերի և Թիւրքերի չարիքից ազատուելու համար»։ Նա պնդում է, թէ «հայերը զէնքի ոյժով պէտք է դիմադրեն այդ աւազակների (քիւրդերի) յարձակումներին»։ Իտալական դեսպանն ասում է Խրիմեանին. «Իմ կարծիքով միւս պետութիւնները Հայաստանում ակադեմական շահեր ունեն։ Անգլիան է միայն, որ այնպիսի էական շահեր ունի այնտեղ, որ նա նոյն իսկ բանակ կուղարկէր Հայաստանը գրաւելու համար, եթէ այդ թոյլ տային նրան...»։ Ամենից վերջն են գնում օսմանեան դեսպանի մօտ, որ շատ է նեղանում, թէ ինչու նրանք, Խրիմեան և Չէրազ, Թրքահպատակ լինելով հանդերձ՝ բոլոր միւս դեսպաններին այցելութիւն տալուց յետոյ են նրա մօտ գնում։ Դեսպանն, որ յոյն էր ազգով, Մուսուրուս փաշա, խորհուրդ է տալիս Խրիմեանին եւրոպական տէրութիւնների վրայ յոյս չդնել, որովհետև, ասում է նա, «նրանք ոյժ չունեն Ասիական Թիւրքիայում»։

Հետաքրքրական են նոյնպէս այն տեսակցութիւն-

ներն, որ Խրիմեան ունեցել է անգլիական բարձր շըրջանին պատկանող մի քանի անձերի հետ։ Արգայլի դուքսն, որ մեծ հեղինակութիւն ունէր թէ իր գիրքով և թէ արքայական ընտանիքի հետ ունեցած արենակցական կապով, ուզել է իմանալ, թէ որոնք են սահմանները այն նահանգների, որոնց համար հայերն ինքնավարութիւն էին պահանջում, և յայտնում է, թէ որպէսզի անգլիական կառավարութիւնն հնարաւորութիւն ունենար պաշտպանելու Հայաստանի մէջ Լիբանանի նման վարչութիւն մուծանելու ծրագիրը, «պէտք է իմանալ, թէ ինչ գործնական միջոցներ կային դրա համար...»։ Շատ ուշադրութեան արժանի են խորհրդարանի ազդեցիկ անդամ Ֆօրստէրի յայտարարութիւնները, որի մօտ տանում է Խրիմեանին՝ Գ. Փափազեանը։ Ահա թէ ինչ է խորհուրդ տալիս այս պատկառելի ազատական երեսփոխանը Խրիմեանին. «Մի վշտացնէք Ռուսաստանն, որ ձեր դրացին է. մի դառնաք այստեղ գործիք ոչ պահպանողական կուսակցութեան և ոչ էլ մեր, ազատականների, ձեռքը։ Շատ դժուար է Անգլիայի համար՝ հսկել Հայաստանի վրայ, որ այնչափ հեռու է մեզանից։ Սև ծովի հարաւային եզերքում բաւականաչափ հայ ժողովուրդ չկայ. իսկ Անգլիան միայն ծովեզերեայ բնակիչներին կարող կը լինէր պաշտպանութիւն ցոյց տալ։ Ուստի, հարցնում եմ ձեզ. ձեր ազգը կարո՞ղ էր ինքն իր գլխուն իր ինքնավարութիւնը պաշտպանել, եթէ Հայաստանին այդ տրուէր։ Հայերը բաւականաչափ ոյժ ունե՞ն իրանք իրանց մէջ, որովհետև Անգլիայի օգնութեան վրայ յոյս կարելի չէ դնել...»։

Այն միջոցին գերմանական Թագաժառանգը, Ֆրիդրիհ իշխանը, բրիտանական Թագուհու փեսան, Լոնդոնում էր գտնվում։ Այս իշխանն Երուսաղէմում մեծ պատուով ընդունուել էր հայոց վանքում, և Երուսաղէմի պատրիարքն այս հանգամանքից օգտուելով յա-

տուկ նամակով խնդրում էր Թագաժառանգից՝ սրա, պաշտպանութիւնը հայկական դատին։ Այս նամակը մատուցանելու համար Խրիմեան և Զէքթաղ ներկայանում են իշխանին։ Ընդունելութիւնը տեղի ունեցաւ գերմանական դեսպանատանը։ Պատրիարքի նամակն առնելով Թագաժառանգը պատասխանել է, թէ ինքը միշտ յիշում է Երուսաղէմի հայոց վանքում գտած լաւ ընդունելութիւնը. խոստացել է ուշադրութեամբ կարդալ պատրիարքի նամակն և ապա ուղարկել իր հօրն և գերմանական մինիստրներին, որ նրանք ևս կարդան և սրտով վերաբերուեն հայկական խնդրին...»։

Հայ պատգամաւորութիւնը դեռ Լօնդօնում էր, երբ առաջին անգամ անգլիական խորհրդարանում լսուեց հայկական խնդիրն, որ այնուհետև երկար տարիներ բազմիցս նրա ուշադրութեան առարկան պիտի դառնար։

Յունիսի 3-ին (ն. տ.) սըր Ջօն Կէննէուէյ պառլամենտական հարցափոխանն է լինում առաջին անգամ այս խնդիրն յուզողը։ Բայց որովհետև արտաքին գործ. մինիստրը լորդերի պալատումն էր նստում, ուստի աւելի կարևոր էր վերին պալատում տեղի ունեցած վիճաբանութիւնը։ Յունիսի 6-ին (մայիս 25) կոմս Շաֆթսբըրին հարց է տալիս մինիստրին հայկական խնդրի մասին և լորդ Սալիսբըրի հետևեալն է պատասխանում յանուն բրիտանական կառավարութեան։

«Հայ քրիստոնեաները յիշւած են Սան Ստէֆանոյի դաշնագրի մի յօդուածում։ Հոգացողութիւն եղած է այն մասին, որ բարեկարգութիւն լինի քրիստոնեայ նահանգներում, առանց որևէ խտրութեան...։ Հայերի հարցը նման չէ Բ. Դրան հպատակ միւս քրիստոնեայ ցեղերի գործերին։ Թէև հայերը կրօնով առանձին ազգ են կազմում, բայց նրանք այնպէս ցրուած են և թըրքերի մէջ այնպէս են խառնուած, որ կամ պէտք է այնպիսի բարենորոգումներ մուծանել, որ գործադրուի հա-

ւասարապէս թրքերի, հայերի և քրդերի համար միաժամանակ, կամ թէ չէ՝ պէտք է անկանոն եղանակի դիմել, այսինքն տարբեր տարբեր կարգադրութիւններ անել միևնոյն երկրի բնակիչների համար...»։ Այս վճռական խօսքերից յետոյ, որ հայկական ինքնավարութեան յոյսը ջուր էր գցում, Սալիսբըրի աւելացրածը, թէ անգլիական կառավարութիւնը հայերին համակրում է, չունէր որևէ գործնական նշանակութիւն։ Այսպէս էին նաև այն համակրալից ճառերն, որ Սալիսբըրի պաշտօնական յայտարարութիւնից յետոյ խօսեցին մի քանի ուրիշ լորդեր ի նպաստ հայոց...։

Սալիսբըրի այս ծանրակշիռ յայտարարութիւնները հայ պատուիրակութիւնը Լօնդօնում լսելայն ընդունեց, և միայն Բէռլինում՝ երբ հայկական խնդիրը կօնգրէսի քննութեան առարկայ դարձաւ և Սալիսբըրի կարծիքը չափազանց կարևորութիւն ունէր խնդրի նպաստաւոր լուծման համար, Խրիմեան, Նար-Բէյ և իրանց խորհրդականներն անհրաժեշտ գտան ուղղել Սալիսբըրի համոզումն՝ լուսաբանելով Հայաստանի իրական վիճակը։ Ըստ այսմ էլ նրանք հետևեալ պատասխանն ուղարկեցին անգլ. պատուիրակին, յունիսի 12/24-ին։

«Միլօրդ, իբրև Թիւրքիայի հայերի ներկայացուցիչներ յայտնում ենք Ձեր Վսեմութեան մեր ջերմագին շնորհակալութիւններն և մեր խորին երախտագիտութիւնն այն համակրութեան համար, որ ցոյց տուիք մեր դատին՝ լորդերի պալատում։

«Սակայն, ներեցէք մեզ, որ Ձեր Վսեմութեան ուշադրութիւնը հրաւիրենք Ձեր ճառի մի մասի վրայ, որ առանձնապէս կարևոր է մեզ համար։

«Հայաստանում՝ թիւրքերն այնչափ խառն չեն բնակւում հայերի հետ, որ անկարելի լինի մի բան անել յօգուտ հայոց։ Ճիշտ է, որ թիւրքերը մի քանի քաղաքներում, ուր հասարակական պաշտօններ են վա-

բում առանց քրիստոնեաների մասնակցութեան, մեծամասնութիւն են, բայց Փոքր Հայքի մասին չխօսելով պիտի ասենք, որ Մեծ Հայքում հայերը մեծամասնութիւն են կազմում Վանի, Մուշի, Բիթլիսի, Խարփութի, Էրզրումի և Էրզինկեանի գաւառներում։ Հայերն իրանց երկրում ամենակարեւոր տարրն են կազմում (l'element le plus considérable), չնայելով որ նրանք գաղթել են դեռ այնտեղից զանազան երկիրներ. իսկ այս գաղթականներն անշուշտ կը վերադառնան, եթէ իրանց հայրենիքը լաւ վարչութիւնով օժտուի»։

Այս Հայաստանի ինքնավարութեան նկատմամբ հիմնական կանոնագրի մէջ յիշուած բաղձանքներն յառաջ բերելուց յետոյ հայ պատուիրակները շարունակում են.

«Ըստ այսմ, միլօրդ, տեղիք չկայ տարբեր տարբեր հաստատութիւններ հիմնել միեւնոյն երկրում. մեր ուզածն է՝ Հայաստանում քաղաքակրթուած աշխարհի սկզբունքներին համաձայնող մի միակ վարչական հաստատութիւն ունենալ, որը Հայաստանի քրիստոնեաները շուտով կիւրացնեն, միեւնոյն ժամանակ երաշխաւորելով ստորեւ քաղաքացիական հաւասարութիւն մահմեդականներին և կրօնի կատարեալ ազատութիւն»։

Սալիզբրին ստանալով այս յիշատակագիրը՝ անորոշ բառերով պատասխանում է իր քարտուղար Philippe Currie-ի միջոցով, թէ ինքն իր ազդեցութիւնը պիտի գործ դնէ «բանակցութիւնների ժամանակ, յարմար պարագայում, ձեր (հայ պատուիրակների) յիշած նահանգների բնակիչների վիճակի բարւոքումը ձեռք բերելու համար»*)։

Այս պատասխանն աւելի պարզ կերպով ապացուցանում է, որ անգլիական մինիստրները Բէրլինում

*) «...With a view of obtaining an amelioration of the condition of the inhabitants of the districts to which you refer, at the proper stage of the negotiations». («L'Armenie», *1889* № *2*).

էլ հաւատ չէին ընծայում պատուիրակութեան յառաջ բերած թուանշաններին և պատճառաբանութիւններին, քանի որ քարտուղար Կըրրին զգուշանում է ոչ միայն ինքնավարութեան մասին խօսելուց, այլ նոյն իսկ «Հայաստանի» անունն էլ չէ տալիս։

Խրիմեան և Չէրազ երկրորդ անգամ Մանչէստր այցելելուց յետոյ, ի նկատի առնելով՝ որ Բէրլինում կօնգրէսի նիստերը շուտով պիտի սկսէին և իրանց ներկայութիւնն այնտեղ անհրաժեշտ էր, յունիսի 8-ին մեկնեցին այնտեղից։ Նոյն օրն երեկոյեան Պարիզ հասնելով, նրանք տեղեկացան, թէ ֆրանսական առաջին լիազօր պատուիրակը՝ Ուադինգտօն այն երեկոյ պիտի մեկնէր Բէրլին, ուստի նրանք հնարաւորութիւն չունեցան ֆրանս. մինիստրին տեսնելու, ինչպէս մտադիր էին։ Չկարողացան տեսակցել նաև Գամբէտտայի հետ, որ յայտնել էր, թէ 3 օր յետոյ միայն ժամանակ կունենայ ընդունելու, և շտապեցին Բէրլին, ուր հասան յունիսի 1/13-ին։

Երբ հայոց ներկայացուցիչներն այսպէս զբաղուած էին Եւրոպայում՝ Հայաստանի քաղաքական վիճակի բարեփոխումը յաջողեցնելու նպատակով, բուն Հայաստանում յուզուած դրութիւնը շարունակվում էր։

Պատերազմի վերջանալուց անմիջապէս յետոյ ժողովրդի գանգատները քննելու և յանցաւորներին պատժելու համար Էրզրումում մի զինուորական դատարան հաստատուեց, որի անդամներն էին 3 թիւրք զօրապետ և 2 հայ զինուորական բժիշկ՝ Գրիգոր բէյ և Միհրան էֆէնդի, որոնք յատկապէս Կ. Պօլսից էին ուղարկուած։ Դատարանի նախագահն էր Էրզրումի զինուորական հրամանատար Մուսա փաշա*)։ Այն միջոցին Բ. Դրան

*) Այս Մուսա փաշան կովկասցի էր, չէրքէզ լեռնականներից և նախ ռուսական բանակումն էր ծառայում։ Սրա շնորհիւ էր, որ ռուսական զօրքի Էրզրումից քաշուելուց յետոյ ոչ մի անկար-

և պատրիարքի միջև յարաբերութիւնները մեղմական էին դարձել, և երկու կողմն էլ համամիտ էր այն մասին, որ ամեն միջոցներով պէտք էր արգելել պատերազմի գաղափարից յետոյ հայ ժողովրդի գաղթումը դէպի Կովկաս։ Այս նպատակով էլ կառավարութեան համաձայնութեամբ Վարժապետեան 3 վարդապետ ուղարկեց Հայաստան՝ ժողովուրդը յորդորելու համար, որ չգաղթեն և «քիչ մը ժամանակ ևս համբերեն»։ Այս պաշտօնը կատարողներն էին՝ Գարեգին (Սրուանձտեանց), Վահան և Արիստակէս վարդապետներն, որոնք մայիսի 1-ին մեկնել էին Կ. Պոլսից։ Բայց միևնոյն ժամանակ Թիւրք կառավարութիւնը, բստ իր աւանդական սովորութեան, քաջալերում էր նաև հակահայկական շարժումը հայաբնակ գաւառներում։ Նա աշխատում էր Հայաստանի մէջ հայոց թուական առաւելութեանն և բարոյական ուժին հարուած հասցնել՝ այնտեղ ուղարկելով գունդագունդ չէրքէզներ, որոնք անընդհատ գալիս էին Եւրոպական Թիւրքիայից։ Պատերազմի բուռն րոպէները յիշում էին առանց հեռանալու։ Թիւրքերը մինչև իսկ ծիծաղում էին. «Ի՞նչ փոյթ մեր, — ասում էին նրանք. — չէ՞ որ Սան Ստեֆանոյի դաշնագրի 16-դ յօդուածի հիման վրայ մենք յանձն ենք առել պաշտպանել հայերին չէրքէզներից. Թող չէրքէզները գնան, բնակուեն այնտեղ, որ նրանց դէմ էլ պաշտպանենք ձեզ...»։ Թիւրք կառավարութեան ամբողջ հոգեբանութիւնը բովանդակւում էր այս՝ իբր թէ կատակով ասուած խօսքերի մէջ...։ Այս ձևով էր սկսում նա գործադրել Սան Ստեֆանոյում իր ստանձնած պարտականութիւնը։

Չնայելով այս անյաջող անցքերին, հայ ժողո-

գութիւն չպատահեց այնտեղ, չնայելով որ Թիւրքերը մասամբ իրաւունք էլ ունէին դժգոհելու հայերից ռուսաց այն միջոցին բռնած ընթացքից։

վուրդը գաւառներում սրտատրոփ սպասում էր, թէ ինչ արդիւնք պիտի ունենայ հայկական դիւանագիտական պատուիրակութիւնը*)։ Ամենքը մեծ յոյսով լցուած՝ աչքներն ուղղել էին Եւրոպայի կողմը։ Հայաստանի ինքնավարութեան ծրագիրն և մանաւանդ այն մեծ յոյսերն, որ ի սկզբան ամեն կողմից տրվում էին հայերին, մեծ ոգևորութիւն էր յառաջացրել ոչ միայն Կ. Պոլսի, այլ նաև գաւառների մէջ, առանձնապէս Էրզրումում, որ ապագայ ինքնավարութեան գլխաւոր կամ կենտրոնական քաղաքը պիտի լինէր։ Թիւրքերի դարերից ի վեր տիրող անկարգ վարչութիւնից, քրդերի մշտական հալածումներից և աւազակութիւններից, և պաշտօնական մարմինների անտարբեր վարմունքից վերջապէս ազատուելու և մի հայկական իշխանութեան իրականանալու յոյսն այնքան ոգևորել էր բոլորին, որ նոյն իսկ հայ օրիորդը պատրաստւում էր զինուորուել նորակազմ հայրենիքի պաշտպանութեան համար, եթէ հարկը պահանջէր**)։ Ահա այսքան մեծ էր Հայաստանի ամեն կողմը յոյսն և ոգևորութիւնը։

---

*) Այն միջոցին Վանից գրում էին. «Երկար ժամանակէ ի վեր հարստահարութեանց ներքև ճնշուած ժողովուրդն ազատութեան յոյսով սաստիկ ոգևորուած է այժմ. անհամբեր կը սպասենք լուրի, թէ Խրիմեան Հայրիկ և Եւրոպն արդարեւ ինչ ըրին»։ («Մշակ», 1878 № 126).

**) Գրիգոր Նիկողոսեան գրում էր Էրզրումից, թէ ինչ էր ասել նրան այս առթիւ մի հայ օրիորդ. «Մենք միմիակ արտասուքով կապրինք. այո՛, արտասուքով կապրինք, քանի մեր ձեռքերը կապուած են, քանի մեր լեզուն փակ է, քանի մենք գերի ենք։ Թափեցէք մեր գերութիւնը, բացէք մեր ձեռքերը, տէր ըրէք մեր երկրին... տեսնենք այն ժամանակ ո՞ր աղջիկ ձի չի հեծնէր, սուր չի առնէր և իր եղբօր հետ չերթար պաշտպանելու իր հայրենիքը..., այն ո՞ր աղջիկը իր քաղաքի պայծառութեան համար քար ու կիր չի կրեր. մեր ուսերը սովոր են արդէն։ Եթէ մեր ձեռքերը հերիք չեն լինիր, մեր գլխի ոսկին կը ծախենք, մշակներ կը վարձենք և մեր երկիրը նորէն կը շէնցնենք...»։ («Մշակ», 1878 № 120).

Բայց ոչ մի տեղ յոյսն և վստահութիւնը մտաւոր յաջողութեան մասին՝ այնչափ մեծ և զօրեղ չէին, որչափ Ազգային Ժողովի մէջ և մանաւանդ պատրիարքի, Ներսէսի, սրտում և հոգում։ Երբ Ազգ. Երեսփոխանական Ժողովի 1878-ի նստաշրջանը բացուեց, յունիսի 2-ին, Ներսէսի հաւանութեամբ, ազգ. երեսփոխաններից 12 հոգի, որոնց առաջինն Իզմիրլեանն էր, պաշտօնական գրաւոր հարցում ուղղեցին պատրիարքին, հայկական խնդրի վիճակի նկատմամբ, որպէսզի այս միջոցով պատրիարքից ազգը պաշտօնապէս իմանայ իրերի կացութիւնն և քաջալերուի։ Հարցումը հետևեալ կերպով էր ձևաւորուած։

«1876 դեկտեմբեր 10-ին Ազգային Ժողովն իր ժՁ. նիստին մէջ, վստահ Սրբազան Պատրիարքին ազգասիրութեան և հանճարին, Օրակարգով մը իրեն յանձնեց ամենայն անօրէնութիւն մեր ազգին դատին համար թէ Բ. Դրան քով և թէ ուր որ անկ ըլլայ։

«Անկէ ի վեր պատերազմը տեղի ունեցաւ, և սոյն միջոցին բնականաբար պէտք էր քաղաքագիտութիւնը. այլ այսօր որ պատերազմը վերջացած է և Եւրոպական Ատեանժողովը (քոնկրէ) Պերլինի մէջ գումարուած է արևելեան խնդրոյն լուծմանը, այն է արևելից քրիստոնեայ ազգաց իրաւունքները պաշտպանելու համար, յորս մեծ տեղ մը կը բռնէ մեր Հայոց ազգը, անշուշտ Սրբազան Պատրիարքը ազգը օրինաւորապէս ներկայացնող այս Երեսփոխանական Ժողովէն իրեն յանձնած նուիրական պաշտօնը գլուխ հանելու արիաբար ձեռնարկած է։

«Արդ ամենայն ակնածութեամբ կը հարցնենք Նորին Բ. Սրբազնութեան թէ՝ կարելի՞ է արդեօք այս մասին հաճիլ տեղեկութիւն մը տալ Ազգային Ժողովոյս»։

Եւ Ներսէս պատասխանեց հետևեալը*).

*) «Ատենագր. Ազգ. Ժող.», 1878 թ. էջ 8—9.

«Գիտեմ, երեսփոխան էֆէնտիներ, այն զգացումը, որուն հոս թարգման կը կանգնիք, ընդհանուր ազգին զգացումն է. ոչ ոք ինծի չափ գիտէ զայդ, զի ամեն օր ամեն կողմէ հրաւէր ու պաղատանք կընդունիմ, մանաւանդ մեր երեք միլիոնէն աւելի Հայերէն, որ հայրենի հողին վրայ ազգային գոյութիւնը պահեցին մինչև այսօր։ Եւ այնքան աղերսանաց, ակնկալութեանց և երկիւղի պատասխան մը պարտաւոր եմ այսօր, այս պատասխանն է ձեզի՝ ու ի ձեզ բոլոր ազգին՝ Սպասել յուսով։

«Հայոց խնդիրը իր արժանաւոր կերպովը ներկայացած է թէ Բ. Դրան և թէ եւրոպական տէրութեանց։ Բ. Դուռն իր պաշտպանութիւնը խոստացաւ, եւրոպական տէրութիւնք ամենքն ալ իրենց համակրութիւնը յայտնեցին. և ամենէն ալ խօսք առած եմ, որ դեսպանաժողովին մէջ նկատողութեան պիտի առնուի մեր ազգին վիճակն ալ. հասարակաց կարծիքն ալ այսօր Եւրոպայի մէջ ոչ ևս անտարբեր է մեզի համար։

«Այ-Ստեֆանոսի դաշնագրութեան մէջ մասնաւոր յօդուած մը կայ արդէն Հայոց վերաբերեալ. ամենքդ գիտէք այդ յօդուածը։ Առաջին անգամ է որ դաշնագրութեան մը մէջ Հայոց ու Հայաստանի խօսքը կըլլայ։ Տարակոյս չունիմ որ եւրոպական մեծ դաշնագրութեան մէջ, որ պիտի կնքուի ի Պերլին, անյիշատակ չպիտի մնայ մեր ազգը։

«Այլ ինչ պիտի ըլլայ այն կարգադրութիւն, որ պիտի որոշուի մեզի համար, զայն չգիտեմ և ոչ թերևս գիտեն տակաւին քաղաքագէտք, որ զայդ դաշնագրութիւնը պիտի խմբագրեն։

«Իմ բոլոր ջանքն այն է, որ այնպիսի կարգադրութիւն մը ըլլայ, որ ազգին կեանքը դիպուածոց չմատնուի։

«Միւս կողմէն ոչ ոք կրնայ ուրանալ Հայ ազգին իրեն վիճակակից ազգաց համար ըլլալիք կարգադրու-

թեանց մասնակցելու իրաւունքը։ Կը փութամ յաւելցնել որ ամենէն առաջ Բ. Դուռը վկայած է ու կը վկայէ մեր այս իրաւունքին։

«Վերջապէս, երեսփոխան էֆէնտիներ, ձեռքս խղճիս վրայ դնելով կը յայտարարեմ ազգիս, թէ ինչ որ կարելի էր աշխատիլ, խօսիլ, գրել, ամէնքը ըրինք. մեր պարտքն էր մոռնալ մեր անձը և տկարութիւնը ու ազգը մտածել. մոռցանք մեր անձը ու ազգը միայն մտածեցինք, ոչ թէ միայն ես, զի իմ է բոլոր պատասխանատուութիւն, այլ ոչ բոլոր արդիւնք, զի առաջին օրէն սկսայ գործակցութեամբ իմ սրբազան եղբարցս, բոլոր եպիսկոպոսական դասուն որ ի Պոլիս։ Այսօր իսկ երկու եպիսկոպոսունք, մեր եկեղեցւոյն ու ազգին երկուքին պարծանքները, յետ իւրաքանչիւրն եւրոպական զանազան տէրութեանց քով պաշտպանելու ազգին դատը, միացած են ի Պերլին՝ միաբան աշխատելու համար դեսպանաժողովին քով»։

Ներսէսի այս յուսադրական պատասխան-ճառը մեծ ոգեւորութիւն յառաջ բերեց երեսփոխանների շրջանում, և Իզմիրլեան յանուն իր ընկերների ջերմ խօսքերով շնորհակալութիւն յայտնեց պատրիարքին, որ «աննկուն արիութեամբ աշխատած է և կաշխատի ազգին խնդրոյն համար»։ Եւ Իզմիրլեանից սկսելով բոլոր երեսփոխանները «յուզեալ սրտիւ», ինչպէս ասում է պաշտօնական ատենագրութիւնը, «ոտք ելնելով համբուրեցին Նորին Սրբազնութեան աջը»։

Այսպէս էր դրութիւնը Կ. Պոլսում և գաւառներում, հայոց մէջ, երբ Բէրլինի կոնգրէսը գումարուեց ի մէջի այլոց նաև Հայաստանի և հայ ժողովրդի ճակատագիրը լուծելու...։

ԴԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Անգլիական քաղաքականութիւնը Թիւրքիայի նկատմամբ.—Սան-Ստեֆանոյի դաշնագրի վերաբերեալ Անգլիայի և Ռուսաստանի բանակցութիւնները.—Անգլ. կառավարութեան հայեացքը Փոքր-Ասիայի մասին.—Կիպրոսի դաշնագրութիւնը.—Հայոց նոր խնամակալը։

Ռուս-թիւրքական պատերազմը դեռ նոր էր սկսել, երբ Կ. Պոլսի անգլիական դեսպանը գրում էր իր կառավարութեան.

«Թիւրքիան պահպանելու քաղաքականութիւնը մեր սեպհական նպատակի և մեր ապահովութեան համար է, և ոչ թէ թրքերի ու նրանց կրօնի վերացական սիրոյն համար։ Այս քաղաքականութիւնն ընդունուած և գործադրուած է մեր ամենամեծ պետական մարդկանցից, ուստի վերջին մի քանի ամիսների դէպքերը չեն կարող այդ տապալել։ Այս քաղաքականութիւնը մասամբ հիմնուած էր այն հաւատի վրայ, թէ Թիւրքիան՝ Արևելքում Ռուսաստանի փառասիրական ձգտումների դէմ մի պատնէշ է, իսկ սուլթանն իբրև իսլամական կրօնի գլուխը՝ շատ օգտակար և պէտքական դաշնակից է Անգլիայի, որ միլիոնաւոր մահմեդական հպատակներ ունի...»*)։

Այս քաղաքականութիւնն էր, որի հիման վրայ լորդ Բիկընսֆիլդ պատերազմից յետոյ յայտնի կերպով անցաւ Թիւրքիայի կողմը, ինչպէս որ գաղտնի կերպով չէր դադարել նրան քաջալերել մինչև այն ժամանակ։ Բիկընսֆիլդի և նրա հրահանգների հաւատարիմ գործադրող լորդ Դէրբիի այս ձևի թրքասիրութիւնն այնչափ յառաջ էր գնացել, որ նոյն իսկ լորդ Սալիսբըրի

*) Սըր Լէյըրդի հեռագիրը լորդ Դէրբիին 1877 յունիսի 13-ին։ (Adolphe d'Avril, «Negociations au traité de Berlin», Paris, 1886, էջ 275).

դեռ Կ. Պոլսում եղած ժամանակ՝ իր կառավարութեանն ուղղած մի հեռագրում գանգատւում էր, թէ «մեծ վէզիրը հաւատացած էր, թէ լորդ Դէրբիի և լորդ Բիկընսֆիլդի աջակցութեան վրայ կարող էր յոյս դնել», որով Ռուսաստանի սպառնացած պատերազմից Թիւրքերը վախ չէին զգում*)։ Այս պատճառով է, որ այդ «մեծ վէզիրն»—որ ոչ այլ ոք էր՝ եթէ ոչ Միդհատ փաշան—յետոյ, իբրև աքսորական Լօնդոնում գտնուած ժամանակ, «Nineteenth Century» ամսագրում հրատարակած յօդուածում ուղղակի ասում էր, թէ սուլթանն երբեք եւրոպական տէրութիւնների (դեսպանախորհրդի) առաջարկութիւնները չէր մերժի և Ռուսաստանի հետ պատերազմի չէր բռնուի, եթէ գաղտնաբար Անգլիայի պաշտպանութեան վրայ յոյս չունենար**)։ Անգլիայի այս վարմունքը շատ լաւ էր իմանում Ռուսաստանն, որ ընդհակառակը միջոց էր որոնում որևէ կերպով համաձայնութեան բերել Բիկընսֆիլդին։ «Ինչպէս ցաւալի է,—գրում էր իշխան Գօրչակօվ 1877-ին,—որ երկու մեծ պետութիւն, որոնք կարող էին եւրոպական խնդիրները կարգադրել իրանց փոխադարձ օգտին և միևնոյն ժամանակ բոլորի համար շահաւէտ կերպով, գտնում են թէ իրանք իրանց և թէ ամբողջ աշխարհն այնպիսի հակառակութեամբ (antagonisme), որ հիմնուած է թիւրիմացութեան և սխալ հայեացքի վրայ»***)։ Մի

*) «The Sultan and the Powers», by the Rev. Malcolm Mac Coll., London, 1896, էջ 70—71. Այս նշանաւոր հայասէր հոգևորական հեղինակը պատմում է, թէ մինչև իսկ դեսպանը, սըր Էլլիօտ, Սալիսբըրիի ընկերը, դեսպանախորհրդում «աւելի Միդհատ փաշայի հետ էր համաձայնվում, քան Սալիսբըրիի, և խորհուրդ էր տալիս սուլթանին և Բ. Դրան՝ ուշադրութիւն չդարձնել Սալիսբըրիին, քանի որ Բիկընսֆիլդը սրտով Թիւրքերի հետ է և նրանց կողմն է...»։ Անդ, էջ 68—69.

**) Անդ, էջ 67.

***) «Turrkey», № 2 (1877), էջ 736.

ուրիշ գրութեամբ*) Գօրչակօվ աշխատում էր վստահացնել լորդ Դէրբիին, թէ Ռուսաստանը նպատակ չունէր անգլիական շահերին դպչել ոչ Եգիպտոսում, ոչ Նեղուցներում, ոչ Հնդկաստանի ճանապարհին և ոչ էլ Պարսկական ծոցում. բայց անօգուտ։ Բիկընսֆիլդ և Դէրբի միշտ նոյն անվստահութեամբ նայեցին Ռուսաստանի վրայ և չշեղուեցին իրանց քաղաքականութիւնից։

Ռուսական բանակի յաղթութիւնից և Սան-Ստեֆանոյի դաշնադրութիւնից յետոյ, երբ ռուս զօրքը մօտեցել էր մինչև Կ. Պոլսի դուռն, անգլիական նաւատորմիղն էլ եկել, կանգնել էր Կ. Պոլսի մուտքի վրայ, Բօսֆորում։ Անգլիան մինչև իսկ Ռուսաստանի հետ պատերազմելն աչքն էր առել նրան կասեցնելու համար։ Անգլիական կառավարութիւնը մեծապէս անհանգստացնողն՝ ի մէջ այլոց Ռուսաստանի Փոքր Ասիայում յառաջ խաղալն և Հայաստանի մի մեծ մասի գրաւումն էր, որտեղից հեշտութեամբ պիտի կարենար իջնել Միջագետք, որ այնչափ մօտ էր Պարսից ծոցին, ուրեմն և Հնդկաստանի ճանապարհին։

Երբ լորդ Սալիսբըրի արտաքին գործերի մինիստրի պաշտօնն ընդունեց լորդ Դէրբիի փոխարէն, նա՝ յանուն իր կառավարութեան մի ընդարձակ շրջաբերական ուղարկեց իր դեսպաններին, մարտ 20 թւով, որտեղ ամենախիստ քննադատութեան էր ենթարկում Սան-Ստեֆանոյի դաշնագիրն և որոշակի կերպով պահանջում էր նրա փոփոխումը։ Այս շրջաբերականում յատկապէս Հայաստանի մասին նա ասում էր հետևեալը.

«Ռուսաստան՝ Հայաստանի բերդերը գրաւելով՝ այդ նահանգի ժողովրդի վրայ իր ազդեցութիւնը պիտի տարածէ, մինչ՝ Քիւրդստանի մի մասին տի-

*) 20 մայիսի 1877 թ.։

բելով՝ պիտի կարողանայ ուզած ժամանակ, իր առև-
տրական սիստէմի արգիլիչ պատուարներովը կանգ-
նել եւրոպական այն ընդարձակ վաճառականութեան,
որ այժմ Տրապիզոնից անցնում է Պարսկաստան»:

Մի ոչ նուազ ճարպիկ շրջաբերականով, թէև ոչ
այնչափ խիստ լեզուով, պատասխանում է իշխան
Գորչակով մարտի 28-ին, որ զանց առնելով Սալիզբ-
րիի յիշած «Հայաստանի... ժողովրդի վրայ ազդեցու-
թիւն տարածելու» և «եւրոպական առևտուրի առջև
պատուար կանգնելու» վերաբերեալ մասերը՝ խնդիրը
վերածում է պարզապէս ռազմական-պաշտպանողակա-
նի և ըստ այնմ էլ գրում է.

«Այն երկիրները, որ մենք Հայաստանում գրաւ-
ւեցինք, պաշտպանողական արժէք միայն ունեն: Անգ-
լիա գուցէ կը գերադասէր, որ այդ հզօր տեղերը
Թիւրքիայի ձեռքը մնային, բայց Ռուսաստանն էլ
ճիշտ այդ պատճառներով, կարևոր է նկատում դրանց
իր ձեռքում պահելը, իր սեփհական ապահովութեան
համար, որպէսզի սահմանուած չլինի ամեն մի պատե-
րազմի ժամանակ շարունակ պաշարել, ինչպէս օրի-
նակ՝ Կարսի բերդն, որը պարտաւորուեց երեք անգամ
գրաւել կէս դարի ժամանակամիջոցին»:

Թէ իրօք Սան-Ստէֆանօյի դաշնագրի՝ Հայաս-
տանի վերաբերեալ երկու կէտերը բրիտանական կա-
ռավարութեան և ժողովրդի կասկածոտութիւնը յա-
րուցին, ոչ մի տարակոյս չիվերցնում*): Լորդ Սա-
լիզբրիի թէ այն ժամանակ և թէ նոյն իսկ Բեռլինի
կոնգրէսից մի տարի յետոյ այս առթիւ գրածներն և
խօսածները վերաբերում են գլխաւորապէս այն ազդե-
ցութեան, որ պիտի կրեն Փոքր-Ասիայի ժողովուրդնե-
րը ռուսական յաղթութիւնից և յառաջխաղացութիւ-
նից: «Միջագետքի և Ասորիքի բնակիչները,—բացատ-

*) Ed. Engelhardt, «La Turquie et le Tanzimat», II, էջ 209.

րում էր նա,—անտարակոյս հակառակ են Ռուսաստանի
յառաջխաղացման, բայց նրանք նախախնամութեան
վրայ են դնում իրանց յոյսն, և եթէ նրանք համոզուեն,
թէ այլ ևս ուրիշ ճար չկայ և ապագայում Ռուսաս-
տանն անշուշտ պիտի յառաջանայ և գրաւէ այն տե-
ղերը, նրանք էլ պիտի համակերպին և մինչև իսկ պի-
տի օգնեն Ռուսաստանին»*): Այս կարծիքների հիման
վրայ թէև Անգլիան պատերազմի սպառնալիքներ էր
անում և մինչև իսկ հնդկական զօրք էր տեղափոխում
Մալթա կղզին, Թիւրքիայում ռուսական բանակի դէմ
շարժելու համար, բայց նրա գլխաւոր ուժն իր դիւա-
նագիտութեան մէջն էր և այս ճանապարհով էլ նա
ռուսական կառավարութեանն ստիպեց Սան-Ստէֆանօ-
յի ամբողջ դաշնագրութիւնն ենթարկել եւրոպական
մեծ տէրութիւնների կոնգրէսի քննութեանն և հաստա-
տութեանը: Անգլիական կառավարութիւնն որոշ կեր-
պով պահանջում էր, որ «նրա ամեն մի յօդուածը ներ-
կայացուի կոնգրէսին ոչ թէ անպատճառ ընդունելու
համար, այլ որպէսզի քննուի, թէ ո՛ր յօդուածը կարող
է ընդունուել ո՛ր պետութիւնից և որը չի ընդու-
նուիլ»**): Լոնդոնի ռուսական դեսպան կոմս Շուվալովը՝
Բիկընսֆիլդի և նոր մինիստր Սալիզբրիի հայեացքնե-
րի հետ լաւ ծանօթանալուց յետոյ գնում է Բեռլին,
որ պիտի գումարուէր կոնգրէսն, և Պետերբուրգ գա-
լով տեսնվում է իր կառավարութեան հետ, և խորին
քննութիւններից ու նորանոր բանակցութիւններից
յետոյ վերջապէս որոշվում է, թէ Ռուսաստանն ինչ
զիջումներ պիտի կարողանայ անել: Այս մասին յանուն
երկու պետութիւնների լորդ Սալիզբրին և կոմս Շու-
վալովը Լոնդոնում 1878 մայիսի 18/30-ին մի պայմա-
նագիր են ստորագրում, 10 յօդուածից բաղկացած, որ
յուշագրի (memorandum) ձև էր կրում: Այս պայմա-

*) Սալիզբրիի ճառը Մանչէստրում 1879 հոկտ. 19-ին:

**) Լորդ Սալիզբրիի շրջաբերականը 1878 ապրիլի 1-ին:

նագրի զօրութեամբ Ռուսաստանը՝ Սան Ստեֆանոյում ստեղծած մեծ Բուլղարիան կիսելուց և յօգուտ Թիւրքիայի ջլատելուց յետոյ՝ Փոքր-Ասիայում էլ ետ էր տալիս Ալաշկերտն և Բայազիդն, այսինքն «Եփրատի ակունքն և Տրապիզոնից դէպի Պարսկաստան տանող ճանապարհը» (§ X)։ Բայց իսկապէս Հայաստանի վերաբերեալ յօդուածը հետևեալն էր.

«Հայաստանի նկատմամբ Սան-Ստեֆանոյի նախագիծ դաշնագրում արձանագրուած խոստումները (Թիւրքիայի կողմից) միայն Ռուսաստանին պիտի չտրուէին, այլ նաև Անգլիային»։

Եւ ապա աւելացվում էր.

«Թէև բրիտանական կառավարութիւնը չէ հակառակվում ռուսաց կայսեր փափագին, որ է Բաթումը գրաւել և Հայաստանի մէջ իր արած նուաճումները պահպանել, բայց հաւանական է նկատում, որ սոյն սահմանագծի տարածումից՝ ապագայում, Ասիական Թիւրքիայի ժողովուրդները վրդովող ծանր վտանգներ ծագեն։ Ուստի բրիտանական կառավարութիւնը կարծում է, թէ օսմանեան պետութիւնն այս վտանգից ազատ պահելու պարտքն, որ այսուհետև Անգլիան պիտի ստանձնէ յատկապէս, կարելի կը լինի ի կատար ածել, առանց Եւրոպային մի նոր պատերազմի աղէտները կրել տալու»։

Ըստ այսմ դեռ ևս Կիպրոսի դաշնագրութիւնից էլ յառաջ Անգլիան ընդունում էր Հայաստանի բարենորոգումների պէտքն և նրանց գործադրութեան վրայ հսկելու հոգն ու պարտականութիւնը Ռուսաստանի հետ հաւասար իրաւունքով։

Այս պայմանագրից զատ նրանց մէջ մի երկրորդ յուշագիր ևս ստորագրուեց Լօնդօնում, որ վերաբերում էր Բուլղարիայի և Արևելեան Ռումէլիի ներքին վարչական կազմակերպութեան, Դանուբի նաւարկութեան և նեղուցներին։

Որովհետև Ռուսաստանը Հայաստանում իր կատարած նուաճումները պիտի պահպանէր, ուստի Անգլիան էլ ապագայում նրա նոր յառաջխաղացութեան առաջը թումբ կանգնելու մտքով գաղտնի կապակցութեան մէջ մտաւ Թիւրքիայի հետ և յանձն առաւ Փոքր Ասիան, ի պահանջել հարկին նոյնիսկ զէնքի ոյժով, պաշտպանել Ռուսաստանի դէմ։

Այս կապակցութիւնը յայտնի է «Կիպրոսի դաշնագրութիւն» անունով։

Կիպրոսի դաշնագրութիւնը կայացնելու անհրաժեշտութիւնը լորդ Սալիսբըրին հետևեալ կերպով է բացատրում իր՝ Կ. Պօլսի դեսպան Լէյըրդին ուղղած 18/30 մայիս 1878 գրութեան մէջ։ Յառաջ ենք բերում այս երկար գրութիւնից միայն նրա՝ մեզ համար կարևորութիւն ունեցող մասերը։

«...Բաւականաչափ պարզ է, որ Բաթումի, և Արարատի հիւսիսային կողմը գտնուող բերդերի նկատմամբ Ռուսաստանը զիջում պիտի չանէ և պիտի պահպանէ այն պայմանները, որոնց հետ՝ ստիպեալ համաձայնուել է Բ. Դուռը պատերազմական դէպքերի հետևանքով։ Հետևաբար Ն. Մ. Թագուհու Կառավարութիւնը հարկադրուած էր քննութեան առնել թէ՝ եթէ այս պայմանները չջնջուէին, նրանք ինչ ազդեցութիւն պիտի ունենային օսմանեան կայսրութեան ասիական նահանգների և Անգլիայի շահերի վրայ, որոնք սերտ կերպով կապուած են այս նահանգների վիճակի հետ»։

«Անկարելի է, որ Թագուհու Կառավարութիւնն անտարբեր գտնուի այս փոփոխութիւնների նկատմամբ։ Ասիական Թիւրքիան բովանդակում է իր մէջ բազմաթիւ տարբեր ցեղերից և դաւանութիւններից բաղկացած ժողովուրդներ, որոնք ընդունակ չեն ինքնավարութեան, և անկախութեան ձգտում չունեն. նրանց հանգստութիւնն և քաղաքական բարեկեցութեան մասին ունեցած ծրագիրը նրանք ամբողջապէս պարտական են

սուլթանի վարչութեան։ Սակայն Օսմանեան Հարստութեան (արքայական տան) կառավարութիւնը թէև հին, բայց միշտ օտար աշխարհակալի կառավարութիւն է, որ աւելի ոյժի վրայ է հիմնուած, քան թէ ընդհանուր մի ազգութեան համակրութեան վրայ։ Թրքական զօրքի պարտութեան և կառավարութեան այժմեան նեղ դրութեան պատճառով այժմ ամենքն (Թիւրքիայի ցեղերը) այնպէս պիտի հաւատան, թէ Թրքական իշխանութիւնն անկման մօտ է և շուտով քաղաքական նոր փոփոխութիւններ տեղի պիտի ունենան։ Արևելքում այսպիսի մի կարծիք աւելի վտանգաւոր է, քան կառավարութեան տեղականութեան մասին անհանգիստ լինելը։ Եթէ Սիրիայի, Փոքր-Ասիայի և Միջագետքի ժողովուրդը տեսնէ, թէ կառավարութեան գոյութեան միակ երաշխաւորութիւնը նրա ոյժն է, նա՝ վերջին դէպքերի շնորհիւ համոզուելուց յետոյ, թէ այդ ոյժի վրայ իր ունեցած վստահութիւնը խախուտ է, այսուհետև պիտի սկսի մտածել, թէ օսմանեան տիրապետութիւնը շուտով պիտի կործանի, և ըստ այնմ էլ նա իր աչքերը պիտի դարձնէ նրա յաջորդի կողմը»։

«Մինչև անգամ եթէ ապահովաբար ընդունենք, թէ Բաթումը, Կարսն և Արդահանն այսուհետև չեն դառնալու գաղտնի պատուիրակների*) (emissaire) կենտրոնավայր, որոնց ետևից պիտի գար արշաւող բանակ, այնու ամենայնիւ այդ քաղաքների ռուսաց ձեռքը մնալն իսկ՝ Բ. Դրան ասիական երկրի ամբողջութեան տեսակէտից մեծ վտանգ է ներկայացնում։ Երբ ասիայի ժողովուրդը տեսնէ մի կողմը թոյլ կերպով պաշտպանուած մի հաստատութիւն, իսկ միւս կողմը յաջողութեամբ յարձակող մի թշնամի, նա այնպէս պիտի գուշակէ՝ իբր թէ մօտալուտ ապագայում քաղաքական պատմութիւնը նոր ընթացք պիտի ունենայ։ Այս պա-

*) Ենթադրւում է՝ ռուսական։

րագայում նա յոյսի և երկիւղի միացեալ ազդեցութեան տակ ջերմ տրամադրութիւն պիտի զգայ դէպի յառաջացող պետութիւնն և պիտի լքանէ այն տէրութիւնն, որ ենթադրւում է, թէ անկման վրայ է»։

«Անկարելի է, որ Թագուհու կառավարութիւնը համակերպի այս կացութեան և չփորձէ խափանել այն ազդեցութիւնն, որ այդօրինակ զգացմունքն յառաջ պիտի բերէր այն տեղերում, որոնց քաղաքական վիճակը խորունկ կերպով շօշափում է Մեծն Բրիտանիայի արևելեան շահերը։ Մեր կառավարութիւնը վերոգրեալ նպատակի իրագործման համար զինուորական միջոցների պիտի չդիմէ նուաճուած գաւառները վերստին Բ. Դրան իշխանութեան ենթարկելու համար։ Այսպիսի մի ձեռնարկութիւն շատ թանգ և ծանր գործ է, մեծ աղէտների դուռ կը բանայ, մանաւանդ որ առանց դրան էլ այնպիսի նախազգուշութիւններ կարող են ձեռք առնուել, որ առանց պատերազմի էլ միևնոյն նպատակը կը ստացուի»։

«Միակ միջոցն,—որ Ասիական Թիւրքիայում օսմանեան կառավարութեան տեղականութեանն իրական ապահովութիւն պիտի ընծայէ և որ նոյնչափ էական պիտի լինի նոյնիսկ ռուսական նուաճումներն ետ խլելուց յետոյ, որչափ է և հիմայ,—այն է, որ մի ուժեղ պետութիւն պարտականութիւն յանձն առնէ զէնքի ոյժով ետ մղել Ռուսիայի որևէ նոր ոտնձգութիւն Ասիական Թիւրքիայի դէմ։ Այս կերպով ամեն պատահականութեան առաջը պիտի առնուի և ասիական նահանգների ժողովուրդներին էլ հարկ եղած վստահութիւնը պիտի ներշնչուի, թէ Ասիայում Թրքական վարչութիւնը շուտով ընկնելու վտանգի մէջ չէ»։

«Բայց որպէսզի Անգլիան այսպիսի մի ապահովութիւն տայ, Բ. Դուռը պէտք է որ անպատճառ ընդունի հետևեալ երկու պայմանները։ Կ. Պօլսի դեսպանախորհրդի ժամանակ Թագուհու կառավարութիւնը

հասկացրեց Բ. Դրան, թէ ինք չի կարող նուիրագործել վատթար վարչութիւնն և հարստահարութիւնները. ուստի նախ քան Բ. Դրան հետ նրա ասիական երկրի պաշտպանութեան մասին որևէ համաձայնութեան գալը՝ Բ. Դուռը պէտք է պաշտօնապէս ապահովացնէ, թէ այդ երկրի քրիստոնեայ և միւս հպատակների վարչութեան մէջ հարկաւոր եղած բարենորոգումները կը մտցնէ։ Եւ այժմ ցանկալի է, որ միայն ընդհանուր խօսքերով նա այս պարտաւորութիւնն ստանձնէ, որովհետև պէտք եղած բարենորոգումները մանրամասնօրէն կարելի է որոշել միայն այն ժամանակ, երբ խնամքով քննուի երկրի կացութիւնն, որ դժուար է այս միջոցին անել։ Շատ կարելի է, ժողովրդի վիճակի բարւոքման տեսակէտով աւելի կարևոր է վարչական պաշտօնների համար կատարելապէս յարմար անձերի ընտրութիւն կատարելն և այդպիսի անձերն հաստատամտութեամբ պաշտպանելը, քան թէ նոյնիսկ օրէնսդրական միջոցներ ձեռք առնելը. բայց պէտք է Անգլիան ապահով լինի, թէ ինքն իրաւունք ունի պահանջել, որ այս խնդիրը գոհացուցիչ կարգադրութիւն ստանայ, և միայն այն ժամանակ նա պիտի հաւանի որևէ համաձայնութեան մէջ մտնել Բ. Դրան հետ։ Երկրորդ, որպէսզի Թագուհու կառավարութիւնն յաջողութեամբ կարողանայ իր առաջարկած պարտականութիւնները կատարել, անհրաժեշտ է, որ նա Փոքր-Ասիայի կամ Սիրիայի մօտիկ մի տեղ դիրք գրաւէ։ Բրիտանական պաշտօնակալների և առ հարկի նաև բրիտանական զօրքի մօտ տեղ գտնուելն ամենաապահով երաշխաւորութիւնը կը լինի այն մասին, թէ այս համաձայնութիւնն իր նպատակին պիտի հասնի։ Կիպրոս կղզին, ըստ երևոյթին, ամենայարմար տեղն է այս նպատակի համար։ Թագուհու կառավարութիւնը չի ուզում, որ այս կղզին սուլթանի գերիշխանութիւնից դուրս գայ կամ թրքական գանձարանի

այս կղզուց ստացած եկամուտը պակսի։ Նա (անգլ. կառ.) առաջարկում է, որ կղզու կառավարութիւնն և զինուորական գրաւումն անցնի Նորին Մեծութեան Թագուհուն, կղզին դարձեալ օսմանեան տէրութեան անբաժան մասը մնալով, և ինչ զուտ հասոյթ, որ գոյանայ կղզու մուտքից ծախքը հանելուց յետոյ, բրիտանական կառավարութիւնը տարէ-տարի յանձնէ սուլթանի գանձարանին»։

«Եւ որովհետև ամբողջ այս առաջարկութիւնը Ռուսաստանի՝ Ասիական Թիւրքիայի մի մասը գրաւելով միացնելուց և դրա հետևանքներից է ծագում, ուստի ինձ ըստ ինքեան հասկանալի է, որ եթէ վտանգի պատճառը բարձուի, այս համաձայնութիւնն էլ պիտի դադրի։ Եթէ ռուսական կառավարութիւնն երբևիցէ Բ. Դրան վերադարձնէ վերջին պատերազմով Ասիայում ձեռք բերած երկիրն, այս առաջարկուած համաձայնութեան մէջ յիշուած պայմաններն էլ պիտի վերնան և կղզին անմիջապէս պիտի պարպուի»։

«Ուստի խնդրում եմ Ձեր Վսեմութիւնից, որ առաջարկէք Բ. Դրան՝ այս մտքով մի դաշնագիր կազմել, որը կարող էք ստորագրել ի դիմաց և յանուն Վեհ. Թագուհուն և նրա կառավարութեան...»։

Այս գրութեան հիման վրայ՝ անգլիական դեսպանը Բ. Դրան հետ հետևեալ դաշնագրութիւնը կապեց 1878 թ. յունիսի 4-ին (ն. տ.), որ յայտնի է «Կիպրոսի դաշնագրութիւն» անունով։

«Յօդ. Ա.—Եթէ Ռուսաստանը Բաթումն, Արդահանը, Կարսը կամ նրանցից մէկն ու մէկն իր ձեռքումը պահելով՝ այնուհետև երբևիցէ փորձ անէ Սուլթանի՝ Ասիայում ունեցած երկիրներից որևէ մասն տիրելու, այն երկիրներից, որոնք խաղաղութեան վերջնական դաշնագրով պիտի որոշուեն, այն ժամանակ Անգլիան պարտաւորվում է միանալ Սուլթանի հետ, զէնքի ուժով այդ երկիրները պաշտպանելու համար։

«Դրա փոխարէն Ն. Վ. Սուլթանն էլ խոստանում է Անգլիային, որ վերոյիշեալ երկիրներում բնակուող քրիստոնեայ և այլ հպատակների բարւօք վարչութեանն և պաշտպանութեանը համար հարկ եղած բարենորոգումները պիտի մտցնէ։ Այս բարենորոգումները յետոյ երկու պետութիւնների մէջ մանրամասնաբար պիտի որոշուեն։

«Եւ որպէս զի Անգլիան իր պարտականութիւնը կատարելու համար հարկաւոր եղած միջոցներն ապահովէ, Ն. Վ. Սուլթանը հաւանութիւն է տալիս, նոյնպէս, որ Կիպրոս կղզին գրաւուի և կառավարուի Անգլիայի կողմից։

«Յօդ. Բ.—Այս դաշնագիրը պիտի հաստատուի և հաստատուած օրինակները պիտի փոխանակուեն մէկ ամսի ընթացքում, և եթէ կարելի է՝ նաև աւելի շուտ»։

Այս դաշնագիրը մի յաւելուած ևս ունի յուլիսի 1-ին կազմուած, որ վերաբերում է յատկապէս կղզու ներքին կառավարութեան և տարէ-տարի Թրքական գանձարանին տրուելիք հարկին։ Այս յաւելուածն ունի 6 յօդուած. մեզ համար հետաքրքրական է վերջին, այն է VI յօդուածն, որ ասում է.

«Եթէ Ռուսաստանը վերջին պատերազմի մէջ Հայաստանում նուաճած Կարսն և այլ տեղերը Թիւրքիային վերադարձնէ, Անգլիան էլ Կիպրոս կղզին պիտի պարպէ, և 1878 Թ. յունիսի 4-ի դաշնագիրն իր ոյժը պիտի կորցնէ»*)։

Այս դաշնագրութեան վերաբերեալ պատճառաբանութեան մէջ հայոց համար ամենակարևոր կէտն այն է, որ Անգլիան յայտարարում է, թէ Փոքր-Ասիայի ժողովուրդներն, որոնց մէջ են յատկապէս հայերն, «ընդունակ չեն ինքնավարութեան...»։ Այս սկզբունքն ընդունելուց յետոյ՝ զարմանալի չէ, որ Բէրլինի կոնգ-

*) Կապոյտ գիրք, Turkey, № 36 (1878)։

րէսում անգլիական լիազօրներն ընդդիմանային հայ պատուիրակների ինքնավարութեան պահանջին։

Կիպրոսի դաշնագրութիւնն, որ այնչափ մեծ խնամքով գաղտնի էր պահուած բոլոր միւս տէրութիւններից և որի յանկարծ երևան գալն այնքան զարմանք և միանգամայն շփոթութիւն պատճառեց Բէրլինում կանաչ սեղանի շուրջը գումարուած եւրոպական դիւանագէտներին, Անգլիայի կողմից մի վարպետ խաղ էր Ռուսաստանի դէմ, որ երկար ժամանակ չմոռացուեց այս վերջինի կողմից։

Եւ այսպէս, ինչպէս վերև տեսանք, նախ Լօնդօնի 18/30 մայիսի անգլօ-ռուսական յուշագրով և ապա Կիպրոսի դաշնագրութեան համաձայն հայերն և Հայաստանը յանկարծ երկու պաշտպան միանգամայն ունեցան...։ «Դժբախտաբար այս երկու պաշտպանները՝ միմեանց հանդէպ նախանձորդներ էին, որոնք մի օրից միւսը կարող էին թշնամիներ դառնալ ի վնաս իրանց պաշտպանեալի», ինչպէս շատ լաւ նկատում է Ռօլէն Ժաքմէն*)։

Հայերի պաշտպանութեան հոգը յիշեալ պաշտօնագրերից յետոյ մեծ մասամբ անցել էր Անգլիային, որ պիտի պարտաւորեցնէր իր նոր դաշնակից Թիւրքիան բարենորոգումներ մտցնել Փոքր Ասիայում ընդհանրապէս և Հայաստանում մասնաւորապէս։ 1878-ին Անգլիան համարեա ամբողջապէս հիացած էր իր դիւանագիտական յաղթութեամբն և մեծ յոյսեր էր տածում սուլթանի ուղղամտութեան վրայ, հաւատալով նրա և իր Բ. Դրան կրկին և կրկին տուած խոստումներին և հաւաստիացումներին։ Միայն տարիներ անցնելուց յետոյ անգլ. ժողովուրդն և իր կառավարութիւնը համոզուում են, որ թէ առանձնապէս հայերի նկատմամբ և թէ ընդհանրապէս Փոքր Ասիայի վերաբերեալ ոչ

*) Rolin-Jacquemyns. «L'Arménie, les Arméniens et les traités».

մի բարենորոգման յոյս չկար, քանի որ գործադրութիւնը թողուած էր Աբդիւլ Համիդին և իր արարած պաշտօնեաներին։ «Մենք,—ասում է Արգայլի դուքսը,—գաղտնի դաշնագրութիւն կապեցինք Թիւրքիայի հետ, որով յանձն առանք զէնքի ույժով պաշտպանել նրա ասիական նահանգները Ռուսաստանի նոր նուաճումներից և դրա փոխարէն ուրիշ բան չպահանջեցինք՝ եթէ ոչ միայն Կիպրոսի վարձակալութիւնն և մի նոր շարք Թրքական խոստումներ, թէ նա Հայաստանում բարենորոգումներ պիտի ներմուծէ։ Այս խոստումների գործադրութեան նկատմամբ ոչ մի ապահովութիւն ոչ պահանջուեց և ոչ էլ առաջարկուեց։ Մենք պարզապէս կրկնած եղանք 1856-ի հին սխալն, երբ կատարելապէս վստահեցինք Թիւրքիայի բարեմտութեանն և երախտագիտութեանը։ Բայց այս անգամ սխալը կրկնուած էր՝ այնպիսի մի վստահութեան ունայնութեան մասին քսան տարուան փորձառութիւնից յետոյ։ Ինչ վերաբերում է երախտագիտութեան՝ Թիւրքերի համար շատ պարզ էր հարկաւ, որ մենք, Ռուսաստանի յառաջխաղացութեան անհրաժեշտօրէն (at any ost, à tout prix) դիմադրելով, մեր՝ կարծեցեալ սեփական շահերի համար էինք այդպէս գործում»*)։

*) «Our responsibilities for Turkey», by the Duke of Argyll. London, 1896. էջ 74—75.

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Հայ պատուիրակներն և Թրքահայ պաշտօնեաները Բէրլինում.—Պատուիրակութեան տեսակցութիւնը Բիւլի և Ուադինգտոնի հետ.—Հայկական խնդրի պաշտօնական թղթերը.—Ա) Խնդրագիրը, Բ) Ծրագիր Կազմակերպական Կանոնադրի Օսմանեան Հայաստանի, Գ) Վիճակագիր Օսմանեան Հայաստանի և Ընդհանուր Ցուցակ, Դ) Վիճակագրական ծանօթութիւն Օսմանեան Հայաստանի բազմամարդութեան վրայ.—Նուպար փաշայի կազմած բարենորոգումների ծրագիրը.—Հայկական խնդրի կօնգրէսի օրակարգը մտնելը.—Քննական ակնարկներ պօլսական և Նուպարի ծրագիրների մասին։

Ինչպէս պատմել ենք, Խրիմեան և Չէրազ յունիսի 1/13-ին հասել էին Բէրլին, ուր նոր էր հասել և Ստ. Փափազեան, իր հետը բերելով հեռագրական ծածկագիրը պատրիարքի և պատուիրակութեան միջև գործածելու համար։ Իսկ հետևեալ օրն երեկոյեան Պետերբուրգից եկաւ Խորէն արքեպ. Նար-Բէյ։ Բայց որովհետև նրանք գերմանական մայրաքաղաքումն էին և նրանցից ոչ մէկը գերմաներէն չէր իմանում, ուստի յատկապէս գերմաներէնի համար Պարիզից եկաւ պ. Պէյլէրեան։ Դրանցից զատ կային այնտեղ նաև ուրիշ Թրքահայ բարձրաստիճան պաշտօնեաներ, որոնք անշուշտ անմասն չէին հայ պատուիրակութեան գործունէութեան մէջ։ Այս պաշտօնեաներն էին՝ 1) Օհան էֆ. Պաղտատլեան, որ Բէրլինի օսմանեան դեսպանի խորհրդականն էր և ոչ-աննշան քաղաքագիտական դեր է խաղացած այն միջոցին, յատկապէս Բօսնիայի և Հերցէգովինիայի Աւստրիայի կողմից գրաւման խնդրում*).

*) Այս Թրքահայ դիւանագէտի մասին Կ. Պօլսի «Արևելքը» հաղորդում է հետևեալ հետաքրքրական տեղեկութիւնը.

Պերլինի դեսպանական խորհրդականը, Օհան էֆ. Պաղտատլեան, որ Պիսմարք իշխանի և Պերլին հաւաքուած քաղաքագէտներուն մեծամասնութեանը լաւ ծանօթ, շատերու հետ անձնական բարեկամութեամբ կապուած, և գերման արքունիքին քով

2) Խաչիկ Օտեան և 3) Կարապետ Գարագաշ, որոնք օսմանեան լիագորների քարտուղարներն էին, առաջինն իբրև նրանց ծածկագիր թղթակցութեան կառավարիչ և երկրորդն իբրև ֆրանսերէն լեզուով պաշտօնական թղթերի խմբագրող։

Հայ պատուիրակութիւնը Բէրլին հասնելով՝ այնտեղ գտնում է Ներսէս պատրիարքի առաջին ծածկագիր հեռագիրն, որով նա պատուիրում էր այցելել գերմ. արտաքին գործերի մինիստրութեան խորհրդական դոկտ. Բուշին և խորհրդակցել նրա հետ։ Պատուիրակները տեսնվում են Բուշի հետ և խնդրում են, որ միջամտէ իրանց համար ունկնդրութիւն ստանալու Բիսմարկից։ Բայց խորհրդականն, որ իբրև բարեկամ է ընդունում նրանց և ոչ պաշտօնապէս, յայտնում է, թէ Բիսմարկ չափազանց զբաղուած է և պիտի չկարենայ ընդունել։ Բուշ խորհուրդ է տալիս հայկական խնդիրը դեռ ևս չներկայացնել կոնգրէսին, որ նոր էր

persona grata էր, գաղափար ունեցաւ Աւստրիայէ պահանջել, որ նախ՝ և ուղղակի Տաճկաստանի հանդէպ՝ հանդիսաւոր կերպով ճանչնայ Սուլթանին վեհապետական իրաւունքը և գրաւման առժամանակեայ հանգամանքը. Վիէննայի հետ երկար հեռագրական խորհրդակցութիւններէ յետոյ, Օհան էֆէնտի, որ իր գիտակցութեամբը և յարաբերութիւններովը Թուրք պատուիրակներուն հոգին էր, հասկցուց աւստրիացւոց թէ առանց այն գրաւոր խոստման չպիտի ստորագրեն դաշնագիրը. Ռուսիոյ երկրորդ պատուիրակ (առաջինն էր Կորչաքով) կոմս Շուվալով, որ արդէն լաւ աչքով չէր դիտեր Աւստրիոյ այնքան դիւրին ձեռք անցուցած պաքշիշ-ը, միացաւ իրեն։ Խորհրդակցութիւնները աւարտած էին. մնացած էր միայն ստորագրել։ Յունիս 13-ին սկսուած Վեհաժողովը յուլիս 13-ին պիտի փակուէր. վերջին օրը, ո՛չ, վերջին ժամուն, արդարև հոգեբանական վայրկեանին, ստորագրեցին նախ աւստրհռունգարական երեք պատուիրակները՝ հետևեալ յայտարարութիւնը, որուն օրինակը երջանկայիշատակ Օհան էֆ. Գաղատացիանէ—մօրեղբայր այս տողերը գրողին—ստացած եմ և պատմական կարևորութեանը համար բառ առ բառ կը դնեմ հոս։

«Յանուն իրենց կառավարութեան օսմ. լիագորներու կողմէ

սկսել իր նիստերն և քննում էր դեռ Եւրոպական Թիւրքիայի վերաբերեալ խնդիրները. այս վերջիններից յետոյ միայն պիտի անցնէր Ասիական Թիւրքիային և ահա այն ժամանակ պիտի կարողանար քննութեան առնել նաև Հայաստանի ինքնավարութեան խնդիրը։ Բայց ֆրանս. առաջին լիագորը, պ. Ուադինգտօն, որ յանձն էր առել հայկական խնդիրը կոնգրէսում պաշտպանել, լաւագոյն է համարում, որ պատուիրակութիւնն իր դատի վերաբերեալ բոլոր թղթերն անյապաղ ուղարկէ կոնգրէսի ամեն մի անդամին, որպէս զի սրանք կանխօրէն ծանօթանան խնդրին և պատրաստուած լինեն, երբ կոնգրէսն սկսի քննել 16-դ յօդուածը։ Այս առթիւ ֆրանս. մինիստրն ի մէջ այլոց

յայտնուած փափաքին համաձայն, աւստրհռունգարացի լիագօրները, յանուն իրենց կայս. և թագաւորական կառավարութեան, կը յայտարարեն թէ Պոսնա-Հէրսէկի նահանգներուն վրայ Ն. Կ. Վ. Սուլթանին վեհապետական իրաւունքները ոևէ զնաս չպիտի կրեն գրաւման պատճառաւ, որու վրայ խօսուած է յիշեալ նահանգներու վերաբերեալ և այսօր ստորագրուելիք դաշնագրութեան յօդուածին մէջ. թէ գրաւումը առժամեայ պիտի նկատուի և երկու կառավարութեանց միջև ու անմիջապէս համաձայնութիւն մը պիտի գոյանայ գրաւման մանրամասնութեանց մասին, Վեհաժողովին փակումէն յետոյ։

«Պերլին, 13 յուլիս 1878

«Անտրաշի, Քարոլի, Հայմէրլէ»

Աւստրիացիները նախ այս բացորոշ և Տաճկաստանի իրաւունքներուն վրայ տարակոյս չձգող յայտարարութիւնը ստորագրելէ յետոյ միայն՝ Պերլինի դաշնագրութիւնը ստորագրուեցաւ բոլոր պատուիրակներուն կողմէ...

Հայու մը 30 տարի առաջ՝ բառին բուն նշանակութեամբը վերջին վայրկեանին ձեռք ձգած մէկ քանի տողերը, զորս վերը յիշեցի, բուն հիմը՝ 2½ միլիոն ոսկիի հատուցման, որու վրայ այնքան կուրախանան ու կը հպարտանան մեր ազգասէր Թուրքերը, առանց գիտնալու թէ հայու մը կը պարտին զանոնք քէչ մը։

Էքս-լա-Շաբէլ

Վ.ՌԱՄ

(«Արևելք», 21 յունվար 1909 թ.)

տասում է, թէ նա «պիտի խորհրդակցի միւս լիազօրների հետ և, որ վերջնական գաղափար կազմէ մեր խնդրի մասին. Նախ պիտի խօսի այն լիազօրների հետ, որոնք առանձնապէս շահագրգռուած են Հայաստանի վիճակով, և պիտի լսէ նրանց նկատողութիւնները այս առթիւ և ապա պիտի հրաւիրէ հայ պատուիրակներին, որ գան իրանց բացատրութիւնները տան»*)։ Ըստ այնմ էլ Խրիմեան և Նար-Բէյ յունիսի 13/25-ին ուղարկում են Անգլիայի, Աւստրիայի, Գերմանիայի, Իտալիայի և Ռուսաստանի Ա. լիազօրներին իրանց խնդրագիրն և Հայաստանի ինքնավարութեան վերաբերեալ ծրագիրն և վիճակագրական տեղեկութիւնները։ Գ. Ուադինգտոնին արդէն անձամբ յանձնել էին։ Իշխ. Բիսմարկին, իբրև կոնգրէսի նախագահին, բացի այդ թղթերից ուղարկեցին նաև Ներսէս պատրիարքի պաշտօնական գրութիւնն, որով նա ներկայացնում էր իր պատուիրակներին և խնդրում էր, որ հայկական խընդիրը կոնգրէսի օրակարգն անցընէ։

Ահա այդ թղթերը։

Ա) Խնդրագիրը հետևեալ բովանդակութիւնն ունէր**).

«Ձերդ Վսեմութիւն (Excellence),

«Կ. Պօլսի հայոց պատրիարքն և Թիւրքիայի հայոց Ազգային Ժողովը մեր վրայ յանձնարարութիւն են դրած կոնգրէսի նստին գումարուած պետութիւններին ներկայացնել մեր ժողովրդի դատը, ուստի դիմում ենք Ձեր Վսեմութեան, որ հաճէք նկատի առնել մեր բաղձանքները։

«Հայերը, որոնց խնդիրը կոնգրէսի քննութեան

*) Մ. Ձէրաղ Ուադինգտոնի այս խօսքերին կցում է իր դիտողութիւնը, թէ ֆրանս. մինիստրը նուաղ անկեղծ երևաց իրան այժմ, քան թէ էր նա Պարիզում... («L'Arménie», 1892 № 40).

**) Թարգմանում ենք ֆրանս. բնագրից, «L'Arménie», 1890 № 3.

պիտի ենթարկուի Սան-Ստէֆանօյի դաշնագրի 16-դ յօդուածի հիման վրայ, ցանկանում են ունենալ այն վարչական բարւոքումները, որ պիտի տրուեն Եւրոպական Թիւրքիայի քրիստոնեայ ժողովուրդներին, որովհետև այն ռէժիմը, որի տակ նրանք ապրած են Հայաստանում մինչև այժմ, աւելի հարստահարական է, քան այն, որը կրել են Եւրոպական Թիւրքիայի քրիստոնեայ ցեղերը։

«Մենք քաղաքական ազատութիւն չէ, որ պահանջում ենք և ոչ էլ երբէք ուզում ենք բաժանուել Թըրքական կառավարութիւնից։ Մենք ուզում ենք Թըրքական Հայաստանի մի բաժնում, այն է՝ Էրզրումի և Վանի վիլայէթներում և Դիարբէքիրի վիլայէթի հիւսիսային մասում (տես ներփակեալ քարտէսը), որ թուական առաւելութիւն ունենք թիւրքերի վրայ, ինչպէս ցոյց են տալիս ընդ սմին ներկայացուած վիճակագրական վաւերագրերն, ահա այս բաժնում, կրկնում ենք, ուզում ենք ունենալ մի հայ վալի, որ պետութիւնների հաւանութեամբ կարգուի Բ. Դռնից։ Այս վալին պիտի նշանակուի որոշ ժամանակամիջոցի համար. Նա իր ձեռքի տակ պէտք է ունենայ ոստիկանութիւն՝ կարգն և ապահովութիւնը պահպանելու համար և երկրի եկամտի մի մասն՝ երկրի բարոյական և նիւթական բարգաւաճման սատարելու համար։

«Կազմակերպական Կանոնագրի (Reglement Organique) ծրագիրն», որ պատիւ ունենք ներկայացնել Ձեր Վսեմութեան գնահատութեան, ինչպէս և բոլոր միւս լիազօրներին, գաղափար պիտի տայ Ձեզ, թէ ինչ բնաւորութիւն և ինչ մանրամասնութիւններ ունի այն վարչական ռէժիմը, որը մենք խնդրում ենք այսօր, Թըրքական Հայաստանի ժողովուրդների խաղաղութեանն և բարեկեցութեանը համար։

«Արևելքի մարդոց և իրերի վրայ մեր ունեցած անձնական փորձառութիւնը մեզ համարձակութիւն է

տալիս յայտարարել, որ Թիւրք նահանգապետն և մահմեդական վարչութիւնը չեն կարող տալ այն բարենորոգումներն, որ պէտք են մեր երկրին։ Եթէ Թրքական կառավարութիւնն ինքն ազատօրէն ընտրէ հայ վալի, Կ. Պօլսում տիրող քմահաճոյքի շնորհիւ շատ դիւրաւ անընդհատ պիտի տեսնէ այն զեղծումներն, որոնց անհետանալն է ցանկանում Եւրոպան։ Եթէ նա՝ Թիւրք կառավարութիւնն՝ իրաւունք ունենայ ըստ իր կամաց վալին փոխելու, այն պարագայում՝ նա սրան ժամանակ պիտի չտայ ոչ իր իշխանութիւնն ամրացնելու, ոչ էլ լուրջ բարեկարգութիւնների ձեռնարկելու։ Եթէ Թիւրք կառավարութիւնն է, որ պիտի ընտրէ վիլայէթի պաշտօնեաներին, նա նոյն սխալները պիտի գործէ, ինչ որ էր անցեալում։ Եթէ վալին իր հրամանի տակ ոստիկանութիւն չունենայ, նրա իշխանութիւնը բոլորովին անզօր պիտի լինի։ Եթէ կենտրոնական կառավարութիւնն իրաւունք ունենայ ինքնին նահանգի բիւջէն (budjet) կարգադրելու, նա պիտի ձեռք անցընէ բոլոր եկամուտներն և երկրին այնքան չնչին գումար միայն պիտի թողնէ, որ դրանով ոչ մի յառաջդիմութիւն և ոչ մի բարեկարգ վարչութիւն անհնար պիտի լինի մտցնել։ Եւ վերջապէս եթէ այս բոլոր կարգադրութիւններն եւրոպական հսկողութեամբ չերաշխաւորուեն, անշուշտ վերստին պիտի երեւան մահմեդական ըէժիմի տխուր աւանդութիւններից ծագած այն պարբերական ջղաձգութիւններն, որոնց առաջն առնելու մասին է հոգում այժմ միացեալ Եւրոպան։

«Այս կարճառօտ բացատրութիւններից վերջը պատիւ ունենք Ձեր իմաստութեանն և արդարամտութեանն ենթարկելու մեր դատն և թախանձում ենք, որ Ձեր Վսեմութիւնն իր բարեհաճոյ աջակցութիւնը շնորհէ այս դատին կօնգրէսում քննուելու ժամանակ։

«Հաճեցէք ընդունել և այլն։

(Ստոր.) «Թիւրքիոյ հայոց պատուիրակներ Մկրտ.

տրք. Խրիմեան՝ նախկին պատրիարք, և Խորէն Նար-Բէյ՝ արքեպիսկ. Բէշիկթաշլի։

«Բէրլին, 25 յունիսի 1878 Թ.»։

—

Բ) Կազմակերպական Կանոնագիրը հետեւեալն էր.

Ծ Ր Ա Գ Ի Ր*)

Կազմակերպական կանոնագրի

Օսմանեան Հայաստանի

Ա.

Օսմանեան Հայաստանը, ըստ Ներփակեալ աշխարհացուցին, կը պարունակէ Էրզրումի և Վանի վիլայէթները, Տիարպէքիրի վիլայէթին հիւսիսային մասը, այսինքն Խարբերդի սանճագին արեւելեան մասը (որուն սահմանագլուխ է Եփրատ արեւմտեան կողմէն), Արղանայի սանճագը և Սղերդի սանճագին հիւսիսային մասը, որք կը կազմեն Մեծ Հայաստանի տաճկական մասը, որպէս նաև Րիզէի նաւահանգիստը՝ Տրապիզոնի և Պաթումի միջև, տուրևառը դիւրացնելու համար։

Հայաստանի վարչութիւնը պիտի յանձնուի Հայ Ընդհանուր Կառավարչի մը, զոր Բ. Դուռն պիտի անուանէ երաշխաւոր Պետութեանց հաւանութեամբը։

Նորա բնակավայրը պիտի լինի Էրզրում։

Ընդհանուր Կառավարիչը պիտի ունենայ գործադիր իշխանութեան բոլոր ստորոգելիքը, նահանգին ամբողջ ընդարձակութեանը մէջ հանրային ապահովութեան և կարգապահութեան պահպանութեանը պիտի հսկէ, տուրքերը պիտի հաւաքէ, և իր պատասխանատուութեան տակ պիտի անուանէ վարչական գործակալները. ինք պիտի կարգէ դատաւորները, պիտի գումարէ Ընդհանուր Ժողովը և անոր պիտի նախագահէ

*) Այս Կանոնագրի թէ հայերէն և թէ ֆրանսերէն բնագիրը հրատարակուած է Կ. Պօլիս, 1878, տպ. Արամեան։

և Նահանգին բոլոր վարչական ճիւղերուն պիտի հսկէ։

Հինգ տարուան համար պաշտօն ստանձնելով, Ընդհանուր Կառավարիչը չը պիտի կարենայ հրաժարուիլ Բ. Դրան կողմէն, առանց հաւանութեան երաշխաւոր Պետութեանց։

Կեդրոնական Վարչական Ժողով մը պիտի հաստատուի, որուն պիտի նախագահէ Ընդհանուր Կառավարիչն և անոր պիտի անդամակցին՝ 1°. Ելեմտից Տեսուչը, 2°. Հանրային Շինութեանց Տեսուչը, 3°. Մի Օրէնսգէտ Խորհրդական, 4°. Հանրային Զօրութեան Հրամանատարը՝ 5°. Քրիստոնեայ դպրոցներու Վերատեսուչը, 6°. Մահմէտական դպրոցներու Վերատեսուչը։ Սա ալ պիտի անուանի Ընդհանուր Կառավարչէն, այլ նահանգին մէջ Շէրի-ի օրէնսդրութեան գլխաւորին առաջարկութեամբ։

Նահանգը սանճագներու և ասոնք ալ գազաներու պիտի ստորաբաժանուին. Ընդհանուր Կառավարիչն պիտի անուանէ սանճագներու կառավարիչները և գազաներու փոխ-կառավարիչները։

Կառավարիչներն և փոխ-կառավարիչներն Ընդհանուր Կառավարչէն կարգուած գործակալներ են, և ամէն կերպով զինքը կը ներկայացունեն Նահանգին ստորաբաժանմունքներուն մէջ. Ընդհանուր Կառավարչէն կարգուած երկու խորհրդականներ կօժանդակեն նոցա՝ իւրեանց վարչութեան մէջ։

Բ.

Նահանգին ընդհանուր կառավարութեան անկ ըլլալով հանրային կարգապահութիւնը և ապահովութիւնը պահպանել, ընդհանուր եկամուտներու 20°/o-ին չափ գումար մը ամէն տարի պիտի վճարուի Կայսերական Գանձուն։

Նահանգին Մնացած եկամուտին մէջէն քաղաքային ու դատական վարչութեան և ոստիկանութեան ու բանակի պահպանութեան պէտք եղած ծախքերը դուրս հանելէ յետոյ, Մնացորդը սա պէս պիտի գործածուի։

1°. 80°/o-ին պիտի յատկանայ հաղորդակցութեան ուղիներու և ուրիշ հանրօգուտ շինուածոց հաստատութեանը և պահպանութեանը.

2°. 20°/o-ին պիտի յատկանայ դպրոցներու հաստատութեան և պահպանութեան. բարձրագոյն դպրոցներու յատկացեալ գումարները մէկդի դնելով, Մնացորդը իբր Նպաստ պիտի բաշխուի մահմէտական և քրիստոնեայ դպրոցներուն, անձնիւր կրօնի Մայուն հասարակութեան թուոյն համեմատութեամբ։

Գ.

Մահմէտական օրէնսդրութեան գլխաւոր մը պիտի կարգուի, զոր Վեհափառ Սուլթանը կանուանէ և որոյ պաշտօնն է Նահանգին մէջ բոլոր Շէրի-ի դատարաններուն վրայ հսկել։

Շէրի-ի դատարանները լոկ մահմէտականաց իրարու հետ ունեցած վէճերը պիտի ճանաչեն։

Հասարակ դատարանները պիտի դատեն քրիստոնէից, կամ մահմէտականաց և քրիստոնէից մէջ պատահած բոլոր քաղաքային, եղեռնական և վաճառականական դատերը։ Ամէն դատարան պիտի բաղկանայ երեք դատաւորէ, որոնց մէկը Նախագահի պաշտօն պիտի վարէ. Ընդհանուր Կառավարիչը կանուանէ դատաւորները և կորոշէ այս դատարանաց նախագահները։

Գազային փոխ-կառավարիչը և իւր խորհրդականները հաշտարար դատաւորի պաշտօն պիտի վարեն։

Յատուկ կանոնագիրներով պիտի որոշուին Շէրի-ի և հասարակ դատարանաց և հաշտարար դատաւորաց

թիւը, իրաւասութիւնը և ստորոգելիները։ Քաղաքային Օրէնսգիրք մը և Եղեռնական Օրէնսգիրք մը պիտի խմբագրուին Եւրոպայի իրաւագիտական արդի սկզբունքներուն համաձայն։

Դ

Կրօնի կատարեալ ազատութիւն պիտի լինի։

Անձնիւր հասարակութիւն պիտի հոգայ կղերին և կրօնական հաստատութեանց ծախքերը։

Ե

Նահանգին հանրային զօրութիւնը կը բաղկանայ՝ 1) Ոստիկանութենէ մը և 2) Բանակէ մը։

Քիւրդերը, Չէրքէզները և միւս թափառիկ ցեղերը մէկդի թողլով, բանակը պիտի բաղկանայ՝ 1) Հայերէն և 2) Նահանգին մէջ հինգ ամէ ի վեր բնակութիւն հաստատած ոչ-Հայ տարրէն։

Ոստիկանութեան պաշտօնն է Նահանգին ամբողջ ընդարձակութեանը մէջ կարգապահութիւնը և ապահովութիւնը պահպանել։ Ասոր հրամանատարն է Ոստիկանապետ մը, զոր կանուանէ Ընդհանուր Կառավարիչն, Նահանգին Հանրային Զօրութեան Ընդհանուր Հրամանատարին առաջարկութեամբ, և որ անոր անմիջական հրամանին տակ կը գործէ։

Բանակը պիտի դրուի Հանրային Զօրութեան Ընդհանուր Հրամանատարին հրամանին տակ և իւր պաշտօնն է ի հարկին օգնել ոստիկանութեան։

Սովորական ժամանակի մէջ գործող բանակը պիտի բաղկանայ 4000 զինուորէ, ի բաց առեալ այն կանոնաւոր բերդապահները, զորս Կայսերական Կառավարութիւնը կրնայ իւր ծախքովը դնել Նահանգին բերդերուն և ամրոցներուն մէջ։

Զ

Ընդհանուր Ժողովը պիտի կազմուի հետևեալ կերպով՝

Անձնիւր գաւառ պիտի յղէ երկու պատգամաւոր, մէկ մահմէտական և մէկ հայ, զորս գաւառին մահմէտական և քրիստոնեայ ժողովուրդները կընտրեն յատկապէս։

Պատգամաւորները սանճագին գլխաւոր քաղաքին մէջ գումարուելով՝ միատեղ պիտի ընտրեն երկու խորհրդական առ սանճագ, մէկը քրիստոնեայ և միւսը մահմէտական։

Ընտրող և ընտրելի են հաւասարապէս.

1) Նահանգին բոլոր բնակիչները 25 տարին լրացուցած են, կալուած մ'ունին, կամ ոևէ ուղղակի տուրք մը կը վճարեն.

2) Զանազան կրօնից պաշտօնեաները և կղերը.

3) Դատաւորները և դատախազները, ճանաչուած կրօնական հասարակութեանց գլուխներն իրաւամբ անդամ պիտի լինին այս ժողովին, մի գլուխ անձնիւր կրօնի համար։

Տարին անգամ մը Ընդհանուր Ժողով կը գումարի Նահանգին գլխաւոր քաղաքին մէջ, Նահանգին ելմտացոյցը (budjet) և տուրքի բաշխումը քննելու և ստուգելու համար։ Ընդհանուր Կառավարիչը պարտաւոր է տարեկան ելմտական տեղեկագիր մը ներկայացնել անոր։

Տուրքի հաւաքման և բաշխման դրութիւնը պիտի բարեփոխուի երկրին ճոխութեանց զարգացումը դիւրացնելու նպատակաւ։

Ընդհանուր Կառավարիչը և Ընդհանուր Ժողովը հինգ տարին անգամ մը համաձայնութեամբ պիտի որոշեն՝ ըստ վերոյիշեալ տրամադրութեանց՝ Բ. Դրան յանձնուելիք գումարները։

Է

Երախտաւոր Պետութիւնները միամեայ պաշտօնով Համազգային Յանձնաժողով մը պիտի կարգեն, որպէս զի հսկէ սոյն Կանոնագրին գործադրութեանը, որ Դաշնագրին ստորագրուելէն երեք ամիս յետոյ ի գործ պիտի դրուի։

—

Գ) Այս Կանոնագրին կցուած էին հետեւեալ վիճակագրական տեղեկութիւնները.

ՎԻՃԱԿԱԳԻՐ

Օսմանեան Հայաստանի

Օսմանեան Հայաստանն կը պարունակէ՝

Ա.

Էրզրումի եւ Վանի վիլայէթներն, ի բաց առեալ այն երկիրները զորս Այ-Ստէֆանոսի Դաշնագիրն որոշած է թողուլ Ռուսիոյ։ Այս վիլայէթներուն բազմամարդ կեդրոններն են Կարին, Բաբերդ, Երզնկա, Մանազկերտ, Մուշ, Բաղէշ և Վան։

Այս երկու Վիլայէթներու բազմամարդութիւնն է, ըստ Հիճրէթի 1294 տարւոյ Օսմանեան Կայսրութեան պաշտօնական Տարեցուցին (Սալնամէ)	2,066,000
Դուրս հանելով Ռուսիոյ թողուած մասին ժողովուրդը	366,000
	1,700,000

Համեմատութիւն զանազան ցեղերու

Հայք	1,150,000
Թուրք	400,000
Թափառիկ Քուրդ	80,000
Զազա կամ Տըմպըլիկ, որք իրենց յատուկ լեզու և կրօն ունին . .	35,000

Եզիտի, որք արեւապաշտ են, յատուկ լեզու ունին և մեծաւ մասամբ թափառիկ են	13,000
Գնչու կամ Թափառիկ Չինկեանէ .	3,000
Յոյն և Հրէայ	5,000
Ասորի	14,000
	1,700,000

Այս երկու վիլայէթներն կը պարունակեն 109 վանք*)։

Բ

Տիարպէքիրի վիլայէթին հիւսիսային մասը, այսինքն Խարբերդի սանճագին արեւելեան մասը (ուր սահմանագլուխ է Եփրատ արեւմտեան կողմէն), Արղանայի սանճագը և Սղերդի սանճագին հիւսիսային մասը։ Բազմամարդ կեդրոններն են Խարբերդ, Ակն, Չմշկածագ, Բալու և Սղերդ։

Բազմամարդութիւն ըստ պաշտօնական Տարեցուցին	664,600
Դուրս հանելով վիլայէթին մնացած մասին համար	302,300
	362,300

Համեմատութիւն զանազան ցեղերու

Հայք	180,000
Թուրք	130,000
Թափառիկ Քուրդ . . .	40,000

*) Այս վանքերէ ոմանք Հայաստանի Քրիստոնէութեան դառնալուն առաջին դարերուն մէջ հիմնուած են, երբ այսպիսի հաստատութիւններ մեծ ընդունելութիւն կը գտնէին, որով յաւէտ կամ նուազ կարեւոր եկեղեցական միաբանութիւններ պարունակող այդ վանքերն յաւէտ կամ նուազ ընդարձակ հողային կալուածներ ստացած են։ Այս վանքերը, թէ անհատներու և թէ կառավարութեան յափշտակութեանցը միշտ ենթակայ եղած ըլլալնուն հակառակ, կրցած են ցարդ բաւական մշակելի հող և եկամուտ պահպանել, դպրոց, տպարան, հիւանդանոց և ուրիշ ազգային հաստատութիւններ հոգալու համար, իրենց ազգային նախնի աւանդութեանց վառարան մնալով միշտ։

Զազա	2,300
Եզիտի	2,000
Ասորի և Քաղդէացի	8,000
	362,300

Այս վիլայէթը կը պարունակէ 48 վանք։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑԱԿ

Նահանգք	հայք	թուրք	քիւրտ	յոյն	ասորի	զազա	եզիտի	գնչու
Էրզրում և Վան	1,150,000	400,000	80,000	5,000	14,000	35,000	13,000	3,000
Տիգրանակերտ (Հիւսիսային մաս)	180,000	130,000	40,000	—	8,000	2,300	2,000	—
	1,330,000	530,000	120,000	5,000	22,000	37,300	15,000	3,000

Գումար

Հայք	1,330,000
Թուրք	530,000
Քիւրտ	120,000
Զանազան ցեղեր	82,300
	2,062,300

Դ) Վիճակագրական ծանօթութիւն

ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Բազմամարդութեան վրայ

Շատ դժուար է Տաճկաստանի Հայոց թիւը ճշդիւ որոշել և աւելի դժուար է վաւերական պաշտօնագիրներով հաստատել անձնիւր վիլայէթի բնակիչներուն թիւը։ Ոեւէ կանոնաւոր ազգահամար տեղի ունեցած չէ։ Օսմանեան Կառավարութեան հրամանաւ 1845-ին կատարուած ազգահամարն ալ, որ Պ. Ուպիչինիի և իրմէ յետոյ Տաճկաստանի վրայ խօսող հեղինակաց հաշիւներուն հիմ եղած է, խիստ անկատար է, թէև անկէ յառաջ կամ այնուհետև կատարուած բոլոր ազգահամարներուն կանոնաւորագոյնն եղած լինի։ Տաճկաստանի մէջ, ընդհանրապէս ժողովուրդը զգալի հակակրանք մը կը տածէ ազգահամարի դէմ, և ոչ-մահմէտական հպատակներն միշտ նկատած են զայն իբր սկզբնաւորութիւն գլխահարկի և պետեալքի տուրքերուն ծանրացմանը։ Իրենց գրեթէ անփոփոխ կանոնն է կարելի եղածին չափ պակաս թիւեր ներկայացունել ազգահամարի գործակալներուն, կառավարութիւնը չունենալով ծննդոց տոմարներ կամ ստուգելու ուրիշ ոեւ ազդու միջոց մը։

Պ. Ուպիչինի 1845-ի ազգահամարին յենլով 2,500,000-ի կը հանէ Տաճկաստանի Հայոց թիւն, որոց 400,000-ը Կոստանդնուպոլսոյ և Պալքանեան թերակղզիին մէջ և մնացորդը Ասիոյ մէջ։

Սակայն Օսմանեան Կայսրութեան բոլոր մասերուն մէջ, զոր օրինակ Ռումանիոյ մէջ, ուր վերջերս աւելի կատարեալ ազգահամար մը կըցած է տեղի ունենալ, ստուգուած է, որ 1845-ի ազգահամարին թուա-

նշանները իրական կամ արդի բազմամարդութենէն շատ վար են։ Այսպէս

Եգիպտոս	1871-ին	ունէր ժողովուրդ	5,200,000*)
Թունուզ	1876-ին	. . .	1,500,000**)
Սերվիա	1876-ին	. . .	1,300,000
Ռումանիա	1873-ին	. . .	5,000,000
		գումարը	13,000,000

Մինչ Գ. Ուպիչինի կը դնէ

3,200,000 Եգիպտոսի և Թունուզի համար.
1,000,000 Սերվիոյ համար.
4,000,000 Մօլտօ-Վալաքիոյ համար.

8,200,000 գումար.

Հոս կը նշմարենք 4,800,000 հոգիի յաւելում մը կամ գրեթէ 60% միջին յաւելուած մը։

Ուրեմն ինչու համար երեսուն տարի յառաջ կատարուած ազգահամարի մը 2,500,000 թիւը այսօր ալ ճիշդ պիտի նկատուի Հայոց համար։ Գաւառացի Հայոց մեծագոյն մասը գիւղերը կը բնակի, և Թուրք գիւղացիներն, Հայոց հետ չկարենալով մրցիլ, կերթան քաղաքաց մէջ կեդրոնանալու համար, ուր համեմատաբար աւելի դիւրին ապրուստի միջոցներ կը գտնեն հանրային պաշտօններ վարելով, հարկահանութեամբ և զինուորական ծառայութեամբ, որոնցմէ զրկուած են միւս ցեղերը։ Արդ, գիւղական կեանքը միայն նպաստաւոր է ժողովուրդին աճման, մանաւանդ այնպիսի երկրի մը մէջ, ուր ճարտարարուեստութիւնը ոչինչ է կամ շատ քիչ զարգացած։ Այս տեղափոխութիւնն է որ Կրետէի, Պուլկարիոյ մէջ և այլուր նուազեցուցած է Մահմէտական տարրը, մինչ Քրիստոնեայք չեն դադրած աճել պարբերական շփոթներու և պատերազմներ-

*) Տես Գ. տը Ռէնեիի վիճակագիրն Եգիպտոսի։

**) Տես, Թունուզի և հետեւեալ երկիրներուն համար, Գ. Մօռ. Պլօքի Քաղաքական Տնտեսութեան Տարեցոյցն։

րու հակառակ։ Ասկէ զատ, Հայոց մէջ խստիւ պահպանուած սովորոյթ մը կայ, որով աղջիկները և մանչերը կամուսնացնեն խակոյն, երբ չափահաս լինին. որդիները և թոռները իրենց հայրերուն և պապերուն հետ միևնոյն տան մէջ կը բնակին, միատեղ կաշխատին, ապրելու կամ զաւակ ապրեցնելու համար քիչ նեղութիւն կը կրեն կամ բնաւ չեն կրեր, զի ընտանիքն, որքան նուազ յաջող վիճակ ալ ունենայ, իր ապրուստը կրնայ ճարել։ Երբ տան գլխաւորը մեռնի, երիցագոյն անդամը կը յաջորդէ նմա, և աւելի գործօն կամ աւելի հարուստ անդամները յայնժամ միայն կը մտաբերեն հաստատուիլ այլուր և նոր խումբեր կազմել, երբ թոռները, ծնողաց մահուամբ ընտանիքի հայր լինելով, գերդաստանին գործերը վարելու կը կոչուին։

Ուստի մեք համամիտ պիտի լինէինք նոցա, որք հայաբնակ տեղերու վրայ յաւէտ կամ նուազ գոհացուցիչ տեղեկութիւններ ստացած լինելով՝ կը հաւաստեն թէ Հայոց թիւն 3½ միլիոնի կը հասնի, եթէ Քուրդերուն դրացնութիւնը աստ և անդ զարգացման ծանր խոչընդոտ չը լինէր, և եթէ բազմաթիւ ընտանիք, հող չըլլալուն՝ չը կարենալով երկրագործութեամբ ստանալ տուրքի համար պահանջուած դրամը, չը հարկադրուէին մայրաքաղաք յղել իրենց անդամներուն մէկը կամ երկուքը, որք իրենց զաւակները ամուսնացնելու հոգը իրենց եղբայրներուն կամ ազգականներուն թողլով՝ նոյնպէս յանձն կառնուն ամբողջ ընտանիքին համար շահիլ այն ստակը, որով տուրքը պիտի վճարուի*)։

Ուրեմն այդ հաշիւը կիջեցունեմք 3,000,000-ի, որով 1845-ի ազգահամարին արդիւնքը ½ միլիոն կամ

*) Մի քանի ամ յառաջ Պատրիարքարանի կատարած վիճակագիրը հաստատած է թէ Կոստանդնուպոլսոյ մէջ 30,000 պանդուխտ Հայ կայ։

20 % յաւելցուցած կը լինիմք, յաւելում մը զոր պէտք է վերագրել մասամբ ծնեալներուն մեռեալներէ բազմաթիւ ըլլալուն, մասամբ ալ պաշտօնական ազգահամարին թերութիւններուն։

Այս 3,000,000 Հայերը սապէս կը բաժնուին. 400,000 ի Կոստանդնուպոլիս և Պալքանեան Թերակղզիի միւս մասերուն մէջ. այդ թիւը Պ. Ուպիչինիի ընդունած է, զոր մենք ալ կը պահպանենք։ Եւրոպական Տաճկաստանի Հայերն գրեթէ բոլորն ալ կը բնակին քաղաքաց մէջ, ուր վաճառականութեամբ և ճարտարարուեստութեամբ կը զբաղին, և մենք պատճառներ ունիմք հաւատալու թէ իրենց թիւը զգալապէս աճած ըլլալու չէ։

600,000 Փոքր Ասիոյ և Կիլիկիոյ մէջ. 670,000 Փոքր Հայաստանի մէջ (Սըվազի վիլայէթ և Կեսարիոյ սանճագ), և 1,330,000 Օսմանեան Մեծ Հայաստանի մէջ, որ կը պարունակէ Էրզրումի եւ Վանի վիլայէթներն, Տիարպէքիրի վիլայէթին հիւսիսային մասն, այսինքն Խարբերդի սանճագին արևելեան մասը (ուր սահմանագլուխ է Եփրատ արևմտեան կողմէն), Արղանայի սանճաղն և Սղերդի սանճագին հիւսիսային մասն։

Եւրոպացի ուղևորներն, որք սովորաբար Պալքանեան Թերակղզին և Արևմտեան Փոքր Ասիոյ կայցելեն, հաւատացած և հաւատացուցած են, թէ Հայերն, այց կը պատահէին գրեթէ ամենուրեք, հաւասարապէս ցրուած էին Օսմանեան Կայսրութեան մակերևոյթին վրայ։ Սխալ է այդ։ Մեծամասնութիւնը դեռ կը բնակի իւր հին հայրենեաց հողին վրայ։ Սակայն պէտք չէ դատել քաղաքաբնակներուն թիւէն, որպէս Կրետէի ժողովուրդին վրայ շատ թիւր գաղափար կը տանայ մարդ, եթէ իւր հաշիւը հիմնէ գլխաւոր քաղաքաց վրայ, ուր Մահմէտականք մեծամասնութիւն ունին, կամ Պուլկարիոյ և Հէրցէկովինի ժողովուրդին վրայ, եթէ

մարդ Ադրիանուպոլիս, Ռուսճուք և Մօսթար միայն տեսնէ։

Նոյնպէս ակներև է որ Հայաստանի մէջ, որպէս Տաճկաստանի ուրիշ շատ մասերուն մէջ, Քրիստոնէից և Մահմէտականաց համեմատութիւնը մեծապէս փոխուած է 1845-էն ի վեր։ Մինչ Քրիստոնեայ ժողովուրդը ամեն տարի կաճի յաւէտ կամ նուազ ընդարձակօրէն, նուազում կը նշմարուի Մահմէտականաց մէջ։

Այս նուազման պատճառները զանազան են.

1. Զինուորագրութիւն.

2. Մահմէտականաց խռնումը քաղաքաց մէջ.

3. Իւրեանց գաղթումն ի մայրաքաղաքն և այլուր Թուրք պաշտօնատարաց ծառայութեանը մէջ մտնելու կամ ուէ կերպով ապրուստ ճարելու համար։

Եթէ այսօր կանոնաւոր ազգահամար մը կատարուի Օսմանեան Հայաստանը կազմող նահանգաց մէջ, պիտի յայտնուի, որ թուային կարևորութիւնն Մահմէտականներէն Հայերուն անցած է։

Սա ևս գիտելի է, որ Հայաստանի մէջ բնակող Մահմէտականաց մէկ մասը Հայ սերունդէ է։ Սորա շատ տեղերու մէջ պահպանած են իւրեանց ցեղի բարքերն, լեզուն և սովորոյթները, և հազուագիւտ չէ նոցա մէջ գտնել այնպիսի անհատներ, որք դեռ այսօր իւրեանց հայազգի հօր կամ պապուն անունովը կը կոչուին Մարկոս-Օղլու Մուսթաֆա, Տէր-Գրիգոր-Օղլու Մէհէմմէտ *)։

Նոյնպէս են նաև Հայաստանի մէջ հաստատ բնակութիւն ունեցող Քուրդերն. Դիւրին է Մամգցի, Մանգքլի, Սլիվանցի, Ռոշկունցի անուններուն մէջ նշմարել Մամգոնեան, Մանդակունի, Սլկունի, և Ռշտունի հին Հայ գերդաստանաց անունները։ Անոնց շատերը Քրիս-

*) Տէր համեմատ է աբբայ բառին. յայտ է, թէ Հայ քահանաներն ամուսնացեալ են ըստ վաղեմի սովորութեան Եկեղեցւոյ։

անձէութեան սովորութեանց շատերուն կը հետեւին եւ չեն կարող նկատուիլ իբր Մահմէտական։

Հոս ընթերցողին մտացը կընայ խնդիր ներկայանալ թէ ինչու Թուրքերն այսքան զանց առած են մեծ բազմութեամբ գրաւել Հայաստանի գաւառները։ Նոյն իսկ կլիմային խառնութիւնը այդ երկիրը իւր զաւակներուն պահպանած է։ Թուրքը, ինչպէս ծոյլ եւ հեշտասէր, Փոքր Ասիոյ, Եւրոպական Տաճկաստանի եւ Ասորիքի բարեխառն կամ տաք երկիրները նախընտրած է յաւիտենական ձիւներով ծածկուած լեռներէ եւ ծովուն մակերեւոյթէն մի քանի հազար ոտք բարձր լեռնադաշտներէ։ Արդէն հարկ ալ զգացած չէ հաստատուիլ անդ քաղաքականութեան կամ նախատեսութեան համար, քանի որ Քուրդերն եւ ուրիշ այնքան բարբարոս ցեղեր հոն են, բնակիչները շարունակ նեղելու եւ անկարողութեան դատապարտելու համար։ Ասոր համար բաւ էր աչք գոցել նոցա չարագործութեանց առջեւ եւ ի հարկին քաջալերել զայն։ Այսպէս վարուեցաւ նա, եւ գուցէ այս միակ պարագայն է, ուր կարելի չը լինի ամբաստանել Թուրքն իբր զանցառու կամ իբր դրութիւն չունեցող։

—

Այս թղթերին կցուած էր նաեւ աշխարհագրական քարտէս ապագայ ինքնավար Հայաստանի, այն սահմաններում, որ նշանակուած էին «Կազմակերպական կանոնագրի» ծրագրում *)։

*) Բացի դրանից իտալական լիազոր կոմս Կորտին՝ Բէրլին մեկնելու ժամանակ Իտալիայում յանձնուած էր «Հայաստանի աշխարհագրական տեղեկագիր մը, պատրաստուած մասնաւորապէս այս պարագային համար Հայր Ալիշանէն, մասնաւորիշ բարեկարգական զարմաններով, շատ մը մաղթանքներով եւ յոյսերով» (Ժամանակակից Պատմութիւն Հ. Մ. Նուրիխանի, Վիեննայի, 1907, Գ. հ., էջ 612)։

կոնգրէսի նախագահն այս թղթերն ստացաւ եւ դրեց ադերսագիրների ծրարում, որ դեռ ասել չէր, թէ անպատճառ կոնգրէսի մէջ պիտի քննուէր։ Այս հանգամանքը Ֆրանս. լիազոր պ. Ուադինգտոն հաղորդեց հայ պատուիրակներին եւ խորհուրդ տուեց, որ գրեն յատկապէս այս մասին իշխ. Բիսմարկին եւ խնդրեն, որ իրանց թղթերը նա մտցնէ կոնգրէսի օրակարգը։ Անմիջապէս դրա երկրորդ օրը հայկական պատուիրակութիւնը հետեւեալ նամակն ուղարկեց իշխան Բիսմարկին։

«Որովհետեւ Սան-Ստեֆանոյի սկզբնական դաշնագիրը պարտականութիւն է դրած Թիւրք կառավարութեան վրայ, որ նա բարենորոգումներ մտցնէ Հայաստան, տեղական կարիքների համաձայն, մենք էլ համարձակեցինք Ձեր Բարձրութեան, ինչպէս եւ բոլոր միւս լիազորներին, ուղարկել վաւերագրեր, որոնց մէջ ձեւակերպած ենք, թէ ինչպիսի կարիքներ են դրանք։ Այսօր խնդրում ենք Ձեզ, որ բարեհաճէք այս վաւերագրերը կոնգրէսին յանձնել։ Աւելացնում ենք դարձեալ, որ մենք պատրաստ ենք հարկաւոր եղած բացատրութիւնները տալ Թիւրքիայի հայոց խնդրի նկատմամբ»։

Իշխ. Բիսմարկ այս նամակն ստանալով վերջապէս համաձայնեց՝ հայկական կամ ԺԶ. յօդուածն էլ կոնգրէսի քննութեան ենթարկել։

Այժմ յառաջ բերենք Նուպար փաշայի պատրաստած բարենորոգումների ծրագիրն, որի մասին յիշեցինք վերեւ (Գլ. Ե.)։

ՄԷԿ ՔԱՆԻ ՆՕԹԵՐ

Հայաստանի վարչութեան մէջ մտցնելիք բարենորոգմանց մասին

Եւրոպական պետութիւնները, փափաքելով որ Արեւելքի մէջ տեւականութեան հանգամանք ունենայ

իրերու վիճակ մը հաստատուի, իրենց ուշադրութիւնը դարձուցին, ինչպէս Պալքանեան նահանգներուն, նոյնպէս և Փոքր Ասիոյ այն մասին վրայ, ուր օրրանն է հայ ցեղին։ Բ. Դուռը ինքն իսկ հարկը զգացած է այդ ճարտարագործ, աշխատասէր և ուշիմ ազգութիւնը չձգելու այն ողորմելի վիճակին մէջ, ուր կը գտնուի, հեռու Եւրոպայէն և անոր ներկայացուցիչներէն։ Անօգուտ է խօսիլ հոս իրենց հայրենիքին մէջ մնացող հայերուն վրայ. անօգուտ մանաւանդ անոնց այդ կացութիւնը բաղդատել իրենց Կովկասի մէկ միլիոն ազգակիցներուն հետ։ Բ. Դուռը, քանի որ Սան-Ստեֆանոյի դաշնագրին մէջ յանձն առած է բարելաւութիւններ մտցնել հայոց վարչութեան մէջ, քանի որ այդ ժողովուրդը քիւրտերուն դէմ պաշտպանելու ստիպողականութիւնը ընդունած է, հաստատած և խոստովանած է ուրեմն այն յոռի վարչութիւնը, որուն տակ հայերը կը հեծեն, և այն լքեալ վիճակը, ուր կը գտնուին քիւրտ ցեղերուն հանդէպ։

Հայերը քաղաքական գոյութեան մը, քաղաքական անկախութեան մը աչք չունին. քաղաքային (civil) ազատութիւններ կուզեն, հաստատութիւններ՝ որոնք երաշխաւորեն իրենց ապահովութիւնը, իրենց ինչքերը, իրենց կիներուն ու աղջիկներուն պատիւը, իրենց կեանքի իրաւունքը՝ վերջապէս։

Եթէ այս քաղաքային ազատութիւնները, որոնք 1840-էն ի վեր հանդիսաւորապէս խոստացուած են Կիւլհանէի Խաթթը Շէրիֆին մէջ և յաջորդ Խաթթերով շեշտուած են, իրականապէս գործադրուած ըլլային, այդ աշխատասէր հայ ցեղը շատ տարիներէ ի վեր իր երկրին կերպարանքը փոխած կըլլար։ Երևանի ռուսո-հայկական նահանգին ժողովուրդը երեսուն տարուան ընթացքին մէջ կրկնապատկուած է։

Հայ ազգը կը խոստովանի Ն. Վ. Սուլթանին և անոր մեծանուն նախորդներուն վեհանձն դիտաւորու-

թիւնները։ Եթէ այդ դիտաւորութիւնները ապարդիւն մնացած են, եթէ հրովարտակուած բարենորոգումները մեռած տառի ձևը պահած են, պատճառը այն է որ անոնց գործածութիւնը յանձնուած է կարգ մը պաշտօնեաներու, որոնք անոնց նշանակութիւնը չէին հասկնար, որոնք անոնց հարկաւորութիւնը չէին զգար, կամ որոնք անոնց հակառակ էին կրօնական համոզումներով կամ անձնական շահի նկատումներով։

Ինչ բնութիւն ալ որ ունենան ուրեմն այն բարենորոգումները, զորս պետութիւնները հարկաւոր պիտի նկատեն շնորհել այդ ուշիմ ցեղին, որ Արևելքի և Արևմուտքի միջև բնական միջնորդն է, առաջին նկատողութիւնը, զոր պէտք չէ աչքէ հեռացնել և առանց որուն ոևէ բարենորոգում ընդունայն պիտի մնայ, ընտրութիւնն է այն անձերուն, այն պաշտօնեաներուն, որոնք զայն իրագործելու պիտի կոչուին։ Արդ, որովհետև պաշտօնեաները մինչև հիմայ ընտրուած են մահմետական ու առանձնաշնորհուած դասակարգի մը մէջէն, նոր հաստատութեանց համար յաջողութեան էական պայմանը այն է, որ անուանուի Ընդհանուր Կառավարիչ մը, պաշտօնեաներու ուրիշ կարգէ մը ընտրուած, այսինքն քրիստոնեաներուն մէջէն, և քանի որ խնդիրը Հայաստանի վրայ է, Ընդհանուր Կառավարիչը հայ մը ըլլայ։

Ինչ ալ ըլլայ այդ բարձր պաշտօնատարին ազգութիւնը կամ բարոյականը, աւելորդ է կարծել, թէ անիկա պիտի կարենայ այդ դժուար գործին ձեռք զարնել, եթէ ամեն օր ինքզինքը ենթակայ զգայ յանկարծական պաշտօնանկութեան մը։ Ն. Վ. Սուլթանը, իր գահակալութեան ճառին մէջ, իր կայսրութեան չարիքներուն աղբիւրներէն մէկը համարած էր այն դիւրութիւնը, որով պաշտօնեաները կանուանուէին կամ կը հրաժարեցուէին։ Ն. Կ. Վեհափառութիւնը, իր հպատակներուն բարւոյն համար, կրնար շնորհել իր հայ-

կական նահանգներուն՝ կառավարիչ մը, որ ապահով ըլլայ վեց կամ եօթը տարուան շրջանի մը համար իր պաշտօնին գլուխն ըլլալուն։

Ընդհանուր Կառավարչի մը ընտրութիւնը ամէն բարենորոգման էական պայմանը ըլլալով, Պետութիւնները, հիմնուելով Սան-Ստեֆանոյի սկզբնական դաշնագրին վրայ (ԺԶ. յօդուած), հետեւաբար առանց դըպչելու Ն. Կ. Վեհափառութեան գերագոյն հեղինակութեանը, կրնան իրենց հաւանութեամբ գործակցիլ այդ ընտրութեանը, ինչպէս կըլլայ Լիբանանի կառավարչին ընտրութեանը համար, և այսպէսով այդ ընտրութիւնը պաշարել ամէն բաղձալի երաշխաւորութիւններով։

Ընդհանուր Կառավարիչը, այս պայմաններուն մէջ ընտրուած և Ն. Վ. Սուլթանէն պաշտօն առած՝ գործադրութեանն ու ընթացաւորութեանը հսկելու այն բարենորոգումներուն, զոր Ն. Վեհափառութիւնը պիտի հրովարտակէ, պէտք է որ պաշտօնապէս առնայ հարկաւոր հեղինակութիւնը՝ այդ գործը կատարելու համար իր պատասխանատուութեան տակ։

Բայց որո՞նք են այդ բարենորոգումներն ու բարւոքումները։ Հայ ազգը կը կարծէ թէ կարելի պիտի ըլլայ դիւրաւ զանոնք սահմանել, երբ չարիքին աղբիւրները մէկիկ մէկիկ մատնանիշ ըլլուին։

Առաջինը, յայտնապէս, քիւրտերուն աւազակութիւններուն ու աւարառութեանց խնդիրն է։ Պէտք է զսպել, սանձել անոնց ջոկերը։ Մինչև ցարդ այդ բանը չեն ըրած և սակայն ոչինչ աւելի դիւրին էր զօրագունդերու հրամանատարներուն համար. կամ միջոցները պակսած են և կամ թէ կամքը։ Ժողովրդին ապահովութիւնը ամէն վտանգէ զերծ կացուցանելու համար, ստիպողական և իմաստնօրէն հետատես գործ մը չէ՞ իրեն յանձնել ինքզինքը պաշտպանելու հոգը։ Քրիստոնեայ թէ մահմետական, իրենց առաջին պէտքը ապահովութիւնը չէ՞ միթէ։

Ընդհանուր Կառավարիչը իշխանութիւնը պիտի ունենայ ուրիշ պահակազօրքի մարմին մը կազմակերպելու, որուն պաշտօնը պիտի ըլլայ հսկողութիւն ընել և հանրային հանդարտութեան ամէն խանգարիչներուն դէմ երկիրը ապահովել։ Այդ մարմինը պիտի բաղկանայ՝ առանց խտրութեան՝ մահմետականներէ և քրիստոնեաներէ, որոնք առաջուց դիւրաւ սահմանելի դրութեան մը համեմատ պիտի ընտրուէին։ Այդ մարմնոյն պետերուն անուանումը Ընդհանուր Կառավարչէն կախում պիտի ունենայ, որովհետև ան է Ն. Վ. Սուլթանին առջև պատասխանատու նահանգին բարեկարգութեանն ու անդորրութեանը։ Մահմետական ու քրիստոնեայ տարրերուն միացումը կազմակերպեալ մարմնոյ մը մէջ՝ պաշտպանութեան ու ապահովութեան միևնոյն շահուն համար բնութիւնը կունենար երկու տարրերը իրարու մօտեցնելու։ Մերձեցում, որ Հայաստանի մէջ շատ դիւրին է, որովհետև գիւղական ժողովուրդը, թէ համանման ծագմանը, թէ հաւասարապէս կրուած թշուառութեան պատճառով, միևնոյն պէտքերը ունի, հետևաբար միևնոյն բաղձանքները։

Ասկից զատ, կայսերական զօրագունդերու հրամանատարները, հանրային ապահովութեան վերաբերեալ ամէն տեսակ խնդիրներու համար, պէտք էր որ հնազանդէին Ընդհանուր Կառավարչին և ոստիկանական մարմնոյն օգնէին իր գործը ի գլուխ հանելու։

Նիւթական ապահովութիւնը այսպէս հաստատելէն յետոյ, հարկաւոր պիտի ըլլար զբաղիլ գործառնութեանց ապահովութեամբ, պաշտօնեաներու և ժողովրդին միջև յարաբերութեանց ապահովութեամբը, այսինքն արդարութեան կազմակերպութեամբը։ Արդարև, առանց դատաստանական կազմակերպութեան, գործառնութեանց համար ապահովութիւն չկայ՝ պաշտօնեաներու սովորութեանց և գործելու կերպուն եղանակներուն դէմ, հետևաբար երաշխաւորութիւն չկայ

բարենորոգմանց և բարւոքմանց տեւականութեան և լրջութեան համար։ Դատերը կը տեսնուին այժմ Վարչական Մէճլիսներուն կողմէ, որոնց անդամները՝ հարկահաւաքներ կամ ատոր նման մարդիկ են, վարչութեան գործերուն ուղղակի կամ անուղղակի կերպով խառնուած, և ասկից զատ Դատավարութեան Օրինագրքին և օրէնքներուն նախնական տարրերն անգամ հասկնալու անկարող. այս կերպով այդ օրինագիրքը իրենց ձեռքը գործիք մը կը դառնայ օրինական կամայականութեան, որ կը կիրարկուի ժողովրդի մը վրայ, որ անոնցմէ աւելի անկարող է զայն հասկնալու։

Շատ փափուկ գործ մը պիտի ըլլար որոշել առաջուց, թէ ինչ բնութիւն պէտք է ունենայ դատարանական կազմակերպութիւնը, զոր պատշաճ է հաստատել ժողովրդին քաղաքային և առևտրական յարաբերութիւնները կանոնաւորելու համար։ Այդ կազմակերպութիւնը որչափ ապահովութեամբ պաշտպանուի՝ քիչ է, վասն զի ան է բովանդակ վարչութեան կանոնաւորիչը։ Բայց ինչ որ առաջուց կարելի է հաստատել, այն է՝ որ հիմնուելիք դատարանները պէտք չէ որ հիմակուան Մէճլիսներուն պէս վարչութեան գործերուն մէջ ոևէ կերպով մասնակցութիւն ունենան։ Ընդհանուր Կառավարիչը պէտք է ուսումնասիրէ խնդիրը և զայն ուսումնասիրութեանը յանձնէ ձեռնհաս անձերու յանձնաժողովի մը և այդ ուսումնասիրութեանց արդիւնքը ներկայացնէ անոր գործադրութիւնը հրամանագրելու պաշտօն ունեցող իշխանութեանց։ Այս կերպով, կարելի է վստահ ըլլալ թէ Արդարութեան կազմակերպութիւնը պիտի համապատասխանէ, որչափ որ հնարաւոր է, երկրին մտաւորական ու ընկերական վիճակին։ Որովհետև Արդարութիւնը պիտի ծառայէ իբր վարչութեան սանձիչ ու վերատեսուչ։ Ուսումնասիրութեանց Յանձնաժողովը պիտի որոշէ դատարանական իշխանութեան ձեռնհասութեան սահմանները և սա կէտը մա-

նաւանդ, թէ դատարանները որ աստիճան կարողութիւն պիտի ունենան դատելու պաշտօնեաները՝ իրենց պաշտօնավարութեանց մէջ գործած զեղծումներուն համար։

Ընդհանուր Կառավարիչը պէտք է որ արտօնութիւն ունենայ օտարազգի տարրը իրեն օգնութեան կանչելու Արդարութեան կազմակերպութեան այդ այնքան էական գործին մէջ. ինքը պիտի որոշէ, թէ ինչ չափով պիտի ընէ այդ բանը։ Հայերը կը մտածեն, որ եթէ այդ տարրը՝ որ է նկարագրի անկախութիւն և գիտութիւն՝ մտնէ, ոևէ չափով, Բարձրագոյն Ատեանի մը կազմութեան մէջ, երկրին ընկերական վիճակը չի հակառակիր, որ դատարաններուն ձեռնհասութիւնը տարածուի պաշտօնեաներուն վրայ՝ անոնց գործած զեղծումներուն համար, և թէ ընդհակառակն ատով այդ ընկերական վիճակը պիտի զարգանայ այս վերաստուգմամբ։

Ասկից զատ՝ կը մտածեն, թէ բարենորոգմանց լուրջ իրագործումը այդ ընդարձակուած Արդարութեան մէջ պիտի գտնէ իր ճշմարիտ հիմն ու նեցուկը։

Անգամ մը որ ժողովրդին ապահովութիւնը երաշխաւորուի Պահակազօրքի (gendarmerie) և Արդարութեան կազմակերպութեամբ, ուշադրութիւնը կը դառնայ ուրիշ չարիքի մը վրայ, զոր Արևելքը ճանչցող ամեն մարդ մատնանիշ ըրած է արդէն, այն է կալուածական տուրքին ձևը, տասանորդը, և տասանորդ հաւաքելու եղանակը. անհրաժեշտ է, որ այդ տասանորդը փոխուի հողին տարածութեան և որակութեան համեմատութեամբ վերցուած տուրքի մը։ 26 տարուան մէջ, Պոմպէի նահանգին երկրագործական հարստութիւնը կրկինէն աւելի աճեցաւ, տասանորդին լանտ-բաքսի (հողատուրք) փոխուելուն պատճառով։ Իրաւ է որ Հայաստանը կալուածատոմար (cadastre) չունի. բայց կարելի է կալուածատոմարի պակասը ոևէ կեր-

պով լրացնել, ինչպէս որ ըրին Հնդկաստանի և ուրիշ երկիրներու մէջ, ուր այդ այլափոխումը տեղի ունեցած է։

Այս երեք բարենորոգումները, եթէ լրջօրէն ձեռնարկուին և գործադրուին, կը բաւեն երկիրը զարգացնելու, զայն կերպարանափոխելու. բայց անոնց գործադրութիւնն ու կանոնաւոր ընթացքը ապահովելու համար, Ընդհանուր Կառավարիչը պէտք եղած նիւթական միջոցները ունենալու է։

Հայերը, ինչպէս արդէն ըսուեցաւ, աչք չունին ոչ քաղաքական անկախութեան մը, ոչ օսմանեան պետութենէն ալ բաժանման. իրենց նպատակը բոլորովին հակառակն է։ Յաւակնութիւն չունին որ իրենց երկրին հասոյթները իրենց ուզածին պէս և միմիայն իրենց պէտքերուն համար գործածուին։ Իրենց համար ուրիշ բան չեն խնդրեր՝ եթէ ոչ իրաւունք ունենալ իրենք իրենցմէ տուրք ժողվելու՝ ընդհանուր տուրքերը կայսերական գանձուն յանձնելէ յետոյ, որպէս զի այդ կերպով մասնաւոր հասոյթներ սահմանեն նահանգին մասնաւոր ծախքերուն համար, ինչպէս են Պահակազօրքի, Արդարութեան և կրօնական հաստատութեանց, Հանրօգուտ շինութեանց, ևն։

Մէկ կողմէ Հայերը կը կարծեն, թէ իրենց մասնաւոր և տեղական պէտքերուն համար իրենք իրենցմէ տուրք հաւաքելու այս իրաւունքը պիտի օգնէ հրամանագրուած բարենորոգմանց ու բարւոքմանց իրագործման, որովհետև պիտի ապահովէ ծախքը Վարչութեան զանազան պաշտօնէութեանց, որոնք պիտի կոչուին այդ բարենորոգումները գործադրելու և անոնց կիրարկմանց վրայ հսկելու. այսպէսով այդ պաշտօնէութեանց վճարումները պիտի կախում չունենան ալ իշխանութենէ, որ կրնայ տեղական պէտքերուն և բարենորոգմանց իրագործման համար անոնց չափ հոգածութիւն և շահագրգռութիւն չունենալ։ Միւս կողմէ՝ Կայսերական

Կառավարութեան շահը Ն. Կ. Վեհափառութեան հպատակներուն շահերուն ամբողջութեանը հետ համանման ըլլալով, Կայսերական Կառավարութիւնը իմաստուն վարչութեան մը սկզբունքներուն համաձայն պիտի գտնէ, որ երկրէն հաւաքէ միայն այն տուրքերը, որոնք հարկաւոր են պետութեան ընդհանուր ծախքերուն համար, և տեղական վարչութեանը թողու մասնաւոր ու տեղական պէտքերուն համար բաւականաչափ հասոյթներ։

Իր սեփական վարչութեանը ծախքերուն յատկացեալ այդ հասոյթները գանձելու համար նահանգին կողմէ ձեռք առնուելիք եղանակը հետևեալ կերպով կրնար կարգադրուիլ. Ընդհանուր Կառավարիչը և՝ անոր հրամաններուն համեմատ՝ այլևայլ գաւառակներու կառավարիչները իրաւունք կունենան՝ իւրաքանչիւր գաւառակի գլխաւոր քաղաքին մէջ՝ տեղին երևելիներէն բաղկացեալ ժողով մը գումարել։ Այդ զանազան ժողովներուն կազմաւորման ձևը այժմէն պէտք չէ որ որոշուի. սկիզբները, Ընդհանուր Կառավարիչը և գաւառակներու կառավարիչները իրենք իսկ պիտի ընտրեն անդամները՝ այդ երևելիններուն ու ամենէն աւելի վստահութիւն ներշնչող անձերուն մէջէն. ընդհանուր ժողովը, որ պիտի գումարուէր նահանգային գլխաւոր քաղաքին մէջ, պիտի բաղկանար պատգամաւորներէ, զորս պիտի անուանէին գաւառակներու ժողովները։

Այդ ժողովները կամ մանաւանդ այդ ընդհանուր ժողովը միակ իշխանութիւն մը պիտի ունենար, այն է՝ այլևայլ պաշտօնէութեանց ծախքերուն համար պէտք եղած տուրքերը սահմանել։ Այդ ժողովները կամ խորհուրդները ոչ մէկ կերպով պիտի չմիջամտեն ոչ Արդարութեան վարչութեան, ոչ նոյն ինքն Վարչութեան մէջ։ Ապագային, փորձառութիւնը և երկրին ընկերական վիճակին զարգացումը պիտի նշանակեն վերջնական եղանակ մը այդ խորհուրդներու անդամներուն

ընտրութեանց և անոնց շնորհուելիք իշխանութեանց ընդարձակման համար։ Բայց մեզ այնպէս կը թուի, թէ սկիզբները, որպէս զի շփոթութիւն յառաջ չգայ— ինչ որ անխուսափելի է ժողովրդի մը մէջ, որ իր սեպհական շահերը վարելու գործին բոլորովին օտար մնացած է—անոնց իշխանութեանց սահմանաւորումը խոհեմ և իմաստուն բան մըն է։

Հայաստանի նահանգին կազմակերպութիւնը, այսպէս իր ընդհանուր գծերով պատկերացուած, կարող է բարօրութիւնը ապահովել նահանգին բոլոր բնակիչներուն, մահմետական թէ քրիստոնեայ, ամենքն ալ հպատակ Ն. Կ. Վեհափառութեան, ամենքն ալ վարչութեան մը մէջ հաւասարապէս շահ ունեցող։ Այս կազմակերպութեան նպատակն է ամենուն բարօրութիւնը ապահովել. հետևաբար, մահմետական և քրիստոնեայ հասարակութիւններուն թուոյ փոխադարձ համեմատութիւնը երկրորդական կարևորութիւն մը կը ստանայ։ Ոչինչ պիտի փոխուի քաղաքական կացութեան մէջ. միայն վարչութեան մէջ նոր պաշտօնեաներ պիտի դրուին, որոնք, մէկ քանի հաստատութեանց ու մանաւանդ Արդարութեան կազմակերպութեան շնորհիւ պահպանուած, պաշտօն պիտի ունենան գործադրել այն բարենորոգումները, զորս Ն. Վեհափառութիւնը հրամանագրել պիտի բարեհաճի, և չթողուլ որ անոնք մեռեալ տառի ձևին մէջ մնան, ինչպէս մինչև ցարդ խոստացուած բոլոր բարենորոգումները*)։

Նուպար փաշա

Փարիզ, 1878 թ.

---

*) Mr. E· Дicey 1878-ին հրատարակեց այս ծրագրի անգլիերէն թարգմանութիւնն, որ 1890-ին վերստին տպագրուեց Մանչեստրում, այնուհետև Լոնդոնի Ango-Armenian Association-ը նոյնը տպեց իր «Case for the Armenians» հրատարակութեան մէջ, իսկ 1893-ին Մ. Չէրազ նորից ֆրանսերէնի թարգմանելով հրատարակեց իր «L'Arménie» թերթում (№ 61)։ Մեր այստեղ հրատարակածը Արշակ Զօպանեանի թարգմանութիւնն է, որ լոյս է ընծայուած «Անահիտի» մէջ, 1907 թիւ № 10—11—12։

Նուպար փաշան իր այս ծրագիրը Պարիզից ուղարկել էր Բեռլին, ուր նրանից մի մի օրինակ յանձնուեց կոնգրէսի անդամներին, որոնք այս կերպով 2 ծրագիր ունէին իրանց ձեռքը, մէկը պաշտօնական, յանուն Թիւրքիայի Հայոց Ազգային Վարչութեան, որ պահանջում էր Հայաստանի ինքնավարութիւնն, իսկ միւսը մասնաւոր անհատից, թէև այդ անհատն Եգիպտոսի հանճարեղ մինիստրը լինէր, որ բաւականանում էր հայ վալի, և մի քանի դատաստանական ու ոստիկանական բարեկարգութիւններ պահանջելով։

Բնականաբար կոնգրէսի նախագահն՝ իշխան Բիսմարկ ի նկատի առաւ առաջին ծրագիրն և այն ներկայացրեց կոնգրէսի քննութեան։ Այս կերպով Հայկական խնդիրը մտաւ կոնգրէսի օրակարգի մէջ։

«Հայոց Յիշատակագիրը, — գրում է պրոֆէսոր Անդրէաս Արծրունին Բեռլինից «Մշակին»,—ամբողջ եւրոպական լրագրութեան կողմից մեծ համակրութեամբ ընդունուեց և ամբողջ մամուլը միաձայն հաստատում է, թէ Թիւրքիայի հայերի պահանջները շատ համեստ և իրաւացի են, և կարծում է, որ կոնգրէսն անպատճառ կընդունի...»։

Երբ Հայաստանի ինքնավարութեան ծրագիրը կոնգրէսի օրակարգն անցաւ, հայոց անգլիացի բարեկամներն այս առթիւ մի մեծ միտինգ սարքեցին Լօնդօնում, որին ներկայ էին շատ նշանաւոր անգլիացիներ, թէ ազատական և թէ պահպանողական բանակից։ Մեծ թւով եկել էին նաև հայեր Մանչէստրից և Լօնդօնից։ Միտինգին նախագահում էր Ուէստմինստրի արքան։ Միտինգն որոշեց խնդրել լորդ Բիկընսֆիլդին, որ նա ամենայն ուժով պաշտպանէ հայկական հարցը։

Բայց կային այնպիսիները, որ գտնում էին, թէ այս ծրագիրը դեռ ևս բաւականաչափ չէ պաշտպանում հայոց ազգային իրաւունքը։ Գրիգոր Արծրունին «Մշա-

Պուամ» քննադատում էր ծրագիրն և դժգոհութիւն էր յայտնում, թէ նրա մէջ չէ յիշուած, թէ «Ինքնավար Հայաստանում ինչ լեզու պէտք է կառավարչական լեզու լինի։ Ծրագիրը թոյլ է տալիս,—ասում է Արծրունին,—որ վալին նշանակուի Թիւրքաց կառավարութիւնից, փոխանակ պահանջելու, որ այդ կառավարիչը ընտրուի ժողովրդից և հաստատուի կառավարութիւնից, եւրոպական պետութիւնների հաւանութեամբ։ Ծրագիրը,—շարունակում է Արծրունին,—ընդդէմ չէ, որ Թիւրքաց կայսերական զօրքերը գրաւեն բերդերն և ամրացրած տեղերը։ Ընդհանուր ժողովի մէջ նա թոյլ է տալիս մահմեդականներին, որոնք Հայաստանում քրիստոնեաներից քիչ են թւով, հաւասար թւով պատգամաւորներ ընտրել. Նա սահմանափակում է հայոց միլիցիայի թիւը միայն 4000 հոգուց բաղկացած գունդով և վերջապէս, որ գուցէ ամենից նշանաւորն է, ծրագիրն ոչինչ չէ խօսում, ոչինչ կարգադրութիւն չէ անում մահմեդականների և քրիստոնեաների մէջ եղած կալուածական յարաբերութիւնների մասին...»։

Ճիշտ այս մտքով էր քննադատում ծրագիրը Պետերբուրգի ռուս յառաջադիմական մեծ թերթը՝ «Голосъ»։ Այս քննադատութիւնների նպատակն էր ցոյց տալ, թէ Հայաստանի համար պահանջուած ինքնավարութիւնը շատ թերի էր և պէտք էր աւելի լայն իրաւունքներ պահանջել։ Այնչափ մեծ էր այն ժամանակ յոյսը հայկական իղձերի իրականացման նկատմամբ։

Ինքնավարութեան ծրագրի հեղինակների համար՝ որչափ համեստ և աննշան պիտի երևար Նուպար փաշայի ծրագիրն, և իրօք՝ Կ. Պոլսի ղեկավարները, Ներսէս պատրիարքն և իր գործակիցներն, անմիջապէս հրահանգ են տալիս Բեռլինի հայ պատուիրակութեան՝ ուշադրութիւն չդարձնել Նուպարի յիշատակագրին և համառ մնալ ինքնավարութեան պահանջման վրայ։ Միայն Խրիմեանն էր, որ հաւանութիւն էր տալիս

Նուպար փաշայի մտքերին և կարևոր էր համարում, որ նա գայ Պարիզից Բեռլին և անձամբ պաշտպանէ կոնգրէսում իր «նօթերը»։ Սակայն ոչ Պոլիսն և ոչ Խրիմեանի պաշտօնակիցները չհամաձայնեցին այս առաջարկութեան, մինչև իսկ Ստ. Փափազեան և Մ. Չէրազ գանգատ գրեցին Կ. Պոլիս Խրիմեանի դէմ *)։

Չնայելով Նուպարի ծրագրին ցոյց տրուած այս ընդդիմութեան, հայ պատուիրակներն իրանք էլ համոզուած չէին, թէ իրանց ինքնավարութեան ծրագիրն ամբողջապէս պիտի ընդունուէր կոնգրէսից։ Նրանք մեծ յոյս ունէին, միայն «թէ ստանալու են գոնէ իրանց պահանջած իրաւունքների մի մասը»**)։ Բայց դժբախտաբար այս «մի մասն» էլ զլացուեց նրանց։

Նուպար փաշայի յիշատակագիրն իր պարզ և համոզիչ լեզուով ապացուցանում էր միայն Հայաստանում բարենորոգումների անհրաժեշտութիւնն և մատնանիշ էր անում բարեկարգութիւնների այն minimum-ն, որ անխուսափելիօրէն կարևոր էր, երկրի մէջ խաղաղութիւն և հայոց վիճակի մէջ բարեփոխում մուծանելու համար։ Նրա ծրագրին հաւանել էր նաև պարսկական դեսպան հայազգի Մելքոն խանն, որի հետ յաճախ տեսնվում էին հայ պատուիրակներն և որ նոյնպէս աշխատում էր, որ Նուպար փաշան Բեռլին գայ և աջակցի իր ծրագրի ընդունուելուն։ Բայց «հեղինակը, — գրում է «Temps»-ի վերոյիշեալ թղթակիցը, — թէև կամենում է պաշտպանել հայոց գործը, սակայն չէ ուզում անձամբ ասպարէզ դուրս

*) «Անահիտի» 1907 հոկտ.-նոյ.-դեկտ. համարում հրատարակուած են Ստ. Փափազեանի Բեռլինի յիշողութիւնները, որոնց մէջ մանրամասն խօսվում է նաև այս դէպքի մասին։

**) «Le Temps»-ի թղթակցութիւնը Բեռլինից 1878 յուլիս 2։ Ֆրանս. մեծ լրագրի այս թղթակիցը պ. Coutouly-ն էր, որ յետոյ Ֆրանս. մինիստր դարձաւ։

գալը*)։ Անշուշտ Նուպար փաշային անյայտ չէր այն հանգամանքը, որ Կ. Պօլսից Ներսէսի խումբը համակարծիք չէր նրան։ «Նուպարի ծրագիրն,—ասում է Մ. Ջէրազ, — այնպիսի մեծ չափաւորութեան կնիք էր կրում, որ այդ՝ մինչև անգամ ծայրայեղ երևաց Վարժապետեան սրբազանի և իր խորհրդականների համար»**)։

Նուպար փաշան իր այս ծրագիրն այն ժամանակ հրատարակեց անգլիական թերթերում և Բէռլինի կոնգրէսից յետոյ անձամբ Բիկընսֆիլդին էլ ներկայանալով հարկ եղած բացատրութիւնները տուաւ նրան այս մասին, որ հաւականաբար լրջօրէն ի նկատի է առնուած բրիտանական կառավարութեան կողմից, բայց նոյնիսկ Նուպարի ծրագրի իրականացումը Աբդիւլ-Համիդի և իր կառավարութեան խիստ ընդդիմութեանը բաղխեց։

---

*) «Le Temps», անդ։
**) «L'Arménie», 1892 № 46.

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ

Թիւրք կառավարութիւնն և Բէռլինի հայ պատուիրակութիւնը.— Բ. Դրան ձեռք առած «բարենորոգչական» միջոցները.—Օսմանեան լիազօրների ընդդիմութիւնը Բէռլինում.—Հայ պատուիրակները գերմ. կայսրուհու և Թագաժառանգի մօտ.—Հայոց ուղերձը Վիլհէլմ Ա. կայսրին.—Հայ պատուիրակների տեսակցութիւնն և յարաբերութիւնները կոնգրէսի ռուս, ֆրանս., անգլիական և այլ անդամների հետ.—Անգլիական քաղաքականութիւնն և հայկական հարցը.—Ռուսական քաղաքականութիւնը.—Կոնգրէսի նիստերը հայկական հարցի մասին.—Ոչ թէ ինքնավարութիւն, այլ միայն տեղական բարենորոգումներ.—Առաջարկուած զանազան բանաձևերը Սալիզբըրիի, Շուվալօվի, օսմանեան լիազօրների և հայ պատուիրակների կողմից. — Ինքնավարութեան անյաջողութեան պատճառները.—Բիսմարկի դերը.—61-րդ յօդուածը.—62-րդ յօդուածը.—Հայ պատուիրակների բողոքն և Բէռլինից մեկնումը.— Կոմս-Լօրիս Մէլիքօվի կարծիքը։

Անսալով շատերի կողմից տրուած խորհրդին՝ Ներսէս որոշել էր անձամբ գնալ Բէռլին և անձամբ պաշտպանել այնտեղ հայկական ինքնօրէնութեան նախագիծը։ Ուստի իր փոխանորդի, Մկրեան տէր-Յովհ. քահանայի ձեռքով թոյլտուութիւն խնդրեց կառավարութիւնից՝ նախ իր վատառողջութիւնը կազդուրելու և ապա հայկական նահանգները պաշտպանելու համար Եւրոպա ուղևորուել։ Սադրազամը քաղցրութեամբ, բայց շատ կտրուկ կերպով մերժեց նրա խնդիրքը. «Թող,—ասաց նա,—Խրիմեան, որ այս միջոցին Լօնդօն է, այնտեղից գնայ Բէռլին այդ նպատակի համար»։ Այն ժամանակ Մկրեան խնդրեց, որ կառավարութիւնն իր կողմից հրահանգ տայ օսմանեան լիազօրներին, որ Բէռլինում նրանք աջակցեն Խրիմեանին և Նար-Բէյին. և որովհետև պատրիարքին իրաւունք չէ տրվում անձամբ գնալ, իսկ նա պէտք է հեռագրական հրահանգներով ուղղութիւն տայ իր պատուիրակներին,

հետեւաբար անհրաժեշտ է, որ արտօնութիւն ունենայ ծածկագիր հեռագիր գործածելու նրանց հետ։ Սադրազամը գերադասեց ծածկագրի իրաւունք տալ, քան թէ թողնել, որ հայոց պատրիարքն անձամբ կոնգրէսին ներկայանայ...։ Ըստ այսմ, ուրիշ բան չէր մնում անել, եթէ ոչ օգտուել միայն վերջին արտօնութիւնից. և ծածկագիր հեռագրի բանալին Ստեփան Փափազեանի հետ ուղարկուեց Բէրլին։ Ինչպէս յայտնի է, այս եռանդուն երեսփոխանն ի սկզբանէ անտի մեծ փութով զբաղուած էր Հայաստանի հարստահարութիւնների վերաբերեալ խնդիրներով և ի մօտէ ծանօթ էր Ներսէս-Օտեան և աջակիցների ծրագրին։

Իսկ բուն ծածկագիրը յատկապէս պատրիարքարանի համար կազմել էր Խաչիկ Օտեան, Գրիգոր Օտեանի եղբայրն և Բ. Դրան ծածկագրութեան դիւանի պետն, որ թիւրք կառավարութեան յանձնարարութեամբ նոյնպէս մեկնեց Բէրլին, օսմանեան լիազօրների կարգադրութեան տակ գտնուելու համար։

Սադրազամի այս թոյլտուութիւնից էլ երևում է, որ թիւրք կառավարութիւնն ի սկզբան հակառակ չէր, որ հայերն իրանց պատուիրակների միջոցով 16-րդ յօդուածի խնդիրն յուզեն, քանի որ այդ յօդուածի զօրութեամբ, գոնէ լռելեայն, Հայաստանը մնում էր ռուսական գրաւման տակ մինչև բարենորոգումների ի կատար ածումն, որ թրքական տեսակէտով ձեռնտու չէր օսմանեան պետական շահերին։ Այնու ամենայնիւ թիւրք կառավարութեան համար անսպասելի էր, որ հայերն այս «տեղական բարենորոգումների» պահանջն այնչափ ընդարձակ իմաստով պիտի հասկանային, որ տեղական ինքնավարութիւն պիտի աշխատէին մտցնել լիբանանեան դրութեամբ։ Բայց միևնոյն ժամանակ հայ ժողովրդի կրած հարստահարութիւնների նկատմամբ թէ Եւրոպայում գտնուող հայ պատուիրակներն և թէ մանաւանդ եւրոպական թերթերն այն միջոցին

այնքան աղմուկ հանեցին, որ նոյն ինքն թիւրք կառավարութիւնն ևս անհրաժեշտ գտաւ մի քայլ անել իր կողմից թէ հայերի շարունակ կրկնուող պաշտօնական տրտունջներին վերջ դնելու և թէ մանաւանդ 16-րդ յօդուածի պատճառաբանութիւնն անզօր կացուցանելու համար։ Բացի դրանից՝ անգլիական կառավարութեան հետ նրա բանակցութիւնները Փոքր-Ասիայի մասին, որ յանգեց Կիպրոսի դաշնագրութեան, պարտաւորեցնում էին նրան այդ բանին։ Այս տեսակէտներով՝ կառավարութիւնը մի պաշտօնական յայտարարութիւն հանեց, որտեղ ասուած էր, թէ սուլթանի հրամանով զօրք պիտի ուղարկուի Կարին, Վան և Տիգրանակերտի կողմերն, «ուր քրդական ցեղերի կողմից տեղական բնակիչների վրայ բռնութիւն կատարուած լինելու մասին գանգատներ կան», և այն տեղերում «մշտական կատարեալ բարեկարգութիւն» պիտի մտցուի...։

Երբ հայ պատուիրակները Բէրլին եկան, նրանց հետ առաջին տեսնուողներից մէկն էլ տեղւոյն օսմանեան դեսպան Սաադուլլահ բէյն էր, որ սարսափած հայերի ինքնավարութեան պահանջից՝ նրանց առաջարկում է չափաւորել իրանց պահանջն և գոհանալ միայն կուսակալով. «Եթէ ձեզ համար բաւական է Հայաստանի վրայ հայ վալի նշանակուելը, կարող եմ անմիջապէս հեռագրել Բ. Դրան, որ նա ձեր այս փափագը կատարէ նախ քան Եւրոպայի միջամտելը»։ Դեսպանի այդ առաջարկին Նար-Բէյ պատասխանում է. «Բ. Դուռն այսօր կարող է մի հայ վալի կարգել և վաղը նրան արձակել. անհրաժեշտ է, որ Եւրոպան երաշխաւոր հանդիսանայ...»։ Հայ պատուիրակները չէին կարող այդպիսի ձրի խոստումներով բաւականանալ և շարունակեցին իրանց գործը՝ դիմելով Բէրլինում թէ գերմանական պաշտօնական շրջաններին և թէ կոնգրէսի անդամներին։ Երբ թիւրք լիազօրները համոզուեցին, թէ քաղաքական աշխարհն անտարբեր չէ հայոց

քողոքներին և եւրոպական լրագրներն սկսել են առհասարակ հետաքրքրուել այս խնդրով, աշխատեցին ճնշում գործ դնել պատուիրակների վրայ։ Թիւրք լրագրների կողմից Թաշիկ Օսեան յատկապէս եկաւ նըրանց հրաւիրելու օսմանեան դեսպանատուն, ուր նըրանց սպասում էին Կարաթոդորի (Ա. լիազօր) և Մէհմէդ Ալի (Բ. լիազօր) փաշաները։ Սրանք պահանջեցին, որ Խրիմեան և Նար-Բէյ բացատրեն, թէ ինչ են արել նրանք, ուր են գնացել, ում են դիմել և ինչ են նրանց պահանջները։ Երբ Խրիմեան պատասխանում է և ի մէջ այլոց պատմում է, թէ Սաադուլլահ բէյ խոստացել է հայ վալի նշանակել տալ, թէ Կարաթոդորի և թէ Մէհմէդ Ալի մերժում են, ասելով թէ Սաադուլլահն իր անձնական կարծիքն է միայն յայտնել և թէ Բ. Դուռն երբէք յանձն չի առնի այդ պայմանը գործադրել։ Այս ձևով շարունակելով՝ օսմանեան լիազօրները պահանջում են, որ հայ պատուիրակները դադարեցնեն իրանց տեսակցութիւններն օտարների հետ, մինչև որ Կարաթոդորին հեռագրէ Կ. Պոլիս և այնտեղից պատասխան առնէ։ Այս ճնշումը պատուիրակների վրայ ազդեցութիւն չէ անում, և նրանք պատասխանում են. «Բ. Դուռն այս միջոցին այնչափ զբաղած է, որ իր պատասխանը կարող է ուշացնել մինչև կօնգրէսի փակուելը։ Եթէ հայ պատուիրակներն այժմ իսկ եւրոպական պետութիւններին չդիմեն և հարկ եղած ձեռնարկները չանեն, անպատճառ և իրաւամբ կը դատապարտուեն իրանց հայրենակիցներից։ Վերջապէս նըրանք, ուղարկուած լինելով պատրիարքի կողմից, միայն Ներսէս սրբազանի հեռագրական հրամանով կարող են իրանց ձեռնարկութիւնից ետ կանգնել...»։

Երբ օսմ. լիազօրները տեսան, թէ պիտի չկարողանան համոզել Խրիմեանին և Նար-Բէյին իրանց սկսած գործը կիսատ թողնելու, նրանք հեռագրեցին Կ. Պոլիս, թէ հայկական խնդիրը կարևորութիւն է ստա-

նում, ուստի ինչ բարեկարգութիւն որ Բ. Դուռը պատրաստվում էր մտցնել հայաբնակ գաւառներում պէտք էր շուտով սկսէր իրագործելու։ Միևնոյն ժամանակ Կարաթոդորին աւելացնում էր իր հեռագրում, թէ կառավարութիւնը ստիպէ Ներսէս պատրիարքին, որ սա ետ կանչէ իր պատուիրակներին։ Բ. Դուռն այս հեռագիրն ստանալով հետևում է նրա խորհրդին և անմիջապէս գործի ձեռնարկել ձևացնելով պաշտօնական հրամանագիր է ուղարկում պատրիարքարան, թէ կառավարութեան կողմից Ալի Շէֆիկ բէյը լիազօր վերաքննիչ է նշանակուած Հայաստանում կատարուած հարստահարութիւնները քննելու և յանցաւորներին պատժելու համար, ուստի առաջարկում է, որ պատրիարքարանն էլ իր կողմից մի հայ օգնական նշանակէ վերաքննիչին։ Իսկոյն Ներսէս՝ Ազգ. Վարչութեան Խառն Ժողովն է գումարում, որտեղ որոշվում է, թէ կառավարութեան այս առաջարկութիւնը ներկայ տարօղ հանգամանքներում չէ կարող ընդունուել, և ըստ այնմ էլ պատասխան է գրվում, թէ եթէ օսմանեան կառավարութիւնը բարեկարգութիւններ ունի անելիք և յանցաւորներ ունի պատժելիք, ազատ է գործելու ինչպէս կամենայ. պատրիարքարանը չի միջամտում դրա մէջ և ոչ ոքին էլ չի կարող յանձնարարել իբրև օգնական... Որքան փոխուել էին հանգամանքները։ Հազիւ մի տարի յառաջ Բ. Դրան կողմից այդպիսի մի պատրաստակամութիւն մեծ ուրախութիւն և քաջալերութիւն պիտի պատճառէր հայոց, թէև դարձեալ առանց մեծ հաւատ ընծայելու ոչ նրա անկեղծութեանն և ոչ էլ նրա քննիչ լիազօրի արդարադատութեանն և գոհացուցիչ գործունէութեանը։ Իսկ այժմ պատրիարքարանի ուղղած պատասխանը պարզ կերպով հասկացնում էր Բ. Դրան, թէ անցած են այլ ևս այդ ժամանակները. հայերն այլևս վստահութիւն չունեն նրա խոստումներին, որոնց աղբիւրն և շարժառիթները

յայտնի էին իրանց, և թէ հայերն իրանց վիճակի բարւոքումն այժմ դրսից էին սպասում։

Երբ սուլթան Համիդ տեղեկանում է, թէ իր «հաւատարիմ հպատակներն» եւ ընդարձակ յիշատակագիր են ներկայացրել եւրոպական բոլոր մեծ տէրութիւններին և «հայկական ինքնօրինութիւն» են պահանջում, սաստիկ զայրացած՝ անմիջապէս հրամայում է, որ պատրիարքն իր պատուիրակներին ետ կանչէ։ Հայ բարձր պաշտօնեայ Ապրօ էֆէնդին գալիս է այս հրամանը հաղորդելու Ներսէսին և նրան համոզելու, որ սուլթանի պատուէրը կատարէ։ «Այս պատգամաւորները Ազգը ղրկեց և միայն Ազգ. Երեսփ. Ժողովը կարող է հրամայել նոցա վերադարձը։ Եթէ նոքա վերադառնան, հարկաւոր կը լինի, որ ես երթամ» պատասխանում է Ներսէս*)։ Այն ժամանակ Թիւրք կառավարութիւնը հրահանգ է ուղարկում իր լիազօրներին ամեն ջանք գործ դնել, որ հայոց ծրագիրը մերժուի կօնգրէսից։

Այս միջոցին Ներսէս արդէն տեղեկութիւն էր ստացել, թէ կօնգրէսի նախագահն ընդունել էր հայկական յիշատակագիրն, որ յոյս կար, թէ պիտի ներկայացուէր կօնգրէսի հայեցողութեանը Սան Ստէֆանօյի դաշնագրի 16-դ յօդուածի քննութեան ժամանակ։ Եւ նա աճապարեց անգլիական և ֆրանս. դեսպանների մօտ՝ նրանց միջնորդութիւնը խնդրելով և յիշատակագրի մասին նորից բացատրութիւններ տալով նրանց։ Անգլիական դեսպանն ըստ այնմ հեռագրեց Բէրլին լօրդ Սալիզբըրիին, թէ հայերը չեն ուզում օտար իշխանութեան տակ մտնել (ակնարկութիւն Հայաստանի գրաւման Ռուսաստանի կողմից). նրանք գոհ են սուլթանի հպատակ մնալով, միայն թէ նկատողութիւն են անում, որ հայաբնակ նահանգների վարչական նոր

*) «Մշակ». 1878 յունիս 29. Թղթ. Կ. Պոլսից։

կազմակերպութիւնն երևակայական բան կը դառնայ, եթէ հայ պաշտօնեաների ձեռքով չգործադրուի։

Երբ մի կողմից այս բանակցութիւններն էին կատարվում, միւս կողմից՝ հայ պատուիրակները Բէրլինում, ինչպէս վերև յիշեցինք, դիմումներ և այցելութիւններ էին անում պաշտօնական և դիւանագիտական շրջաններին։ Յունիս 10/22-ին նրանք ունկնդրութեան ընդունուեցին գերմ. Թագաժառանգ Ֆրիդրիխ իշխանից, որ շատ սիրալիր վերաբերմունք ունեցաւ, ինչպէս առաջին անգամ, Լօնդօնում, մանաւանդ որ հայերն էլ մի դժբախտ դէպքի առթիւ քաղաքավարական և համակրական անկեղծ ցոյց էին արել գերմանական կայսերական տան հանդէպ։ Մի ոճրագործ, դոկտ. Նէօբիլինգ, սպանութեան փորձ էր արել Վիլհէլմ Ա. կայսեր կեանքի դէմ. կայսրը թեթև վէրք միայն ստանալով ազատուել էր մահից, բայց դեռ պառկած էր անկողնում։ Հայ պատուիրակներն իրանց մեծարանքն արտայայտելու համար ամեն առաւօտ գնում էին պալատ՝ կայսեր առողջական վիճակի մասին տեղեկանալու և ստորագրում էին այցելուներին յատկացուած մատեանում։ Պալատում բնականաբար առանձին ուշադրութիւն էին դարձրել այս ամենօրեայ այցելութեան վրայ, իբրև ակնածանքի և համակրութեան մեծ ցոյց, և հիւանդ կայսեր եւս յայտնել էին այս մասին։ Երբ հայ պատուիրակութիւնը ներկայացաւ Թագաժառանգին, Խրիմեան վերստին ջերմ խօսքերով նախ իր խնդակցութիւնը յայտնեց կայսեր բարեյաջող ազատման առթիւ և սրտագին բարեմաղթութիւններ արաւ նրա կեանքի երկարութեան համար։ Իշխանը պատասխանեց. «Քիչ յառաջ ես հօրս, կայսեր, սենեակն էի, որ գիտէ, թէ ես այս րոպէիս ընդունում եմ հայկական պատուիրակութիւնը։ Նա ինձ յանձնարարեց, որ իր շնորհակալութիւնները յայտնեմ Ձեզ՝ Ձեր այնչափ յաճախ ցոյց տուած համակրանքի համար։ Ես արդէն հա-

գործեցի թէ կայսեր և թէ իշխան Բիսմարկին՝ Երուսաղէմի պատրիարքի կողմից Ձեր ինձ յանձնած նամակի բովանդակութիւնն, որ անշուշտ հայկական խնդրի ուշադրութեան առնուելուն պիտի ծառայէ։ Շատ ժամանակ չէ, որ կոնգրէսն իր աշխատութիւններն սկսած է, և մենք չգիտենք, թէ պիտի կարողանանք Ձեր իղձերն իրականացնել. բայց Դուք կարող էք վստահ լինել, թէ մեր կառավարութիւնը համակիր է արևելեան քրիստոնեաներին»։ Պատուիրակներն իրանց խորին շնորհակալութիւնները յայտնելուց յետոյ գահաժառանգին յանձնել են Վիլհէլմ Ա. կայսեր ուղղուած հետևեալ ուղերձը.

«Տէր Արքայ։ Այն ժամանակ, երբ Ձեր Վեհափառութեան հզօր ձայնը միութեան և խաղաղութեան էր հրաւիրում ամբողջ Եւրոպան, մենք սոսկումով լցուեցինք, լսելով թէ մի սրբապիղծ ձեռք յանդգնել էր բարձրանալ Ձեր օգոստափառ գլխի վրայ...։ Մենք, հայ պատուիրակներս, հաւատացած ենք, թէ աստուածային ձեռքն էր, որ հրաշքով պահպանեց Ձեր կեանքն, և յանուն Հայաստանի մատուցանում ենք առ ոտս Ձեր Վեհափառութեան Արևելքի մի հին ժողովրդի բարեմաղթութիւնները...։ Երկինքն անկասկած պիտի լսէ մեր աղօթքը։ Մենք համոզուած ենք, թէ Ձեր Վեհափառութեան փառաւոր հովանու տակ է, որ պիտի կատարուի Արևելքի խաղաղացման գործն և Հայաստանն, ուրիշ այնչափ քրիստոնեայ երկիրների հետ միասին, պիտի գտնէ ազգային այն ազատ զարգացումն, որ Եւրոպայի քաղաքականութիւնն և մարդասիրութիւնն ուզում է շնորհել Արևելքի բոլոր ժողովուրդներին...»։

Այս ջերմ ընդունելութեան առթիւ ջերմ կերպով խօսեցաւ յօգուտ հայերի՝ գերմ. կիսապաշտօնական մեծ լրագիրը, «Nord Deutsche Allg. Zeitung», որ ասում էր. «Հայերի պահանջները նրանով են տարբերվում սլաւների և հելլէնների պահանջներից, որ

նրանք քաղաքական նկարագիր չունեն, այլ վարչական։ Հայերը յարգում են Թիւրք ազգի լաւ կողմերը, և այդ պատճառով էլ չեն ուզում Թիւրքիայից բաժանուել...։ Հայերի այս պահանջները չափաւոր են և իրաւացի»։

Մի քանի օր յետոյ Թագաժառանգ իշխանը հայ արքեպիսկոպոսների մեծագիր լուսանկարներն էր ուզել իրանց ստորագրութիւններով, և Ջէրազ տարաւ տուեց։ Եւ երբ նա, Թագաժառանգը, բոլոր արևելեան ցեղերի պատուիրակներին, այն է՝ ռումինացիներին, սերբերին, յոյներին, սև-լեռնցիներին և հայերին հանդիսաւոր ճաշի էր հրաւիրել Պօցդամում, այնտեղ նա Խրիմեանից խնդրեց, որ հայկական բոլոր պաշտօնական թղթերի մի-մի պատճէնն իրան էլ ուղարկէ, որ ինքն էլ ուսումնասիրէ խնդիրն անձամբ։ Նրա այս փափագին հարկաւ անմիջապէս գոհացում է տրվում, և հաւանական է, որ նա նպաստաւոր կերպով յանձնարարած լինի Բիսմարկին հայկական դատը։

Այնուհետև նոյն ինքն գերմանական կայսրուհին է մեր պատուիրակներին տեսակցութեան հրաւիրում։ Խրիմեան, Նարբէյ և Ջէրազ շտապում են ներկայանալ իրանց շնորհուած այս ունկնդրութեան։ Ահա ինչպէս է պատմում Ջէրազ այս այցելութիւնը։ «Մեզ ընդունեցին,—ասում է նա,—մի դահլիճում, ուր քիչ յետոյ մտաւ ինքն Աւգուստա կայսրուհին, սևազգեստ և մի dame de compagnie-ի ընկերակցութեամբ։ Նա մեր երեքիս էլ ձեռները սեղմեց և սիրալիր կերպով հրաւիրեց, որ իր բազմոցի դիմացը բազկաթոռների վրայ նստենք»։ Խօսում են նախ Երուսաղէմի հայոց վանքի մասին, յետոյ խօսակցութեան առարկայ են դառնում Էջմիածինն և Վենետիկի Մխիթարեան վանքը. յետոյ, երբ խօսքը բնականաբար գալիս է Թրքահայերի հարստահարութիւններին, կայսրուհին ասում է. «Ես խորապէս ցաւում եմ Թիւրքիայի դժբախտ քրիստոնեա-

ների կրած տառապանքների համար. մի բան ինձ մխիթարութիւն է պատճառում, թէ ներկայ կոնգրէսը վերջ պիտի տայ այս չարիքին։ Մի վհատիք, մանաւանդ որ մեր բարեկամութեան և համակրութեան վրայ կարող էք վստահ լինել։ Երբ կայսեր մօտից դուրս ելայ, Ձեզ այստեղ ընդունելու համար, նա ինձ յանձնարարեց, որ հայ պատուիրակութեան յայտնեմ իր անկեղծ շնորհակալութիւններն՝ իր հիւանդութեանն առթիւ ցոյց տուած համակրանքին համար, ինչպէս և այն բարեմաղթութիւնների առթիւ, որ արել էք, յանուն հայ ազգի և եկեղեցւոյ։ Նա յանձնարարած է ինձ, որ Ձեզ ասեմ նաև, թէ ինքն անձամբ կընդունէր Ձեզ, եթէ անկողնում հիւանդ պառկած չլինէր»*)։

Մօտեցան վերջապէս այն օրերն, երբ հայկական ինքնօրինութեան լինել կամ չլինելու հարցը պիտի վճռուէր։ Մեր պատուիրակները տենդային գործունէութիւն էին ցոյց տալիս իրանց ուսերի վրայ դրուած ծանր և պատասխանատու պաշտօնն ըստ կարելոյն լաւագոյն կերպով ի կատար ածելու համար։ Նրանք բաղխեցին կօնգրէսի բոլոր անդամների, և ի մասնաւորի անգլիական, ֆրանսիական և ռուսական լիազօրների դռները. Նրանք տեսակցութիւն ունեցան եւրոպական մեծ լրագիրների թղթակիցների հետ, աշխատեցին ազդել նրանց վրայ իրանց պահանջների արդարութեան վրայ յենուելով և իրանց թղթերի պատճէնները տալով նրանց ի հրատարակութիւն։

Ֆրանսիական Ա. լիազօրն՝ Ուադինգտօն, որ խոստացել էր նախաձեռնող լինել և հայկական հարցը կօնգրէսին ներկայացնել, անկեղծօրէն աշխատում էր օգտակար լինել։ Նա էր, որ խորհուրդ տուեց պատուիրակներին թէ երբ, որոնց և ինչ ձևով իրանց յիշատակագիրներն և այլ պաշտօնական թղթերը պէտք են

*) «L'Arménie», 1893 № 53.

ներկայացնել. Նա էր, որ իմաց տուեց մեր պատուիրակներին, թէ ինչ դրութեան մէջ են գտնվում կօնգրէսում հայկական դատի վերաբերեալ թղթերը. Նրա խորհրդով են պատուիրակները մի նոր աղերսագիր մատուցանում նախագահ Բիսմարկին, որ սա հայկական խնդիրը կօնգրէսի օրակարգն անցընէ եայլն։ Բայց քաղաքագէտ Ֆրանսիացին միևնոյն ժամանակ հարկ է համարում կանխապէս նախազգուշացնել պատուիրակներին, որ մեծ յոյսեր չունենան, որովհետև, ասում է նա, «թէպէտ ես Ձեր դատը պաշտպանում եմ, բայց չեմ կարող իմ ընկերակիցներին ստիպել, որ նրանք անպատճառ իմ առաջարկութիւններն ընդունեն»։

Հայ պատուիրակները գիտէին արդէն, որ կօնգրէսում Հայաստանի նկատմամբ վճռական ձայնը պատկանում էր անգլիական և ռուսական լիազօրներին, մանաւանդ առաջիններին։

Ներսէս և իր խորհրդականները Կ. Պօլսում, նըրանց հետևելով էլ պատուիրակները Բէռլինում, մանաւանդ Խրիմեան, անգլիական քաղաքականութիւնն էին ընդգրկել իբրև փրկութեան խարիսխ, այն պարզ պատճառով, որ այն միջոցին պետութիւնների մէջ ամենից հզօրն և յատկապէս Թիւրքիայի վերաբերեալ ամենից ազդեցիկը Մեծն Բրիտանիան էր, որ առանց մի կաթիլ արիւն թափելու յաղթական Ռուսաստանին ստիպել էր իր յաղթութեան ամբողջ արդիւնքն ենթարկել եւրոպական դատարանի քննութեանն և այս միջոցով նրանից ետ էր խլում նրա յաղթութեան պտուղների գէթ մի մասը։ Բացի դրանից՝ հայերի համար մեծ յոյսի և խրախուսանքի առիթ էր այն հանգամանքն, որ Անգլիայում թէ մամուլն և թէ շատ քաղաքական անձեր հրապարակով քաջալերում էին նրանց։ Սակայն պաշտօնական Անգլիան, նրա պատասխանատու ներկայացուցիչները, միշտ զգուշանում էին որոշ կերպով խոստումներ անելուց. Նրանք երբէք չեն տուել

Թէ մինչև ծր սահմաններն է հասնում իրանց համակրութիւնը հայկական դատին, այլ միայն ընդհանուր բառերով կրկնում էին, թէ իրանք պահանջում են լուրջ բարենորոգումներ յօգուտ քրիստոնեայ հպատակների։ Անգլիական քաղաքականութեան այս դիրքն ամենից լաւ երևում է լորդ Բիկօնսֆիլդի խուսափողական պատասխանից։ Ահա թէ ինչ էր գրում յանուն Բիկօնսֆիլդի՝ նրա քարտուղար Austen Lee՝ Երիմեան արքեպիսկոպոսին. «Թիւրքիայի քրիստոնեայ բնակիչների վիճակը միշտ գրաւել է Թագուհու Կառավարութեան լուրջ ուշադրութիւնն, և Ն. Վեհափառութեան լիազօրները պիտի չպակսեցնեն այս նպատակի համար իրանց մինչև հիմայ կատարած ջանքերը»։ Նոյն Բիկօնսֆիլդն, որ չէր ուզեցել հայ պատուիրակներին ունկնդրութիւն շնորհել*), երբ վերջապէս Պարսկաստանի լիազօր Մելքոմ խանի միջնորդութեամբ համաձայնում է նրանց հետ տեսակցել, պայման է դնում, որ քաղաքականութեան վրայ չխօսեն, և ինքն ազնիւ լորդն ուրիշ բան չէ գտնում նրանց ասելու, եթէ ոչ այն, թէ «հայ արքեպիսկոպոսների հագուստը շատ նման է Աթոս լեռան կրօնաւորների՝ ուսման և միայնակեցութեան այս բարեկամների՝ զգեստին»....։ Այս ամենն ստիպում է մի օր Չերազին ուղղակի Բիկօնսֆիլդի քարտուղարին ասելու, թէ «եթէ Ձեր լիազօրները կօնգրէսում մեր հարցը չպաշտպանեն, դրանով նրանք իրանց ձեռքով հայերին ռուսաց գիրկը պիտի նետեն»։

*) Թէ Լօնդօնում եղած ժամանակ և թէ Բէրլինում՝ ոչ մի հնար չեղաւ Բիկօնսֆիլդի հետ հայկական խնդրի մասին խօսելու։ Կ. Պօլսից յանձնարարել էին, որ անպատճառ պատուիրակներն աշխատեն նրա հետ տեսնուել. որանք էլ նամակ են գրում, ունկնդրութիւն են խնդրում, բայց նա իր քարտուղարի միջոցով յայտնում է, թէ ժամանակ չունի ընդունելու, և խնդրում է, որ իրանց ասելիքները գրով յայտնեն։ (Ստ. Փափազեանի Յուշատետրը. «Անահիտ», 1907, էջ 163).

Այնուհետև է, որ պատուիրակներն առանձին եռանդով դիմում են ռուսական քաղաքագէտներին, բայց այստեղ էլ նրանք չեն գտնում իրանց սպասած աջակցութիւնը։

Մեր պատուիրակների ռուսաց հետ առաջին հանդիպումը լինում է ֆրանսիական դեսպանատան երեկոյթին, ուր նրանք ծանօթանում են ռուսական դեսպանատան ուրիշ պաշտօնեաների հետ, որոնք իրանց համակրութիւնն են յայտնում հայկական դատին։ Բայց նրանցից մինը, դեսպանատան խորհրդականը, մօտենում և խօսում է նրանց հետ, փորձելու համար թէ հակառուս տրամադրութիւն ունեն նրանք։ Պատուիրակները նախ այցելում են պաշտօնապէս ռուսական դեսպանին, որ միևնոյն ժամանակ կօնգրէսում 3-րդ լիազօր էր. բայց սա շատ քիչ էր ծանօթ հայկական խնդրին։ Ռուսաստանի կողմից գլխաւոր և կենտրոնական դէմքը կօնգրէսում՝ 2-րդ լիազօր կոմս Շուվալօֆն էր, որին պատահում են աւստրիական դեսպանի երեկոյթին, և որ խոստանում է նրանց հետ կարծիքի փոխանակութիւն ունենալ հայկական խնդրի մասին, երբ կօնգրէսը կը վերջացնէ Եւրոպական Թիւրքիայի վերաբերեալ հարցերն և կանցնի Ասիականին։ Իսկ ռուսական Ա. լիազօրի հետ պատուիրակները տեսնվում են յունիսի 24-ին (յուլիսի 6-ին), այն է կօնգրէսում 16-րդ յօդուածի քննութիւնն սկսելու երրորդ օրը։ Ահա ինչպէս է պատմում Մ. Չէրազ իրանց այս տեսակցութիւնը իշխան Գորչակօվի հետ։

«Ռուսաստանի Ա. լիազօրն... շատ սիրալիր կերպով մեզ ընդունեց...։ Փութացինք շնորհակալութիւն յայտնել իր բարեհաճ ընդունելութեան և միանգամայն Սան-Ստեֆանոյի 16-դ յօդուածի առաջադրման համար։ Աւելացրինք, թէ այն վաւերագրերն, որ հաղորդել էինք Ռուսաստանի, ինչպէս և միւս պետութիւնների լիազօրներին, ուրիշ նպատակ չունէին՝ եթէ ոչ բացատրել և

ընդլայնել այդ յօդուածի տրամադրութիւններն, և յոյս յայտնեցինք, թէ ռուսական լիազօրները սրանց կը պաշտպանեն վարչական ինքնավարութեան մասին մեր պահանջները»։

«Իշխ. Գորչակով մեզ պատասխանեց, թէ 16-րդ յօդուածը կօնգրէսի մէջ դեռ չէ քննուած. նա կարդաց յօդուածն և այսպէս շարունակեց իր խօսքը. «Ձեր պահանջների մէջ՝ այնպիսիներն, որոնք այս յօդուածի պարունակութեան հետ կապ ունեն, ապահովապէս իմ կողմից յատկապէս պիտի պաշտպանուեն։ Բայց դուք մի շարք պահանջներ էք բանաձևել, ինչպէս վարչական ինքնավարութիւն և այլն, որոնք իմ ստացած հրահանգներից դուրս են, և ես չեմ կարող խոստանալ, թէ կը պաշտպանեմ։ Գիտէք արդէն, թէ ես մենակ չեմ կօնգրէսում. ինձանից զատ 6 կամ 9 հոգի կայ, որոնցից ոմանք գուցէ Ձեզ դէմ խօսեն։ Յամենայն դէպս հայերը կարող են յոյս դնել Ռուսաստանի համակրութեանը վրայ»։

«Լուսինեան արքեպիսկոպոս, որին իշխանը «հին ծանօթ» անուանեց, ճարտասանօրէն բացատրեց, թէ անհրաժեշտ էր կօնգրէսին ընդունել տալ պատրիարքարանի պատրաստած Կազմական Կանոնագիրը (Reglement Organique)»։

«—Հայերն ինձ դիմեցին այնպէս, ինչպէս դիմել են միւս լիազօրներին,—պատասխանեց ծերունի դիւանագէտը։—Ես փրազների մարդ չեմ, չեմ ուզում Ձեզ խաբած լինել (Je ne veux pas Vous jeter do l'eau bénite de cour), ուստի խոստանում եմ միայն այն, ինչ որ կարող եմ անել»։

Եւ երբ Նար-Բէյ նրան նկատում է, թէ որովհետև Ռուսաստանն իր արիւնն էր թափել քրիստոնեաների ազատութեան համար, հետևաբար կօնգրէսում աւելի հեղինակաւոր կերպով կարող էր պնդել քրիստոնեայ Հայաստանի օգտին, քան միւս պետու-

թիւնները, Գորչակով պատասխանում է դառնութեամբ.

«—Միւս պետութիւնները մեզ մեղադրում են, թէ մենք ոճիր ենք գործել, որ մեր արիւնն ենք թափել և մեր փողը ծախսել։ Մենք միայն սլաւների համար չէ, որ աշխատում ենք, այլ բոլոր քրիստոնեաների համար...»։

Գորչակովի այս խօսքերին իբրև բացատրութիւն կամ իբրև լրացումն յառաջ բերենք այստեղ այն վիճաբանութիւնն, որ տեղի էր ունեցել կօնգրէսում քրիստոնեաների ազատագրման նկատմամբ։ Կօնգրէսի առաջին նիստում, Գորչակով ասում է. «Ալէքսանդր կայսեր նպատակն է Բարձր. Դրան հպատակ քրիստոնեայ ժողովուրդներին տալ ինքնավար գոյութիւն, իրական երաշխաւորութիւններով ապահովուած։ Ըստ Նորին Մեծութեան՝ իր այս նպատակը համաձայն է բոլոր եւրոպական շահերին։ Եթէ այս արդիւնքը ձեռք բերելու համար կօնգրէսը գտնէ տարբեր միջոցներ, քան Ռուսաստանի առաջարկածները, կայսերական կառավարութիւնը պատրաստ է քննել դրանք»։ Իսկ Թ. նիստում իր միտքն աւելի պարզելով Գորչակով ասում է. «Ցանկանում եմ, որ կօնգրէսը Ռուսաստանի ներկայացուցիչներին ոչ թէ իբրև միայն և բացառապէս սլաւների շահերին նուիրուած, այլ Թիւրքիոյ բոլոր քրիստոնեայ ժողովուրդների վիճակովը շահագրգռուած նկատէ»։

Եւ իրօք, ռուսական լիազօրներն այս հայեացքն յառաջ մղեցին ամբողջ ժամանակ, Բիկօնսֆիլդի և Սալիսբըրիի հակառակ, որոնք ամեն պարագաների մէջ պաշտպանում էին Թիւրքիայի պետական շահերն և հակառակում թրքական լծից ազատուել ձգտող քրիստոնեայ ցեղերին առանձնաշնորհումներ յատկացնելուն։ Անգլիական լիազօրների ձգտումն այն էր այն ժամանակ, որ «սուլթանի գերիշխանութիւնն աւելի մեծ չափով պահպանուի», կամ ինչպէս լօրդ Բիկօնսֆիլդ գրում

էր՝ «սուլթանը տէր լինի իր երկրում»։ Նրանք ամբողջ ժամանակ աշխատում են Ռուսաստանի՝ Արևելքում և յատկապէս Կ. Պոլսում ունեցած հեղինակութիւնն, որքան հնարաւոր է, նուազեցնել, որպէսզի նա այլ ևս այնտեղ գերակշռող դիրք չունենայ։ Անգլիական լիազօրների այս ձգտման պատասխանելով Գորչակով Է. նիստում փափագ է յայտնում, որ Արևելքում ոչ մի գերիշխանութիւն չգտնուի, ոչ Ռուսաստանինը և ոչ որ և է այլ պետութեանն, և թէ Կ. Պոլսի յեղյեղուկ հողի վրայ փոխանակ ինքնասիրութիւնների վատառողջ պայքարին՝ ընդհանրական պետութիւնների հաւաքական գործունէութիւնն երևան գայ, որով Բ. Դրան մի շարք ցնորքների և սխալների առաջը պիտի առնուէր»։

Ահա ինչպէս էր պաշտպանուած քրիստոնեաների ազատագրութեան հարցը կոնգրէսում՝ երկու մեծ մրցողների կողմից։

Այժմ տեսնենք, թէ ինչ վիճաբանութիւն է տեղի ունենում կոնգրէսում յատկապէս հայկական խնդրի մասին, այնպէս՝ ինչպէս արձանագրուած է կոնգրէսի պաշտօնական պրոտոկոլներում (protocole)։

Առաջին անգամ յուլիսի 4-ին (ն. տ.) է խօսվում հայոց մասին։ Կոնգրէսի ԺԲ. նիստի վերջում «լօրդ Սալիզբըրին առաջարկում է զբաղուել Սան-Ստէֆանօյի դաշնագրի 16-դ յօդուածով, որ վերաբերում է Հայաստանին։ Նորին վսեմութիւնը պատրաստ է ընդունել այդ յօդուածի վերջին երեք տողերն, որոնք ակնարկում են հայոց շնորհուելիք բարեփոխումներին և բարենորոգումներին, եթէ կոնգրէսը համաձայնի ջնջել առաջին 3 տողերն, ըստ որոնց կարծես թէ ռուսական զօրքի հեռանալը կախուած է Բ. Դրան այս բարենորոգումները մտցնելուց։ Այլապէս լօրդ Սալիզբըրի մի ուրիշ նիստում յատկապէս հայոց համար պատրաստուած մի յօդուած պիտի առաջարկէ։»

«Կոմս Շուվալօվ առանց պնդելու, որ վիճաբանու-

թեան ենթարկուի այս հարցն, որի համար այս րօպէիս նա պատրաստ չէ, վախ է յայտնում սակայն, որ ռուսական զօրքի այնտեղից ետ քաշուելը նախ քան բարենորոգումների ներմուծումը՝ կարող է լուրջ անկարգութիւնների ծագման առիթ տալ»։

Այս նիստից 2 օր յետոյ, ռուսական և անգլիական լիազօրներն իրանց մէջ մասնաւոր և երկար խօսակցութիւն ունեցան, որտեղ անգլիացիք շատ պնդեցին, թէ Ռուսաստանը, Կարսն և Արդահանն ետ դարձնէ Թիւրքիային, բայց Ռուսաստանը բացարձակապէս մերժեց, և նրանց երկար բանակցութեան արդիւնքն այն եղաւ, որ Անգլիան յաջողեցաւ Բաեազիտն ու Ալաշկերտի հովիտն ետ խլել Ռուսաստանից և դրանով էլ գոհացաւ։ Եւ երբ այս մասնաւոր բանակցութիւնից յետոյ, ԺԴ. նիստում, լօրդ Սալիզբըրին հարցնում է, թէ Ռուսաստանը պնդո՞ւմ է արդեօք իր մտադրութեան վրայ, թէ Կարսն և Արդահանը պիտի չզիջէ, Գորչակով պաշտօնապէս պատասխանում է, թէ Ռուսաստանն որոշած է Կարսն և Արդահանն իր իշխանութեան տակ պահել, Բաթումն ազատ նաւահանգստի վերածել, իսկ Բաեազիտն, Ալաշկերտի հովիտն և Էրզրումը վերադարձնել Թիւրքիային։ Այս կտրական յայտարարութեան վրայ լօրդ Սալիզբըրին էլ պաշտօնապէս յայտնում է, թէ այս պարագայում Անգլիան էլ իրան վերապահում է իրաւունք՝ «իր շահերն և այնտեղի ազգաբնակութեան վրայ իր ազդեցութիւնը պաշտպանել այն միջոցներով, որ ինքն յարմար կը դատէ»։ Եւ այս կերպով ռուսական և անգլիական լիազօրներն իրար մէջ, փոխադարձ զիջումներից յետոյ, համաձայնութիւն կայացրին, թէ Հայաստանի ո՞ր մասերը վերջնականապէս պիտի դադրեն թրքական հող լինելուց և պիտի կցուեն Կովկասին։ Նրանք իրանց մասնաւոր խորհրդակցութեան մէջ քննեցին նաև հայոց վերաբերեալ յօդուածը, բայց վերջնական համաձայնու-

թեան չեկան։ Իսկ Սալիսբրի հետեւեալ բանաձեն էր կազմել, որ պիտի փոխարինէր 16-րդ յօդուածը.

«Բ. Դուռը պարտաւորւում է հայերի բնակած նահանգներում անյապաղ իրականացնել տեղական պէտքերի պահանջած բարւոքումներն և բարենորոգումներն, և երաշխաւորել նրանց ապահովութիւնը քիւրդերի և չէրքէզների դէմ։ Նա (Բ. Դուռը) յետոյ պիտի, համաձայնի (Բերլինի) դաշնագիրն ստորագրող միւս պետութիւնների հետ իր այս պարտաւորութեան չափի եւ նրա գործադրութեանը համար հարկ եղած միջոցների մասին»։

Այս բանաձևից միայն մեր ստորագծած բառերն են նոր, և աւելացուած են 16-րդ յօդ. վրայ, կրճատելով սրա ամբողջ առաջին, պատճառաբանական մասը, մինչև «պիտի ձեռնարկէին» բառերը (տես Գլ. Բ.)։ Սալիսբրին իր այս բանաձեը կանխաւ ցրուել էր կօնգրէսի միւս անդամներին, որ նրանք էլ ծանօթանան և իրանց կարծիքը յայտնեն հետեւեալ նիստում։

ԺԴ. նիստում քննութեան է առնվում վերոյիշեալ բանաձևն. ահա ինչպէս է արձանագրուած այս քննութիւնը պաշտօնական պրօտօկօլում։ Բանաձեը կարդացւելուց յետոյ՝

«Նորին Վսեմութիւնը (լօրդ Սալիսբրի) յայտում է, թէ հայոց շահերը պէտք է որ պաշտպանուեն և իր առաջարկութեան նպատակն է՝ յոյսեր տալ նրանց (հայերին) թէ անմիջական բարւոքումների կատարման եւ թէ միանգամայն այս բարւոքումների՝ ապագայում աւելի ընդարձակման մասին»։

«Կարաթէօդորի փաշան (Թրք. Ա. լիազօրն) ընդունում է, որ վերջին պատերազմի ժամանակ ըմբոստ ցեղերը լուրջ անկարգութիւններ յառաջ բերին, բայց երբ Բ. Դուռը տեղեկացաւ, անմիջապէս միջոցների դիմեց դրանց վերջ տալու համար։ Լօրդ Սալիսբրիի առաջարկութիւնն ըստ երեւոյթին ի նկատի ունի ապագայում ձեռք առնուելիք նոր միջոցներ։ Կարաթէօդորի փա-

շա կը բաղձար, որ ի նկատի առնուէին այն կարգադրութիւնները, որ Բ. Դուռն արդէն արել էր այս մասին, և աւելացուէին հետեւեալ բառերը. ««Դուռը պիտի հաղորդէ պետութիւններին այն միջոցների արդիւնքն, որոնք այս մասին արդէն ձեռք են առնուած»։ Այս յաւելումը, ասում է նա, թէ գոհացում պիտի տար օսմանեան կառավարութեան և թէ պիտի լրացնէր անգլիական լիազօրների ներկայացրած բանաձեի իմաստը»։

«Կոմս Շուվալօվ գերադասում է լօրդ Սալիսբրիի խմբագրած բանաձեը։ Եթէ Բ. Դուռը միջոցներ է որոշել և այդ միջոցները չեն գործադրուել, անօգուտ է դրանց յիշատակելը»։

«Նախագահը (Բիսմարկ) նկատում է, թէ դուցէ դժուար լինի զսպողական միջոցներ գործ դնել անկախ ցեղերի դէմ, և կասկած է յայտնում Սալիսբրիի առաջարկած բանաձեի գործնական ոյժի մասին»։

«Որովհետև Կարաթէօդորի փաշան պնդում է իր առաջարկած յաւելման վրայ, լօրդ Սալիսբրի խնդրում է վիճաբանութիւնը յետաձգել, որպէսզի ինք ժամանակ ունենայ մի քանի փոփոխութիւններ մտցնել նախնական բնագրում»։

«Խնդիրը յետաձգվում է մի այլ մերձաւոր նիստի»։

Այս 2 նիստերի արձանագրութիւնները շատ որոշ կերպով ապացուցանում են մի բան։ Ինչպէս արդէն հայ պատգամաւորների՝ մինչև այն ժամանակ եւրոպական լիազօրների հետ ունեցած տեսակցութիւնից էլ զգացվում էր, պօլսական ազգային ծրագիրը, այնէ՝ Հայաստանի ինքնավարութեան նախագիծն, իր տեղական աշխարհագրական քարտէսով միասին, թողնվում է անուշադիր, և կօնգրէսը զբաղվում է միայն նրանով, որ ապագայ անորոշ եւ ընդհանուր բարենորոգումների նկատմամբ այնպիսի մի բանաձեւ գտնուի, որ գոհացնէ բոլոր ի մօտոյ շահագրգռուած կողմերը։ Այս բանը հայերն իմացան միայն ԺԴ. նիստի հետեւեալ օրն, երբ

նրանք գնացին տեսնուելու ռուսական Բ. լիազորի հետ, այս վերջինի հրաւէրով։ Կոմս Շուվալօվ, որ բաւականի բարեացակամ վերաբերմունք էր ցոյց տալիս հայոց խնդրին, պարզում է պատգամաւորներին ճշմարտութիւնն իր ամբողջ դառնութեամբ։ «Կօնգրէսը ժամանակ չունի զբաղուելու Ձեր հարցով,—ասում է նա։—Իշխան Բիսմարկ ուզում է վերջ տալ կօնգրէսի պարապմունքներին։ Նա միայն սկզբունքներ է վճռել տալիս, հակառակուելով մանրամասնութիւնների մէջ մտնելուն։ Ուստի անհրաժեշտ է, որ Ձեր դատի վերաբերմամբ լիազօրներին ներկայացուի միայն բանաձև։ Եթէ Դուք Ձեր պահանջումների վրայ պնդէք, Թիւրք լիազօրներն անպատճառ պիտի ընդդիմանան։ Դուք, օրինակի համար, հայ վալի էք պահանջում այն առարկութեամբ, թէ հայերն աւելի ընդունակ են կառավարելու, քան թէ թիւրքերը։ Թիւրք լիազօրներն էլ պիտի հակառակեն, առարկելով թէ թիւրքերն են ընդունակ իբրև աւելի փորձառու։ Ես պիտի ընդդիմախօսեմ թիւրքերին, նրանք իրանց ասածի վրայ պիտի պնդեն, որով մեր երկուսի միջև հակաճառութիւն պիտի սկսուի, որն Իշխան Բիսմարկ երբէք չի թոյլատրում։ Ուրեմն 16-րդ յօդուածի փոխարէն պէտք է այնպիսի մի բանաձև գտնել, որ ընդունելի համարուի, և ես կարծում եմ, թէ ներկայ հանգամանքներում հայոց համար ամենից նպաստաւոր բանաձևը հետևեալն է. «Թիւրք կառավարութիւնը պարտաւորվում է բարեկարգութեան միջոցներ ձեռք առնել Հայաստանում, մի եւրոպական յանձնաժողովի օգնութեամբ, որ հայ անդամներ էլ պիտի ունենայ։ Այս յանձնաժողովն այդ նպատակով, Բ. Դրան նախաձեռնութեամբ մի յատուկ կանոնագրութիւն պիտի մշակէ և նրա գործադրութեան վրայ պիտի հսկէ»։ Այժմ,—շարունակում է Շուվալօվ, եթէ ես մտադիր եմ այսպիսի մի բանաձև առաջարկել, դա այն պատճառով, է որ ես առանձնապէս համակրում եմ հայերին։ Շատ լաւ գիտեմ, որ ռուս-

տաց մեծ մասը հակառակ է եւրոպական յանձնաժողովի և գերադասում է, որ բարենորոգումները մնացուեն Բ. Դրան ձեռքով»*)։

Պատուիրակները գոհ չեն մնում այս բանաձևից էլ, չնայելով որ այս վերջինն անհամեմատ աւելի երաշխաւորութիւն էր ներկայացնում, քան Սալիզբրիի նախագիծը, բարենորոգումների իրագործման համար, քանի որ այժմից որոշակի պահանջում էր մի եւրոպական յանձնաժողովի գործակցութիւնը, հայ անդամների մասնակցութեամբ, և մշակուելիք կանոնագրութեան իրականացման վրայ էլ նոյն յանձնաժողովի հսկողութիւնը կարևոր էր դառնում։ Պատուիրակների դժգոհութիւնը կայանում էր այն բանում, որ նախ պարզ կերպով չէր գրուած ինքնավարութեան սկզբունքը, երկրորդ՝ Հայաստանի սահմաններն անորոշ թողնուած լինելով առանձին կամ բուն հայկական նահանգի կազմակերպուելը կասկածի տակ էր մնում և, երրորդ՝ ըստ այնմ հայ կուսակալի կամ վալիի ընտրուելը տարակուսական էր դառնում։ Այս նկատումներով առաջնորդուած, պատուիրակները հարկ եղած բացատրութիւնները տալուց յետոյ իրանց կողմից հետևեալ բանաձևն են առաջարկում, որն և յանձնում են Շուվալօվին.

«Հայաստանը պիտի կազմակերպուի Լիբանանի րէժիմով, հայ վալիի կառավարութեամբ եւ մի եւրոպական յանձնաժողովի հսկողութեան տակ, որին է յանձնվում նոյնպէս պատշաճաւոր կանոնագրութիւն մշակելը։ Վալին նշանակվում է Բ. Դռնից՝ պետութիւնների հաւանութեամբ»։

Շուվալօվ ընդունում է այս բանաձևը, բայց նախազգուշացնում է, թէ այդ անկարելի է ընդունել տալ, և պնդում է դարձեալ իր խմբագրած բանաձևի վրայ։ Երբ պատուիրակները տեսնում են, թէ իրանց ծրագրին

---

*) «L'Arménie», *1893*, № *54*.

ակներև կերպով fiasco է սպասում, անմիջապէս եղելութիւնը ծածկագիր հեռագրով հաղորդում են Կ. Պոլիս, Ներսէս պատրիարքին։

Կ. Պոլսում, այդ միջոցին ամբողջ հայութիւնը, պատրիարքից սկսած մինչև վերջին համալը, սրտատրոփ լրեր էր սպասում Բէրլինից։ Բոլորն էլ, մանաւանդ գործի գլուխ կանգնողները, սրտամաշ, անորոշ կացութեան մէջ օրօրվում էին։ Երբ Բէրլինից նախ յուսալից հեռագիրներ ստացուեցին պատգամաւորներից, ընդհանուր ցնծութիւն տիրեց բոլորի վրայ, բայց երբ յանկարծ լուր տարածուեց, թէ Թիւրք լիազօրներն ընդդիմանում են հայկական պահանջին, իսկ եւրոպական լիազօրները չեն պաշտպանում ինչպէս հարկն է, անմիջապէս ուրախութիւնը վհատեցուցիչ տխրութեան փոխուեց։ Այս հոգեմաշ դրութիւնը փոխն ի փոխ տիրում էր երկար ժամանակ։ Երբ տարածուած համբաւը բերկրալիթ էր, ամէն հայի դէմքը փայլում էր և պատահողները միմեանց շնորհաւորում էին։ Հայ երիտասարդութիւնը խումբեր կազմած՝ վիճում էր ապագայի մասին. շատերը գրեթէ որոշել էին թողնել Կ. Պոլիսն և անցնել Հայաստան, մեծամեծ շինարարական ծրագիրներով։ Կային այնպիսիներն էլ, որոնք բան ու գործ թողած, օրն ի բուն վազում էին այս ու այն կողմ նոր տեղեկութիւններ ստանալու կամ կարևոր անձերի հետ տեսնուելու։ Իսկ երբ իմացուեց, թէ օսմանեան լիազօրները հեռագրել են Բ. Դրան, թէ կօնգրէսն ուշադրութիւն պիտի չդարձնէ հայ պատուիրակների ներկայացրած ինքնավարութեան ծրագրի վրայ, հազարաւոր ժողովուրդ իսկոյն եկեղեցիներում հաւաքուելով բողոքներ բարձին այս անիրաւութեան դէմ։ «Ինչե՞,—ասում էին շատերը, մեծ իրաւամբ,—երբ Տաճկաստան ինքն իր ձեռքով (Եւրոպական Թիւրքիայի քրիստոնեաների համար) բարենորոգումներ ընել կը խոստանայ, Եւրոպա կը ծիծաղի անոր վրայ. իսկ երբ խնդիրը Հա-

յաստանի կը վերաբերի, կը հաւատայ անոր խոստումներուն»*)։ Երբ Ներսէս ստացաւ պատուիրակներից վերոյիշեալ հեռագիրը, չափազանց յուզուած՝ անմիջապէս գնաց ռուսական դեսպանի մօտ։ Կ. Պոլսում արդէն սկսել էին սառչել Անգլիայից և իրանց յոյսը դրել էին ռուսական և ֆրանսիական լիազօրների վրայ, որոնք հիմայ «Հայաստանի բնական նեցուկներն» էին համարվում **)։

Այն օրն, որ կօնգրէսը վճռական կերպով պիտի զբաղուէր հայկական հարցով, այսինքն յուլիսի 8-ին (ն. տ.) իր ԺԵ. նիստում, հայ պատուիրակները, հաւանականաբար Կ. Պոլսից ստացուած նոր ցուցումների համաձայն, գնում են Թիւրք լիազօրների մօտ՝ նրանց հետ նորից խօսելու և, եթէ կարելի է, նրանց ընդդիմութիւնը մեղմացնելու։ Կարաթէոդօրի փաշան նրանց ասում է. «...Կարդացի Ձեր թղթերը, նրանց մէջ գտայ այնպիսի բաներ, որոնք նոյն իսկ Ռումէլիի քրիստոնեաներին պիտի չշնորհուեն։ Կարելի չէ Հայաստանը համեմատել Հարաւային Բուլգարիայի հետ։ Ռուսաստանն այնչափ պնդեց Բուլգարիայի առանձին վարչական կազմակերպութեան վրայ, որ եթէ չզիջէինք, նորից պատերազմ պիտի ծագէր։ Հայերը կարող են խնդրել, որ իրանց շնորհուի ճիշտ այն վիճակն, որ պիտի որոշուի յունական և այլ գաւառների համար. այս նրանց իրաւունքն է։ Ուստի ես կօնգրեսում Ձեր առաջարկութեան պիտի ընդդիմանամ, թէև համոզուած եմ, որ Հայաստանի համար հայկական վարչութիւնն անշուշտ աւելի նպաստաւոր է, քան թէ մահմեդական վարչութիւնը»։ Հայ պատուիրակներն ոչ մի կերպ չեն կարողանում համոզել օսմ. լիազօրներին և յուսահատուած դուրս են գալիս նրանց մօտից։

Կօնգրէսի ԺԵ. նիստը դեռ տեղի չունեցած, երևան

*) «Մշակ», 1878, № 117.

**) „Голосъ„, հեռագիր Կ. Պոլսից, 30 յունիսի 1878թ.

էր եկել արդէն Թիւրքիայի և Անգլիայի միջև կապուած գաղտնի դաշնագրութիւնը: «Ռուսական լիազօրները վհատուած էին երևում, իսկ միւսները չափազանց զարմացած: Լօրդ Բիկօնսֆիլդի խորհրդաւոր և մթագնած դէմքը ճառագայթում էր. անգլիացիք իրանց ազգային Rule Britannia երգն էին թնդացնում» պատմում է Զէբագ, և յուսահատական ճիգեր է անում գործի այս անյաջող կացութեան որևէ կերպ դարման տանելու համար. Նամակներ է գրում արքեպիսկոպոս-պատուիրակների անունից Սալիզբըրիին և Բիսմարկին, ունկնդրութիւն աղերսելով նրանցից: Երկուսից էլ մերժում է ստանում: Սալիզբըրին յայտնում է, թէ սաստիկ զբաղուած է, իսկ Բիսմարկ պատասխանում է, թէ ինքն իբրև կօնգրեսի նախագահ չէզոք է մնում և ոչ մի հպատակ-ազգի պատգամաւոր չէ ընդունում *).

*) Բիսմարկ իրօք չէզոք և չափազանց զգոյշ էր պահում իրան ժողովի ամբողջ տևողութեան ժամանակ: Նրան խօսեցնել ուզող Ֆրանս. թղթակիցներին նա ասում է. «Messieurs, á Paris les poissons parlent, mais à Berlin les perroquets sont muets». (պարոններ, Պարիզում նոյն իսկ ձկները խօսում են, բայց Բեռլինում թութակներն էլ համր են): Բայց Բիսմարկ գիտէր միջամտել և խօսել ազդու կերպով, երբ այդ անհրաժեշտ էր: Այսպէս՝ կօնգրէսի նիստերից մէկում օսմանեան Ա. լիազօր Կարաթէօդօրի փաշային նա խիստ նկատողութիւն անելով կանգնեցրել էր: Փաշային հասցուած այս անարգանքը մոռացնել տալու համար՝ Բիսմարկի կինը հետևեալ օրը մի ծաղկեփունջ էր ուղարկել նրան («L'Arménie», 1893 № 55): Իսկ մի ուրիշ անգամ նրա միջամտութիւնն ուղղակի մի նոր պատերազմի առաջն առաւ: Յունիսի 18-ին կօնգրէսը քննում էր այն հարցը, թէ Թիւրքիան իրաւունք ունի՞ Բալկանեան լեռների կիրճերն ամրացնելու: Սան-Ստեֆանօյի դաշնագրով նա այդ իրաւունքից զրկուած էր. բայց Բեռլինում լօրդ Բիկօնսֆիլդ պահանջեց, որ այդ իրաւունքը անպատճառ տրուի Թիւրքիային: Շուվալօվ ընդդիմացաւ և ոչ մի պարագայում չուզեց զիջել: Այն ժամանակ, Բիկօնսֆիլդ, յունիսի 20-ի առաւօտեան, յայտնեց, որ եթէ 24 ժամուան մէջ Ռուսաստանը չզիջէ, ինք պիտի մեկնի Բեռլինից: Խնդիրը շատ լուրջ էր դարձել: Նոյն գիշեր Բիսմարկ մտաւ Բիկօնսֆիլդի սենեակը: Շատ կարճ եղաւ նրանց տեսակցութիւնը.

Այն ժամանակ պատուիրակները ստիպուած գրաւոր են դիմում Սալիզբըրիին և Ուադինգտօնին, յիշեցնելով նրանց որ «եթէ Թիւրք կառավարութեան պիտի յանձնուի բարենորոգումները մշակելու և գործադրելու հոգն, անցեալի փորձից դատելով պէտք է ասել, որ դրանից՝ ոչ մի լաւ բան կարելի չէ սպասել»:

Եւ հայ պատուիրակները խնդրում են, որ գոնէ եւրոպական յանձնաժողով կարգուի, որ պարտաւոր լինի Բ. Դրան հետ ծրագիր մշակելու և նրա գործադրութեան վրայ հսկելու, այսինքն այն ինչ որ ռուսական դիւանագէտը, Շուվալօվ, առաջարկել էր իբրև միակ միջոց, իսկ միւսները դժուարացել էին ընդունել: Այս առաջարկութեան սկզբնական միտքը, ճիշտն ասելով, Շուվալօվինը չէր, այլ ֆրանս. լիազօրինը, Ուադինգտօնինը, որ երբ տեսաւ, թէ հայկական ինքնավարութեան ծրագիրն, կօնգրէսի ԺԲ. նիստում, խորհրդակցութեան ժամանակ, սկզբունքով մերժուեց, այնուհետև փորձել էր մասնաւոր կերպով մի այլ ծրագիր (contre-projet) առաջ տանել: Այս նոր ծրագրի հիմնական միտքն էր՝ Հայաստանի բարենորոգումները պետութիւնների ընդհանուր

—Կօնգրէսի աշխատութիւնները յոգնեցնո՞ւմ են Ձեզ,— հարցրեց Բիսմարկ:

—Ոչ,—պատասխանեց Բիկօնսֆիլդ,—ես եմ յոգնում...:

Եւ մի քանի այս ձևի խօսքերից յետոյ խօսակցութիւնը վերջանում է հետևեալ բառերով:

—Ուրեմն վերջնագի՞ր (ուլտիմատում) էք դնում,—հարցնում է Բիսմարկ:

—Այո,—կարճ կերպով եղաւ Բիկօնսֆիլդի պատասխանը:

Մի ժամ յետոյ Բիսմարկ տեղեկացնում է Բիկօնսֆիլդին, թէ Ռուսաստանը զիջում էր...:

Բայց ինչ որ ծիծաղելին է այս խնդրում, այն է, որ Թիւրքերն, որոնց պատճառով քիչ էր մնում պատերազմ ծագէր, երբէք չօգտուեցին այդ իրաւունքից և Բալկանեան կիրճերում նրանք և ոչ իսկ մի փոքր պատնէշ կառուցին:

(«Le Matin», 1908, № 8994, Stephan Lauzanne-ի յօդուածը՝ Il ya trente ans»).

երաշխաւորութեան տակ դնել, բայց այս միտքն էլ, այդ ձևի մէջ, անյաջողութեան մատնուեց գլխաւորաբար Կիպրոսի դաշնագրութեան պատճառով, որ բոլորովին անպատեհ էր բոլորի համար*)։ Այս դաշնագրութիւնը գրեթէ սկզբունքով վճռել էր հայկական հարցը, ոչ ինքնավարութիւն և ոչ մանաւանդ ռուսական գրաւում, այլ ընդհանուր տեղական բարենորոգումներ Թիւրք կառավարութեան և Անգլիայի փոխադարձ համաձայնութեամբ, որ պարզապէս պիտի նուիրագործուէր միւս տէրութիւնների կողմից։ Ուստի խնդրի լուծումը նրանում էր այժմ, որ գտնուէր այնպիսի մի բանաձև, որ գոհացնում տալով հանդերձ 16-րդ յօդուածի մէջ յիշուած բարենորոգումների պահանջին, միևնոյն ժամանակ համաձայն լինէր նաև Լօնդօնի մայիսի 18/30 ի ռուս-անգլ. պայմանագրին և ապա յունիսի 4-ի անգլօթրքական դաշնագրին։ Դրանից զատ այդ բանաձևն իր իմաստով ընդունելի պիտի լինէր նաև թրքական լիազօրներին։ Կօնգրէսը պատրաստ էր այս պայմաններին գոհացում տուող որևէ բանաձև իր կողմից անմիջապէս հաստատելու, առանց վիճաբանութեան, բաւական էր որ ամենից աւելի շահագրգռուած 3 պետութիւնները համաձայնէին միմեանց մէջ այս կէտում։ Կօնգրէսն ամենից քիչ մտածում և հոգում էր այն մասին, թէ ամենագլխաւոր շահագրգռուող կողմը՝ հայ ժողովուրդը, յանձին իւր պատուիրակների, գոհ պիտի մնար արդեօք իր վերաբերեալ կայացած վճռից...։ Կօնգրէսի ԺԵ. նիստի պաշտօնական արձանագրութիւնն ահա ինչպէս է պատմում այս մասը.

«Նախագահը նկատում է, թէ լորդ Սալիզբրի յանձն էր առել կօնգրէսին ներկայացնել օսմանեան լիազօրների հետ կայանալիք համաձայնութեան արդիւնքը՝ հայոց

*) «Голосъ»-ի թղթակիցը պատմում է, թէ այս անգլօ-թըրքական դաշնագիրը «սարսափելի ներգործութիւն է ունեցել բոլոր լիազօրների վրայ»։

վերաբերեալ 16-րդ յօդուածը խմբագրելու մասին։

«Լորդ Սալիզբրի կարդում է յօդուածն այնպէս, ինչպէս որ խմբագրուած է Անգլիայի և Թիւրքիայի լիազօրների միջև համաձայնութեամբ.

„La Sublime Porte s'engage à réaliser, sans plus de retard, les ameliorations et les réformes, qu'exigent les besoins locaux dans les provinces habitées par les Arméniens, à garantir leur sécurité contre les Circassiens et les Kurdes. Elle donnera connaissance periodiquemeut des mesures prises à cet effet anx Puissances, qui en surveilleront l'application".

(«Բ. Դուռը յանձն է առնում իրականացնել, առանց այլ ևս ուշացնելու, այն բարւոքումներն և բարենորոգումներն, որ տեղական պէտքերը պահանջում են հայոց բնակած նահանգներում, և երաշխաւորել նրանց (հայերի) ապահովութիւնը քիւրդերի և չէրքէզների դէմ։

«Բ. Դուռն այս նպատակի համար իր ձեռք առած միջոցների մասին, պարբերաբար, տեղեկութիւն պիտի տայ պետութիւններին, որոնք պիտի հսկեն այդ միջոցների գործադրութեան վրայ»)։

«Կօնգրէսն իր հաւանութիւնն է տալիս այս յօդուածին»։։

Այսպիսով Անգլիական և թրքական լիազօրները կանխապէս համաձայնել էին, իսկ ռուսները Կիպրոսի դաշնագրութեան երևան գալուց յետոյ այլ ևս առանձնապէս չէին հետաքրքրւում, մանաւանդ երբ հայ պատուիրակները, ինչպէս վերը պատմեցինք, Շուվալօվի առաջարկած բանաձևն ևս ընդունած չլինելով, առիթ չէին տուել, որ ռուսական լիազօրը միջամտէ ի նպաստ իր բանաձևին։

Կօնգրէսի յուլիսի 11-ի նիստումն էր, իսկապէս, որ յիշեալ յօդուածը վերջնականապէս խմբագրուելով այս օրուան ծանօթ ձևն առաւ և 61-րդ թուով նշանակուեց։ Օսմանեան լիազօրները դարձեալ աշխատեցին

այս նիստում, որ յօդուածի երկրորդ, էական մասն աւելի անորոշ ձև ունենայ, բայց ֆրանս. լիազօրներն ընդդիմացան և յաջողեցին այնպիսի մի որոշ դարձուածք տալ 61-րդ յօդուածի վերջին խօսքերին, որոնց հիման վրայ եւրոպական պետութիւններն անկասկած իրաւունք էին ձեռք բերում իրանց հիւպատոսական մարմնի և գործակալների միջոցով հսկելու Բ. Դրան յանձն առած «բարենորոգումների» գործադրութեան վրայ և ի հարկին միջամտելու, որից այնքան խրտչում էր Թիւրք կառավարութիւնն այն ժամանակ...)։*

Հայկական ինքնավարութեան ծրագրի՝ կոնգրէսի կողմից չընդունուելու պատճառներից մէկն և գուցէ գլխաւորն այն է, որ օսմանեան լիազօրները յառաջ էին մղում այն միտքը, թէ «եթէ Օսմանեան Հայաստանն ինքնավարութիւն ձեռք բերէ, կիսով չափ կը ռուսանայ»։ *Այս պատճառաբանութիւնով նրանք վախեցնում էին անգլիացի լիազօրների աչքն. այս է եղել նոյնպէս կոնգրէսի անդամների մեծամասնութեան վրայ ազդողն, որով տապալուել է Ներսէսի, իր գործակիցների և ամբողջ հայ ժողովրդի փայփայած ծրագիրը**)։*

Բացի վերոյիշեալ 61-րդ յօդուածից, կոնգրէսն ընդունեց նաև մի այլ յօդուած (62-րդ), որ թէև յատկապէս հայոց համար չէ, բայց որովհետև այնտեղ խօսւում է բոլոր Թրքահպատակների կրօնական և քաղաքական ազատութեան մասին, հայերն ևս կարող էին դրա վրայ յենուելով քաղաքացիական իրաւունքների հաւասարութիւն պահանջել։ Այս յօդուածն ասում է.

*) «Le Temps».

**) *Այս տեղեկութիւնը տալիս է* «Temps»-*ի Բէրլինի թղթակիցն իր 12 յուլիս 1878 թուով գրած նամակում։ Այս թղթակիցն էր պ.* Gustave de Coutouly, *որ մօտ յարաբերութեան մէջ էր ֆրանս. մինիստր և Ա. լիազօր պ. Ուադինգտօնի հետ։ Այս վերջինն էր, որ յանձնարարել էր նրան նպաստաւոր կերպով գրել հայկական խնդրի մասին։ Գ. Կուտուլի միևնոյն ժամանակ անձնական բարեկամն էր նաև Նուբար փաշայի։*

„...Dans aucune partie de l'Empire Ottoman la différence de religion ne pourra être opposée à personne comme un motif d'exclusion ou d'incapacité en ce qui concerne l'usage des droits civils et politiques, l'admission aux emplois publics, fonctions et honneurs, ou l'exercice des différentes professions et industries.

„La liberté et la pratique exterieure de tous les cultes sont assurées à tous, et aucune entrave ne pourra être apportée, soit à l'organisation hierarchique des différentes communions, soit à leurs rapports avec leurs chefs spirituels.

„Tous seront admis sans distinction de religion à témoigner devant les tribunaux..."

«Օսմանեան կայսրութեան ոչ մի մասում կրօնի տարբերութիւնը չի կարող ոչ մէկին արգելք լինել քաղաքացիական (civil) *և քաղաքական* (politique) *իրաւունքներից օգտուելու, հասարակական և պետական պաշտօնների կոչուելու և պատիւներ ընդունելու, կամ թէ զանազան արուեստներով և արդիւնագործութեամբ պարապելու։*

«Բոլոր դաւանութիւնների ազատութիւնն և արտաքին կիրառութիւնն ամենքի համար ապահովւում է, և ոչ մի արգելք չի կարող դրուել ո՛չ զանազան հասարակութիւնների նուիրապետական կազմակերպութեան և ոչ էլ նրանց իրանց հոգևոր պետերի հետ յարաբերութիւններին։

«Ամենքն, առանց կրօնի խտրութեան, պիտի ընդունուեն վկայ լինել դատարաններում...»։

Դ. Պօլսից ստացուած հեռագրական հրահանգի վրայ, որով պահանջվում էր, որ պատուիրակներն անպատճառ մի նոր փորձ ևս անեն վերստին դիմելով կոնգրէսի անդամներին, Նար-Բէյ և Զէրազ նորից բաղխում են ֆրանս. և ռուսական լիազօրների դռները. բայց, աւա՜ղ, անօգուտ. նրանցից ոչ մէկին չեն կարո-

դանում տեսնել։ Ռուսական դեսպանատանը նրանց ընդունում է միայն քարտուղարներից մէկն, այն էլ նրանց երեսին տալու համար թէ «Արեւելքի քրիստոնեաները չէին աջակցել ռուսական քաղաքականութեան»*)։ Երբ այլ ևս ամեն յոյս կորչում է, հայ պատուիրակները նստում են խորհրդի, թէ ինչ պէտք էր անել այժմ։ Չերազի պատմելով՝ Խրիմեան, Նար-Բէյ և Փափազեան կարծիք են յայտնում, թէ պէտք էր այնուամենայնիւ շնորհակալութեան գիր ներկայացնել կոնգրէսին, որ նա 16-րդ յօդուածին համեմատաբար աւելի լայն ծաւալ տալով (ընդհանուր եւրոպական հսկողութիւն՝ փոխանակ միայն ռուսականի) 61-րդ յօդուածը յատկացրեց հայոց. միայն ինքը Չերազ չէ համաձայնել և իրողութիւնը հեռագրել է Ներսէսին։ Կ. Պօլսից իսկոյն հեռագրով պատուիրում են ոչ թէ շնորհակալութեան թուղթ, այլ եռանդուն բողոք ներկայացնել և մի անգամ ևս դիմել պ. Ուադինգտօնին։ Ապարդիւն աշխատանք։ Ֆրանս. լիազօրը շատ մեծ քաղաքավարութեամբ, այն է՝ յատկապէս իր քարտուղարին ուղարկելով ներողութիւն է խնդրում, որ ժամանակ չունի նրանց ընդունելու։ Չերազ չի վհատվում և նամակով հայ պատուիրակութեան դժգոհութիւնը յայտնելով կոնգրէսի դէմ՝ ասում է, որ թէև 61-րդ յօդուածը «Սան Ստէֆանօյի 16-րդ յօդուածից աւելի լաւ է, բայց նա չի կարող գոհացնել Թիւրքիայի հայերին», և աղերսում է, որ գոնէ կոնգրէսը յանձնարարէ Բ. Դրան հայկական ծրագրի և յօդուածի մէջ յիշուած «հայոց բնակած նահանգներում» խօսքերի տեղ «Հայաստան» խօսքը դնել։ Այս ևս անհետեւանք է մնում, և դաշնագրի ստորագրուելուց 2 ժամ յառաջ կոնգրէսի բոլոր անդամներին, ի բաց առեալ Թրքականից, պատուիրակները հետևեալ բողոքագիրն են ուղարկում.

*) «L'Arménie», 1893, № 55.

«Հայ պատուիրակութիւնն իր ցաւն է յայտնում, որ իր օրինաւոր և միանգամայն չափաւոր պահանջները կոնգրէսի կողմից չընդունուեցին։ Մենք կարծեցինք, թէ մի քանի միլիոնից բաղկացած մի ազգ, որ մինչև հիմայ ոչ մի օտար քաղաքականութեան գործիք չէ դարձել, որ, չնայելով իր աւելի հարստահարուած լինելուն, քան Թիւրքիայի միւս քրիստոնեայ ցեղերն, ոչ մի նեղութիւն չէ պատճառել Թիւրք կառավարութեան, և որ, թէև ոչ մի մեծ պետութեան հաւատակից և ցեղակից չէ, բայց և այնպէս քրիստոնեայ լինելով, ինչպէս Թիւրքիայի միւս քրիստոնեայ ժողովուրդները, այս մեր դարում կարող էր յուսալ, թէ միևնոյն պաշտպանութիւնը կը գտնէ, ինչ որ միւսները. մենք կարծեցինք, թէ այսպիսի մի ազգ որևէ քաղաքական փառասիրութիւն չունենալով՝ իրաւունք կը ստանայ իր սեփական կեանքով ապրելու և հայկական հողի վրայ հայ պաշտօնեաների ձեռքով կառավարուելու։ Հայերը հասկացան, թէ խաբուել են, թէ նրանց իրաւունքները չեն ճանաչուել, որովհետև խաղաղասէր են եղել և թէ իրանց նախնի եկեղեցու անկախութիւնն ու իրանց ազգութիւնը պահելով ոչինչ չեն ձեռք բերել։

«Հայ պատուիրակութիւնը պիտի ետ դառնայ Արևելք, իր հետ տանելով այդ դասը։ Բայց նա յայտնում է այսու ամենայնիւ, թէ հայ ժողովուրդն երբէք պիտի չդադրի աղաղակ հանելու, մինչև որ Եւրոպան նրա պահանջներին արդար գոհացում չտայ։ Բեռլին, 13 յուլիսի 1878»։

Այս խիստ բողոքագիրը տալուց յետոյ, մեր պատուիրակներին ուրիշ բան չէր մնում անելու, և նրանք սկսան հրաժեշտի այցելութիւններ տալ, յետոյ Բիւլովին շնորհակալութեան նամակ գրեցին կայսրուհու և թագաժառանգի կողմից ցոյց տրուած շատ սիրալիր ընդունելութեան համար և յուլիսի 7/19-ին մեկնեցին

Բէրլինից՝ Նար-Բէյ գնաց Պարիզ և Փափազեան՝ Լօնդօն, իրանց անձնական գործերով։ Խրիմեան և Չէրազ մեկնեցին Վիեննա, ուր ներկայացան աւստ. արտաքին գործ. մինիստրին և նրանից խօսք առին, որ պիտի գրէ Կ. Պօլսի աւստր. դեսպանին և նրան յանձնարարէ հայկական խնդիրը։ Վիեննայից նրանք վերադարձան Կ. Պօլիս, ուր նրանցից վաղ հասել էր արդէն անյաջողութեան տխուր լուրն և ընդհանուր յուսախաբութիւն յառաջ բերել։

Այսպէս վերջացրեց իր գործն այնչափ մեծ յոյսերով Բէրլին ուղարկուած պատուիրակութիւնն*), որի վախճանն ոչ մի կերպ կարելի չէ փայլուն անուանել, թէև իսկապէս պատուիրակներն ոչ ջանք, ոչ եռանդ և ոչ բարի կամք խնայեցին իրանց վրայ դրուած պատասխանատու ծանր պաշտօնը ըստ կարելւոյն արդիւնաւոր կացուցանելու համար։

---

*) Խրիմեան և Նար-Բէյ Բէրլին նոր էին եկել, երբ յանկարծ նրանց այցելում է կոմս Լօրիս-Մելիքօվ, որ էմսի ջրերն էր գնում բժշկուելու։ Մեր պատուիրակները շատ են ուրախանում այս նշանաւոր ազգակցի գալու առթիւ և աշխատում են ազդել նրա վրայ, որ նա որևէ իրական աջակցութիւն ցոյց տայ իրանց։ Կոմսը նախ զգուշանում է ազգային խնդրի մասին խօսելուց և ապա վերջապէս ասում է. «Ուրախ եմ, որ հայ անունն երևում է քաղաքական աշխարհում։ 900 տարուց ի վեր այս առաջին անգամն է, որ այսքան նպաստաւոր առիթ է ներկայանում մեր ազգին։ Աշխատեցէք լի յոյսով և առանց մի լարին կապուելու։ Աշխատեցէք Ձեր ձեռքում միացնելու բոլոր լարերը միանգամայն։ Պետութիւնների մրցակցութիւնը կարող է մեր դատը շահեցնել։ Դիմեցէք անխտիր բոլոր պետութիւններին՝ Անգլիային, Ֆրանսիային, Աւստրիային, Գերմանիային և միւսներին։ Ահա այն խորհուրդը, որ տալիս եմ Ձեզ իբր հայ» («L'Arménie», 1892 օգոստ. 15)։ Այս խորհրդից յետոյ, որ վաղուց արդէն գործադրել էին պօլսեցիք, կոմսը մեկնում է։ Ստ. Փափազեան իր յիշողութիւնների մէջ, այս տեսակցութիւնը նոյն ձևով պատմելուց յետոյ աւելացնում է, թէ կոմսն և Նար-Բէյ առանձնապէս էլ երկար տեսակցութիւն են ունեցել, բայց թէ ինչ են խօսել, չէ յիշում («Անահիտ», 1907 թ. № 10—11—12)։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԱԶԳԱՅԻՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ

ՆԻԶԱՄՆԱՄԷԻ

ՄԻԼԼԷԹԻ ԷՐՄԷՆԻԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՈՒՌՆ

ՏԷՍՉՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ

ԹՈՒԱՀԱՄԱՐ 191

ԱՌ ԽՈՀԵՄԱԶԱՐԴ ՏԵՂԱՊԱՀ ՊԱՏՐԻԱՐՔԻ

Խոհեմազարդ և սիրելի էֆէնտի.

Բարեկարգութեանց վերաբերեալ Կայսերական հրովարտակը կը պահանջէ, որ ամէն Համայնքութիւն իր վայելած առանձնաշնորհութիւններն ու արտօնութիւնները որոշեալ պայմանաժամի մէջ ի քննին առնլով, ժամանակին բերմանցը և քաղաքակրթութեան արդեանցն ու գիտութեանց պահանջած բարեկարգութիւնները խորհրդածութեամբ որոշէ, ու Բարձրագոյն Դրան ներկայացընէ. և Հոգևորական Գլխոց շնորհուած իշխանութիւնն ու ձեռնհասութիւնը՝ իւրաքանչիւր Համայնքութեան ապահովուած վիճակին ու նոր դիրքին հետ համաձայնութեան մէջ դրուի։ Ուստի Հայոց Ազգին համար պատուաւոր անձերէ բաղկացեալ Յանձնաժողովի մը ձեռօք Սահմանադրութեան ուրուագիծ մը պատրաստուեցաւ։ Բայց միանգամայն պատշաճ համարուեցաւ որ Սարգիս Պատրիարքի օրով կազմուած Ընդհանուր ժողովոյ Եկեղեցական անդամներն ու Թաղական Երեսփոխանները՝ քուէից առաւելութեամբ եօթն հոգիէ բաղկացեալ Յանձնաժողով մը ընտրեն, և վերոյիշեալ ուրուագիծը անգամ մըն ալ անոր ցոյց տրուի։ Վասնորոյ կը խնդրեմք որ պէտք եղած հրաւէրի նամակները երկու երեք օրուան մէջ ղրկելով, յիշեալ Յանձնաժողովին ընտրութիւնը ընել տայ, և անոր՝ Բարձրագոյն Դուռը միւս Յանձնաժողովին ու այս գործիս համար յատկապէս որոշուած Պաշտօնակային հետ մեկտեղելովը՝ հարկ եղած տնօրէնութեան կատարուելուն շնորհ ընէք։ Կը խնդրեմք նաև որ վերոյիշեալ կերպով ընտրուած եօթն անձանց անունները յառաջագոյն մեզ ուղարկէք։

(Ստորագրեալ)
ԱԼԻ

1862 Փետրվար 14

ՊԱՊԸ ԱԼԻ

ՆԷԶԱՐԷԹԻ ՃԷԼԻԼԷԻ ԽԱՐԻՃԻՅԷ

ԱՏԷՏ 191

ՊԱՏՐԻԳ ԳԱՅԻՄՄԱԳԱՄԸ ՏԻՐԱՅԷԹԼՈՒ ԷՖԷՆՏԻՅԷ

Տիրայէթլու մէվէտտէթլու էֆէնտի

Իսլահաթ ֆէրմանը Ալիսի հիւքմինճէ՝ հէր ճէմաաթըն պիր միհլի մուայեէն իչինտէ իմթիյազաթ վէ մաաֆիյաթը հագգըէլէրինին մուայենէսինէ իպթիտար իլէ, վագթ վէ ասրը մէտէնիյէթ վէ մալումաթը միւքթէզայէնին իճապ իթտիրտիկի իսլահաթը պիլ միւզաքէրէ արզ էյլէմէլէրի, վէ րուէսայի րուհանիյէյէ իթա պույուրուլմըշ օլան րուխսաթ վէ իգթիտարըն՝ իշպու ճէմաաթլարա թէմին օլընմըշ օլան հալ վէ մէվգիի ճէտիտ իլէ թէվֆիգ օլընմասը լազըմ կէլտիկինէ մէպնի, միւթէպէրանը միլլէթտէն միւրէքքէպ պիր գոմիսիոն թէշքիլ իլէ, Էրմէնի միլլէթի հագգընտա պիր նիզամնամէ լայիհասը թէրթիպ օլընմըշ իսէ տէ, պունըն պիր քէրրէ տահա Սարգիս Պատրիգ զէմանընտա թէշքիլ օլընան Մէճլիսի Ումումիյէ՝ Քիլիսա ճէմաաթլարը թարաֆընտան ինթիխապ օլընան վէ էհլի քիֆիյաէթտէն օլան ազանըն էքսէրիյէթի արա իլէ թէմէիզ իտէճէքլէրի եէտի քիշիտէն միւրէքքէպ գոմիսիոնա իրաէսի թէնսիպ օլընտըղընտան, իքի իւչ կիւն զարֆընտա լազըմ օլան տաավէթ թէզքէրէլէրի պիլ իրսալ, իշպու գոմիսիոնըն ինթիխապիյլէ, Պապը Ալիտէ տիկէր գոմիսիոն վէ մէմուրը մախսուսը իլէ պիրլէշտիրիլէրէք, իգթիզայի հալին իճրաաթընա հիմմէթ օլընմասը վէ պու վէճհիլէ ինթիխապ օլընաճագ եէտի զաթըն էվվէլ էմրտէ էսամիսինի միւպէյյին օլան տէֆթէրլէրինին թարաֆը տօսթանէմիզէ իթասը միւլթէմէս տըր։

(Իմզա)
ԱԼԻ

Ֆի 27 Շապան 1278

Բարձրագոյն Դրան եւ Ազգային Յանձնաժողովներուն առ Կայսերական Կառավարութիւն մատուցած Յայտագրին օրինակն է։

Կայսերական Տէրութիւնը ի վաղուց անտի իր արդարասէր հովանաւորութեան ներքեւ գտնուող զանազան Ազգաց՝ Կրօնից ազատութեան և ատոնց գործոց մասնաւոր Վարչութեան համար առանձնաշնորհութիւններ ու արտօնութիւններ շնորհած է։

Այս արտօնութիւնները թէպէտ և ըստ սկզբանց ամեն ազգաց համար միօրինակ բայց միանգամայն ամեն մէկուն կրօնական սկզբնական կանոնաց և սովորութեանց համեմատ տնօրինուած ըլլալով, իւրաքանչիւր Ազգ զանոնք իր բնիկ սովորութեանց և ընթացից համեմատ 'ի գործ դնելով վայելած է։

Հայոց ազգը միւս ազգաց պէս մինչեւ ցայսօր Պատրիարք մը ունեցած է, որ Տէրութեան կողմէն իբր Նախագահ Պատրիարքական Վարչութեան ճանչցուած է, և Ներկայացուցիչ Ազգին ու Միջնորդ գործադրութեան Կայսերական հրամանաց. և որ 'ի վաղուց անտի հասարակօրէն Եկեղեցական դասէն ընտրուած է, Ազգին զանազան կարգի անհատներէն բաղկացեալ Ընդհանուր ժողովի մը ձեռօք։

Պատրիարքը իր պաշտօնին մէջ՝ որ է Ազգին նախագահել և անոր օգտից հսկել, Ազգին՝ Ընդհանուր ժողովոյ միջնորդութեամբ ունեցած ազդեցութենէն ու վերատեսչութենէն բնաւ մէկ ժամանակ ազատ եղած չէ. և ասոր ապացոյցն է, Պատրիարքին ամեն ժամանակ Ընդհանուր ժողով հրաւիրելն ու գումարելը, և կամ ըստ պահանջման գործոց կամ Բարձրագոյն Դրան

Պապը Ալիտէ թէշքիլ օլընան մուխթէլիթ Գօմիսիօն իլէ Միլլէթ թարաֆընտան ինթիխապ օլընան Գօմիսիօնըն Պապը Ալիյէ թագտիմ իթմիշ օլտուգլարը մազպաթանըն սուրէթի տիր։

Սալթանաթը սէնիյէնին զիրի ճէնահը մէմալէքէթինտէ պուլունան ճէմաաթը միւխթէլիֆէյէ՝ ային վէ մէզհէպլէրինին սէրպէսթիյի իճրասընա, վէ մէսալիհի մախսուսէլէրի իտարէսինէ տաիր, մին էլ գատիմ իհսան պույուրմուշ օլտուղը մաաֆիյաթ վէ իմթիյազաթ՝ ճէմաաթը մէզքիւրէնին ումուրը ռուհանիյէլէրինէ ճարի օլան ուսուլ վէ ատաթը մախսուսէլէրինէ մութապըգ վէ էսասէն ճիւմլէսի հագգընտա եէքսան օլտըղընտան, հէր պիր ճէմաաթտա քէնտի ատաթը մէրիյէսինէ թաթպիգան իճրա օլընա կէլմիշ, վէ էրմէնի միլլէթինին տախի միլէլի սաիրէ միսիլլու, շիմտիյէ գատար էքսէրիյա էհլի քիլիսատէն օլարագ թարաֆը տէվլէթի Ալիյէտէն իտարէի պաթրիգիյէնին րէիսի վէ միլլէթին վէքիլի վէ Տէվլէթի Ալիյէնին վասըթաի թէնֆիզի ահքեամը մագամընտա իթիպար պույուրուլան պիր Պատրիքի պուլունմուշ օլմագլէ, Պատրիգի մումաիլէյհ էօթէտէն պէրու միլլէթին սունուֆը միւխթէլիֆէսինտէն միւրէքքէպ պիր մէճլիսի մաարիֆէթիյլէ միլլէթճէ ինթիխապ օլընարագ, միլլէթէ րիյասէթ իթմէք վէ մէնաֆիի միլլիյէյի կէօզէթմէք մէմուրիյէթինին իֆասընտա ումում միլլէթին, մէճլիսի մէզքիւր վասըթասը իլէ, ճարի օլան նուֆուզ վէ նէզարէթինտէն հիչ պիր զէմանտէ պիւթիւն պիւթիւն գուրթուլամայուպ, պունա՝ Պատրիգի մումաիլէյհին՝ մէճլիսի մէզքիւրը հէր վագթ ճէմ՝ վէ տավէթ իթտիյի, վէ մուգթէզայի մասլահաթտէն օլարագ վէ եախուտ Պապը Ալինին է-

բացորոշ մէկ հրամանին վրայ կարեւոր խնդրոյ մը ծագած ատենը՝ Ընդհանուր Ժողովոյ դիմելն ու անոր որոշումը խնդրելը։

Հայոց Ազգը՝ ասկէ քսան տարւոյ չափ յառաջ՝ կայսերական Տէրութենէն խնդրեց որ Պատրիարքարանի մէջ Պատրիարքին նախագահութեամբը երկու Ժողով հաստատուին. մէկը Կրօնական, միւսը Քաղաքական գործոց համար. որպէս զի Պատրիարքին պաշտօնատարութեանը գործակից և օգնական ըլլան, և Ազգին՝ թէ ըստ քաղաքականի և թէ ըստ Կրօնականի՝ վաղեմի կանոններէն և սովորութիւններէն որ և է խոտորմանց առաջքը առնուի։

Երբ այս Ժողովները հաստատուեցան, ազգային մանրամասն գործոց տնտեսութեան համար ալ՝ քանի մը Խորհուրդներ հաստատել հարկ եղաւ։

Բայց որովհետև Ազգային պաշտօնատարաց ամեն մէկուն իշխանութիւնը և պարտաւորութիւնները որոշաբար սահմանուած չէին, յայտնի էր որ Ազգին վիճակը բարեկարգելու մասին եղած այս ջանքերը, Ազգային Վարչութեան զանազան մասանց մէջ, նաև յիշեալ Վարչութեան և Ազգին մէջ՝ անպակաս պառակտումներ ծագելուն առիթ պիտի տային. և աս ալ ամեն կողման վերաբերեալ իրաւանց գործադրութեան մասին շատ մը անկարգութիւններ, և Ազգային Վարչութեան մէջ ալ շփոթութիւն և խռովութիւն պիտի պատճառէր։

Ահա այս շփոթութեանց և երկպառակութեանց պատճառները վերցնելու, և ամեն կողման պահանջմանց Փասակարութիւնը բառնալու նպատակաւ, Կայսերական Տէրութիւնը իր բոլոր հպատակաց վրայ ունեցած հայրական խնամօքը՝ Ազգիս մէջէն Խառն Յանձնաժողով մը կազմել հարկաւոր դատեց, որպէս զի Հայոց Ազգին Կրօնական և Քաղաքական բնիկ սա-

վամիլի սարիհասընա մէպնի՝ հալլ ու թէսվիյէսի լազըմ կէլէն պիր մէսէլէի մուհիմմէ զուհուրա կէլտիքճէ՝ Պատրիգին մէճլիսի մէզքիուրէ միւրաճաաթ էյլէտիյի խուսուսլարը տէլալէթ իտէր։

Էրմէնի միլլէթի՝ պունտան թագրիպէն իիկիրմի սէնէ մուգատտէմ, Պատրիգի մուամիլէյհին մայէթինտէ մէմուրիյէթի իֆասընտա մէտար մուաւէնէթ օլմագ, վէ րուհանի վէ ճիսմանիճէ ճարի օլան ուսուլ վէ ատաթը գատիմէտէն հէր կէօնէ մուպայէնաթըն էօնիւ ալընմագ իւզրէ, պիրի ումուրը րուհանիյէ, վէ տիկէրի ումուրը ճիսմանիյէ իչուն իքի մէճլիս թայինինի Տէվլէթի Ալիյէտէն իսթիտա էյլէմիշ. վէ պու մէճլիսլէրին իհտասը, մէսալիհի միւթէֆէրիգանըն րույէթի զըմնընտա. պազը գօմիսիօնլար թէսիսինի իսթիլզամ իթմիշ իսէտէ, միլլէթին իսլահը ահվալինէ տաիր վուգու պուլան իշպու թէմայիւլաթըն, Միլլէթ մէմուրլէրինին իգթիտար ու վէզայիֆի մախսուսալէրի թային օլունմատըղը հալտէ, կէրէք Միլլէթ Իտարէսինին գըթաթը մուխթէլիֆէսի պէյնինտէ, վէ կէրէք պու Իտարէ իլէ Միլլէթ արասընտա իգաի միւնազաաթտէն խալի օլմայաճաղը, վէ պունըն իսէ հէր թարաֆա սիրա օլան հուգուգըն իճրասընտա պիր թագըմ նիզամսըզլըգլար իլէ Իտարէճէ իխթիլալ վէ իղթիշաշը միւսթէլզիմ օլաճաղը տէրքեար օլուպ, իշթէ շու էսպապը իխթիլաֆ վէ միւնազաանըն մէնի զուհուրիյլէ հէր թարաֆ իտտիաարընըն տէֆի մազարրաթը մագսատընա մէպնի, Տէվլէթի Ալիյէ քեաֆֆէի սունուֆը թէպաասը հագգընտա պիտըրիղ պույուրտըղը հիմէմի միւշֆիգանէսի մուգթէզասընճա, Միլլէթին ատաթը մէրիյէյի րուհանիյէ վէ ճիսմանիյէսինէ վէ հէմտէ գատիմտէն պէրու Միլլէթճէ ճարի օլան ուսուլէ մութապըգ պիր նիզամնամէ գալէմէ ալընմագ իւզրէ մուխթէլիթ պիր գօմիսիօն թայինինի լազըմէտէն ատտ էյլէմիշ տիր։ Պինաէն ալէյհ Տէվլէթի Ալիյէյէ լիճալիթթաշագրիգ արզ ու իպատէ

վօրութեանց, նաև ի վաղուց անտի ընդունուած ընթացքին համաձայն Սահմանադրութիւն մը պատրաստուի։

Արդ՝ խառն Ցանձնաժողովը պատշաճ կը դատէ որ վաւերացման համար Բարձրագոյն Դրան մատուցուած Սահմանադրութեան ուրուագծին համեմատ՝

Ա. Պատրիարքին՝ 'ի մէջ Տէրութեան և Ազգին միջնորդ ըլլալու պաշտօնը ըստ առաջին դրութեան մնայ։

Բ. Ընդհանուր ժողովոյ կազմութիւնը առաջինէն աւելի կանոնաւոր կերպիւ նորոգուի։ Եւ Ազգային երեսփոխանները ԵՍՆԱՖՆԵՐԷՆ ընտրուելու տեղ (ըստ որում ԵՍՆԱՖՆԵՐՈՒՆ վիճակը նոյնը չէ ինչ որ առաջ էր), Ցունաց Ազգին մէջ գործադրուած եղանակէն գուցէ աւելի կանոնաւոր և օրինաւոր կերպով՝ Եկեղեցեաց ժողովուրդներէն (այսինքն Թաղերէն) ընտրուին։

Եւ որովհետև դուրսերը բնակող Հայ ժողովուրդները իրաւամբ կը գանգատին թէ Պատրիարքարանի որոշումներուն խորհրդակցութենէն և մասնակցութենէն բոլորովին զուրկ են. Երեսփոխաններուն մէկ մասը գաւառներուն կողմէն ընտրուին. և Կոստանդնուպօլսոյ Թաղերուն Երեսփոխանաց վրայ աւելցուին։ Եւ ժողովոյն Կրօնական մասը այսինքն անդամոց քսանը՝ Կոստանդնուպօլիս գտնուող Եկեղեցականներուն կողմէն ընտրուին. որով ընդհանուր ժողովոյ անդամոց թիւը ընդ ամենը հարիւր քառասունի կամփոփուի։

Ասոնց պաշտօնը տասն տարի տևէ. և ամէն տարի տասներորդ մասը փոխուելով նորէն ընտրութիւն ըլլայ։

Ընդհանուր ժողովը անուանէ թէ զՊատրիարք և թէ անոր նախագահութեամբը գործող Ազգային երկուց ժողովոց անդամները. և անոնց գործողութեանց վերատեսչութիւն ընէ։

Գ. Կրօնական գործոց տեսչութիւնը՝ Կրօնական

գըլընմըշ օլան նիզամնամէ լայիհասը մուճէպինճէ Պատրիգին Տէվլէթի Ալիյէ իլէ Միլլէթ պէյնինտէ վասըթա օլմազ հայսիյէթի սապըգը վէճհիլէ իպգա օլընուպ, Մէճլիսի Ումումինին թէշքիլի տախի էվվէլքի հալինին տահա պիր մունթազամ սուրէթտէ թէճտիտինտէն իպարէթ օլըըղը միսիլլու, Միլլէթ վէքիլլէրինին տախի՝ էսնաֆըն անվալը սապըգալարընտա վուգու պուլմուշ օլան թէպէտտիւլ վէ թաղայիւրէ մէյանի, էսնաֆճա ինթիխապ օլընաճաղ եէրտէ, Ռում միլլէթինտէ իճրա օլընան սուրէթտէն պէլքի տահա զիյատէ նիզամ վէ մէշրուիյէթէ մուվաֆըգ օլարագ, Քիլիսա ճէմաաթլարը թարաֆընտան թային վէ ինթիխապ օլընմալարը։

Վէ թաշրա ճէմաաթլարընըն, Պատրիգհանէ միւզաքէրաթընտա մէտխալ վէ միւշարէքէթտէն քեամիլէն մահրում օլտուգլարընտան պահսիլէ, վուգուա կէլէն հագլու շիքեայէթլէրինէ մէպնի՝ Թաշրալարտա տախի պիր մըգտար վէքիլլէր ինթիխապիյլէ Տէրի Սաատէթ ճէմաաթլարը վէքիլլէրինէ իլավէ գըլընմասը, վէ Մէճլիսի Ումումի ազասընըն գըսմը րուհանիսի, եանի եիկիրմի նէֆէրի, Տէրի Սաատէթտէ պուլընան էհլի քիլիսա թարաֆընտան ինթիխապ օլընմագ իւզրէ, իւզգըրգ նէֆէրէ թէնզիլ օլընուպ, միւտտէթի մէմուրիյէթլէրի օն սէնէ միւտտէթէ օլարագ, հէր սէնէ պիր իւշրինին թէպտիլէն ինթիխապ օլընմասը։

Վէ Մէճլիսի Ումումինին կէրէք Պատրիգի վէ կէրէք մաայէթինտէ պուլընաճագ իքի Մէճլիսին ազասընը թային իլէ, պունլարըն մուամէլաթը վագըլարընա նէզարէթ էյլէմէսի։

Վէ մէզգուր ճիսմանիյէ քույէթինին՝ Մէճլիսի

ժողովոյն, քաղաքական գործոց տեսչութիւնը՝ Քաղաքական ժողովոյն, և խառն գործոց տեսչութիւնն ալ՝ յիշեալ երկու Ժողովներուն մէկտեղ գալովը կազմուած Խառն ժողովոյն վերաբերեալ ըլլայ։

Դ. Կրօնական և Քաղաքական ժողովները իրենց ձեռնհասութեան շրջանակին մէջ գտնուած թէ Եկեղեցեաց ժողովուրդներուն (Թաղականներուն) և թէ Եկեղեցիաց, դպրատանց, հիւանդանոցաց, վանօրէից և ասոնց նման ուրիշ տեղեաց ազգային գործերուն ամենն ալ Տեսուչ և Թաղական խորհուրդներու միջնորդութեամբ տնօրինեն։

Ե. Վարչութեան կեդրոնը Ազգային Պատրիարքարանն ըլլայ։

Պատրիարքը՝ իբրև պաշտօնական Գլուխ Պատրիարքարանի՝ թէ Ընդհանուր ժողովոյն և թէ Ազգային կրկին Ժողովներուն նախագահութիւն ընէ. և Ազգին ուղղակի կամ անուղղակի վերաբերեալ ամեն գործերը տնօրինէ ընդ վերատեսչութեամբ Ընդհանուր ժողովոյ։

Զ. Գաւառական ժողովրդոց Վարչութիւնը Կեդրոնական Վարչութեան հետ կապուած ըլլայ։ Եւ գաւառներուն մէջ Առաջնորդները նախագահութիւն ընեն տեղական Ժողովներուն, որոնք պիտի կարգադրուին ըստ տրամադրութեանց Կոստանդնուպօլսոյ ժողովոց, և նոյն (տեղական) Ժողովոց գործերն ալ տնօրինեն։

Է. Գաւառական ժողովները՝ կեդրոնական Վարչութեան, և սոյն Վարչութեան Խորհուրդներուն ամեն մէկը՝ որ ժողովոյ վերաբերի՝ նոյն ժողովոյն. և Ազգային ժողովները՝ Ընդհանուր ժողովոյն. և Պատրիարքը մէկ կողմէն Կայսերական Տէրութեան, և միւս կողմէն (Ընդհանուր ժողովոյ միջնորդութեամբ) Ազգին պատասխանատու ըլլան։

Ը. Եւ որովհետև Կայսերական Տէրութիւնը Հայոց Ազգին համար տալու հրամաններուն գործադրութեան

ճիսմանիյէ, վէ մէվատտը րուհանիյէնին՝ Մէճլիսի րուհանիյէ, վէ մէվատտը մուխթէլիթէնին տախի՝ մէզքիւր իքի մէճլիսին իճթիմաիյլէ թէշէքքիւլ իտէն Մէճլիսի Մուխթէլիթէ աիտ օլմասը։

Վէ Մէճլիսէյնի մէզքիւրէյնին հէր պիրի բէնտի սաբըքի իքթիզասը տախիլինտէ օլարագ, կէրէք քիլիսա ճէմաաթլարընտա վէ կէրէք քիլիսա վէ մէքթէպ վէ խասթախանէ վէ մանասթըրլար միւլքլու սաիր մահալլէրտէ միլլէթճէ զուհուր իտէն քաֆֆէի մէսալիհի գոմիսիօնլար վէ քիլիսա ճէմիյէթլէրի վասըթասիյլէ իտարէ իթմէլէրի։

Վէ մէրքէզի Իտարէ Պատրիքխանէ օլուպ, Պատրիգին տախի՝ Պատրիքխանէնին րէիսի րէսմիսի մագամընտա պուլունարագ կէրէք Մէճլիսի Ումումիյէ վէ կէրէք մայիյէթինտէ օլան մէճլիսլէրէ իճրաի րիյասէթլէ տօղրուտան տօղրույա վէ եախուտ պիլվասըթա միլլէթէ մութաալլիգ քաֆֆէի մէսալիհի Մէճլիսի Ումումինին թահթը նէզարէթինտէ օլարագ րուէթ էյլէմէսի, վէ թաշրա ճէմաաթլարընըն իտարէսի՝ մէրքէզի մէզքիւրէ մէրպութ օլուպ, էյալաթտէ մարխասալարըն՝ Տէրի Սաատէթ մէճլիսլէրինին էսասը իւզէրինէ թանզիմ օլունաճագ օլան մահալլի մէճլիսլէրինէ րիյասէթ, վէ օլ մէճլիսլէրին մէսալիհինի րուէթ իթմէլէրի։

Վէ Թաշրա մէճլիսլէրինին՝ Իտարէի մէրքէզիյէսէն, վէ իշպու Իտարէ Գօմիսիօնլարընտան հէր պիրինին՝ աիտ օլտըղը մէճլիստէն, վէ Պատրիգին տախի՝ պիր թարաֆտան Տէվլէթի Ալիյյէտէն վէ տիկէր թարաֆտան Մէճլիսի Ումումի վասըթասըյլէ Միլլէթտէն մէսուլ օլմալարը, վէ Տէվլէթի Ալիյյէնին Միլլէթ հագգընտա սատըր օլան ահքեամըն թէնֆիզի զըմընտա վասըթաի թապլիյէ վէ Միլլէթ Իտարէսինին րէիսի ասլի օլան Պատրիգէ խիթապ իլէ սիւալ պույուրաճագը մէվատտ

ընական միջնորդ և Ազգային Վարչութեան գլուխ Պատրիարքը կը ճանչնայ և անոր կուղղէ իր հարցումները. եթէ Տէրութիւնը Պատրիարքին հրամայէ որ հարցուցած խնդրոյն վրայ իր (այսինքն Պատրիարքին) կարծիքը յայտնէ, Պատրիարքը՝ իր նախագահութեամբը գործող Ժողովներուն որոշման համեմատ շարժի։ Իսկ եթէ Ազգին կարծիքն առնելով Տէրութեան հաղորդել հրամայէ, այն ժամանակ Պատրիարքը Ընդհանուր Ժողով հրաւիրէ և այն Ժողովոյն վերջնական որոշումները յայտնէ Տէրութեան։

Թ. Ազգային Վարչութիւնը երեք տեսակ պարտաւորութիւն ունի. որոց առաջինն է առ Կայսերական Տէրութիւն. այս է՝ Ազգը կատարելապէս հաւատարիմ հպատակութեան մէջ պահել, և Ազգին թէ ընդհանրապէս և թէ ի մասնաւորի ամեն մէկ անհատներուն իրաւանց և արտօնութեանց՝ Տէրութեան կողմէն պահպանութիւնը ապահովցընել։ Երկրորդն է առ Ազգն. որ է ճշմարտապէս գթութեամբ և հայրաբար վարուիլ։ Եւ երրորդն է առ Աթոռն Էջմիածնի. այն է՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կրօնական կանոնաց և օրինաց համեմատ վարուիլ։

Ահա ասոնք են Սահմանադրութեան այն կէտերը զոր Խառն Յանձնաժողովը պատշաճ կը դատէ. և զոր կը հաստատէ միւս Յանձնաժողովը, որ Ձեր Վսեմութեան հրամանին համեմատ՝ ի դիմաց Ազգին Սահմանադրութեան վրայ իւր դիտողութիւնները Բարձրագոյն Դրան ներկայացնելու համար կազմուեցաւ։

Ի Կ. Պոլիս 16 Փետրվար 1862։

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Անդամք Բարձրագոյն Դրան Յանձնաժողովոյ

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԻԿՈՄԻԴԻՈՅ
(Տեղապահ Պատրիարքական Աթոռոյ Կոստանդնուպօլսոյ)
ՅՈՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ
ՅՈՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅ ՓԱՓԱԶԵԱՆ
(Իւսկիւտար Ս. Խաչ եկեղեցւոյ)
ՅՈՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅ ՀԻՒՆՔԵԱՐՊԷՅԷՆՏԵԱՆ
(Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ ի Գալատ)

ԳԷՈՐԳ ԵՐԱՄԵԱՆ — ՅՈՀԱՆՆԷՍ ՏԱՏԵԱՆ
ՍԵՐՈՎԲԷ ՎԻՉԷՆԵԱՆ — ԳՐԻԳՈՐ ԱՂԱԹՕՆ
ՅԱԿՈԲ ՄՈՒՊԱՀԵԱՃԵԱՆ — ՅԱԿՈԲԻԿ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ՅՈՀԱՆՆԷՍ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ — ԳԱՍՊԱՐ ԿԻՒՄԻՒՇՃԻ

Անդամք Ազգային Յանձնաժողովոյ

ԱՂԱԹՕՆԵԱՆ ՄԿՐՏԻՉ — ՄԻՆԱՍԵԱՆ ՄԻՆԱՍ
ԱՍԼԱՆԵԱՆ ՍՏԵՓԱՆ — ՌՈՒՍԻՆԵԱՆ
ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄԱՆՈՒԿ — ՍԻՒՐԷՆԵԱՆ ՅՈՀԱՆՆԷՍ
ՕՏԵԱՆ ԳՐԻԳՈՐ

հագգընտա եա րէյինի պէյան էյլէմէկէ Պատրիգի տավէթ պույուրաճագընտան, պու Թագտիրճէ Պատրիգին մայէթինտէ պուլընան մէճլիսլէրին գարարընա թաթպիգան հարէքէթ էյլէմէսի, վէ եախուտ Միլլէթին րէյինի թահսիլ իլէ ճանիպի Տէվլէթէ թէպլիղ իթմէսի էմր ու թէնպիհ պույրուլաճագընտան՝ պու հալտէ տախի Պատրիգին Մէճլիսի Ումումիյի տաւէթլէ պու մէճլիսին նէթիճէի միւզաքէրաթընը արզ ու պէյան էյլէմէսի։

Վէ Իտարէի մէզքիւրէնին իւչ նէվ վէզաիֆի օլուպ, Տէվլէթէ օլան վազիֆէսի՝ Միլլէթի Տէվլէթի Ալիյէյէ քէմալի սըտգ վէ իթաաթ հալինտէ թութմագ, վէ Միլլէթին վէ կէրէք էֆրատընըն հուգուգ վէ իմթիյազաթընըն ճանիպի Տէվլէթտէն վըգայէսի մատտէսինի թէմին իթմէք, վէ Միլլէթէ օլան վազիֆէսի՝ հագիգաթէն պիր սուրէթի միւշֆիգանէտէ հարէքէթ էյլէմէք, վէ Էջմիածին մագամը հագգընտա օլան վազիֆէսի տախի՝ Էրմէնի Քիլիսասը ուսուլ վէ ատաթը րուհանիյէսինէ թէվֆիգան տավրանմագտան իպարէթ օլմասը խուսուսլարը Գոմիսիոնը մէզքիւր թարաֆընտան թէնսիպ, վէ էմրի Ալիյէի իւզրէ՝ Միլլէթ թարաֆընտան իշ պու նիզամնամէ հագգընտա միւթալաասընը Պապը Ալիյէ թագտիմ իթմէք իւզրէ թէշքիլ վէ ինթիխապ օլընան Գոմիսիոն թարաֆընտան թաստիգ գըլընմըշ օլմաղլէ, օլ պապտէ վէ հէր հալտէ էմրու ֆէրման հազրէթի մէնլէհուլ էմրին տիր։

ֆի 29 Շապան 1278

Ի Մ Զ Ա Լ Ա Ր

Պապը Ալի Գոմիսիոնը Ազասը

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԻԿՈՄԻԴԻՈՅ
(Տեղապահ Պատրիարքական Աթոռոյ Կոստանդնուպօլսոյ)
ՅՈՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ
ՅՈՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅ ՓԱՓԱԶԵԱՆ
(Իւսկիւտար Ս. Խաչ եկեղեցւոյ)
ՅՈՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅ ՀԻՒՆՔԵԱՐՊԷՅԷՆՏԵԱՆ
(Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ ի Գալատ)

ԳԷՈՐԳ ԵՐԱՄԵԱՆ — ՅՈՀԱՆՆԷՍ ՏԱՏԵԱՆ
ՍԵՐՈՎԲԷ ՎԻՉԷՆԵԱՆ — ԳՐԻԳՈՐ ԱՂԱԹՕՆ
ՅԱԿՈԲ ՄՈՒՊԱՀԵԱՃԵԱՆ — ՅԱԿՈԲԻԿ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ՅՈՀԱՆՆԷՍ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ — ԳԱՍՊԱՐ ԿԻՒՄԻՒՇՃԻ

Միլլէթ թարաֆընտան մինթէխապ Գոմիսիոնը Ազասը

ԱՂԱԹՕՆԵԱՆ ՄԿՐՏԻՉ — ՄԻՆԱՍԵԱՆ ՄԻՆԱՍ
ԱՍԼԱՆԵԱՆ ՍՏԵՓԱՆ — ՌՈՒՍԻՆԵԱՆ
ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄԱՆՈՒԿ — ՍԻՒՐԷՆԵԱՆ ՅՈՀԱՆՆԷՍ
ՕՏԵԱՆ ԳՐԻԳՈՐ

ՕՐԻՆԱԿ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՐԱՆ

Առ խոհեմազարդ Տեղապահ Պատրիարքի Հայոց.

Հայոց Պատրիարքարանի վիճակին և Վարչութեան բարեկարգութեանը վրայօք, ամէն առաջ Բարձրագոյն Դուռը կազմուած Յանձնաժողովին գրի առած Սահմանադրութիւնը՝ լոկ աշխարհական գործոց վերաբերեալ քանի մը կէտերը սրբագրուելէն ետքը, Վեհափառ Արքային մատուցուեցաւ. և Նորին Կայսերական Վեհափառութեան կողմէն ընդունուելով, պարունակած նիւթերուն այսուհետև կանոն բռնուիլը Ձեր Սրբազնութեան յանձնելու Արքունի հրամանը շնորհուեցաւ։

Ուստի յիշեալ Սահմանադրութիւնը ներփակեալ առ Ձեզ ուղարկելով՝ կը պատուիրեմք որ պարունակած նիւթերուն այսուհետև անթերի գործադրութեանը հսկելով, ըստ Բարձրագոյն կամաց Օգոստափառ Կայսեր՝ ինչ որ պարտ ու պատշաճ է ի գործ դնելու հոգ տանիք։

17 Մարտ 1863։

ՍՈՒՐԷԹԻ ՊՈՒՅՐԸԼԹԸԻ ԱԼԻ

Էրմէնի Պաթրիգի Գայիմմագամը Տիրայէթլու Էֆէնտի.

Էրմէնի Պաթրիգխանէսինին խալանը ահվալ վէ իտարէսինէ տաիր օլարագ, մուգտատէմա Պապը Ալիտէ Թէշքիլ օլընան գօմիսիօնըն գալէմէ ալտըղը նիզամնամէնին սըրֆ ումուրը տիւնեէվիյէտէն օլան պազը մատտէլէրի Թասհիհ օլընտըգտան սօնրա, հուզուրը մաալի մէվֆուրը հազրէթի Փատիշահիյէ լէտ՛էլ՛արզ նէզտի Ալիի Ճէնապը Փատիշահիտէ րէհինի գապուլ օլմասըյլէ՝ մէվատտը մունտէրիճէսինին պատէզին նիզամ իթթիխազ օլընմասը խուսուսընըն Թարաֆը Տօսթանէլէրինէ հավալէսինէ էմր ու ֆէրմանը Հիւմայունը հազրէթի Միւլիւքիանէ միւթաալլիգ վէ շէրէֆսուտուր պույրուլմըշ, վէ մէզքիւր Նիզամնամէ լէֆֆէն կէօնտէրիլմիշ օլմագլա, պէր մանթուգը իրատէի սէնիյէի Ճէնապը Փատիշահի Նիզամնամէի մէզքիւրըն համի օլտուղը մէվատտըն պատէմա տէսթուր ու ամէլ թութըլարագ, մուգթազըյաթընըն իֆասընա հիմմէթ էյլէյէլէր տէյու։

Ֆի 9 Շէվվալ 1279։

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Օսմանեան Տէրութեան իր Մահմէտական չեղող հպատակներուն շնորհած արտօնութիւնները՝ հաւասար են ըստ սկզբանց ամենուն համար. բայց անոնց գործադրութեանը եղանակը՝ իւրաքանչիւր Ազգի մէջ ըստ պահանջման սեպհական սովորութեանց իւրեանց, մասնաւոր կերպով անօրինուած է։

Հայոց Պատրիարքը գլուխ է իր Ազգին. և մասնաւոր պարագաներու մէջ՝ Տէրութեան հրամանաց գործադրութեան միջնորդ։ Սակայն Պատրիարքարանի մէջ կրօնական գործոց համար՝ Կրօնական Ժողով մը, և քաղաքական գործոց համար՝ Քաղաքական Ժողով մը կան հաստատուած։ Այս երկու Ժողովները ի պահանջել հարկին միանալով՝ Խառն Ժողով կը կազմեն։ Թէ Պատրիարքը և թէ այս երկու Ժողովոց անդամները՝ Ազգին պատուաւոր անձանցմէ բաղկացեալ մէկ Ընդհանուր Ժողովոյ մէջ կ'ընտրուին։

Որովհետև յիշեալ Ժողովներուն պաշտօնն ու պարտաւորութիւնքը, և կազմութեան եղանակը բաւական կանոններով սահմանուած չեն. և այս պատճառաւ զանազան անտեղութիւններ, և մասնաւորապէս Ընդհանուր Ժողով կազմելու մասին տեսակ տեսակ դժուարութիւններ տեսնուած են։

Որովհետև բարեկարգութեանց վերաբերեալ կայսերական հրովարտակին*) համեմատ՝ իւրաքանչիւր

*) Խաթթի Հիւմայուն, 6/18 Փետրվար 1856։

ՄՈՒԳԱՏՏԻՄԷ

Տէվլէթի Ալիյէնին թէպաասի գայրը Միւսլիմէսի հագգընտա իհսան պույուրուլըշ օլտըղը իմթիյազաթ՝ էսասէն ճիւմլէսի հագգընտա միւսավաթ իւզրէ իսէտէ, հէր միլլէթտէ պունըն սուվէրի իճրաիյէսի ուսուլ վէ ատաթը մախսուսէլէրի իգթիզասընճա, պիր շէքլի մախսուսատէ պուլընմըշ տըր։

Էրմէնի Պատրիգի՝ միլլէթինին րէիսի, վէ ահվալը մախսուսէտէ Տէվլէթի Ալիյէնին վասըթաի թէնֆիզի ահքեամը օլուպ, անճագ Պատրիգխանէտէ ումուրը րուհանիյէ իչուն պիր մէճլիսի րուհանի, վէ ումուրը ճիսմանիյէ իչուն պիր մէճլիսի ճիսմանի վար տըր։ Վէ լէտ էլ իգթիզա պու իքի մէճլիս պիրլէշէրէք մէճլիսի մուխթէլիթ ատը օլընուր։ Կէրէք Պատրիգ վէ կէրէք պու մէճլիսլէր ազասը միւթէպէրանը միլլէթտէն միւրէքքէպ պիր մէճլիսի ումումիտէ ինթիխապ գըլընըր։

Պու մէճլիսլէրին վէզաիֆի վէ սուվէրի թէշքիլի հագգընտա նիզամաթը քեաֆիյէ օլմատըղընտան տիւրլիւ ույղունսըզլըգլար զուհուրա կէլուպ, ալէլ խուսուս մէճլիսի ումումինին թէշքիլինտէ էնվաը միւշքիլաթ կէօրիւլտիւկինտէ, վէ ըսլահաթ ֆէրմանը Ալիսի*) հիւքմինճէ, հէր ճէմաաթըն պիր միհլի մուայյէն իչինտէ, իմթիյազաթ վէ մաաֆիյաթը հագըրէլէրինին մուայյէնէսինէ իգթիտար իլէ, վագթըն վէ ասարը մէտէնիյէթ

*) Խաթթի Հիւմայուն. Էվայիլի Ճէմազիւլ ախր 1272

Հասարակութիւն իր ունեցած արտօնութիւններն ու առանձնաշնորհութիւնները՝ որոշեալ ժամանակի մէջ քննելով, և ժամանակին բերմանցը և քաղաքակրթութեան արդեանցն ու արդի լուսաւորեալ վիճակին պահանջած բարեկարգութիւնները խորհրդածութեամբ որոշելով, Բարձրագոյն Դրան ներկայացընելու պարտաւորուած է։

Որովհետև ամեն մէկ Ազգին Կրօնական Գլուխներուն շնորհուած իշխանութիւնն ու կարողութիւնը, իւրաքանչիւր Հասարակութեան ապահովուած նոր վիճակին ու դրութեան համաձայնեցնել պէտք է։

Ուստի Հայոց Ազգէն քանի մը պատուաւոր անձինքէ Յանձնաժողով մը կազմուեցաւ, որ Ազգին համար պատրաստեց սա հետևեալ Սահմանադրութիւնը։

վէ մալումաթը միւքթէսէպէնին իճապ իթթիրանկի ըսլահաթը պիլ միւզաքերէ արզ էյլէմէլէրի, վէ բու էսասի րուհանիյէյէ իհտա պուլունմըշ օլան րուխսաթ վէ իսթիտարըն իշպու ճէմաաթլարա թէմին օլունմըշ օլան հալ վէ մէվգիի ճէտիտ իլէ թէվֆիգ օլունմասը լազըմ կէլտիկինտէ մէպնի, Էրմէնի միլլէթի միւթէպէրանընտան միւրէքքէպ պիր գոմիսիօն թէշքիլիյլէ, Էրմէնի միլլէթի հագգընտա թէրթիպ օլունան Նիզամնամէ լահիհասը տըր։

ԱԶԳԱՅԻՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ

—

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ

Ա.

Ազգին ամէն մէկ անհատը առ Ազգը պարտաւորութիւններ ունի. Ազգն ալ իր կողմէն առ ազգային ամէն մէկ անհատ պարտաւորութիւններ ունի. դարձեալ ամէն մէկ անհատ իրաւունքներ ունի Ազգէն եւ Ազգն անհատներէն։

Ուստի Ազգն ու ազգայինք փոխադարձ պարտեօք կապուած են իրարու հետ. անանկ որ մէկին պարտաւորութիւնքը միւսին իրաւունքն են։

Բ.

Ազգայնոց պարտականութիւնն է՝ Ազգին պիտոյիցը պահանջած ծախքերուն մասնակից ըլլալ իւրաքանչիւր իր կարողութեան չափովը. Ազգին խնդրած ծառայութեանցը յօժարակամ յանձնառու ըլլալ, եւ անոր ըրած տնօրէնութեանցը սիրով հնազանդիլ։

Ազգայնոց այս պարտաւորութիւնքը Ազգին իրաւունքն են։

ՆԻԶԱՄՆԱՄԷԻ

ՄԻԼԼԷԹԻ

ԷՐՄԷՆԻՅԱՆ

—

ՄԷՊԱՏԻԻ ԷՍԱՍԻՅԷ

ՊԷՆՏԻ ԷՎՎԷԼ

Էֆրատը Միլլէթտէն հէր պիրի Միլլէթէ վէ Միլլէթին տախի օլ էֆրատըն հէր պիրինէ վաճիպաթը զիմմէթի օլտըղը միսիլլու, էֆրատը մէրգումէտէն հէր պիրինտէ հուգուգը վար տըր. պինաէն ալէյհ՝ կէրէք միլլէթ վէ կէրէք էֆրատը միլլէթ վաճիպաթը միւշարէքէ իլէ եէքտիկէրինէ մէրպութ օլմալըէ, պիրինին վաճիպաթը զիմմէթի տիկէրինին հուգուգը, եանի միլլէթին վաճիպաթը զիմմէթի էֆրատը միլլէթին,- քէզալիք էֆրատը մէրգումէնին վաճիպաթը զիմմէթի՝ միլլէթին հուգուգը տըր։

ՊԷՆՏԻ ՍԱՆԻ

Էֆրատը միլլէթին վաճիպաթը զիմմէթի, էվվէլա հէր պիրինին՝ իկթիտարը միլլէթին մէսարիֆի մուգթազիյէսինէ ալա գատրինի հիսսէտար օլմասը, սանիա՝ միլլէթին մաթլուպաթը օլան խըզմէթլէրի հիւսնի րըզասը իլէ տէրուհտէ էյլէմէսի, սալիսա՝ միլլէթին թէտապիրի մուգարրէրէսինէ էզ ճան ու տիլ իմթիսալ էյլէմէսի խուսուսլարընտան իպարէթ օլուպ, էֆրատը մէրգումէնին իշպու վաճիպաթը զիմմէթի միլլէթին հուգուգը տըր։

Գ.

Ազգին պարտականութիւնն է՝ ազգային բարոյական, մտաւորական եւ նիւթական պիտոյիցը հոգ տանիլ. Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւնքը անարատ պահել. մարդկութեան հարկաւոր եղած անհրաժեշտ գիտելեաց ուսումը՝ ամեն աստիճանի թէ մանչ եւ թէ աղջիկ տղայոց հաւասարապէս ծաւալել. ազգային հաստատութիւնքը պայծառ պահել. հասոյթներն օրինաւոր կերպով աւելցնել, եւ ծախքերն իմաստութեամբ տնտեսել. Ազգին ծառայութեանը մշտենջենապէս նուիրեալ անձանց կացութիւնը բարւոքել եւ ապագայն անդորրել. կարօտելոց խնամ տանիլ հայրաբար, ազգային մէջ ծագած վէճերն արդարասիրութեամբ խաղաղել, եւ վերջապէս ազգային յառաջադիմութեան անձնանուէր աշխատիլ.

Ազգին այս պարտաւորութիւնքը ազգային իրաւունքն են։

Դ.

Զազգը փոխանորդաբար ներկայացնող, եւ այս փոխադարձ պարտեաց կանոնաւոր կատարմանը տեսուչ ու մատակարար կարգեալ իշխանութիւնը՝ ***ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ*** կը կոչուի. որում յանձնուած է Օսմանեան Տէրութենէն յատուկ արտօնութեամբ, եւ Սահմանադրութեան միջոցաւ, Թուրքիոյ Հայոց Ներքին գործերու տնօրէնութիւնը։

ՊԷՆՏԻ ՍԱԼԻՍ

Միլլէթին վաճիպաթը զիմմէթի, եա՛նի՝ էֆրատը միլլէթին իհթիյաճաթը էտէպիյէ վէ ֆէննիյէ վէ մատտիյէսինէ սարֆը սայ իթմէք, սանիյա՝ Էրմէնի քիլիսասընըն ագայիտ վէ րիվայաթընա լէքէ վէ սաքաթէ կէթիրմէմէք, սալիսա էպնաի պէշէրէ միւճէրրէտ լազըմ օլան ֆիւնուն ու մաարիֆին հէր սընըֆ էրքէք վէ գըզ չօճուգլարընա միւսավաթ իւզրէ էօյրէթմէք, րաբիա՝ քիլիսա վէ խաստախանէ վէ մէքթէպ վէ էմսալի իմարաթ վէ խայրաթը միլլիյէյի շէն վէ մամուր հալտէ թութմագ, վէ պունլարըն վարիտաթընը պէր վէֆգը շէրի արթըրմագ, վէ մասարիֆինի մագուլ սուրէթլէ թէտպիր վէ թէսվիյէ էյլէմէք, խամիսա՝ խատէմաթը միլլիյէյէ տայիմի վէճհիլէ մէբզուլ օլան էշխասըն հալը հազըրընը ըսլահ, վէ հալը միւսթագպէլինի թէմին իթմէք, սատիսա՝ վարուպէրտէ տուշլընան ֆուգարայը միւշֆիգանէ գայըրմագ, սապիա՝ էֆրատը միլլէթ պէյնինտէ զուհուր իտէն միւնազաաթը հագգանիյէթլէ թէսքին իթմէք, վէլհասըլ միլլէթին իլէրլէմէսինէ ճանսիփարանէ չալըշմագ խուսուսլարընտան իպարէթ օլուբ, միլլէթին իշպու վաճիպաթը զիմմէթի էֆրատը միլլէթին հուգուգը տըր։

ՊԷՆՏԻ ՐԱԲԻ

Մին թարաֆը միլլէթ մուրախխասլէրիլէ հէյէթը միլլէթ մէսալիհինէ պուլունան, վէ վաճիպաթը միւշարէքէի մէզքիւրէնինի պէրմուճիպ նիզամ իճրա վէ իտարէյի խուսուսընա նազըր վէ միւտէպպիր նասպ օլունան հիւքիւմէթէ իտարէի միլլիյէ թէսմիյէ օլունուբ, մէմալիքի մահրուսէի Շահանէտէ Էրմէնի միլլէթինին ումուրը տախիլիյէսինին հիւսնի թէտպիր վէ իտարէսի՝ տէվլէթի Ալիյէ թարաֆընտան մախսուս իմթիյազ վէ նիզամնամէ ի-

Ե.

Վարչութիւնը՝ ազգային ըլլալու համար, պէտք է ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ըլլայ։

Զ.

Երեսփոխանական Վարչութեան հիմը՝ ԻՐԱՒԱՆՑ ու ՊԱՐՏԵԱՑ սկզբունքն է, որ *արդարութեան* սկզբունքն է. իր ոյժը ձայնից բազմութեան մէջ կը կայանայ, որ *օրինաւորութեան* սկզբունքն է։

լէ հիւքիւմէթը մէզքիւրէ եօնթէմինէ իհալէ վէ թէվճիհ պույուրըլմըշ տըր։

ԲԷՆՏԻ ԽԱՄԻՍ

Իտարէ՝ միլլէթճէ օլմաք իչիւն՝ ՄՈՒՐԱԽԽԱՍԻՅԷԹ ուսուլի իւզրէ օլմասը լազըմ կէլիւր։

ԲԷՆՏԻ ՍԱՏԻՍ

Մուրախխասիյէթ ուսուլի իւզրէ թէշքիլ օլընան իտարէի միլլիյէնին էսասը՝ մէպատիի վաճիպէ վէ հուգուգ տըր քի, մէպատիի հագգանիյէթ օլուպ, գուվվէթի էքսէրիյէթի՝ արատէ գարարկիր օլուր, վէ պու տախի մէպատիի մէշրուիյէթ տիր։

ԳԼՈՒԽ Ա.

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ա. ՊԱՏՐԻԱՐՔ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՐԱԺԱՐՈՒՄ

Յօդուած 1. *Կոստանդնուպօլսոյ Պատրիարքը բուն Ազգային ժողովոյ Նախագահն է, և անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ. և մանաւոր պարագաներու մէջ՝ Տէրութեան հրամանաց գործադրութեան միջնորդն է։*

Ուստի պէտք է որ Պատրիարք ընտրուելու անձը՝ ընդհանուր Ազգին վստահութեան ու յարգանացն արժանի ըլլալու համար՝ Պատրիարքական Աթոռին վայելուչ ամէն յատկութիւններն ու արժանաւորութիւնն ունենայ, և ի վաղուց անտի Պատրիարքութեան յատկացեալ Եպիսկոպոսաց դասէն ըլլայ. միանգամայն Տէրութեան կատարեալ վստահութեանն արժանաւոր, և գոնէ իւր հօրմէն սկսեալ՝ Օսմանեան հպատակ, և երեսուն ու հինգ տարին լրացուցած ըլլայ։

Յօդ. 2. *Երբ՝ Պատրիարքը վախճանելով կամ հրաժարելով և կամ ուրիշ որ և է պատճառաւ Աթոռը պարապ մնայ, Կրօնական և Քաղաքական ժողովները մէկտեղ գալով Տեղապահ մը կընտրեն, և անոր հաստատութիւնը կը խնդրեն Բարձրագոյն Դռնէն։*

Ընդհանուր ժողովը կընտրէ զՊատրիարք. բայց Կրօնական և Քաղաքական ժողովներն իրաւունք ունին Ներկայացման ցուցակով *մը Ընտրելեաց արժանաւորութեան աստիճանին վրայ կարծիք տալու։*

ՖԱՍԼԸ ԷՎՎԷԼ.

ՏԷՐԻ ՍԱԱՏԷԹ ԷՐՄԷՆԻ ՊԱՏՐԻԳԻՆԻՆ

ՍՈՒՐԷԹԻ ԻՆԹԻԽԱԲԸ ՊԷՅԱՆԸՆՏԱ ՏԸՐ

Պիրինճի մատտէ. *Տէրի Սաատէթ Պատրիգի ինթիխապ օլընաճագ զաթ պիլճիմլէ Միլլէթ մէճլիսլէրինին րիյասէթինի վէ գուվվէի իճրայիյէսինի հաիզ օլարագ, անտան մախսուսէն Տէվլէթի Ալիյէնին վասըթայի թէնֆիզի ահքեամը օլունդուղընդան, ումումմիլլէթին էմնիյէթ վէ իթթիպարընը ճալիպ օլմագ իչուն հէր ճիհէթլէ պու մագամէ լայըգ օլաճագ էվսաֆ վէ հայսիյէթ իլէ մութթասըֆ, վէ էզ գատիմ Պատրիգլիգէ մախսուս օլան պիսկոպօսլարըն սընըֆընտան պուլունմալըլը պէրապէր, Տէվլէթի Ալիյէնին տաապի էմնիյէթի բեամիլէսինէ շայան զէվաթտէն վէ լա ագալլ փէտէրինտէն պէրու ալ Թէպաայի Տէվլէթի Ալիյէտէն պուլընմասը վէ օթուզ պէշ եաշընը թէքմիլ իթմիշ օլմասը լազըմ տըր։*

Իքինճի մատտէ. *Պատրիգին վէֆաթը վէ իսթիֆասը ճիհէթիյլէ վէ խախուտ էսպապը սաիրէյէ մէպնի պատրիգլիք մագամընըն հալի գալտուգընտէ՝ րուհանի վէ ճիսմանի մէճլիսլէրի պիրլէշէրէք, գայիմմագամլըգ իթմէք իւզրէ պիր զաթէ գարար վիրուպ, Թաստիգինի Պապը Ալիտէն իսթիտա իտէր։*

Տէրի Սաատէթ Պատրիգի Մէճլիսի ումումիտէ ինթիխապ օլընուր. Ֆագաթ րուհանի վէ ճիսմանի Մէճլիսլէրինին, ինթիխապ օլընան զէվաթըն տէրէճէի իսթիհգագլարը հագգընտա պիր գըյմաէտամի տէֆթէրի

Պատրիարքի ընտրութիւնը հետեւեալ կերպիւ կըլլայ։

Նախ և առաջ՝ Տեղապահը Օսմանեան հողին վրայ գտնուող բոլոր Եպիսկոպոսաց ցանկը կը շինէ, և իւրաքանչիւրին անուանը առջև՝ ըստ առաջին յօդուածոյ ընտրելութեան համար պահանջուած հանգամանքը նշանակելով, Կրօնական ժողովոյն կը ներկայացընէ զայն։

Այս ժողովն ալ Եկեղեցական համագումար ժողով հրաւիրելով, ընտրելեաց ցուցակ մը կը պատրաստէ գաղտնի քուէարկութեամբ. այսինքն իւրաքանչիւր անդամ թղթոյ մը վրայ կը գրէ այն ամեն Եպիսկոպոսաց անունները՝ զորս կրօնական մասին անընդունելի չհամարիր։ Ետքը՝ քուէհամարն ըլլալով, այն անուններ յատուկ ցուցակի մը մէջ կառնուին քուէից շատութեան կարգաւ։

Տեղապահը յիշեալ կերպիւ պատրաստուած ցուցակը Քաղաքական ժողովոյն կը ներկայացընէ։ Ան ալ՝ նշանակուած անձանց ըստ քաղաքականին արժանաւորութիւնը քննելէն ետքը, ամենէն աւելի արժանաւորներէն հինգ ընտրելի կը զատէ քուէից առաւելութեամբ, և անոնց ցուցակը ընդհանուր ժողովոյն կը ներկայացընէ։

Միանգամայն Եկեղեցական համագումար ժողովոյն պատրաստած առաջին ցուցակն ալ ազգային Ընդհանուր ժողովոյն սրահին մէջ կախուած կըլլայ։ Ընդհանուր ժողովը այս երկու ցուցակներէն՝ ընտրելեաց թէ կրօնական և թէ քաղաքական որպիսութեանց վրայ՝ երկու ձեռնհաս ժողովներուն կարծիքն իմանալով, կընտրէ զՊատրիարք՝ գաղտնի քուէարկութեամբ և

թանզիմիյլէ պէյանի բէյ իթմէկէ հազըրը վար տըր։

Իմդի ինթիխապ պէր վէճհի աթի իճրա գըլընըր։ Շէօյլէքի, էվվէլ էմիրաէ Պատրիգ գայիմմագամը մէճալիսի մահրուսէի Շահանէտէ պուլընան պիլճումլէ պիսկոպօսլարըն էսամիսինի հավի պիր գըթա տէֆթէր թէրթիպիյլէ պունլարըն, պիրինճի մատտէ մուճիպինճէ, ինթիխապ օլունմադա ճիհէթի իսթիհգագլարընը հէր պիրինին իսմինին էօնինէ իշարէթ, վէ տէֆթէրի մէզքիւրը Մէճլիսի րուհանիյէ իպրազ իտէր։

Վէ պու Մէճլիս թարաֆընտան Մէճլիսի ումումիի րուհանի ագտէթ օլունարագ, բէյի խաֆի իլէ պէր վէճհի աթի պիր գըթա էսամի տէֆթէրի թէրթիպ օլունուր. Մէճլիսի մէզքիւր ազաընտան հէր պիրի րուհանիճէ շայանը գապուլ տատ իթտիկի պիսկոպօսլարըն էսամիսինի պիր քեադըտա իւզէրինէ թահրիր իթտիքտէն սօնրա, թասնիֆ բէյ օլունարագ, էսամի մուհարրէրէ, հէր պիրինէ խասըլէթ իթմիշ օլան բէյլէրին քէսրէթինէ կէօրէ, սըրա իլէ պիր տէֆթէրի մախսուսէ տէրճ օլունուր։ Իշպու տէֆթէր գայիմմագամը մումայիլէյհ թարաֆընտան Մէճլիսի ճիսմանիյէ իպրազ օլունուպ, պու Մէճլիս տախի տէֆթէրի մէզքիւրտէ էսամիսի մունտէրիճ օլան զէվաթըն ճիսմանիճէ տէրէճէի գապիլիյէթլէրինի պատէթթահգիգ էն զիյատէ իսթիհգագը օլանլարտան, Պատրիգ ինթիխապ օլունապիլմէք իւզրէ, էքսէրիյէթի արայիլէ պէշ նէֆէրինի թէֆրիգ վէ թայինի, վէ պու տէֆթէրի Մէճլիսի ումումիյէ իպրազ իտէր։

Մէճլիսի ումումիի րուհանինին թէրթիպ իթմիշ օլտըղը տէֆթէր տախի Միլլէթ Մէճլիսի Ումումիսինտէ տիվարէ ասըլմըշ օլտըղընտան, Մէճլիսի Ումումի Պատրիգ ինթիխապընա իպթիտար վէ սալահիյէթի օլան իքի Մէճլիսին տախի ինթիխապ օլունապիլէճէք զէվաթըն կէրէք րուհանի վէ կէրէք ճիսմանիճէ գապիլիյէթլէրի հագգընտա բէյինէ մուտթալի օլարագ, Պատ-

բացարձակ առաւելութեամբ քուէից։

Ընդհանուր Ժողովը կրնայ Գաւառական Ժողովոյն ներկայացուցած ցուցակէն դուրս անձի մը վրայ ալ քուէ տալ. բայց պէտք է որ այն անձին անունը նշանակուած ըլլայ Եկեղեցական Համագումար Ժողովոյն պատրաստած ցուցակին մէջ. վասնզի այս եկեղեցական ցուցակէն դուրս մնացած անձի վրայ ընտրութիւն չկրնար ըլլալ։

Եթէ առաջին անգամ քուէից բացարձակ առաւելութիւն չգոյանայ, երկու առաւելագոյն քուէստացողաց անունները Տեղապահին կողմէն Ընդհանուր Ժողովոյ անդամներուն կը ծանուցուի. և երկրորդ քուէարկութիւնը օրինաւորապէս այն երկուքին վրայ կըլլայ։ Այս երկրորդ քուէարկութեան առեն Ազգային Երեսփոխաններէն անոնք որ չկրնան ներկայ գտնուիլ, կարող են իրենց քուէները ստորագրեալ և կնքեալ նամակաւ առ Ժողովն ուղարկել, կամ Տեղապահին և կամ Ընդհանուր Ժողովոյ Ատենապետին ուղղելով զայն։

Քուէները յատուկ քուէատուփի մը մէջ դրուելէն ետքը՝ քուէհամարը կըլլայ Ընդհանուր Ժողովոյ դիւանին ձեռօք, և նոյն Ժողովոյ մէջէն ընտրուած չորս եկեղեցական և չորս աշխարհական քննիչներու ներկայութեամբ։

Եթէ պատահի որ երկրորդ անգամ քուէարկութեան մէջ երկու անձանց հաւասար քուէ ելնէ, այն ատեն երկուքէն մէկը վիճակաւ կընտրուի։

Յօդ. 3. Ընտրութիւնը կատարուելէն ետքը տեղեկագիր մը կը շինուի՝ զոր բոլոր բազմականք կը ստորագրեն. և Տեղապահի միջնորդութեամբ Բարձրագոյն Դրան կը մատուցուի. և Պատրիարքը կը հաւ-

րիգի րէյի խաֆի վէ էքսէրիյէթի մութլագա՛ի արա իլէ ինթիխապ իտէր։

Մէճլիսի Ումումիտէ, Մէճլիսի Ճիսմանի Թարաֆընտան իպրազ օլունան տէֆթէրին խարիճինտէ օլան պիր զաթ հագգընտա տախի իթա՛ի րէյ օլունապիլիր իսէ տէ, Մէճլիսի ումումիի րուհանի Թարաֆընտան թէրթիպ գըլընմըշ օլան տէֆթէրտէ իսմի մունտէրիճ օլմայան զէվաթըն ինթիխապը ճայիզ օլամայաճաղընտան ով զաթըն իսմինին տէֆթէրի մէզքիւրտէ մուհարրէր օլմասը լազըմ կէլիր։

Էքսէրիյէթի մութլագաի արա իլէ տէֆատա հուսուլէ կէլմէտիկի թագտիրտէ, հագլարընտա էն զիյատէ րէյ խասըլ իթմիշ օլան իքի զաթըն իսիմլէրի Գայիմմագամը մուամիլէյի Թարաֆընտան Մէճլիսի ումումի ազասընա պիլտիրիլիր. վէ տէֆայի սանիյէտէ պու իքի զաթ հագգընտա նիզամէն իթա՛ի րէյ օլունուր։ Իքինճի տէֆա րէյ իթաընտա հազըր պուլունամայան Միլլէթ վէքիլլէրի, րէյլէրինի Գայիմմագամը մուամիլէյէ վէ յախօտ Մէճլիսի Ումումի գալէմ րէիսինէ խիթապէն, կէօնտէրէճէքլէրի պիր գըթա մէմհուր վէ մումզա մէքթուպ իլէ Մէճլիսի մէզքիւրէ թէսլիմ իտէպիլիրլէր։

Րէյ քիւաղըտլէրի մախսուս պիր սանտըգճըյէ վազ օլունտուգտան սօնրա իթա օլունան րէյլէր Մէճլիսի Ումումի գալէմի մարիֆէթիյլէ, տէօրթ նէֆէրի էհլի քիլիսատէն վէ տէօրտի ավամտէն օլմագ իւզրէ՝ Մէճլիսի մէզքիւր իչինտէն ինթիխապ օլունան սէքիզ քիշի մուվաճէհէսինտէ, թա՛տատ օլունուր։ Իքինճի տէֆատա իքի քիշիյէ մուսավաթ իւզրէ րէյ իսապէթ իթտիկի թագտիրտէ, պունլարտան պիրի գուրա քէշիտէսիյլէ ինթիխապ օլունուր։

Իւչիւնճի մատտէ. Էմրի ինթիխապ րէսմիյէտի խիթամ օլտուգտա, պիր գըթա մահզար գալէմէ ալընարագ հուզզարը Մէճլիս Թարաֆընտան իմզա, վէ Գայիմմագամը մուամիլէյէ վասըթասիյլէ Պապը Ալիյէ թագտիմ

տասուի ըստ վաղեմի սովորութեան՝ Կայսերական հրամանին համեմատ։

Յօդ. 4. *Ընդհանուր ժողովը հրաւիրանաց գիր կուղարկէ Պատրիարք ընտրուած անձին. քանի մը անձանց ձեռօք՝ եթէ Կ. Պոլսոյ մէջ է. և յատուկ հրաւիրակաւ՝ եթէ Կ. Պոլիսէն դուրս տեղ է։ Նորընտիր Պատրիարքը՝ այս հրաւիրանաց գիրը առնելով, Պատրիարքարան կուգայ և Մայր Եկեղեցւոյ մէջ Ընդհանուր ժողովոյ առջև հանդիսաւոր ուխտ կընէ այս օրինակ։ «Առաջի Աստուծոյ և ի ներկայութեան Ազգային ժողովոյս՝ հրապարակաւ ուխտեմ հաւատարիմ մնալ Տէրութեան և Ազգիս, և ճշմարտապէս հսկել Ազգային Սահմանադրութեան անթերի գործադրութեանը»։ Անմիջապէս՝ Տեղապահին պաշտօնը կը դադարի, և Նորընտիր Պատրիարքը Բարձրագոյն Դրան հրաւէրին վրայ՝ ուղղակի Օգոստափառ Կայսեր կը ներկայանայ. պաշտօնական կերպիւ իր պաշտօնը կը հաստատուի, և Բարձրագոյն Դուռը երթալով՝ կը ծանուցուի։*

Յօդ. 5. *Եթէ Պատրիարքը Սահմանադրութեան տրամադրութեանցը հակառակ շարժի կամ վարուի, ամբաստանութեան տակ կընկնի։*

Յօդ. 6. *Պատրիարքին վրայ ամբաստանութիւն ընելու՝ միայն Ընդհանուր ժողովը, և Կրօնական ու Քաղաքական ժողովներն իրաւունք ունին։*

Ամբաստանող կամ բողոքող ժողովը, Բարձրագոյն Դռնէն հրաման առնելով, Պատրիարքէն կը խնդրէ՝ որ Ընդհանուր ժողով գումարէ։

Եթէ Պատրիարքը առոր դէմ կենայ. եղելութիւնը կրկին անգամ Բարձրագոյն Դրան իմաց կը տրուի. որ այն ատեն բողոքին համեմատ՝ Կ. Պոլսոյ մէջ գտնուող

գըլընուր. վէ էգ գատիմ օլակէլտիկի վէճհիլէ, իրատէի Սէնիյէյէ թէվաֆուգ էյլէտիկի հալտէ Պատրիգ նասպ ու թայյին գըլընուր։

Տէօրտիւնճի մատտէ. *Պատրիգ նասպ օլընան զաթէ, Տէրի Սաատէթտէ պուլընտըղը թագտիրտէ՝ Մէճլիսի Ումումի թարաֆընտան պիր գաչ զաթ, վէ տաշրատա իսէ՝ մախսուս տավէթճի վասըթասիյլէ տավէթնամէ կէօնտէրիլիր։*

Պատրիգ իշպու տավէթնամէյի ալըպտա Պատրիգխանէյէ կէլտիգտէ, Պաշ քիլիսայէ ալըմէթլէ Մէճլիսի Ումումի հազըր պուլընտուղը հալտէ՝ Տէվլէթ վէ Միլլէթէ իֆայի սատագաթ, վէ Միլլէթ Նիզամնամէսինին թէմամիլէ իճրասընա սաիյէն ատիլ նազարը տըգգաթ էյլէմէկի հուզուրի Րապպանիտէ վէ Մէճլիսի Միլլէթ մուվաճէհէսինտէ ալէնէն թաահհիւտ իտէրի րէսմի գասէմի ալէնիյէ էտա իթտիկի ագիպինտէ գայիմմագամը մուամիլէյէ մէմուրիյէթի րէհինի խիթամ օլուր, Պատրիգի միւշարիլէյհ Պապը Ալիտէն վագը օլաճագ տավէթ իւզէրինէ տօղրը հուզուրը Հիւմայունը ճէնապը Փատիշահիյէ մէսուլ իլէ մէմուրիյէթի րէսմիյէսի իճրա, վէ Պապը Ալիյէ կէլէրէք իլան գըլընուր։

Պէշինճի մատտէ. *Պատրիգին Նիզամնամէ էսասը աքսամընա մուղայիր վազ վէ հարէքէթտէ պուլընմասը քէնտիսի հագգընտա թիւհմէթ տատ օլընուր։*

Ալթընճը մատտէ. *Պատրիգի իթթիհամ իտէպիլմէք ալէլէհիյէթի Ումումի վէ խա Րուհանի, վէ խաւսա ճիսմանի Մէճլիսլէրինէ մախսուս օլուպ, իթթիհամ վէ խախուս իշթիքեա իտէն հէյէթ ճանիպի Պապը Ալիտէն պաա էլ իսթիզան Պատրիգտէն Մէճլիսի Ումումիյի ագտ իթմէսինի իսթիտա իտէր. վէ Պատրիգին իմթինա էյլէտիկի թագտիրտէ՝ քէյֆիյէթ պէ թէքրար Պապը Ալիյէ արզ օլընուպ, սուրէթի իսթիտա մուճէպինճէ՝ Տէրի Սաատէթտէ պուլընան պիւքեաթօլարատան էն*

Եպիսկոպոսաց երիցագոյնին Նախագահութեամբ Ընդհանուր Ժողով գումարելու հրաման կուտայ։

Ընդհանուր Ժողովը իր մէջէն հինգ եկեղեցական և հինգ աշխարհական ընտրելով, տասն հոգիէ բաղկացեալ քննիչ Յանձնաժողով մը կը կարգէ. բայց պէտք է որ այս քննիչներուն մէջ՝ ամբաստանող կամ բողոքող անձանց մէկը չգտնուի։ Քննիչ Յանձնաժողովը եղած ամբաստանութիւնները քննելէն ետքը՝ տեղեկագիր կուտայ Ընդհանուր Ժողովոյն, որ կորոշէ զխնդիրը գաղտնի քուէարկութեամբ։ Այս որոշումը պարունակող թուղթը պէտք է ստորագրուած ըլլալ որոշման կողմը քուէ տուող ժողովականներէն. և եթէ անով Պատրիարքին հրաժարումը վճռուած է, երկու Ժողովոց ատենապետները Նախագահ Եպիսկոպոսին հետ Պատրիարքին երթալով՝ յիշեալ թուղթը անոր կը ներկայացընեն. որ այն ժամանակ Ազգին որոշ կամքը իմանալով հրաժարականը տալու պարտաւորեալ է։ Իսկ եթէ չուզէ տալ, Բարձրագոյն Դրան իմաց կը տրուի որ պաշտօնէն կը ձգէ զՊատրիարքը։

Յօդ. 7. Հրաժարեալ Պատրիարքը վիճակաւոր Եպիսկոպոսաց կարգը կանցնի. և անոր վրայ ըստ կանոնի պէտք եղածը կը տնօրինուի Խառն Ժողովոյ կողմէն։

ՊԱՇՏՕՆ ԵՒ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ

Յօդ. 8. Պատրիարքին պարտաւորութիւնքն են Սահմանադրութեան սկզբանց համեմատ վարուիլ, և անոր ամեն կէտերուն ճշգիւ գործադրութեանը ուշի ուշով հսկել։

Պատրիարքը իրեն եկած գործերը որ Ժողովոյ կը վերաբերի նէ այն Ժողովոյն կը յանձնէ՝ քննութեան և որոշման համար։ Ժողովոց մէջ որոշուած գործոց վրայ

եաշլուսընըն րիյասէթի թահթընտա օլարագ, ագտի Մէճլիսի Ումումի օլընմասը ճանիպի Պապը Ալիտէն էմր ու իշար պույուրըլուպ, Մէճլիսի Ումումի, ինթիխապ իլէ նա իչթիրիա իտէն քէսան մուաթէնտա օլարագ, քէնտու իչինտէն օլմագ վէ պէշի էհլի քիլիսատէն վէ պէշի ալամատէն պուլունմագ իւզրէ, օն քիշիտէն միւրէքքէպ պիր թէֆթիշ գոմիսիոնը թային իտէր։ Վէ պու գոմիսիոնըն, իթթիհամաթը վագըաը պիթթահգիգ, Մէճլիսի մէզքիւրէ պիր գըթա մազպաթա իլէ էյլէմէսի լազըմտըր. քէյֆիյէթ րէյի խաֆի իլէ գարարկիր օլուր։ Իշպու գարարը հավի օլան, վէ ա՛յնի մէճլիստէն գարարը մէզքիւր լէհինտէ րէյ վիրմիշ օլանլարըն իմզասիյլէ մուհզա օլմասը լազըմ կէլիր. վարագայի Պաթրիգին իսթիֆասընը շամիլ իսէ, իքի մէճլիսին պաշքեաթիպլէրի Պիսկոպոս իլէ պէրապէր Պատրիգ նէզտինէ ազիմէթլէ, վարագայի մէզքիւրէյի իպրազ իտէրլէր. վէ Պատրիգի մումայիլէյհ միլլէթին մուրատը սարիհինէ պու վէճհլէ մութթալի օլտուգտա իսթիֆա էյլէմէյէ մէճպուր օլուր. իմթինա իթտիկի թագտիրտէ, Պապը Ալիյէ լէտա էլ արզ՝ ազլ օլընուր։

Եէտինճի մատտէ. Իսթիֆա իտէն Պատրիգ մարխասա եփիսկոպոսլար սընֆընա տախիլ օլարագ, հագգընտա՝ Մէճլիսի Մուխթէլիթ թարաֆընտան ուսուլի վէճհիլէ մուամէլէ օլընուր։

ՏԷՐԻ ՍԱԱՏԷԹ ՊԱՏՐԻԳԻՆԻՆ ՎԷԶԱԻՖԻ ՊԷՅԱՆԸՆՏԱ ՏԸՐ

Սէքիզինճի մատտէ. Պատրիգին վազիֆէսի՝ Նիզամնամէ էսասը ահքեամընա իթթիպաըէն հարէքէթ, վէ պիրաէ Նիզամնամէի մէզքիւրըն քեաֆֆէի մէվատտը մուքթէզիյաթընըն թէմամիի իճրասընա տիգգաթ վէ նէզարէթ էյլէմէք խուսուսլարընտան իպարէթ տիր։

Պատրիգ՝ քէնտուսինէ կէլէն իշլէրի, պիր միւզաքէրէ գարար վէրիլմէք իւզրէ, տահա ուլընը Մէճլիսէ

Պատրիարքին բացիկները և կամ ուրիշ Պաշտօնական գրութիւնները վաւերական և գործադրելի չեն կրնար ըլլալ եթէ որոշող Ժողովոյն կողմէն ալ կնքուած և ստորագրուած չըլլայ։ Իսկ երբ ստիպողական գործ մը պատահի, որոյ անօրինութեանը համար կարելի չըլլայ մինչև Ժողովոյն գումարման օրը սպասել և կամ արտաքոյ կարգի Ժողով գումարել, Պատրիարքը կրնայ պէտք եղածը ինքնին անօրինել, իր վրայ առնելով պատասխանատուութիւնը, բայց պարտաւորեալ է եղելութիւնը արձանագրել տալ կանոնաւոր կերպիւ, և որ ժողովոյն կը վերաբերի նէ՝ անոր յաջորդ նիստին ներկայացնել վաւերացման համար։

Յօդ. 9. Պատրիարքը իր բացակայութեանը ատեն Ազգային Ժողովներու մէջ տրուած որոշումները պարունակող թուղթը դեռ չստորագրած, կարող է անոնց վրայ իր դիտողութիւններն յայտնելով, խնդիրը կրկին քննութեան յանձնել։ Իսկ այս վերաքննութենէն ետքը՝ պարտաւորեալ է նոյն թուղթերը ստորագրել, եթէ տրուած որոշումը Սահմանադրութեան տրամադրութեանցը անհամաձայն չգտնէ։

Յօդ. 10. Պատրիարքը կրնայ՝ Սահմանադրութեան սկզբանցը համեմատ չվարուող Եկեղեցական մը, վարժապետ մը, Եկեղեցւոյ, Վանքի, Դպրոցի կամ Հիւանդանոցի գործակալ մը, պաշտօնէն հանելու առաջարկութիւն ընել ձեռնհաս Ժողովոյն կամ Խորհրդոյն։

Յօդ. 11. Պատրիարքը իրաւունք չունի ինքնին լուծել և փոխել Կրօնական և Քաղաքական Ժողովները և անոնց վերաբերեալ Խորհուրդները։ Բայց երբ տեսնէ թէ ասոնցմէ մէկը Սահմանադրութեան սկզբանցը հակառակ ընթացքի մէջ է, առաջին անգամին բացատրութիւն կուզէ այն Ժողովոյն կամ Խորհրդոյն Ատենապետէն. երկրորդին՝ իմաց կուտայ անոր ապօրինաւոր

հավալէ իտէր. վէ պիր Մէճլիստէ գարարկիր օլան մատտէյէ տաիր քէնտուսինին Թագրիրի վէ սաիր ըէսմի Թահրիրի՝ օ Մէճլիս Թարաֆընտան իմզա վէ թէմհիր գըլընմատըգճա միւթէպէր վէ մամուլունպիհ օլամազ. ամմա միւսթաճէլ պիր մասլահաթ զուհուր իտուպտէ՝ րույէթ վէ թէսվիյէսի իչուն Մէճլիս կիւնիւնէ պէքլէնմէք վէ եախուտ ֆէվգ ալ ատէ Մէճլիս տավէթ իթմէք միւմքին օլամազ իսէ, Պատրիգ օլ պապտէ մէսուլիյէթի տէր ուհտէ իտէրէք՝ խօտ պէ խօտ իճրայի իճապընը գատըր իսէտէ, վուգուի հալի ուսուլի վէճհիլէ գայտ իթտիրմէկէ, վէ Թաատիգ գըլընմագ իչիւն՝ զիքր օլնան Մէճլիսէ, ինիգատի աթիսինտէ, պէյան իթմէկէ մէճպուր օլուր։

Տօգուզընճը մատտէ. Պատրիգ, քէնտու ղըյապը հալընտա Միլլէթ Մէճլիսլէրինտէ վէրիլէն գարարլարը հավի էվրագը իմզա իթմէզտէն մուգատտէմ, օլ գարարլէրէ տաիր միւլահազաթընը պէյան իլէ՝ քէյֆիյէթի եէնիտէն րույէթ իթտիրէպիլուր իսէտէ, լէտէլ րույէթ Թաատիգ օլընան գարարը, Նիզամնամէ էսասը ահքեամընա մուխալիֆ ատտ իթմէտիքճէ, էվրագը մէզքիւրէյի իմզատէն իմթինա իտէմէզ։

Օնընճը մատտէ. Պատրիգ՝ Րուհպան վէ մէքթէպ հօճալարը իլէ Քիլիսա վէ Մանասթըր վէ Մէքթէպ վէ Խասթահանէ մէմուրլէրինտէն խիլաֆը էսասը Նիզամնամէ հարէքէթ պուլընանլարըն խըտմէթտէն Թարտը խուսուսընը միւթաալլիգ օլտըղը Մէճլիս վէ Գօմիսիօնլարա թէքլիֆ իտէ պիլուր։

Օն պիրինճի մատտէ. Պատրիգին՝ Մէճլիսի Րուհանի վէ Ճիսմանի իլէ անլարըն Թահթընտա պուլընան Գօմիսիօնլարը քէնտուլիկինտէն Թէպտիլ վէ Թաղիիր իթմէկէ սէլահիյէթի եօղտուր ատ, պունլարտան պիրինին Նիզամնամէ էսասը խիլաֆընտա ըէվիշ վէ հարէքէթինի միւշահէտէ էյլէտիկի հալտէ, իլք տէֆասընտա՝ օլ Մէճլիս վէ եա Գօմիսիօն րէիսլէրինտէն իսթիզահի

ընթացքը և ի կանոնապահութիւն կը հրաւիրէ զայն. իսկ երրորդին՝ Ընդհանուր Ժողովոյն կը դիմէ, եթէ ամբաստանեալին Ազգային Ժողովականներէն մէկն է. կամ Քաղաքական Ժողովոյն կը դիմէ, եթէ Խորհուրդներէն մէկն է. և պատճառները ցուցնելով՝ ամբաստանեալ Ժողովոյն կամ Խորհրդոյ լուծումը կառաջարկէ։

Յօդ. 12. Պատրիարքը Ազգային սնտուկէն իրեն յատկացեալ ամսական ունենալով, ինք կը տանէ Պատրիարքարանին ներքին ծախքը։

Բ. ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԴԻՒԱՆԱՏՈՒՆ

Յօդ. 13. Պատրիարքարանի մէջ Դիւանատուն մը պիտի հաստատուի պէտք եղած Ազգային գրութեանց յատկացեալ։

Այս դիւանատունը երեք գրասենեակի պիտի բաժնուի։

Ա. Թղթակցութեան գրասենեակ, որ Պատրիարքարանէն ուղարկուած և Պատրիարքարան եկած գրութիւններով կզբաղի։

Բ. Արձանագրութեան գրասենեակ, որ Ազգային Ժողովոց և Խորհրդոց վերաբերեալ թուղթերը կարգաւորելու կզբաղի։

Գ. Ազգահամարի գրասենեակ, որ ազգայնոց քաղաքական վիճակագրութեանը, այսինքն՝ ծննդեան, ամուսնութեան և վախճանման վերաբերեալ արձանագրութեանց կզբաղի։

Այս վերջին գրասենեակէն կը տրուին Ազգայնոց թէ ճանապարհորդութեան համար և թէ ուրիշ անձնական գործառնութեանց համար պէտք եղած վաւերական թուղթերը, նաև ծննդեան, ամուսնութեան և

դաւէթ իտէր. Վէ իքինճի ֆըգրասընտա՝ հարէքէթի ղայրի մէշրուէսինի պէյան վէ իխթար իլէ մուհաֆազայի նիզամէ դաւէթ, վէ իւչիւնճի ֆըգրասընտա՝ էկէր միւթթէհիմ օլան հէյյէթ՝ Միլլէթ Մէճլիսլէրինտէն պիրի իսէ, Մէճլիսի Ումումիյէ, վէ էկէր Գօմիսիօնլարտան պիրի իսէ՝ Մէճլիսի ճիսմանիյէ միւրաճաաթ, վէ իսպաթի ակլաիլ իլէ՝ պունլարըն թէպտիլինի թէքլիֆ էյլէր։

ՕՆ իքինճի մատտէ. Պատրիգին՝ Միլլէթ սանտըղընտան մահիյէսի օլմալը, պատրիգխանէնին մէսարիֆի տախիլիյէսինի քէնտու թարաֆընտան թէսվիյէ իտէր։

ՊԱՏՐԻԳԽԱՆԷ ԳԱԼԷՄԻՆԷ ՏԱԻՐ ՏԻՐ

ՕՆ իւչիւնճի մատտէ. Պատրիգխանէտէ՝ միլլէթճէ իճապ իտէն մուհաճէրաթէ մախսուս օլմագ իւզրէ պիր գալէմ օլաճագ տըր։

Գալէմի մէզքիւր իւչ օտայա մունգասըմ օլուպ, պիրի՝ միւքաթէպաթ օտասը տըր քի պատրիգխանէ թարաֆընտան իրսալ օլընան՝ վէ օրայա վիրուտ էյլէյան մուհարրէրաթ իլէ մէշղուլ օլուր։

Վէ իքինճիսի՝ գայտ օտասը տըր քի Միլլէթ մէճլիսի վէ գօմիսիօնլարընա միւթաալլիգ օլան էվրագ իլէ մէշղուլ օլուր։

Իւչիւնճիսի՝ թահրիրի նուֆուս օտասը տըր քի Միլլէթտէն թէվէլլիւտ վէ իզտիվաճ վէ վէֆաթ խուսուսլէրին գայտը իլէ մէշղուլ օլուր։ Հէրքէս եօլճըլըգ վէ հէրնէ մուամէլաթի շախսիյէյէ տաիր իգթիզա իտէն էվրագը մուսատտագա վէ վէլատէթ վէ վէֆաթ վէ իզտիվաճէ տաիր շէհատէթնամէլէր պու օտատան վէրիլիր։

վախճանման վկայագրերը։

Յօդ. 14. Պատրիարքական Դիւանատունը պիտի ունենայ Դիւանապետ մի, որ պատասխանատու է դիւանատան բոլոր գործառնութեանց։ Քաղաքական Ժողովը կընտրէ և Պատրիարքը կանուանէ զայն։ Դիւանապետը կընէ նաև Ընդհանուր Ժողովոյն դիւանադպրութիւնը։

Դիւանապետը պարտաւորեալ է ամեն տարի՝ թէ Կոստանդնուպօլսոյ մէջ և թէ գաւառները ծնած, ամուսնացած և վախճանած ազգայնոց տոմարներուն օրինակները բերել տալ, և Պատրիարքարանի Դիւանատան ընդհանուր Ազգահամարին մէջ արձանագրել տալ։ Դիւանապետը Հայերէն լեզուի քաջ հմուտ և Տաճկերէնի ու Գաղղիերէնի ալ վարժ անձ մը պիտի ըլլայ։

Յօդ. 15. Դիւանատունը բաւական թուով Դիւանադպիրներ պիտի ունենայ։ Ասոնք ալ հայերէն լեզուն քաջ գիտնալու են, և ամեն մէկը իր պաշտօնին կատարեալ հմտութիւն ունենալու է։ Ամեն մէկ դիւանադպիր ըստ իւր պաշտօնի պատասխանատու է այն Ժողովոյն կամ Խորհրդոյն՝ որուն կը վերաբերի։ Ամենը մէկէն պատասխանատու են Դիւանապետին։

Յօդ. 16. Ազգահամարի գրասենեակէն տրուած որ և է թուղթ և վկայագիր վաւերացեալ պէտք է ըլլայ Պատրիարքական կնքով և Դիւանապետի ստորագրութեամբ։

Գ. ՊԱՏՐԻԱՐՔ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Յօդ. 17. Երուսաղէմի Պատրիարքը Ս. Յակոբայ Աթոռոյն ցկեանս գահակալն է. միանգամայն Հայոց Ազգին սեպհական Երուսաղէմ գտնուած ուխտատեղի-

Օն տէօրտիւնճի մատտէ. Պատրիգխանէ գալէմինին՝ քեաֆֆէի մուամէլաթըէն մէսուլ պիր միւտիրի օլուպ, միւտիրի մուամիլէյհ Մէճլիսի ճիսմանիտէ ինթիխապ վէ Պատրիգ թարաֆընտան նասպ վէ թային օլընուր. վէ Մէճլիսի Ումումինին քիթապէթինի իճրա իտէր։ Վէ հէր սէնէ Տէրի Սաատէթտէ վէ թաշրալարտա թէվէլլիւտ վէ վէֆաթ վէ թէէհհիւլ իտէն նուֆուս տէֆթէրլէրինին պիր գըթա սուրէթինի ճէլպ իլէ՝ Պատրիգխանէ գալէմի տէֆթէրի ումումիսինէ գայտ իթտիրմէկլէ մէճպուր տըր. վէ միւտիրի մուամիլէյհ Էրմէնի լիսանընտա մալումաթը թամմէ սահիպընտան օլուպ Թիւրքճէյէ վէ Ֆրանսըզճայա տախի աշինա օլմալը տըր։

Օն պէշինճի մատտէ. Պատրիգխանէ գալէմինին միգտարը քեաֆի քեթէպէսի օլուպ, պունլարըն տախի Էրմէնի լիսանընը լայըգը իլէ պիլմէլէրի. վէ հէր պիրի քէնտու խըտմէթինտէ մալումաթը քեամիլէ սահիպընտան օլմալարը լազըմ տըր։ Պունլար խըտմէթի մախսուսէլէրի իգթիզասընճա միւթէալլիգ օլտուգլարը մէճլիս վէ գոմիսիօնլար թարաֆընտան մախսուսէն, վէ գալէմ միւտիրի թարաֆընտան ումումէն մէսուլլէր տիր։

Օն ալթընճը մատտէ. Թահրիրի նուֆուս տաարէսինտէն վերիլէն քեաֆֆէի էվրագ վէ շէհատէթնամէլէր Պատրիգին միւհրի վէ գալէմ միւտիրինին իմզասը իլէ թաստիգ օլունմըշ օլմագ լազըմ տըր։

ԳՈՒՏՍԸ ՇԷՐԻՖ ՊԱՏՐԻԳԻՆԷ ՏԱԻՐ ՏԻՐ

Օն եէտինճի մատտէ. Գուտսը Շէրիֆ Պատրիգի Մար-Եագուպ մագամընա գայտի հայաթ շարթը իլէ գաիմ, վէ Գուտսը Շէրիֆտէ քեաին Էրմէնի Միլլէթի

Նրան տնօրէնն ու Ս. Յակոբայ վանուց Միաբանութեան Նախագահն է։

Իր պարտաւորութիւնն է Ս. Երուսաղէմի վանուց Կանոնագրին տրամադրութեանց համեմատ վարուիլ, և անոր բոլոր գործադրութեանը հսկել։

Յօդ. 18. Եթէ Ս. Երուսաղէմի Պատրիարքը Սուրբ Երուսաղէմի վանուց Կանոնագրին հակառակ վարուի, ամբաստանութեան տակ կ՚ինկնի։

Յօդ. 19. Պատրիարքին վրայ ամբաստանութիւն կրնայ ըլլալ կամ յիշեալ Միաբանութեան կողմէն և կամ Կոստանդնուպօլսոյ Կրօնական և Քաղաքական Ժողովոց կողմէն։

Այսպիսի պարագայի մէջ Ազգային Ընդհանուր Ժողով կը գումարուի։ Եւ եթէ եղած ամբաստանութիւնը քննելով՝ հիմնաւոր ըլլալը ստուգուի, Ընդհանուր Ժողովը՝ վեցերորդ յօդուածին մէջ Կոստանդնուպօլսոյ Պատրիարքին վերաբերեալ տրամադրութեանց համեմատ՝ ըստ պահանջման իրին, կամ ի կանոնապահութիւն կը հրաւիրէ զՊատրիարքն մասնաւոր բողոքագրով, և կամ կը պարտաւորէ զայն հեռանալ Պատրիարքական աթոռէն, և անոր պաշտօնը կը յանձնէ Տեղապահի մը զոր Ընդհանուր Ժողովը գաղտնի քուէարկութեամբ կ՚ընտրէ Միաբանութեան մէջէն։

Յօդ. 20. Երբ Ս. Երուսաղէմի Պատրիարքը վախճանի, Միաբանութիւնը իր մէջէն Տեղապահ մը կ՚ընտրէ, և Ազգային Ժողովները կը հաստատեն զայն։

Յօդ. 21. Ս. Երուսաղէմի Պատրիարքը Կոստանդնուպօլսոյ Ազգային Ժողովներուն կողմէն կ՚ընտրուի։ Բայց Միաբանութիւնը իրաւունք ունի իր կարծիքը

գիյարէթկեահլերի միւտիրի վէ Մար Եագուպ մանասթըրը րուհպան ճէմաաթընըն րէիսի տիր, վէ վազիֆէսի՝ մանասթըրը մէզքիւրըն ուսուլ վէ Նիզամընա թէվֆիգան հարէքէթ վէ մէվատտը մէրիյէնինին հիւսնի իճրասընա սարֆը տիգգաթ իթմէքտէն իպարէթ տիր։

Օն սէքիզինճի մատտէ. Պատրիգի միւշարիլէյհին սալիֆիւզզիքր մանասթըր Նիզամընա մուղայիր վազ վէ հարէքէթտէ պուլընմասը քէնտու հագգընտա թիւհմէթ տատ օլընուր։

Օն տօգուզընճը մատտէ. Պատրիգի միւշարիլէյհ հագգընտա՝ եա մանասթըրը մէզքիւրըն րուհպան ճէմաաթը վէ եախուտ Աթանայոլ պատրիգխանէսինին Րուհանի վէ Ճիսմանի մէճլիսլէրի թարաֆընտան իթթիհամաթ վուգուա կէլէպիլիր։

Պէօյլէ պիր հալ վուգուընտա Մէճլիսի Ումումիի Միլլէթ իճթիմա իտէրէք՝ իթթիհամաթը վազըհա լէտէլ թահգիգ, էսասը թէպէյյիւն իտէր իսէ. Տէրի Սաատէթ Պատրիգի հագգընտա, ալթընճը մատտէտէ պէյան օլընան ուսուլէ թաթպիգան, իճապը հալէ կէօրէ եա Գուտսը Շէրիֆ Պատրիգինի պիր գըթա շիքեայէթնամէ իլէ մուհաֆազայի Նիզամէ տաւէթ իտէր, վէ եախուտ Պատրիգլիգ մագամընը սալիֆիւզզիքր րուհպան ճէմաաթը իչինտէն օլարագ՝ Մէճլիսի Ումումիտէ րէյի խաֆի իլէ ինթիխապ օլընան վէքիլինէ թէսլիմ իլէ մագամը մէզքիւրտէն թէպաիտ էյլէմէկէ իճպար էյլէր։

Եիկիրմինճի մատտէ. Գուտսը Շէրիֆ Պատրիգինին վէֆաթը վուգուընտա՝ մանասթըրը մէզքիւրըն րուհպան ճէմաաթը քէնտու իչլէրինտէն պիր գայիմագամ ինթիխապ իտուպ, Տէրի Սաատէթ պատրիգխանէսի մէճլիսլէրի թարաֆընտան տախի թաստիգ օլընուր։

Եիկիրմի պիրինճի մատտէ. Գուտսը Շէրիֆ Պատրիգի Տէրի Սաատէթ պատրիգխանէսի մէճլիսլէրի թարաֆընտան ինթիխապ օլընուր. Ֆագաթ Գուտսը Շէ-

յայտնելու ընտրելեաց արժանաւորութեան աստիճանին վրայ՝ ներկայացման (ցուցակաւ մը)։ Պատրիարքին վախճանելէն անմիջապէս ետքը՝ մինչեւ Տեղապահը Միաբանից Ընդհանուր Ժողով կը գումարէ։ Այս Ժողովը անուանց ցուցակ մը կը պատրաստէ՝ Կոստանդնուպօլսոյ Պատրիարքի ընտրութեան համար Կոստանդնուպօլսոյ Եկեղեցական համագումար ժողովոյն ըրած կերպիւ. բայց պէտք է որ Միաբանութեան ներկայացունելիք այս ցուցակը գոնէ եօթն ընտրելեաց անուն պարունակէ։ Այս ցուցակը միաբանութեան կողմէն ստորագրեալ յայտագրով Կոստանդնուպօլսոյ Պատրիարքարան կուղարկուի։

Յօդ. 22. Ս. Երուսաղէմի Պատրիարք ընտրուելու անձը գոնէ երեսուն և հինգ տարին լրացուցած, և ի ծնէ Օսմանեան Տէրութեան հպատակ, Միաբանութեան Եպիսկոպոսներէն կամ Վարդապետներէն պէտք է ըլլայ. միանգամայն Միաբանութենէն զատուած մէկը պէտք չէ ըլլայ։

Միաբանութենէն զատուած չեն համարուիր այն անձինքը՝ որ Պատրիարքարանի ժողովոց կողմէն ազգային պաշտօնի մէջ գործածուած են՝ Երուսաղէմի Պատրիարքին հաւանութեամբ։

Յօդ. 23. Կրօնական և Քաղաքական Ժողովները միասին ժողով կազմելով, վերոյիշեալ ցուցակին մէջ յիշատակուած անձանց արժանիքը կը քննեն, և երեք ընտրելի որոշելով անունները Ընդհանուր ժողովոյն կը ներկայացնեն։ Միաբանութեան կողմէն եկած ցուցակն ալ Ընդհանուր ժողովոյ սրահին մէջ կախուած կըլլայ։

Ընդհանուր ժողովը ընտրելեաց վրայօք թէ Միաբանութեան և թէ Ազգային երկու ժողովոց կարծիքը իմանալով, անոնց մէջէն կրօնից, ուսման և բարի վա-

րիֆ րուհպան ճէմաաթընըն գապիլի ինթիխապ օլան զէվաթըն տէրճէմէի իսթիհգագլարը հագգընտա պիր գըթա ճաամի տէֆթէրի թանզիմիյլէ պէյանի րէյ իթմէկլէ հագգը վար տըր։

Պատրիգի միւշարիլէյհին վէֆաթը ագիպինտէ՝ գայիմմագամի մուշարիլէյհ թարաֆընտան րէհապին Մէճլիսի Ումումիի տավէթ օլընարագ, պու մէճլիս, Տէրի Սաատէթ Պատրիգի հագգընտա Մէճլիսի Ումումիի Րուհանիյէ իճրա օլընաճաղը միսիլլու, պիր գըթա ճաամի տէֆթէրի թէրթիպ իտէր։ Անճագ իշպու տէֆթէրին լա աքալլ եաի զէվաթ ճաամիսինի շամիլ օլմասը լազըմ տըր։ Տէֆթէրի մէզքիւր ճէմաաթը մէզքիւրէնին պիր գըթա մուհրը մագպաթասը իլէ պէրապէր՝ Տէրի Սաատէթ պատրիգխանէսի ճանիպինէ իրսալ՝ գըլընըր։

Եիկիրմի իքինճի մատտէ. Պատրիգ ինթիխապ օլընաճագ զաթ լա աքալլ օթուզ պէշ եաշընը թէքմիլ իթմիշ օլուպ՝ փէտէրինտէն պէրու Թէպաայի Տէվլէթի Ալիյյէտէն, վէ ճէմաաթը մէզքիւրէ Պիսկոպոս վէ եա րուհպանլարընտան պուլընմասը, վէ ճէմաաթը մէզքիւրէտէն ինֆիքաք իթմէմիշ օլմասը իգթիզա իտէր։ Տէրի Սաատէթ Պատրիգխանէսի մէճլիսլէրի թարաֆընտան Գուտսը Շէրիֆ Պատրիգինին մուվաֆագաթը իլէ միլլէթճէ պիր խըտմէթտէ գուլլանըլմըշ օլանլար ճէմաաթը մէզքիւրէտէն մունֆասըլ ատտ օլընմազլար։

Եիկիրմի իւչիւնճի մատտէ. Րուհանի վէ Ճիսմանի մէճլիսլէրի պիրլէշէրէք ճաամիսի տէֆթէրի մէզքիւրէտէ միւնտէրիճ օլան զէվաթըն իսթիհգագլարընը պիթթահգիգ՝ ինթիխապ օլընա պիլմէք իւզրէ, իւչ նէֆէրինի թէֆրիգ, վէ պունլարըն իսմլէրինի Մէճլիսի Ումումիյէ իպրազ իտէրլէր։ Վէ ճէմաաթը մէզքիւրէ թարաֆընտան վարիտ օլան տէֆթէր տախի Միլլէթ Մէճլիսի Ումումիսինտէ տիվարա ասըլաճագ օլտուղընտան, Մէճլիսի Ումումի, գապիլի ինթիխապ օլան զէվաթ

բուց նկատմամբ ամենէն աւելի արժանաւորութիւն ունեցող անձը կընտրէ՝ գաղտնի քուէարկութեամբ և քուէից բացարձակ առաւելութեամբ։

Ընդհանուր ժողովոյ մէջ Միաբանութեան կողմէն ներկայացուած ցուցակէն դուրս անձի վրայ քուէարկութիւն չկրնար ըլլալ։

Դ. ԱԶԳԱՅԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 24. Կրօնական ժողովը կը բաղկանայ տասն և չորս բանիբուն եկեղեցականներէ, որոնք գոնէ երեսուն տարին լրացուցած, և գէթ հինգ տարիէ ի վեր ձեռնադրուած պիտի ըլլան։

Յօդ. 25. Եկեղեցական համագումար ժողովը գաղտնի քուէարկութեամբ՝ Ազգային Կրօնական ժողովոյ անդամոց թուոյն եռապատիկը կընտրէ, և ընտրելեաց անունները առորագրեալ յայտագրով Ազգային Ընդհանուր ժողովոյն կը ներկայացընէ։

Ընդհանուր ժողովն ալ անոնց մէջէն գաղտնի քուէարկութեամբ կընտրէ Կրօնական ժողովոյ անդամները։ Տեղեկագիրը Պատրիարքին կողմէն Բարձրագոյն Դրան կը ներկայացուի. և Կրօնական ժողովոյ այսպէս ընտրուած անդամները Կայսերական հրամանաւ կը հաստատուին։

Յօդ. 26. Կրօնական ժողովը երկու տարին անգամ մը ապրիլի վերջը ամբողջ կը լուծուի, և մայիսի սկիզբը կը նորոգուի։ Այս ժողովոյ անդամները անմիջապէս վերընտրելի չեն. բայց երկու տարի ետքը կըր-

հագգընտա կէրէք ճէմաաթը մէզքիւրէնին վէ կէրէք մէզքիւր իքի մէճլիսին բէյլէրինէ քէմալի իթթիլա խուէրէք, զէվաթը մէրգումէ իչինտէն՝ տիրայէթ վէ մալումաթը միւքթէսէպէ վէ աթվարը հասէնէսի ճիհէթլէրիյլէ էն զիյատէ իսթիհգագը օլան զաթը՝ րէյի խաֆի վէ էքսէրիյէթի մութլագայի արա իլէ պաթրիգ ինթիխապ իտէր։

Մէճլիսի Ումումիյէ՝ ճէմաաթը մէզքիւրէ թարաֆընտան կէլէն թէֆթէր խարիճինտէ պուլունան պիրինի հագգընտա՝ իճրայի րէյ օլընամայաճագ տըր։

ՄԷՃԼԻՍԻ ՐՈՒՀԱՆԻ ՊԷՅԱՆԸՆՏԱ ՏԸՐ

Եիկիրմի տէօրտիւնճի մատտէ. Մէճլիսի Րուհանի էհլի Բիլիսաաէն վէ էրպապը վուգուֆտան օլարագ օթուզ եաշընը թէքմիլ իթմիշ վէ լա ագալլ պէշ սէնէ մուգատտէմ բաշիպլիք վէ փափասլըգ րիւթպէսինի իհրազ էյլէմիշ օլան օն տէօրթ նէֆէրտէն միւրէքքէպ տիր։

Եիկիրմի պէշինճի մատտէ. Մէճլիսի Րուհանի ազասը ատէտինին իւչ միսլի Մէճլիսի Ումումիի րուհանիյէ րէյի խաֆի իլէ ինթիխապ օլընուպ, իսիմլէրի պիր գըթա մուհրլու մազպաթա իլէ Մէճլիսի Ումումիի Միլլէթէ իպլաղ, վէ պունլարըն իչինտէն Մէճլիսի Րուհանի ազասը Մէճլիսի Ումումիյէ րէյի խաֆի իլէ ինթիխապ օլընտըգտան սօնրա՝ մազպաթասը Պատրիգ թարաֆընտան Պապը Ալիյէ արզ օլընարագ, պա Իրատէի Սէնիյէ նասպ վէ թայինին պույուրուլուրլար։

Եիկիրմի ալթընճը մատտէ. Մէճլիսի մէզքիւր ազասը հէր իքինճի սէնէ շէհրի նիսանըն գայէթինտէ քիւլլիյէն տաղըլուպ, շէհրի մայիս իպթիտասընտա թէճտիտ օլունուր։ Ինֆիսալ իտէն ազանըն հէման թէք-

նան նորէն ընտրուիլ։

Յօդ. 27. Երբ Կրօնական Ժողովոյ անդամներէն հրաժարական տալով և կամ ուրիշ պատճառաւ պակսողներուն թիւը երեքի հասնի, անոնց տեղ ուրիշներ կընտրուին Ընդհանուր Ժողովով։ Բայց մինչև որ այս ընտրութիւնն ըլլայ, Կրօնական Ժողովոյ մէջ բոլոր անդամոց մեծագոյն մասը կը փնտռուի։

Յօդ. 28. Կրօնական Ժողովոյ պաշտօնն է Ազգային Կրօնական գործոց ընդհանուր տեսչութիւնը։ Իր պարտաւորութիւնքն են՝ Ազգին մէջ կրօնական զգացումը զարգացունել, Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւններն անխախտ պահել, Եկեղեցեաց և Եկեղեցականաց բարեկարգութեանը հսկել, Եկեղեցականաց ներկայ վիճակը լաւցունելու և ապագայն անդորրելու և ապահովցունելու միջոցները ձեռք բերելու հոգ տանիլ։ Ազգային վարժարանաց երբեմն երբեմն այցելութիւն ընելով՝ Քրիստոնէական վարդապետութեան ուսուցման վրայ հսկողութիւն ընել. արժանաւոր և բանիբուն վարդապետներ և քահանայներ հասցունել, և Ազգին մէջ ծագած կրօնական վէճերը քննելով՝ Եկեղեցւոյ օրինաց համեմատ լուծել։

Յօդ. 29. Կրօնական Ժողովը երբ չը կարենայ ինքնին լուծել զուտ կրօնական կարևոր խնդիր մը, Եկեղեցական համագումար ժողով կը կազմէ՝ Կոստանդնուպօլիս գտնուող Եպիսկոպոսները, Եկեղեցեաց քարոզիչ Վարդապետները, Աւագերէցներն ու Աթոռակալները, և թէ հարկ ըլլայ՝ նաև շրջակայ գաւառաց Առաջնորդները հրաւիրելով։ Եթէ Եկեղեցական համագումար ժողովն ալ խնդիրը իր ձեռնհասութենէն վեր

բար ինթիխապլարը ճարիզ օլմայուպ, անճագ իքի սէնէ սօնրա ինթիխապլարը ճարիզ տիր։

Եիկիրմի եէտինճի մատտէ. Րուհանի Մէճլիսի ազասընտան իսթիֆա վուգուիլէ վէ եախուտ սաիր պիր սէպէպէ մէպնի մէֆգուտ օլանլարըն ատէտի իւչէ պալիղ օլտուգտա՝ պունլարըն եէրինէ Մէճլիսի Ումումիտէ ախէրլէրի ազա ինթիխապ օլընուր. վէ պու ինթիխապ վուգու պուլընճայա տէկին՝ Մէճլիսի մէզքիւրտէ թէքմիլէն ազայի մէճլիսին էքսէրիյէթի արանըլըր։

Եիկիրմի սէքիզինճի մատտէ. Մէճլիսի Րուհանինին վէզաիֆի՝ Միլլէթին ումուրը րուհանիյէսինէ նէզարէթ, վէ իթիգատաթը մէզհէպիյէյի Միլլէթճէ թէրվիճ վէ թահքիմ, վէ Էրմէնի Քիլիսասընըն աղաիտ վէ րիվայաթը մէրիյէսինի խըլալտէն մուհաֆազա, վէ Քիլիսալէր իլէ էհլի քիլիսանըն պիր հալը մունթազամտէ պուլունմալարընա սարֆը աղդամ, վէ էհլի քիլիսանըն հէրհէք ահվալը հազըրէլէրինին իսլահընա վէ հէրհէք ահվալը մուսթագպէլէլէրինին իսթիհսալը էսպապը թէմինիյէսինէ տէվամ վէ իգդամ, վէ մէքաթիպի միլլիյէյի վագթ պէ վագթ մուայէնէ իլէ թալիմի մէզհէպիյէ խուսուսընա պէզլի աղդամ էյլէմէք, վէ էհլիյէթ վէ գապիլիյէթլէ մութթասըֆ րուհպան վէ փափասլար եթիշտիրմէք, վէ միլլէթճէ թէքէվվիւն իտէն մէսաիլի մէզհէպիյէյի պիթթահգիգ ուսուլի մէրիյէի Քիլիսայէ թաթպիգան հալլ վէ թէսվիյէ իթմէք խուսուսլարընտան իպարէթ տիր։

Եիկիրմի տօգուզունճը մատտէ. Մէճլիսի Րուհանի սըրըֆ տինիյանէթէ մութաալլիգ զուհուր իտէն պիր մէսէլէի մուհիմմէյի հալլ իտէմէտիկի թագտիրտէ, Տէրի Սաատէթտէ պուլունան Փիսկոպօսլար վէ Քիլիսա վաիզ վէ փափասլարը իլէ իքինճիլէրինի վէ իգթիզա իթտիկի հալտէ Տէրի Սաատէթ գուրպինտէ վագը սանճագլարտա մուգիմ Մարխասալարը ճէլպ վէ ճէմիէթ իլէ Մէճլիսի Ումումիի Րուհանի թէշքիլ իտէր. վէ պու

դատէ, այն ժամանակ՝ Ընդհանրական Կաթողիկոսին կը դիմէ՝ ստորագրեալ տեղեկագրով։

Յօդ. 30. Կրօնական ժողովոյ ամէն տեսակ տեղեկագիրները՝ միշտ անդամոց մեծագոյն մասին կողմէն ստորագրեալ պիտի ըլլան։

Յօդ. 31. Թէ Կոստանդնուպոլսոյ և թէ գաւառներու մէջ՝ Վարդապետի ձեռնադրութեան համար պէտք եղած հրամանը Ազգային Կրօնական ժողովոյ կողմէն կը տրուի։ Իսկ Քահանայի ձեռնադրութեան համար՝ եթէ Պոլսոյ մէջ է՝ նոյն Կրօնական ժողովէն, և եթէ գաւառներու մէջ է՝ տեղւոյն Կրօնական ժողովէն կը տրուի։

Յօդ. 32. Մինչև որ Եկեղեցւոյ մը Քահանաներն ու Թաղական խորհուրդը նոր քահանայ ձեռնադրել տալու կարևորութիւնը չտեսնեն, և ստորագրեալ տեղեկագրով Կրօնական ժողովոյ խնդիր չընեն, ձեռնադրութեան հրաման չտրուիր։

Յօդ. 33. Կրօնական ժողովը կ'ընտրէ Կոստանդնուպոլսոյ Եկեղեցեաց քարոզիչ վարդապետներն ու աւագերէցները, և Պատրիարքը կանոնանէ զանոնք։

Յօդ. 34. Կրօնական ժողովոյ մէջ ամէն տեսակ ընտրութիւն գաղտնի քուէարկութեամբ կ'ըլլայ։

Յօդ. 35. Կրօնական ժողովը կանոնագիր մը պէտք է շինէ Եկեղեցականաց ներկայ վիճակին բարեկարգութեան և ապագային անդորրութեանը համար, որպէս զի իրենց հոգևորական պաշտօնները կարենան ձրի կատարել։

Մէճլիս դախի մէսէլէի մէզքիւրէնին հալլինի տալէպէ իզթիրարը խարիճինտէ ատա իթաիկի հալտէ՝ պիր մուճպա մազպաթա իլէ Ումումի Կաթողիկոս Թարաֆընտա միւրաճաաթ օլընուր։

Օթուզընճը մատտէ. Մէճլիսի Ռուհանինին հէր նէվ՝ մազպաթալարը տայիմա ազաի մէճլիսին էքսէրիյէթինին իմզասը իլէ մուճպա օլաճագ տըր։

Օթուզ պիրինճի մատտէ. Կէրէք Տէրի Սաատէթ վէ կէրէք թաշրալարտա՝ ռահիպլիք վիրիլմէսի իչուն իգթիզա իտէն ռուխսաթ՝ Մէճլիսի մէզքիւր Թարաֆընտան իթա օլընուր, վէ փափաս մատտէսինէ Տէրի Սաատէթ իչուն իսէ քէզալիք Մէճլիսի մէզքիւրտէն վէ թաշրալարտա դաինը մահալլ իչուն իսէ օլ մահալլին Ռուհանի մէճլիսի Թարաֆընտան ռուխսաթ վիրիլիւր։

Օթուզ իքինճի մատտէ. Պիր Քիլիսա ճէմայէթի իլէ փափասլարը միւճտէտտէն փափաս թայինինէ լիւզում կէօրիւլմատ՝ Մէճլիսի Ռուհանիտէն պիր գըթա մուճպա մազպաթա իլէ իսթիտա էթմէտիքճէ՝ օլ պապտէ ռուխսաթ վիրիլմէզ։

Օթուզ իւչիւնճի մատտէ. Տէրի Սաատէթ Քիլիսալէրինին վայզլէրիյլէ պաշ փափասլարը Մէճլիսի Ռուհանինին զարարը իւզէրինէ՝ Պատրիգ Թարաֆընտան թային օլընուր։

Օթուզ տէօրտիւնճիւ մատտէ. Մէճլիսի Ռուհանիտէ հէր կիւնա ինթիխապ խուսուսը րէյի խաֆի իլէ իճրա օլընուր։

Օթուզ պէշինճի մատտէ. Էհլի Քիլիսանըն խըտէմաթը մէզհէպիյէլէրինին մէճճանէն իֆա օլընապիլմէսի իչուն՝ անտալը հալլըէլէրինին ըսլահը իլէ անտալը մուսթագպէլէլէրինին թէմինինէ տաիր Մէճլիսի Ռուհանի Թարաֆընտան պիր գըթա նիզամնամէ թանզիմ գըլընաճագ տըր։

Ե. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 36. *Քաղաքական ժողովը կը բաղկանայ Ազգային գործոց և Տէրութեան օրինաց տեղեակ քսան աշխարհականներէ։*

Յօդ. 37. *Քաղաքական ժողովոյ անդամները գաղտնի քուէարկութեամբ և քուէից բացարձակ առաւելութեամբ Ազգային Ընդհանուր ժողովոյ մէջ կընտրուին, և տեղեկագիրը Պատրիարքի կողմէն Բարձրագոյն Դրան մատուցանելով՝ Կայսերական հրամանաւ կը հաստատուին։*

Յօդ. 38. *Քաղաքական ժողովը երկու տարին անգամ մը ապրիլի վերջը ամբողջ կը լուծուի, և մայիսի սկիզբը կը նորոգուի։*

Այս ժողովոյ անդամները երկու տարի անցնելէն ետքը նորէն կրնան ընտրուիլ։ Եւ թէպէտ առջի երկու տարին Քաղաքական ժողովոյ համար վերընտրելի չեն, բայց ուրիշ որ և է ազգային պաշտօնի մէջ կրնան գործածուիլ։

Յօդ. 39. *Եթէ Քաղաքական ժողովոյ անդամներէն մէկը, առանց բանաւոր պատճառ իմացունելու գրով, երեք անգամ իրարու վրայ ներկայ չգտնուի, նոյն ժողովոյ ատենապետի կողմէն անոր նամակ գրուելով՝ չգալուն պատճառը կը հարցուի։ Եթէ պատասխան չառնուի, երկրորդ գրութեամբ իմաց կը տրուի իրեն որ՝ եթէ յաջորդ նիստին ալ ներկայ չգտնուի, իբրև հրաժարեալ պիտի համարուի. և եթէ դարձեալ չներկայանայ, հրաժարականը տուած պիտի սեպուի։*

Յօդ. 40. *Երբ Քաղաքական ժողովոյ հրաժարական տուող կամ ուրիշ պատճառաւ պակսող անդամոց թիւը երեքի համնի, անոնց տեղ ուրիշ անդամներ կընտրուին*

ՄԷՃԼԻՍԻ ՃԻՍՄԱՆԻՅԷ ՏԱԻՐ ՏԻՐ

Օթուզ ալթընճը մատտէ. *Մէճլիսի Ճիսմանի ավամտէն օլարագ մէսալիհի միլլիյէ վէ նիզամաթը Տէվլէթի Ալիյէյէ վագըֆ եիկիրմի զէվաթտէն մուրէքքէպ տիր։*

Օթուզ եետինճի մատտէ. *Մէճլիսի Ճիսմանինին ազասը րէյի խաֆի վէ էքսէրիյէթի մութլագա իլէ Միլլէթ Մէճլիսի Ումումիսինտէ պիլ ինթիխապ՝ մազպաթասը Պատրիգ թարաֆընտան Պապը Ալիյէ թագտիմ օլընարագ, պա իրատէի Սէնիյէ՝ նասպ վէ թային օլընուրլար։*

Օթուզ սէքիզինճի մատտէ. *Հէր իքի սէնէտէ պիր քէրրէ՝ ազայը մէզքուրէնին ճումլէսի չէհրի նիսանըն նիհայէթինտէ տաղըլուպ, չէհրի մայըս իպթիտասընտա թէճտիտ օլընուրլար։ Ազայը մէզքուրէ իքի սէնէ սօնրա՝ թէքրար ինթիխապ օլընապիլուր. վէ ինֆիսալ իթտիկլի իլք իքի սէնէտէ՝ Մէճլիսի մէզքուրէ ազալըղընա ինթիխապ օլընամայուպ, ամմա սաիր հէր կիւնա խըտմէթտէ իսթիխտամ օլընապիլուրլէր։*

Օթուզ տօգուզընճը մատտէ. *Մէճլիսի մէզքուր ազասընտան պիրի թահրիրէն պիր սէպէպի քաֆի պէյան էթմէքսիզին՝ պիրպիրինի մութէաքիպէն իւչ քէրրէ մէճլիսէ կէլմէտիկի հալտէ, սէպէպի սուալ օլընմագ իւզրէ՝ մէճլիսի մէզքուր գալէմի զաթիյի թարաֆընտան մէքթուպ եազըլըպ, ճէվապ ալընմատըղը թագտիրտէ՝ իքինճի մէքթուպ թահրիրիյլէ, մէճլիսի աթիտէ հազըր պուլունմագ իսէ՝ քէնտուսինէ իսթիֆա իթմիշ կիպի նազար օլընաճաղը պիլտիրիլուպ, եինէ կէլմէտիկի թագտիրտէ՝ իսթիֆա իթմիշ ատտ օլընուր։*

Գըրգընճը մատտէ. *Մէճլիսի Ճիսմանի ազասընտան իսթիֆա վուգուպինտէ վէ եախօտ սաիր պիր սէպէպէ մէպնի՝ մէֆգուտ օլանլարըն ատէտի իւչէ պալիղ*

Ընդհանուր Ժողովոյ: Բայց մինչև որ այս ընտրութիւնն ըլլայ, Քաղաքական Ժողովոյ մէջ բոլոր անդամոց մեծագոյն մասը կը փնտռուի։

Յօդ. 41. Քաղաքական Ժողովոյ պաշտօնն է Ազգային քաղաքական գործոց ընդհանուր տեսչութիւնը. Իւր պարտաւորութիւնքն են Ազգին բարեկարգութեան և յառաջադիմութեան մտադրութիւն և փոյթ ունենալ, իր տեսչութեան տակ գտնուող Խորհրդոց կողմէն մատուցուած ազգօգուտ առաջարկութիւնները ուշադրութեամբ քննել, և անոնց կարևորութիւնը յայտնուելէն ետքը՝ հաստատել կամ գործադրութեան արգելքները բառնալու ջանք ընել։

Յօդ. 42. Քաղաքական Ժողովը իրեն եկած գործերը որ Խորհրդոյ վերաբերեալ ըլլան՝ քննուելու համար այն Խորհրդոյն կը յանձնէ. և մինչև որ անոր կարծիքը չառնու՝ չկրնար գործադրութեան ձեռնարկել: Եւ թէպէտ կրնայ իրաւացի պատճառներով հերքել մէկ Խորհրդոյ ըրած որոշումը, բայց ինքնին ուրիշ անօրինութիւն չկրնար ընել նոյն նիւթին վրայ. և կը պարտաւորի դարձեալ նոյն Խորհրդոյն յանձնել գործը: Քաղաքական Ժողովը չը կրնար նաև փոխել կամ լուծել Ազգային խորհուրդներէն մէկը, քանի որ չը տեսնէ զայն Սահմանադրութեան հիմնական սկզբանց հակառակ ընթացքի մէջ: Բայց երբ տեսնէ անոնց մէկը այսպիսի ընթացքի մէջ. առաջին անգամին՝ բացատրութիւն կուզէ նոյն Խորհրդոյ ատենապետէն, երկրորդ անգամին՝ անոր գրով ազդարարութիւններ ընելով, ի կանոնապահութիւն կը հրաւիրէ. իսկ երրորդին՝ անդամները կը փոխէ. միայն թէ այս մասին ունեցած պատճառները պիտի բացատրէ Ընդհանուր Ժողովոյ

օլուրսա, պունլարըն երինէ Մէճլիսի Ումումիյէ ախէրլէրի ա՛զա ինթիխապ օլընուր. վէ պու ինթիխապ վուգու՛ պուլընաճագ թէկլին՝ Մէճլիսի մէզքիւրտէ թէքմիլէն ա՛զա՛ի մէճլիսին էքսէրիյէթի արանըլըր։

Գըրգ պիրինճի մատտէ. Մէճլիսի Ճիսմանիյէնին մէ՛մուրիյէթի՝ Միլլէթին ումուրը ճիսմանիյէսինէ նէզարէթ իթմէքտէն իպարէթ տիր։ Վէ վէզա՛իֆի Միլլէթին ըսլահը ահվալիյլէ իլէրուլէմէսինէ ինթիմամ վէ տիգգաթ խուսուս, գիւյլի նէզարէթինտէ պուլընան գօմիսիօնլար թարաֆընտան քէնտուսինէ իրաէ օլընուպ, Միլլէթճէ մէնֆաա՛թը մուճիպ օլաճագ օլան թասավվուրաթը՝ քէմալի տիգգաթիլէ մութալա՛ա վէ թահգիգ իլէ, լուզումը թէպէյյուն իթթիկի հալտէ՝ թասդիգ իթմէք, վէ եախուտ ֆիիլէ չըգարըլմասընա մանի՛ օլաճագ մէհազիրլէրինին տէֆինէ չալըշմագ խուսուսլարընտան իպարէթ տիր։

Գըրգ իքինճի մատտէ. Մէճլիսի մէզքիւր՝ քէնտուսինէ վարիտ օլան մէսալիհի միւզաքէրէ օլընմագ իւզրէ ա՛իտ օլտըղը գօմիսիօնա իհալէ իտէր, անըն րէյինի թահսիլ իթմէտիքճէ՝ իճրաաթա թէշէպպիւս իթմէզ, վէ գօմիսիօնլարըն գարարընը էսպապը սահիհէյլէ մէյտանա ճէրհ իտէպիլիր իսէ տէ. քէնտուլիքինտէն օլարագ պիր պաշգասընա թէվտի իթթիխազ վէ իճրա իտէմէյուպ, քէյֆիյէթի եինէ օլ գօմիսիօնա հավալէ իթմէկէ մէճպուր տըր։ Վէ գօմիսիօնլարըն պիրինի իշպու Նիզամնամէ էսասը ահքեամընա մուղայիր պիր հարէքէթտէ կէօրմէկտէիսէ՝ թէպտիլ վէ թաղյիր իտէմէզ։ Վէ պիրինին պէօյլէ պիր հարէքէթինի միւշահէտէ իթտիքտէ, իլք տէֆաասընտա՝ վուգու՛ի հալ մէզքիւր գօմիսիօն րէիսինտէն իսթիզահ, վէ իքինճի տէֆաասընտա՝ թաքրիրէն իճրայի իխթար իլէ օլ գօմիսիօնը մուհաֆազայի նիզամէ տա՛վէթ, վէ իւչիւնճի տէֆաասընտա՝ ազլընը թէքլիֆ իտէր. անճագ պու պապտա օլան միւշքիլլէրինի Մէճլիսի Ումումիյէ սէնէ-

ներկայացնելու երկամեայ տեղեկագրին մէջ։

Յօդ. 43. Քաղաքական Ժողովը երբ իրեն եկած քաղաքական գործերէն կարեւոր խնդրոյ մը լուծումը իր ձեռնհասութենէն վեր գտնէ, Ընդհանուր Ժողովոյն կը դիմէ։

Ջ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ ԿՈՂՄԷՆ ԿԱԶՄՈՒԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՔ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆՔ

Յօդ. 44. *Ուսումնական, Տնտեսական և Դատաստանական գործոց և Վանօրէից* տեսչութեան *համար չորս Խորհուրդ.* և մատակարարութեան *պաշտօնով երեք Հոգաբարձութիւն պիտի հաստատուի Քաղաքական Ժողովոյ կողմէն։ Այս Խորհրդոց և Հոգաբարձութեանց անդամները երկու տարի պաշտօն կը վարեն. այն պայմանաւ՝ որ ամեն տարեգլուխ կիսով չափ նորոգուին։*

Դատաստանական խորհրդոյ նախագահը Կ. Պոլսոյ Պատրիարքի փոխանորդն է։

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Յօդ. 45. *Ուսումնական խորհուրդը եօթն ուսումնական աշխարհականներէ կը բաղկանայ։*

Ուսումնական խորհրդոյն պաշտօնն է՝ Հայոց Ազգին դաստիարակութեան և կրթութեան ընդհանուր տեսչութիւնը։ Իր պարտաւորութիւնքն են Ազգային վարժարանաց բարեկարգութեանը հսկել, թէ մանչ և թէ աղջիկ տղայոց դաստիարակութեանը հոգ տանելու նպատակաւ հաստատուած Ընկերութիւններուն խրախոյս տալ և ձեռնտու ըլլալ, դպրատանց դաստիա-

թէյն իխթամընտա իպրազ իտէճէկի մազպաթատա պէյան վէ թաստիգ իտէր։

Գըրգ խըշիւնճի մատտէ. *Մէճլիսի մէզքիւր՝ ումուրը ճիսմանիյէտէն օլարագ բէնտտաքինէ վարիտ օլան պիր մէսէլէի մուհիմմէնին հալլինի տահրէէի իգթիտարը խարիճինտէ տատ իտէր իսէ, օլ հալտէ Մէճլիսի Ումումիյէ միւրաճաաթ իտէր։*

ՄԷՃԼԻՍԻ ՃԻՍՄԱՆԻ ԹԱՐԱՖԸՆՏԱՆ ԹԷՇՔԻԼ ՕԼԸՆԱՆ ԳՕՄԻՍԻՕՆԼԱՐ ԻԼԷ ՄԻՒՏԻՐԼԷՐ ՀԱԳԳԸՆՏԱ ՏԸՐ

Գըրգ ալթընճը մատտէ. *Մաարիֆ վէ Թէսիսաթը խայրիյէ, վէ մուհաքէմաթ, վէ մանասթըրլար մէսալիհինէ պագմագ իչիւն՝ տէօրթ գոմիսիօն իլէ տիկէր իւչ իտարէ գոմիսիօնը Մէճլիսի Ճիսմանի թարաֆընտան ինթիխապ օլընուպ, իշպու գոմիսիօն ազալարը հէր սէնէ պաշընտա՝ նըսֆիյէթ իւզրէ՝ թէպտիլ վէ թէճտիտ օլընմագ իւզրէ իքի սէնէ խըտմէթ իտէրլէր։*

Մուհաքէմէ գոմիսիօնը րէիսի, Պատրիգ վէքիլի օլուր։

ՄԱԱՐԻՖ ԳՕՄԻՍԻՕՆԸ ՊԷՅԱՆԸՆՏԱ ՏԸՐ

Գըրգ եէտինճի մատտէ. *Մաարիֆ գոմիսիօնը՝ ավամտէն վէ էրպապը մաարիֆտէն օլարագ, եէտի ազատէն միւրէքքէպ օլուպ, վազիֆէսի՝ Էրմէնի միլլէթինին թալիմ վէ թէրպիյէսինէ նէզարէթ, վէ միլլէթ մէքթէպլէրինին պիր սուրէթի մունթազամէտէ պուլունմալարընա տիգգաթ, վէ էրքէք վէ գըզ չօճուգլարընըն թալիմ վէ թէրպիյէսի զըմնընտա՝ թէշէքքիւլ իտէն շիրքէթլէրէ իանէ թէշվիգաթ վէ մուավէնէթ, վէ մէքթէպ հօճալարընըն բալանը անիվալինէ վէ թէմինի հալի միւսթագ-*

ւակներուն կացութիւնը լուսցունելու և ապագային ան-դորրելու խնամ տանել. Ազգին մէջ յաջողակ և քաջահը-մուտ դասատուներ հասցունելու, և դպրոցական դա-սագիրքեր պատրաստելու ջանք և փոյթ ունենայ։

Ուսումնական խորհուրդը Ազգային վարժարանաց մէջ ուսմունքներն լրացունող աշակերտաց վկայական կուտայ. ուսմանց դասագիրքերը կորոշէ, և տարեկան քննութիւնները կը կատարէ։

Իսկ կրօնական ուսմանց համար Կրօնական Ժո-ղովին կը դիմէ, վասն զի այս Ժողովը կորոշէ կրօնա-կան գիտութեանց դասագրքերը և դասատուները, քըն-նութիւնները կընէ և վկայականը կուտայ։

2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Յօդ. 46. Տնտեսական խորհուրդը կը բաղկանայ եօթն տնտեսագէտ աշխարհականներէ, զորս Քաղաքա-կան Ժողովը կընտրէ բուէից առաւելութեամբ։

Տնտեսական խորհրդոյն պաշտօնն է՝ Կ. Պոլսոյ մէջ գտնուած Ազգային բոլոր Հաստատութեանց և ա-նոնց կալուածներուն մատակարարութեան ընդհանուր տեսչութիւնը։ Իր պարտաւորութիւնն է՝ նոյն հաս-տատութեանց բարեկարգութեանը անխոնջ հսկել և հոգ տանիլ։

Տնտեսական խորհուրդը պէտք է հոգ տանի որ ամեն Ազգային կալուած օրինաւոր կալուածագիր ու-նենայ։ Թէ Կ. Պոլսոյ և թէ գաւառներու մէջ գտնուած Ազգային անշարժ ստացուածոց կալուածագրերուն օ-րինակները՝ Տնտեսական Խորհրդոյ ձեռօք ժողվուելով Պատրիարքարանի դիւանատան մէջ պիտի պահուին։

պէյլէրի իլէ էհլ վէ էրպապ հօճալար իսթիշտիրիլմէսի-նէ, վէ մէքաթիպի մէզքիւրէյէ մախսուս՝ տէրս քի-թապլարը թէտարիք օլունմասընա իգտամ վէ դայրէթ իթմէք խուսուսլարընտան իպարէթ տիր։

Վէ պու մէքթէպլէրտէ թահսիլի փունուն իտէն-լէրէ շահատէթնամէ իթաս վէ տէրս քիթապլարընը թա՛յինի վէ իմթիհանը սէնէվիլէրի խուսուսլարը մէզ-քիւր գօմիսիօն մա՛րիֆէթի իլէ իճրա օլունուր։

Ֆագաթ թալիմի մէզհէպ իտէնլէրին Մէճլիսի րուհանիտէն շահատէթնամէ ալմալարը, վէ մէզհէպ քի-թապլարը իլէ մուալլիմլէրի հագգընտա՝ մէճլիսի մէզ-քիւրէ միւրաճա՛աթ օլունմասը իգթիզա իտէր։ Վէ թա՛լիմի մէզհէպ իմթիհանը տախի՝ Մէճլիսի րուհանի մա՛րիֆէթիյլէ իճրա գըլնուր։

ԹԷՍԻՍԱԹ ԳՕՄԻՍԻՕՆԸ ՊԷՅԱՆԸՆՏԱ ՏԸՐ

Գըրգ ալթընճը մատտէ. Թէսիսաթ գօմիսիօնը՝ ա՛-վամտէն վէ էրպապը վուգուֆտէն օլուպ, Մէճլիսի Ճիսմանիտէ էքսէրիյէթ արա իլէ ինթիխապ օլունմագ իւզրէ՝ եէտի ազատէն միւրէքքէպ տիր։

Գօմիսիօնը մէզքիւրըն վազիֆէի մէմուրիյէթի Տէրի Սա՛ատէթտէ վագը՝ քեաֆֆէի թէսիսաթը Միլլիյէ, վէ պունլարըն ազարաթը իտարէսինէ ումումէն նէզա-րէթ իթմէք, վէ թէսիսաթը մէզքիւրէնին թանզիմ վէ թէրթիպինէ տիգգաթ վէ իգտամ էյլէմէք խուսուսլարըն-տան իպարէթ տիր։

Գօմիսիօնը մէզքիւր պիլճիւմլէ էմլաքի Միլլիյէ սէնէտաթընըն մէվճուտ օլմասընա տիգգաթ իտէճէք, վէ Միլլէթին կէրէք Տէրի Սա՛ատէթտէ վէ կէրէք տաշ-րալարտա քեաֆֆէի էմլաքը դայրը մէնգուլէ-սինին սէնէտաթը սուրէթլէրի պու գօմիսիօն մա՛րիֆէ-թիյլէ Թօփլանըլարագ Պատրիգխանէ գալէմինտէ հըֆզ օլունաճագ տըր։

Ազգային օր և է կալուածոյ գնումն ու վաճառումը չկրնար տեղի ունենալ, առանց Տնտեսական Խորհրդոյ գիտութեան, Քաղաքական Ժողովոյ հաճութեան և Պատրիարքի կնքով հաստատութեան։

Այս տրամադրութեանց ուժովը Եկեղեցիներու մխիթարութիւն բռնուած բանը վերցուած է Հայոց Ազգին համար։

Կ. Պոլսոյ և շրջակայից մէջ Ազգային օր և է շինութեանց կամ վերանորոգութեանց չկրնար ձեռնարկուիլ, առանց գիտութեան Տնտեսական Խորհրդոյ, և հաճութեան Քաղաքական Ժողովոյ։

Տնտեսական Խորհուրդը՝ ազգային Ելևմտից, Կտակաց և Հիւանդանոցի Հոգաբարձութիւններուն նաև Թաղական Խորհուրդներուն մատակարարութեանը վրայ հսկողութիւն պիտի ընէ. և ասոնց ամէն մէկէն որոշեալ ժամանակներ համար պահանջելով, Քաղաքական Ժողովոյն պիտի հաղորդէ։

Տնտեսական Խորհուրդը տարեգլխէն երկու ամիս առաջ յառաջայ տարւոյ մէջ ըլլալիք հասոյթն ու ծախքը Ելևմտից Հոգաբարձութենէն առնելով, հաշուեկշիռը պիտի պատրաստէ և Քաղաքական Ժողովոյն ներկայացունէ։

3. ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Յօդ. 47. Դատաստանական Խորհուրդը կը բաղկանայ ութ իրաւագէտ, և ամուսնացեալ և քառասուն տարին լրացուցած անձերէ, որոց չորսը եկեղեցական և չորսը աշխարհական պիտի ըլլան։

Դատաստանական Խորհրդոյ նախագահը Պատրիարքի փոխանորդն է. և անդամներուն բոլորն ալ Խառն Ժողովոյ կողմէն կընտրուին՝ քուէից առաւելութեամբ։

Դատաստանական Խորհրդոյ պաշտօնն է՝ ընտա-

Վէ պու գոմիսիօնըն մարիֆէթի վէ Մէճլիսի Ճիսմանինին մուվաֆագաթը իլէ Պատրիգին խաթթէմ-հիր թաստիգի օլմատըգճա էմլաքի միլլիյէնին պէյ ու ֆիւրուխթի ճաիզ օլամայաճագ տըր։

Խուսուսաթը մէշրուհէ իգթիզասընճա Թէվլիյէթ ուսուլի Էրմէնի միլլէթինէ մունհասիր տըր։

Պու գոմիսիօնըն մարիֆէթի վէ Մէճլիսի Ճիսմանինին բիլգասը օլմատըգճա Տէրի Սա'ատէթ վէ հավալիսինտէ պիր կիւնա ինշա'աթ վէ թա'միրաթ իճրա օլընամազ։

Գոմիսիօնը մէզգիւր մուհասէպէ վէ վասիյէթ վէ խասթախանէ միւտիրլէրինին Քիլիսա ձէմիյէթլէրինին իտարէսի հագգընտա իճրայի նէզարէթ իտէճէք. վէ պունլարըն հէր պիրինտէն էվգաթը մուայյէնէտէ հիսապ իսթէյէրէք, Մէճլիսի Ճիսմանիյէ թէպլիղ իտէճէք տիր։

Գոմիսիօնը մէզգիւր սէնէ պաշընտան իքի այ մուգատտէմ սէնէի աթիյէ վարիտաթ վէ մէսարիֆինի Մուհասէպէ միւտիրլէրինտէն թահգիգ, վէ պիր գըթա մուվազէնէ տէֆթէրի թանզիմ իլէ Մէճլիսի Ճիսմանիյէ իպրազ էյլէյէճէք տիր։

ՄՈՒՀԱՔԷՄԷ ԳՈՄԻՍԻՕՆԸ ՊԷՅԱՆԸՆՏԱ ՏԸՐ

Գըրգ եօտինճի մատտէ. Մուհաքէմէ գոմիսիօնը ազասը, տէօրթ նէֆէրի էհլի քիլիսատէն վէ տէօրտիւ ավամտէն օլմագ վէ Պատրիգ վէքիլինին թահթը րիյասէթինտէ պուլունմագ իւզրէ, գըրգ եաշընը թէքմիլ իթմիշ վէ միւթէէհհիլ սէքիզ նէֆէր էրպապը վուգուֆտէն միւրէքքէպ օլուպ, պունլարըն ճիւմլէսի Մէճլիսի Մուխթէլիթ թարաֆընտան էքսէրիյէթի արա իլէ ինթիխապ օլընուր։

Պու գոմիսիօն ֆամիլիաճա զուհուրէ կէլէն մու-

նեկան վէճերը լուծել. և Բ. Դրան կողմէն Պատրիարքարան յանձնուած դատերը՝ յանձնարարութեան համեմատ քննել և որոշել։

Երբ պատահի այնպիսի դատ մը զոր Դատաստանական Խորհուրդը իր ձեռնհասութենէն վեր դատէ, ըստ պահանջման խնդրոյն կամ Կրօնական կամ Քաղաքական և կամ Խառն Ժողովոյն յանձնուելուն հարկաւորութիւնը կը ցուցնէ։

Եթէ Դատաստանական Խորհրդոյ մէջ որոշուած դատի մը դէմ բողոքէ դատապարտեալը, խնդիրը վերստին կը քննուի յիշեալ Ժողովներուն մէկուն մէջ՝ որուն որ կը վերաբերի։

Դ. ՎԱՆՕՐԷԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ

Յօդ. 48. *Վանքերն Ազգին սեպհական ստացուածքն ըլլալով, Ազգին կը վերաբերի անոնց մատակարարութեան, հասութից ու ծախուց ընդհանուր տեսչութեան և քննութեան իրաւունքը։*

Ըստ որում հարկաւոր է, որ ամեն Վանք իրեն համար յատուկ կանոններ ունենայ, Կեդրոնական Վարչութեան Կրօնական և Քաղաքական ժողովները Խառն Ժողով կազմելով, իւրաքանչիւր Վանքի Միաբանութեան, նաև Վանօրէից Խորհուրդին կարծիքն առնելէ ետքը, պէտք եղած Կանոնադրութիւնը կը պատրաստեն, և Ազգային Ընդհանուր Ժողովոյ հաստատել կուտան։

Սոյն Կանոնադրութեանց հիմնական սկզբունքն են։

Ա. Իւրաքանչիւր Վանքի մասնաւոր մատակարարութիւնը իր Միաբանութեան կը վերաբերի։ Իսկ ամենուն վրայ ընդհանուր տեսչութիւն ընելու իրաւունքը Կեդրոնական Վարչութեան կը վերաբերի, որ կը գործադրէ Վանօրէից խորհրդին ձեռօք։

նազամաթը թէսվիյէ, վէ Պապը Ալիտէն Պատրիգխանէյէ հավալէ օլընան տավալարը հավալէ իւզէրինէ րույէթ էյլէր. վէ քէստիրէմէտիկի տավալարը՝ մէվատտը րուհանիյէտէն իսէ Մէճլիսի Րուհանիյէ վէ մէվատը տիւնեէվիյէտէն իսէ՝ Մէճլիսի Ճիսմանիյէ, վէ իքի թարաֆա աաիտ թաալլիւգի վար իսէ՝ Մէճլիսի Մուխթէլիթէ հավալէսինի կէօսթէրիր։

Վէ մէզքիւր գոմիսիօնտա րույէթ օլընան պիր տավա՝ մահքիւմուն ալէյ՚ին իթիրաար իւզէրինէ՝ պու մէճլիսլէրտէն պիրինտէ իսթինաֆ օլընուր։

ՄԱՆԱՍԹԸՐԼԱՐ ԳՕՄԻՍԻՕՆԸ ՊԷՑԱՆԸՆՏԱ ՏԸՐ

Գըրգ սէքիզինճի մատտէ. *Մանասթըրլար՝ Միլլէթին էմվալը մախսուսէսինտէն մատտուտ օլուպ, պունլարըն իտարէսի, վէ վարիտաթ վէ մասարիֆաթլարընըն նէզարէթի իլէ րույէթ վէ թահգիգի հուգուգը Միլլէթէ աիտ տիր։ Հէր մանասթըրըն՝ քէնտի ուսուլի մախսուսէ օլմագ լազըմ կէլտիկինտէն, Րուհանի վէ Ճիսմանի Մէճլիսլէրինին իճթիմայիլէ թէշէքքիւլ իտէն Մէճլիսի Մուխթէլիթ՝ հէր պիր մանասթըր ճէմաաթը իլէ մանասթըրլար Գօմիսիօնընըն էֆքեարընը պատէթթահսիլ՝ իճապ իտէն թալիմաթը թէրթիպ իտէր, վէ Մէճլիսի Ումումիյէ թաստիգ իթտիրիր։*

Թալիմաթը մէզքիւրէնին ուսուլի էսասիյէսի պէր վէճհի աթի պէյան օլընուր։

Էվվէլա՝ հէր պիր մանասթըրըն իտարէի մախսուսէսի՝ օլ մանասթըր ճէմաաթընա աիտ օլուպ, պիլճիւմլէ մանասթըրլարա ումումէն նէզարէթ իթմէք հագգը՝ մանասթըրլար Գօմիսիօնը մարիֆէթիյլէ իճրա օլընմագ իւզրէ՝ Պատրիգխանէ Մէճլիսլէրինէ րաճի տիր։

Բ. Իւրաքանչիւր Վանքի Վանահայրը իր Միաբանութեան կողմէն կընտրուի, և Կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովոյ հաւանութեամբը Պատրիարքէ ձեռօք կը հաստատուի։

Վանահայր ըլլալու անձը պէտք է որ երեսունըհինգ տարին լրացուցած, և Օսմանեան Տէրութեան հպատակ Վարդապետներէն ըլլայ։

Գ. Բոլոր Վանքերը Ազգին բարոյական զարգացմանը ծառայելու պարտաւոր են. ուստի ամեն մէկը իր կարողութեան չափով՝ ունենալու է Ընծայարան, Թանգարան, Տպարան, Հիւանդանոց, և սոյնց պէս ուրիշ ազգօգուտ հաստատութիւններ։

Վանօրէից Խորհուրդը կը բաղկանայ եօթն անձերէ, զոր Քաղաքական Ժողովը կընտրէ բուէից առաւելութեամբ։

Վանօրէից Խորհրդին պաշտօնն ու պարտաւորութիւնն է՝ իւրաքանչիւր Վանքի կանոնաց գործադրութեանը հսկել և վերատեսչութիւն ընել. եկամուտներն ու հասոյթները ստուգել. և ծախքերը քննել ու կանոնաւորել։

Վանօրէից խորհուրդը կընտրէ Վանականներուն մէջէն իւրաքանչիւր Վանքի մատակարարութեան պաշտօնին համար պէտք եղած անձինքը։ Ասոնք՝ Վանահօր նախագահութեամբ՝ և իրենց Վանքին յատկացեալ կանոններուն համաձայն Վանքը տնտեսելով, որոշեալ ժամանակներ՝ հաշուեհամար կուտան Վանօրէից Խորհուրդին։

5. ԵԼԵՒՄՏԻՑ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Յօդ. 49. Ելևմտից Հոգաբարձութիւնը կը բաղկա-

Սանիա՝ հէր պիր մանասթըր րէիսի՝ օլ մանասթըրըն ճէմաաթը թարաֆընտան ինթիխապ օլընուպ, Պաթրիգխանէ Մէճլիսլէրինին պիրլէշմէսի իլէ թէշէքքիւլ իտէն Մէճլիսի Մուխթէլիթին մուվաֆագաթը իլէ Պաթրիգ թարաֆընտան թաստիգ օլընուր։ Րէիսի մումաիլէյհին թէպաայի Տէվլէթի Ալիյյէտէն օլարագ՝ օթուզ պէշ եաշընը թէքմիլ իթմիշ րուհպանտէն օլմասը լազըմ տըր։

Սալիսա՝ պիլճիւմլէ մանասթըրլար Միլլէթին թէրպիյէի մէնաֆիի մանէվիյյէսինէ չալըշմագա մէճպուր օլաճագլարընտան, հէր պիրի՝ տէրէճէի գուտրէթինէ կէօրէ՝ փափաս մէքթէպի վէ քիւթիւպխանէ, վէ թապխանէ, վէ հասթախանէ միսիլլու՝ միլլէթճէ մէնֆաաթը մուճիպ օլաճագ թէսիսաթը շամիլ օլաճագ տըր։

Մանասթըրլար Գոմիսիոնը՝ Մէճլիսի Ճիսմանիտէ էքսէրիյէթի արա իլէ ինթիխապ օլընմագ իւզրէ՝ եէտի նէֆէրտէն միւրէքքէպ տիր։

Գոմիսիոնը մէզքիւրըն վազիֆէի խըտմէթի՝ հէր պիր մանասթըր նիզամաթընըն իճրայի ահքեամընա տիգգաթ վէ նէզարէթ իթմէք իւզրէ՝ վարիտաթ վէ հասըլաթընը թահգիգ իլէ մասարիֆի վագըասընը րուեէթ վէ թանզիմ էյլէմէք խուսուսընտան իպարէթ տիր։

Գոմիսիոնը մէզքիւր հէր պիր մանասթըրըն իտարէի մախսուսէսի խըտմէթինի իֆա իթմէք իւզրէ իգթիզա իտէն էշխասը օլ մանասթըր ճէմաաթը իչինտէն ինթիխապ իտէր։ Վէ էշխասը մէզքիւրէ մանասթըր րէիսինին թահթը րիյասէթինտէ օլարագ՝ մանասթըրլարընը թալիմաթը մախսուսէյէ թաթպիգան իտարէ իլէ, էվգաթը մուայյէնէտէ գոմիսիոնը մէզքիւրէ հիսապ վիրիրլէր։

ՄՈՒՀԱՍԷՊԷ ԻՏԱՐԷՍԻ ԳՕՄԻՍԻՕՆԸՆԱ ՏԱԻՐ ՏԻՐ

Գըրգ տօգուզընճը մատտէ. Մուհասէպէ միւտիրիյէ-

նայ եօթն հաշուագէտ անձինքէ, զոր Քաղաքական Ժողովը կընտրէ քուէից առաւելութեամբ։

Ելեմտից Հոգաբարձութեան պաշտօնն է Ազգային Կեդրոնական Սնտուկին տնտեսութիւնն ու համարակալութիւնը։

Այս Սնտուկին մուտքն են՝ Ազգային Ընդհանուր տուրք, Կոստանդնուպօլսոյ Պատրիարքական Դիւանատան հասոյթք, և առանց մասնաւոր տեղ մը որոշելու Ազգին անուանը եղած կտակ կամ նուէր։ Ելքն են՝ Պատրիարքարանի և Դիւանատան սովորական ծախք, Կեդրոնական Վարչութեան ձեռքը եղած Ազգային հաստատութեանց և կարօտեալ Թաղերու տրուելիք նպաստ, և զանազան՝ ուրիշ պատահական ծախք։

Ելեմտից Հոգաբարձութիւնը կը հաւաքէ ամեն այս հասոյթները. և իր ձեռօք կըլլան յիշեալ ծախքերը. միշտ Տնտեսական Խորհուրդին գիտութեամբը և Քաղաքական Ժողովոյ հաւանութեամբը։

Ելեմտից Հոգաբարձութիւնը պարտաւոր է իր տնտեսութեան յանձնուած Ազգային Սնտուկին հաշիւը Տոմարակալութեան կանոնաւ կարգադրել, և որոշեալ ժամանակներ հաշուեցուցակ ներկայացնել Տնտեսական Խորհուրդին, որ ստուգելով և վաւերացունելով կը հաղորդէ Քաղաքական Ժողովոյն։

6. ԿՏԱԿԱՑ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Յօդ. 50. Կտակաց Հոգաբարձութիւնը կը բաղկանայ եօթն անձինքէ, որոց երեքը եկեղեցական և չորսը աշխարհական՝ Խառն Ժողովով կընտրուին քուէից առաւելութեամբ։

րի էրպապը վուգուֆտան օլարագ՝ եատի քիշիտէն իպարէթ օլուպ, Մէճլիսի Ճիսմանիտէ՝ էքսէրիյէթի արա իլէ ինթիխապ օլընուրլար։

Պունլարըն խըտմէթի՝ Միլլէթ Սանտըղընը իտարէ վէ մուհասէպաթընը րույէթ իթմէք տիր։

Իշպու սանտըղըն իրատը՝ Իանէի ումումիյէ վէ Սթանպօլ Պաթրիգխանէ գալէմի հասըլաթը, վէ մահալլի սարֆը թախսիս օլընմայարագ՝ Միլլէթ նամընա վուգու պուլան վասիյէթ վէ հէտիյէտէն. վէ մասրաֆը տախի՝ Պաթրիգխանէ իլէ Պաթրիգխանէ գալէմինին մասարիֆի ատիյէսի, վէ Պաթրիգխանէնին զիյրի իտարէսինտէ պուլընան թէսիսաթը միլլիյէյէ վէ միւհթաճ օլան Քիլիսա ճէմաաթլարընա իթա օլընաճագ իանէ իլէ սաիր վուգու պուլաճագ մասարիֆի միւթէֆէրրիգատան իպարէթ տիր։

Միւտիրանը մէրգումէ՝ Թէսիսաթ Գոմիսիոնընըն մարիֆէթի վէ Մէճլիսի Ճիսմանինին մուվաֆագաթը իլէ՝ քեաֆֆէի վարիտաթը մէզքիւրէյի թահսիլ, վէ մասարիֆի մէզքիւրէյի թէսվիյէ իտէր. վէ իտարէսի քէնտուլէրինէ մուհավվէլ օլան Միլլէթ Սանտըղընըն մուհասէպէսինի ուսուլի ճէտիտէ իւզրէ թութարագ՝ պիր գըթա տէֆթէրինի էվգաթը մուայյէնէտէ Թէսիսաթ Գոմիսիոնընա իպրազ էյլէրլէր։ Իշպու տէֆթէր՝ Գոմիսիոնը մէզքիւրտէ պիլմուայէնէ թաստիգ օլընտըգտան սոնրա՝ Մէճլիսի Ճիսմանիյէ իպրազ օլընուր։

ՎԱՍԻՅԷԹ ԻՏԱՐԷՍԻ ԳՕՄԻՍԻՕՆԸՆԱ ՏԱԻՐ ՏԻՐ

Էլլինճի մատտէ. Վասիյէթ միւտիրլէրի՝ իւչի էհլի քիլիսատէն վէ տէօրտի ավամտէն օլմագ իւզրէ՝ եատի քիշիտէն միւրէքքէպ օլուպ, պունլարըն ճիւմլէսի էքսէրիյէթի արա իլէ Մէճլիսի Մուխթէլիթտէն ինթիխապ օլընուր։

Կտակաց Հոգաբարձութեան պաշտօնն է՝ ազգային կտակաց տնօրէնութիւնը։ Իր պարտաւորութիւնն է՝ կտակաց օրինաւոր կերպիւ և կտակարարին նպատակին և դիտաւորութեանը համեմատ գործադրութեանը հսկել։

Կտակաց Հոգաբարձութեան համար պէտք եղած մասնաւոր կանոնագրութիւնը՝ Խառն Ժողովը պիտի պատրաստէ Կտակաց Հոգաբարձութեան և Տնտեսական Խորհուրդին կարծիքն առնելով. և Ընդհանուր Ժողովը պիտի հաստատէ։

Կտակաց Հոգաբարձութիւնը որոշեալ ժամանակներ իր պաշտօնին վերաբերեալ հաշիւները պիտի ներկայացունէ Տնտեսական Խորհուրդին, որ ստուգելով և վաւերացունելով պիտի հաղորդէ Քաղաքական Ժողովոյն։

7. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Յօդ. 51. *Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը կը բաղկանայ ինն անձինքէ, զոր Քաղաքական Ժողովը կընտրէ քուէից առաւելութեամբ։ Ասոնց երկուքը վկայեալ բժիշկ պիտի ըլլան։*

Հիւանդանոցի Հոգաբարձութեան պաշտօնն է՝ Ազգային Հիւանդանոցը և անոր սեպհական կալուածներն ու եկամուտները տնտեսել, և անոնց հասոյթովը ու Ազգային Սնտուկին նպաստիւը մատակարարել զայն։

Այս Հաստատութիւնը չորս շրջանակի բաժնուելով, մէկը՝ աղքատիկ հիւանդները դարմանելու, երկրորդը՝ ծեր և անկար աղքատները պատսպարելու, երրորդը՝ խելագարները խնամելու, և չորրորդը՝ որբ և

Միւտիրանը մէրգումէնին վազիֆէի խըտմէթլէրի՝ Միլլէթէ վագը օլան վասիյէթլէրի իտարէ վէ ահքեամը միւնտէրիճէլէրինին սուրէթի մէշրուէտէ վէ մուվասինին նիյյէթ վէ թամիմաթընա մութապըգ վէճհիլէ իճրայէ գօնըլմասընա տիգգաթ իթմէք խուսուսլարընտան իպարէթ տիր։

Վասիյէթ Իտարէսինէ ամիտ իգթիզա իտէն թալիմաթը մախսուսէ՝ Միւտիրանը մէրգումէնին վէ Թէսիսաթ Գոմիսիօնընըն րէյյի թահսիլ օլընարագ՝ Մէճլիսի Մուխթէլիթ թարաֆընտան թէրթիպ վէ Մէճլիսի Ումումիտէ թաստիգ օլընաճագ տըր։

Միւտիրանը մէրգումէ՝ քէնտու խըտմէթլէրինէ ամիտ օլան մուհասէպաթըն պիր գըթա տէֆթէրինի էվգաթը մուայյէնէտէ Թէսիսաթ Գոմիսիօնընա իպրազ իտէրլէր, վէ իշպու տէֆթէր Գոմիսիօնը մէզքիւր թարաֆընտան պիլմուայյէնէ թաստիգ օլընարագտան սօնրա՝ Ճիսմանի Մէճլիսինէ իպրազ գըլընըր։

ՀԱՍԹԱԽԱՆԷ ԻՏԱՐԷՍԻ ԳՕՄԻՍԻՕՆԸՆԱ ՏԱԻՐ ՏԻՐ

Եդի պիրինճի մատտէ. *Հասթախանէ Միւտիրլէրի՝ իքիսի թապապէթ րուուսընը համիլ աթըպպատէն օլմագ իւզրէ՝ տօգուզ քիշիտէն միւրէքքէպ օլուպ, էքսէրիյէթի արա իլէ Մէճլիսի Ճիսմանիտէ ինթիխապ օլընուրլար։*

Միւտիրանի մէրգումէնին վազիֆէսի՝ կէրէք Միլլէթ Հասթախանէսինէ վէ կէրէք անըն ագարաթ վէ վարիտաթը մախսուսէսինէ նէզարէթ իտուպ, պունլարըն հասըլաթը վէ Միլլէթ Սանտըղընըն իանէսի իլէ Հասթախանէյի մէզքիւրը իտարէ իթմէքտիր։

Իշպու Հասթախանէ՝ տէօրթ տայիրէյէ թագսիմ օլընուպ, պիրի՝ ֆուգարատէն օլան հասթալարա, վէ տիկէրի՝ իխթիյար վէ ամէլմանտէ ֆուգարայա, վէ իւչիւնճիւսի՝ մէճանինէ, տէօրտիւնճիւսի՝ Թայիմ վէ

Ամէն Թաղական Խորհուրդ իր Թաղին մէջ եղած ծննդոց, ամուսնութեանց և վախճանմանց արձանագրութիւնը պիտի ընէ կանոնաւոր կերպով մասնաւոր Տումարի մը մէջ։

Յօդ. 54. Թաղական Խորհուրդները՝ իրենց պաշտօնին վերաբերեալ գործոց մէջ Տեսուչ Խորհուրդներուն հետ ուղղակի յարաբերութիւն ունին. այսինքն՝ դպրատանց համար՝ Ուսումնական Խորհրդին հետ. անտեսական և դրամական գործոց համար՝ Տնտեսական Խորհրդին հետ. դատի վերաբերեալ գործոց համար՝ Դատաստանական Խորհրդին հետ։ Եւ ասոնց ամէն մէկին որոշեալ ժամանակներ համար պիտի տան իւրաքանչիւրին վերաբերեալ գործոց վրայ։

Յօդ. 55. Իւրաքանչիւր Թաղական Խորհուրդ իր Թաղին Ժողովրդեան կողմէն կընտրուի։

Ամէն ազգային անհատ որ քսան և հինգ տարին լրացուցած է. և ըստ 67-դ յօդուածոյ Սահմանադրութեան՝ ընտրողութեան իրաւունքէն դատաստանաւ զրկուած չէ, իրաւունք ունի մասնակից ըլլալ ընտրութեան Թաղական Խորհրդոյ անդամոց։

Յօդ. 56. Թաղական Խորհրդոց պարտաւորութիւնն ու ընթացքը սահմանելու համար պէտք եղած կանոնագրութիւնը Կրօնական և Քաղաքական Ժողովներուն ձեռօք պիտի շինուի։

Թաղական Խորհրդոց անդամներուն պաշտօնը չորս տարի կը տևէ. հինգերորդ տարւոյն սկիզբը կը նորոգուին, և անմիջապէս վերընտրելի են։

ագձէսինտէն իպարէթ տիր։

Հէր Քիլիսա ճէմիյէթի՝ պուլընտուղը ճէմաաթտա թէվէլլիւտ վէ վէֆաթ վէ թէէհհիւլ իտէն նուֆուսը սուրէթի մունթազամէտէ պիր գըթա տէֆթէրէ գայտ իտէճէք տիր։

Էլլի տէօրտիւնճի մատտէ. Մէզքիւր ճէմիյէթլէրին իֆաի խըտմէթլէրի զըմնընտա՝ տօղրըտան տօղրըյա գիրը օլընան Գօմիսիօնլար իլէ մունասէպէթլէրի օլաճագընտան, մէքթէպլէր հագգընտա՝ Մաարիֆ Գօմիսիօնընա, վէ իտարէճէ մէվատտ հագգընտա՝ Թէխսիսաթ Գօմիսիօնընա, վէ մէվատտի տաավա հագգընտա՝ Մուհաքէմէ Գօմիսիօնընա մուրաճաաթ իտէր. վէ մէզքիւր Գօմիսիօնլարըն հէր պիրինէ տէրի օլան խուսուսաթը՝ օլ Գօմիսիօնա էվգաթը մուայյէնէտէ իրաէ էյլէր։

Էլլի պէշինճի մատտէ. Հէր Քիլիսա ճէմիյէթի մէնսուպ օլտուղու Քիլիսա ճէմաաթը թարաֆընտան ինթիխապ օլընուր։

Եիկիրմի պէշ եաշընը թէքմիլ իթմիշ օլուպ տա, ալթմըշ եօտինճի մատտէ իգթիզասընճա, մահքէմէճէ հագգը ինթիխապտէն մահրում օլմայան քեաֆֆէի էֆրատըն Քիլիսա ճէմիյէթի ինթիխապընտա միւշարէքէթէ սալահիյէթի վար տըր։

Էլլի ալթընճը մատտէ. Քիլիսա ճէմիյէթլէրինին վազաիֆ վէ հարէքէաթընը թանզիմ վէ թային զըմնընտա լազըմ կէլէն թալիմաթ Ռուհանի վէ Ճիսմանի Մէճլիսլէրի մարիֆէթիյլէ թանզիմ օլընաճագ տըր։

Քիլիսա ճէմիյէթլէրի ազասը տէօրթ սէնէ իճրայի խըտմէթ իտուպ, պէշինճի սէնէ իպթիտասընտա՝ եէնիտէն ինթիխապ օլընա պիլմէք իւզրէ թէճտիտ օլընուրլար։

Ը. ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Յօդ. 57. Ազգային Ընդհանուր Ժողովը հարիւր քառասուն Երեսփոխաններէ կը բաղկանայ. որոնց՝

Ա. Մէկ եօթներորդ մասը, այսինքն քսանը, Եկեղեցական Երեսփոխանք են, զոր Կոստանդնուպօլսոյ մէջ գտնուող Եկեղեցականք կընտրեն։

Բ. Երկու եօթներորդ մասը, այսինքն քառասունը, գաւառներէն գալիք Ազգային Երեսփոխանք են։

Գ. Չորս եօթներորդ մասը, այսինքն ութսունը, Կոստանդնուպօլսոյ թաղերէն ընտրուած Երեսփոխանք են։

Յօդ. 58. Կրօնական և Քաղաքական Ժողովոց անդամները Ընդհանուր Ժողովին ներկայ կը գտնուին. բայց եթէ Երեսփոխան ընտրուած չեն՝ Ընդհանուր Ժողովին մէջ քուէ չունին։

Յօդ. 59. Ընդհանուր Ժողովը նիստ չկրնար ընել՝ մինչև որ անդամոց մեծագոյն մասը՝ այսինքն գոնէ եօթանասունումէկ հոգի ներկայ չըլլայ։

Յօդ. 60. Ընդհանուր Ժողովին պաշտօնն է՝ Պատրիարքը, Կաթողիկոսը և Ազգին գլխաւոր պաշտօնատարները, և Կրօնական ու Քաղաքական Ժողովոց անդամները ընտրել. Ազգային Ժողովոց վարչութեանը հսկողութիւն ընել. սոյն ժողովներուն վերաբերեալ՝ բայց իրենց ձեռնհասութենէն վեր համարուած գործերը որոշել և վճռել. և Ազգային Սահմանադրութիւնը անխախտ պահել։

ՄԷՃԼԻՍԻ ՈՒՄՈՒՄԻՆԻՆ ՍՈՒՐԷԹԻ ԹԷՇՔԻԼԻ ՎԷ ՎԱԶԱՒՖԻ ՊԷՅԱՆԸՆՏԱ ՏԸՐ

Էլլի ետինճի մատտէ. Մէճլիսի Ումումի իւզ գըրգ ազատէն միւրէքքէպ տիր։

Ազաի մէրգումէ իւչ գըսմ օլուպ՝

Պիրինճի գըսմը օլարագ՝ պիր սիւպի քի իկիրմի նէֆէրի, Սթանպօլտա պուլընան էհլի քիլիսա թարաֆընտան ինթիխապ օլընան էհլի Քիլիսա.

Իքինճի գըսմը օլարագ իքի սիւպի օլան գըրգ նէֆէրի քի տաշրալարտան կէլէճէք Միլլէթ Վէքիլլէրի տիր.

Իւչիւնճի գըսմը օլարագ՝ տէօրթ սիւպի եանի սէքսէն նէֆէրի Տէրի Սաատէթ Քիլիսա ճէմաաթլարը թարաֆընտան ինթիխապ օլընան Վէքիլլէր տիր։

Էլլի սէքիզինճի մատտէ. Րուհանի վէ Ճիսմանի Մէճլիսլէրինին ազասը Մէճլիսի Ումումիյէ տախիլ օլուպ, ֆագաթ Մէճլիսի Ումումի ազալըղընա ինթիխապ օլընմամըշլար իսէ՝ Մէճլիսի միւզաքէրատէ սահիպի րէյ օլամայաճագլար տըր։

Էլլի տօգուզունճը մատտէ. Մէճլիսի Ումումինին էքսէր ազասը, եանի լաագալլ եէթմիշ պիր նէֆէրի հազըր օլմատըգճա՝ ագտի մէճլիս օլընամազ։

Ալթմըշընճը մատտէ. Տէրի Սաատէթ Պատրիգի վէ Կաթուղիկոս միւխիլլու Միլլէթին պաշլը միւսթախտէմլէրինի, վէ Րուհանի վէ Ճիսմանի Մէճլիսլէրին ազասընը ինթիխապ իթմէք, վէ պու Մէճլիսլէրին մուամէլաթընա նէզարէթ էյլէմէք, վէ անլարա մուհավվէլ օլուպտա՝ քէնտիլէրինին քէսպիրէմէտիքլէրի մէսալիհ զուհուրինտէ՝ հալլ վէ թէսվիյէ էյլէմէք, վէ իշպու Նիզամնամէյի խալէլտէն մուհաֆազա էյլէմէք Մէճլիսի Ումումինին վազաիֆինտէն տիր։

Յօդ. 61. Ընդհանուր Ժողովը կը գումարուի՝

Ա. Ըստ վաղեմի սովորութեան ամեն երկու տարին անգամ մը, ապրիլ ամսոյ վերջերը՝ Ազգային Վարչութեան երկամեայ ընթացքին տեղեկագիրը մտիկ ընելու, և Ելմտական պաշտօնակալաց ձեռօք ժողովուած և ծախս եղած գումարներուն ընդհանուր հաշիւը տեսնելու և քննելու, Կրօնական և Քաղաքական Ժողովոց բոլոր անդամները փոխելով ուրիշներ ընտրելու, և յետագայ երկու տարուան մէջ Ազգային տուրքը ինչպէս տնօրինուելիքը սահմանելու համար։

Սոյն երկ-տարեկան Ժողովը սկսած օրէն մինչև երկու ամիս տեւելով իր նիստերը կը վերջացունէ։

Ընդհանուր Ժողովոյ այս նիստերուն մէջ՝ միանգամայն Ազգային Վարչութեան ժողովներուն անդամ գտնուող Երեսփոխանները ամեն խնդրոյ վրայ կրնան խօսիլ. բայց տուրքի և ընտրութեան խնդիրներէն զատ՝ ուրիշ խնդիրներու մէջ չեն կրնար քուէ տալ։

Բ. Կաթուղիկոսի ընտրութեան մասնակից ըլլալու համար։

Գ. Կոստանդնուպօլսոյ և Երուսաղէմի Պատրիարքները ընտրելու համար։

Դ. Կրօնական և Քաղաքական Ժողովոց մէջ, կամ Պատրիարքին ու Ժողովոց մէջ պատահած անհամաձայնութիւնը բառնալու համար։ Սոյն պարագայից մէջ՝ անհամաձայնութեան ենթակայ եղող կողմերը Ընդհանուր Ժողովոյ մէջ խօսք միայն ունին և ոչ քուէ։

Ե. Ազգային Սահմանադրութեան վերաքննութեանը համար։

Եւ վերջապէս այնպիսի խնդիրներու համար որոց վրայ որոշում տալը Ընդհանուր Ժողովոյն կը վերաբերի։

Սակայն այս տեսակ արտաքոյ կարգի նիստերուն տեղի ունենալէն առաջ՝ Ընդհանուր Ժողովոյ գումարման պատճառը Պատրիարքարանի կողմէն Բարձրագոյն

Ալթմըշ պիրինճի մատտէ. Մէճլիսի Ումումի՝ էվվէլա՝ մին էլ գատիմ օլա կէլտիկի իւզրէ իքի սէնէտէ պիր քէրրէ շէհրի Նիսան ավախըրընտա իճթիմա իտուպ, միւրուր իտէն իքի սէնէ զարֆընտա՝ վուգու պուլան խարճէ ումուրըն մազպաթասընը իսթիմա իլէ մուխասսաս օլան մէմուրլէրի մարիֆէթիյլէ թահսիլ վէ սարֆ օլընմըշ օլան մէպալիղին մուհասէպէի ումումիյէսինի րույէթ վէ թէֆթիշ իտէր.

Վէ Միլլէթ Մէճլիսլէրինին քեաֆֆէի ազասընը միւճէտտէտէն ինթիխապ էյլէր.

Վէ սէնէթէյն իանէի միլլիյէսինին սուրէթի իտարէսինէ գարար վիրիր, վէ իքի մահ խիթամընտա գափանուր։

Մէճլիսի Ումումինին իշպու ինիգատընտա մէզքիւր իքի Մէճլիս ազասը՝ Մէճլիսի Ումումի ազասը պուլընտըգլարը հալտէ՝ հէր պիր մէսէլէտէ մուպահասա իտէպիլիր, ֆագաթ իանէ վէ ինթիխապ մատտէլէրինտէն մաատասընտա րէյ վիրէմէզլէր.

Սանիյա՝ Մէճլիսի մէզքիւր Կաթուղիկոս ինթիխապընտա տախիլ օլմագ.

Վէ սալիսա՝ Տէրի Սաատէթ վէ Գուտսը-Շէրիֆ Պատրիգլէրինի ինթիխապ էյլէմէք.

Վէ րապիա՝ մէզքիւր իքի Մէճլիս պէյնինտէ, խուսուսա Մէճլիսլէր իլէ Պատրիգ պէյնինտէ թէքէվվիւն իտէն իխթիլաֆ րէֆ օլընմագ իզրէ ճէմ օլընուր։ Պու Թագտիրտէ՝ Թարաֆէյնի մուխալիֆէյն պէյանի հալ իտէպիլիրլէր իսէտէ՝ րէյ վիրէմէզլէր։

Խամիսա՝ Նիզամնամէ էսասընա տօգընըլմայարագ թասհիհի լազըմ կէլտիքտէ, վէ Մէճլիսի Ումումինին րէյ վէ գարարընա մէնուտ պիր մէսէլէ զուհուրընտա ճէմ օլընուր։

Շու գատար քի պէօյլէ ֆէվգ էլ ատէ իճթիմաըն վուգուընտէն էվվէլ՝ սէպէպի ճէմ Պատրիգխանէ Թարաֆընտան Պապը Ալիյէ իֆատէ օլընարագ, իսթիհսալը

Դրան իմաց տրուելով, անոր հաճութիւնը կառնուի։

Յօդ. 62. Պատրիարքը կը գումարէ Ընդհանուր Ժողովը, Կրօնական և Քաղաքական Ժողովոց մէկուն համահաճութեամբը, և կամ նոյն իսկ Ընդհանուր Ժողովոյ անդամոց մեծագոյն մասին խնդրանօքը։ Միայն թէ այս կերպ արտաքոյ կարգի ժողով գումարելէն առաջ՝ գումարման պատճառը Բարձրագոյն Դրան իմաց տրուելով, անոր հաճութիւնը առնուլ հարկ է։

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՑ

Յօդ. 63. Կոստանդնուպօլսոյ մէջ գտնուող բոլոր Եկեղեցականք՝ Պատրիարքի հրաւիրանօք ապրիլ ամսոյ վերջը որոշեալ տեղ մը կը գումարուին, և գաղտնի քուէարկութեամբ ու քուէից բացարձակ առաւելութեամբ Ազգային Ընդհանուր Ժողովոյ Եկեղեցական անդամները կընտրեն, թէ Եպիսկոպոսներէն, թէ Վարդապետներէն և թէ Քահանաներէն. բայց պէտք է որ ընտրելիք՝ դուրսերը պաշտօն չունենան. և հասակաւ երեսուն տարին լրացուցած, և գոնէ հինգ տարի առաջ ձեռնադրուած ըլլան և որ և է դատաստանի տակ չը գտնուին։

Յօդ. 64. Եկեղեցական Երեսփոխանաց պաշտօնը տասն տարի կը տեւէ և երկու տարին անգամ մը՝ հինգերորդ մասը փոխուելով կը նորոգուի։ Այս հինգերորդ մասը առաջին ութ տարիներու մէջ՝ վիճակաւ պիտի որոշուի և հանուի. և թէ վիճակաւ ելած և թէ տասնամեայ պաշտօնը լրացուցած անդամները անմիջապէս վերընտրելի են։

րուխսաթ գըլընըր։

Ալթմըշ իքինճի մատտէ. Մէճլիսի Ումումիյի Պատրիգ, Մէճլիսի Ռուհանի իլէ Մէճլիսի Ճիսմանիտէն պիրինին մուվաֆագաթը իլէ. վէ եախուտ Մէճլիսի Ումումի ազաալընտան էքսէրիսինին իսթիտասը իլէ ագտ իտէր։ Անճագ, պէնտի սապըգտա պէյան օլընտըղը իւզրէ, պու միսիլլու ֆէվգ էլ ատէ իճթիմա, պէհէր հալ սէպէպինին պէյանիյլէ, Տէվլէթճէ րուխսաթա մէնութ տուր։

ՄԷՃԼԻՍԻ ՈՒՄՈՒՄԻՆԻՆ ԱԶԱԻ ՌՈՒՀԱՆԻՅԷՍԻՆԻՆ ՇԷՐԱԻԹԻ ԻՆԹԻԽԱՊԻՅԷՍԻ ՊԷՅԱՆԸՆՏԱ ՏԸՐ

Ալթմըշ իւչիւնճի մատտէ. Իսթանպօլտա պուլընան պիլճիւմլէ էհլի քիլիսա Տէրի Սաատէթ Էրմէնի Պատրիգի տավէթի իւզէրինէ՝ նիսան այըընըն պիր մահալլէ թօփլանըլուպ, տաշրա մէմուրիյէթի օլմայան վէ օթուզ եաշընը թէքմիլ իթմիշ օլան, վէ պէշ սէնէ մուգատտէմ փափասլըգ վէ ռահիպլիք րիւթպէսինի իհրազ իտէն. վէ պիր կիունա տավա ալթընտա պուլունմայան Փիսկոպոսլարտան վէ եախուտ փափաս վէ ռահիպլէրտէն՝ էքսէրիյէթի արայի մութլագա վէ րէյի խաֆի իլէ Մէճլիսի Ումումի իչուն ազա ինթիխապ իտէճէքլէր տիր։

Ալթմըշ տէօրտիւնճի մատտէ. Անիֆէն պէյան օլունան ազաի ռուհանիյէնին միւտտէթի մէմուրիյէթի օն սէնէ օլուպ, պէհէր իքի սէնէտէ՝ պիր խումսը թէպտիլ վէ թէճտիտ օլընաճագլար։ Վէ իլք սէքիզ սէնէ՝ պու խումսըն թէֆրիգ վէ իխրաճը գուրա իլէ իճրա օլընաճագ տըր։

Վէ կէրէք պէօյլէ գուրա իլէ վէ կէրէք օնընճը սէնէտէն սօնրա՝ իքմալի միւտտէթ իլէ չըգան ազանըն թէքրար ինթիխապը ճաիզ օլաճագ տըր։

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՑ

Ա. Ընտրողութեան եւ ընտրելութեան պայմանք։

Յօդ. 65. Ընտրողական իրաւանաց հիմն կը բըռնուին Ազգային տուրքը, և անձնական արժանիքը։

Ազգային տուրքը ընտրողութեան իրաւունք տալու համար, պէտք է որ ընտրողը տարին գոնէ եօթանասուն ու հինգ գուրուշ ընդհանուր տուրք վճարէ։

Ընտրողութեան անձնական արժանեօք իրաւունք ունեցողներն են՝ Արքունի գիւաններուն և Տէրութեան ուրիշ պաշտօններուն մէջ գտնուողները. վկայեալ բըժիշկները, օգտակար գրքերու հեղինակները. դպրատանց ուսուցիչները. և ազգին օգտակար ծառայութիւններ մատուցած անձինք։

Յօդ. 66. Ընտրողութեան իրաւունք ունին քսան ու հինգ տարին լրացուցած անձինք. սակայն ընտրողք հարկ է որ Օսմանեան Տէրութեան հպատակ ըլլան։

Յօդ. 67. Ընտրելու իրաւունքէն դատաստանապէս զրկեալ են հետեւեալ չորս դաս անձինքը։

Ա. Բրէական յանցանօք դատապարտեալները, որոնք ըստ պատժական օրինաց Տէրութեան՝ քաղաքականապէս մեռեալ կը համարուին։

Բ. Ազգային գործոց մատակարարութեանը մէջ նենգութեամբ բռնուած, և Ազգային Ժողովներէն մէկուն կողմէն դատապարտուած անձինք, որոց համար Ազգային գործերու մէջ չը գործածուիլը վճռուած ըլլայ դատող Ժողովին կողմէն։

Գ. Տէրութեան դատարաններուն կողմէն զգաստացուցիչ պատիժ կրողները, որոնց պատժոյն պայմանաժամը դեռ լրացած չէ։

Դ. Խելագարութեան պատճառաւ անիրաւական

ՄԷՃԼԻՍԻ ՈՒՄՈՒՄԻՆԻՆ Ա'ՎԱՄՏԷՆ ՕԼԱՆ Ա'ԶԱՍԸՆԸՆ ՇԷՐԱՒԹԻ ԻՆԹԻԽԱՊԻՅԷՍԻ ՊԷՅԱՆԸՆՏԱ ՏԸՐ

Ալթմըշ պէշինճի մատտէ. Խանէի Միլլիյէ իլէ գապիլիյէթի զաթիյէ՝ հագգը ինթիխապա էսաս թութուլուր:

Խանէի Միլլիյէ՝ հագգը ինթիխապա նաիլիյէթի մուճիպ օլմագ իչուն՝ խանէի ումումիյէ օլարագ լա ագալլ սէնէվի յէթմիշ պէշ ղուրուշ խանէ վէրկիսի տիր:

Ինթիխապա գապիլիյէթի զաթիյէսի օլանլար՝ Տէվլէթին ալլամընտա վէ սաիր մէմուրիյէթլէրինտէ պուլունանլար, վէ տօգթօրլար, վէ քիւթիւպի նաֆիա թէլիֆ էթմիշ օլանլար, վէ մէքթէպ մուալլիմլէրիյլէ՝ Միլլէթճէ ասարը նաֆիա վիւճուտէ կէթիրմիշ օլանլարտան իպարէթ տիր:

Ալթմըշ ալթընճը մատտէ. Կա ագալլ իրկիրմի պէշ եաշընը թէքմիլ էտէնլէր հագգը ինթիխապա նաիլ օլուպ, անճագ թէպաայի Տէվլէթի Ալիյէտէն օլմագ շարթ տըր:

Ալթմըշ եէտինճի մատտէ. Հագգը ինթիխապտան մուհաքէմէճէ մահրում օլանլար տէօրթ սընըֆ տըր:

Սընըֆը էվվէլ՝ պիր ճինայէթտէն տօլայը, ճէզա գանունունամէի Հիւմայունը աքեամընճա, հուգուգը մէտէնիյէտէն մուէպպէտէն սագըթ օլանլար տըր:

Սընըֆը սանի՝ մէսալիհի միլլիյէ խարէճինտէ հիլլէսի թէպէյյուն էտուպ տէ՝ մէսալիհի մէզքիւրէտէ գուլլանըլմամալարը՝ Միլլէթ Մէճլիսլէրինտէն պիրիսինին թարաֆընտան հիւքմ օլընմըշ օլանլար տըր:

Սընըֆը սալիս՝ մէհաքիմի Տէվլէթի Ալիյէտէ հագգլարընտա միւճազաթը թէտիպիյէ թէրէթթիւպ էտուպ տէ, հէնուզ միւտտէթի ճէզասը խիթամ պուլմամըշ օլանլար տըր:

Սընըֆը րապի՝ թէճէննիւն ճիհէթիյլէ հուգուգը

գաւառակները, որոց կատարելապէս տարրջացեալ ըլլալը օրինաւոր կերպիւ հաստատուած չըլլայ։

Յօդ. 68. Ընտրելի են Ազգին այն ամէն անհատները, որոնք երեսուն տարին լրացուցած ըլլալով, Օսմանեան հպատակ, Տէրութեան օրինաց տեղեակ, և Ազգային գործոց հմուտ են. և ընտրողութեան իրաւունքէն ըստ 67-դ յօդուածոյ զրկուած չեն։

Բայց Կոստանդնուպոլսոյ թաղերուն կողմէն ընտրուելիք ութսուն Երեսփոխանաց գոնէ հօթը աստիճանաւոր անձինք ըլլալու են։

Բ. Եղանակ ընտրութեան։

Յօդ. 69. Կոստանդնուպոլսոյ թաղերէն և գաւառներէն ընտրուելիք Երեսփոխանաց բաշխման ցուցակը շինելու համար, ամէն երկու տարի փետրուար ամսոյ սկիզբը՝ Ազգային Կրօնական և Քաղաքական Ժողովները, Տեսուչ Խորհրդոց Ատենապետներուն հետ մէկտեղելով Համախորհուրդ ժողով կը կազմեն. և Պատրիարքական Դիւանատան ընդհանուր Ազգահամարին նայելով, ամէն մէկ թաղին ու գաւառին կողմէն քանի Երեսփոխան ընտրուելիքը կորոշեն, Պոլսոյ թաղերուն համար՝ ընտրողաց թիւը, և գաւառներուն համար՝ բնակչաց թիւը հիմն բռնելով։ Եւ այս կերպով շինուած ցուցակի համեմատ՝ իւրաքանչիւր թաղի և գաւառի տալու Երեսփոխանաց թիւը Պատրիարքի ձեռօք անոնց կը ծանուցանէ։

Երեսփոխանաց պաշտօնը տասն տարի կը տևէ. և երկու տարին անգամ մը՝ թէ Կոստանդնուպոլսոյ թաղերէն և թէ գաւառներէն ընտրուած Ազգային Ե-

շախսիյէտէն սագըթ օլուպ, քեամիլէն շիֆա պուլամայանլար նիզամէն թասդիք օլունմըշ օլմայանլար տըր։

Այթմըշ սէքիզինճի մատտէ. Թէպաայի Տէվլէթի Ալիյյէտէն օթուզ եաշընը թէքմիլ իթմիշ օլուպ, նիզամաթը Տէվլէթի Ալիյյէ վէ մէսալիհի Միլլիյյէյէ վագըֆ վէ աշնա օլան, վէ ալթմըշ եէտինճի մատտէ մուճէպինճէ՝ հուգուգը ինթիխապիյյէտէն մահրում օլմայան քեաֆֆէի էֆրատը Միլլէթին ինթիխապ օլունմասը ճաիզ տիր։ Ֆագաթ Տէրի Սաատէթ Քիլիսա ճէմաաթլարը թարաֆընտան ինթիխապ օլունաճագ սէքսէն ազանըն լա ագալլ եէտիսինին՝ ահալը րիւթպէտէն պուլունմալարը շարթ տըր։

ԿԷՐԷՔ ՏԷՐԻ ՍԱԱՏԷԹ ՄԱՀԱԼԼԱԹԸՆՏԱՆ ՎԷ ԿԷՐԷՔ ՏԱՇՐԱԼԱՐՏԱՆ ՄԷՃԼԻՍԻ ՈՒՄՈՒՄԻ ԻՃԻՒՆ ՊԻՐ ԻՆԹԻԽԱՊ ԹԱՅԻՆ ՕԼԸՆԱՃԱԳ ԱԶԱՆԸՆ ՍՈՒՐԷԹԻ ԻՆԹԻԽԱՊԸ ՊԷՅԱՆԸՆՏԱ ՏԸՐ

Այթմըշ տօգուզընճը մատտէ. Տէրի Սաատէթ Քիլիսա ճէմաաթլարընտան վէ տաշրալարտան ինթիխապը լազըմ կէլէն Վէքիլլէրին մըգտարընը թէվզիինի հավի պիր տէֆթէրի մախսուս թանզիմ օլունմագ իչիւն, պէհէր իքի սէնէ շէհրի շուպաթըն իպթիտասընտա Ռուհանի վէ Ճիսմանի Մէճլիսլէրիյլէ Գոմիսիոն գալէմ գապիթլէրինին իճթիմաըյլէ, թէշէքքիւլ իտէն Մէճլիսի Մուխթէլիթ մարիֆէթիյլէ, Պատրիգխանէ գալէմինտէ մէվճուտ օլան նուֆուս տէֆթէրի ումումիսինէ թաթպիգան, տաշրալարտա մախասալըգ գալապալըգընա, վէ Տէրի Սաատէթտէ հէր մահալլէտէ մէվճուտ օլան մունթախիպլէրին ատէտինէ կէօրէ, հէր եէրտէ նէ մըգտար ազա ինթիխապ օլունաճագ իսէ՝ Պատրիգ թարաֆընտան մահալլէրինէ իլանը քէյֆիյէթ օլունաճագ տըր։

Ինթիխապ օլունան ազանըն մուտտէթի մէմուրիյէթլէրի օն սէնէ օլաճագ տըր, վէ հէր իքի սէնէտէ՝ կէրէք տաշրալարտան վէ կէրէք Տէրի Սաատէթտէն

րեսփոխաններուն հինգերորդ մասը կը փոխուի և կը նորոգուի։ Այս հինգերորդ մասի ընտրութիւնը պիտի կատարուի ամեն երկու տարին անգամ մը, թէ թաղերուն և թէ գաւառներուն կողմէն, մէջերնին փոփոխակի կարգ պահելով։

Այս փոփոխակի կարգը առաջին ութ տարիներուն մէջ՝ վիճակաւ պիտի որոշուի. սա պայմանաւ որ եթէ թաղի մը ընտրողները և կամ գաւառի մը բնակչաց թիւը աւելցած կամ պակսած է, այն թաղին կամ գաւառին տալու Երեսփոխանաց թիւն ալ համեմատութեամբ պիտի աւելնայ կամ պակսի։

Վախճանեալ կամ հրաժարեալ Երեսփոխանաց տեղ ընտրուելիք անձինքն ալ՝ ամեն տարի տարեգլխէն երկու ամիս առաջ պէտք է ընտրուին։

Թաղական Երեսփոխանները Կոստանդնուպոլսոյ թաղերուն բնակչաց կողմէն պիտի ընտրուին։ Իսկ գաւառական Երեսփոխանները իւրաքանչիւր գաւառի Ընդհանուր ժողովոյ կողմէն պիտի ընտրուին։

Յօդ. 70. Թէ Պօլսոյ թաղերէն և թէ գաւառներէն ուղղուած Երեսփոխանները՝ հարկ չէ որ ընտրող թաղին կամ գաւառին բնակիչներէն ըլլան. բաւական է որ Կոստանդնուպոլսոյ մէջ բնակին, իրենց ներկայացուցած թաղին կամ գաւառին ազգային գործոցը հմուտ ըլլան, և ազգասիրութեամբ, ուղղութեամբ և արդարախոհութեամբ՝ ընտրողաց յարգն ու համարումը ստացած անձինք ըլլան։

Ազգային Երեսփոխանները ոչ թէ զիրենք ընտրող թաղին կամ գաւառին Երեսփոխանները կը համարուին Ընդհանուր ժողովոյ մէջ, այլ Ազգին Երեսփոխաններն են՝ համազօր իշխանութեամբ։

Յօդ. 71. Երկու տարին անգամ մը Պօլսոյ թաղե-

ինթիխապ օլընան Միլլէթ Վէքիլլէրինին պիր խուսմը թէպտիլ վէ թէճտիտ օլընուպ, պու խուսմըն մահալլի ինթիխապընը թայինաէ՝ մահալլէ վէ մարխասալըգլար պէյնինտէ, հէր իքի սէնէտէ պիր քէրրէ, միւնավէպէ ուսուլի իճրա օլընաճագ տըր։ Վէ իւք սէքիզ սէնէյսինտէ էմրի մունավէպէ գուրա իլէ թային վէ իճրա գըլընաճագ տըր, շօյլէ շարթիլէ քի պիր մահալլէտէ միւնթախիպ վէ պիր մարխասալըգտա նուֆուս չօղալմըշ եախուտ ազալմըշ իսէ, մէպուսլարընըն աատէտինէ պագըլուպ, ինթիխապ օլընաճագ ազանըն մըգտարը տահա կէօրէ թային իտիլէճէք տիր, վէֆաթ եա իսթիֆա իտէնլէրին եէրինէ ազա ինթիխապը խուսուսը տախի՝ հէր սէնէ պաշընտան իքի այ էվվէլ՝ իճրա օլընաճագ տըր։

Վէ Տէրի Սաատէթ մահալլաթընտան ալընաճագ ազա՝ Քիլիսա ճէմաաթլարընտա, վէ տաշրալարտան իրսալ օլընաճագ ազա՝ մարխասալըգլարտա պուլընան Մէճլիսի Ումումիլէրտէ ինթիխապ գըլընաճագ տըր։

Եօթմիշինճի մատտէ. Կէրէք Տէրի Սաատէթտէ վէ կէրէք տաշրալարտա՝ ինթիխապը մաթլուպ օլան Վէքիլլէրին քէնտուլէրինի ինթիխապ իտէն Քիլիսա ճէմաաթընտան վէ Մարխասալըգ տահիլէսինտէն օլուպ օլմամալարընտա պիր պէս օլմայուպ, շու գատար քի Տէրի Սաատէթտէ պուլընմալարը, վէ մէզքիւր ճէմաաթլարըն Միլլէթճէ մէսալիհինէ վագըֆ, վէ ինթիխապ իտէնլէր ինտինտէ հուսնը միլլէթ վէ ըֆֆէթ վէ իսթիգամէթլէրի ճիհէթիյլէ մէրի վէ միւթէպէր պուլընմալարը լազըմէտէն տիր։

Պու Վէքիլլէր Մէճլիսի Ումումիտէ քէնտուլէրինի ինթիխապ իթմիշ օլան Տէրի Սաատէթ վէ եախուտ տաշրա ճէմաաթլարընըն վէքիլլէրի ատտ օլընմայուպ, ճումլէսի՝ ռուխսաթը միւթէսավիյէյի հաիզ՝ ազայի Մէճլիսի Ումումի իթիպար օլընուրլար։

Եօթմիշ պիրինճի մատտէ. Տէրի Սաատէթտէն ին-

րուն կողմէն ընտրուելիք Երեսփոխանաց հնգերորդ մասին համար՝ Գաւառաքը փետրուար ամսոյ մէջ ընտրող Թաղերուն ամէն մէկուն կը ծանուցանէ քանի Երեսփոխան ընտրելիքը՝ ընտրողութեան և ընտրելութեան պայմաններն ալ յիշեցունելով։

Այս ծանուցման վրայ՝ Թաղական Խորհուրդները Երեսփոխանաց ընտրութեանը կը ձեռնարկեն։ Բայց ընտրական գործողութեանց համար Թաղին Քարոզիչը՝ կամ անոր չգտնուած ժամանակը՝ Աւագերէցը նախագահութիւն կընէ, և Թաղին ընակիչներէն երեքէն մինչև վեց պատուաւոր անձինք Թաղական Խորհուրդին վրայ կաւելցուին։

Այս կերպով կազմուած Ընտրողական Ժողովներուն ամէն մէկը՝ իր Թաղին մէջ ընտրողութեան իրաւունք ունեցողներն ստուգելով, այբուբենի կարգաւ ընտրողաց ցանկ մը կը պատրաստէ, և ութ օր բաց մնալու պայմանաւ Թաղական Խորհրդարանի մէջ կախել կուտայ։

Ընտրողական Ժողովը ընտրողաց որոշումը դիւրացնելու համար՝ ուզուած Երեսփոխաններուն թիւէն եռապատիկ աւելի ընտրելեաց ցուցակ մըն ալ կը պատրաստէ, և այն ալ կախել կուտայ Խորհրդարանին մէջ։ Սակայն ընտրողք ամէնևին պարտաւորեալ չեն ընտրելեաց ցուցակին հետևելու։

Գաւառներուն մէջ ալ՝ գաւառական Ընդհանուր Ժողովոց անդամները միևնոյն կերպով կընտրուին։

Գ. Քուէարկութիւն։

Յօդ. 72. Ընտրողաց ցանկին բացուելէն շաբաթ մը ետքը՝ կիւրակէ առաւօտ, ժամերգութեան աւարտմանէն ետքը, Թաղական Խորհրդարանին մէջ քուէարկութեան կը սկսուի սապէս.

Թիւսապը լազըմ կէլէն Վէքիլլէրին ատէտիլլէ, կէրէք ինթիխապ իթմէկէ վէ կէրէք ինթիխապ օլընմաղա սալահիյէթի միւսթէլզիմ օլան շէրաիթի, հէր իքինճի սէնէ շուպաթ այընտա խուսմը ազայը ինթիխապ իտէճէք ճէմաաթլարա Պատրիգ թարաֆընտան պէյան վէ իլան օլընուպ, պունըն իւզէրինէ՝ Վէքիլլէր Քիլիսա ճէմիյէթլէրի մարիֆէթիյլէ ինթիխապ օլընուր. Ֆագաթ Քիլիսանըն Վայիզի վէ օլմատըղը հալտէ Պաշ փափասը րէիս օլուպ մահալլէնին միւթէպէրանընտան տախի իւչ քիշիտէն ալթը քիշիյէ գատար Քիլիսա ճէմիյէթինէ իլավէ օլընուր։

Պու ճէմիյէթլէր քէնտու ճէմաաթլարը իչինտէ հագգը ինթիխապա նաիլ օլուպ օլմայանլարը թահգիգ իլէ՝ հուրուֆը հէճա թէրթիպի իւզրէ պիր տէֆթէրինի թանզիմ, վէ սէքիզ կիւն մէյտանտա գալմագ իւզրէ Քիլիսա ճէմիյէթի օտասընտա թալիգ իտէրլէր։

Վէ ինթիխապ իտէնլէրէ վէսիլէի սուհուլէթ օլմագ իւզրէ՝ մաթլուպ օլան վէքիլլէր ատէտինին իւչ միսլինի հավի պիր գըթա տէֆթէր հազըրլայըպ՝ Քիլիսա ճէմիյէթի օտասընտա թալիգ օլընուր։ Ֆագաթ ինթիխապ իտէնլէր տէֆթէրի մէզքիւրէ մութապըգաթէ մէճպուր տէկիլլէր տիր։

Տաշրալարտա Մէճլիսի Ումումի ազասը ինթիխապը խուսուսը տախի պու մինվալ իւզրէ իճրա օլընուր։

ՐԷՅ ԻԹԱՍԸ ԳԷՑԱՌԸՆՏԱ ՏԸՐ

Եօրմիշ իքինճի մատտէ. Հագգը ինթիխապա նաիլ օլանլարըն էսամիսի տէֆթէրի մէյտանա գօնըլտուգտան պիր հաֆթա սօնրա, Քիլիսատէ սապահ իպատէթի խիթամինէզիյը ուլորղը կիւնի Քիլիսա ճէմիյէթի օտասընտա րէյ իթասընա պէր վէճհի աթի պէտ օլընուր։

Թաղական Խորհրդոյ Նախագահը՝ ընտրողաց ցանկը ձեռքն առած կարգաւ կը կանչէ ընտրողները, որք ընտրողաց ցանկին մէջ՝ իրենց անուան առջեւ ստորագրելէն վերջը, քանի Երեսփոխան ուզուած է նէ՝ այնքան անձանց անուն թղթի մը վրայ կը գրեն վերէն 'ի վար կարգաւը և ամեն մէկ անուան առջև, մականուն, բնակութիւն և արուեստ նշանակելով՝ թուղթը կը ծալլեն, և յատկապէս պատրաստուած քուէատուփին մէջ կը ձգեն։ Իսկ եթէ ընտրողք պատճառաւ իւիք չկրնան գալ Խորհրդարան, ստորագրեալ նամակաւ մը քուէնին կուղարկեն։

Յօդ. 73. Քուէարկութիւնը գաղտնի է. ուստի պէտք է որ, քուէարկուք առանձին գրեն իրենց քուէթուղթը, որպէս զի ուրիշ մը չը կրնայ տեսնել գրած անունները։

Յօդ. 74. Քուէարկութիւնը սկսած օրը պէտք է լմննայ։ Ընտրողներէն ով որ իր քուէն նոյն օրը չը ներկայացունէ, ետքը բողոքելու իրաւունք չունի։

Յօդ. 75. Ո՛չ ոք պիտի կարենայ միանգամայն երկու թաղի մէջ քուէ տալ։

Յօդ. 76. Ընտրութեան մասին միացեալ թաղերը և թեմերը՝ եթէ իրարու մօտ ըլլան, ընտրողները մէկ տեղ ժողովուելով քուէարկութիւն կընեն։ Իսկ եթէ իրարմէ հեռի ըլլան՝ իւրաքանչիւր թաղ կամ թեմ զատ քուէարկութիւն կընէ, և ետքը երկու կողման քուէարկութեանց արդիւնքը կը միացունեն։

Յօդ. 77. Քուէարկութիւնը կատարուելէն ետքը, նոյն օրը միևնոյն նիստի մէջ՝ Թաղական Խորհուրդին առջև քուէտուփը կը բացուի. և այս բանիս համար

Քիլիսա ճէմիյէթի րէիսի, տէֆթէրի մէզքիւրը էլինէ ալարագ՝ ինթիխապա հագգը օլանլարը սըրասը իլէ չաղըրըւպ, անլար տախի տէֆթէրի մէզքիւրտէ իսիմլէրինին էօնիւնէ վազը իմզա իթտիքտէն սօնրա՝ իգթիզա իտէն միգտար մէպուսան էսամիսինի պիր քեաղըտ իւզէրինէ եօգարըտան աշաղըյա սըրա իլէ եազըւպ, հէր պիր շախսըն իսմի էօնիւնէ լագապ, վէ սէմթ վէ սէնաթը իշարէթ, վէ օլ քեաղըտը տիւրիւպ՝ մախսուսէն թէտարիք օլընան սանտըգչէյէ իլգա իտէրլէր։ Վէ քէնտիւլէրի պիր սէպէպէ մէպնի մէճլիսէ տաւըմա կէլէմէզլէր իսէ՝ րէյ վիրտիքլէրի քեաղըտը էսամիսինի պիր գըթա մուհիւրլիւ մէքթուպիլէ իրսալ իտէրլէր։

Եթմիշ իւչիւնճի մատտէ. Րէյ իթասը խաֆիյէն իճրա օլընմագ լազըմ կէլտիկինտէն՝ րէյ վիրէնլէր եազտըգլարը իսիմլէրի ախէրի կէօրէմամէք իւզրէ մախֆիճէ թահրիր իտէրլէր։

Եթմիշ տէօրտիւնճի մատտէ. Րէյ իթասը պէտա օլընտըղը կիւն թէքմիլ օլընմագ իգթիզա էյլէտիկի ճիհէթլէ՝ րէյ վիրմէկէ հագգը օլուպտա իմթինա իտէնլէրին մուախխարէն տաւայա գալգըշմագա սալահիյէթի օլմամագ։

Եթմիշ պէշինճի մատտէ. Հիչ պիր քիմսէ իքի քիլիսա ճէմաաթընտա րէյ իթա իտէմէզ։

Եթմիշ ալթընճը մատտէ. Ինթիխապճա պիրլէշտիրիլմիշ օլան քիլիսա ճէմաաթլարը վէ գազալար, եգտիկէրի գուրպինտէ վագը իսէ, իքի թարաֆտան ինթիխապա սալահիյէթի օլանլար պիր եէրէ կէլէրէք՝ իթաի րէյ իտէրլէր։ Վէ մէզքիւր ճէմաաթ վէ գազալար արասընտա մէսաֆէի պայիտէ օլուրսա հէր պիրի այրուճա րէյ վիրուպ, պատէհու իքի թարաֆըն րէյլէրի պիրլէշտիրիլիր։

Եթմիշ եէտինճի մատտէ. Րէյ իթասը րէսիտէի խիթամ օլտուգտան՝ օլ կիւն թաթիլ օլընմայարագ, րէյ քեաղըտլարընը շամիլ օլան սանտըգչէ քիլիսա ճէ-

որոշուած Թեկնածուները քուէներն համրելով, քուէարկուաց Թուոյն հետ կը բաղդատեն։

Եթէ տարբերութիւն գտնուի, և Թաղական Խորհուրդը խարդախութեան կասկած ունենայ, մինչև առաջիկայ կիրակի՝ միւս օր մը նորէն քուէարկութիւն ընել կորոշուի։

Նմանապէս՝ եթէ ուզուած Երեսփոխանաց Թիւը առաջին անգամին չը լցուի, մնացածին համար երկրորդ անգամ քուէարկութիւն կըլլայ միւս օր մը։

Յօդ. 78. Եթէ պատահի որ քուէարկուներէն մէկը պէտք եղածէն աւելի Թուով անուն գրած ըլլայ իր քուէԹուղԹին մէջ, նոյն Թիւէն վերջը եկած անունները անընդունելի են. Նմանապէս անվաւեր կը համարուին այն քուէԹուղԹերը՝ որոց մէջ գտնուած անունները վերէն ի վար կարգաւ գրուած չեն։

Յօդ. 79. Քուէարկուաց Թուոյն կէսէն աւելի քուէ ստացողներուն մէջէն՝ առաւելագոյն քուէ ստացող անձինք՝ Երեսփոխան ընտրուած են։ Եւ եթէ երկու անձանց հաւասար քուէ տրուած ըլլայ, երիցագոյնը ընտրեալ է։

Յօդ. 80. Եթէ առաջին անգամ քուէարկութեամբ առաւելութիւն չստացուի, Թաղական Խորհուրդը կը ծանուցանէ առաւելագոյն քուէ ստացող երկու անձանց անունները, և երկրորդ քուէարկութիւնը օրինաւորապէս այն երկու անուանց վրայ կըլլայ։

Յօդ. 81. Ամէն Թաղական Խորհուրդ՝ իր Թաղէն ընտրուած Երեսփոխանաց անունները Պատրիարքին կը ներկայացունէ մասնաւոր տեղեկագրով մը, որուն մէջ պէտք է ճշդիւ նշանակուած ըլլայ ընտրեալներուն անունը, մականունը, բնակութիւնը, արհեստը, և քուէարկութեան բոլոր պարագաները։

միյէԹի մուվաճէհէսինտէ քիւշատ օլընարագ, Թային օլընան միւֆէԹԹիշլէր րէյ քեադըտլարընը Թաստատ իտէրլէր։

Քեադըտլարըն ատէտի րէյ վիրէն էշխասըն ատէտինէ Թէվաֆուգ իԹմէյուպտէ, ճէմիյէԹճէ՝ հիյլէ վուգուպուլտէն իշԹիպահէ տուշիւլէճէք օլուրսա, իրԹէսի պազար կիւնինտէն էվվէլ՝ ենիտէն րէյ վիրիլմէք իւզրէ պաշկա պիր կիւն Թային օլընուր։

ԻնԹիխապը մաԹլուպ օլան ատէտ գատար Վէքիլլէր պիր տէֆատա իքմալ օլընամազիսէ, մըգտարը պագիյի հագգընտա րէյ իԹասը քէզալիք եվմի ախէրէ Թային օլընուր։

Եթմիշ սեքիզինճի մատտէ. ԻնԹիխապ իտէնլէրին պիրի րէյ քեադըտընտա ատէտի մուայյէնտէն զիյատէ իսիմ եազմըշ օլուրսա, օլ ատէտի Թէճավիւզ իտէն իսիմլէր մագպուլ Թուլունմազ. Վէ իսիմլէր եօգարըտան աշաղըյա սըրա իլէ եազըլմըշ օլմայան րէյ քեադըտլարը տախի միւլղա վէ մունֆէսիխ ատտ օլընուր։

Եթմիշ տօգուզընճը մատտէ. Րէյ վիրէնլէրին նըսֆ ատէտինտէն զիյատէ օլարագ հագգլարընտա էն չօգ րէյ խասըլէԹ իտէնլէր մէպուս ինԹիխապ օլընմըշ օլուրլար։ Վէ իքի քիշիյէ միւսավաԹ իւզրէ րէյ խասըլէԹ իԹտիկի հալտէ, էն եաշլըսը ինԹիխապ գըլընմըշ օլուր։

Սեքսէնինճի մատտէ. Իլքէր իւք տէֆա րէյ վիրիլտիքտէ՝ էքսէրիյէԹի արա հասըլ օլմազ իսէ, հագգլարընտա էն չօգ րէյ խասըլէԹ իտէն իքի քիմէսնէնին իսիմլէրի իլան օլընուպ, իքինճի տէֆատա՝ օլ քիմէսնէլէր հագգընտա նիզամէն րէյ վիրիլիր։

Սեքսէն պիրինճի մատտէ. Քիլիսա ճէմիյէԹլէրի՝ մունԹախապ օլան Վէքիլլէրին իսմ, վէ լագապ, վէ սէնէԹ, վէ սանաԹընը վէ քեաֆֆէի ահվալը ինԹիխապիյէ հավի՝ Պատրիգէ խիԹապէն պիր գըԹա մազպաԹա Թանզիմ վէ Թագտիմ էյլէր. Պատրիգ Թարաֆընտան տախի Մէճլիսի Ճիսմանիյէ իպլաղ օլընուր։

Պատրիարքը այս տեղեկագիրը կը ներկայացունէ Քաղաքական Ժողովին, որ զանոնք քննելով կը ստուգէ Երեսփոխանաց ընտրելութեան պայմանները։

Այսպէս ստուգուելէն ետքը, Պատրիարքը պաշտօնական կերպիւ կը ծանուցանէ Երեսփոխանաց ամեն մէկուն ըստ օրինի ընտրութիւնը, և կը հրաւիրէ զանոնք Ընդհանուր Ժողովոյ ատեան կազմել որոշեալ օր մը։

Յօդ. 82. Ընդհանուր Ժողովը իր առաջին նիստին մէջ՝ Քաղաքական Ժողովին քննած տեղեկագիրը մտիկ ընելով եղած ընտրութիւնները և Երեսփոխանաց իշխանութիւնը կը վաւերացունէ. որով Ընդհանուր Ժողովը ըստ օրինի կազմուած կըլլայ։

Ընդհանուր Ժողով կրնայ գումարուիլ, երբ Կոստանդնուպօլսոյ Երեսփոխանաց մեծագոյն մասը ընտրուած ըլլայ, առանց սպասելու գաւառական Երեսփոխանաց ընտրութեան վախճանին՝ որոց լուրը մէկ կողմէն Կոստանդնուպօլիս հասնելու վրայ կըլլայ։

Յօդ. 83. Եթէ մէկը քանի մը թաղերու կամ գաւառներու կողմէն ընտրուած ըլլայ, ինքը կորոշէ որ թաղին կամ որ գաւառին Երեսփոխանութիւնն ընդունիլը. և եթէ ինք չուզէ որոշել, Ընդհանուր Ժողովը վիճակաւ կորոշէ։

Յօդ. 84. Երեսփոխանաց անուան ցուցակը Ընդհանուր Ժողովոյ սրահին մէջ կախուած պիտի ըլլայ՝ այբ ու բենի կարգաւ շինուած. և իւրաքանչիւր անուան առջև պիտի նշանակուի հրաժարում, վախճանում, և այլ ինչ որ պատահի։ Այս ցուցակը երկու տարին անգամ մը պիտի նորոգուի։

Իշ պու մազպաթալար Մէճլիսի մէզքիւրտէ մուաջենէ օլունտըգտան վէ ինթիխապ օլունանլարըն սըֆաթը մաթլուպէյի ճամի օլուպ օլմատըգլարը թահգիգ գըլընտըգտան սօնրա, Միլլէթ Վէքիլլէրինին նիզամէն ինթիխապ օլունտըգլարը, վէ պիր եվմի մուայյէնտէ Մէճլիսի Ումումի թէշքիլի զըմնընտա իճթիմա իտէճէքլէրի՝ Պատրիգ թարաֆընտան քէնտուլէրինէ րէսմէն պէյան օլունուր։

Սեքսեն իքինճի մատտե. Մէճլիսի Ումումի իլք իճթիմաընտա՝ պէր վէճհի մուհարրէր Մէճլիսի Ճիսմանիտէ մուայէնէ օլունան մազպաթալարը պիլ իսթիմա, ինթիխապաթը վագըայը վէ Միլլէթ վէքիլլէրինին րուխսաթ վէ իգթիտարլարընը թաստիգ իթտիքտէ՝ նիզամէն թէշէքքիւլ իթմիշ օլուր։

Տէրի Սաատէթ ճէմաաթլարը վէքիլլէրի էքսէրիյէթ իւզրէ ինթիխապ օլունտըգլարը, վէ տաշրա վէքիլլէրինին ինթիխապը փէյտէրփէյ իսթիխպար գըլընմագտա օլտըղը հալտէ, տաշրա ինթիխապաթը խիթամընա պէքլէնմէյէրէք՝ Մէճլիսի Ումումի աճտ օլունապիլուր։

Սեքսեն իւչիւնճի մատտե. Պիր քիմսէնէ պիր գաչ ճէմաաթ վէ եախուտ պիր գաչ էյալէթտէ ինթիխապ օլունտըղը հալտէ, գանղըսընըն վէքիալէթինի գապուլ իթտիկինի պէյանտէ մուխթար օլուպ. ֆագաթ իմթինա իտէր իսէ, օլ ճէմաաթ վէ եա էյալէթլէր հագգընտա՝ Մէճլիսի Ումումիտէ գուրա քէշիտէսիյլէ գարար վիրիլուր։

Սեքսեն տէօրտիւնճի մատտե. Մէճլիսի Ումումի ազասընըն էսամիսի տէֆթէրլէրի հըրուֆը հէճա թէրթիպի իւզրէ թանզիմ, վէ Մէճլիս մահալլինտէ թալիգ օլունարագ, վէֆաթ վէ իսթիֆալէրի միսիլլու վուգու պուլան ահվալ իսմլէրի էօնինտէ իշարէթ գըլընուր. վէ հէր իքի սէնէ թէճտիտ օլունուր։

ԳԼՈՒԽ Բ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՔ ԺՈՂՈՎՈՑ ԵՒ ԽՈՐՀՐԴՈՑ

Յօդ. 85. Ամէն ժողով և Խորհուրդ պիտի ունենայ ատենական Դիւան մը, որ կը բաղկանայ մէկ Ատենապետէ, մէկ Ատենադպրէ, և երբեմն նաև Ատենապետի և Ատենադպրի Փոխանորդներէ: Ասոնց ամէնըն ալ հարկաւ ժողովոյ անդամներէն պիտի ըլլան:

Ատենական Դիւանը տարին անգամ մը կը նորոգուի, և անդամներն անմիջապէս վերընտրելի են:

Յօդ. 86. Առանց մեծագոյն մասի ներկայութեան Ատեան չը կրնար կազմուիլ:

Յօդ. 87. Խնդիր մը լաւ քննուելէն, և անոր վրայ ներկայ ժողովականաց կարծիքը հասկցուելէն վերջը, քուէի կը դրուի. և ձայնից առաւելութեամբ որոշում կը տրուի: Երբ ձայնից հաւասարութիւն պատահի, եթէ Նախագահը ներկայ է՝ անոր կարծեաց կողմը կը հակի որոշումը. եթէ ոչ՝ Ատենապետին կողմը:

Յօդ. 88. Խառն ժողովոյ մէջ քննուած որևէ խնդրոյ որոշում տրուելու համար, պէտք է որ երկու ժողովները զատ քուէարկութիւն ընեն: Երբ երկուքին ալ մեծագոյն մասը միևնոյն որոշումն ըրած ըլլայ, խնդիրը լուծուած է. իսկ եթէ որոշումնին տարբեր ըլլայ, կարծեաց անհամաձայնութիւն կը համարուի. և հետևաբար խնդրոյն որոշումը Ընդհանուր Ժողովին կը ձգուի:

Խառն ժողովը օրինաւորապէս գումարուած հա-

ՖԱՍԼԸ ՍԱՆԻ

ՄԷՃԼԻՍ ՎԷ ԳՕՄԻՍԻՕՆԼԱՐ ՀԱԳԳԸՆՏԱ ՊԱ՛ՁԸ ՄԷՎԱՏՏԸ ՈՒՄՈՒՄԻՅԷ ՊԷՅԱՆԸՆՏԱ ՏԸՐ

Սեքսէն պէշինճի մատտէ. Հէր Մէճլիս վէ Գօմիսիօնըն՝ պիր Գալէմի, վէ հէր Գալէմին՝ պիր զապիթի վէ քեաթիպի, վէ պազը Գալէմլէրտէ զապիթ վէ քեաթիպին՝ պիրէր վէքիլլէրի օլուպ, պունլարըն քեաֆֆէսի ազաէն օլմագ շարթ տըր:

Վէ պունլար պէհէր սէնէ թէպտիլ վէ թէճտիտ օլընուրլար, վէ ազասընըն լէտէլ ինգիզա՝ թէքրար ինթիխապը ճայիզ տըր:

Սեքսէն ալթընճը մատտէ. Մէճլիսին էքսէրի ազասը մէֆգուտ օլտըղը հալտէ, մէճլիս կիւշատ օլընամազ:

Սեքսէն եէտինճի մատտէ. Լայըգը իլէ միւզաքէրէ օլընուպ, հազըր պուլընան ազանըն էֆքեարը անլաշըլտըգտան սօնրա՝ օլ մատտէ հագգընտա արաի Մէճլիսէ միւրաճաաթ օլընարագ, էքսէրիյէթի իլէ գարար վերիլիր: Վէ րէյլէր միւսավաթ իւզրէ միւնգասիմ օլտըղը հալտէ, էկէր Րէիսի Մէճլիս հազըր իսէ՝ Րէիսին, վէ էկէր հազըր պուլընմազ իսէ՝ Գալէմ Զապիթինին պուլընտըղը թարաֆ թէրճիհ օլընուր:

Սեքսէն սէքիզինճի մատտէ. Մուխթէլիթ Մէճլիսլէրտէ թէզաքքիւր օլընան մէվատտէ գարար վերիլմէք իչուն՝ իքի Մէճլիսին այրը այրը իթաի րէյ էթմէլէրի լազըմ կէլուպ, քէյֆիյէթ իքի Մէճլիստէ տախի էքսէրիյէթի արա իլէ պիր մէրքէզտէ գարարկիր օլտըղը հալտէ՝ հալլ օլընմըշ օլուր: Վէ իքի Մէճլիսին գարարընըն ատէմի մուվաֆագաթը՝ իխթիլաֆի րէյ տիմէք օլաճաղընտան, քէյֆիյէթին գարարը Մէճլիսի Ումումիյէ պըրաղըլըր:

Իքի Մէճլիսին ազասը էքսէրիյէթ իւզրէ հազըր

մարուելու համար, պէտք է որ Ժողովոյ երկուքին ալ մեծագոյն մասը ներկայ գտնուին։

Յօդ. 89. Ընդհանուր Ժողով գումարուելէն գոնէ վեց օր առաջ՝ պէտք է որ Պատրիարքարանի կողմէն հրաւիրանաց գրեր յուղարկուին անդամներուն։

ԳԼՈՒԽ Գ.

ԱԶԳԱՅԻՆ ՏՈՒՐՔ

Յօդ. 90. Ամէն Ազգային անհատ՝ որ չափահաս է և վաստակ ու շահու տէր, պարտական է տրօք մասնակից ըլլալ Ազգային ծախուց։

Այս տուրքը տարեկան է. և բաշխման հիմն կը բռնուի իւրաքանչիւր անհատի կարողութիւնը։

Յօդ. 91. Ազգային տուրքը երկու տեսակ է. մէկը ընդհանուր՝ որ ընդհանուր ծախուց յատկացեալ է, և կը հաւաքուի Պատրիարքարանի կողմէն, Ազգային կեդրոնական սնտուկին համար. և միւսը մասնաւոր՝ որ իւրաքանչիւր Թաղի մասնաւոր ծախուց յատկացեալ է, և կը հաւաքուի Թաղական Խորհրդոց կողմէն, Թաղական սնտուկներուն համար։

Յօդ. 92. Կոստանդնուպոլսոյ մէջ ընդհանուր տուրքի բաշխման և հաւաքման եղանակը՝ Քաղաքական Ժողովին մէջ կորոշուի, և Ընդհանուր Ժողովով կը հաստատուի։ Իսկ մասնաւոր տուրքը, ամէն Թաղ իր Խորհրդոյ մէջ կորոշէ և կը հաստատէ։

Սոյնպէս կը տնօրինուին նաև գաւառներուն մէջ

պուլընմատըգլարը հալտէ՝ Մէճլիսի Մուխթէլիթ նիզամէն ագտ օլընմըշ սայըլմազ։

Սէքսէն տօգուզընճը մատտէ. Մէճլիսի Ումումինին ագտընտան լա ագալլ ալթը կիւն էվվէլ՝ Պատրիգխանէ Թարաֆընտան ագալի Մէճլիսէ տավէթնամէլէր իրսալ օլընաճագ տըր։

ՖԱՍԼԸ ՍԱԼԻՍ

ԻԱՆԷՒ ՄԻԼԼԻՅԷ ՊԷՅԱՆԸՆՏԱ ՏԸՐ

Տօքսանընճը մատտէ. Հատտի պիւլուղէ վասըլ օլուպ, քեար ու քեսպ սահիպի պուլընան քեաֆֆէի էֆրատը Միլլէթ մէսարիֆի միլլիյէ Թէսվիյէսինտէ միւշարեքէթէ մէճպուր տըր։

Պու իանէ սէնէվի իթա օլընուպ, էմրի Թէվզիինտէ գուտրէթի զաթիյէ էսաս Թութուլուր։

Տօքսան պիրինճի մատտէ. Իանէի Միլլիյէ իքի նէվ տըր։ Նէվի էվվէլ՝ իանէի ումումիյէ տըր քի, մէսարիֆի ումումիյէյէ մունհասըր օլարագ՝ Միլլէթ Սանտըղը իչուն Պատրիգխանէ մարիֆէթիյլէ Թահսիլ օլընուր։ Վէ նէվի սանի՝ իանէի մախսուսէ տըր քի, պիր ճէմաաթըն մէսարիֆի մախսուսէսինէ մունհասըր օլարագ՝ Քիլիսա ճէմաաթը սանտըգլարը իչուն Քիլիսա մէճլիսլէրի մարիֆէթիյլէ ախզ վէ իսթիֆա օլընուր։

Տօքսան իքինճի մատտէ. Տէրի Սաատէթտէ իանէի ումումիյէնին սուրէթի Թէվզի վէ Թահսիլի Մէճլիսի Ճիսմանիտէ Թախմին, վէ Մէճլիսի Ումումիտէ Թաստիգ գըլընուպ, իանէի մախսուսէ տախի Քիլիսա ճէմիյէթլէրի Թարաֆընտան Թային օլընուր։

Վէ տաշրալարտա հէր պիր մարխասալըգ ճէմաա-

Գաւառական ընդհանուր ատեանքն ու Թաղական մասնաւոր ատեանքը։

Յօդ. 93. Գաւառներուն կողմէն Ազգային Պատրիարքարանի Սնտուկին տրուելու մինչև ցարդ սովորութիւնը եղած տուրքին բաշխման և հաւաքման եղանակը՝ Ընդհանուր Ժողովը պիտի որոշէ, և Բարձրագոյն Դրան հաճութեամբ պիտի գործադրուի։

Գ Լ Ո Ւ Խ Գ.

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՒԱՌԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 94. Առաջնորդը Գաւառական Ժողովոց նախագահն է և անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ։

Իր պարտաւորութիւնն է գաւառին մէջ Ազգային Սահմանադրութեան գործադրութեանը հսկել։

Յօդ. 95. Առաջնորդը չպիտի կարենայ Վանքերու մէջ բնակութիւն հաստատելով՝ պաշտօնին տեղէն հեռանալ. այլ գաւառին գլխաւոր քաղաքին մէջ ազգային Առաջնորդարանը պիտի բնակի. ուր կը գումարուին և Գաւառական Ժողովները։

Երբ Առաջնորդ մը միանգամայն և Վանահայր ըլլայ, եթէ Վանքը միայն մէկ օրուան ճամբայ հեռի է Առաջնորդարանիստ քաղաքէն՝ կրնայ երկու պաշտօնն ալ մէկտեղ վարել, երբեմն երբեմն Վանքին այցելութիւն ընելով։ Բայց եթէ հեռաւորութիւնը օրուան մը ճանապարհէ աւելի ըլլայ, պէտք է որ Վանքին մէջ ի-

թըն՛ըն խանէի ումումիյէ, վէ հէր Քիլիսա ճէմաաթընըն խանէի մախսուսէսի տախի՝ վէճհի մէշրուհ իւզրէ թանզիմ գըլընուր։

Տօգսան իւչիւնճի մատտէ. Պատրիգխանէ Սանտըղը իչուն՝ տաշրալարտան ալըղը մութատ օլան մէպալիղին մարխասալըգլարա թէվզիի վէ ուսուլի թահսիլիյէսի հագգընտա Մէճլիսի Ումումինին գարարը իւզէրինէ իթթիխազ օլընաճագ թէտապիր Պապը Ալիտէն պիլ իսթիզան իճրա գըլընաճագ տըր։

ՖԱՍԼԸ ՌԱՊԻ

ՄԱՐԽԱՍԱԼԸԳԼԱՐԱ ՏԱԻՐ ՏԻՐ

Տօգսան տէօրտիւնճի մատտէ. Մարխասալար բէնտտէ մարխասալըգլարը տախիլինտէ ագտ օլընան Միլլէթ Մէճլիսլէրինին րիյասէթինի վէ գուվվէի իճրաիյէսինի հաիզ տիր։

Վազիֆէլէրի՝ իչպու Նիզամնամէ Եասասընըն իճրաի ահքեամընա նէզարէթ իթմէքտէն իպարէթ տիր։

Տօգսան պէշինճի մատտէ. Մարխասալար մանասթըրլարտա իգամէթ իտիւմէյուպ, մարխասալըգլարը մէրքէզլէրինտէ մարխասալըգ Մէճլիսլէրինին ագտ վէ իճթիմա իթտիկլէրի գօնագլարտա իգամէթ իտէճէք, վէ մահալլի խըտմէթլէրինտէն թէպաիւտ իթմէլէրի ճաիզ օլմայաճագ տըր։ Ֆագաթ պիր Մարխասանըն մանասթըր րէիսլէրինտէն պուլընտուղու թագտիրտէ, մանասթըրը՝ մահալլի իգամէթինտէն եալընըզ պիր կիւնլիւք մէսաֆէտէ վագը իսէ, մանասթըրըը վագթ պէ վագթ մուայէնէ իթմէք իւզրէ՝ իքի խըտմէթինի տախի պիրլիքտէ իճրա իտէ պիլիր, մանասթըրը՝ պիր կիւնլիւք

րէն փոխանորդ կարգելով՝ ինք քաղաք բնակի։ Սակայն հարկ եղած ժամանակը իր վիճակին ամեն կողմը այցելութեան կրնայ երթալ։

Յօդ. 96. Կոստանդնուպօլսոյ մէջ եղածին նման Գաւառներուն մէջ ալ ամեն թաղ պիտի ունենայ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ մը, ԹԱՂԱԿԱՆ ՄՆՏՈՒԿ մը, և ԹԱՂԱԿԱՆ ԴԻՒԱՆԱՏՈՒՆ մը։

Նմանապէս Առաջնորդանիստ Քաղաքին մէջ պիտի հաստատուին ԿՐՕՆԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ։ Եւ Քաղաքական Ժողովին տնօրէնութեան տակ՝ ԳԱՒԱՌԱԿԱՆ ՄՆՏՈՒԿ մը։

Նաև Առաջնորդարանի մէջ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԴԻՒԱՆԱՏՈՒՆ մը հաստատուելով, Առաջնորդական վիճակին բոլոր ժողովրդոց Թաղական Ազգահամարի տումարները հոն պիտի ժողվուին. և Գաւառական ընդհանուր Ազգահամար պիտի կազմուի։

Յօդ. 97. Առաջնորդի ընտրութիւնը՝ նոյն և նման Պատրիարքի ընտրութեան, Գաւառական Ընդհանուր Ժողովով կըլլայ. և ընտրութեան տեղեկագիրը տեղւոյն Խառն Ժողովոյն միջոցաւ Պատրիարքին կուղարկուի։ Պատրիարքը Կեդրոնական վարչութեան Խառն Ժողովոյ համահաճութեամբը կանուանէ զԱռաջնորդը և Բարձրագոյն Դրան իմաց տալով պաշտօնական հրամանագիրը կընդունի։

Յօդ. 98. Գաւառական Ժողովները Կեդրոնական վարչութեան Ժողովներուն վերաբերեալ տրամադրութեանց համեմատ պիտի կազմուին. և պաշտօնները ու պարտաւորութիւնները նոյն և նման են։

Բայց Գաւառական Ժողովներուն անդամոց թիւը՝ իւրաքանչիւր վիճակի համար մի անգամ պիտի սահմանուի, ամեն մէկ գաւառի բնակչաց թուոյն համեմատութեամբ։

եօլտան զիյատէ մէսաֆէտէ իսէ, եըրինէ պիր վէքիլ թային իլէ՝ քէնտուսինին մահալլի խըտմէթինտէ իգամէթ իթմէսի լազըմ կէլիր։ Ֆագաթ լէտէլ իճապ՝ մարխասալըգ տախիլինտէ պուլընան հէր պիր մահալլէ կիտէ պիլիր։

Յօգսան ալթընճը մատտէ. Տէրի Սաատէթտէ օլտըղը կիպի՝ տաշրալարտա տախի հէր Քիլիսա ճէմաաթընըն պիր Քիլիսա ճէմիյէթի վէ պիր Սանտըղը վէ պիրտէ Գալէմի օլտըղը միսիլլու. Մարխասալըգ մէրքէզինտէ տախի՝ պիր Մէճլիսի Ռուհանի վէ պիր Մէճլիսի Ճիսմանի, վէ պու Մէճլիսի Ճիսմանինին թահթը իտարէսինտէ օլմագ իւզրէ՝ պիր Սանտըղը օլաճագ. վէ հէր Մարխասա գօնագընտա պիր Գալէմ օլուպ, Մարխասալըգ տախիլինտէ պուլընան Քիլիսա ճէմաաթլարը նուֆուս տէֆթէրլէրինի ճէմ իլէ թահրիրի նուֆուս իտէճէք տիր։

Յօգսան եէտինճի մատտէ. Մարխասա ինթիխապը լազըմ կէլտիքտէ, Պատրիգ ինթիխապընտա գըյասէն՝ Մարխասալըգ տախիլինտէքի Մէճլիսի Ումումիտէ պիլ ինթիխապ, մազպաթասը մահալլի Մէճլիսի Մուխթէլէթի վասըթասը իլէ Պատրիգէ թագտիմ օլընուպ, օ տախի Տէրի Սաատէթ Մէճլիսի Մուխթէլէթինին մուվաֆագաթիյլէ օլ վէճհլէ ինթիխապ օլընան զաթը Մարխասա թային իտէրէք, Պապը Ալիյէ արզ իլէ՝ էվամիրի րէսմիյէսինի իսթիհսալ իտէր։

Յօգսան սէքիզինճի մատտէ. Պէր մինվալը սապըգ, մարխասալըգլարտա պուլընան Մէճլիսլէր՝ Տէրի Սաատէթ Մէճլիսլէրինին էսասը իւզրէ թէշքիլ օլընուպ, վէ վազիֆէլէրի տախի օ մինվալ իւզրէ օլուպ, ֆագաթ մէզքիւր տաշրա Մէճլիսլէրի ազասընըն մահալլ վէ մէվգիլէրինին միգտարը նուֆուսընա կէօրէ եալընըզ պիր տէֆա թային օլընաճագլար տըր։ Վէ նիզամէն թանէի Միլլիյէ Թէնսիս օլընաճայա տէկին՝ տաշրալարտա

Մինչև որ Ազգային տուրքը գաւառներու մէջ օրինաւոր կերպիւ հաստատուի, Տէրութեան առաջին և երկրորդ և երրորդ աստիճանի տուրք տուող անձինք միայն պիտի ընտրեն Գաւառական Ընդհանուր Ժողովոց անդամները։ Եւ այս ժողովներուն կազմութեան կերպը՝ իւրաքանչիւր վիճակի բնակչաց թուոյն նայելով, Կեդրոնական Վարչութիւնը պիտի որոշէ, Առաջնորդաց հետ խորհրդակցելով։

Դ Լ Ո Ւ Խ Ե.

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Յօդ. 99. Ազգային Սահմանադրութեան հիմնական սկզբունքը անփոփոխելի են։ Բայց երբ փորձառութեամբ՝ ինչ ինչ տրամադրութեանց փոփոխութիւնը հարկաւոր գտնուի, Ընդհանուր Ժողովը՝ Սահմանադրութեան հաստատութենէն հինգ տարի ետքը՝ Վերաքննութեան Յանձնաժողով մը կը կազմէ, Կրօնական և Քաղաքական Ժողովներէն երեքական անդամ, չորս Տեսուչ Խորհուրդներէն երկերկու անդամ, և առանցմէ զատ Ընդհանուր Ժողովոյ մէջէն կամ դրսէն վեց հոգի, ընդ ամէնը քսան անդամ ընտրելով։ Այս յանձնաժողովը կը սահմանէ հարկաւոր գտնուած փոփոխութիւնները, որ Ընդհանուր Ժողովը վաւերացնելէն ետքը, Բարձրագոյն Դրան կը ներկայացուին, և Կայսերական հրամանին համեմատ կը գործադրուին։

պէր մինվալը սապըգ ազա օլընաճագ Մէճլիսի Ումումի ազասընը ինթիխապա հագգը օլանլար պիրինճի վէ իքինճի վէ իւչիւնճի մէրթէպէտէ Տէվլէթէ վիրկիւ վիրէնլէրտէն իպարէթ օլաճագ տըր։ Վէ պու Մէճլիսլէրին սուրէթի թէշքիլի Պատրիգխանէ թարաֆընտան մարխասալար իլէ պիլ իսթիշարէ՝ տայիրէլէրինին միգտարը նուֆուսընա կէօրէ գարարլաշտըրըլաճագ տըր։

ՖԱՍԼԸ ԽԱՄԻՍ

Խ Ա Թ Ի Մ Է

Տօգսան տօգուզընճը մատտէ. Իշպու Նիզամնամէնին էսասընա տօգընըլմայաճագը՝ պայը թէֆէրրուաթընըն պիթթէճրիպէ թատիլինէ լիւզում կէօրիւնտիւկի թագտիրտէ, թարիխի թէսիսինտէն պէշ սէնէ սոնրա՝ Մէճլիսի Ումումիտէ Րուհանի վէ Ճիսմանի Մէճլիսլէրի ազասընտան՝ իւչէր, վէ սալիֆիւզզիքր տէօրթ Գօմիսիօնլարտան՝ իքիշէր, վէ պունլարտան մաատա Մէճլիսի Ումումի ազասընտան վէ եախուտ խարիճտէն օլարագ տիկէր ալթը քիմէսնէլէր քի ճէման եիկիրմի ազա ինթիխապիյլէ պիր Գօմիսիօն թէշքիլ օլընարագ՝ լիւզումը կէօրիւնէն թատիլաթ ու Գօմիսիօնա գարարլաշտըրըլըպ, Մէճլիսի Ումումիտէ թաստիգ օլընտըգտան սոնրա՝ Պապը Ալիտէն լէտէլ իսթիզան սատըր օլաճագ իրատէի Սէնիյէ իւզրէ իճապը իճրա գըլընաճագ տըր։

-106-

ԱԶԴ

Որքան էլ աշխատեցինք ուղղագրութեան մէջ միօրինակութիւն պահպանել, այնու ամենայնիւ տպագրութեան ժամանակ, սրբագրողի ուշադրութիւնից վրիպելով, մեր ընդունած ընդհանուր ձեւերից մի քանի տեղ շեղումներ են պատահել։ Այս ձեւերը գլխաւորաբար հետեւեալներն են.

1. Երբ բառը վերջանում է ը տառով և հետեւեալն սկսում է ձայնաւորով, այն ժամանակ ը-ը փոխվում է ն յօդի։ Օրինակի համար՝ մարդն ասաց (փոխանակ մարդը ասաց), խօսքն և գործը և այլն, ճիշտ այնպէս՝ ինչպէս արդէն լեզուական կանոն է եմ և այլ կամ էլ բառերից առաջ ն դնել. այն մարդն եմ, այս գործն էլ և այլն։

2. Գործածում ենք ընդհանրապէս յառաջ, յաջողութիւն, եւրոպական, փոխանակ առաջ, աջողութիւն, եւրօպական։

3. Ցանկալով ի գիտութիւն արեւմտեան հայ ընթերցողների (Եւրոպա, Թիւրքիա և այլն) յայտնում ենք, որ բոլոր օտար բառերը գրել ենք ռուսահայ հնչման համաձայն, հետեւաբար պէտք է կարդալ բ=b, գ=g, դ=d, կ=k, պ=p, ջ=dj, տ=t և այլն։

4. Չընդունելով ոչ ւ և ոչ վ̣ վաւագրութիւնը, պահպանել ենք ընդհանուր, նախնական ու ձեւը. միայն կրաւորական բայերում ուր երկու ու են պատահում, առաջին ու-ն փոխել ենք իր բնական վ̣ հնչման։

5. Այն բոլոր օտար բառերն, որոնք համեմատաբար նորամուտ են և մեր լեզուի մէջ քաղաքացիութիւն ստացած որոշ ուղղագրական ձև չունեն, մենք վ̣ (v) հնչումը գրել ենք վ̣ և ոչ թէ ւ, մանաւանդ բառի վերջն, որպէսզի այդպիսի պարագաներում մեր ու և իւ երկբարբառներն իրանց բուն պաշտօնը կատարեն,

տալով ֆրանս. ou (ռուս. у) և u (ռուս. ю) հնչումները. այսպէս՝ ակտիվ, պասիվ, այլ ոչ պասիւ. այս իւ-ն պէտք է թողնել ֆր. u-ի համապատասխան հնչիւնը հայերէն տառերով գրելու համար, ինչպէս reçu (ստացական)=րըսիւ բառը կամ Ledru-Rollin=Լըդրիւ-Րոլէն անունը: Նոյնպէս և Sardou=Սարդու, սեռ. Սարդուի և ոչ թէ խեղաթիւրուած Սարդւի ձևը:

Իսկ ընդհանուր տպագրական վրիպակները հետևեալներն են.

Էջ	տող վերևից	սխալ	ուղիղ
15	32	րանք	նրանք
17	9	ժարմէն	Ժարմէն
17	26	1877	1887
20	20	ժարմէն	Ժարմէն
25	20	ծայրութեանը	ծառայութեանը
26	22	Մաղավով	Ժաղավով
27	7	պաշտօնանք	պաշտօնանկ
31	23	պատրիարքէ	Փոքրս պատրիարքի
36	7	ըջօրէն	լըջօրէն
57	11	Վարուբեան	Վարչութեան
79	5	Խաըթթը	Խաթթը
79	25	Թանգլաթը	Թանգլմաթը
89	12	* * *	*
138	5	իր	իրանց
151	4	ապաւինու.	ապաւինում
218	32	լամար	համար
231	15	շար մը	շատ մը
333	5	կողիմց	կողմից
349		Գլ. Վեցերորդ	Գլ Եօթներորդ
364		Գլ. Եօթներորդ	Գլ. Ութերորդ
371	22	համակրում են	համակրում եմ
373		Գլ. Ութերորդ	Գլ. Իններորդ
401		Գլ. Իններորդ	Գլ. Տասներորդ
407		Նւաճումները	Նուաճումները
412	20	any ost	any cost
415		Գլ. Տասներորդ	Գլ. Տասնմէկերորդ
449		Գլ. Տասնմեկերորդ	Գլ. Տասներկուերորդ
451	15—16	կատարեալ	կատարեալ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1977